ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Զ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ- 2009

ՀՏԴ 809.198.1 (07)
ԳՄԴ 81.2Հ g73
Ա 458

Գիրքը հրատարակման է երաշխավորվել
ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի
խորհրդի որոշմամբ

Աղաջանյան Զ. Խ.
Ա 458 Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների գործնական աշխատանքների ձեռնարկ

Խմբագիր՝ Ս. Գալստյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գործնական աշխատանքների այս ձեռնարկը նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Ընդգրկում է հայոց լեզվի բուհական դասընթացի բոլոր բաժիններին վերաբերող առաջադրանքներ, հավելված է տեքստաոճական վարժությունների շարքով: Նպատակաուղղված է գրավոր և բանավոր խոսքի մշակմանն ու կատարելագործմանը:

ԳՄԴ 81.2Հ g73

ISBN 978-5-8084-1080-0

© ԵՊՀ հրատարակչություն
© Զ. Աղաջանյան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

✍ նորմատիվ քերականություններում սահմանված կանոններ, որոնց իմացությունն անհրաժեշտ է

📖 - վարժություններ, առաջադրանքներ

📋 - ամփոփիչ աշխատանքներ

◘ - բաց թողնված տառեր, տառակապակցություններ

▯ - բաց թողնված բառեր

▯ ▯ - բաց թողնված բառակապակցություններ

--▯-▯-- - Բաց թողնված նախադասություններ /բաղադրիչ նախադասություններ/

? - լեզվամիավորների ընտրություն

⮝⮟ - մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ

♦ - դարձվածքներ, դարձվածային արտահայտություններ

✓ - առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, որոնց իմացությունը ցանկալի է

✥ - ոճական առաջադրանքներ

☑ - տեքստային առաջադրանքներ

& - համեմատաբար բարդ վարժություններ

↑↓ - նախադասությունների տրամաբանական հաջորդականության կարգավորում

🡐 🡒 - նախադասության բաղադրիչ մասերի ճիշտ դասավորում

ԴՈՒ ՊԻՏԻ ՀՆՉԵՍ, ՀՆՉԵՍ ՀԱՂԹԱԿԱՆ,

ԴՈՒ ՊԻՏԻ ՀՆՉԵՍ, ՀՆՉԵՍ...

ԻՄ ՀԻՆ ՀԱՅ ԼԵԶՈՒ՝ ՔԱՂՑՐ ՈՒ ՍՐՏԱԲՈՒԽ:

/ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ/

1. Ա. Ի՞նչ բաժիններից է կազմված լեզվի մասին գիտությունը, և ի՞նչ է ուսումնասիրում նրա յուրաքանչյուր բաժինը:

Բ. Ո՞ր բաժինն է ձեզ առավելապես հետաքրքրում. ինչո՞ւ:

Գ. Ո՞ր բաժինն է դժվարություն ներկայացնում. ինչո՞ւ:

Դ. Օրինակներով ցույց տալ բաժինների փոխկապվածությունը և լեզվի միասնական համակարգ լինելը:

2. Ա. Լրացնել աղյուսակը:

Լեզվական միավոր	Լեզվաբանության բաժին
Հնչույթ	
Հնչյուն	
Տառ	
Ձևույթ	
Ածանց	
Բառահարաբերական մասնիկ	
Բառ	
Դարձվածք	
Խոսքի մաս	
Բառակապակցություն	
Ազատ բառակապակցություն	
Նախադասության անդամ	
Նախադասության հարակից միավորներ	
Բառաձև	
Նախադասություն	
Տեքստ	

Բ. Լեզվական ո՞ր միավորների քանակն է սահմանափակ. ինչո՞ւ:

Գ. Լեզվական ո՞ր միավորները հնարավոր չէ հաշվել:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

🕮 **Հ-1. Ձախ մասում մեծատառերով տրված է հնչյունաբանության բաժինը, աջ մասում՝ նրա ուսումնասիրության առարկան, բայց ոչ ճիշտ տեղում: Ուղղել սխալը:**

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ← → ուղիղ կամ ճիշտ խոսելու, նաև գրվածը ճիշտ կարդալու կանոնների ամբողջությունն է:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ← → ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է:

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ← → տառերի և հնչույթների /հնչյունների/ հարաբերակցության համակարգն է:

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ← → որևէ ձայնավորի կամ երկհնչյունի, նաև բաղաձայնի փոփոխությունն է կամ սղումը:

🕮 **Հ-2. Հայերեն տառադարձել ներքոհիշյալ անձնանունները ու աշխարհագրական անունները: Առանձնացնել գրության և արտասանության տարբերակային ձևեր ունեցողները:**

Азия	Алеппо	Афины	Багдат
Болгария	Тегеран	Голландия	Египет
Женева	Иерусалим	Ирак	Эфес
Кипр	Нил	Китай	Олимп
Персия	Шуша	Авгий	Аристотель
Архимед	Ахилл /Ахиллес/	Гегель	Лука
Бетховен	Брут	Галлей	Гамлет
Гомер	Михаил	Дон Кихот	Еврипид
Захария	Пифагор	Иракл	Семирамида

🕮 **Հ-3. Կարդալ և ընդգծել արտասանական այն տարբերակը, որը գրական է: Առանձնացնել այն բառերը,**

ա/ որոնցում ճիշտ է գրային արտասանությունը,

բ/ որոնք ունեն արտասանական զուգահեռություններ:

- **շտապել** → [շըտապել] և [ըշտապել]
  ամենաորակյալ→ [ամենավորակյալ] և [ամենաորակյալ]
  սկսել → [ըսկըսել] և [սըկըսել]
  արջաորս → [արչաորս] և [արչավորս] և [արջավորս]
  արտերկիր → [արտերկիր] և [արտյերկիր]
  աներևակայելի → [անէրէվակայէլի] և [անյէրէվակայէլի]
  գտնվել → [գըտնըվել] և [գըտընվել]
  անորակ → [անվորակ] և [անորակ]
  ութ → [ութ] և [ութը]
  կիսաեփ → [կիսայէփ] և [կիսաէփ]
- **ձեռնբաց** → [ձէռընբաց] և [ձէռընբաց]

աներես → [անյէրէս] և [անէրէս]
ընկճվել → [ընկրճվէլ] և [ընկճրվէլ]
տասներեք→ [տասնէրէք] և [տասնրյէրէք]
նաև → [նաէվ] և [նայէվ]
կորոշի → [կըվորոշի] և [կըորոշի]
ուղղել→[ուղղէլ] և [ուղըղէլ]
չեղծել → [չըէղծէլ] և [չըյէղծէլ]
որևիցե → [վորէվիցէ] և [վորյէվիցէ]
կորսա → [կըորսա] և [կըվորսա]
● **կերգի** → [կէրքի] և [կյէրքի] և [կյէրգի]
չողջունել → [չըվոխչունէլ] և [չըոխչունել] և [չվողջունէլ]
կերազի → [կյէրազի] և [կէրազի]
չորոնի→ [չըորոնի] և [չըվորոնի]
ճառագայթ → [ճառագայտ] և [ճառագայթ]
արձան→ [արձան] և [արցան]
ներքող → [նէրքող] և [նէրփող]
համերգ → [համէրք] և [համէրգ]
մարգագետին → [մարքագէտին] և [մարգագէտին]
մրջյուն → [մրրչյուն] և [մրրջյուն]
● **երջանիկ** → [երչանիկ] և [երջանիկ]
չոջիկ→ [չըխչիկ] և [չըոջիկ] և [չըխջիկ]
փայծաղ →[փայծաղ] և [փայծախ]
գդալ →[գըդալ] և [գըթալ]
արջածառ → [արչածառ] և [արջածառ]
աճուրդ → [աճուրթ] և [աճուրդ]
գմբեթարդ → [գմբէթարդ] և [գմբէթարթ]
Տրդատ → [Տըրթատ] և [Տըրդատ] և [Տըրթաթ]
գրաբար → [գրափար] և [գրաբար]
թագուհի → [թագուհի] և [թաքուհի]

📖 Հ-4. **Ոչ թե ..., այլ...**

● 1. ոչ թե **[ավելնորդ]**, այլ →...
2. ոչ թե **[տաս]**, այլ →
3. ոչ թե **[իրավմամբ]**, այլ → ...
4. ոչ թե **[աղուսյակ]**, այլ → ....
5. ոչ թե **[անբարիշ]**, այլ → ....
6. ոչ թե **[պտի]**, այլ → ....
7. ոչ թե **[ջղայն]**, այլ → ....
8. ոչ թե **[քաջ առողջություն/**, այլ →...
9. ոչ թե **[բարձրունք]**, այլ →....
10. ոչ թե **[հարթուկ]**, այլ →...
11. ոչ թե **[մեծամասամբ/**, այլ → ...
12. ոչ թե **[սյունյակ]**, այլ → ....
13. ոչ թե **[որտև]**, այլ →
14. ոչ թե **[լինելիություն]**, այլ → ....
15. ոչ թե **[ռթանասուն]**, այլ → ...
16. ոչ թե **[կոկոմ]**, այլ → ....

● 1. ոչ թե [բախշել], այլ → ....
2. ոչ թե [քալանի], այլ → ....
3. ոչ թե [վարաքել], այլ → ....
4. ոչ թե [դոկտոր], այլ → ....
5. ոչ թե [պատճե + ն], այլ →....
6. ոչ թե [նախագա+ն], այլ → ....
7. ոչ թե [արցյունք], այլ → ....
8. ոչ թե [ներեղություն], այլ → ....
9. ոչ թե [հարաֆ], այլ → ....
10. ոչ թե [ապռել], այլ → ....
11. ոչ թե [ասեկոս+ներ], այլ → ....
12. ոչ թե [տրամվա +ն], այլ →
13. ոչ թե [ռեկտոր], այլ → ...
14. ոչ թե [հողարկավորություն], այլ →...

Հ-5. Կարդալ հետևյալ բառերը /բառաձևերը/ և որոշել հնչյունների քանակը:

Տեսաերիզ, մեներգ, Երևան, ոսոխ, կկորչեինք, ոսկեվարս, անակնկալ, թովռալ, համբույր, վերելք, ութոտնուկ, կորոշի, սարդոստայն, սիրերգակ, ռնգեղջյուր, չոչնչացնել, խաղաոճ, տասներեք, զարկերակ, ամենաերջանիկ, ձեռնտու, դռնփակ, ձկնկիթ, խնդրագիրքդ, սկսել, զգույշ, շտապել, երևալ, երկրեերկիր, արջառոս, կցկտուր, նրբերշիկ, փայլփլել, նեթ, արևայրուք:

Հ-6. Գրել հայերենի՝
ա/ տառային գրանշանները /այբուբենը, տառերի անվանումները, նրանց թվային կամ թվային կարգի արժեքը, նաև հավելյալ տառերը/.
բ/ ոչ տառային գրանշանները և նրանց անվանումները /օր.՝ /:/ - վերջակետ/:

Հ-7. Ա. Ֆրանսիացի լեզվաբան Անտուան Մեյեն գրել է. «Հայտնի է, որ հայ այբուբենը մի գլուխգործոց է, ... որ պահպանվում է մինչև այսօր առանց փոփոխություն կրելու... Այդ լեզվի ճոխությունն ու ճկունությունն ուժ են եղել հայ ազգի համար»: Կարդալ Պ. Սևակի «Եւ այր մի Մաշտոց անունով» պոեմը և բնութագրել Մաշտոցի կատարած գործը՝ մե՛ր՝ հա՛յ այբուբենը՝ համեմատելով ռուս կամ օտար լեզուների այբուբենների հետ:

Բ. Մաշտոցյան ժամանակներից ի վեր տառային և նրանց թվային արժեքների համակարգում ի՞նչ փոփոխություններ են կատարվել:

Հ-8. Կարդալ հատվածը և նմանօրինակ կապակցված խոսք գրել այն մասին, թե ձե՛զ ի՛նչ են պատմում հայոց տառերը:

Մամփրեն գիծը խորացրեց: Առվակ է ու ոչ դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու զուլալ: Մեկ ուրիշ նմանատիպ առվակ կողքն ի հետ կիջվարե՝ շիտակ ու բարակ ու զուլալ: Ու էս ջուխտակ զուլալ առվակներն սարից կիջվարեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պստիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է: Մամփրեն ճիպոտով զուգահեռ առվակները միացրեց: - Միացա՞ն.. թե միացան, թե առվակները զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակները կլցվեն ափեափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրը ճոթ տա... Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառը՝ Ա... Մեկ-երկուսն էլ կան, որ որ, մեղա՜, մեղա՜, սուրբ Մաշտոց... Էդ մեկ-երկուսն, Խաչո, իմ սրտին դուր չեն գա:

Եվ գծեց Թ-ն ու կտիչը կտրեց:

-Կտիչ է, օձի կտիչ է, ու իմ սրտին դուր չի գա:

Այս մեկ: Մյուսը: Եվ գծեց Ջ-ն: - Այ, մեծ առու է: Առու է, թե գետ, մեծ է, քանզի մի տեղ լիճ է կազմել: Ապա մի առվակ գալիս է, թսփով գալիս-զարկում-կտրում է այդ մեծ առուն... Իմ կարճ խելքով, Խաչո, էն առվակն, էն գետակն, որ մեծ առու ու գետ կկտրի, էդ առվակի ճամփեն հարկ է, որ էղնի երկար ու երկար...

-Սակայն տարօրինակն ու զարմանալին, անչափ զարմանալի հայոց գրերից վերջին գիրն է՝ Ֆ-ն. մեկ գետակ, մեկ առվակ է՝ ուղիղ կիջնի ու... ու, սուրբ Մարաթուկ, ու մեկ վիշապ, էսպես. փաթաթվել է սարից իջվարող զուլալ ու շիտակ գետակին... Էսպես փաթաթվել ու կֆշշա, կֆշշա: Ֆ... Վայ թե... սուրբ Մաշտոցն իր արարած տառերի ճակատագիրն է գուշակե... Սուրբ Մաշտոցը դողացել է նոր-նոր նոր լուսաշխարհ բերած իր գրերի ճակատագրի համար, և դրա համար էլ նախավերջին տառը իր օ-ն է. զարմանք ու ցավով բացված շուրթերի պատկեր ունի՝ Օ:

-Մարաթուկ վկա, էդպես է էղե, Խաչո: **Եվ Մամփրեն զուլալ գետակին փաթաթված վիշապը ջնջեց...** **/Ըստ Մ. Գալշոյանի/**

📖 Հ-9. Ընտրել այն բառաշարքը, որի մեջ մտնող բառերում ո **տառը՝**

Ա. [օ] հնչույթի գրային նշանն է՝

1. գոգ, նորոգել, ամենաորակյալ, որևէ, ոգնի, գողտրիկ, գոհարազարդ
2. հոգեվարք, ով, անորոշ, անոթ, անողնաշար, անորսալի, գագաթոսկր
3. գոմշաձագ, գողաորջ, արջաորս, ողկույզ, եռոտանի, ծխափող, ինչ-որ

Բ. [վօ] հնչույթակապակցության գրային նշանն է՝

1. չարախոս, որոտընդոստ, անոտ, ոտնափայտ, վերաորակավորում
2. որևիցե, ոսկեփոշի, ողբանվագ, անողնաշար, ողնոսկր, ողորմածորեն
3. ոչ ոք, որսընկեր, հակաորովայնային, ոչինչ, լեզվաոճական

📖 Հ-10. Ընտրել այն բառաշարքը, որի բառերում ե **տառը՝**

Ա. [է] հնչույթի գրային նշանն է՝

1. եկեղեցի, ելևէջել, հորեղբայր, ամենաեղկելի, զարկերակ, եղեգ
2. եսամոլ, երբեմն-երբեմն, ոսկեղեղձան, երջանիկ, ամենաեռանդուն
3. սգերգ, անենթակա, մարգարե, հուր-հրեղեն, միջաստեղային, անշեղ

Բ. [յէ] հնչույթակապակցության գրային նշանն է՝

1. անեզակի, անելանելի, եղջյուրահարել, ուղեծիր, ապերջանիկ, երգեհոն
2. համաերկրացի, երգիչ-երգչուհի, ամենաերկար, ինքնաեռ, համաերևանյան
3. եղենափուշ, եղերերգու, բարեժպիտ, պոեմ, չերգել, տրտմերես. եղեգ

📖 Հ-11. Լրացնել բաց թողնված տառերը. դրանք ի՛նչ հնչույթի /հնչույթների կամ հնչույթակապակցության/ գրային նշան են. բացատրել ուղղախոսությունը:

❶ Այժմ□ական, ամենա□ական, ան□րևույթ, ան□ական, աշտ□, գետ□զր, ան□րկբա, բազկ□ռակ, ան□րկյուղ, դող□ռոցք, ան□ռևակայելի, ինչևից□, երբև□, առ□ռես, առօր□ական, երբևից□, առ□ջ, երփն□ռանգ,

բազմ□րանգ, □ական, □լեկտրա□ներգիա, ինչն□, զարկ□րակ, գրում □մ, լայն□զր, հն□աբան, միջօր□, որն□, չ□ի գնացել, լայն□կրան, մանր□, նոր□կ, ստոր□րկրյա, վայր□ջք, ողբ□րգակ, լուսն□ղջյուր, պարզ□րես, Վարդգ□ս, վեր□լք, վեր□րկրյա, տի□զերք, զայգ□րգ, տասն□րեք, հոր□ղբայր, □րգ, □ռօրյա, համա□րևանյան, մարգար□, հյուլ□:

● Աման□ր, ականջ□ղ, □ղկույզ, անդ□րր, ան□թի, ան□թևան, ան□րեն, ան□րինակ, տրտմ□րոր, փող□սկր, □ղորկ, առ□րյա, □թյակ, ապ□րինի, բար□ություն, բն□որան, գիշերուզ□ր, եղբոր□ղի, բաց□թյա, գանգ□սկր, երկվ□րյակ, տն□րեն, ընդ□ինևսկել, թռչն□ս, սարդ□ստայն, թիկն□թոց, հայ□ղի, ան□ակ, միկր□աշխարհ, հանապազ□րյա, հանազապ□ղ, հանր□գուտ, հատ□րյակ, հ□գուդ, հ□գուտ, հողմակ□ծ, հ□տնկայս, հ□դս /ցնդել/, մեղմ□րեն, մեղմ□որ, նախ□ոե, շոր□ոալ, շտապ□գնություն, □թել, □սկեզօծ, □վքեր, □ոբանոց, ջր□ոհնեք, վաղ□ոդյան, տար□ոշվել:

🕮 Հ-12. Ըստ անհրաժեշտության գրել ը տառը և լրացնել աղյուսակը:

Բառեր, որոնցում ը հնչյունն ունի իր համապատասխան գրային նշանը	Բառեր, որոնցում ը հնչյունը չունի իր համապատասխան գրային նշանը

Այլ□նտրանք, ամենա□նտիր, առ□նքեր, ակ□նբախ, կոր□նքարդ, ան□մբոնելի, արագ□նքաց, ակ□նդետ, ան□նդհատ, հետ□զհետե, գահ□ն-կեց, գիրկ□նդխառն, գործ□նկեր, ձկ□նկիթ, դյուր□մբռնելի, երկ□նտրանք, անակ□նկալ, զուգ□նքաց, հյուր□նկալ, մթ□նկա, մակ□նքացություն, օր□ստօրե, առ□նվչել, ճեպ□նքաց, մթ□նշաղ, դյուր□նկալելի, մեկ□նդմեջ, գույն□զգույն, խոյ□նքաց, նախ□նտրել, լուս□նկա, մերթ□նդմերթ, վեր□նձյուղվել, ս□րտաբաց, շնորհ□նկալ, ջ□րծաղիկ, չ□նդունել, հ□րաշեկ, չ□նկնել, վեր□նքաց, մ□ղձավանջ, ն□րբորեն, չ□դատել:

🕮 Հ-13. Արտագրել՝ լրացնելով երկհնչյունները:

Ատ□ն, ն□ոդ, Զաքար□, Արփ□ր, եղ□մ, նզով□լ, անց□լ, հեծ□լ, ընկ□զ, անդամալ□ծ, հեզահամբ□ր, ողկ□զ, աղմկահ□զ, ճռվող□ն, շափ□ղյա, մրջ□ն, եղջ□ր, եղեգնահ□ս, եղբ□ր, ն□ել, թ□ել, գ□թել, ս□թաքել, մենակ□ց, հ□ր, գ□անալ, խ□անալ, երեկ□թ, կ□նք, մատ□ն, □թ,.արդ□ք, աստղալ□ս, կապ□տ, դ□րըմբռնելի, սառ□ց, ար□ն, առաք□լ, դաստ□րակել, հեք□թ, օվկ□նոս, հր□, քվ□ոկել, Երեմ□, Մարի□մ, Անգլ□, Աս□, դղրդ□ն:

🕮 Հ-14. Շարունակել:

●. Թույր – թյուր
հյուս

●. Կարկաչյուն – կարկաչուն
շաչյուն

🕮 Հ-15. Առանձնացնել այն բառերը, որոնցում h-ն «համր» տառ է:

Օրիներգ, օրհասական, շնորհ, ողջախոհ, անհրաժեշտ, տարաշխարհիկ, քարհանք, արհամարհել, ապաշնորհ, միրհավ, աշխարհ, չնաշխարհիկ, հեղհեղուկ, հոգեհմա, հրահրել, ընդհուպ, խորհուրդ, Հովհաննես, զարհուրելի, նիրհել, ճանապարհ, արհավիրք, ճանապարհորդ, մեղմասահ, ընդհակառակը, ընդհանուր, խորհրդածություն, անհեթեթ, անհողդողդ, անպատեհ, աշխարհացունց, առհավատչյա, արգահատելի, զարհուրելի, թոհուբոհ, խոտհարք, խորհել, հազիվհազ, հաղթահարել, հուրհրալ, ճահճուտ, մահճակալ, շնորհազուրկ, շնորհանդես, չմշկասահք, քարհատ:

🕮 Հ-16. Գրել 5-ական բառեր, որոնց մեջ և տառը՝

ա/ [յէվ] հնչույթակապակցության գրային նշանն է

բ/ [էվ] հնչույթակապակցության գրային նշանն է

🕮 Հ-17. Արտագրել տրված բառերը՝ վանդակների փոխարեն լրացնելով և կամ եվ:

Կար□որ, համա□րոպական, հ□ասպառ, ոսկ□որված, ս□եռուն, իսկույն □եթ, □րամիություն, օթ□ան, ալ□ետ, ալ□որ, ար□մտա□րոպական, բ□եռ, գոտ□որել, դափն□արդ, երբ□է, թեթ□ամիտ, կար□եր, ոսկ□արս, հոգ□արք, Եր□ան, ս□ակնած, սեթ□եթել, սերկ□իլ, հոգ□իճակ, հ□իհ□, տար□երջ, ուղ□ճար, առ□տուր, գին□ետ:

🕮 Հ-18. Գրել բառեր, որոնցում՝

● Բ տառը

ա/ [բ] հնչույթի գրային նշանն է /բակ.../

ա/ [փ] հնչույթի գրային նշանն է /խաբել.../

բ/ [պ] հնչույթի գրային նշանն է /աղբ.../

● Գ տառը

ա/ [գ] հնչույթի գրային նշանն է /համերգ.../

բ/ [ք] հնչույթի գրային նշանն է /երգել.../.

● Ջ տառը

ա/ [ջ] հնչույթի գրային նշանն է /ջնջոց.../

բ/ [չ] հնչույթի գրային նշանն է /աղջիկ.../

● Դ տառը

ա/ [դ] հնչույթի գրային նշանն է /սարդոստայն.../

բ/ [տ] հնչույթի գրային նշանն է /գիրքդ.../

գ/ [թ] հնչույթի գրային նշանն է /երդվել.../

● Ղ տառը

ա/ [ղ] հնչույթի գրային նշանն է /աղահանք.../

բ/ [խ] հնչույթի գրային նշանն է /մաղթել.../

● Ձ տառը

ա/ [ձ] հնչույթի գրային նշանն է /կաղկանձ./

բ/ [ց] հնչույթի գրային նշանն է /դարձյալ.../

🕮 Հ-19. Հետևյալ բառախմբերում ի՞նչ հնչույթակապակցություններով են արտահայտվում հետևյալ տառակապակցությունները:

Ա. ղբ, ղգ, ղձ, ղջ, ղթ, ղտ, ղց, ղճ, ղծ

Աղբակույտ, աղբյուր, եղբայր, շեղբ, ողբաձայն, ողբասաց, աղտոտ, եղծապիղծ, հեղգ /ծույլ/, շաղգամ, գաղթական, գաղթօջախ, գաղտնանկար, գեղձ, ղեղձան, դեղձենի, հեղձուցիչ, փղձկալ, բաղձալի, քաղցկեղ, քաղցր, քաղցրահնչյուն, աղճատել, զղջալ, շեղջ, ողջագուրվել, ողջույն, չղջիկ, եղջերու:

Բ. բբ, բդ, բգ, բձ, բջ

Արբենալ, արբշիռ, գինարբուք, երբևէ, երեսարբիչ, հարբուխ, ձերբակալել, ներբող, նրբագեղ, նրբին, նրբաճաշակ, ջրարբի, սրբապատկեր, օրիորդ,

դափնեվարդ, հորեղբորորդի, աճուրդ, անձրևորդ, անջրդի, արդարացի, արդարև, արդուզարդ, վարդաստան, դրվագազարդ, լաջվարդ, խորհուրդ, կորնթարդ, հորդահոս, նյարդայնանալ, ջարդուխուրդ, անարգանք, անկարգ, բարեկարգ, եղերերգ, երգարան, կարգապահ, մարգարտահոտ, պարգևատրել, վարգ, օրակարգ, բարձրահասակ, բարձիթողի, բարձրուղեշ, դարձվածք, լայնարձակ, հանդերձանք, հանդերձյալ, հորձանուտ, որձաքար, փորձանք, արջաբույն, թրջոց, մրջյուն, որջ, վերջակետ, տարեվերջ:

📖 **Հ-20. Կարդալ հետևյալ բառերը և որոշել, թե ընդգծված տառերը ո՞ր հնչույթների գրանշաններն են:**

Խուրձ, ուղտափուշ, աղբանոց, աղբյուր, ամենասուրբ, անօթևան, անխաբ, արբշիռ, դարբին, արքուն, դաշինեպսակ, երվինագույն, թանգարան, երդիկ, երբևիցե, կարգապահ, անձրևորդ, ըմբոշխնել, հոգեհմա, զարդատուփ, արձան, խաբկանք, խայտալ, կմախք, հափշտակել, ճրագալույց, խայթել, թախանձել, խորդուբորդ, խոտհունձ, միգապատ, կորնթարդ, ուղղաձիգ, ականակիտ, մահճակալ, ձախորդ, ջրահեղձ, ոսկրախտ, ասֆալտ, աղջամուղջ, ախտազերծել, հարավ, սանդուղք, հովտաշուշան, բաղձալի, նավթավառ, գուժկան, թրջել, բքախեղդ, արևակեզ, դժբախտ, խրճիթ, երկնասույզ, կարիճ, դժխեմ, հետցիետե, վայրէջք, որպեսզի, քրքիջ, վզկապ:

📖 **Հ-21. Տրված բառերում ր-ից, ղ-ից և ձայնավորներից հետո գ, դ, ձ, ջ տառերն ունեն երկակի արտասանություն. ո՞րն է նախընտրելի տարբերակն ըստ ուղղագրական-ուղղախոսական կանոնի:**

Արբել, ջրարբի, ձերբակալել, ներբողել, արգելել, մեներգ, մարգագետին, միրգ, մրգաշատ, մրգանուշ, արդի, աճուրդ, ապարդյուն, գմբեթարդ, երիտասարդ, խորանարդ, կախարդ, հարդարել, մակարդ, արձան, արձանագրություն, արվարձան, արջասպ, երջանկություն, մրջնաբքու, քրջիկ, քուրջ, քրջահավաք, արեգակ, գոգավոր, գոգնոց, երկրպագել, զուգվել, զուգընթաց, թագուհի, հեգ, մոգական, նվագարան, վարագույր, վառոդ, աջակցել, իջնել, իջևանատուն, հաջողություն, անմիջական, միջադեպ, միջանցք, միջև, ընդմիջում, անընդմեջ:

📖 **Հ-22. Գրել բառեր, որոնք ունեն՝**
ա/ կրկնակ բաղաձայններ /տոննա.../.
բ/ կրկնակ ձայնավորներ /Հաագա.../:

📖 **Հ-23. Ա. Տրված բառերում /բառաձևերում/ առանձնացնել նրանք, որոնցում՝**
ա/ անփոփոխ, արմատական ձևում կան կրկնակ բաղաձայններ /բերրի/
բ/ բաղաձայնը կրկնվում է հնչյունափոխության հետևանքով /ուղղել/
գ/ նոր բառ կազմելիս 2 տարբեր բաղադրիչների նույն բաղաձայնները ընկնում են կողք կողքի /երկկենցաղ/:

Աբբահայր, այբբենարան, աքքաղական, անդորրավետ, արճճե, բզզալ, բնօրրան, դդմապուր, դզզոց, երրորդ, զզվանք, գգվանք, զննել, ընդդիմախոս,

բթենի, դդում, բթխմոր, խխունջ, ծծան, ծծումբ, կկու, ընդդիմություն, թշշալ, իննական, լլկել, խշշյուն, կեցցե, կծծի, կտտանք, հովվերգություն, ճռռալ, մրրկածեծ, նոյյան, չարաճճի, սովալլուկ, տարրալուծել, տզզոց, ցցված, ուղղափառ, ուղղընթաց, փթթել, քննել, օրրան, խճճել, մկկալ, ղղուկ, բթու, տտիպ, ննջել, ղղնջալ, ցցել, աննման, երեսսրբիչ, պտտահողմ, գերաններ, գամմա, սեղմման, աննշմար, Երևաննախագիծ, տոննա, բջջակորիզ, հոլովվել, կկանգնի, լույսս, հույսս:

Բ. Ըստ «երկար» /կամ տևական բաղաձայն»/ և «բաղաձայն + գաղտնավանկ ը + բաղաձայն» հնչույթախմբային կաղապարների դասդասել վերևում տրված կրկնվող բաղաձայններ ունեցող բառերը:

🕮 Հ-24. Յուրաքանչյուր շարքի համար ձևակերպել ուղղագրական և ուղղախոսական այն կանոնը, որի համաձայն գրվում և արտասանվում են ընդգրկված բառերը: Շարունակել լրացնել մի քանի օրինակով:

1. անէանալ, վայրէջք, ինչնէ, մանրէաբան...
2. գործընկեր, արագընթաց, խոյընթաց, հյուրընկալ, անընթեռնելի...
3. ապօրինի, բնօրրան, ոսկեզօծ, անօթևան...
4. Վոլգա, վոլեյբոլ, վոլտ...
5. դարբին, շաբաթ, համբույր, սրբել, հարբել...
6. անգամ, ավազ, զուգվել, մարգարիտ, պարգև...
7. արդարամիտ, դաղար, ընդունարան, խորդուբորդ, վրդովել, երկրորդ...
8. հանդերձյալ, փորձություն, օձանման, դեղձանիկ, դաղձ, ընդարձակ...
9. աղջիկ, առաջ, առաջին, վայրէջք, թրջել...
10. հարավ, նավթ, ավտոմեքենա, նավթավառ...
11. գմբեթ, ամբարտավան, ըմբռնել, ամբաստանել...
12. աշխարհ, խոնարհ, ճանապարհ, շնորհ...
13. բվվոց, մրրիկ, ուղղակի, հովվական, երեսսրբիչ, իննական...
14. զգվել, թթվաջուր, խխունջ, լլկել, ննջել...
15. արքայական, մնայուն, տղայի, խաղայինք, երեկոյի, նոյեմբեր...
16. հարսնացուի, միջօրեական, որդիական, միասին, մարգարեանալ...
17. դաստիարակ, հեքիաթ, օվկիանոս, Սուքիաս, Իտալիա...
18. առօրեական, քվեաթերթիկ, հրեա, Անդրեաս
19. ամբիոն, միլիոն, չեմպիոն, օրիորդ...

🕮 Հ-25. Ա. Կարդալ, գտնել ձևափոխված բառերը և գրել նրանց ուղիղ ձևերը:

Բ. Բառերը դասավորել այբբենական կարգով /կրկնվող բառերը չկրկնել/: Յուրաքանչյուրում համեմատել տառերի և հնչյունների քանակը. ի՞նչ է՝ ա/ տառը բ/ հնչյունը գ/ հնչույթը:

Գ. Նշել, թե ո՛չ տառային ի՞նչ նշաններ են օգտագործված:

Հերցի նոր հայտնագործությունը ցնցեց ամբողջ գիտական աշխարհը: «Հերցի ալիքների» էությունը հասկանալի դարձավ շատերին: Աշխարհի տարբեր ծայրերից եկող նամակները մի բան էին ասում միայն. արդյոք

հնարավո՞ր չէ ստեղծել կապի նոր համակարգ՝ առանց սյուների, առանց հաղորդալարերի: Մեծ գիտնականը հայտնարարեց.

- Ո՛չ... Ռադիոալիքների հետագա հետազոտությունները ոչ մի օգուտ չեն կարող տալ...

Ի՞նչ կարող ես անել. Մաքսվելը կանխագուշակեց, ինքը հայտնագործեց, բայց կիրառության մեջ դրեց մեկ ուրիշը: Հերցը եզրափակեց Ֆարադեյի սկսած գործը: Եթե Մաքսվելը Ֆարադեյի գաղափարներին տվեց մաթեմատիկական ձևակերպում, ապա Հերցն այդ գաղափարները դարձրեց «տեսանելի» և «լսելի» էլեկտրամագնիսական տատանումներ:

Հ-26. Գրել 10-ական բառեր, որոնցում՝
ա/ հնչյունների թիվը հավասար է նրանց գրային նշանների թվին
բ/ հնչյուններն ավելի են գրային նշաններից:

Հ-27. Որոշել տրված բառերի տառերի և հնչյունների քանակը:
Աստղ, գլխազարդ, որևէ, հոգևոր, գամմա, գնդաձևություն, սկզբունք, անհետևողականություն, խճանկար:

Հ-28. Հետևյալ զույգ բառերի շարքում առանձնացնել՝
ա/ տարբեր հնչյունակազմ ունեցող բառազույգերը.
բ/ նույն հնչյունակազմը, բայց հակադիր դասավորություն ունեցողները.
գ/ միայն մի հնչյունով տարբերակվող բառազույգերը.
Թոկ – կոթ, այրի – վայրի, նյութ – թույն, ծառ –ծառս /լինել/, առնել – խառնել, այծ – կայծ, թիվ – վիթ, լերկ – կրել, պես – սեպ, լուր – լուրթ, գեր – գերի, առած – ծառա, շուն – նուշ, տող – հուն, կաթ – թակ, սար – կետ, թաս – սաթ, նուռ – ցող, խոփ – փոխ, հող – գիր, պատ – տապ, բիբ – գոգ, ծեծ – ցեց:

Հ-29. Ա. Հնչարտաբերական գործարաններն են ....
Բ. Նկարագրել հնչարտաբերական գործարանների աշխատանքը ա, զ, ֆ, մ, հ, ու, բ **հնչյուններն արտաբերելիս:**

Հ-30. Գրել 2-ական բառազույգեր, որոնցում հակադրական հնչյուններ են՝
- ա/ ա-ե բ/ ա-ի գ/ ա -օ/ն/ դ/ ա-ու ե/ ու-ի զ/ու-ե է/ ի-ե
- ա/ գ-կ բ/ բ-պ գ/ ճ-չ դ/ կ-ք ե/ դ-տ զ/ զ-ս է/ դ-խ

Հ-31. Դասակարգել գրական հայերենի ձայնավորները՝ ի, է /ե/, ը, ու, օ /ո/, ա՝
ա/ ըստ լեզվի գրաված դիրքի
բ/ ըստ լեզվի բարձրացման աստիճանի
գ/ ըստ շրթունքների մասնակցության աստիճանի

🕮 Հ-32. Հետևյալ բառերը խմբավորել ըստ ձայնավոր հնչյունների հակադրական զույգերի և ցույց տալ նրանց իմաստատարբերակիչ գործառույթը:

Մատաղ, կարճ, թուք, բուրել, կիր, մուտք, հոն, տող, մետաղ, կիրճ, սուր, թոք, բերել, կեր, միտք, հուն, տեղ, բոց, բաց, սեր, կտոր, հետ, վեհ, մարգ, վարք, կուռք, տուտ, էջ, տատ, կառք, վերք, միրգ, վիհ, հոտ, կտուր, աջ:

🕮 Հ-33. Ա. Որոշել, թե խոսքը ո՞ր ձայնավորի մասին է:
Բ. Նրանցով սկսվող, նրանցով վերջացող 3-ական բառեր գրել:

- առաջնալեզվային. վերին բարձրացման. ոչ շրթնայնացած.
- առաջնալեզվային. միջին բարձրացման. ոչ շրթնայնացած.
- միջնալեզվային. միջին բարձրացման. ոչ շրթնայնացած.
- ետնալեզվային. վերին բարձրացման. շրթնայնացած.
- ետնալեզվային. միջին բարձրացման. շրթնայնացած.
- ետնալեզվային. ստորին բարձրացման. ոչ շրթնայնացած:

🕮 Հ-34. Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ ունեն՝

ա/ ի և ու հնչյունները **բ/ է և օ** հնչյունները **գ/ ու և օ** հնչյունները
դ/ ի և է հնչյունները **ե/ ու, օ, և ա** հնչյունները **զ/ է, ը և օ** հնչյունները

🕮 Հ-35. Տրված բառազույգերում որոշել, թե ո՞ր ձայնավորներն են նվազագույն հնչյուային հակադրություն կազմել. բնութագրել իմաստազատիչ հնչյունները:

- **ա/** սար –սեր **բ/** հուն – հոն **գ/** մուտք – միտք **դ/** լուր – լար – լոր
- **ա/** գեր - գիր **բ/** օղ – ող **գ/** խեթ – խութ **դ/** տաղ – տող – տեղ

🕮 Հ-36. Կարդալ բանաստեղծությունը և դուրս գրել այն բառերը, որոնք՝
ա/ սկսվում են ձայնավորով /նշել հատկանիշները/
բ/ վերջանում են ձայնավորով /նշել հատկանիշները/
գ/ ունեն 1 ձայնավոր հնչույթ /նշել հատկանիշները/
դ/ ունեն 2 ձայնավոր հնչույթ /նշել հատկանիշները/
ե/ ունեն 3, 4 և ավելի ձայնավոր հնչույթ:

Ես հա՛յ եմ. հին, ինչպես լյառն այս բիբլիական,
Թաց են ոտքերս դեռ ջրհեղեղի ջրից,
Իմ սուրբ հողն է տեսել Նոյն առաջին անգամ,
Բաբելոնյան Բելը՝ սատակել իմ սրից...
Ամեն դար իմ հոգում մի կնճիռ է պեղել,
Որդիներիս ցրել աշխարհով մեկ արար,
Կտրել ընձյուղ տվող ամեն ծառ ու եղեգ՝
Արարատս սուգել հեղեղներում արյան...
Բայց հեղեղից փրկված տապանի պես Նոյի,
Արարատից իջած հայրենիք իմ քարե,
Որբի համառությամբ ես ապրե՛լ եմ նորից,
Արյունս յուղ արած՝ կանթեղներս վառել...

/Գ. Էմին/

🕮 Հ-37. Հետևյալ բառերը խմբավորել ըստ բաղաձայն հնչյունների հակադրական զույգերի՝ առանձնացնելով հակադրվող հնչյունները և բնութագրել դրանք:

Մարտ, պայտ, պար, պահ, փակ, պայտել, հոտ, թաս, կանոն, կալ, կոչել, քայլ, ծեծ, ծոփ, անց, ցախ, ծորակ, մարդ, փայտ, բար, բահ, բակ, պայթել, հող, դաս, քանոն, գալ, գոչել, գայլ, ցեց, ցոփ, անձ, ձախ, ձորակ, կտրիչ,

կտրիճ, ծառ, կռունկ, որթ, վանկ, հանգ, բար, մատյան, կռինչ, նուրբ, գահույք, ճար, ճիգ, ծաղկել, ցեղ, ձյուն, կրունկ, որդ, վանք, հանք, բառ, պատյան, ճռինչ, սուրբ, կահույք, չար, ձաղկել, ծեղ, սյուն, տառ, տարափ, քարափ, պարապ, կարապ:

📖 **Հ-38. Հետևյալ բազմանդամ հակադրություններում որոշել, թե որ հնչույթների ի՞նչ հատկանիշներ են իմաստատարբերակիչ դեր կատարում հետևյալ բառերում:**

- **ա/** դատ – տատ – թաթ
- **ա/** ճյուղ – շյուղ – հյուղ
- **ա/** ցեղ – տեղ – դեղ – նեղ
- **ա/** լար – լուր – լոր
- **ա/** գալ – լալ – տալ
- **ա/** սարդ – հարդ – զարդ

բ/ դուր – տուր – թուր
բ/ ջահ – գահ – բահ
բ/ տող – տեղ – տաղ
բ/ ծառ – տառ – բառ – գառ
բ/ գիրգ – գիրք – գիրկ
բ/ բավիղ – տավիղ – շավիղ

📖 **Հ-39. Գրել 5-ական բառեր,**

Ա. որոնք սկսվում են՝

ա/ ձայնեղներով **բ/** խուլերով **գ/** շնչեղ խուլերով **դ/** ձայնորդներով

Բ. որոնց վերջնահանգ բաղաձայնը՝

ա/ ձայնեղ է **բ/** խուլ է **գ/** շնչեղ խուլ է **դ/** ձայնորդ է

📖 **Հ-40. & Ի՞նչ ընդհանուր հատկանիշներ ունեն տրված բաղաձայնական շարքերը՝**

ա/ բ, գ, դ, ձ, ջ, զ, ժ, ղ, վ
բ/ ս, շ, խ, ֆ, հ.
գ/ վ, ֆ
դ/ փ, ց, ծ, ձ, ջ, ք, ճ, չ, թ
ե/ պ, տ, կ, ճ, ծ
զ/ փ, ք, թ, ց, չ
է/ դ, տ, թ, ծ, ց, ր, ռ, լ, ն
ը/ վ, ղ, զ, ժ
թ/ մ, ն, լ, ր, ռ, յ
ժ/ բ, պ, փ, մ
ժա/ գ, կ, ք, ղ, խ
ժբ/ բ, կ, զ, ս, մ, ն, ռ, յ

📖 **Հ-41. Ա. Կարդալ Ավ. Իսահակյանի «Ռավեննայում» բանաստեղծությունը և բաղաձայնների հնչյունական վերլուծություն կատարել՝**

- **առաջին եռատողի բաղաձայնները՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության.**
- **երկրորդ եռատողի բաղաձայնները՝ ըստ արտաբերության եղանակի.**
- **երրորդ եռատողի բաղաձայնները՝ ըստ արտաբերության տեղի.**
- **չորրորդ եռատողի բաղաձայնները՝ ըստ կազմության:**

& Բ. Ընդգծված բառակապակցությունում նշել հնչյունների նմանություններն ու տարբերությունները:

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու՛ էլ նայիր սեգ ճակատին
Ու անցիր...

🕮 Հ-42. & Ա. Տրված բնութագրմամբ անվանել բաղաձայնները:

Բ. Այդ հնչյուններով սկսվող, բառամիջում գտնվող, դրանցով վերջացող 2-ական բառեր գրել և բացատրել յուրաքանչյուրի ուղղախոսության օրինաչափությունը:

ա/ Ձայնեղ, պայթական, առաջնալեզվային, պարզ.
բ/ ձայնեղ, պայթական, երկշրթնային, պարզ.
գ/ խուլ /շնչեղ/, պայթական, ետնալեզվային, բարդ.
դ/ ձայնեղ, պայթաշփական, առաջնալեզվային, բարդ.
ե/ ձայնեղ, ետնալեզվային, շփական, պարզ.
զ/ խուլ /պարզ/, շփական, հագագային, պարզ.
է/ ձայնորդ, շփական, երկշրթնային /հպական/, պարզ:

🕮 Հ-43. Ա. Կարդալ և լրացնել բաց թողնված բաղաձայնները:

Բ. Ձեր լրացրած բաղաձայններից առանձնացնել նրանք, որոնք՝
ա/ ձայնորդ են.
բ/ ունեն իրենց համապատասխան պարզ խուլերը.
գ/ կազմությամբ բարդ են.
դ/ նույնն են արտաբերության տեղով.
ե/ չունեն իրենց շնչեղ խուլերը:

Ցանկանում են, թե ոչ, ընդունում են, թե ոչ, գիտնականներն անվերադառնալիորեն, անտեսանելիորեն կապված են մարդկության քաղաքական և ռազմական պատմության հետ: Մեծն Արքիմեդը վենք ստեղծեց՝ իր հայրենի քաղաքը՝ Սիրակուզան, հռոմեացիներից պաշտպանելու համար, բայց պաշտվեցին, և Արքիմեդն սպանվեց: Գերորգ Բրանդտը ստեղծեց ֆոսֆորը: Երեք հարյուր տարի անց նրա քաղաքն այրվեց հրավառվող ռումբերից, որոնք գոյություն չէին ունենա առանց նրա հայտնագործման: Անտուան Լորան Լառուազեն առաջինը համարձակվեց հասկանալ Պրոմեթեսյան պարնը, ֆրանսիական հեղափոխությունից հետո մահվան դատապարտվեց: «Ֆրանսիային գիտնականներ պետք չեն»,- եզրակացվեց դատարանում: Հենրի Մոզլիին, որն առաջինը առաջ քաշեց ատոմի միջուկի գաղաձարը, թույլ տվեցին կռվել և մեռնել խրամատներում: Անգլիային ևս գիտնականներ պետք չէին: Գիտնականներ պետք չէին նաև Գերմանիային: Ամերիկայի Միացյալ Նահանգները ևս ետ չմնաց. որպես բրիտանական լրտես երկրի վտարվեց Գրաֆ Ռումֆորդը, և հրապարակայնորեն խայտառակվեց Օպպենգեյմերը: Գիտնականներն են աշխարհին տվել ատոմային ռումբը. Օտտո Հանը ատոմային միջուկի տրոհումը հայտնաբերեց, Էնրիկո Ֆերմին պատրաստեց աշխարհի միջուկային ռեակտորը, Ալբերտ Էյնշտեյնը ստեղծեց իր հանրահայտ հարաբերականության տեսությունը և հռակվեց իր ոչ պակաս հանրահայտ նամակով...

Այնպես, ինչպես մեքենայի ու հեծանվի հայտնագործողներն են պատասխանատու իրենց հայտնագործած ապրանքի համար, այնպես էլ գիտնականները պատասխանատու են իրենց հայտնագործությունների համար:

/Ըստ Շ. Լ. Գլեշոուի/

🕮 Հ-44. Հետևյալ երկանդամ հակադրություններում որոշել իմաստատարբերակիչ հնչույթները և բնութագրել նրանց հատկանիշները:

❶ կտրել – կոտրել, հղել – հեղել, հարել-հրել, ուրու – ուր, մատնել – մտնել, կանչ – կանաչ, երկ – երեկ, սիրել – սրել

● հարթ – հարդ, բար – պար, գայլ – քայլ, վանկ – վանք, երգ – երկ, ձյուն – սյուն, ձող – դող, ձախ – ցախ, այծ – այց, վաղ – վախ, աճ – աջ, հոսել – խոսել, կտրիչ – կտրիճ, արու – առու, ճիգ – ձիգ

🕮 Հ-45. ❖ Ա. «Հնչյունները տրամաղրություն են ստեղծում, գրում է Հ. Հարությունյանը,- գետի կամ աշնան տերևների խշշոցի մեջ՝ շ-ն, տերևների տսսափի մեջ՝ ս-ն, կենդանիների ձայների մեջ՝ հ, մ, ֆ, ղ, ծիտիկի ծլվլոցի մեջ՝ ծ, ճ»: Գեղարվեստական գրականությունից համապատասխան օրինակներ բերել:

❖ Բ. «Զարմանալի՜ երկիր է Հայաստանը /Հայկական լեռնաշխարհը/, զարմանալի՜ լեզու է հայերենը /լեզուների լեզուն/... Հապա նայի՛ր, սիրելի՛ ընթերցող, թե ի՜նչ երաշք է ծիր բառը ու մի հագագով /միավանկ շնչով/ ինչպես է ձուլում միմյանց երկինք ու երկիր, պտուտ ու ձայն... Ծիր, այսինքն եզերք, ոլորտ, տիեզերքի, երկնքի և՛ ամբողջությունը, և՛ նրա մի մասը: Եվ անսահմանության իր զգացողությամբ որքա՜ն համահունչ է ծով բառին, որը ոչ միայն ջրային հսկա տարածություն, այլև լիություն է նշանակում և իր ծ հնչյունով... իր ծ-ով վերստին մեր ունկը շոյում և հուշում է կրկին ու դարձյալ. ինչպես մեր ծ-ն, իր ակնհայտ արմատական նշանակությամբ, այնպես էլ մեր լեզվի մյուս հնչյունները, բառերն ու մեր մայրենին՝ ամբողջությամբ, ունեն բանական /աստվածային/ ծագում....» /Ըստ «Կրթություն» շաբաթաթերթի, թիվ 28, 09. 07. 2008 թ./: Ուրեմն՝ փորձեք մտածել, թե մեր լեզվի հնչյուններն իմաստային ի՜նչ նշանակություններ կարող են ունենալ և ինչպիսի տրամաղրություններ, ի՜նչ զգացմունքներ ու խոհեր են առաջացնում ձեր մեջ...

🕮 Հ-46. Ա. Կարդալ Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի աշխարհաբար փոխադրությունից քաղված հատվածները, հաշվել ձայնավոր ու բաղաձայն հնչյունները և ըստ դրա կազմել հնչյունների հաճախականության աղյուսակը.

ա/ ո՞ր ձայնավորն է ամենից շատ օգտագործվել. բնութագրել այն.

բ/ ո՞ր բաղաձայնն է ամենից շատ օգտագործվել. բնութագրել այն.

գ/ ո՞ր ձայնավորն է ամենից քիչ գործածվել. բնութագրել այն.

դ/ ո՞ր բաղաձայնն է ամենից քիչ գործածվել. բնութագրել այն:

● Նորակերտ մատյանն այս <u>ողբերգության</u>,
Ուր պատկերված են նշավակվելով
Ամենատարբեր <u>կրքերն</u> ամենքի,
<u>Իրոն</u> ամենայն վիշտ ու ցավերի
Մասնակից, <u>հաղորդ</u>, մեծապես գիտակ
Ու ճշմարտացի մի պատվեր, <u>ավանդ</u>,
<u>Հանձնարարվում</u> է այս երկրի վրա
Հաստատված բոլոր բանականներին,
Համայնատարած քրիստոնյաների
<u>Տիեզերագումար</u> <u>ամբողջ</u> բազմության,
Նրանց, որ նոր են միայն կյանք մտնում,
Որոնք հասել են <u>արդեն</u> <u>արբունքի</u>,
Որ սպասում են <u>վախճանի</u> օրվան
անկար <u>ծերությամբ</u>.... /Գ. Բ/

● Դու լույս ես ու հույս,
Իսկ ես՝ խավար ու խենթ.
Դու՝ ի բնե բարի ու գովելի,
Իսկ ես՝ չար համակ ու ապիկար.
Դու՝ տեր համորեն երկնի ու երկրի,
Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս.
Դու՝ բարձրյալ ազատ՝ կարիքներից զերծ,
Իսկ ես՝ ենթակա տաժանքի, վշտի.
Դու՝ վեր երկրային բոլոր կրքերից,
Իսկ ես՝ կավ անարգ ու զարշելի... /ՀԳ.Բ/

Բ. Ընդգծված բառերում հնչյունական վերլուծություն կատարել:

❖ Գ. Կարո՞ղ է նույն ձայնավորի կամ բաղաձայնի կուտակումը ոճական արժեք ունենալ:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

🕮 Հ-47. Կազմել միավանկ, փակ վանկում ի ունեցող հետևյալ բառերի եզակի սեռականը, առանձնացնել հնչյունափոխվածները և բացատրել կատարված հնչյունափոխությունը:

Գիրք, փիղ, քիթ, միտք, շիշ, սիրտ, կիրճ, վիշտ, միրգ, միս, լիճ, լիցք, նիգ, նիշ, տիղմ, թիզ, բիծ, գիծ, գինդ, թիվ, ծիլ, կիրք, վիհ, քիվ:

🕮 Հ-48. Ա. Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները և բացատրել ի ձայնավորի հնչյունափոխության դեպքերը՝ դրանք խմբավորելով ըստ տրված կետերի՝

✍ 1. միավանկ բառերի փակ վանկի ի-ն դարձել է ը, որը գրվում է.
✍ 2. միավանկ բառերի փակ վանկի ի-ն դարձել է ը, որը չի գրվում.
✍ 3. բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ի-ն աղվել է.
✍ 4. բազմավանկ բառերի վերջին փակ վանկի ի-ն դարձել է ը, որը չի գրվում.
✍ 5. բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի-ն ձայնավորից առաջ աղվել է.
✍ 6. բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի-ն -ակ ածանցից առաջ դարձել է յ.
✍ 7. բազմավանկ բառերի վերջին բաց վանկի ի-ն, միանալով ա հոդակապին, դարձել է ե:

Բ. Ընդգծել այն բառերը, որոնցում ի-ն չի հնչյունափոխվել:

Հոգեկան, եկեղեցական, որդիական, կատաղություն, փոշիանալ, ընձառյուծ, կղզյակ, ոսկեզօծ, շոգենավ, տարեմուտ, ազնվական, ընձուղտ, խղճուկ, գոտեպնդվել, փոշոտ, պատանեկան, աղավնյակ, ոսկեգույն, ուղենիշ, փոշեծածկ, թշնամություն, որդյակ, բարեկամ, քաղաքացիական, ճահճուտ, կանացիություն, ապակեգործ, ընչազուրկ, թվանշան, այգեգործ, ուղեգիր, գեղեցկանալ, սրտաբուխ, տարեդարձ, բարություն, նկարչական, քմահաճ, մտաբերել, աղավնատուն, մարմնագույն, նախագծային, թախծալի, ծաղկաթերթ, մրրկաշառաչ, փոթորկահույզ:

🕮 Հ-49. Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները և բացատրել ու ձայնավորի հնչյունափոխության դեպքերը:

✍ 1. Ընդեղեն, ըմպելիք, ընչացք, ընկալել...
✍ 2. Սրապատյան, բրդատու, նոնենի, հրկեզ, կրծոսկր, սրբազան, ստախոս...
✍ 3. Ամրանալ, երեսնամյա, մածնաբրդոշ, փետրազարդ, դալկանալ...

✍ 4. Փախստական, մրմնջալ, շշնջալ, անրջանալ...
✍ 5. Թթվել, լեզվական, ձվածեղ, չվերթ, ուրվական...

🕮 Հ-50. Հետևյալ բառերով /կամ արմատներով/ 2-ական բառեր կազմել՝ դրանք դարձնելով մեկ սկզբնաբաղադրիչ, մեկ վերջնաբաղադրիչ: Ընդգծել հնչյունափոխվածները և բացատրել կատարված հնչյունափոխությունը:
Կեզ, զեն/ք/, գետ, հրավեր, վեր/ք/, անեծ/ք/, սեր, էջ, վեճ, դեմ/ք/, օրեն/ք/:

🕮 Հ-51. Վերականգնել հետևյալ բառերի հնչյունափոխված բաղադրիչների չհնչյունափոխված ձևերը և բնութագրել երկհնչյունների հնչյունափոխությունը:
Ստորոգելի, արնաքամ, սառցալեռ, բնավեր, մատենադարան, ալրաթաթախ, հուզառատ, խուզարկություն, ծուլանալ, ձնծաղիկ, ատենական, առաքելություն, կենսագիր, կապտականաչ, արնաշաղախ, հուզումնալից, փութկոտ, ընկուզենի, եղջերավոր, ճղափայտ, գունավոր, պտուտակ, բուժել, լծկան, բուսականություն, զեկուցագիր, հուսախաբ, ժանեկազարդ, արնանման, ալրաղաց, վայրկենաբար, մատենագիր, ցուցամոլ, աշխուժանալ, համբուրել:

🕮 Հ-52. Հետևյալ բառերից /կամ արմատներից/ բայեր կազմել և բացատրել կատարված հնչյունափոխությունը:
● Հույզ, բույժ-, գույն, աղմուկ, անեծ/ք/, սույզ-, բուրդ, իղձ, խույզ-, թախիծ, խիղճ, ծիլ, թույն, կողոպուտ, հուշ, լույս, հրապույր, ճիգ, համբույր:
● Ծույլ, հույս, ումպ, հունձ, քրքիջ, էջ, ծուփ, ձույլ, թռիչ/ք/, լլուկ-, պատում, բույս, հրավեր, ձիգ, մրմունջ, կապույտ, վեճ, փղձուկ, մանր, սանր, փթիթ-, քնին-:

🕮 Հ-53. Ընդգծել տրված բառերի արմատները և վերականգնել անհնչյունափոխ ձևերը՝ բացատրելով կատարված հնչյունափոխությունը:
Շտկել, մատղաշ, արքունի, առջև, երեքշաբթի, օրրան, որկրամոլ, ավլել, ցամքոց, մժղուկ, քաղքենի, արմտիք, բերնեբերան, շինծու, անդաղրում, դրկից, բարբառ, ձերբազատել:

🕮 Հ-54. Ընդգծել հետևյալ բառերի վերջնաբաղադրիչը, դրանք դարձնել սկզբնաբաղադրիչ՝ կազմելով նոր բառեր. համեմատել հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները:
Տանջալլուկ, ձկնկիթ, մանրախնդիր, գարնանամուտ, մանրազնին, աշխարհասփյուռ, բանտախուց, սեղանակից, աշխարհացունց, չարագույժ, խելամիտ, սրտաբուխ, ծանրաշունչ, մեծահարուստ, ծաղկահովիտ, գետնամուկ, առանձնատուն, ծաղկափթիթ, մահաքրքիջ:

🕮 Հ-55. Գրել 3-ական բառեր, որոնցում կատարված լինի հետևյալ հնչյունափոխությունը՝

ա/ ի-ն դարձել է **ը**	**դ/** ի-ն սղվել է	**է/** ու-ն դարձել է **ը**
բ/ է-ն դարձել է **ի**	**ե/** ույ-ը դարձել է **ու**	**ը/** ույ-ը սղվել է
գ/ յու-ն սղվել է	**զ/** յա-ն դարձել է **ե**	**թ/** ու-ն սղվել է

🕮 Հ-56. **Կազմել 1-ական բառեր, որոնցում տրված արմատները և բառերը՝**
ա/ հնչյունափոխված են.
բ/ հնչյունափոխված չեն:

Օրոր, կիպ, եղջյուր, նուշ, խարխուլ, -պիշ, սիրտ, -ազուն, գուբ, շուք, -խիլ, -ցիր, աստղ, հրավեր, -մետ, բույր, -պուրծ, զուրկ, նուրբ, -զնին, -մուխ, -տու, ամիս, երկու, ձյուն, -փթիթ, -ցունց, -սուն, նիշ, որդի, կոզի, ծիլ, մատույց, -դետ, փշուր:

🕮 Հ-57. **Ոչ թե ..., այլ...**

1. ոչ թե **գույնավոր**, այլ →...
2. ոչ թե **դաշույնահարել**, այլ →...
3. ոչ թե **կույրացուցիչ**, այլ →...
4. ոչ թե **ողջույնել**, այլ →...
5. ոչ թե **մշակույթային**, այլ →...
6. ոչ թե **հիսնական**, այլ →...
7. ոչ թե **գերանալ**, այլ →...
8. ոչ թե **հարսանեական**, այլ →...
9. ոչ թե **զույգընկեր**, այլ →...
10. ոչ թե **ծույլանալ**, այլ →...
11. ոչ թե **համբույրվել**, այլ →...
12. ոչ թե **օրացույցային**, այլ →...
13. ոչ թե **ընտանեական**, այլ →...
14. ոչ թե **վայրկյանական**, այլ →...
15. ոչ թե **ընկույզենի**, այլ →...
16. ոչ թե **զրույցասեր**, այլ →...

🕮 Հ-58. **Բացատրել հետևյալ բառերում կատարված շեշտափոխական հնչյունափոխությունը. վերականգնել հնչյունափոխված բաղադրիչների անհնչյունափոխ ձևերը:**

❶. Ոսկեզօծ, ուղենշան, մեղվաբույծ, ըմպանակ, եկեղեցական, ուրվական, անասնաշենք, թշնամական, ուրվանկար, գլխակեր, ընդեղեն, գարնանամուտ, սիգապանծ, գիտնական, լուսապայծառ, ընչացք, մրրկահույզ, լեզվաբան, ընձուտտ, ձնծաղիկ, ալրաղաց, գուժկան, թթենի, քնքշօրոր, նարնջագույն, որդյակ, հրավիրատոմս, իշայծյամ, իջնել, կիզակետ, իգական, ձնաբուք, օրինագիծ, կիսակառույց, թվենի, աղեկտուր, անիծել, առվակ:

● Բծավոր, բրգաձև, դարչնագույն, դիտարան, երկրամերձ, երդմնազանց, զրուցասեր, իշախոտ, թռչուն, սրճաման, վիմագիր, փղձկոց, գինետուն, թունավոր, լլկել, լուսնաժպիտ, լուսնագնաց, լրահավաք, վիպասան, վրիժառու, փոթորկալից, գիսաստղ, խղճմտանք, կապուտաչյա, կրթօջախ, կկվականչ, հանդիպակաց, հրապուրանք, ձվաձև, ճշմարտություն, տրտմաշուք, քրքջալ, մանկություն, մատենագիր, մեղվապահ, մրրկաշառաչ, ջլապինդ, սիգաճեմ, քրմապետ, օգտակար:

● Միջամտել, մարդկայնություն, անասնաբուծական, գնացուցակ, հնագիտություն, չվացուցակ, տնօրինություն, բնօրրան, հայրենասիրական, մեղվաբուծություն, տեղեկատվություն, սենդամբերք, հրաձգարան, երգչախմբային, հոգեբուժարան:

🕮 Հ-59. Տրված բառերը բաժանել երեք խմբի՝
ա/ բառեր, որոնցում արմատն է հնչյունափոխված.
բ/ բառեր, որոնցում ածանցն է հնչյունափոխված.
գ/բառեր, որոնց մեջ հնչյունափոխություն չկա:

Կծվահամ, նյարդայնանալ, խճանկար, կռվարար, հովտաշուշան, միջնադարյան, վիպագիր, սառցաբեկոր, փետրազարդ, ընդգծում, քմահաճ, հատկանիշ, ոճրագործ, մթամած, սարդոստայն, փոշեխառն, հնձան, հպանցիկ, նշաձև, շրջադարձ, հնչուն, ատենադպիր, կապտականաչ, վարչական, տավղահար, ծածկամիտ, խուռներամ, հրավերք, մկրատել, արձակագիր, շքեղ, մկնդեղ, լուսնագնաց, հրթիռ, դեղնազօծ, պղծել, հանգուցալուծում, վերջալույս, արնավառ, սյունազարդ, սառցահատ, ճահճապատ, հացթուխ, կատակերգակ, մաքրամաքուր, զուգալող, կամրջակ, բարձրարվեստ, վարչապետ, ուղղագրություն, ուղեցույց, տեսչական:

🕮 Հ-60. Համեմատել բերված բառազույգերը և բացատրել կատարված հնչյունափոխությունը /փոխազդեցական, պատմական/:

- իջանել→իջնել, սպանանել→սպանել, գտանել→գտնել
- մեծացուցանել→մեծացնել, մատուցանել→մատուցել
- քոյր→քույր, բոյր→բույր, հաճոյք→հաճույք
- աւձ→օձ, աւր→օր
- աղբիւր→աղբյուր, առիւծ → առյուծ, գիւղ→գյուղ
- յատուկ→հատուկ, յունուար → հունվար, յիշել→հիշել
- շղթայ→շղթա, ծառայ→ծառա, երեկոյ→երեկո
- դժուար→դժվար, նուագ→նվագ
- աղուէս→աղվես
- մանեակ→մանյակ, կեանք→կյանք, վայրկեան→վայրկյան
- դուռն→դուռ, մուկն→մուկ, թոռն → թոռ
- գիտության+ը → գիտությամբ, անձան+ը→անձամբ
- բոկիկ→բոբիկ
- ընդբռնել→ընմբռնել, ընդկեր→ընկեր, ընդկճել-ընկճել
- զփոփել→սփոփել
- բող+բող→բողբոջ, դող+դող→դողդոջ, կաչ+կաչ→կարկաչ
- աշխարհահայցք → աշխարհայացք, հասարակակարգ→հասարակարգ
- կրուկն→կրունկ, կապերտ → կարպետ, խստոր→սխտոր
- տարգալ→տրգալ→ տգալ→գդալ:

🕮 Հ-61. Գրել գրաբարում ն վերջնահնչյունն ունեցող բառեր և, նրանցից ընտրելով 3-ը, կազմել բառային զույգեր, որոնցից մեկում ընտրված բառը հանդես է գալիս ն վերջնահնչյութով, մյուսում՝ ոչ. օր.

շուրթ - 1. **շրթնատամնային**
2. **շրթներկ:**

🕮 **Հ-62. Կարդալ և դուրս գրել հնչյունափոխված բառերը:**

Պրոֆեսորի պաշտոնը Ռենտգենը պետք է ստանար 1872 թ., երբ նրա թեկնածությունն առաջարկեց Ավգուստ Կունդտը՝ նրա ուսուցիչը: Բայց գերմանական հնագույն համալսարանը, որի հիմնադրումը հաշվվում է 1402թ-ից, չցանկացավ հարգել Ռենտգենի ուսուցչի խնդրանքը, չցանկացան միջնակարգ կրթություն չունեցող պրոֆեսոր ընդունել: Այո՛, այո՛, Ռենտգենը՝ հռչակավոր Ռենտգենը, որի անունը գիտի երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր մարդ, գիտնական, որն առաջինն ստացավ ֆիզիկայի գծով առաջին Նոբելյան մրցանակը, միջնակարգ դպրոցի ավարտական վկայական չուներ: Գիտնական, որը հրաժարվեց Գիտությունների ակադեմիայում պատվավոր պաշտոն կրելուց, հրաժարվեց նաև ազնվականական տիտղոսից...

Նա սովորում էր և ուզում էր ավարտել, բայց տհաճ միջադեպի պատճառով նրան դպրոցից հեռացրին: Աշակերտներից մեկը գրատախտակին ուսուցչի ծաղրանկարն էր նկարել, իսկ ուսուցիչը մտածել էր, որ Ռենտգենն է արել, և Վիլիի մտքով էլ չանցավ արդարանալ: Եվ ահա արդյունքը՝ հանդգնության համար հատուցել: Սկզբում Վիլին վշտացավ, հետո մի քիչ հանգստացավ, հիմնավորապես ամեն ինչ մշակեց ըստ ծրագրի և եկավ քննության՝ վստահ իր գիտելիքների վրա: Քննությունից հեռացավ՝ դարձյալ իր գիտելիքների վրա վստահ, բայց առանց վկայականի: Քննողը նույն ուսուցիչն էր, որի ծաղրանկարը նկարել էին:

ՇԵՇ, ՎԱՆԿ, ՏՈՂԱԴԱՐՁ

🕮 **Հ-63. Շեշտադրել հետևյալ բառերն ու բառաձևերը. բացատրել հայերենի շեշտադրության ընդհանուր օրինաչափությունից կատարված շեղումները:**

✍ 1. Աստղ, կայսր, դուստր, արկղ, դառը, սառը, մեղր, կարծր, մանր, փոքր, թանձր, ծանր, բարձր, խառը, գիշանգդ, վեհանձն, ամենափոքր:

✍ 2. Սիրտս, միտքս, գիրքդ, եղբայրս, անունդ, քաղաքը, լույսը, ծառերը, ծաղիկը:

✍ 3. Գոնե, գուցե, գրեթե, միթե, նույնպես, մանավանդ, նամանավանդ, միգուցե, նույնիսկ, բացի, նաև, իհարկե:

✍ 4. Քարշ գալ, ման գալ, շուռ գալ, մեղք գալ, ուժ տալ, դուրս գալ:

✍ 5. Չեմ գա, չեմ տա, մի տար, մի տուր, մի բեր, երազելու եմ, գրում եմ, լսել էի:

✍ 6. Որերորդ, քանիերորդ, որտեղ, որևէ, ովևէ, ուրևէ, տասնմեկերորդ, վեցերորդ:

✍ 7. Որպեսզի, ըստ էության, առ այսօր, այնպես որ, կարծես թե, հենց որ, ասես թե, միայն թե, հազիվ թե, քանի որ:

✍ 8. Լերմոնտով /լերմոնտովյան/, Պուշկին /Պուշկինից/, Ասիա /ասիական/, Ամերիկա /ամերիկացի/, Անգլիա /անգլիացի/, Իսպանիա /իսպաներեն/:

🕮 **Հ-64.** | **Ոչ թե ..., այլ...** |

1. ոչ թե **նույնի՛սկ**, այլ → **նո՛ւյնիսկ**
2. ոչ թե **ինչևիցե՛**, այլ → ....
3. ոչ թե **ինչ ո՛ր է**, այլ → ....
4. ոչ թե **ինչևէ՛**, այլ → ....
5. ոչ թե **որտեղ ո՛ր է**, այլ → ....
6. ոչ թե **ուր ո՛ր է**, այլ → ....

7. ոչ թե **միգուցե՛**, այլ →
8. ոչ թե **գուցե՛**, այլ →
9. ոչ թե **թեև՛**, այլ → ....
10. ոչ թե **մանավա՛նդ**, այլ → ....
11. ոչ թե **ոչ ո՛ք**, այլ → ....
12. ոչ թե **փոքր-ի՛նչ**, այլ → ....
13. ոչ թե **միթե՞**, այլ → ....
14. ոչ թե **նամանավա՛նդ**, այլ → ....

Հ-65. Ա. Տրված բառաշարքում առանձնացնել այն բառերը, որոնք ունեն հետևյալ մասնակաղապարները՝

ա/ բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ
բ/ փակ վանկ + փակ վանկ
գ/ բաց վանկ + բաց վանկ + փակ վանկ
դ/ փակ վանկ + բաց վանկ + փակ վանկ
ե/ փակ վանկ + փակ վանկ + փակ վանկ
զ/ բաց վանկ + փակ վանկ + բաց վանկ + բաց վանկ + փակ վանկ
է/ բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + փակ վանկ
ը/ բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ

Մենապարուհի, մեքենայաբար, միառժամանակ, նահատակություն, նարնջավաճառ, նորաբանություն, ուսանողուհի, փայտափորագրություն, մատենագիտություն, կաղամբաթիթեռ, ճամփորդ, ճանապարհ, ճաշկերույթ, ճգնաժամ, մագաղաթ, մածնախոտ, առու, ծառա, ձիարշավարան, ճակնդեղագործ, ներդաշնակ, հանդերձանք, ժանգահամ, ծանրաքայլ, զինվոր, աբեղա, աստղիկ, հացթուխ, ծովախոտ, կիսաբաց, շինություն, կոշկակար, գեղանի, նախօրե, պողոտա, կատու, ծովահողմ, օրուգիշերահավասար, բացակա, ապակի, կատարածու, օդաջեռուցիչ, օրինակելի, օրհներգել, օրորոցային:

Բ. Կազմել մնացած բառերի վանկակաղապարները:

Հ-66. Ա. Տողադարձել տրված բառերը և եզրակացությունների ձևով սահմանել տողադարձի գործող կանոնները. տողադարձը հիմնականում ի՞նչ սկզբունքով է կատարվում:

Բ. Յուրաքանչյուր կետում ավելացնել 3-4 օրինակ ևս:

Գ. Առանձնացնել տողադարձի երկակիություն ունեցող բառերը:

1. դասարան, կատու, բերան, հեքիաթ...
2. ամրոց, արձան, արդեն, թարգման, երկդիմի
3. զոջալ, կրկին, զնդան, դպրոց, մկրատ, թմբկահար, դղրդյուն, կոնչալ, մշտնջենական, տրտնջալ, բոնցքամարտ, հանդգնել...
4. անկյուն, ուրախություն, սենյակ, մատյան, Հակոբյան...
5. Երևան, բարևել, սնագույն, տերևաթափ, անձրևել...
6. խնդրել, կազմվել, աղջկա, կարմրել, մարմնի, թոցնել, խաղացնել...
7. Էմմա, Հովհաննես, բերրի, գերաններ, տարրական, զննել, փթթել, արճճի, մրրկաբեր...
8. զբաղվել, շտապել, զգույշ, սպասել, սկիզբ, ստանալ...
9. Ստեփան, Սպարտակ, Ստրասբուրգ, Ստամբուլ...
10. անօգուտ, նախադրյալ, անապահով...

✍ 11. գերխնդիր, վայրէջք, երկնասլաց, ձեռնտու, ունկնդրել, արևմտյան...
✍ 12. դռնբաց, ձկնկուլ, մբնկա, մկնդեղ, ճոճռոց, թրթիռ...

📖 Հ-67. Ուշադիր նայել տողադարձված բառերը և հիշել համապատասխան կանոնները:

❶ Ան-վնաս, քաշ-քշել, ակն-կալել, փայլ-փլել, վառ-վռուն, վավ-վգել, չարա-ճճի, շարա-դրել, փոխ-գնդապետ, հեծ-կլտոց, ակն-դետ, համա-կրանք, լեռնա-բնակ, հոտն-կայս, երկնա-սլաց, կարգա-դրել, դարա-գլուխ, ձեռն-տու, բացա-տրակուսն, ունկն-դրել, գրա-քննիչ: ✍

❷ Թրր-թիռ, մբր-մուռ, մթն-կա, ձկն-կուլ, գբռ-գռալ, դռն-բաց, մկն-դեղ, ճռռ-ճռռոց: ✍

❸ Գերբ-նական, համալ-սարան, մասնակ-ցություն, գայթակ-ղել: ✍

❶ Զբ-նբ-նել // զբն-նել, խբ-ճբ-ճել // խբճ-ճել, պբ-տբ-տել // պբտ-տել, քբ-նբ-նել //քբն-նել, մբ-րբ-րիկ // մբր-րիկ, խբր-տբ-նել // խբրտ-նել, աղջբ- կա // աղջ-կա, ար-ճբ-ճի // արճ-ճի, խբն-դբ-րել // խբնդ-րել, կարմբ-րել // կարմ-րել, թբռ-ցբ-նել // թբռց-նել, մոտեցբ-նել // մոտեց-նել, կազմբ-վել // կազմ-վել: ✍

📖 Հ-68. Ա. Կարդալ, ընդգծել այն բառերը, որոնք ձեր կարծիքով տրամաբանական շեշտ են կրում:

Բ. Վանկատել ընդգծված բառերը և բացատրել վանկատման սկզբունքներն ու օրինաչափությունները:

Տարիները անցնում են, տարիների հետ կուտակվում են և հոգսերը: Նրա հակառակորդները հասան այն բանին, որ նա կանգնի ինկվիզիցիայի ամենաբարձր ատյանի առջև ու պատասխան տա իր հերետիկոսությունների համար: Սպառնալիքը լուրջ էր. ընդամենը երեսուն տարի էլ չէր անցել այն օրվանից, երբ այստեղ՝ Հռոմում, խարույկի վրա սառն անտարբերությամբ այրեցին իր փայլուն նախորդին՝ Ջորդանո Բրունոյին, այն բանի համար, որ, ի տարբերություն մյուսների, չհրաժարվեց Տիեզերքի անսահմանության ու աշխարհների բազմազանության վերաբերյալ իր ուսմունքից: Գալիլեյը մեկուսացվեց. նույնիսկ արգելեցին զբաղվել գիտությամբ... Եվ այս ամենը՝ քայքայված առողջությամբ, օրեցօր վատթարացող տեսողությամբ, իսկ կյանքի վերջին չորս տարին՝ լրիվ կուրացած:

Բայց ոգին... Մոլեգնող հանճարը գործող հրաբխի է նման. ջրով չի մարի: Նրա մեջ Տիեզերքի կտորն է դրված՝ անհագուրդ, անվերջ որոնող: Շարժում... Իր ողջ կյանքում հանգիստ չի ունեցել այդ հարցից. ի՞նչ է շարժումը: Նրան միշտ էլ զարմանք է պատճառել շարժման արիստոտելյան բնորոշման հարակեցությունը՝ գրեթե 2000 տարի, բնորոշում, որը ոչ միայն չի լուծում նույնիսկ պարզագույն խնդիրներ, այլև պատնեշի նման կանգնած խանգարում է մտքի առաջընթացին: Պետք է քանդել այդ ամենը... Եվ նա սկսեց. դրեց ամենախոշոր որձաքարերն այն հիմքի, որի վրա շատ չանցած հանճարեղ Նյուտոնը կբարձրացնի նրա երազած վիթխարի շենքը՝ ճակատին գրված՝ Մեխանիկայի և Դինամիկայի օրենքներ, և որի վրա կկանգնի գալիք քաղաքակրթությունը:

/Ըստ գիտական աղբյուրների/

Գ. Տեքստից դուրս գրել՝

ա/ եռավանկ բառերը, վանկատել և նրանցում ընդգծել՝

1. բաց վանկերը՝ մեկ գծով.
2. փակ վանկերը՝ երկու գծով՝ նշելով բառի մեջ նրանց գրաված դիրքը /սկզբնավանկ, միջնավանկ, վերջնավանկ/.
3. շեշտակիր վանկերը՝ առնելով շրջանակի մեջ.

բ/ այն բառերը, որոնք ունեն վանկակազմական հետևյալ կաղապարը՝

1. *բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + փակ վանկ.*
2. *բաց վանկ + բաց վանկ + բաց վանկ + փակ վանկ + բաց վանկ + փակ վանկ:*

Դ. Առաջին պարբերությունից դուրս գրել գաղտնավանկ ունեցող բոլոր բառերը և տողադարձել:

Ե. Երկրորդ պարբերությունից դուրս գրել բոլոր միավանկ բառերը:

Զ. Գտնել ամենակարճ բառերը՝ միահնչյուն բառերը

Է. Արտագրել այն բառերը, որոնք հայերենի շեշտադրության ընդհանուր օրինաչափությունից շեղվում են:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՌԱՊԱՇԱՐ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ-1. Օգտվելով բացատրական բառարաններից՝ գրել 5-ական մենիմաստ և 20-ից ավելի իմաստներ ունեցող բազմիմաստ բառեր:

Բ-2. Գտնել փոխաբերաբար գործածված բառերը:

Երկրագունդը պտույտ է անում, և աշխարհը պտույտ է անում ու գալիս կանգնում Հայի դռանն ու ասում.

-Շնորհավորում եմ քեզ, որ մի տարի էլ ավելացրիր քո հավերժական գոյությանը:

Հայը սեղմում է Երկրագնդի ձեռքը, գրկում է աշխարհը, թփթփացնում մեջքին ու հուզված պատասխանում.

- Շնորհակալ եմ Արարչին, որ ինձ աշխարհը գրկելու շնորհ է տվել:

Պտտվում են օրերը, պտտվում են տարիները, դարերն ու հազարամյակները, գալիս ու իրենց խոնարհումն են տալիս հավերժական Հային, իրենց ժամանակն են ընծայում, ներկա ստանում ու հեռանում առհավետ...

/Վաչագան Ա Սարգսյան/

Բ-3. Ա. Դուրս գրել փոխաբերական իմաստներով գործածված բառերը. դրանց բուն իմաստներով կազմել նախադասություններ:

● Առավոտ էր: Բնությունն ապաքինված հիվանդի պես նայում էր թախծախառն զգայնիկ ժպիտով: Ցմեռը նոր էր թողել նրան. նա դեռ թույլ էր ու դյուրաբեկ: Գարունը նոր էր լցվում նրա երակների մեջ, անրջում էր՝ աչքերը տամկությամբ լի, և հևում էր անհագ կարոտից: Հողն անհագ շնչում էր: Արդեն արևկող տեղերում զարմացած ու միամիտ նայում էր ուշացած ձնծաղիկը: Դեռատի, անփորձ գարունը տեղ-տեղ վախով ասեղնագործում էր գետնի գորգը: Վարդագույն վանքը ձորափին լռել էր ինքնամփոփ:

/Մ. Գալշոյան/

● Անտառի սրտից արցունք է ծորում,
Քարափից թռավ, փշրվեց քարին
Հուզմունքից շիկնած ջրվեժը ձորում,
Միրո սարսուռից հովերն արթնացան
Եվ կամաց-կամաց շնչող անտառի
Շուրթերի վրա շշուկներ դարձան:
Ամպը որոտաց... գարուն է կրկին,
Դողում են հողի թարթիչները թաց:

/Հ. Սահյան/

Բ. Ի՞նչ եք հասկանում «փոխաբերաբար գործածված բառ», «փոխաբերություն», «փոխաբերական իմաստ» ասելով:

Բ-4. Ստորև բերված կապակցություններում բառերն ուղիղ իմաստով են գործածված: 2-ական բառակապակցություններ կազմել՝ նույն բառերը փոխաբերական իմաստներով գործածելով, օր.՝ **կապույտ ծով կապույտ հեքիաթ - հուշերի ծով:**

Մաքուր ձեռք, բարձր սար, երկաթե դուռ, բաժակը կոտրել, գետը հոսում է, ծառը ծաղկում է, սենյակը մթնեց, զուլալ աղբյուր:

🕮 **Բ-5. Ա. Տվյալ կապակցություններում որոշել տուն բառի նշանակությունները:**

1. Քաղաքի տները 2. Տնից դուրս գալ 3. Բանակից տուն վերադառնալ 4. Տան միակ նեցուկը 5. Տան հոգսեր 6. Նկարիչների տուն 7. Առևտրի տուն 8. Նախարարական տուն 9. Թագավորական տուն 10. Բանաստեղծական տուն 11. Քաղաքամայր տուն 12. Խելքի տուն:

Բ. Նույն բառով դարձվածքներ գրել և բացատրել նրանց նշանակությունը:

🕮 **Բ-6. Է. Աղայանի բառարանից դուրս գրել՝**

ա/ սեղմել և ցրել բառերի բոլոր նշանակությունները.

բ/ ուժեղ բառի բուն նշանակությունները.

գ/ թև բառի փոխաբերական նշանակությունները.

դ/ ցուրտ բառի դարձվածային նշանակությունները:[1]

🕮 **Բ-7. Ա. Նախադասություններ կազմել հետևյալ բառերի բուն և փոխաբերական իմաստներով /ընդգծված բառերի կողքին փակագծերում առնված թվերից առաջինը բառի իմաստների քանակի ցուցիչն է, երկրորդը՝ բուն իմաստների, երրորդը՝ փոխաբերական, իսկ չորրորդը՝ դարձվածաբանական/ :**

ա/ Արև, թառամել, լալ, թռչել, <u>կծել</u> /9- 4+5/, երկար, սեղան, <u>քաշ</u> /11-?+?/, լեզու /18-?+? և 68/

բ/ Կծու, <u>կրակ</u> /15-7+8 և 41/, դառն, երգել, մթնել, զարթնել, <u>ժպտալ</u> /9-?+?/:

🕮 **Բ-8. Կարդալ և բացատրական բառարանների օգնությամբ որոշել ընդգծված բառերի իմաստները. ո՞ր դեպքում են դրանք ուղիղ /բուն/ իմաստով գործածվել, ո՞ր դեպքում՝ փոխաբերական:**

● 1. Փողոցներում հիմա հանկարծ զարթնած քամին <u>խաղում է</u> խենթացած /ՊՍ/: 2. Արևը <u>խաղում էր</u> մայրամուտի ամպերի մեջ /ԱԲ/: 3. <u>Խաղում են</u> անհոգ ալիքը գետի /ՀՀ/: 4. Բայց հավքերն էլի հարավ կչվեն, Մանկիկներն էլի կխաղան <u>քակում</u> /ՀՍ/:

● 1. Լաչակը հիմա այդ խակ այրերի գլուխն <u>է այրում</u> /ՊՍ/: 2. Սիրուց <u>այրվում է</u> սաստիկ /ՀԹ/: 3. <u>Այրվում էին</u> տները, <u>այրվում էին</u> ծառերը. <u>այրվում էր</u> գյուղը: 4. <u>Այրված է</u> սիրտս, <u>այրված են</u> հուշերը և այն բոլոր նամակները, որ գրել ենք միմյանց: 5. Թվաց, թե ներսն <u>այրվում է,</u> ու հիշեց ձորակում վազող վճիտ ջրերի ալիքները: 6. Արևի բարկ ճառագայթները <u>այրել էին</u> ամեն կանաչ ու թուփ:

● 1. Երկինքը հազար աչքով <u>ժպտում է</u> /ՀԹ/: 2. Սենյակի ծաղիկների թերթիկները <u>ժպտում են</u> մռայլ ճերմակությամբ: 3. Տարեց մարդը <u>ժպտաց</u> իր հուշերին, անցած օրերին: 4. Վերադարձավ ու նայեց մարմարակերտ գեղուհուն, Վերադարձավ ու տեսավ՝ <u>ժպտում էր</u> նա հերարձակ /ԳՍ/: Սարեր ու ձորեր իրար երեսին նայում են, <u>ժպտում</u> ամպի մշուշով /ՎՄ/:

---

[1] Բառարանում դարձվածաբանությունը բերվում է բառահոդվածի վերջում՝ նոր տողից, արամյան տառերով, սկզբից դրված գծիկով: Ներառում է կայուն բառակապակցությունները, հարադիր բայերը և առանձնահատուկ արտահայտությունները:

● 1. Բերդապարսպի քարե հեղեղը ընդմիշտ փակել էր դուռը: 2. Երբ հեղեղը դադարեց, Նոյը հասկացավ, որ պահպանվել է մի հողակտոր-կղզյակ: 3. Կրակոտ երիտասարդի շուրթերից բառերի հեղեղ էր թափվում: 4. Արցունքի հեղեղն ալեկոծել էր նրա դեմքը:

🕮 **Բ-9. Խավար, աշխարհ, ակոս, ծաղիկ, քար, սպիտակ, ծով բառերը փոխաբերական իմաստներով գործածել բառակապակցությունների մեջ:**

🕮 **Բ-10. Ի՞նչ տեսակ իմաստափոխություն է կատարվել հետևյալ բառախմբերում. շարունակել՝ ավելացնելով 5-6 օրինակ ևս:**
● Գոհար, Արշալույս, Արևիկ, Շուշան, Կորյուն....
● Վոլտ, ամպեր, դիզել, մեկենաս, փանոս, ռենտգեն...

🕮 **Բ-11. Գրել ձեր ընտրած մասնագիտությանը վերաբերող 30-40 գիտաբառեր՝ տերմիններ /եզրեր/:**

🕮 **Բ-12. Գիտության ո՞ր ճյուղերին են հատուկ հետևյալ գիտաբառերը: Ավելացնել նորերը /3-4 բառ/:**
ա/ տիեզերակայան, աստղանավորդ, տիեզերափոշի, լուսնահեռ...
բ/ արագացում, դիմադրություն, հոսանքաչափ, կիսահաղորդիչ...
գ/ հնչույթ, շեշտ, շարույթ, ստորոգյալ, պայթաշփական, մաքրամոլություն...
դ/ օբյեկտ, դատողություն, տրամաբան....
ե/ արմատ, ածանցյալ, կոտորակ, հավասարում, բուրգ, շրջանագիծ...
զ/ աղաթթու, քլոր, էթիլեն, կալցիում...
է/ վերջնարկ, ոլորասահք, վազքուղի, օլիմպիադա, գեղասահք...
ը/ գործարար, ներդրում, տնտեսագիտարկ...
թ/ մատերիալիստական, նատուրալիզմ, հակահիդեալիստական, կեցություն...
ժ/ համագումար, ավագանի, սահմանադրություն, կուսակցություն...
ժա/ կազմախոսություն, այրվածքաբանություն, բացիլակիր, արմենիկում...

🕮 **Բ-13. Հետևյալ բառերը խմբավորել ըստ գործածության տարբեր ոլորտների:**
Քվարկ, քվազարներ, լողորդ, բազմապատկիչ, գալակտիկա, պրոտոն, հերթագայություն, ձերբակալել, պարագա, դատավճիռ, քրեածին, ծանրամարտիկ, գավաթակիր, ախտածին, կանխարգելիչ, նեյտրոն, տենոր, բարիտոն, դատապաշտպան, շարույթ, կիսորդ, դարձվածք, շախմատ, քանորդ, պատմավեպ, վնասվածքաբանություն, հանելի, հակազդում, ասպիրին, արսենիում, ծծումբ, ազդոսկր, գանգ, ստորակետ, չափածո, հնչույթ, օրենսգիրք, ողնուղեղ, մանրէ, դեղահաբ, վիրահատություն, համույթ, գրաքննադատ, քորեյ, ամբաստանյալ, քննիչ, համանվագ /սիմֆոնիա/, էստրադա, դիֆտերիա, հարբուխ, տիֆ, մեներգ, տաղաչափություն:

🕮 Բ-14. Գրել 5 տերմին, որոնք գործածական են մեկից ավելի գիտաճյուղերում /օր. արմատ → լեզվաբանություն, կազմախոսություն, բուսաբանություն, մաթեմատիկա/:

🕮 Բ-15. Չեզոք, դրական, տրոհել տերմինները գործածական են և՛ ֆիզիկայում, և՛ լեզվաբանության մեջ: Կազմել համապատասխան նախադասություններ և բացատրել նրանց իմաստները:

🕮 Բ-16. -Ություն և -ական ածանցներով տարբեր գիտություններում ներառվող տերմիններ գրել և բացատրել նրանց իմաստները:

🕮 Բ-17. Ա. Է. Աղայանի բառարանից դուրս գրել ֆոտո-, ավտո-, գազ-, ավիա-, ուլտրա-, մակրո-, միկրո-, ռադիո, էլեկտր/ա/- միջազգային տերմինակազմիչներով սկսվող բառեր:

& Բ. Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանից» օգտվելով՝ շարունակել լրացնել նույնասկիզբ բառերի ցանկը:

🕮 Բ-18. Աստղ, լուսին, ջերմ/ա/, ատոմ, լույս, լիցք, ինքն/ա/- բաղադրիչներով բաղադրյալ տերմիններ կազմել և նշել նրանց գործածության ոլորտը:

🕮 Բ-19. Որևէ օրաթերթի ցանկացած էջից դուրս գրել տերմիններ /միջազգային, քաղաքական, տնտեսագիտական, սպորտային..../:

🕮 Բ-20. Ընտրել ճիշտ ձևակերպումները:
Բառապաշարը՝
▲▼ լեզվի բոլոր բառերի ամբողջությունն է:
▲▼ օգտագործվող բառերի ամբողջությունն է:
▲▼ բաց համակարգ է:
▲▼ փակ համակարգ է:
▲▼ մեկընդմիշտ տրված, կայուն կարգ է:
▲▼ շարունակ փոփոխվող, զարգացող իրողություն է:

🕮 Բ-21. Ի՞նչ պետք է եզրակացնել, երբ ասում ենք՝ Նոր Հայկազյան բառարանը պարունակում է 50 000 բառ, Ստ. Մալխասյանցի բառարանը՝ 120 000 բառ և դարձվածային միավոր, Է. Աղայանի բառարանը՝ 135 600 բառ և 11 000 դարձվածային միավոր:

🕮 Բ-22. Բացատրել բառային կազմ, բառային հիմնական ֆոնդ կամ բառապաշարի միջուկ հասկացությունները: Որի՞ն են բնորոշ հետևյալ հատկանիշները՝ կայունությունը, ոչ մեծ ծավալը, գործածության տևականությունը:

🕮 Բ-23. & Համեմատել տարբերակները և փորձել բացատրել բառընտրությունը հեղինակային խմբագրության ժամանակ: Նշել այլ կարգի փոփոխություններ ևս /ուղղագրական, կետադրական, շարադասական, հնչերանգային, ոճական/:

● **ա/** Մեր գյուղն այն է, որ հպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը դրած ճակատին
Մտածում է տխրադեմ.
Ի՞նչ է ուզում, չըգիտեմ....

● **ա/** Իսկ Ձորագետից ալքեր են թռչում...
Եվ ալիքները փրփրադեզ ուռչում,
Մռայլի միջից ծփում են կայտառ,-
«Բռնեցե՞ք, փախավ Սաքոն խելագար...

● **ա/** Նրանց ոտքերում պոչն ոլորելով՝
Սուրում է, սողում Դև Բեթը մոլի,
Հին-հին ափերը միտքը բերելով,
Ափսոսում էն լավ օրերն անցյալի
Ու գոռում գիժ-գիժ.
- Վա՜շ-վի՜շ... վա՜շ-վի՜շ...

գ/ Նրանց ոտքերում գազազած գալի՝
Գալարվում է գիժ Դև-Բեդը մոլի,
Խելագար թրռչում քարերի գըլխով,
Փըրփուտ է թքում անզուսպ երախով
Թքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փնտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
-Վա՜շ-վի՜շ, վա՜շ-վի՜շ... /Հ. Թումանյան/

բ/ Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին՝
Ձեռը տըված ճակատին՝
Միտք է անում տխրադեմ.
Ի՞նչ է ուզում՝ չգիտեմ... /ՀԹ/

բ/ Այնինչ Դեբեդից ալքեր են թրռչում,
Ալիքներ ելնում, ալիքներ ուռչում,
Խավարի միջից ծըփում են կայտառ՝
Բըռնեցե՞ք, փախա՞վ Սաքոն խելագար:

բ/ Նրանց ոտքերում վերևից գալի,
Սուրում է սողում Դև-Բեթը մոլի.
Ով գիտի ինչեր միտքը բերելով
Ափսոսում իրեն գործքերն անցյալի
Ու գոռում գիժ-գիժ.
- Վա՜շ-վի՜շ Վաշ-վի՜՜շ...

🕮 Բ-24. Կետերի փոխարեն գրել փակագծերում տրվածներից այն բառը /բառերը/, որը /որոնք/ համապատասխանում է /են/ նախադասության մտքին:

Մարդը **/հայտնագործել է, գտել է, բացահայտել է, ի հայտ է բերել, փնտրել է, մտածել է/** բառեր այն ամենի համար, ինչ շրջապատում է իրեն ... **/աշխարհում, երկրի վրա, տիեզերքում, երկրագնդում, հողագնդի վրա/**: Բայց դա քիչ է. նա **/անվանել է, բացատրել է, հայտնաբերել է, որոշել է, ցույց է տվել/** նաև շարժումներն ու դրությունները, **/անվանել է, կոչել է, որակել է, արտահայտել է/** բառերով այն բոլոր հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք շրջապատում են իրեն: Բառարանը **/պարունակում է, ներառում է, ընդգրկում է, արտացոլում է, արձագանքում է, բովանդակում է, ամփոփում է, պարփակում է, մատնանշում է/** այն բոլոր փոփոխությունները, որոնք ...**/կատարվում են, կատարվելու են, գոյություն ունեն, իրագործվում են/** աշխարհում: Այն **/պահում է, պաշտպանում է, պահպանում է, արտացոլում է/** դարերի ...**/փորձ, փորձարկությունը,**

փորձարարությունը/ և /իմաստությունը, իմաստնությունը, ողջախոհությունը՞ ետ չմնալով ժամանակակից /կյանքից, առաջընթացից, զարգացումից, տեխնիկայից, գիտությունից, արվեստից/:

🕮 Բ-25. Ռ. Ղազարյանի և Տ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանից» դուրս գրել 10 բառ՝ իրենց բացատրություններով:

🕮 Բ-26. Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» / կամ այլ բառարաններից/ դուրս գրել 10-ական այնպիսի բառեր, որոնք ունեն ժդ. /ժողովրդախոսակցական/, գվռ. /գավառական/ և բրբռ. /բարբառային/ նշումները:

🕮 Բ-27. Կողք կողքի գրել գրական լեզվի տարբերակային /արևմտահայերեն և արևելահայերեն/ բառերը:

Մանչ, **ժամանակ,** աղվոր, սուղ, ճատրակ, **հարևան, հեռախոս, ձու,** հյուլե, քարյուղ, **մեխ, քաղցած, ակադեմիկոս,** գոց, հոն, հոս, անանկ, **վայրկյան,** գինով, առտու, **տանկ, տուրիստ, գնացք, տղա,** ատեն, **գեղեցիկ,** դրացի, **թանկ, շախմատ,** հեռաձայն, հավկիթ, գամ, անոթի, կաճառորդ, կնախտաբան, **ատոմ, նավթ, փակ, ժյուրի, կոմպոզիտոր, կինո, ռադիո,** պետնիշ, մրցատյան, երգահան, շարժանկար, **այնտեղ, այստեղ, մոտ,** ագեվազ, **ափսե, բաղրիջան, բանվոր, բանտ, գազար,** ձայնասփյուռ, հրասայլ, զբոսաշրջիկ, կառախումբ, քով, **այնպիսի,** բոպե, **հարբած, առավոտյան, կենդուրու,** պնակ, սմբուկ, գործավոր, բռնատուն, ստեպղին, դեղարան, **դեղատուն, գինեկոլոգ, գերբ:**

🕮 Բ-28. Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական բացատրական բառարանից» դուրս գրել բառեր /5-10/, որոնք՝
ա/ հնչյունափոխական-ուղղագրական տարբերակներ են /անբիծ-ամբիծ, բոբիկ-բոպիկ, թողել-թողուլ.../
բ/ բառակազմական տարբերակներ են /բոնցքամարտ-կռփամարտ, հեռուստացույց-հեռացույց/.
գ/ զուտ արևմտահայերեն են /այսինքն գործածական են միայն արևմտահայերենում/ /աղվոր, քով, պլլվիլ ..../
դ/ գործածական են և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում /պնակ, գամ .../
ե/ երկու տարբերակներում ունեն ձևային ընդհանրություն, բայց արտահայտում են տարբեր իմաստներ /կամ նրանց իմաստային դաշտերը մասամբ են համընկնում /վայրկյան՝ «բոպե» և «1/60 բոպե», հոտել՝ «քուրել» և «նեխել»/:

& Բ. Հիշյալ բառարանից ընտրել որևէ բառահոդված, համեմատել արևելահայերենի բառարաններից որևէ մեկի հետ և դուրս գրել այն բառերը, որոնք կան արևելահայերենում, սակայն չկան արևմտահայերենում:

🕮 Բ-29. Բառարանի օգնությամբ գրել բնաձայնական բառեր /ըստ Աճառյանի տվյալների՝ դրանց թիվը 150-ից անցնում է/:

🕮 Բ-30. Ա. Ի՞նչ են ցանկացել ասել մեր լեզվի նահապետները, երբ գրել են. «Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխառնել, քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պոչազգեստ, կոտլետը՝ կողիկներ կամ ռահատ լոխումը՝ հանգստապատառ: Անճիշտ կամ անշնորհք թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզուն, քան ուղղակի փոխառությունը» /Հ. Թումանյան/: **«Ծայրահեղ մաքրասիրությունը օտարամոլության չափ արհամարհելի է»** /Ղ. Աղայան/:

Բ. Ե՞րբ է փոխառությունը «օտարաբանություն» որակվում:

🕮 Բ-31. Ա. Կարդալ Պ. Սևակի «Պահպանենք և հարստացնենք մայրենին» հոդվածից ընտրված հատվածը և եզրակացնել, թե ինչպե՛ս պետք է պահպանել և հարստացնել մայրենին:

Բ. Կետերի փոխարեն լրացնել հայերեն համարժեքները:

...Համեմատենք, դիցուք, «ռևոլյուցիան» «հեղափոխության» հետ: Նախ և առաջ «Ռևոլյուցիան» «հեղափոխությանը» զիջում է ստուգաբանորեն: Նրա լատինական արմատը նշանակում է «Շուռ գալ, դարձնել» /նաև՝ «ետ շուռ գալ, ետ դարձնել»/: Հայերեն բառը, պարունակելով այս առումը, ունի նաև ավելի լայն իմաստ, քանի որ «հեղել» /«յեղուլ»/ բայը նշանակում է ոչ միայն «շրջել», «շուռ տալ», ոչ միայն «փոխել, փոփոխել», այլև «դարձնել, վերածել մի այլ բանի, մի որակից մի այլ բան ստեղծել»:

Օտար բառ գործածելը դարձել է մի տեսակ կիրթ լինելու, զարգացածության, խելքի նշան, կարծես թե թասակի տեղ՝ գլխարկ, գլխարկի տեղ շլապա դնելով պիտի փոխվի գլուխը կամ նրա պարունակությունը... Գեղագիտական և գրականագիտական բազմաթիվ գրքեր ու հոդվածներ են լույս տեսնում, որոնց հեղինակները միամտություն ունեն կարծելու, թե խելքի տպավորություն կթողնեն, եթե փոխարեն ասեն էսթետիկա, փոխարեն՝ լիրիկա: Այդպես էլ՝ ոչ թե ու ...., այլ պրոզա և պրոզայիկ, ոչ թե ու ...., այլ դրամատուրգիա և դրամատուրգ, ոչ թե և ...., այլ մոնոլոգ ու դիալոգ, ոչ թե այլ էմոցիա, ոչ թե ...., այլ կարդինալ, ոչ թե ...., այլ պրինցիպ, ոչ թե և ...., այլ պրոգրեսիվ և կոնսերվատիվ, ոչ թե կամ ...., այլ ժուռնալ, ոչ թե ու ...., այլ իդեա ու իդեոլոգիա, ոչ թե .... ու ...., այլ սատիրա ու սատիրիկ...

Ակա՛նջդ կանչի, Պարոնյա՛ն: Հիշո՞ւմ եք, թե նա ինչպես է բնորոշել Գր. Արծրունուն. «Ինդուկտիվ խմբագիր դեդուկտիվ «Մշակի»:

Այս դատապարտելի վիճակին ենք հասել, կրկնում ենք, որովհետև օտար բառերի գործածությունը դարձել է մի տեսակ կիրթ լինելու, զարգացածության, խելքի նշան, մինչդեռ դա պիտի ընկալվի իբրև **տգիտություն, կիսագրագիտություն, մտավոր խեղճություն**...

Չենք կարծում, թե կգտնվեն «ջուր պղտորողներ» և կաշխատեն «ձուկ որսալ»՝ մեզ հասկանալով այնպես, թե մենք ընդհանրապես դեմ ենք օտար բառի ընդունմանն ու գործածությանը: Մենք հայոց լեզվի պատմությունից տեղյակ ենք գոնե այնքան, որ գիտենք փոխառությունների չափը մեր լեզվի ընդհանուր կշռի մեջ: Բայց մեր լեզվին **կշիռ** է պետք և ոչ թե **բեռ**:

Մոռացած, որ հույն փիլիսոփայության կորած շատ երկեր այսօր համաշխարհային գիտությանը հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ, մեր որոշ վայ-փիլիսոփաների թեթև ձեռքով՝ «....», օրինակ, «լոգիկա» է հնչում. ճիշտ այդպես էլ «....»՝ «գեոլոգիա», «....»՝ «բոտանիկա», «....»՝ «զոոլոգիա», և, նույնիսկ բանասերների բերանում էլ, «....»՝ «ֆիլոլոգիա»:

Բ. «Ոչ թե ... , այլ .... » կաղապարը լրացնել այլևայլ օրինակներով:

& Գ. Ի՞նչ են ցանկացել ասել ռուս գրողները. «Ռուսերեն խոսելով՝ ֆրանսերեն են զկրտում» /Ֆոնվիզին/: **«Ռուսաց լեզուն հարուստ ու ճկուն է այնպես, որ մենք բան չունենք վերցնելու նրանցից, ովքեր մեզնից աղքատ են»** /Տուրգենև/:

🕮 Բ-32. Ա. Օտար տերմինները փոխարինել ստորև բերված հայերեն համարժեքներով և նշել գործածության ոլորտը: Օր.՝ 1. դեզինֆորմացիա / դեզ - ֆր. .նախածանց/ + ինֆորմ /անգլ./ ապատեղեկատվություն 2. դիսնեյլենդ - / ամերիկյան կինոռեժիսոր Ու. Դիսնեյի անունից + անգլ. լենդ/լանդ/ հող, երկիր/ 3. ակցիա /ֆր./ - ա/ /ֆին./ բաժնետոմս, արժեթուղթ բ/ /դվնգ./ գործողություն:

աբզաց /գերմ./ -	գեյզեր /իսլանդերեն/-	թալիսման /արաբ./-
թեզ /հուն./ -	լաբիրինթոս /հուն./ -	կարատ /իտալ./ -
մելոդիա /հուն./ -	ադրենալին /լատ./ -	ցիկլ /հուն./ -
մենյու /ֆր./ -	ամնիստիա /հուն./-	դիագնոստիկա /հուն./ -
աստերոիդներ /հուն./ -	միլիցիոներ /լատ./-	ակվարիում /լատ./ -
մոդել /լատ. /-	ռեքվիեմ /լատ./ -	շոու /անգլ./ -
/կոմպյուտեր /լատ./ -	տենդեր /անգլ./ -	մետապալակտիկա /հուն./
ադմիրալ /արաբ./-	բիզնես /անգլ./ -	անթոլոգիա /հուն./ -

(1. ճաշացուցակ, 2. աստղակերպներ, 3. գալակտիկաների համակարգ, 4. պարբերություն /պարբերություն/, 5. ծովակալ, 6. ծաղկաքաղ /հատընտիր, ժողովածու/, 7. հանքային աղբյուր, 8. հուտաթք /հմայիլ/, 9. առևտրամրցույթ /մրցառք/, 10. գործարարություն, 11. համակարգիչ, 12. սգերգ /եկեղեցական հոգեհանգիստ/, 13. թանկագին քարերի կշռաքար, 14. ախտորոշաբանություն, 15. հորմոն /մակերիկամային ուղեղային շերտի/, 16. պարբերաշրջան, 17. համաներում, 18. ռստիկան, 19. ջրավազան, 20. նմուշ, 21. թեմական շքեղ տեսարան, 22. բավիղ /նաև կզմիս.՝ ներքին ականջ/, 23. երգ, 24. ատենախոսություն):

& Բ. Բուհական դասագրքերից դուրս գրել մի քանի տասնյակ օտար տերմիններ և փոխարինել հայերեն համարժեքներով: Կա՞ն օտար տերմիններ, որոնց հայերեն համարժեքները, ձեր կարծիքով, լիովին չեն ներկայացնում բուն նշանակությունը: Եվ կա՞ն այնպիսիները, որոնք դեռևս չունեն իրենց հայերեն համարժեքները:

🕮 Բ-33. Տրված միջազգային բառակազմական բաղադրիչներով բառեր գրել՝ օգտվելով տարբեր բառարաններից:

ավիա- /լատ.՝ թռչուն/	**հեմ /ո/-** /հուն.՝ արյուն/	**մոն/ո/-** /հուն.՝ մեկ/
ավտո- /հուն. ինքն/	**պոլի -** /հուն. բազում/	**/կրատ -** /հուն.՝ իշխանություն/
ակվա- /լատ. ջուր/	**նեո-** /հուն.՝ նոր/	**դեմ/ո/-** /հուն.՝ ժողովուրդ/
անտի- /հուն.՝ հակա/	**միկր/ո/-** /հուն.՝ փոքր/	

🕮 **Բ-34. «Գիտունները առհասարակ զբաղուել են ուսումնասիրելով հայերէնի ծագումը, զարգացումը և նրա կրած ազդեցութիւնը օտարներից: Ո՛չ մեկը չի հետաքրքրուած, թե հայերէնն էլ ուրիշների վրայ ի՛նչ ազդեցութիւն է գործել...»,-** գրում է Աճառյանը: Այսինքն՝ հայերենը ոչ միայն փոխառու, այլև փոխատու լեզու է: Նման բառերը Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» նշված են ՓՈԽ. համառոտագրությամբ. բառարանից /բառահոդվածների 5-րդ բաժնից/ դուրս գրել նման նշանացույց ունեցող 5-10 բառ՝ նշելով փոխառու լեզուն, օր.՝ վրացերենը, նաև քրդերենը հայերենից փոխառել են ասպարեզ բառը, պարսկերենը՝ ավաղ-ը, քրդերենը՝ ավետարանիչ-ը և այլն:

🕮 **Բ-35. Գրել ընդգծված բառերի հայերեն համարժեքները՝ ընտրելով ոչ ընդգծվածներից:**

● **Աբիտյուրենտ, մարկա, ֆոյե,** համակարգ, խնդիր /գերխնդիր/, փոխզիջում, **քվանտոմետր,** դիմորդ, մակնիշ, **էնցիկլոպեդիա,** լրատվամիջոց, **ռակետա,** մարզադաշտ, **աստերոիդ,** ճառագայթում, **սիմպոզիում,** ճեմասրահ, **մարշրուտ, ռեյս,** համալիր, տարածք, **սիստեմ,** հրթիռ, **տուրիստ,** մագնիտ, ալեհավաք, **պրոբլեմ,** երթուղի, ուղերթ, ավանդույթ, **մեդիա,** աստղակերպ, **կոմպրոմիս,** Լուսնթագ, հանրագիտարան, **ստադիոն,** գործողություն, մանրադիտակ, **իմիջ,** քվանտաչափ, զբոսաշրջիկ, **Ֆորում, Յուպիտեր,** աշխարհաժողով, **կոմպլեքս, տերիտորիա,** գիտաժողով, խնջույք, **մագնիս, միկրոսկոպ, տենդենցիա, ակտ, բանկետ,** կերպար, **ռադիացիա, անտենա:**

● **Ադմոռեֆերատ,** ընտրանի /վերնախավ/, **դիպլոմ,** նախահարձակում, **ատեստատ, դիսերտանտ, էքսպերտիզա,** գործարար, **կոնսուլտանտ, օպոնենտ,** ճեպազրույց, **դեկլարացիա,** հռչակագիր, **էլիտա,** փորձաքննություն, բռնաշորթում, **ռեյտինգ,** վարկանիշ, **բրիֆինգ,** կանխարգելում, **ագրեսիա, պրոֆիլակտիկա,** լրագրող, **ռեկետ, կոլեկցիոներ,** կարգավար, պարտավորագիր, բազմակիություն /բազմակարծություն/, **պլյուրալիզմ,** սեղմագիր, վճարագիր, **ժուռնալիստ, քսերոքս,** խորհրդատու, **պրինտեր, դիսկետ, մենեջմենտ,** կառավարում, **դիսպետչեր,** արժույթ, սակարան, ներդրում, **դեֆիցիտ,** համաձայնագիր, գործարարություն, հայեցակարգ, **կոնցեպցիա, պրեզենտացիա,** պատճենահան, պակասուրդ, գրավատուն, առևտրային, **կոնտրակտ,** վկայագիր, **կոնվենցիա,** շնորհանդես, **բիզնես,** հավաքորդ, **բիզնեսմեն, բորսա /բիրժա/, ինվեստիցիա, չեկ,** տպիչ, վկայական, ատենախոս, պնակիտ, **վալյուտա,** ընդդիմախոս, **լոմբարդ, կոմերցիոն:**

🕮 **Բ-36. Բացատրել հետևյալ հնաբանությունների իմաստները: Ինչու՞ են հնանում բառերը:**

ա/ գահնամակ	**գ/** զորանամակ	**ե/** բդեշխ	**է/** կուսակալ
բ/ սենեկապետ	**դ/** ոստանիկ	**զ/** մարդպետ	**ը/** սպարապետ

Բ-37. Հնաբանությունների տրված բառաշարքում առանձնացնել հնաբառերն ու պատմաբառերը: Բացատրել բառախմբերի նմանություններն ու տարբերությունները:

Հանապազ, հուսկ, վաղվաղակի, մարմարիոն, կառուցանել, չարչի, կուլակ, քյոխվա, հանգույն, կոռ, աշտե, մոգպետ, կարի, զի, այրուձի, քերթող, վասն, մետասան, արեգակն, ծառայեցուցանել, սյավ, նոքա, գարդմանակ /սաղավարտի զարդ/, պայազատ, հրապարակավ, սաղավարտ, պարսատիկ, սոցքջիջ, աղքատկոմ, գայիսոն, կապարճ, կուլակ, ազնաուր, աթաբեկ, կուսակալ, գավառ, գզիր, վարժապետ, կապարճակիր:

Բ-38. Ստ. Մալխասյանցն իր բառարանում հին բառի կամ հնացած իմաստի /իմաստների/ համար ունի հետևյալ նշանը՝ ⊙, իսկ ակադեմիական և Է. Աղայանի բացատրական բառարաններում նույն իրողությունն ունի հետևյալ նշումը՝ հնց. բառարաններից որևէ մեկում 4-5 էջի սահմաններում գտնել և դուրս գրել հիշյալ նշումն ունեցող բառերը:

Բ-39. Ա. Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» որևէ բառահոդված ընտրել և դուրս գրել բառեր, որոնք ունեն նոր. և նորբ. նշումները /առաջինը ցույց է տալիս, որ բառը թեև նորակերտ է կամ նորամուտ, բայց արդեն լայն գործածություն ունի, իսկ երկրորդը՝ ոչ:

& Բ. Ձեր ընտրածներում առանձնացնել այն նորաբանությունները, որոնք՝
ա/ մեր օրերում արդեն սովորական գործածության բառեր են /եթե կան/.
բ/ դուրս են եկել գործածությունից՝ իրենց տեղը զիջելով ավելի կենսունակ բառերի /եթե կան/:

Գ. Նույն բառարանից դուրս գրել լուսին, երկիր գլխաբառերով բաղադրվածները և ընդգծել նրանք, որոնք շարունակում են նորաբանություն մնալ:

Դ. Նոր բառերն ավելի երկար են. ինչո՞ւ:

Բ-40. Շարունակել՝ գրելով առնվազն 3 նորաբանություն՝

- **ատոմ** - ատոմակայան, ատոմամիջուկ, ատոմամոլ, ատոմանավ...
- **արբանյակ** - արբանյակակիր, արբանյականավ...
- **տիեզեր/ք/** - տիեզերագիտություն, տիեզերափոշի, տիեզերահրթիռ...
- **ռադիո** - ռադիոաստղագետ, ռադիոարատադիտում, ռադիոաստղ...
- **աստղ** - աստղամերձ, աստղանավորդ...
- **լուսին** - լուսնափոշի, լուսնազբոսանք, լուսնէջք...

Բ-41. Համեմատել և մատնանշել կատարված փոփոխությունները:

1. Ստ. Մալխասյանցի բառարանում անցնել բայն ունի հետևյալ իմաստները՝ հետևյալ նշումներով՝

անցնել /անց կենալ/ չբ. 1. Շարժվել՝ գնալ մի տեղից ուրիշ տեղ: 2. Գնալ որոշ ուղղությամբ: 3. Ավելի առաջ գնալ, գերազանցել: 4. Փոխադրվել մի տեղից մյուս տեղը, մեկից մյուսին: 5. Գնալով հեռանալ՝ զատվել /ժամանակով/: 6. Հնանալ, ժամանակին չհամապատասխանել: 7. Նեղ տեղով կամ արգելքի միջով այն կողմը

դուրս գալ: 8. Խորը գնալ՝ սուզվել: 9. Գնալ-վերջանալ, սպառվել: 10. Վրա գալ, տեղի ունենալ, պատահել: 11. Թողնել հեռանալ, հրաժարվել, ձեռք քաշել: 12. Առաջ գնալ, արժեք՝ հարգ ունենալ: 13. Հաջողվել, ընտրությամբ ընդունվել: +14. Մեռնել: +15. Նիհարել: նբ. 16. Որոշ տարածությամբ տեղ կտրել-անցնել: 17. Ուսումնասիրել որևէ առարկա: +18. Ներել:

2. Է. Աղայանի բառարանում նույն բառն ունի հետևյալ իմաստները՝ հետևյալ նշումներով՝

անցնել - չբ. 1. Շարժվել, գնալ մի տեղից մի այլ տեղ: 2. Գնալ որոշ ուղղությամբ: 3. Գնալով հեռանալ, հեռու գնալ: 4. Ոտքով զբոսնել, մաև գալ: 5. Գերազանցել: 6. Փոխադրվել, գնալ տեղից տեղ՝ մեկից մյուսին՝ հաջորդին: 7. Գնալով վերջանալ, ավարտվել, վախճանին հասնել: 8. Ըստ ժամանակի հեռանալ, անցյալ դառնալ: 9. Հնանալ, ժամանակին չհամապատասխանել: 10. Մեկից առաջ ընկնել, առաջը կտրել: 11. Որևէ բանի մի կողմից մյուսը գնալ՝ փոխադրվել: 12. Մի բանի վրայով մի կողմից մյուսը ցատկել: 13. Նեղ տեղով՝ անցքով ևն մի տեղից մյուսը գնալ՝ դուրս գալ: 14. Խոսակցության՝ քննության նյութը փոխել, ուրիշ հարց շոշափել: 15. Տեղի ունենալ, կատարվել, պատահել: 16. Ձգվել, տարածվել, ընկած լինել: 17. Թողնել-հեռանալ, հրաժարվել, ձեռք քաշել: 18. Խորը գնալ, մտնել: 19. Արժեք՝ հարգ ունենալ: 20. Քվեարկությամբ կամ քննարկությամբ ընդունվել՝ ընտրվել: 21. Զանց առնել, անտեսել: 22. /ժղ./ Մարել, հանգչել: 23. Ավելանալ, գերազանցել: 24. Հանդիպել, այցելել: 25. Թափանցել, մի բանի միջով մի կողմից մտնելով մյուսից դուրս գալ: 26. Անցողիկ կերպով երևալ, երևալ ու չքանալ, ցոլալ: 27. Հոսել: 28. նբ. Որոշ տարածությամբ ճանապարհ կտրել, որոշ տարածություն գնալ: 29. Ուսումնասիրել, սովորել: 30. Ներել:

📖 Բ-42. Ա. Է. Աղայանի բառարանի «Առաջաբանում» մի քանի բառերի նշանակությունների «համեմատական տախտակ» է զետեղված, որից մի քանիսը տրված են ստորև՝

ԲԱՌԵՐ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	«Հայերենի բացատրական բառարան» /Մալխասյանց/	«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» /ԳԱ/	«Արդի հայերենի բացատրական բառարան» /Է. Աղայան/
ԹՈՒՅԼ	5	39	33
ԽՈՍԵԼ	13	32	33
ՀԱՆԵԼ	41	26	40
ՆՍՏԵԼ	15	-	31
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	9	-	18
ՊԱՏՐԱՍՏԵԼ	9	-	24
ՎԵՐՑՆԵԼ	10	-	34
ՕՂԱԿ	5	-	29

Ընտրել մեկը և, իմաստային նշանակությունները գրելով, համեմատություն կատարել:

& Բ. «Համեմատական տախտակը» լրացնել 3-5 բառերով:

🕮 Բ-43. Ա. Ստ. Սալխասյանցի բառարանում անձրև սկզբնաբաղադրիչով ներկայացված են հետևյալ բառերը /43/՝
անձրևաբախ, անձրևաբուխ, անձրևաքանալ /անձրևից թրջվել/, անձրևաքաց, անձրևաքափ, անձրևալի, անձրևախառն, անձրևախափան, անձրևածին, անձրևածնություն, անձրևածումն, անձրևածք, անձրևակ, անձրևակաքք, անձրևակալ, անձրևական, անձրևալուլ /անձրևակուր/, անձրևահար, անձրևահոս, անձրևահրահեղեղ, անձրևածև, անձրևածիր /անձրև շնորհող/, անձրևային, անձրևասույզ, անձրևանալ, անձրևանման, անձրևանոց, անձրևաշատ, անձրևաշար, անձրևաշիք, անձրևաչափ, անձրևապես, անձրևաջուր, անձրևասաստ, անձրևասնունդ, անձրևել, անձրևիկ, անձրևոտ, անձրևոտել, անձրևոց, անձրևուկ, անձրևվաք /վարդավառի տոնի ժամանակ իրար վրա ջուր վաքելը՝ թափելը/, անձրևորեն:

Է. Աղայանի բառարանում դրանց թիվը հասնում է 50-ի: Գրել այդ բառերը և համեմատություն կատարելով՝ եզրակացնել՝ որոնք են հնաբանություն դարձել /չկան/ կամ իրենց կողքին ունեն հնց. նշումը, որոնք են նորակազմություններ:

& Բ. Նմանատիպ աշխատանք կատարել՝ ընտրելով այլ գլխաբառ /կամ գլխածանց/, օրինակ՝ գույն-, ջր-, հայր-, մայր-, լեզու- /ենք/ա/- /նախածանց/: /Գրվելիք բառերի կողքին եղած նշումները չմոռանալ/:

Գ. Որոշել դրանց կազմության եղանակները:

🕮 Բ-44. Ա. Գտնել դիպվածային բառերը և բացատրել կազմությունը: Ընդգծել այն բաղադրիչները, որոնցով պայմանավորված է «դիպվածայնությունը»:

1. Նա, ով չի ուզում զավակ ունենալ, արևասպան ու լեզվասպան է: 2. Իսկ հիմա, խնդրեմ, ռուսամոլությանը համաքայլ ներխուժել է անգլերենամոլությունը: 3. Բիբլիական հիշատակությունն ընկալման և մեկնաբանման ինչպիսի հեղեղատներ է անցել՝ զարկվելով մեկ զուտ մտացածին առասպելաստանի, մեկ հնագիտական փաստաքննության նյութաստանի ափերին: 4. «Զորակոչ» բառի ուղղագրությունը «վերանվանվել» է: Այսուհետև պետք է կարդալ՝ «զոռակոչ»: 5. Հաստատվեց ներքոհիշյալ դուլերի ցանկը՝ հացադուլ, գազադուլ, լույսադուլ, մածնադուլ, երգադուլ, փոխադրադուլ...: 6. Միգուցե միասին կարողանանք գտնել կիլոգրամին, լիտրին փոխարինող պատշաճ անուններ, ասենք «հայքաշ», «հայկիլո», «հայլիտր»: 7. Սեմինարի առաջին մասում ելույթ ունեցավ հակափողերի լվացման տեսչության պետ Պամելա Ջոնսոնը: 8. Ես չե՞մ եղել, սի՛րտ, Բայց այս ամենը արդեն եղե՛լ է. - Այս մսաղա՞ցը, Այս ... մտքաղա՞ցը... /ԳԷ/:

Բ. Փորձեք ընդգծվածներով նոր դիպվածային բառեր գրել:

🕮 Բ-45. Սեդա Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանից» դուրս գրել ա/ ձեր մասնագիտությանը վերաբերող նորաբանություններ բ/ ձեզ հետաքրքիր թվացող բառեր:

🕮 Բ-46. Մերօրյա հայերենում բառային կազմի /բառապաշարի/ և դարձվածաբանության, ինչպես նաև իմաստաբանության բնագավառներում կատարված փոփոխություններ և տեղաշարժեր նկատվու՞մ են: Ձեր կարծիքով այսօր կա՞ն բառեր, բառերի նոր իմաստներ, դարձվածքներ, որոնք դեռևս բառարաններում չեն արձանագրվել:

🕮 Բ-47. Գտնել հոմանիշները և հոմանշային շարք կազմելով՝ բացատրել իմաստային-ոճական տարբերությունները:

● Ես նա եմ նաև,
Որ տարբերում եմ պաչը համբույրից,
Ինչպես սիրողին՝ սիրահարվածից
Եվ մահացումը մեռնելուց:
Իրոք.
Ի՞նչ է իմ գործը,
Եթե ոչ ջոկել
Ոչ թե կեղծիքը ճշմարտությունից,
Այլ տարբերել սուտը կեղծիքից,
Ճիշտը՝ ճշմարտից և ճշգրիտից:
Գութը՝ խղճալուց...
Ես տարբերում եմ մուժը մշուշից
Ու մառախուղից մեգն եմ տարբերում,
Տարբերում եմ նաև
Բախտավորություն ու երջանկություն,
Ոճիր ու հանցանք: **/Պ. Սևակ/**

● 1. Այդ ո՞վ է ասել՝ նորից են սիրում. Նորից չեն սիրում, սիրում են կրկին **/ՊՍ/**: 2. Եվ չափազանց զգու՛յշ եմ ես, Նույնիսկ վախկոտ. Անջատումից եմ վախենում, Երկյուղում եմ տվայտանքից չվտարվող, Կարոտի սև արյունումից եմ սարսափում **/Ն/**: 3. Ա՜խ, այդ քարերը, Ծանր քարերը... Ամռան արևից շիկացել, կիզվել, Մի կաթիլ ջրի տենչից այրվել են **/ՎԴ/**:

🕮 Բ-48. Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի «Ղողանջ մթագնումի» դրվագից դուրս գրել «Դե ե՞կ, Վարդապետ, Եկ ու մի՛ գժվիր» կառույցի տարբերակները և կազմել գժվել բայի հոմանշային շարքը իմաստի սաստկացման հիմունքով:

🕮 Բ-49. Տրված կապակցությունները փոխարինել հոմանիշներով՝
ա/ աղջկա մազ, ձիու մազ, երկար մազ, խոզի մազ, ոչխարի մազ...
բ/ սև ձի, ծիրանագույն ձի, սպիտակ ձի, բեռնակիր ձի, էգ ձի, մոխրագույն ձի, ընտիր ձի...
գ/ երկար մազե թելերից բաղկացած պոչ, բրդով պատած պոչ, մարմնի անբաժան շարունակությունը կազմող փշից կամ ոսկորից պոչ, պարարտ ավելամիս կազմող պոչ...

🕮 Բ-50. Գրել Նոր տարի, Արուսյակ, ֆոսֆոր, պլատին, Ծիր կաթին /Ծիր Կաթին/ բառերի հոմանիշները:

🕮 Բ-51. Հոմանշային շարքերից ընտրել և հատվածում տեղադրել ընդգծված բառերի ամենամոտ հոմանիշները. որո՞նք չեք կարող տեղադրել և ինչու՞:

Ամառային պարզկա, վառվռուն <u>առավոտ</u> էր՝ լի թռչունների <u>ճռվողյունով</u>: <u>Մառախուղը</u> չքացել էր: <u>Արևի</u> երկչոտ ճառագայթները <u>ժպտում էին</u> աշխարհին: <u>Կապույտ</u> երկինքը միանգամից <u>պայծառ</u> դեմք ընդունեց, <u>բերրի</u>

ղաշտերն արթնացան, և ընթուշ ծաղիկները բացեցին իրենց մաքուր աչիկները: Պարզ երևում էր գետի ոլոր-մոլոր երիզը:

ճովողյուն ▶ շրշյուն, սվսվոց, ձայն, մոնչյուն, դայլայլ, կլանչոց
արև ▶ արեգակ, արփի, տվնջյան լուսատու
մառախուղ ▶ մեգ, մշուշ, մուժ
առավոտ ▶ ծեգ, այգ, ցայգ, այգաբաց, արշալույս, լուսաբաց, արևագալ
ժպտալ ▶ ծիծաղել, խնդալ, հռհռալ, քրքջալ, քմծիծաղել, կչկչալ
կապույտ ▶ երկնագույն, բիլ, մով, լուրթ
պայծառ ▶ լուսավոր, փայլուն, վառվռուն
բերրի ▶ արգավանդ, ջրառատ, հուտթի
ընթուշ ▶ նուրբ, փափկասուն, փափուկ
մաքուր ▶ հստակ, պարզ, զուլալ, ջինջ, վճիտ, ակամակիտ, անապական, անաբատ
դաշտ ▶ հանդ, անդաստան, տափաստան
ոլոր-մոլոր ▶ կեռ, ծուռ, ծուռումուռ, զիգզագ
երիզ ▶ ժապավեն, եզր:

🕮 Բ-52. Բացատրել հետևյալ հոմանշային բառերի իմաստային, գործառական–ոճական առանձնահատկությունները, փոխադարձ փոխարինելության հնարավորությունը:

ա/ մազ – հեր, վարս – գես – ծամ – բուրդ – գեղմ – ձար – ստև
բ/ բույս – ծառ – թուփ – կիսաթուփ – խոտ – բանջար
գ/ վեփյուռ – քամի – հողմ – փոթորիկ – մրրիկ – պտտահողմ – սամում
դ/ դուրեկան – սիրուն – գեղեցիկ – գրավիչ – հմայիչ – հրապուրիչ – կախարդիչ – զգլխիչ
ղ/ նկարիչ – ծովանկարիչ – բնանկարիչ – դիմանկարիչ
ե/ մտածել – դատել – խորհել – կշռադատել – մտմտալ – ծանր ու թեթև անել
զ/ պատմել – ասել – հաղորդել – հայտնել
է/ նայել – դիտել – դիտարկել – հայել
ը/ խժռել – ուտել – լափել
թ/ խմել – կոնծել – լակել – ըմպել

🕮 Բ-53. Ա. Կարդալ և գրել մեռնել հիմնաբառի հոմանշային շարքը՝ նրանում ընդգծելով դարձվածքները. ցույց տալ այդ երևույթի նկատմամբ մեր սուբյեկտիվ վերաբերմունքի շնորհիվ բառերի մեջ առաջացած հուզական-արտահայտչական զանազան երանգները:

Բ. Թումանյանի «Անուշ»-ից հիշեցեք Սարոյի մոր ողբը և լրացրեք այս շարքը: Այս իմաստով ուրիշ հոմանիշներ գիտե՞ք, եթե այո՝ գրեք դրանք ևս:

Ո՛վ ինչպես է մեռնում. մեր հեռավոր ապուպապերից սկսած, մարդու դժբախտ վախճանին ի տես, մի արտահայտություն են արտասանել՝ մեռա՜վ: Հետո էլ, փիլիսոփայական մտածմունքի մեջ ընկնելով, գլուխները ցավագին օրորելով, հարել են՝ «ունայնություն ունայնությանց /այսինքն թե՝ ամեն ինչ դատարկ է, փուչ է»/:

Մահանալ բայը, ի տարբերություն մեռնել-ի, նշանակում է «դանդաղ մահով մեռնել», ոչ միանգամից...

Կրոնական գաղափարախոսության բազմադարյան տիրապետության շրջանում մարդիկ իրենց նմանի մասին ասում էին՝ երկինք գնաց կամ համբարձավ, անէացավ, Աստված իր մոտ կանչեց, Աստված իր մոտ տարավ, հոգին /Աստծուն/ ավանդեց, աստված հոգին առավ. եթե նզովյալ մարդ էր՝ սատանան կամ գրողը հոգին առավ, դժոխքի բաժին դառավ, այս անցավոր աշխարհը թողեց, այս աշխարհից հեռացավ /մեկնեց/, այն աշխարհը գնաց, հող էր՝ հող դարձավ, աշխարհի հետ հաշիվները մաքրեց, անէության սնդուկը մտավ:

Եվ քանի որ թաղման ծիսակատարությունների ժամանակ հոգևորականները երգում էին «Ի վերին Երուսաղեմ» տողերով շարականը, որի մեջ կար և «հոգւոց հանգուցելոց» կապակցությունը, ուստի ասում էին նաև՝ ի Վերին Երուսաղեմ գնաց, ժողովրդի մեջ՝ հոգոց հանգուցելոց եղավ...

Եթե ուզում էին պատկերավոր խոսել, ասում էին՝ իր մահկանացուն կնքեց, մահվան /անգուք, անողոք/ գերանդին հնձեց: Որովհետև հնոց երևակայության մեջ մահը պատկերանում էր կմախքի տեսքով՝ ձեռքին գերանդի կամ մանգաղ, որով իր անողոք հունձն էր անում: Պատկերավոր ասում էին նաև՝ արևը խավարեց:

Երբ խոսքը վերաբերում է համընդհանուր հարգանքի արժանացած մարդուն, ասում են՝ վախճանվեց, հանգավ, սրբերի կարգը դասվեց, աստղը մարեց /հանգավ/, իսկ հակառակ դեպքում՝ սատկեց կամ շանսատակ եղավ, գրողի ծոցը գնաց, ոտները ձգեց, ոտները տնկեց /չռեց/, նալերը տնկեց: Այդպես էլ հոգևոր անձը /լույս/ գերեզման է իջնում, իսկ արգահատելին գոռ է գնում:

Երբ ուզում են հումորով խոսել, ասում են՝ գնաց խառնվեց հազար տարվա մեռելներին, փասափուսան հավաքեց, իսկ երբ արհամարհանքով ու ծաղրով՝ ոտքերը տնկեց:

Մեր վաղեմի նախնիները այնպես էին կարծում, թե մեռնող արարածի ապրած օրերը մնում են ողջերին: Դրա համար է, որ ասում էին նաև՝ օր ու արևը կամ կյանքն ու արևը բաշխեց ապրողներին:

Հիշենք նաև «կյանքի թելը» կտրվել»-ը. ըստ հին հունական առասպելաբանության՝ պարկյան քույրերը՝ երեք աստվածուհիներ, մարդու ծննդյան օրից հյուսում են նրա կյանքի թելը /նրանցից մեկը բռնում է աղեկատը, երկրորդը՝ մանում, իսկ երրորդը՝ աշխատում այն կտրել/: Ո՛ր պահին էլ թելը կտրվում է, մարդը շունչը փչում է:

Այս բոլորի մեջ, սակայն, ամենից հինը, թերևս մեռնել ու մահանալ բառերից էլ հինը, հավանաբար մի հասարակ արտահայտություն էր՝ շունչը ... փչեց:

/Ըստ Պ. Բեդիրյանի/

Բ-54. Տրված համանունները բաժանել երեք խմբի՝

ա/ բառային

բ/ բառաքերականական

գ/ քերականական

Բ. Յուրաքանչյուր խմբից ընտրել մեկը, բացատրել իմաստային, նաև քերականական տարբերությունները և նախադասություններ կազմել:

❶	❷	❸
Հոտ–հոտ	մարտ–մարտ	անել–անել
աղայի–աղայի	հացի–հացի	բարակ–բարակ
տալ–տալ	հարկ–հարկ	աղաց–աղաց
արի–արի	դարման–դարման	ծրագրում–ծրագրում
ջրի–ջրի	անցավ–անցավ	բռնի–բռնի
թվային–թվային	անարգել–անարգել	այր–այր
գրի–գրի	ծորան–ծորան	կոկոան–կոկոան
անվանի–անվանի	յուղում–յուղում	բարդ–բարդ

Բ-55. Գրել համանունական շարքի երկրորդ բաղադրիչի իմաստը՝

ա/ այր /տղամարդ/ - այր /.../
բ/ բևեռ /մեխ, գամ/ - բևեռ /.../
գ/ ոգնի /կենդանի/-ոգնի/.../
դ/ ամպեր /ամպ-ի հոգնակի ձևը /.../
ե/ վայել /պատշաճ/ - վայել /.../
զ/ արի /քաջ/ - արի /.../
է/ վարկ /հեղինակություն/ - վարկ- /.../
ը/ օղի /օղ բառի սեռ. հոլովը/ - օղի /.../
թ/ անարգել /առանց արգելքների/-անարգել /.../
ժ/ դատել /դատապարտել/- դատել /.../

Բ-56. Առանձնացնել բուն համանունները համագիրներից /նույնագիրներից/ և համահունչներից:

Բուն համանուններ /նույնական են և՛ գրությամբ, և՛ արտասանությամբ/	Համագիրներ /նույնական են գրությամբ, տարբեր՝ արտասանությամբ/	Համահունչներ /նույնական են արտասանությամբ/
բարակ-բարակ	բարդ-բարդ	անօդ- անոթ

Ուղտ-ուխտ, պարս-պարս, սարդ-սարդ, անջինջ-անջինջ, անհատ-անհատ, բուն-բուն, կար-կար, կեր-կեր, մուգ-մուկ, բարակ-բարաք, գինաբբուկ-գինարբուք, փոկ-փոկ, բուն-բուն, սիրելիս-սիրելիս, վանեցի-վանեցի, առ-առ, մեղք-մեղկ, հորդ-հորթ, վայել-վայել, այդ-այտ, դուր-դուռ, լուր-լուռ, ծաղկել-ձաղկել, կտրիճ-կտրիչ, վաղ-վախ, աճ-աջ, այց-այծ, երեկ-երեք, պայթել – պայտել, յոդ-յոթ, գավաթ-կավատ, անուշ-անհուշ, առաջ-հառաչ, մեգ-մեկ, վանկ-վանք:

Բ-57. Գրել այնպիսի համանուններ, որի բառերից մեկը՝

ա/ բույսի անուն է.
բ/ նվագարանի անուն է.
գ/ թռչունի կամ կենդանու անուն է.
դ/ գիտական բառ է կամ տերմին:

Բ-58. Բացատրել տրված բառազույգերի իմաստային տարբերությունները և նրանցով նախադասություններ կազմել:

ա/ հասկացություն և հասկացողություն

բ/ հրատարակություն և հրատարակչություն

գ/ պատրաստակամություն և պատրաստականություն
դ/ խոստանալ և խոստովանել
ե/ պաշտոնական և պաշտոնեական
զ/ ցուցում և ցուցմունք
է/ պահպանել և պաշտպանել
ը/ ջերմուկ և ջրմուկ
թ/ իմաստություն և իմաստնություն
ժ/ հնաբանություն և հնէաբանություն

Բ-59. Կարդալ և դուրս գրել համանուն բառերը:

1. Ես՝ աղա, դու՝ աղա, բա մեր աղունն ո՞վ աղա: 2. Բորբոքում էր օջախն իր հին, Ծխում էր ծուխը ծիրանի /ՀՍ/: 3. Մի վիթխարի ծիրանի փող առանց հին ահի ու նոր խնդության հնչեցնում է մեր արդար երգերը /ԱԲ/: 4. Մի քանի վայրկյան անց երևաց արքան՝ ծիրանին ուսերին: 5. Աղոտ լույսի տակ ծերունին դժվարությամբ ճանաչեց մոտեցող երիտասարդին: 6. Ծովի ալիքները հառաչանքով զարկվում են աղոտ ժայռերին: 7. Գարունը անցավ, ես քեզ չտեսա... /ՊՍ/: 8. Մարդ էլ անցավ գլուխը դնի ցավի տակ: 9. Կաթի սերը քաշել եմ... /ԱԽ/: 10. Սերը հաճախ վերցնում է խելքը նրանից, ով դա ունի և տալիս նրան, ով չունի /Դիտրո/: 11. Հրդեհը մարեց ու հողմը անցավ, Արդեն նայում ես դու ցավին անցավ /ՄՄ/: 12. Ինչ ես տանջում, կամ թու՛յլ եղիր կամ արի, Կամ հեռացի՛ր ընդմիշտ գնա, կամ արի... /ՊՍ/:

Բ-60. Տրված բառազույգերում առանձնացնել հականշային զույգերը:

աճել–ընդաճել	ագուցել–տարանջատել
ազդել–հակազդել	եռանկյունի–քառանկյունի
ճապաղ–սեղմ	ականակիտ–պղտոր
երեսով–աներես	կիսաքաղց–կիսակուշտ
աղի–անալի	աղջամուղջ–լուսաբաց
ամեն–ոչ մի	դիմակայել–ընդդիմակայել
հանգույց–լուծում	անթաքույց–սքողված
այրել–շիջել	ստորգետնյա–ընդգետնյա
ամուրի–կնամբի	գժդմնել–հաշտվել
այլ–նույն	ականապատել–ականազերծել
մեջ–ընդմեջ	այլազան–միատեսակ
ունակ–ընդունակ	կիսանինջ–կիսաարթուն
նոսր–անոսր	կիսախակ–կիսահաս
ձախ–ահյակ	անվավեր–անօրինական
ամոք–անամոք	կիսաբաց–կիսափակ
ապա–նախ	բարեբանել–չարաբանել
երանի–վայ	հանելուկ–գուշակում
խոտոր–ծուռ	փոսել–ընդփոսել

🕮 **Բ-61. Կազմել հականշային զույգեր՝**
ա/ միևնույն երևույթի, առարկայի, հատկանիշի հակադիր աստիճաններով և չափով /ցուրտ – շոգ .../.
բ/ միևնույն առարկայի, երևույթի, հատկանիշի բացառումով /գեղեցիկ – տգեղ.../:

🕮 **Բ-62. Իմաստային յուրաքանչյուր շարքը լրացնել 5 զույգով:**
ա/ տեղի և տարածական՝ վերև-ներքև...
բ/ ժամանակային՝ վաղուց-այժմ...
գ/ չափի՝ լրիվ-կիսատ...
դ/ ծավալային՝ լայն-նեղ...
ե/ առարկաների արտաքին ձևական հատկանիշներ՝ մաքուր-կեղտոտ...
զ/ առարկաների ներքին որակական հատկանիշներ՝ աղի -անալի...
է/ մարդկային հոգեկան, ֆիզիկական, բնավորության և այլ հատկանիշներ՝ հասուն-տհաս...
ը/ մարդկային կյանքի, գործունեության հետ կապված հակադիր երևույթներ՝ ժխտել-հաստատել...
թ/ բնության հակադիր երևույթների հատկանիշներ՝ ամպել-արևել...

🕮 **Բ-63. Կարդալ տրված բառախմբերը, լրացնել 3-ական օրինակով և բացատրել հականշային զույգերի կառուցվածքային օրինաչափությունները:**
ա/ արդար - մեղավոր, վնաս -օգուտ, կողմ - դեմ...
բ/ կայուն - անկայուն, կեղծ - անկեղծ, պատեհ - անպատեհ...
գ/ շնչավոր - անշունչ, պոչատ - անպոչ, գեղեցիկ - տգեղ...
դ/ արտագաղթել - ներգաղթել, ներկա - բացակա, համանիշ - հականիշ...
ե/ մարդասեր մարդատյաց, կիսակառույց կիսաքանդ, բազմաբջիջ միաբջիջ...:

🕮 **Բ-64. Կռահել բառակազմական օրինաչափությունը և օրինակի հետևողությամբ լրացնել: Որոշել յուրաքանչյուրի խոսքիմասային պատկանելությունը. կարո՞ղ են տարարժույթային /տարբեր խոսքի մասերի պատկանող/ միավորները հականշային զույգ կազմել. եթե՝ ոչ, ապա՝ ինչու՞:**
ա/ գովք - պարսավանք → գովելի – պարսավելի → գովել – պարսավել
բ/ բարի – չար →.... **դ/** աղքատ – հարուստ →... **զ/** մեծ -փոքր →...
գ/ տաքանալ- սառչել →... **ե/** հնություն – նորություն →... **է/** լավ –վատ →

🕮 **Բ-65. ❖ Հիշել մի քանի առած-ասացվածքներ, որոնց արտահայտչականությունը պայմանավորված է հականիշ բառերի գործածությամբ:**

🕮 **Բ-66. Հետևյալ առածներում կետերի փոխարեն լրացնել ներքևում տրված հականշային զույգերը:**
✓**1.** ...ը ոսկի է, ...ը՝ արծաթ: ✓**2.** ...հաց, կաց: ✓**3.**...ը ...ին մանր կբրդի: ✓**4.** ...ը մի քար ծովը, հազար ... չկարողացան ...: ✓**5.** տվին, ուզեց:

✓6. ...ը է արել, ...ը՝ ✓7. ...ն ու ...ը ախպեր են: ✓8. ...ից չկա:
✓9. Քամու ...ը քամին ✓10. Ճամփորդի ...ն իր ձեռքին է, ...ը՝ Աստծո:
/սև-սպիտակ, ներս-դուրս, սիրել-ատել, առաջ-հետո, բերել-տանել, գնալ-դառնալ, լաց –ծիծաղ, գիժ-խելոք, երես-ատառ, թանկ-էժան, գցել-հանել, սոված-կուշտ, լռել-խոսել/:

📖 Բ-67. Գրել տրված բառերի նույնարմատ /համարմատ/ և տարարմատ հականիշները, ինչպես օրինակ՝ երերուն -աներեր, հաստատուն:

Խելոք, համարձակ, անկեղծ, չար, իսկական, կենդանի, վախկոտ, գեղեցիկ, աչառու, շքեղ, ուժեղ, աշխատասեր, արդար, անխոս, անզոր, անվախ:

📖 Բ-68. Հիշել Հ. Շիրազի «Մայրս» /Մեր հույսի դուռն է մայրս.../ բանաստեղծությունը և դուրս գրել հականշային զույգեր:

📖 Բ-69. Կարդալ բառային շարքերը. նրանցում ո՞ր բառերն են հականիշներ. հիմնավորեք ձեր ընտրությունը:
ա/ սպիտակ, սպիտակավուն, սև, մուգ
բ/ մոտ, հեռու, մոտիկ, հեռվում, հեռավոր, մերձակա
գ/ հավատարմություն, դավաճանություն, նվիրվածություն
դ/ բոլորը, ոչ մեկը, մի քանիսը, ոմանք
ե/ խոսել, շշնջալ, գոռալ, լռել
զ/ ցերեկ, գիշեր, առավոտյան, վաղորդայն, վաղորդյան, երեկոյան
է/ շոգ, ցուրտ, սառնամանիք, սառնաշունչ
ը/ ուժեղ, կորովի, եռանդուն, անկայուն, վախկոտ

📖 Բ-70. Ընդգծված բառերի յուրաքանչյուր նշանակության համար ընտրել հոմանիշներ և հականիշներ:
ա/ <u>առողջ</u> մարդ, <u>առողջ</u> դատողություն, <u>առողջ</u> հատիկներ
բ/ <u>կոշտ խոսք</u>, <u>կոշտ</u> զանգված, <u>կոշտ</u> հողակտոր, <u>կոշտ</u> նայվածք, <u>կոշտ</u> մազեր
գ/ <u>ուրախ</u> տեսք, <u>ուրախ</u> ներկայացում, <u>ուրախ</u> զրույց, <u>ուրախ</u> ճանապարհ
դ/ <u>հարթ</u> ճանապարհ, <u>հարթ</u> տարածություն
ե/ <u>դառը</u> համ, <u>դառը</u> ճակատագիր, <u>դառը</u> պարտականություն, <u>դառը</u> խոսք
զ/ <u>խոր</u> գետ, <u>խոր</u> հայացք, <u>խոր</u> զգացմունք
է/ <u>տաք</u> ջուր, <u>տաք</u> բնավորություն, <u>տաք</u> գոտի, <u>տաք</u> խոսք
ը/ <u>բարի</u> մարդ, <u>բարի</u> գործեր, <u>բարի</u> գիշեր
թ/ <u>թթու</u> խնձոր, <u>թթու</u> խոսք, <u>թթու</u> նայվածք
ժ/ <u>ամուր</u> կտոր, <u>ամուր</u> բարեկամություն, <u>ամուր</u> մարմին, <u>ամուր</u> ընտանիք
ժա/ <u>փափուկ</u> հաց, <u>փափուկ</u> կահույք, <u>փափուկ</u> սիրտ, <u>փափուկ</u> ձյուն
ժբ/ <u>թույլ</u> լույս, <u>թույլ</u> մարմին, <u>թույլ</u> բնավորություն
ժգ/ <u>խիստ</u> հայացք, <u>խիստ</u> մարդ, <u>խիստ</u> ձմեռ, <u>խիստ</u> վերաբերմունք, <u>խիստ</u> խոսք

🕮 **Բ-71. ❖ Բացատրել տրված հականշային կապակցությունների ոճական-արտահայտչական արժեքը:**

ա/ անմեղ մեղավոր զ/ խոսուն լռություն ժ/ անաստված աստված
բ/ սուրբ անսուրբ է/ անօրենք օրենք ժա/ հայտնի անհայտ
գ/ քաղցր դառնություն ը/ կենդանի դիակ ժբ/ ծանոթ անծանոթ
դ/ բախտավոր անբախտ թ/ խելոք հիմար ժգ/ երիտասարդ ծերություն
ե/ ակնթարթային հավիտենականություն ժդ/ անմահացած մահկանացու

🕮 **Բ-72. ❖ Գտնել և կազմել հականշային զույգեր, բացատրել նրանց ոճական արժեքը գեղարվեստական խոսքում:**

1. Անց ենք կենում... միայն անմահ Գործն է խոսվում լավ ու վատ... /ՀԹ/: 2. Ոչ որ չի լսել սկիզբը նրա և չի լսելու վախճանը նրա, Ամեն հնչյունը դարեր է ապրում, ամեն հնչյունին վերջ, սկիզբ չկա /ԱԽ/: 3. Մարդկանց մոտ պետք է աչալուրջ լինես, միշտ ոտքի վրա և սուրը ձեռքիդ, Որ քեզ չլկեն, քեզ չհոշոտեն թե՛ բարեկամդ և թե՛ թշնամիդ /ՆՆ/: 4. Ի՞նչ է օրենքը... Անզորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին պաշտպան /ՆՆ/: 5. Ապիրա՛տ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին ազնիվ, բարեհույս, Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս /ՆՆ/: 6. Այս հավատով ու հույսով է, բարեկա՛մս, Որ աշխարհում մերպեսները ամեն գիշեր Աղքատ քնում ու զարթնում են հարստացած /ՊՍ/: 7. Եվ աջից նայում՝ տեսնում եմ հրդեհ, Ձախից եմ նայում, Տեսնում եմ մոխիր... Ճակատագրի բերումով դաժան Ճակատդ հիմա՝ փոքրի՞ց էլ փոքրիկ, Մինչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից մե՞ծ... /ՆՆ/: 8. Հույսն ու անհույսը՝ խինդն ու վիշտը ոգու հիմն են իմ հոգում, կերբան, կուգան և մշտավեհ ճոճիմ են իմ հոգում, Խինդը սրտիս մի աչքի մեջ, մյուսի մեջ վիշտն է միշտ, Իրար բախվող կյանքն ու մահը մտերիմ են իմ հոգում /ՀԾ/: 9. Սիրե՛ց հարուստը աղքատին, Իմաստունը՝ ապիրատին, Կարմիր երեսը՝ գունատին, Լավը՝ գեշին, Ոսկին՝ ժանգոտ, սև գրոշին /ԳԷ/: 10. Ականջ է անում ամեն հարցումի, հրճվում բոլորի առած-տվածով՝ Վերջին ծիծաղով առաջին ձյունի Ու վերջին ձյունի առաջին լացով /ՀՍ/: 11. Ջուրն ու կրակը իրար հետ ու նույն դեմքին՝ ո՞վ է տեսել, Մութ գիշերը հյուսված լույսին ու ցերեկին՝ ո՞վ է տեսել, Անմեղությունն ընդելուզված կուպրով մեղքի՝ ո՞վ է տեսել, Հավատը և անհավատը իրար կողքի՝ ո՞վ է տեսել /Օնտոքի/:

Բ Ա Ռ Ա Կ Ա Զ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

🕮 **Բ-73. Շարունակել:**

Ա. Բառակազմությունն ուսումնասիրում է ....
Բ. Ձևույթաբանությունն ուսումնասիրում է ...
Գ. Ստուգաբանությունն ուսումնասիրում է ...
Դ. Բառակազմական վերլուծության նպատակն է...
Ե. Ձևույթաբանական վերլուծության նպատակն է ...
Զ. Ստուգաբանական վերլուծության նպատակն է...

Բ-74. & Այսօրվա շատ և շատ արմատական բառեր անցյալում բաղադրյալ են եղել, օրինակ՝ զարհուրել =զ/սաստկական/+ արհ/վախ, սարսափ/+ արհ /ուրհ - ա-ն դարձել է ռ/+ել. 2. կրկին = կր /շրջված ձևը երկ-ի, ուր ե-ն հավելված է / + կին /պատիկ/: Ստուգաբանական վերլուծություն կատարել՝ օգտվելով Հր. Աճառյանի «Արմատական բառարանից»:

հնոց = հուն /կրակ/ + ոց	**մրրիկ** = … + … + …	**փոթորիկ** = փոթ/ծալք, ոլորք/ +…+
հրդեհ = ….. +	**լուցկի** = … +	**անդունդ** = ….+ դունդ /հատակ/
խարույկ = /խար/ + ույկ	**արահետ** = …+	**խոճկոր** = խոճ /խոզ/ + կոր /ձագ/
այժմ = +	**հզոր** = +	**պղտոր** = պիղտ /պիղծ/ + որ
ընկեր = … +	**դարբին** = դարբ + ին	**արմատ** = արմ/արմն/ + ատ
ծիծաղ = +	**կասկած** = … +	**արեգակ** = +
փրփուր= …+…	**առաջ** = … +	**դեղձան** = դեղ /դեղին/ + ձ/աճական/ + …..
փնքի = փին /աղբ/+քի	**կսկիծ**= +	**կաչաղակ** =կաչ /բնաձայն./ +

Բ-75. Տրված բառերը խմբավորել ըստ ստորև բերված աղյուսակի՝

պարզ կամ արմատական	ածանցավոր	բարդ

Թուխպ, երկնակամար, քաղաքակրթություն, անզոր, ձյունապատ, մայրամուտ, խստություն, թրթիռ, սառույց, զբոսանք, սառնաշունչ, քաղցրահնչյուն, ելևէջ, անդորր, լռություն, ատամնաձև, անուշաձայն, թախծոտ, լույս, ալիքային, նրբագույն, հազարաթույր, կապույտ, քնքշորեն, ատոմ, անսանձ, մեղմահնչյուն, փոխհրաձգություն, հսկայական, արևադարձային, ձգողականություն, կղզի, եղեգնուտ, ափամերձ, ֆիզիկոս, ահասարսուռ, խառնաշփոթություն, նրբանուրբ, գեղգեղանք:

Բ-76. & Տրված բառերում ընդգծել ածանցները և բացատրել նրանց բառակազմական, ձևակազմական արժեքը՝ չմոռանալով, որ ածանցները բառաստեղծական ձևույթներ են՝

ա/ իմաստափոխական-բառակազմական /փոխվում է հիմք միավորի բառական իմաստը, բայց չի փոխվում խոսքիմասային ընդհանուր իմաստը՝ հուշ – հուշարար/.

բ/ իմաստահավելական /իմաստային նոր երանգ են հաղորդում՝ չփոխելով հիմք-միավորի բառական և խոսքիմասային ընդհանուր իմաստը ՝գետ-գետակ/.

գ/ իմաստական-փոխանցական /փոխում են հիմք միավորի և՛ բառական, և՛ խոսքիմասային ընդհանուր իմաստը՝ լավ-լավություն/:

Արծաթ–արծաթեղեն, գործ–գործողություն, տուն–տնակ, գառ–գառնուկ, մութ–մթին, Երևան–երևանյան, հերոս–հերոսաբար, աշակերտ–աշակերտական, տուն–անտուն, մաս–մասնիկ, ձև–ձևավոր, արքա–արքայական, աքսոր–աքսորյալ, կանաչ–կանաչավուն, բախտ–դժբախտ, ուսանող–ուսանողություն, գիր–գրիչ, տարր–տարրական, օթևան–անօթևան, ձիգ–ձգողություն, դանդաղ–դանդաղկոտ, երեք–երրորդ, ժողով–համաժողով, ծաղիկ–ծաղկաստան:

Բ-77. Բացատրել նախածանց, վերջածանց և ներածանց տերմինների իմաստը և 3-ական օրինակներ բերել:

🕮 Բ-78. Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության՝ ընդգծելով ածանցները:

Մեխանիկական, գիսավոր, հարաբերականություն, ընդունակություն, անընմբռնելիություն, կարողականություն, աստղագիտական, տնողություն, արտերկրային, առեղծվածային, պտտաշրջան, ետվերածնունդ, քսանհինգամյա, բարեախտաբար, ընդարձակություն, քաղաքակրթություն, անտիպրոտոն, ճոճանակավոր, միգամածություն, դժբախտություն, տրամաբանական, ճառագայթում, ձգողականություն, օրինաչափություն, հարատևորեն:

🕮 Բ-79. Տրված բառերում ընդգծել ածանցները:

Անդարձ, թագուհի, աստղանավորդ, անհիշաչարություն, ապաժամ, թգենի, ապօրինաբար, արքայական, գերիշխել, դերանվանական, ենթադաս, ներհակական, թշշոց, ընդարձակ, ցավագին, վերածնունդ, անբաղձալի, վերադառնալ, անհնչյուն, արևադիտակ, մակբայ, անօգնական, համաժողով, գծագրային, անմիջապես, գեհենային, շիկավուն, ամառանոց, երկունք, կանացի, փեսացու, վերաքննիչ, առածանի, լուսեղ, լուսե, անընթեռնելի, չխոսկան, արբեցուցիչ, վախկոտ, եղեգնյա, տձև, տարաշխարհիկ, շառաչուն, կառուցվածք, միջնադարյան, համաստեղություն, անկշռելիություն, տիեզերագիտություն:

🕮 Բ-80. 5-ական այնպիսի բառազույգեր գրել, որոնք ունեն նույն արմատը, տարբեր ածանցներ, բայց՝

ա/ նախածանցը հոմանիշ է նախածանցին / օր.՝ ան+բախտ և դժ+բախտ/.

բ/ նախածանցը հոմանիշ է վերջածանցին /օր.՝ անպոչ և պոչ+ատ/

գ/ վերջածանցը հոմանիշ է վերջածանցին /օր.՝ տնական-տն+ային/

🕮 Բ-81. Նույնարմատ բառեր կազմել տրված ածանցազույգերով:

● **ա/** ան- / ապ -	**զ/** ան-/ տ-	**ժա/** -/ա/բար /-որեն
բ/ -/ա/վոր /-եղ	**է/** -ային / -եղեն	**ժբ/** -մունք /-ում
գ/ -մունք / -ք	**ը/** -անք / -ք	**ժգ/** -ություն / -անք
դ/ -ավոր / -ուն	**թ/** -ական / -ային	**ժդ/** -ական /-յան
ե/ -ական / -ենի	**ժ/** -ային / -ավոր	**ժե/** - /ա/վետ - / -ոտ
● **ա/** համ/ա/ / տար/ա/-	**զ/** ներ- / բաց-	**ե/** ստոր- / վեր-
բ/ -ավոր / ան-	**դ/** ավետ / ան-	**զ/** արտ - / ներ-

🕮 Բ-82. Կազմել բառազույգեր փակագծերում տրված բառակազմական հիմքերով /ինչպես օրինակ՝ քաղաք /ական, ային/ → քաղաքային և քաղաքական/ **և բացատրել իմաստային կամ նրբիմաստային տարբերությունները:**

-ական // -ային → { անասուն-, դրամ-, տուն-, գիր-, տարած -}
-ական // -իչ → { դյութ-, ցույց-, բույժ-, կախարդ-, լուսավոր-}
-ական // -յալ → { աքսոր-, հավել-, պաշտպան-, մեղադր-}
-ական // -ուն → { զգայ-, տարած-, շարժ-, գործ-}

-ական // ություն → { կենսաբան-, ներած-, գրականագետ-, լեզվաբան-}
-ական // -ելի → { անջատ-, տրոհ-, ժխտ-, անմխիթար-}
-ական // -իկ → { տոհմ-, աշխարհ-, մաս-, մարտ-}
-ական // -ավոր → { պարտ-, ձև-, մարմին-, գիր-, բան-}

📖 **Բ-83. Առնվազն 3-ական բառեր կազմել հետևյալ՝**
ա/ նախածանցներով՝ ան-, դժ-, հակ-, ապ-, չ-, անդր-, գեր-, ենթ-, տար-, համ-, ստոր-, տ-, փոխ-.
բ/ վերջածանցներով՝ -ալի, -այինն, -ուստ, -կոտ, -ույց, -ույք, -ստան, -ուտ:
Բ. Ընտրել ոչ ժխտական նախածանցները և Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» դուրս գրել դրանցով սկսվող բառեր: Ո՞ր ժխտական նախածանցն է ավելի կենսունակ:

📖 **Բ-84. Գրել բառեր հետևյալ կաղապարներով՝**
ա/ արմատ+վերջածանց /օդեղեն.../
բ/ նախածանց+արմատ+վերջածանց /հակաօդային.../
գ/ նախածանց +արմատ /անտուն.../
դ/ արմատ+վերջածանց 1+վերջածանց 2 / փափստական.../

📖 **Բ-85.** -Ություն **ածանցն ունեցող այնպիսի բառեր գրել, որոնք վերաբերում են գիտության հետևյալ ճյուղերին՝**

ա/ ֆիզիկա	դ/ քիմիա	է/ գրականագիտություն
բ/ իրավաբանություն	ե/ լեզվաբանություն	ը/ պատմություն
գ/ տնտեսագիտություն	զ/ կենսաբանություն	թ/ աշխարհագրություն

📖 **Բ-86.** -Ոց, -ին, -ան, -ակ **ածանցներով կազմել առարկա, գործիք, սարք ցույց տվող բառեր:**

📖 **Բ-87.** /Ա/վոր, -որդ, -ին, -պան, -գործ, -բան, -արար, -ական **ածանցներով կազմել զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող բառեր:**

📖 **Բ-88.** -Ոց, -անոց, -արան, -ստան, -ուտ **ածանցներով կազմել մի բանով առատ, հարուստ տեղ ցույց տվող բառեր:**

📖 **Բ-89. Կազմել ածանցավոր բառեր տրված կաղապարներով /օր.՝ ան ... այինն /անհեռանկարային/**

● ա/ *ան ... ք*	● ա/ *ան... ալի,*	● ա/ *ան... որեն*	● ա/ *ան... ություն*
բ/ *արտ .. այինն*	բ/ *արտ ... ություն*	բ/ *դժ.. ություն*	բ/ *ստոր... յա*
գ/ *համ... ություն*	գ/ *հակ... ություն*	գ/ *ան.../ա/բար*	գ/ *ան... ական*
դ/ *արտ ... ական*	դ/ *գեր... ություն*	դ/ *վեր... ություն*	դ/ *արտ...ական*

🕮 Բ-90. Գտնել տրված բայերի արմատները և ածանցման միջոցով կազմել գոյականներ՝ երազել, ջարդոտել, ազատել, արագացնել, թռչկոտել, խոսել, հավաքել, փախչել, հագնել:

🕮 Բ-91. -Ակ ածանցով կազմել ածանցավոր բառեր և բացատրել նրա բառակազմական տարբեր նշանակությունները /նվազական, փաղաքշական, նվաստական-արհամարհական/:

Գետ, պատանի, նավ, խումբ, բլուր, գյուղ, օդ, գունդ, աղյուս, կայծ, որդի, ալի, թռչուն, կղզի, գրիչ, իմաստ, սայլ, հյուղ:

🕮 Բ-92. Տրված բառերից -ական **ածանցով կազմել ածանցավորներ՝ ուշադրություն դարձնելով բառակազմական առանձնահատկություններին, հնչյունափոխության դեպքերին:**

Երեխա, արքա, հերոս, քաղաք, մագնիս, աստղագետ, ամբողջ, համալսարան, աղա, դաստիարակիչ, բուրժուա, առարկա, ուրու, տղա, ածխաթթու, ծառա, գնչու, օդաչու, լեզու, գործ, մաս, ուսում, հոգի, գիր, ուղիղ, թթվածին, մարմին, կյանք, բժիշկ, հետաքրքիր:

🕮 Բ-93. Տրված ք-ավերջ բառերում գտնել բառակազմական հիմքերը և որոշել դրանց խոսքիմասային պատկանելությունը:

● վաճառք, վազք, արգելք, անցք, տուրք, ցնորք, ցանք, հանք, բերք, տողանցք, ածխահանք

● սլացք, լվացք, գնացք, ընթացք, հայացք

● բարիք, արժանիք, ընտանիք, գաղտնիք, հայրենիք, լսելիք, շոշափելիք, ըմպելիք, գրելիք

● թռիչք, խմիչք, դողէրոցք, հալոցք

🕮 Բ-94. Տրված ածանցավոր բառերում որոշել հիմքի խոսքիմասային պատկանելությունը և եզրակացնել, թե -իկ, -իչ, -որդ, -ուստ // իստ /-եստ, -աստ/ **ածանցները ո՞ր խոսքի մասերից ի՞նչ խոսքի մասեր են կերտում:**

● Թոռնիկ, մարտիկ, իշխանիկ, Գոհարիկ, ծիտիկ, այծիկ, շնիկ, աշխարհիկ, տոհմիկ, սիրունիկ, մեղմիկ, աղքատիկ, փափլիկ, չաղլիկ, հազարաթերթիկ:

● Դյութիչ, ոգևորիչ, դրդիչ, նկարիչ, ուսուցիչ, ցրիչ, պատմիչ, թարգմանիչ, սրբիչ, լուծիչ, ջերմակարգավորիչ, ջերմամեկուսիչ, արագացուցիչ:

● Աստղանավորդ, չմշկորդ, գնդացրորդ, առաջնորդ, միջնորդ, հետևորդ, նախորդ, ձախորդ, հավակնորդ, անցորդ, կիսորդ, բաժանորդ, հակառակորդ, գնորդ, լողորդ, տասնորդ:

● Պահեստ, պահուստ, գովեստ, զգեստ, ուտեստ, հանգիստ, հագուստ, գալուստ, ելուստ, կորուստ, ապրուստ, արտաքուստ, ներքուստ, վերուստ, թաքուստ:

Բ-95. Որոշել, թե ընդգծված հնչյունախմբերը ո՞ր դեպքում են ածանց, ո՞ր դեպքում՝ արմատ: Ածանցնե՞րն են ավելի շատ մասնակցում բառակազմությանը, թե՞ նրանց համապատասխան բառերը:

● ա/ մակույկ, մակբայ, մակագրել
բ/ շաղել, շաղկապ, շաղոտ
գ/ պաղուրել, պաղփակել, պաղբերույթ
դ/ հաղել, ապշահաղ
ե/ մածուն, մածուցիկ, ամպամած, մթամած

● ա/ պես-պես, որպես, մեծապես
բ/ բարք, հիմարաբար
գ/ ղեղակատար, ղեղանուն
դ/ բացիչ, բացբերան, բացասել
ե/ անցնել, անցկացնել, սրտանց

● ա/ նավթագործ, գործիչ, գործադիր, պանրագործ, ասեղնագործ
բ/ գնահատել, գնել, թանկագին, սրտագին, գիրուկ, գերադաս
գ/ մանուշակագույն, նարնջագույն, մեծագույն, ազնվագույն
դ/ փոխանակ, փոխհատուցել
ե/ արարիչ, կազմարար, ներարկել, առարկել, ձեռնարկ, մեկնարկ, արդուկ, հարդարանք, կորնթարդ, պարագիծ, պարփակել, պարուրաթել, պարույկ

Բ-96. Առանձնացնել այն բառերը, որոնցում՝ ներ-ը, շար-ը, ստոր-ը **ածանցներ չեն:**

● Ներկա, ներշնչել, ներույթ, ներգաղթ, ներուստ, ներս, ներուժ, ներհուն, ներունակ, ներքին, ներգաղթել, ներարկել, ներդրում, ներածություն:
● Շարահյուսություն, շարունակ, շարական, շարասյուն, շարակցել, շարույթ, շարք, շարել, շարադրել:
● Ստորակետ, ստորագրել, ստորաստիճան, ստորանալ, ստորաբաժանում, ստորաքարշ, ստորոգի, ստորագրահավաք, ստորաշունչ, ստորոտ, ստորին:

Բ-97. Տրված բառերից առանձնացնել –յուն ածանցն ունեցողները:

Դոփյուն, ուրախություն, ձյուն, շաչյուն, մոնչյուն, տխրահնչյուն, տրոփյուն, երջանկություն, արյուն, տխրություն, մայուն, անկյուն, սյուն, մթություն, կայուն, պայթյուն, ճռվողյուն, կափկափյուն:

Բ-98. Որոշել, թե ո՞ր բառերում է ց-ն նախածանց, և ի՞նչ նրբիմաստ է հավելում այն:

Ցայսօր, ցնցուղ, ցողաթաթախ, ցայգ, ցերեկ, ցուցահանդես, ցայգաթիթեռ, ցարդ, ցամաք, ցուցակ, ցայգանդորր, ցպահանջ, ցմրուր, ցնցոտի, ցտեսություն, ցմահ, ցին, ցավագար, ցել, ցուպ, ցցասյուն, ցկյանս, ցուցափայտ, ցայգաշուշան, ցայժմ, ցայտ, ցանցաձև, ցանցկեն, ցավալլուկ, ցցել, ցատկ, ցնծալ, ցնցել, ցայգերգ, ցածրորակ, ցախուտ, ցայգաբաց:

Բ-99. -Իկ, -իչ, -ատ, -ական, -այինն, -յա, -ող, -որդ, -ու, -ուն **ածանցներով կազմել և՛ գոյականներ, և՛ ածականներ:**

Բ-100. Առանձնացնել այն բառերը, որոնք ժխտական նախածանց ունեն:

● Անագաթիթեղ, անամպ, անանձնական, անանուխ, անապական, անասնաբույժ, անբասիր, անգամ, անգայթ, անգղաբույն, անգո, անդամալույծ,

անդորրություն, աներկբա, անթացուպավոր, անթևուկ /պինգվին/, անիծյալ, անկյունադարձ, անմոռուկ, անոթ, անսայթաք, անվահետք, անվանացուցակ, անտառապուրկ, անրջելի, անցաթուղթ, անքննելի, անօդ, անռդ:

● Ապակեթել, ապակողմնորոշվել, ապահով, ապաշխարանք, ապաշնորհ, ապառաժ, ապարդյուն, ապերասան, ապիկար, ապշահար, ապտակ, ապրանքանիշ, ապրելաձև, ապրիլմեկյան, ապուխտ, ապառիկ, ապօրինի:

● Դժբախտ, դժգոհ, դժգունել, դժխեմ, դժկամություն, դժնատեսիլ, դժպատեհ, դժոխք, դժոխալուր, դժվարարահաճ, դժվարվերծանելի:

● Չքմեղ, չաստված, չարահամբույր, չարքաշ, չափագրել, չբերություն, չեչաքար, չէական, չինարեն, չրապուր, չկամ, չխոսկան, չղջիկ, չհավան, չորսդարյա, չոքել, չվացուցակ, չուգուն, չունևոր:

● Տագնապախռով, տգետ, տաղասաց, տամկանալ, տարագնաց, տարամերժ, տերևազուրկ, տխրահռչակ, տհաճություն, տձևանալ, տղմուտ, տհաս, տնանկ, տրտմօրոր, տգեղ, տողադարձ, տկար, տհալ:

📖 Բ-101. Բացատրել բառերի կազմությունը և բառաշարքերը լրացնել 4-5-ական օրինակներով:

ա/ Մեղմել, տխրել, հուզել, վայել ....
բ/ մտցնել, փախցնել...
գ/ դիպչել, կպչել....
դ/ լեռնանալ, դառնանալ, այլանալ...
ե/ հեռացվել, հզորացվել...
զ/ մոտեցնել, կանգնեցնել
է/ անցնել, իջնել....
ը/ կարդալ, հոգալ, թշշալ....
թ/ գրվել, մանուշակվել...
ժ/ հեռացնել, խաղացնել...
ժա/ հագենալ, վախենալ...
ժբ/ կոտրատել, փշրտել...

📖 Բ-102. Առանձնացնել այն բայերը, որոնցում ն-ն և չ-ն հիմքի մեջ դրվող ածանցներ՝ ներածանցներ են:

Հագնել, կանգնել, փախչել, ընկնել, կանչել, մտնել, կանաչել, տանել, կպչել, չտեսնել, գետնել, փչել, գտնել, ճչալ, զբոսնել, չհանգչել, չբերել, մեղանչել, հնչել, չալանալ, չակերտել, չամչանալ, չարագնել, շնչել, դիպչել, սառչել, թողնել, չգոյանալ, կորչել, ուռչել, թռչել, մարտնչել, մեռնել, դեղնել:

📖 Բ-103. Կազմել 3-ական ածանցավոր բառեր հետևյալ մասնակատարարներով՝

ա/ գոյականական հիմք ու գոյականակերտ ածանց /տն/տուն/+ակ.../
բ/ գոյականական հիմք + ածականակերտ ածանց /հայր+ական.../
գ/ գոյականական հիմք + մակբայակերտ ածանց /երեխա/յ/+աբար.../
դ/ ածականական հիմք + գոյականակերտ ածանց /բար/ի/+ություն.../
ե/ ածականական հիմք + ածականակերտ ածանց /խոր+ին.../
զ/ ածականական հիմք + մակբայակերտ ածանց /տրտմ/տրտում/+ագին.../
է/ թվականական հիմք + մակբայակերտ ածանց /եռ+ակի.../
ը/ մակբայական հիմք + ածականակերտ ածանց /մշտ/միշտ/ + ական.../
թ/ մակբայական հիմք + մակբայակերտ ածանց /դանդաղ+որեն.../
ժ/ բայահիմք + գոյականակերտ ածանց /հան + ածո.../
ժա/ բայահիմք + ածականակերտ ածանց /հմա/յ/+իչ.../

🕮 Բ-104. Բուսական մասնագիտական դասագրքերից ընտրել 1 էջի չափով որևէ հատված, գտնել ածանցավոր բառերը, կազմել հաճախականության աղյուսակը:

🕮 Բ-105. Հետևյալ բառերում ընդգծել ածանցները, հնչյունափոխվածները՝ մեկ գծով, չհնչյունափոխվածները՝ երկու: Վերականգնել հնչյունափոխված-ների անհնչյունափոխ տարբերակները:

Սերնդակից, ուսուցչանոց, փորձնական, անասնապահ, խորհրդաժողով, մանրանկարչություն, ջղայնություն, սառցաշխարհ, վայելչազարդ, վարչա-պետ, վերջնակետ, շահութաբեր, գիտնական, գրչատուփ, առօրյա, մարդկային, կառուցապատել, գործունեություն, մոլեգնաբար, թովչանք, սառույց, փախստական, լեզվամտածողություն, ահագնանալ, կանգնել, մշակութային, առօրեական, ծննդավայր, զեկուցագիր, գեղջկական, վերստին, գրչակ, սննդարար, թռչնանոց:

🕮 Բ-106. Ա. Տրված տեքստում գտնել ածանցավոր բառերը, կազմել բառակազմական կաղապարները:

Բ. Նույն կաղապարներով այլ բառեր կազմել:

Կյանքը տիեզերքում... Ոմանք այն համարում են տիեզերական օրինա-չափություն, մյուսները՝ պատահականության արդյունք: Ոմանք էլ տիեզերքի ծերացման նախանշան են համարում, տիեզերական հիվանդություն, որը կարող է քայքայել, հյուծել նրա սրբազան «առողջությունը»: Հնարավո՞ր է պատկերացնել տիեզերքն առանց մարդու: «Եթե մարդը հանկարծ վերանա, տիեզերքեն բան մը կպակսի՞»,- հարցրեց մի անգամ Վիլյամ Սարոյանը: Այո՛, կպակասի... Մարդը տիեզերական մարմին է, ուստի նրա վերանալով կամ չլինելով ինչ-որ բան տիեզերքից, անկասկած, կպակասի... Իրավացի է Նարեկացին. «Ոչ նմանս ունեմ, ոչ էլ օրինակս...»:

Եթե գոյություն ունենար Արարիչը և երբևիցե հարկ լիներ նրան հաշիվ ներկայացնել տիեզերքի անցուդարձից, ապա բավական կլիներ Արարչին լսել տալ Շուբերտի «Ավե՜ Մարիան», ցույց տալ Պիկասոյի մի նկարը և կամ նրա առաջ դնել Պարբենոնի մակետը, և Արարիչը կհասկանար, որ այդ ամենը ժամանակից ու տարածությունից դուրս երևույթներ են, որ դրանք ստեղծողը՝ մարդը, իրոք, եզակի է. իր առաջ մարդ-տիեզերական մարմինն է: Դժբախտաբար նա կհասկանար նաև, թե ինչ է մարդը, եթե նրա առջև դրվեր մի կեռ դաշույն, Օսվենցիմի մակետը...

Այո՛, մարդ-տիեզերական մարմինը մի եզակի ու անկրկնելի երևույթ է տիեզերքում, իր մենության ու միայնության մեջ ապշեցուցիչ մի առեղծված: Ու, թերևս, տիեզերական «Կարմիր գրքում» գրանցվելիք մի արժեք՝ ինքնա-ոչնչացման եզր հասցված...

/Գ. Գուրզադյան/

📖 Բ-107. Ժամանակակից հայերենում բառակերտական ակտիվ միավորներից են հեռ /հեռու/, լույս, լեռ, արյուն, հուր, արև, աստղ /սրանք՝ բառասկզբում/, գերծ, մերձ, կիր, վար, տար /սրանք էլ՝ բառավերջում/ բառերն ու արմատները. օգտվելով բառարաններից՝ գրել սրանցով բաղադրված բառեր:

📖 Բ-108. Ա. Հինհայերենյան հեռուստ բառով /որը մակբայ է և նշանակում է «հեռվից»/ սկսած հայերենի ամենավաղ շրջանից մինչև անցյալ դարի կեսերը, ոչ մի բաղադրյալ բառ չի կազմվել: Մերօրյա բացատրական և ուղղագրական բառարաններից դուրս գրել «հեռուստ» գլխաբառի տակ եղածները և բացատրել այս բառի բառաստեղծական դերի աշխուժացման պատճառը:

& Բ. Գիտատեխնիկական, հասարակական-քաղաքական տեղաշարժերն ի՞նչ չափով են բառապաշարային փոփոխությունների պատճառ դառնում:

Գ. Տիեզերքի նվաճումը, հրթիռների օգնությամբ տիեզերք բարձրանալը, Լուսնի վրա սև թներ տեսնելը, Մարսի վրա մարդկային ուրվագծեր նկատելը ի՞նչ նոր բառերի ստեղծման պատճառ են դարձել և դառնում. նշել բառակերտության միջոցները:

Դ. Սպորտի զարգացման և մասսայականացման հետ կապված նորաստեղծ բառեր գրել:

📖 Բ-109. Նոր բառեր կազմել ախտ և աղտ արմատական բառերով:

📖 Բ-110. Կետերի փոխարեն մի արմատ գրել և երկու բարդ բառ կազմել, օր.՝ դեմ/ք/ ... գրել —— դիմանկար, նկարագիր/:

ա/	գայլ.....	կուլ	ե/	մեծ	շատ	ք/	ոսկի	արձակ
բ/	անձրև	հարս	զ/	զբոս/նել/	գործ	ժ/	ռադիո	ձև
գ/	ընկեր	առատ	է/	այգ	շաղախ	ժա/	ձյուն.....	հեր
դ/	քնքուշ	տրոփ	ը/	լուսին ....շղթա		ժբ/	սառն	թրթիռ

📖 Բ-111. Կարդալ, առանձնացնել պարզ և բաղադրյալ բառերը. վերջիններս էլ խմբավորել ըստ տրված աղյուսակի:

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ			
ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ /ընդգծել բառակազմական երկրորդական ձևույթները/	ԲԱՌԱՁԵՎԵՐ /ընդգծել բառահարաբերական երկրորդական ձևույթները/	ԲԱՐԴ ԲԱՌԵՐ	
		ՀԱՄԱԴՐԱԿԱՆ	ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

Ժողովուրդ կոչվածը, ինչ խոսք, կույր չէ, բայց նաև ինքնատես չէ ու չի կարող լինել, քանի որ ժողովուրդը մի անձ չէ, որ կանգնի հայելու առաջ ու տեսնի իր կան ու չկան: Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել ըստ նրա

հավաքական կերպարի ու ժառանգել ամենայն հայրականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիր բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց, ինքը ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև նրանք են ժողովուրդ վերածնում: Կոմիտասն այդպիսի ծնունդ էր, և նրա պարգևած լույսը դեռ երկար պիտի անդրադառնա պարգևողի դեմքին ու արտացոլվի նրա հոգու մեջ... Պատմում են, որ «երբ իր /Կոմիտասի/ ներկայությունն ընդունած հայրենակից մը բաժանվելու ատեն փափագ կըհայտնե՝ կրկին այցելեցեք, այն կըհարե սրտառուչ կերպով. «Վերադարձին ինձ այլևս չեք գտներ, ես ճամբորդ եմ»:

Ե՛վ սխալվում էր հիվանդ Կոմիտասը, և՛ իրավ էր:

Սխալվում էր, թե իրեն երբևէ կարելի է «հոս չգտնել» - նա հավերժական ներկայություն է:

Իրավ էր, թե «ճամբորդ եմ»: Իրոք որ նա ճամփորդ էր, մի ճամփորդ մշտնջենական, որ եկել է դարերից ու դեպի դարերն է գնում: Կոմիտասները ծնունդ են հազարամյակների: Նրանց դիմաքանդակը կերտում է Ժամանակն ինքը, կերտում է դանդաղ ու անշտապ, ու դեռ վար չի դրել իր մուրճն ու տաշիչը: /Պ. Սևակ/

Բ-112. Տրված բաղադրյալ բառերը ենթարկել բառակազմական վերլուծության, ընդգծել արմատական հիմքերը՝ բառային ինքնուրույն գործածություն ունեցողները՝ մեկ գծով, բառային ինքնուրույն գործածություն չունեցողները՝ երկու գծով:

Քարային, կարդալ, երջանկաբույր, լեռնային, ապրել, վազք, հայելի, անծառ, ատել, սրտմաշուկ, սիրակարոտ, պատմահայր, աստվածամայր, ամաչկոտ, տանջալլուկ, երփներանգ, կարծիք, քաղցրահնչյուն, ցատկոտել, արևազօծ, գուժկան, բժշկական, աղտոտ, խորաքնին, մանրազնին:

Բ-113. Ա. Տրված բաղադրյալ բառերը ենթարկել ձևույթաբանական վերլուծության /փակագծերում նշել ձևույթների քանակը՝ ա/ հիմնական ձևույթները նշելով ■ նշանով բ/ երկրորդական բառակազմական ձևույթները՝ ▲ նշանով գ/ երկրորդական բառահարաբերական /ձևակազմական/ ձևույթները՝ ∀ նշանով:

Բ. Առանձնացնել այն բառերը, որոնցում կան և՛ բառակազմական, և՛ բառահարաբերական երկրորդական ձևույթներ: Կազմել ձևույթակազմական կաղապարներն ըստ տրված նշանների: Օր.՝

գնդառանցքակալներին = ■+▲+■+▲+ա+■+∀+∀+∀:

Մարդկություն, ներքնաշխարհ, գեղանկարչություն, ճառագայթատարրալուծում, լուսավորված, մոլորակներից, ժամանակակից, աստղաղիտարանից, տարօրինակությամբ, մանրամասնություններ, ոսկեգույն, ճառագայթման, ռադիոազդանշանների, ջերմամիջուկային, ամենահեռավոր, աննախադեպ, հեռուստացույց, լուսնափոշի, աստղանշանառություն, լուսազգայունություն, տիեզերա-

նավից, իջնելու, լուսնագնացները, անվայրէջք, օդանավակայանում, նեյտրոնային, քրոջիկդ, դիմադրություն, բևեռամիտություն, գնդառանցքակալներին, բևեռաչափ, լուսնախցիկ, հնչյունահաղորդություն, հակամասնիկ, տարրազատում, ռենտգենագնում, անթափանցելիություն:

📖 Բ-114. Կապակցությունների իմաստն արտահայտել մեկ բառով՝ բացատրելով կազմությունը և նշելով կատարված հնչյունափոխությունը:

Փոքր առու, լույս տվող, զրույց անել, մեղու բուծող, նուշի ծառ, ընկույզի ծառ, փոքրիկ շուն, սուտ ասել, ձուկ վաճառող, հոգի խռովող, էշի տեր, վեպ գրող, միտք անել, բարի սիրտ ունեցող, լուր բերող, գույժ հաղորդող, խորհուրդ տվող, գինի վաճառող, բույնը ավերված, բույր ունեցող:

📖 Բ-115. Գրել հետևյալ բառերի կրկնավորները և բացատրել կատարված հնչյունափոխությունը՝ առանձնացնելով՝

ա/ կրկնավորներ, որոնցում երկրորդ բաղադրիչի սկզբի բաղաձայնը փոխվել է /հաց-մաց/.

բ/ բարդության երկրորդ բաղադրիչի սկզբում բաղաձայն է ավելացել /ամանչաման/.

գ/ բարդության առաջին բաղադրիչի բաղաձայնն ընկել է /ակաս-պակաս/.

դ/ բարդության առաջին բաղադրիչի որևէ ձայնավորը երկրորդում դարձել է ու /մարդ-մուրդ/:

Փառոք, թափալ, զիգի, թռի, խունջիկ, ծակ, ծուռտիկ, կոկլիկ, հագուստ, փայլուն, պակաս, բարակ, թելիկ, նոր, շախով, շլդիկ, լակոտ, չալիկ, հեզիկ, չեմ, հին, ձայն, մանր, սուտ, փոքր, քիչ, թալան, հաց, կլոր, պարապ, ոլոր, քաղցր, սևիկ, սուսիկ, սուս, փալաս, աղքատ, ցախ:

📖 Բ-116. Հետևյալ բառերից յուրահատուկ հնչյունափոխությամբ կրկնավորներ կազմել /օր.՝ շիտակ - շիփ-շիտակ/:

ա/ լեցուն	գ/ կարմիր	ե/ նոր	է/ սև	թ/ դեղին
բ/ դատարկ	դ/ ճերմակ	զ/ մենակ	ը/ կանաչ	ժ/ կապույտ

📖 Բ-117. Ա. Պ. Մնակի ներքոբերյալ բանաստեղծական տողերից դուրս գրել կրկնավոր բարդությունները՝ դրանք բաժանելով 3 խմբի՝ ա/ անփոփոխ կրկնությամբ կազմվածներ բ/ հնչյունափոխությամբ կազմվածներ. գ/ շաղկապով կամ նախդիրով կապակցված կրկնավորներ:

Բ. Բացատրել կրկնության պատճառով կատարված իմաստային հավելումները-փոփոխությունները և պարզել խոսքիմասային անցումները:

1. Կարմիր-կարմիր բշտիկներով Մենք պատած ենք ներսից այնպես, Ինչպես հոնի աշնանային ծառը դրսից: 2. Եվ հիմա մենք ինքներդս Պիտի բացենք հոժարակամ, Բացենք շե՛ռտ-շե՛ռտ, փաթե՛թ-փաթե՛թ... Պիտի բացվենք հոժարակամ փաթե՛թ-փաթե՛թ ու շերտ առ շերտ... 3. Եվ մեր քիթ ու մոքից քմծիծաղ է կաթում, Ինչպես ամեն ծառից կենտ-կենտ տերև: 4. Կեղևահան այս ծառի վրա մնում են հիմա Քիչ թե շատ առողջ այս քո աչքերը՝

Լեցուն, լեփ-լեցուն անորոշությամբ... 5. Ես իմ մթի՜ն-մթի՜ն կարոտն այնպես գիտեմ, Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին: 6. Ասում են, թե մի բան կա լոկ, Որ առանձնապես ու մեն-մենակ են սովորում՝ Գիտությունը տառապանքի: 7. Մենք դուրս ենք եկել մութ քարանձավից Միլիոն ու միլիոն տարիներ առաջ: 8. Չմեռան նրանք, այլ սպանվեցին լեգեոն առ լեգեոն, փաղանգ առ փաղանգ: 9. Հետո կանացի լաչակներ պես-պես Կսարքեն մի ճոխ պարահանդես: 10. Քամին փոշուց ծուխ է սարքում, Ծուխ անկրակ, Ու տարածում պուրա՜կ-պուրակ: 11. Կարծես լեռներն անգամ շուռ-մուռ են գալիս իրենց ստվերներով... 12. Ես նայում եմ իմ ձեռքերին... Նայու՜մ-նայու՜մ, Շուռ ու մուռ եմ տալիս... 13. ...Եվ մոլեգին շոշափումով կարծես նրանց վրայից Ջնջում եմ իմ «հարկավոր չէ»-ն տառ առ տառ: 14. Սկսվում է մի նոր գարուն անհատա՜կ-անհատա՜կ: 15. Խեղճ պատշգամբը ողջունում է ինձ Եվ տեղն ու տեղն էլ հրաժեշտ տալիս: 19. Պարաշրջանն է լայնանում, Եվ փոխնիփոխ՝ հանգույց-հանգույց, օղակ-օղակ Երգ են կապում աղջիկ-տղա:

📖 Բ-118. Ա. Տրված կրկնավոր հիմքերով բայերը խմբավորել ըստ հետևյալ խմբերի՝
ա/ անփոփոխ հիմքով կրկնվածներ.
բ/ փոփոխված հիմքով կրկնվածներ:

Բ. Վերականգնել հնչյունափոխված /կամ հնչույթ կորցրած/ արմատները:

Գրգռել, կարկառել, հեծեծալ, շոշափել, քրքրել, փորփրել, ձգձգել, գլգլալ, թրթռալ, թաթախել, մրմռալ, փոփոխել, փաթաթել, խլխլել, վազվզել, բաբախել, այլայլել, ծածանել, փրփրել, հեկեկալ, հոտոտել, թոթովել, տատանել, թոթափել, կաղկանձել, կաշկանդել, բարբառել, հայթայթել, խշխշալ, ֆսֆսալ, շխկշխկալ, դողդողալ, չարչարել, ծակծկել, փայլփլել, թրթռացնել, հեծեծել, թափթփել, գեղգեղել, ծռմռել, խազխազել:

📖 Բ-119. Ի՞նչ խոսքի մասերից են հարադրված հետևյալ հարադրական բարդությունները:
Շարունակել լրացնել:

ա/ ցուցահանդես-վաճառք, աղբյուր-հուշարձան **գ/** լավ-վատ, կանաչ-կարմիր
բ/ հինգ-վեց, տասներկու-տասներեք ... **դ/** դուրս գալ, վրա տալ, առաջ նայել...
գ/ կրակն ընկնել, թոզ փչել, մարդ լինել ... **ե/** կարդալ տալ, պարել տալ ....
զ/ ախ քաշել, վայ անել....

📖 Բ-120. Հարադրական բարդություններ կազմել՝ հարադրելով Ա և Բ խմբի գոյականները:

Ա. Տուն, ուսանող, մսուր, կիլովատտ, ձյուն, աղբյուր, աղմուկ, զենք, թև, նետ, դեղ, շաչյուն, երկինք, սար:

Բ. Թանգարան, ժամ, հուշարձան, թիկունք, գետին, ձոր, աղաղակ, զրահ, մանկապարտեզ, ձմեռ, ուսանողուհի, աղեղ, դարման, շառաչյուն:

🕮 Բ-121. Տրված բարդությունները դասդասել ըստ իմաստային տարբերությունների՝
ա/ բարդություններ, որոնց բաղադրիչներն իմաստով խիստ մոտ են և մերձավոր հասկացություն են արտահայտում.
բ/ բարդություններ, որոնց մեջ բաղադրիչները հեռավոր կապի մեջ են գտնվում և երկրորդ բաղադրիչի դրսևորած իմաստը գերադասություն ունի առաջինի նկատմամբ.
գ/ բարդություններ, որոնց մեջ առաջին բաղադրիչի արտահայտած իմաստը զուգակցվում է երկրորդի դրսևորած իմաստին.

Դիմում-գանգատ, խորհրդակցություն-սեմինար, ցուցահանդես-տոնավաճառ, համերգ-դասախոսություն, հրթիռա-միջուկային, մարդ-մեքենա, տիեզերագնաց-օդաչու, գրադարան-ընթերցարան, մսուր-մանկապարտեզ, տուն-թանգարան, մրցանակ-գավաթ, աղբյուր-հուշարձան, ցուցահանդես-դասախոսություն, լիտր-վայրկյան, մարդ-ժամ, դիմում-նամակ:

🕮 Բ-122. Բայական հարադրական բարդություններ կազմել՝ հարադրելով Ա և Բ խմբի բառերը:

● Ա. Միտք, սիրտ, աշխարհ, առու, աչք, մարդ, խելք, քիթ, կռիվ, քնով:
Բ. Չլինել, դառնալ, մատնել, ընկնել, գալ, բերել, տալ, հանել, դնել, մտնել:

● Ա. Ասել, առնել, գնալ, կարդալ, անել, աղաչել, մեռնել, քշել, թռչել, գրկել, զուգվել, ուտել, չափել, պահել, ծլել:
Բ. Պահպանել, փախչել, պրծնել, ծաղկել, զարդարել, համբուրել, գալ, խոսել, պաղատել, տալ, խմել, տանել, ձնել, դնել, հեռանալ:

● Ա. Արժանի, կանաչ, սև, անպատիվ, թևաթափ:
Բ. Չլինել, լինել, բերել, անել, կապել:

● Ա. Ներս, դեմ, դեն, դուրս, մեջ, շուռ, վրա, տեղ/ը/, մոտ, տակ/ը/:
Բ. Դնել, գալ, նետել, ընկնել, բերել, գնալ, տալ, հասնել, գցել, անել, մտնել:

● Ա. Ախ, հեյ, վայ, վա՜շ-վա՜շ, վա՜յ-վու՜յ:
Բ. Գցել, կանչել, քաշել, տալ, անել:

● Ա. Ծանրութեթև, ջարդուխուրդ, վեր-վեր, գլուխկոնծի, ախ ու վախ, խունջիկ-մունջիկ, լացուկոծ, քարուքանդ, դեղ ու դարման:
Բ. Թռչել, քաշել, գալ, սարքել, անել, լինել, տալ, չլինել, դնել:

🕮 Բ-123. Ա. Տրված բառերով /անհրաժեշտ ձևափոխություններով/ կազմել հարադրական բարդություն-դարձվածքներ՝ օգտագործելով փակագծերում տրված բառերը:

& Բ. Բացատրել դարձվածքների և հարադրական բայերի տարբերությունները և նմանությունները:

● Երես / պնդացնել, առնել, դարձնել, տալ/.
● Ձեռք / մեկնել, տալ, առնել, խնդրել, բարձրացնել/.
● Աչք / բանալ, տալ, ունենալ, հանել/.
● Գլուխ / տալ, բերել, ընկնել, կախել, պահել, ծռել, ուտել, յուղել/:

& Գ. Ձեր կարծիքով՝ լեզվական ո՞ր միավորն է ավելի շուտ ձևավորվել՝ բա՞ռը, հարադրակա՞ն բարդությունը, թե՞ դարձվածքը:

Բ-124. Լրացնել հարադրական բարդություն–տերմինների շարքը առնվազը 10-ով՝ օգտվելով բուհական տարբեր դասագրքերից/ օր.՝ գամմա-քվանտ, բետտա-մասնիկ, քվարկ-աղյուսներ, որոշիչ-որոշյալ.../:

Բ-125. Գտնել հարադրական բարդությունները:

● Գիտնականները, ինչպես բոլոր այլ բնագավառների մարդիկ, տարբեր վարքի, խառնվածքի և բնավորության տեր են: Կան գիտնական-ճգնավորներ և գիտնական-կենսասերներ, գիտնական-տեսաբաններ և գիտնական-ուղղափառներ, գիտնական-որոնողներ, գիտնական-նստակյացներ և գիտնական-ճանապարհորդներ, գիտնական-սակավախոսներ և գիտնական-ճարտասաններ... /Գ. Ջահուկյան/

● 1. Անվերծանելի փարավոնների այդ անապատ-երկրի մասին Ալեքսանդր Մակեդոնացին լսել էր իր ուսուցչից՝ Արիստոտելից: 2. Գալիլեյը, լինելով մտածող-տեսաբան և միաժամանակ՝ ստեղծող ինժեներ, մտածում էր աստղադիտակ ստեղծել: 3. Գիտնականները համոզված են, որ նոր հատկություններով տեղակայված-պատվաստված գենը ժառանգաբար կանցնի և հաջորդ սերունդներին: 4. Գալիլեյը ցույց տվեց, որ Վեներան Լուսնի նման պինդ, սեփական լույս չունեցող մարմին է: 5. Գիտության պատմությունը թերևս Հալլեյին պետք է երախտապարտ լինի, որ շնորհիվ նրա հորդորանքների ու անօրինակ համառության՝ Նյուտոնը ձեռնամուխ եղավ հրատարակելու այդ ամենը: 6. Դրանից հետո նա խնդիր դրեց պարզել, թե ի՞նչ ուղեծրեր են հնարավոր՝ էլիպսից բացի.. «Երեք դիտումների մեթոդը» հնարավորություն տվեց ոչ միայն իսկական ուղեծրերը որոշելու, այլև վերականգնելու լուսատուի շարժման ամբողջ անցյալը: 7. Լեժանտեի բախտը չի բերում, և երբ նա վերջապես տեղ է հասնում, արդեն ուշ է լինում. Վեներայի անցումն Արեգակի վրայով արդեն տեղի էր ունեցել: 8. Խոր ծերության շրջանում Էրաստոսթենեսին ծանր դժբախտություն է հասնում. նա կուրանում է: Երկու աչքից: Ընդմիշտ: Եվ, բաց անելով երակը, վերջ է տալիս կյանքին: Նա աշխարհ էր եկել, որպեսզի տեսներ արևը: 9. Գալիլեյը նկատում է, որ թեպետ ջահի շարժումը կամաց-կամաց մարում է, և ճոճման թափը՝ նվազում, բայց և այնպես մեկ ճոճման, ծանրոց-ջահի մեկ գնալ-գալու վրա ծախսված ժամանակը գրեթե չի փոխվում: 10. Լսվեց խրտնած ձիերի սմբակների դոփյուն և խրխնջյուն՝ միախառնված թուրքերի գոռում-գոչյունի, աղմուկ-աղաղակի, զենքերի՝ ականջ խլացնող շաչյուն-շառաչյունի հետ:

Բ-126. Հետևյալ բառերը դարձնել բարդության առաջին բաղադրիչ և կազմել բաղհյուսական հարադրական բարդություններ՝ հարց, հայր, քիթ, փառք, լաց, գիշեր, դեղ, ժամ, սար, դարդ, դատ, խոսք, ամառ:

🕮 Բ-127. Կազմել 3-ական բաղադրյուսական բարդություններ հետևյալ կաղապարներով՝
ա/ միավանկ բառ + ու + միավանկ բառ /օր. հալ ու մաշ/
բ/ միավանկ բառ + ու + երկվանկ բառ /օր.՝ դուռ ու դրկից/
գ/ միավանկ բառ + ու + եռավանկ, քառավանկ բառ /օր.՝ խաղք ու խայտառակ, խելք ու բանականություն/
դ/ երկվանկ բառ + ու + միավանկ բառ /օր.՝արոտ ու քար/
ե/ երկվանկ բառ + ու + երկվանկ բառ /օր.՝աղի ու լեղի/
զ/ երկվանկ բառ + ու + եռավանկ .... բառ /օր.՝զուգված ու զարդարված/:

🕮 Բ-128. Ընդգծել բաղադրյուսական բարդությունները: Որոշել բաղադրիչների իմաստային հարաբերությունը՝ հակիմա՞ստ, թե՞ հոմանիշ կամ իմաստով մոտ բաղադրիչներով են կազմվել:

1. Ամոթ քեզ, Մոսի, թուք ու նախատինք... /ՀԹ/: 2. Հազար տարվա փորձ ու գործ Սկսվում է ամեն օր /Ն/: 3. Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ, Ննջեցին անուշ երկինք ու երկիր... /ՎՏ/: 4. Մտածումներս թախիծ ու թույն են... /Ն/: 4. Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում... Երբ մթնում կորչում են ծով ու հող... Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է իջնում... Երբ մթնում կորչում են լեռ ու արտ /Ն/: 5. Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ, Օր ու արև չտեսանք... /ԱԽ/: 6. Յարս նստե վանքի դռան, Նուռ ու խնձոր կծախե. Հարս ու աղջիկ քովը կուգան /Ն/: 7. Ցածում բախվում են օրոցք ու շիրիմ, Բացվում են հավերժ հաշտ ու ոխերիմ, Անհայտից հսկում՝ սգում է աստված /ՀԸ/: 8. Երնեկ արև ու լուսին լինեինք, Որ իրար երբեք չհանդիպեինք /Ն/: 9. Ինձ թվում է, թե նա իր թաթերով Լույսն ու մութն է կշռում ազնվորեն /ՊՍ/: 10. Ու նահանջի ճանապարհին Մինչև անգամ Թուփ ու ծառին վարակում է Ծաղիկ կոչված հիվանդությամբ /Ն/: 11. Բոլորի պես Նրանք նույնպես Անկարող են ապրել առանց հաց ու ջրի, Սակայն նրանք Չեն էլ կարող ապրել միա՛յն հաց ու ջրով /Ն/: 12. Սակայն պատիվ ու փառք նրա՛ն, Ով կարող է հոգի վառել.../Ն/:

🕮 Բ-129. Տրված բաղադրյուսական բարդություններից կազմել կցական բարդություններ՝ բացատրելով նրանց իմաստային և գործառական տարբերությունները:

Ետ ու առաջ, աղ ու հաց, լուռ ու մունջ, քիթ ու մռութ, հաց ու ջուր, սար ու ձոր, վար ու ցանք, դես ու դեն, կեր ու խում, լաց ու կոծ, այր ու ձի:

🕮 Բ-130. Գրել 10 կցական բարդություն, որոնք քարացած քերականական ձևեր են, ինչպես օրինակ՝ այնուամենայնիվ, բերանքսիվայր....

🕮 Բ-131. Տրված բառերով կազմել բարդություններ՝
ա/ հոդակապով բ/ առանց հոդակապի, օր.՝ ջուր -ա/ ջրառատ, ջրախառն բ/ ջրկիր, ջրմուղ:
Նուրբ, դուռ, գետ, ջուր, քար, մատյան, զրույց, զույգ, ժպիտ, ձուկ, լայն, ծով, ձեռ/Ն/, դուռ/Ն/:

🕮 **Բ-132.** ✍ **Բերված կցական բարդությունները բաժանել հետևյալ խմբերի՝**
ա/ բարդություններ, որոնք հարադրական բառերի բաղադրիչների կցումով են առաջացել.
բ/ բարդություններ, որոնք առ, զ, ընդ, ց, ըստ նախդիրների կցումով են առաջացել.
գ/ բարդություններ, որոնց բաղադրիչներն արտահայտում են ենթակա-ստորոգյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ստորոգյալ-պարագա հարաբերություններ.
դ/ բարդություններ, որոնց բաղադրիչները կապակցված են համադասական հարաբերությամբ.
ե/ բարդություններ, որոնք առաջացել են քարացած քերականական ձևերից:

Ակնածել, մերթընդմերթ, այսօր, տղամարդ, մայրցամաք, քարեղար, գործածել, գույնզգույն, ովևէ, օրըստօրե, մորեղբայր, վերլուծել, տանտիկին, այնուամենայնիվ, այսուհետև, հինավուրց, Էջմիածին, ծաղկապսակ, գլուխգործոց, քեռակին, իմիջիայլոց, պատվոգիր, վերջիվերջո, ինքնըստինքյան, աղուհաց, համենայնդեպս, առնտուր, տարեցտարի, որովհետև, երբևիցե, ելևէջ, տերողորմյա, տանտեր, վայրիվերո, զառիվեր, վազեվազ, այրուձի, ժամեժամ, ճրագվառոց:

🕮 **Բ-133. Կազմել 3-ական իսկական բարդություններ հետևյալ կաղապարներով՝**

ա/ գոյական + գոյական /ծաղկաման/
բ/ գոյական + ածական /քայլամոլոր/
գ/ անորոշ դերբայ + գոյական /վարվելաձև/
դ/ ածական + բայարմատ /նրբանկատ/
ե/ մակբայ + բայարմատ /դանդաղաշարժ/
զ/ դերանուն + գոյական /նույնանուն/
է/ գոյական + բայարմատ /ծաղկաքաղ/
ը/ բայարմատ + գոյական /լսափող/
թ/ ածական + գոյական /նրբիրան/
ժ/ ածական + ածական /դեղնակարմիր/
ժա/ թվական + գոյական /հազարագանձ/

🕮 **Բ-134. Բարդություններից յուրաքանչյուրի դիմաց հնչյունափոխված բաղադրիչի անհնչյունափոխ տարբերակը գրել, օր.՝** մամռապատ – մամուռ:

Կենսաբեր, նվիրաբերել, կենսագիր, սրտամոտ, կենսախինդ, գծապատկեր, օրենսգետ, շիկահեր, ծխամորճ, գլխահակ, կրծոսկր, մատենագիր, հուզառատ, մշտաժպիտ, հրազեն, օրինագիծ, ձվաձև, հուսավառ, ալրաթաթախ, ձնեմարդ, ընձուղտ, սրընթաց, գունանկար, արնագույն, կարմրադեղին, կապտականաչ, մթնշաղ, կիսագունդ, բքախեղդ:

🕮 **Բ-135.** Սենյակ, խնդիր, ամիս, նվեր, թուղթ, դուռ/ն/, նուռ/ն/, կես, հույս, սիրտ, կրակ, կարմիր, տուն, ամուր, հուր, գիր, թիռ, թուխ, գույն, զեն/ք/, լույս, ձյուն **բառերով կազմել իսկական բարդություններ՝ բացատրելով կատարված հնչյունափոխությունը:**

🕮 Բ-136. Տրված օրինակի հետևողությամբ հետևյալ բառերի բաղադրիչ մասերն առանձնացնել՝ արքայորդի - արքա + յ + որդի /յ-ն հիմքակազմիչ մասնիկ է/:

Հաճոյատես, կենսաթոշակ, վարվելակերպ, գարնանացան, աշնանավերջ, գարնանամուտ, մեղսագործ, մեղսածին, հաճոյակատար, կողմնապահ, շնորհաշուք, աչագեղ, կառամատույց, աչքաբաց, աչալուրջ, խելամիտ, պարտքատեր, խոսելաոճ, պարտամուրհակ, կենտրախ, կենսագիր, պատմելաձև:

🕮 Բ-137. Բացատրական բառարաններից դուրս գրել մեծ, գույն, ինքն, լուսին, աստղ **առաջին բաղադրիչ ունեցող բառերը և առանձնացնել բարդ և բարդ ածանցավորները:**

🕮 Բ-138. Ա. Մասնագիտական աղբյուրներից որևէ փոքրածավալ բաժին /գլուխ, ենթագլուխ, մաս/ ընտրել և դուրս գրել բարդածանցավոր բառերը՝ դասադասելով ըստ տրված բառակազմական կաղապարների՝

ա/ ***արմատ + արմատ + վերջածանց*** /զուգահեռաբար/
բ/ ***արմատ + արմատ + վերջածանց + վերջածանց*** /ցրտակայունություն/
գ/ ***արմատ + արմատ + արմատ + վերջածանց*** /ինքնաքննադատություն/
դ/***արմատ+արմատ+արմատ+վերջածանց+վերջածանց*** /լեզվամտածողություն/
ե/ ***արմատ + ածանց + արմատ*** /հեռուստացույց/
զ/ ***արմատ + ածանց + արմատ + ածանց*** /ձևույթաբանական/
է/ ***արմատ+ածանց + արմատ + ածանց + ածանց*** /դպրոցաշինարարություն/
ը/ ***նախածանց + արմատ + արմատ*** /շարահյուսագետ/
թ/ ***նախածանց+արմատ + արմատ + վերջածանց*** /անհավասարակշռություն/

& Բ. Եթե հանդիպեք առավել բարդ կառույցների, դուրս գրեք և կազմեք բառակազմական կաղապարները:

🕮 Բ-139. & Ա. Ընդգծել տրված բառերի բառակազմական հիմքերը, որոշել նրանց խոսքիմասային պատկանելությունը:[1]

Բ. Առանձնացնել այն բաղադրյալ բառերը, որոնք՝

ա/ կարող են երկու բառակազմական հիմք ենթադրել /օր.՝ անազնվություն - անազնիվ + ություն **և** ան + ազնվություն/.

բ/ ունեն ոչ իմաստակիր բաղադրիչ. ընդգծել այն /օր.՝ արքայադուստր - արքա + յ + ա +դուստր/:

& Գ. Ընտրել 5 բառ և ներկայացնել բառակազմական քայլերը:

Աստղագիտություն, գրքանկարչություն, դշխոյապատում, ենթակառուցվածքային, ժողովրդահայրենասիրական, կանխազգայնություն, լեզվա-

---

[1] /«Բառակազմական հիմքը տվյալ լեզվական բաղադրյալ միավորի մի մասն է, լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը...» /Ս. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, էջ 107/:

ձայնալարային, չմակդիրավորվող, բժշկածագումնաբանական, դրամահավաքչություն, կարճուերկարվել, ջրօրհնեք, կենսագրական, գերհզորություն, նույնանալ, ձևահնչույթաբանություն, երրորդել, աստղադիտակ, ակնաբուժարան, վայել, սնծովյան, անհիշաչարություն, չկայություն, ռուսալրատվագործակալություն, սահմանադրափոխություն, տրամաբանափիլիսոփայական, ուլտրաազգայնամոլական, փոխհակադրվածություն, քաջնազարավարի, ապաբարոյականացվել, կարոտաբաղձություն, հեռախոսահաղորդակցային, հեռուստաբարոզարշավ, շեքսպիրագիտություն, դյուցազներգություն, տիեզերագնացություն, համահայաստանյան, աշնանային, ռադիոընդունիչ, նախաքրիչքային, հաճոյախոսություն, ուրվականանալ, ոչնչանալ, անկյունագծաձև, հեռախոսազրույց:

Բ-140. & Ա. Տրված բառերով կազմել նորերը՝ դրանք դարձնելով մեկ սերող, մեկ բաղադրող հիմքեր /օր.՝ օրեն/ք/ - տնօրեն, օրինագիծ/:

ա/ Կեզ, գետ, վեճ, զեն/ք/, վեպ, մեջ, կողմ, ձուկ, մուկ, դուռ, բեռ, գագաթ, հայր, քույր, մայր, երջանիկ:

բ/ Հույզ, բազուկ, դեմ/ք/, տեր, ծափ, խինդ, սուր, կես, բույժ, զրույց:

Բ. Ըստ հայերենի բառակազմական օրինաչափությունների՝ բառակազմական ո՞ր հիմքն է տվորաբար առաջադաս լինում՝ սերո՞ղը, թե՞ բաղադրողը:

Բ-141. & Հետևյալ բարդությունները վերածել բառակապակցությունների՝ որոշելով, թե ո՛ր հիմքն է իմաստային կենտրոնը՝ սերո՞ղը, թե՞ բաղադրողը:

Աշխարհացունց, քառանիստ, սանձարձակ, ժամանակաչափ, խնկաբույր, արեգակնահար, ամրապինդ, լուսնազոծ, նրբերանգ, մայրաքաղաք, քաղաքամայր, աստղաֆիզիկա, վիթխարահասակ, ձյունածածկ, աստվածազարմ, արձակագիր, շղթայակապ, լուսնածաղիկ, ատոմագետ, հրածին, ծաղկաշղթա, ուշահաս, ջրաղաց, քաղաքաբերդ, բոսորակապույտ, ծովաշուշան, լուսապատկեր, անկյունագիծ, դանդաղընթաց, սրճաղաց, հրապարակախոս, արագընթաց, ամրապինդ, գյուղաբնակ, ազգատյաց, եռակողմ, արագավազ, խաղասաց, եսասեր, հեքիաթասաց, դյուրազգաց, շղթայաձև, կիսակառույց, նավամատույց:

Բ-142. Կռահել բառակազմական միջոցը և լրացնել: Բացատրել բաղադրյալ բառազույգերի /դիրքային կամ փոխատեղական տարբերակների/ իմաստային տարբերությունները՝ օգտվելով որևէ բացատրական բառարանից /օր.՝ փայտաշեն /փայտից շինված/ – շինափայտ /շինանյութ/

● Միջագետ - գետամեջ
քաղաքամայր - →
← սիրախաղ
← գիշերալուսին
..... ← ծաղկազարդ
կարմրաղեղին →

● պատվարժան - արժանապատիվ
երթուղի → .....
գեղահրաշ →
փայտաշեն →
խաղասկիզբ →.....
աստղալույս → .....

.....← փորձագետ ..... ← - քարաժայռ
.....← եզրաձաղիկ առատաձյուն → .....
բերանբաց → թթվակաղամբ →

📖 Բ-143. & Կազմել իսկական բարդություններ հետևյալ մասնակաղապարներով՝

ա/ սերող հիմք + բաղադրող հիմք /ծովափ.../
բ/ սերող հիմք + ա + բաղադրող հիմք /լուսապսակ.../
գ/ սերող հիմք + ե /ե- ի + ա/ + բաղադրող հիմք / ոսկեթև.../
դ/ սերող հիմք + յ + բաղադրող հիմք /արքայորդի.../
ե/ սերող հիմք + յ + ա + բաղադրող հիմք /արքայադուստր.../
զ/ սերող հիմք + ն + բաղադրող հիմք / մկնդեղ.../
է/ սերող հիմք + ն + ա+ բաղադրող հիմք /նոնաքար.../:

📖 Բ-144. Դուրս գրել իսկական բարդությունները:

Ամբողջ 20 տարի Կոմիտասն անցկացրեց Փարիզի հոգեբուժարանում: Այժմ նա 66-ամյա ծերունի էր՝ ալեզարդ, փոս ընկած ակնակապիճներով, մագաղաթյա թափանցիկ մաշկով, ցցված այտոսկրերով, կմախքացած մարմնով: Հազար ինը հարյուր երեսունհինգ թվականի հոկտեմբերի քսաներկուսն էր՝ Կոմիտասի կյանքի վերջին օրը: Վայրկյան առ վայրկյան լքում էին ուժերը, բայց մթագնած ուղեղը պայծառացել էր: Ու նա տեսավ հրաշալի մի երազ... Իբր դեղձան ծաղիկների վրա մեղմօրոր թրթռում էր քաղցրահնչյուն մի երգ, ու մեղմորեն ծփում էր ակնակիտ լիճը: Լճափին մարդիկ են հավաքվել: Ինքն առողջ է, աշխույժ և կանգնած գանգանման լեռնալանջի արփազօծ կատարին՝ ոգեշնչված երգում է. «Հայաստան, երկիր դրախտավա՜յր...»: Եվ երկնամերձ բարձունքից լավ է երևում Արարատյան դաշտը, ուր կիսաշրջանաձև կանգնած է երգչախումբը: Մեկ շունչ, մեկ հոգի՝ երգում է խումբը հափշտակված, խրոխտաձայն, և երգի աստվածային ելևէջները սփռվում են երեկոյացող օրվա անդորրում:

- Մենք արևորդիներ ենք, հեթանոս արևորդիներ՜,- գոչում է խմբավարը...

/Ըստ Վ. Վարդանյանի/

& Բ. Տարբեր բառարաններից օգտվելով՝ կազմել տուն, լույս բառերի բառակազմական փնջերը:[1]

📖 Բ-145. Ա. Վերլուծել տրված բաղադրյալ բառերը:

& Բ. Առանձնացնել ածանցավոր բառերը և որոշել, թե ածանցները ո՞ր հիմքի մեջ են մտնում՝ սերո՞ղ, թե՞ բաղադրող:

Ռադիոլուսանկարում, տեսահեռախոս, ռադիոհեռագիր, աստղասպեկտրագիր, տիեզերանավակայան, աստղադիտակաշինություն, աստղա-

---

[1] «Նույնարմատ բաղադրյալ բառերի ամբողջությունն է, ընդհանուր արմատ ունեցող բոլոր բառակազմական շարքերը միասին» /Ս. Գալստյան, նույն տեղում/:

լուսաչափ, լուսնահրթիռ, օտարամոլորակաբնակ, ռադիոալեհավաք, ռադիոազդանշան, ռադիոլուսանկար, ռադիոասուլիս, երկրաշարժականխագուշակում, ծառաթփատեսակ, հատակագծաճարտարապետական, հեռուստաբոնություն, հյուսվածքանախշ, վերահանդերձավորել, ռադիոհեռուստակառավարում, աստղաֆիզիկա, աստղաբուսաբանություն, ֆինանսատնտեսագիտական, ռադիոաստղագիտություն:

& Գ. Ընդգծվածների բառակազմական քայլերի թիվը որոշել:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

🕮 Բ-146. Ա. Հնում մագաղաթի և թղթի պակասը ստիպել են մարդուն բառերը կրճատելու ելք որոնել. նրանք կրճատել են ամենագործածական բառերը /Աստված -ԱԾ, սուրբ սբ. .../: Մեր օրերում նաև ժամանակի խնայողության պահանջով են կրճատվում բառերը. ձեր լսած դասախոսությունները գրառելու համար ինչպիսի՞ բառակրճատումներ, համառոտագրություններ եք անում:

Բ. Հիշյալ պահանջմունքի դրսևորում են նաև հապավումները. նո՞ւյնն են հապավումներն ու համառոտագրությունները: Ինչո՞ւ:

🕮 Բ-147. Արտագրել՝ համառոտագրված բառերը լրիվ գրելով: Բացատրել համառոտագրման սկզբունքները:

Անհատական-ոճական նորաբանությունների մեջ մենք տարբերակել ենք՝ ա/ **դիպվ.** և բ/ **հեղ.** տեսակները: Նորագույն **դրձ.** ևս տեղ են գտել բառարանում: Բառագիտական նշումները լինում են՝ գործառական /բառի, տերմինի, պատկանելությունը լեզվի գործառության որևէ ոլորտին. օր.՝ **բժշ. բսբ., գիտ., գտնտ., հանքբ., տնտգ., տեխ., քղբ., աշխրգր., առևտր., դվնգ., եկեղեց., երաժշտ., երկրբ., իրվբ., լեզվբ., կենդ., կենս., կզմխս., կրոն., ճրտրպ., մսնգ., շախմ., շին., տպգր., փիլ., քիմ., ֆիզ., ֆին./**, սոցիալական /**խսկց., բրբռ., ժրգ., ծծկլ., հսրկբ., մնկ., արհմրհ., գռեհկ., գող., ժող., հեգն., փղբշ. քնքշ.** և այլն/, նորմավորող՝ **անհնձնբ., անհջղ., սխ.** և այլն:

Նորագույն դարձվածքները բերված են **դրձ.** համառոտագրված նշումով, փոխաբերական իմաստով գործածվածները՝ **փխբ.**:

Բառերի քերականական բնութագրման համար սկզբնապես տրվում է նրանց խոսքիմասային պատկանելության համառոտագրված նշումը՝ **գ., ած., դեր., դերբ. բ., մկբ., ձ. ևն.** այնուհետև՝ **նբ., չբ., կբ.** և **չբ., հբ., ևն**:

Լրագրերի անվանումները, եթե մեկ բառով են արտահայտված, բերում ենք լրիվ, իսկ եթե կապակցաբար են՝ հապավված ձևով՝ **ԳԹ, ԵԵ, ՀՀ ևն**:

/Ըստ Ս. Էլոյանի/

🕮 Բ-148. Ա. Հետևյալ բառաշարքում առանձնացնել հապավական բարդությունները:

Զինամթերք, ուստարի, պետապահովագրություն, շինանյութ, գյուղաշատ, արտգործնախարար, գյուղատնտես, գիտաշխատող, պետական, զին-

ղեկ, շրջկենտրոն, բնակվարչություն, աշխօր, բուժարան, շրջապատ, գյուղբոլբակից, աշխատակազմ, արտաքնապես, խնայբանկ, բնակարանամուտ, բուժօգնություն, ուսումնատենչ, անխնա:

Բ. Հապավումները կազմվում են բաղադրության հիմունքով և դասվում են բաղադրյալ բառերի շարքը, բայց բառակազմական ի՞նչ յուրահատկություն ունեն:

Գ. Հապավումները ո՞ր խոսքի մասի բառակազմն են լրացնում:

🕮 Բ-149. Տրված բառակապակցությունները վերածել հապավական բարդությունների:

Բնակարանային վարչ, գիտական աշխատող, խնայողական բանկ, զինվորական ուժ, ժողովրդական թատրոն, զինվորական կոմիսար, հրամանատարական կազմ, արտաքին գործերի նախարար, սոցիալական ապահովագրություն, բուժական անձնակազմ, քաղաքական բանտարկյալ, պետական ապահովագրություն, ջերմային էլեկտրական կայան, ատոմային էլեկտրական կայան:

🕮 Բ-150. Կյանքի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական, ռազմական, գիտատեխնիկական ոլորտները ներկայացնող տառային հապավումներ գրել /3-10 օրինակ/:

🕮 Բ-151. Օգտվելով «Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատուից» /Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, 2000թ/՝ տառային հապավումների հետևյալ խմբերը լրացնել 3-5 օրինակով:

ա/ Հայերեն հապավումներ /ԱԳՆ -Արտաքին գործերի նախարարություն.../

բ/ Հայագիր փոխառյալ հապավումներ /ՖԻՖԱ /ֆր./ - Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա. FIFA /f8./ -Federation Internationale de Football Association/

գ/ Օտարագիր փոխառյալ հապավումներ /ACVA /անգլ/– Agricultural Cooperative Bank of Armenia /

🕮 Բ-152. Գրել 5-ական հին և նորաստեղծ հապավումներ:

🕮 Բ-153. Հետևյալ հապավումները խմբավորել ըստ կազմության՝

ա/ վանկային բ/ տառային գ/ վանկաբառային դ/ խառն

Գիտաշխատող, դասղեկ, ժողկրթբաժին, աշխղեկ, արտգործնախարար, բնակվարչ, ՆԱՏՈ, Հայֆիլմ, պետխնայբանկ, ՆԳՆ, զինկոմ, շրջկենտրոն, Հայգազշին, ԱԷԿ, ՄԱԿ, ՀԷԿ, հրամկազմ, պետապ, բուժօգնություն, ԷՀՄ, ՀՀ, սանհանգույց, գիտխորհուրդ, ԱԻՄ, բուհ, ԱՊՀ, ՋԷԿ, ՌԴ, ԱԳՆ:

🕮 Բ-154. Տրված հապավումները վերածել բառակապակցությունների՝

ա/ ԳԴՀ, ԵԱՀԿ, ՀՀ ԳԱԱ, ՓԲԸ, ՁԻԱՀ, ԱՊՀ, ՌԴ, ԼՂՀ, ՆԱՏՕ.

բ/ ուսխորհուրդ, ֆինբաժին, զինղեկ, արհմիություն, արտգործնախարար, Հայգազշին:

🕮 Բ-155. Հայկական որևէ օրաթերթից դուրս գրել հապավումներ, որոշել տեսակը և ներկայացնել ամբողջական տեսքով:

🕮 Բ-156. Ա. Կարդալ բանաստեղծությունը և բառակազմական վերլուծություն կատարել:

Բ. Ընտրել մի քառատող և ենթարկել հնչյունաբանական վերլուծության:

Գ. Դուրս գրել հնչյունափոխված բառերը և բացատրել կատարված հնչյունափոխությունը:

Դ. Գրել ընդգծված բառերի հոմանիշները:

Ես ճամփա ընկա, որ այս տանջալի կասկածը մարեմ,
Որ ապավինեմ ապառաժներիդ անխախտ հավատին,
Որ ջրերիդ հետ քարեքար ընկած անփույթ թափառեմ,
Քամիների մեջ խշխշամ, ինչպես արծաթե բարդին:
Մայրամուտ եղավ թվաց՝ ուր որ է կզարկվի ժայռին,
Ու կզրնգա անդունդից ելնող լրած լուսնկան.
...Եվ հրաբուխի հոտ էի առնում ես քո քարերից,
Եվ ջրհեղեղի հոտ էի առնում կավից քո տոչոր,
Ինչ-որ անմեկին շշուկ էր գալիս մթին այրերից,
Ինչ-որ բան էին շշնջում իրար մացառները չոր...
Ու ես չիմացա՝ ցնո՞ղք էր, տեսի՞լք,
Եվ սակայն հանկարծ
Դարեր թաքնված Հեթանոսները դուրս եկան այրից:
Աստվածների պես կիսամերկ էին ու կարծրամկան,
Ու գրաբարյան պղինձն էր զնգում նրանց բարբառից: /Վ. Դավթյան/

ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

🕮 Բ-157. Ըստ Պ. Պողոսյանի՝ «գլուխ» բառով կա մոտավորապես 650 դարձվածք, «աչք»-ով՝ 600, «ձեռք»-ով՝ 350, «տուք»-ով՝ 336, «բերան»-ով՝ 260, «երես»-ով՝ 180, «լեզու»-ով՝ 175, «քիթ»-ով՝ 158, «ականջ»-ով՝ 150: Վերոհիշյալ բառերից ընտրել մեկը, նախ գրել նրանով կազմված ձեր իմացած դարձվածքները, ապա լրացնել շարքը՝ օգտվելով բառարաններից:

🕮 Բ-158. Կարդալ Ա կետի դարձվածքները և նրանց կողքին գրել Բ կետից ընտրված նրանց նշանակությունները:

Ա. ♦Գլխի տակ փափուկ բարձ դնել ♦աղի արտասուք թափել ♦այրված սրտին տաքդեղ լցնել ♦աշխարհը ոտքի տակ առնել ♦աչքի լույսը չխնայել ♦առակ դառնալ ♦աստեղային ժամ ♦ավազի վրա տուն շինել ♦ավետյաց երկիր ♦գլխին ձյուն մաղել ♦բոստանը քար գցել ♦բաքոսյան խնջույք ♦բմբուլները քամուն տալ ♦բոլոր կամուրջները այրել:

Բ. ❓Սանձարձակ խրախճանք ❓խիստ քննադատել ❓նահանջի ճանապարհ չունենալ ❓ոչ ուղղակի ճանապարհով մեկի հասցեին չարախոսել ❓մեծ աղետի ենթարկվել ❓բաղձալի ու ցանկալի երկիր

? անհիմն գործ բռնել ? որևէ անձի համար ամենանշանավոր ու հիշարժան ժամանակը ? ծաղրի առարկա դառնալ ? մեկին շատ նվիրվել ? շատ ման գալ ? եղած վշտին նոր վիշտ ավելացնել ? աղերսել ? սուտ խոստումներով հանգստացնել:

Բ-159. Ո՞ւմ նկատի ունի ժողովուրդը, երբ ասում է՝

♦առյուծի սիրտ կերած ♦աղոթած էշ ♦անմեղ գառ
♦անջուր ջրաղաց ♦գրպանը ծակ ♦անառակ որդի
♦ասեղ մաշկող ♦բարի քեռի ♦երկու տիրոջ ծառա
♦վերնատունը դատարկ ♦անհավատ Թովմաս ♦աչքի սուրմա թոցնող
♦անդուռ բերան ♦գայլի բերանն ընկած գառ ♦անպոչ գդալ
♦դդում գլուխ ♦գառան մորթի հագած գայլ ♦ցամաք ձորի աղվես

Բ-160. Տրված դարձվածքներում կետերի փոխարեն գրել կենդանիների անուններ: Բացատրել նրանց իմաստները:

♦... զատկին ♦թրջված դառնալ ♦լեռը երկնեց՝ ծնեց ♦իր քշել ♦... ճրագու հանել ♦ գլուխը խալուն չի մնա ♦... առաջ մարգարիտ լցնել ♦քաղցր լեզուն բնից կհանի ♦կաղ քարավան մտնել ♦... վազքը մինչև մարագն է ♦կարասն ընկած ♦... ծակին հազար թուման տվող ♦... օրն ընկնել ♦աղոթած ♦... բանջարանոցը թողնել ♦անաղուհաց քրդի ♦... բաժին ♦արանքներով սև անցնել ♦... քուն մտնել ♦... ծառայություն, ♦... գլխին ավետարան կարդալ, ♦... հետ ուտել, տիրոջ հետ վայ կանչել ♦երբ ծառը բարձրանա ♦... ցեխից հանել, ♦... ականջում քնել:

Բ-161. Յուրաքանչյուր բառի իմաստն արտահայտել մեկական դարձվածքով՝

ա/ վախենալ **գ/** կաշառել **ե/** մահանալ **է/** անպատվել
բ/ չարչարվել **դ/** սովորել **զ/** ուրախանալ **ը/** սպասել

Բ-162. Բացատրել լեզու բառով կազմված հետևյալ դարձվածքների իմաստները: Ընտրել 5-ը և կազմել նախադասություններ:

♦Երկար լեզու ♦չար լեզու ♦լեզուն շաղ տալ ♦ընդհանուր լեզու գտնել ♦լեզուն պտտվել ♦լեզուն կուլ տալ ♦լեզուն քոր գալ ♦լեզուն կախ գցել ♦լեզվի կապերն արձակել ♦լեզու չգտնել ♦եզոպոսյան լեզու ♦տարբեր լեզուներով խոսել ♦լեզուն կծել ♦լեզուն կապ ընկնել ♦լեզու առնել ♦լեզվի ծայրին ♦լեզվով ճճճղուկ բռնել ♦լեզու թափել ♦լեզու թաթախել ♦լեզուն շներին տալ ♦լեզուն բերանում թաղիք դառնալ:

Բ-163. Ա. Կարդալ և դուրս գրել ոտք **բառով կազմված դարձվածքները:**

Բ. Դուրս գրել մնացած դարձվածքները: Բացատրել նրանց արտահայտած իմաստները:

Կարելի է շատ բան հաշվել, բայց ոչ «ոտք» բառով կազմված դարձվածքները: Ոտք դնե՞լ, թե՞ չդնել այդ հետաքրքիր աշխարհը: Գլուխդ

պտույտ է գալիս վերջիններիս շատությունից: Կարծես թե ոտք դնելու տեղ էլ չկա, ու սկսում ես միայն մի ոտքի տեղ փնտրել: Խոսքը կտուրը չգցենք...

Ոտքը կարող է բացվել, կոտրվել, գետնից կտրվել: Կարելի է ոտքը գետնին խփել, ոտքը կտրել ու կապել, կախ գցել, բայց և ոտքը պաչել, ոտքերն ընկնել:

Ուզում ես օրդ հաջո՞ղ անցնի՝ հեռու մնա այն մարդուց, որ առավոտյան ձախ ոտքի վրա է արթնացել:

Ուզում ես վերադասը բարեհա՞ճ լինի քո հանդեպ՝ պետք չէ ոտ ու ձեռ ընկնել ու նրա ոտքերի տակ հայտնվել: Մի՛ թույլ տուր ոտնակոխ անեն քեզ ու ոտնատակ տան: Ոտքդ քարին կառնի, ոտքերիդ տակ հողը կայրվի, թե որ ուրիշի ոտքերի տակ փոս փորես:

Եթե ուզում ես ոտքերիդ տակ հողը չերերա, ոտքդ վերմակիդ չա՛փ մեկնիր և ինքդ փորձիր ոտքի կանգնել: Թե ամուր ես կանգնել հողի վրա, փորձիր ընկերոջդ էլ ոտքի կանգնեցնել:

Ոտք չդնես նրա տունը, ով ոտքերիդ առաջ քար կգցի:

Ականջիդ օ՛ղ արա՝ երկու ոտքով թակարդը կընկնես, թե որ խելքդ գլուխդ չհավաքես, ոտքիդ տակից հողը կփախչի, թե որ անունդ մրոտվի: Ոտքից գլուխ կկորչես, թե որ սրտումդ կրակ չվառես: Սրտիցդ քար կընկնի, թե ոտից-ձեռից ընկած ծնողիդ հասնես...

Ոտքն էլ ձեռքի նման կարող է տարբեր քաշային կարգեր ունենալ. կարող է ծանր լինել ու թեթև, կարող է խերով լինել ու «բեխեր»...

📖 164. ☑ Ընտրել բերան, գլուխ, ձեռք, քիթ, ականջ, սիրտ **բառերից մեկը և Խ. Բաղիկյանի «Ուսումնական դարձվածաբանական բառարանից» դուրս գրել նրանով կազմված դարձվածքները՝ վերը բերվածի նմանողությամբ կազմել կապակցված խոսք:**

📖 Բ-165. Բացատրել հետևյալ դարձվածքների իմաստները և նրանցով մեկական նախադասություններ կազմել:

♦ արևը խավարել ♦արև առնել ♦ արևը բաշխել
♦ արևիդ մեռնեմ ♦ արևս վկա ♦արևի վրա բծեր տեսնել
♦արևով երդվել ♦կարմիր արևից ընկնել ♦արևը մեռնել

📖 Բ-166. Դարձվածքով ինչպե՞ս կարելի է ասել՝

❶ **ա/** զայրանալ
բ/ խիստ զբաղված լինել
գ/ հին, հինավուրց
դ/ չափազանց ագահ, ժլատ
ե/ վճռական քայլ կատարել
զ/ մոտենալ ծերությանը
է/ շատ մեծ բազմություն կար
ը/ հանդիմանել, նախատել
թ/ շատ աղաչել
ժ/ զարմանալ
ժա/ ծանր վիճակից դուրս գալ
ժբ/ չխոսել, պապանձվել

❷ **ա/** աննշան բանից մեծ աղմուկ սարքել
բ/ իզուր, անարդյունք աշխատանք կատարել
գ/ անազնիվ, խարդախ մարդուն ինչ-որ բան վստահել

դ/ հիմնական հարցը դեռ չլուծած՝ դրա օգուտից խոսել
ե/ որևէ մեկի վերջին, սովորաբար ավելի նշանակալից գործը
զ/ մի գործ կատարելու համար ծայրահեղ ջանք թափել, ճգնել
է/ մի բանի երկար սպասել այն դեպքում, երբ այլևս օգուտ չի լինի
ը/ խոսակցության թեման հարկադրաբար, մտածված կերպով փոխել

📖 Բ-167. Պատասխանել տրված հարցերին՝ որպես պատասխան ընտրելով դարձվածքներ կամ դարձվածային արտահայտություններ:
Ի՞նչ են ասում կամ ի՞նչ կարելի է ասել՝
❶ այն մարդու մասին,
ա/ որը արագ և շատ հաճախ փոխում է իր որոշումները, բ/ որը եկել է ոչ ճիշտ ժամանակին, գ/ որը շատ համառ է, դ/ որը շատ է խոսում, ե/ որը անհետ կորել է, զ/ որը ամոթի զգացում է ապրում, է/ որը չգիտե արդեն բոլորին հայտնի դարձած իրողության մասին:
❷ Այն դեպքում՝
ա/ երբ վտանգը սպառնում է չորս կողմից, բ/ երբ շատ ձանձրալի է, գ/ ինչ-որ երևույթ ոչ սովորական է, անհավատալի, դ/ խառնիճաղանջ, խառնաշփոթ իրավիճակ է:

📖 Բ-168. Ա. Տրված բառային կապակցությունները նախադասություններում գործածել մեկ իրենց բուն իմաստներով, մեկ՝ այլաբերական-փոխաբերական՝ դարձվածային նշանակությամբ:
Բ. Առաջին դեպքում բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը պարզել, երկրորդ դեպքում՝ նրա նշանակությունը:
♦Գլուխը պահել ♦աչք մտնել ♦կոկորդից բռնել ♦ալֆա և բետա ♦խփել գլխին ♦սառույցը շարժվել ♦թրջված հավ ♦ջրի երես դուրս գալ ♦ծայրը ծայրին հասցնել ♦ձեռքերի վրա պահել ♦բերանը ջուր առնել ♦արգելված պտուղ ♦գլուխը կորցնել ♦բաբելոնյան աշտարակաշինություն ♦լեզուն կծել ♦աչքից ընկնել ♦կրակի մեջ ընկնել ♦ատամները հաշվել ♦քար կտրել ♦կրակը գցել ♦ձեռքերը լվանալ ♦գլխին նստել ♦գլուխը սապոնել ♦աչքը բացել:

📖 Բ-169. Ձևային և իմաստային ինչպիսի՞ տարբերություններ կան դարձվածային հետևյալ զույգերի միջև՝

Ա				Բ		
աչքի ընկնել	և	աչքին ընկնել		սիրտ առնել	և	սիրտն առնել
ձեռք տալ	և	ձեռքը տալ		հոգի տալ	և	հոգին տալ
գլուխ տալ	և	գլուխը տալ		գլուխ պահել	և	գլուխը պահել
աչք գցել	և	աչքը գցել		սիրտ տալ	և	սիրտը տալ
արև առնել	և	արևն առնել		գլուխ դնել	և	գլուխը դնել
գլուխ գալ	և	գլուխը գալ		աչք բացել	և	աչքը բացել

🕮 Բ-170. Նշել տրված դարձվածային տարբերակների տարբերությունները /հնչյունական, քերականական, բառական, ոճական/:

♦Ճանապարհը ծռել // ճամփան ծռել ♦այն աշխարհը գնալ // էն աշխարհը գնալ ♦ձեռը բաց // ձեռքը բաց ♦խոսքը մեկ անել // խոսքը մին անել // խոսքները մեկ անել ♦սատանայի բաժին դառնալ // սատանի բաժին դառնալ ♦ոտերը մեկնել // ոտքերը մեկնել ♦աշխարհին հրաժեշտ տալ // աշխարհքին հրաժեշտ տալ ♦դես-դեն ընկնել // դես ու դեն ընկնել ♦աչքերը լայն բացել // աչքերը լայն բաց անել ♦վիզը ծռել // շլինքը ծռել ♦Բաբելոնի աշտարակաշինություն // բաբելոնյան աշտարակաշինություն ♦աստված չանի // աստված ոչ անի ♦բերանի ջուրը գնալ // բերնի ջրերը գնալ ♦հացը կտրել // հացից կտրել ♦գլուխը քարին տալ // գլուխը քարով տալ ♦ձվում մազ որոնել // ձվի մեջ մազ որոնել ♦կրակի հետ խաղալ // կրակի հետ խաղ անել ♦օրը սևացնել // օրը սև անել ♦կյանքի և մահվան խնդիր // կենաց և մահու խնդիր ♦կենաց ծառ // կյանքի ծառ:

🕮 Բ-171. Մասնագիտական ո՞ր միջավայրում են ծնունդ առել հետևյալ դարձվածքներն ու դարձվածային արտահայտությունները:

ա/ ♦Ականջը բաղմանչու ականջ շինել ♦փետուրը փոխած հավ դառնալ ♦խոփը քարին դեմ առնել ♦համ նալին խփել համ մեխին ♦ձվից նոր դուրս եկած:

բ/ ♦ Սիրտը ճաքել ♦լեղին պատռել ♦խելքամաղ լինել:

գ/ ♦Բացարձակ զրո ♦քառակուսի աստիճան բարձրացնել ♦մեռյալ կետից շարժվել ♦հավասարության նշան դնել ♦փակագծերը բացել ♦հակադարձ համեմատական լինել ♦մի հայտարարի բերել:

դ/ ♦Դիտողի դերում լինել ♦դիմակը նետել ♦բեմից հեռանալ ♦վարագույրը բարձրացնել ♦կուլիսների ետևում:

ե/ ♦Հասարակ անուն դառնալ ♦վերջակետ դնել ♦մեծատառով մարդ ♦այբ-ից մինչև ֆե:

զ/ ♦Ձենքը ցած դնել ♦վառողը չոր պահել ♦ծանր հրետանի ♦սվիններով դիմավորել:

է/ ♦Աստղաբաշխական թիվ ♦արև ու լուսին դառնալ ♦հակադիր բևեռներում գտնվել ♦առանցքի շուրջը պտտվել ♦գիսաստղի պես երևալ:

🕮 Բ-172. Նշել հետևյալ դարձվածքների առաջացման աղբյուրները և բացատրել նրանց այլաբանական-փոխաբերական նշանակությունը: Շարունակել շարքերը 3-ական դարձվածքներով:

Ա. ♦Սրբության սրբոց ♦անառակ որդի ♦բաբելոնյան աշտարակաշինություն ♦արգելված պտուղ ♦Հուդայի համբույր ♦Նոյի ագռավ ♦քավության նոխազ ♦Սողոմոնի դատ ♦երկնային մանանա...

Բ. ♦Մեծ պաս շինել ♦վանքի հավերը ուտել ♦բախտավոր աստղի տակ ծնվել ♦երեսի մեռոնը թափվել....

Գ. ♦Նազարի բախտ ♦Տեր Թոդիկի դպրոց ♦Աբու Հասանի մաշիկներ ♦մեծապատիվ մուրացկաններ ♦հողմաղացների դեմ կռվել ♦արջի ծառայու-

թյուն մատուցել ♦դառը դատել, դատարկ նստել ♦պարապ վախտի խաղալիք ♦բալը թանկ ա...

Դ. ♦Աքիլլեսյան գարշապար ♦դանայան տակառ ♦տրոյական ձի ♦Ռուբիկոնն անցնել...

Բ-173. Ա. Առանձնացնել դարձվածքներ, որոնք արտահայտված են՝
ա/ մեկ լիմմաստ և մեկ սպասարկու բառերով.
բ/ 2, 3, 4 .... լիմմաստ բառերով.
գ/ նախադասությամբ:

Բ. Յուրաքանչյուր կետ լրացնել 5-10 դարձվածք-օրինակով:

♦Քթի տակ ♦ալֆա և օմեգա ♦քթի առջև ♦Ակոն տանը չէ ♦արևդ թաղեմ ♦աչքիս վրա ♦բերնում լոբի չի թրջվի ♦անաղուհաց քրդի շուն ♦աչքի փուշ ♦պապը միշտ գաթա չի ուտի ♦գլխիս վրա ♦ասեղի ծակով անցնել ♦աստղերից իջնել ♦լեզուն չլինի՝ ագռավներն աչքերը կհանեն ♦իրերն իրենց անուններով կոչել ♦ականջը կախ ♦լեզվով ճնճղուկ բռնել ♦հոգին գրպանը դնել ♦կոշտը նստել, քարի դարդն է լալիս ♦լեռը երկնեց՝ մուկ ծնեց ♦ներքին այրման շարժիչ ♦վրա տալ ♦շան բերանն ընկած շաքար ♦ոտքի վրա ♦սիրտը տեղից դուրս թռչել ♦փակագծերի մեջ ♦ականջի տակ ♦թրի պես ♦տկլոր ջանին կատու շալակել ♦թրի տակ ♦փայտի նման ♦աշխարհով մեկ լինել ♦սրտին մոտ ♦բոլոր ճանապարհները տանում են Հռոմ:

Բ-174. Տրված դարձվածքների շարքում առանձնացնել՝
ա/ ժողովրդախոսակցականները **բ/ բարբառայինները**
գ/ գռեհկաբանությունները **դ/ գրքայինները /բարձր ոճի/:**

♦Աղվես նալող ♦աչքը շոռ ♦աչքերը չռել ♦ամակը ջուրն ընկնել♦ Կայենի սերունդ ♦Պեգասի թռիչք ♦աչքի թարթիչներով հավաքել ♦ծառերի ետևում անտառը չտեսնել ♦առաջին ջութակ ♦բերանը շաղ տալ ♦բերանը բանալ ♦բերնի ջրերը գնալ ♦գրի սնն ու սպիտակը չջոկել ♦աստեղային ժամ ♦առաջին ծիծեռնակ ♦երկնքից կրակ թափվել ♦ավուր հացի կարոտ ♦գյամը քաշել ♦բաքոսյան խնջույք ♦էշ ուտել, էշ մեծանալ♦ ձձում հեծնող պառավ ♦ասեղ կերած շուն ♦էշը ուտել, պոչից խռովել ♦դառնության բաժակը ճաշակել ♦և դո՞ւ, Բրուտոս ♦շուն քերթել ♦լու մաշկել ♦թուղթ ու գիր անել ♦ճիպոտը քոլից կտրել ♦ոտքերը տնկել ♦ծալը պակաս ♦երկնքից աստղեր ցած բերել ♦քամու բերած, քամու տարած ♦անէության սնդուկը մտնել ♦ջանը դուրս գալ:

Բ-175. Առանձնացնել հնացած և նորաստեղծ դարձվածքները:

Աղքատ Ղազարոս ♦երեսուն արծաթ ♦խաղից դուրս գալ ♦թոնիր ածես՝ մշահոտ չի գա ♦երկրորդ շնչառություն բացել ♦խոտորնակին խոտորնակ ♦խունկ ծխել ♦կամերն առնել, չոլերն ընկնել ♦կառքի հինգերորդ անիվ ♦ձայն բարբառո հանապատի ♦աչքի սուրմա թոցնող ♦մատների միսն ուտել ♦վերջին ջութակ ♦սայլի հովին պառկել ♦սատանի բուրվառ ♦հացն ու գինին, տեր կենդանին♦ յուղոտ աթոռ ♦աստված մի՛ արասցե ♦աթոռը կթել ♦երթալ առ ոտս ♦ակն ընդ ական ♦բազկաթոռը մաշել:

🕮 Բ-176. Բացատրել նորաստեղծ դարձվածքների իմաստները:

Ա. ♦Աշուն հագնել ♦խաղեր տալ ♦գարուն ընկնել ♦գործին խփել ♦խաղ գնալ ♦գործի դուրս գալ ♦ժողովուրդ-ժողովուրդ խաղալ ♦գործ սարքել ♦լեզվից խռովել ♦գումարներ պտտել /ֆոցնել/ ♦թաղի տղերք /թաղի տղա/ ♦ուղեղների լվացում ♦փողերը լվանալ ♦քայլեր ձեռնարկել ♦քայլ գցել ♦քայլ պահել ♦քանդող բրիգադ ♦քար դնել խղճին ♦ական նախապատրաստել /ական դնել/ ♦աշխարհամեջ հանել ♦խաղի մեջ մտնել ♦թափանցիկ ընտրություն:

Բ. Կարո՞ղ եք դարձվածքներ ասել, որոնք, ձեր կարծիքով, մեր օրերում են ստեղծվել և բառարաններում դեռևս չեն արձանագրվել /օր.՝ տիեզերական խուլիգանություն /Ասել են ամերիկացիները, երբ 2006 թ. Չինաստանի Կառավարությունը ոչնչացրել է անկառավարելի արբանյակը/, **լողացող փոխարժեք**:

🕮 Բ-177. Կարդալ և ներքևում տրված դարձվածք-արտահայտություններից մեկը /կամ մի քանիսը/ ընտրելով՝ գրել որպես պատասխան:

Երկու արաբ՝ մեկը՝ իմաստուն, մյուսը՝ հիմար, գնացել էին սար՝ արջ որսալու:

-Ես արդեն ծախեցի իմ արջի մորթին, և ընտանիքս ձմռանն ապահովված է,- ասաց հիմարը: - Իսկ դո՞ւ...

-Դեռ ոչ,- պատասխանեց իմաստունը:- Մորթին կծախեմ, երբ արջին սպանած լինեմ:

Ընկերները գնացին տարբեր ուղղություններով: Հիմարը, որն արդեն ընկել էր արջի հետքի վրա, գգույշ առաջ էր գնում... Նույն պահին քարաժայռի հետևից անսպասելիորեն հայտնվեց մի ածդահա արջ: Հիմարը մեռած ձևացավ: Արջը մոտեցավ, հոտոտեց, հոտոտեց ու թողեց հեռացավ:

Խելացի ընկերը քմծիծաղ տալով հարցրեց.

-Հը՞, արջն ի՞նչ ասաց քեզ:

Հիմարը, որ արդեն խրատվել էր, պատասխանեց.

-Արջն ասաց.... /Ըստ Վ. Սարոյանի/

1. Ձիթս քաշելու ժամանակ չունեմ
2. Ջուրը չտեսած՝ մի՛ բոբկացիր
3. Էշ, մի՛ սատկիր, գարուն կգա
4. Գետն ամեն անգամ գերան չի բերի
5. Ձուկը ջրում բազար մի՛ անի
6. Էն օրը կգցեմ, որ շունը ձեռիցդ հաց չի վերցնի
7. Ձին չառած՝ մսուր մի՛ կապիր
8. Արջը չսպանած՝ մորթին մի՛ ծախիր

🕮 Բ-178. Հետևյալ դարձվածքների իմաստները բացատրել բառային հոմանիշներով՝

ա/ ընտրելով փակագծերում տրվածներից.

♦քիթը կախ ♦սիրտը դող ընկնել ♦փորը լիքը սատանա ♦թոկից փախած ♦աղ ու հաց ուտել ♦գլուխը կորցնել ♦հոգին ազատել ♦քար կտրել ♦լեզուն կծել ♦երես առնել ♦երես ծռել ♦գլուխ տալ ♦գլուխը տալ ♦սատանի ճուտ ♦ճնճղուկի սիրտ ♦քթի ծակ ♦ականջին օղ անել ♦քթի մազ ♦կարմիր-կանաչը կապել ♦ետևից կարմիր խնձոր ուղարկել ♦կտուցը մեղր քսել:

/կաշառել, լռել, զարմանալ, հրավիրել, խնդրել, լկտիանալ, բծախնդիր, զոհվել, բարևել, հիշել, փրկվել, շփոթվել, բարեկամանալ, սանձարձակ, խարդախ, տխուր, ամուսնացնել, բանականություն, վախկոտ, խորամանկ/

բ/ ինքնուրույնաբար գրելով.

♦ ուղտի ականջում քնած ♦կվակը թույլ ♦էշի վատկին ♦ձեռ ու ոտ ընկնել ♦ցամաք հացի կարոտ ♦ցամաք ձորի աղվես ♦անկտրել ձմերուկ ♦աշխարհ գալ ♦գլխին վայ տալ ♦գույնը գցել ♦խելքը հացի հետ ուտել ♦մինչև ուղն ու ծուծը ♦հոգին հանել ♦աղոթած էշ ♦այն աշխարհը գնալ ♦կրիայի քայլերով ♦սիրտը թունդ առնել:

Բ-179. Գտնել և կողք կողքի գրել հոմանիշ դարձվածքները:

♦Գրպանը դատարկ ♦սիրտը վախ ընկնել ♦կրակը գնացել է, մնացել է մոխիրը ♦գրպանում մկներ են խաղում ♦աղվեսին հավանոցի պահակ կարգել ♦կողի ընկնել ♦լեղին ջուր կտրել ♦բարև տաս՝ բարեկենդանին կգա ♦մկները գրպանում ծափ են տալիս ♦հին դարմանը քամուն տալ ♦հայհայը գնացել է, մնացել է վայվայը ♦երկու ոտքը մի մաշիկի մեջ դնել ♦մի ծաղկով գարուն չի գա ♦մի ձեռքը ծափ չի տա ♦ականջները թափահարել ♦բմբուլները քամուն տալ ♦քարը քարին չթողնել ♦գլխին քար աղալ ♦գլուխ չհանել ♦լվից ճրագու հանող ♦այծը ոչխարից չջոկել ♦գլխին պոպոք կոտրել ♦ցեխին հավասարեցնել ♦հավկիթ կշռող ♦ա՞ջ ես, թե՞ ձախ ♦տղա՞ ես, թե՞ աղջիկ ♦շուն ու կատու դառնալ ♦երես տաս՝ աստառ կուզի ♦ձու մաշկող ♦օձ խուզող ♦հերվա աղունը աղալ ♦թացը չորի հետ վառել ♦աչքերին թոզ փչել ♦հերն էլ անիծած ♦գլուխը յուղել ♦ասեղ մաշկող ♦գլուխը քարը ♦իրար կոկորդ կրծել:

Բ-180. Դարձվածաբանական բառարաններից ընտրել և գրել 5-6 հոմանշային դարձվածային փնջեր:

Բ-181. Փոխադրել հատվածը՝ ընդգծվածները փոխարինելով փակագծերում տրված դարձվածքներով. համեմատել հատվածները:

Ամբողջ գիշեր չքնեց: Ընտանեկան երջանկությունը վտանգված էր: Մինչև հիմա իրեն թվացել էր, թե ինքը երջանիկ է, սակայն երեկ հանկարծ իմացավ, որ իրեն հիմարացրել են: Տարիներով փայփայած երազանքները մի օրում անէացան. մարդը, որին ինքը սիրում էր, որն իրեն ոսկե սարեր էր խոստանում, դարձավ ատելի: Զարմանում էր, թե ինչպես է խաբվել, չի կարողացել հասկանալ: Ու հիմա խեղդվողի նման ելք էր որոնում:

/♦ձեռքը փրփուրներին գցել ♦թացը չորից չջոկել ♦մեկի համար գլուխը կորցնել ♦աչքի գրողը դառնալ ♦աչքերին թոզ փչել ♦մազից կախված լինել ♦աչք չկպցնել ♦զրոյի հավասարվել ♦բախտավոր աստղի տակ ծնվել/

Բ-182. Ընդգծել դարձվածքները և փոխարինել վերջում տրվածներով:

1. Երիտասարդի բախտի դռները բացվել էին. մայրն աշխարհով մեկ էր եղել:
2. Տերն ափերից դուրս էր եկել, սպասավորների գլխին կարկուտ էր թափում, իսկ նրանք թրջված հավի պես կանգնել ու ձայն չէին հանում: 3. Անառակ որդին վատնում էր ծնողների կուտակած հարստությունը, շուն ու գելի բաժին դարձնում: Մայրը հաճախ էր հանդիմանում նրան, գլխին թուք ու մուր թափում:

/♦բախտը ժպտալ ♦ լեզուները կուլ տալ ♦կրակի տակ առնել ♦վախից քար կտրել ♦լեզուները բերանում չորանալ ♦աղոթած էշ ♦գելի գլխին ավետարան կարդալ ♦քամուն տալ ♦թմբուկները քամուն տալ ♦կարասն ընկած մուկ ♦փետրած հավ ♦շան օրը գցել ♦շան լափ թափել գլխին ♦կրակե շապիկ հագցնել ♦մուխը քթի ծակերից հանել ♦կրակի տակ առնել ♦քամու բերանը գցել ♦քոռ ու փուչ անել ♦կրակ կտրել ♦գործերը աջ գնալ ♦բախտը բացվել ♦ուրախությունից պար գալ ♦աշխարհն իրեն տալ ♦ոտքերը երկինք հասնել/

📖 Բ-183. Նախադասությունների ո՞ր հատվածները կարելի է փոխարինել ստորև տրված դարձվածքներով:

1. Հանցագործությունը միշտ էլ բացահայտվում է. հնարավոր չէ թաքցնել: 2. Խաղամոլությունը նրա խոցելի տեղն է: 3. Տղան կարողանում էր մարդկային ուժերից վեր գործեր կատարել, անհնարինը հնարավոր դարձնել: 4. Ամեն մարդ իր հնարավորություններին համապատասխան պիտի ապրի: 5. Եղբայրները սիրով էին, բայց կանայք անհաշտ էին:

/♦շուն ու կատու ♦ոտքը վերմակի չափով մեկնել ♦լեռներ շարժել ♦աքիլլեսյան գարշապար ♦գողացած աքլորի պոչը փեշի տակից երևալ/

📖 Բ-184. Խմբավորել հականիշ դարձվածքները, ինչպես օրինակ՝ մինչև ականջները կարմրել - երեսի կաշին պատռել:

● ♦Աչքը կուշտ ♦առյուծի կաթ խմել ♦աստծո կրակ ♦աստծո գառ ♦ավգյան ախոռ ♦աչքը ծակ ♦բախտի քմահաճույքին թողնել ♦բերանը ջուր առնել ♦յուղը թափես՝ կհավաքվի ♦շալվարը ոտներն ընկնել ♦գլխից մեծ գործ բռնել ♦գրպանի մեջ մկներ խաղալ ♦ոտքը վերմակի չափով մեկնել ♦լեզվի կապերն արձակել ♦սարի նման թիկունքին կանգնել:

● ♦Երկինք հանել ♦լվից ճրագու հանել ♦լեզուն ատամների տակ պահել ♦խելքի շտեմարան ♦կաշին ու ոսկորը մնալ ♦ձեռքերից մեկը յուղում, մյուսը՝ մեղրում ♦սև հացի կարոտ ♦ձեռքը բաց լինել ♦հողին հավասարեցնել ♦լեզվի կապերն արձակել ♦խելքը գլուխը հավաքել ♦խելքը քամուն տալ ♦գլխում մի այբ չկա ♦առյուծի կաթ կերած ♦խոզ կտրել ♦մկան ծակին հազար թուման տվող:

● ♦Յոթ սարի հետևում ♦օգնության ձեռք մեկնել ♦քթի տակ ♦ջրի գին ունենալ ♦կրակի գին ունենալ ♦քսակի բերանը բանալ ♦խոսքը գլխից բարձր բռնել ♦ցեխի մեջ ընկածին տրորել ♦պատիվը պահել ♦փափախը գետնովը տալ ♦խոսքը գետնովը տալ ♦քոռ կոպեկ չտալ:

📖 Բ-185. Տրված դարձվածքներին հականիշ դարձվածքներ գրել:

ա/ դժոխքի բաժին դառնալ	ը/ աչքը բացել
բ/ լվից ճրագու հանել	թ/ յոթ սարի հետևում
գ/ աչքի լույս	ժ/ աստծու կրակ
դ/ խելքը գլուխը հավաքել	ժա/ մկան ծակին հազար թուման տվող
ե/ բերանը ջուր առնել	ժբ/ կրակի գին ունենալ
զ/ քիթ-մուրթը կախել	ժգ/ լեզուն երկար
է/ կրակի վրա ջուր լցնել	ժդ/ հողին հավասարեցնել

🕮 **Բ-186. ❖ Բացատրել՝**
ա/ Եվրոպական առակն ասում է. **«Մի ծիծեռնակով գարուն չի գա»:**
բ/ Հայկական առածն ասում է. **«Մի ծաղկով գարուն չի գա»;**
գ/ Ռոմանտիկ գրող Մուրացանը հավատացնում է. **«Մի ծաղկով գարուն կգա»:**
դ/ Մեծ սիրերգակ Հովհ. Շիրազը գրում է.
Թե մի ծաղկով գարուն չի գա, բայց մեկով է սերը գալիս,
Հազար ծաղկից մեկն է քոնը, մի ծաղկով է սերը գալիս...
Մի ծաղկով է սիրո գարունն աշխարհ գալիս այս աշխարհում:

🕮 **Բ-187. Ա. Վերհիշել և գրել առածներ հետևյալ դարձվածքներով՝** ♦պղտոր ջրում ձուկ բռնել ♦գայլի գլխին ավետարան կարդալ ♦ձեռքը փրփուրներին գցել ♦տունը քանդել ♦շան օրը գցել ♦իշի մարտիրոսություն ♦արյունն աչքի տակ առնել ♦եզը երդիկից հանել ♦երկու ոտքով թակարդն ընկնել ♦օձը բնից հանել ♦հոգին կորցնել ♦անունը դուրս գալ ♦փորացավ ունենալ ♦քար քաշել:

☑ **Բ. Հորինել առականման մի պատմություն, որ ավարտվի վերոբերյալ դարձվածային արտահայտություններից որևէ մեկով:**

🕮 **Բ-188. ❖ Բացատրել, թե ոճական և արտահայտչական ինչպիսի՞ հնարներ են օգտագործվել հետևյալ դարձվածքների կազմության համար /փոխաբերություն, համեմատություն, փոխանունություն, չափազանցություն, պարադոքս կամ հակադրություն, կրկնություն, հոմանիշների գործածություն, հանգավորում/:**

♦Ջրից չոր դուրս գալ ♦անձյուն ձմեռ ♦անջուր ջրաղաց ♦անտակ տակառ ♦գլուխն աղալ ♦լեզուն փորն ընկնել ♦լեռը երկնեց, մուկ ծնեց ♦կենդանի դիակ ♦անդանակ մորթել ♦ուղտին գդալով ջրել ♦խուլի ականջին քարոզ կարդալ ♦աշխարհով մեկ լինել ♦կաշի ու ոսկոր դառնալ ♦մազե կամուրջ անցնել ♦սարեր շուռ տալ ♦հազար մաղով անցկացնել ♦հարյուր կտոր դառնալ ♦մեծ կտորը ականջը թողնել ♦մսի ու եղունգի արանքը մտնել ♦մազից կախված լինել ♦մկան ծակը հազար թումանով առնել ♦քար ուտել ♦աքլորի բեռ ♦եղունգի չափ ♦մազի կամուրջ ♦կարմիր թելի պես ♦ջրի պես գնալ, ավազի պես մնալ ♦կատվի նման մեջքին չընկնել ♦ձկան պես լուռ ♦անունը մրոտել ♦օգոստոսի աղվես ♦լուն ուղտ շինել ♦կրունկները ցույց տալ ♦գրպանում մկներ խաղալ ♦ձեռքը փակ ♦խելք խելքի տալ ♦ճակատ ճակատի տալ ♦մատը մատին չխփել ♦քիթ քթի տալ ♦քարը քարին դնել ♦քեֆին քեֆ չի հասնի ♦թել ու դերձան դառնալ ♦թուղթ ու գիր անել ♦իզն ու թոզը կորցնել ♦լաց ու կոծ անել ♦կուժն ու կուլան մեկի գլխին ջարդել ♦քթից ու պնչից հանել ♦քար քաղել ♦ավազ մաղել ♦կա՛մ աղն է պակաս, կա՛մ մաղը:

🕮 **Բ-189. Ա. Դուրս գրել դարձվածքները, բացատրել նրանց իմաստները:**
Սխրանք, որ չիմացավ աշխարհը...

Մի գիշեր ֆիրմայի տնօրեն Գզիրյանի խիղճն անսպասելիորեն արթնացավ: Փորձեց քնեցնել, բայց ապարդյուն: Անկողնում երկար շուռումուռ գալուց հետո սրտնեղած վեր կացավ ու նստեց գրասեղանի մոտ: Խորհեց,

մտորեց, ծանր ու թեթև արեց, խելքը գլուխը հավաքեց, հետո՝ խղճի ձայնին ունկնդիր՝ վճռական շարժումով վերցրեց գրիչն ու շարադրեց.

«Հարգելի՛ մինիստր:

Շուրջ տասը տարի է, ինչ ղեկավարում եմ «Համբույր» ֆիրման: Լսել եմ, որ Դուք մտադիր եք ինձ առաջ քաշել և վստահել տեղակալի պաշտոնը. գործից գլուխ կհանեմ, բայց արդյոք արժանի՞ եմ այդ պատվին: Ավա՜ղ, ոչ: Համեստություն չեմ անում, հարգարժան մինիստր, այլ գրում եմ այն, ինչ թելադրում է արթնացած խիղճս: Կթել եմ ու մաշել եմ հինգ բազկաթոռ, ջարդել եմ վեց ավտոմեքենա, փոխել եմ յոթ քարտուղարուհի, բայց չեմ լուծել ոչ մի հարց՝ չհաշված իմ անձնական հարցերը: Երեսիս կաշին հաստացրած, ամոթս կորցրած՝ տարիներ շարունակ տարել-բերել եմ մարդկանց, խաբել եմ շատերին, շատերի աչքերը կապել, շատերի գլխին յուղ քսել, շատերի ոտքերի տակ փոս եմ փորել, շատերի տունն եմ քանդել:

Դուք սարի պես կանգնած եք եղել իմ մեջքին, թև ու թիկունք դարձել: Միայն մի բանից եմ միշտ դողացել. հանկարծ, աստված չանի, Ձեր պոչը խուզեն...

Քանի որ հաստատ վճռել եմ հրաժարվել տնօրենի պաշտոնից, այն էլ ասեմ, մեծարգո մինիստր, որ ես երբեք չեմ հարգել Ձեզ: Պարզապես հաճոյացել եմ ու ծծնել, աչք մտել, վերաբերմունք ցույց տվել՝ աթոռս պահելու համար: Մի խոսքով՝ Ձեր ծոցում օձ եք տաքացրել: Գրողը տանի, ես մոռացել եմ մասնագիտությունս, հավասարվել զրոյի»:

Գվիրյանը թեթևացած շունչ քաշեց, ասես մի ծանր բեռ ընկավ ուսերից. մտավ անկողին և Մորփեոսի գիրկն ընկավ:

Առավոտյան արթնացավ սովորական տրամադրությամբ... Աչքն ընկավ թղթին: Ձեռագիրն իրենն էր: Կարդաց՝ «Հարգելի՛ մինիստր...»: Ապշեց, գույն տվեց, գույն առավ: Հանկարծ երազի նման հիշեց գիշերվա մեկ ակնթարթը, ժպտաց. «Խելքս հացի հետ եմ կերել, Աստված վկա»: Կրկին կարդաց իր դիմում-խոստովանությունը: Հետո ինքն իրեն հավաքեց, վերցրեց կարմիր մատիտն ու մակագրեց. «Ավանակ»: Շունչը տեղն ընկավ. մարդ իր աչքը քո՞ռ կուզի, մարդ իր բախտին քա՞ր կգցի:

/Ըստ Է. Սարգսյանի/

Բ. Որոշել դարձվածքների ձևաբանական կառուցվածքը՝ մատնանշելով՝

ա/ դարձվածակազմիչ բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը.

բ/ դարձվածքի խոսքիմասային պատկանելությունը:

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Բառարանը տիեզերքն է՝ այբբենական կարգով դասավորված»:
/Անատոլ Ֆրանս/

🕮 Բ-190. Ի՞նչ են ցանկանում ասել մեր մեծերը՝

1. Բառարանների կողմից մեր բախտը բերել է - հարուստ ենք բառարաններով... /Պ. Սևակ/ 2. Մաքուր, լվացված, սանրված բառերն ապրում են արմատական բառարանների տաք ննջասենյակներում... Հարկավոր է խուսափել ցելոֆոնով փաթաթված բառերից, որոնք չեն տաքացնում, չեն մրսեցնում, և որոնց մեջ դալկանում, մեռնում է կենդանի լեզուն: /Վ. Պետրոսյան/

🕮 Բ-191. Ա. Բառարանների ինչպիսի՞ տեսակներ գիտեք: Ի՞նչ նպատակներ են հետապնդում դրանք:

Բ. Բառարանը կարո՞ղ է կատարյալ լինել՝ ամբողջությամբ ընդգրկել կենդանի լեզվի բառերը: Ինչո՞ւ:

Գ. Ի՞նչ է գլխաբառը. ի՞նչ է բառահոդվածը:

🕮 Բ-192. Լեզվաբանական-միալեզվյան բառարանները լինում են՝ բացատրական, ստուգաբանական, պատմական, բարբառային կամ գավառական, համանունների, հոմանիշների, հականունների, հապավումների, ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական-մասնագիտական, հեղինակային /համաբարբառային/, շրջուն կամ հակադարձ /հանգաբառարաններ/, հաճախականության, դարձվածաբանական, շրջասությունների, դիցաբանական, թևավոր խոսքերի և այլն: Բացատրել յուրաքանչյուրի կազմության նպատակն ու խնդիրները՝ բերելով 1-ական բառարան-օրինակներ:

🕮 Բ-193. Կարդալ «Հայկական սովետական հանրագիտարանի» ներածական մասը՝ առաջաբանը, և բնութագրել այն՝ հաշվի առնելով՝

ա/ քանի՞ հատորով է հրատարակվել,
բ/ քանի՞ տերմինահոդված է ընդգրկում,
գ/ յուրաքանչյուր հատոր քանի՞ պատկեր, քարտեզ, դիագրամ է պարունակում,
դ/ ինչպիսի՞ տեղեկություններ կարելի է քաղել,
ե/ բառարանի մշակութային, գիտական-քաղաքական նշանակությունը:

🕮 Բ-194. Ա. Բնութագրել Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», որը ոչ միայն լեզվաբանական-ստուգաբանական, այլև պատմական-հանրագիտական և աղբյուրագիտական-մատենագիտական տեղեկատու ձեռնարկ է.

ա/ քանի՞ հատորով է հրատարակվել,
բ/ ի՞նչ սկզբունքներով է կազմվել,
գ/ ո՞րն է եղել հեղինակի նպատակը,
դ/ ո՞ր ժամանակաշրջանի անձնանուններն է ընդգրկում:

Բ. Դուրս գրել 10-15 անձնանուն իրենց բացատրություններով /ստուգաբանությամբ/:

🕮 Բ-195. Բնութագրել դարձվածաբանական որևէ բառարան՝ ընտրելով նշվածներից մեկը /1. Պ. Բեղիրյան, «Դարձվածաբանական բացատրական բառարան» /1971թ./ 2. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» /1975թ../ 3. Խ. Բաղիկյան, «Ուսումնական դարձվածաբանական բառարան» /2002թ. /:

🕮 Բ-196. Ա. Բնութագրել Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի» կառուցվածքը:

Բ. Գտնել և գրել սահմռկել, սրդողել, ընդարմանալ, մթնշաղ բառերի հոմանիշները:

🕮 Բ-197. Բացատրել Հ. Բաղանյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» կազմության հիմնական սկզբունքները:

🕮 Բ-198. Տրված բառարանների շարքից ընտրել մեկը, համառոտակի ներկայացնել առաջաբանը, բնութագրել կազմության սկզբունքները և գործածված պայմանական նշանները:

1. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» /1979-1981 թ.թ./
2. Ստ. Մալխասեանց - «Հայերէն բացատրական բառարան» /1944-1945 թ.թ./
3. Հր. Աճառյան -«Հայերեն արմատական բառարան» /1-4 հատոր/ /1971-1980 թ.թ./
4. «Հայոց լեզվի բացատրական բառարան» /ՀՍՍՀ ԳԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 1969-1980/
5. Էդ. Աղայան - «Արդի հայերենի բացատրական բառարան» /1976/

🕮 Բ-199. Բացատրել թարգմանական բառարանների գործնական նշանակությունը: Ո՞ր բառարանը կարելի է անվանել «բազմալեզվյան»:

🕮 Բ-200. Ա. Ձեր ընտրած մասնագիտությանը վերաբերող բուհական դասագրքերից ընտրել որևէ հատված /1-2 էջի չափով/ և բառակազմը ներկայացնել բառարանի տեսքով՝ այբբենական կարգով դասակարգված:

Բ. Առանձնացնել տերմինները /գիտաբառերը, եզրերը/ և կազմել տերմինաբանական «բառարանիկ»:

Գ. Բնութագրել ձեռքի տակ գտնվող տերմինաբանական-մասնագիտական բառարան/ներ/ը /հայերեն կամ այլալեզու/:

🕮 Բ-201. Բնութագրել Պ. Բեղիրյանի շրջասությունների /«Շրջասությունների բառարան»/ և թևավոր խոսքերի /«Հայերեն թևավոր խոսքեր»/ բառարանները:

🕮 Բ-202. Ինչպիսի՞ և ո՞ր բառարանները կցանկանաք ունենալ ձեր գրադարակում:

ՀԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ-1. Բացատրել տրված շարքերի բառային և քերականական իմաստները:

● Գիրք – գիրքը, տուն– տունը, աստղ – աստղը, արցունքներ – արցունքները
● Տուն – տներ, աշխարհ –աշխարհներ, մարդ – մարդիկ, գիրք - գրքեր
● Ձևույթ – ձևույթի – ձևույթից – ձևույթով – ձևույթում, խոսք – խոսքի – խոսքից – խոսքով – խոսքում
● Տեսա – տեսար – տեսավ – տեսանք – տեսաք – տեսան, պիտի գնամ – պիտի գնաս – պիտի գնա – պիտի գնանք – պիտի գնաք – պիտի գնան
● Չեմ հեռանա – չես հեռանա – չի հեռանա – չենք հեռանա – չեք հեռանա – չեն հեռանա
● Գրելու եմ – գրելու ես - գրելու է – գրելու ենք – գրելու եք – գրելու են
● Լավ – ավելի լավ – ամենալավ /լավագույն/:

Հ-2. Կազմել տուն, լույս բառերի և՛ բառակազմական շարքը /բառարաններից օգտվելով/, և՛ բառաձևային՝ ձևաբանական շարքը /հարացույցը/: Այսպես օրինակ՝ նկար – երանգանկար – երանգանկարիչ – երանգանկարչություն **և** նկար/ը/ – նկարի/ն/ – նկարից – նկարով – նկարում. նկար /ը/ -նկարներ/ը/...:

Հ-3. Քերականագիտական տարբեր աղբյուրներից օգտվելով /Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. Լ. Եզեկյան, Հայոց լեզու. Ս. Աբրահամյան, Պառնասյան, Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու .../՝ ավարտել ներքոբերյալ քերականական կանոնները:

1. Լեզվի ձևիմաստային նվազագույն միավորները կոչվում են .... :
2. Այն բառերը, որոնք կազմված են մեկ հիմնական ձևույթից, կոչվում են....:
3. Մեկից ավելի հիմնական ձևույթներից կազմված բառերը կոչվում են ....:
4. Մեկ կամ ավելի հիմնական և մեկ կամ ավելի բառակազմական ձևույթներից կազմված բառերը կոչվում են....:
5. Բառերի այն խումբը, որը գործածվում է առանց որևէ ձևաբանական փոփոխության, կոչվում է...:
6. Բառերի այն խումբը, որը ոչ միայն ուղիղ, այլև փոփոխված ձևով է գործածվում, կոչվում է ...:
7. Անփոփոխ ձևով գործածվող բառը կոչվում է ... :
8. Հիմնական ձևույթը, որն արտահայտում է բառի նյութական իմաստը, կոչվում է ...:
9. Անկախ կամ ինքնին գործածվող արմատը /հիմնական ձևույթը/ կոչվում է ... :
10. Հնչյունական փոփոխություններ կրած արմատները /հնչյունափոխության ենթարկված հիմնական ձևույթները/ կոչվում են ...:
11. Հնչյունական փոփոխություններ կրած ածանցները /կամ՝ հնչյունափոխության ենթարկված բառակազմական երկրորդական ձևույթները/ կոչվում են.... :
12. Ի տարբերություն բառի ուղիղ՝ բառույթային ձևերի, նրա փոփոխված ձևերը, որոնք միավորված լինելով նույն բառիմաստի տակ, չտարբերվելով կոնկրետ

նյութական նշանակությամբ, իրարից տարբերվում են սոսկ քերականական-վերաբերական իմաստով, կոչվում են ...:

📖 Ձ-4. Ա. Տրված գծապատկերում անճշտություններ կան: Վերագծել այն՝ ճշտորեն ներկայացնելով վերլուծական և համադրական եղանակների արտահայտությունը ժամանակակից հայերենում:

Բ. Յուրաքանչյուրի համար 2 օրինակ գրել:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	
ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ ԵՆ	ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ ԵՆ
1. Գոյականի բացառական հոլովը	1. Սահմ. եղանակի ապակատար ներկան, անցյալը
2. Սահմ. եղանակի վաղակատար ներկան, անցյալը	2. Գոյականի հոգնակի թիվը
3. Պայմանական եղանակի ապառնին	3. Սահմ. եղանակի անցյալ կատարյալը
4. Որակական ածականների բաղդատական աստիճանը	4. Պայմանական եղանակի անցյալի ապառնին
5. Գոյականի գործիական հոլովը	5. Հարկադր. եղանակի ապառնին և անցյալի ապառնին
6. Հրամայական եղանակի արգելականը	6. Որակական ածականների գերադրական աստիճանը
7. Ըղձական եղանակի ապառնին և անցյալի ապառնին	7. Գոյականների տրական հոլովը
8. Հարկադրական եղանակի անցյալի ապառնին	8. Բուն հրամայական եղանակը
9. Գոյականի մի հոդով անորոշ առումը	9. Սահմ. եղանակի անկատար ներկան և անցյալը
10. Երկրորդական բայական բաղադրյալ ժամանակները	10. Գոյականի ուղղական հոլովը
11. Ենթադրական եղանակի ժխտականը	11. Գոյականի ներգոյական հոլովը
12. Սահմ. եղանակի անցյալ կատարյալի ժխտականը	12. Անորոշ դերբայի և տալ բայի հարադրությամբ պատճառական ձևերը

📖 Ձ-5. Տրված բառաձևերը տարբերակել ըստ քերականական իմաստների արտահայտման եղանակի /վերլուծակա՞ն, թե՞ համադրական/:

Նամակներս, ծառ ու ծաղկով, եզան լեզվով, լռել էր, խաղաղության, լռի՛ր, մի՛ հեռացիր, մոլորակներ, երկրագնդից, ամառվա, աստղեր, վերադարձի՛ր, ուրախությամբ, պիտի երազեմ, արյան, գրել տալ, աղ ու հացով, մայր ու աղջիկ, գիտեր, չքնաղ, աղոթք էր կարդում, ամենալավ, ամենից լավ, պարապելիս էր լինում, կգնամ, տեսնում եմ, չեմ տեսնի, եղբայրներ, մի՛ գնա, հայրենների, անթեղված, ջերմացնում է, գրելով, տանջանքի, չպիտի գրել, գիտությանը, չեն հնանում, չպատկերեց, կոչվելու է, օրվանից, լուսնի, չանցներ, ծննդյան, պիտի ցույց տանք:

🕮 Ջ-6. Ա. Ներքոբերյալ հատվածի բառաձևերում առանձնացնել հիմքերն ու վերջավորությունները տրված պայմանական նշաններով՝ հիմքը՝ /◠/ նշանով, վերջավորությունը՝ / ◡/ նշանով:

Բ. Դուրս գրել բաղադրյալ բառերը և նշել բառակազմական հիմքերը: Բացատրել ձևակազմական և բառակազմական հիմքերի տարբերությունը:

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում՝ մենության մեջ,
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն՝
Եղեռնները, նախճիրները հորդաների արյունարբուշտ,
Փլուզումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ:
Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ Աստծու դատաստանի...

/Ավ. Իսահակյան/

🕮 Ջ-7. Հետևյալ բառերն ու բառաձևերը տարրալուծել ձևաիմաստային նվազագույն միավորների՝ ձևույթների՝ լրացնելով տրված աղյուսակը՝

Ջ Ե Վ Ո Ւ Յ Թ Ն Ե Ր		
ՀԻՄՆԱԿԱՆ	ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ	
	բառակազմական /բառաստեղծական /	բառահարաբերական /ձևակազմական, բառափոխական /
1. զին /զեն/	-վոր	ա/ ներ բ/ ը

Զինվորները, իջնել, հրահրել, հրհրել, տխրությամբ, ծաղիկներից, մեղքիդ, սիրո, քարհատ, քարահատ, անտես, երիտասարդական, անողնաշարավոր, ցեխոտել, կրքոտ, հարձակվելով, նմուշները, հրձիգ, հրաձիգ, հիշողությունը, սրբություններ, հյուսվածք, փաթաթված, բառակազմություն, բանվոր, բանավոր, հանրագիտարան, երգերիցս, թռիչք, անհյուրընկալ, ծովին, հնչյունական, ջրաբաժան, ջրբաժան:

🕮 Ջ-8. -Ել, -ալ ձևույթները մի դեպքում բառակազմական են, մյուս դեպքում՝ ձևակազմական: Ինչո՞ւ:

🕮 Ջ-9. /▲/ պայմանական նշանով առանձնացնել այն մտքերը, որոնք բնորոշ են հիմնական ձևույթին, /▼/ նշանով՝ երկրորդական ձևույթներին բնորոշները:

▲▼ Նյութական իմաստ ունեն:
▲▼ Զուրկ են նյութական բովանդակությունից:
▲▼ Արմատներ են:
▲▼ Ածանցներ են:
▲▼ Ընդհանուր ձևով արտահայտում են աշխարհի երևույթները, իրողությունները, հատկանիշները:
▲▼ Հոգնակիակերտ մասնիկներ են:

▲▼ Բառի ձևույթային կառուցվածքի հիմնախարիսխն են /կամ հիմնական մասը/:
▲▼ Հոլովական և խոնարհման վերջավորություններ են:
▲▼ Առանց նրա բառ չկա և չի կարող լինել:
▲▼ Նյութական իմաստից զուրկ բառեր են:
▲▼ Հոդեր են:
▲▼ Արտահայտում են արտաքին աշխարհի զանազան իրողությունների, երևույթների միջև եղած հարաբերությունները:
▲▼ Կարող են գործածվել որպես ինքնուրույն բառեր:
▲▼ Լինում են բառակազմական և բառահարաբերական /քերականական/:

📖 Ձ-10. Ա. Տրված հատվածն արտագրել՝ բառերն ու բառաձևերը ներկայացնելով ձևույթների գումարի տեսքով /օր.՝ Եվ եթե մարդ+կ/ին/+ություն+ը սպաս+ում է հար+թյան+ը Քրիստոս+ի.../:

Գրվում է «Մատյանը»: Եվ սպառվել է մոմը կանթեղի մեջ: Եվ սպառվել է արևը՝ արևմուտքում: Եվ հունական Պառնասը տեղափոխվել է Նարեկ, և լազուր երկնքում անընդհատ, անկանգ սավառնում են մուսաները... «Մատյանի» թերթերը դարսվում են միմյանց վրա: «Մատյանը» զորանում է: Վերադիրների, մակդիրների, փոխաբերությունների, հարաստությունների, դիմառնությունների հորձանքը, ոճական այլայլումները, համանիշային և հոմանշային կուտակումները, տարափոխումների և պեսպեսությունների հորձանապտույտները ոճական զարդեղենի հանճարեղ զգեստ են «Մատյանին»...

«Մատյանը» շուտով պետք է ավարտվեր: Արդյոք զգում էր Գրիգորը, որ «Մատյանի» ավարտումով պետք է ավարտվեր իր կյանքը մոմի նման... Սպառվում էր, բայց ոչ մոմի նման, այլ արևի, որ սպառում չունի, մահ չունի, այլ վերածնվում է ամեն առավոտ լուսո...

Եվ շառաչեց «Մատյանը»՝ ջրվեժի ուժգնությամբ նետվելով մարդկային հոգու խորխորատները: Եվ ընդվզեց «Մատյանը» մարդկային հոգու բարձունքներից երկինք նետվող հրաբուխի նման:

Եվ եթե մարդկությունը սպասում է հարությանը Քրիստոսի, ապա «Մատյանի» հեղինակը հարության կարիք չունի, որովհետև.....

/Ըստ Մ. Մարգսյանի/

☑ Բ. Շարունակել՝ Որովհետև...

📖 Ձ-11. Տրված բառազույգերում առանձնացնել ձևույթային տարբերակները՝ հիմնական ձևույթի տարբերակները գրելով մեծատառերով, իսկ բառակազմական ձևույթներինը՝ փոքրատառերով, օր.՝ անջուր // ջրկիր - ՋՈՒՐ // ՋՐ և երգիչ // երգչախումբ - ի՛չ // չ:

Ծնունդ // ծննդյան, զգայուն // զգայնություն, հարսնաքար // նորահարս, ձկնորս // գայլաձուկ, գրավատուն // տնային, հրաշապատում // պատմողական, լիասիրտ // սրտոտ, ամենագետ // գիտելիք, աստղաբույլ // աստեղածին, եզրագիծ // եզերանիստ, կայսերապաշտ // կայսրընտիր, իմաստակիր // իմաստնություն, հայալեզու // լեզվագետ, մատյան //

մատենագիր, բարձրագագաթ // գագաթնակետ, անժպիտ // ժպտադեմ, տխուրաչյա // տխրագին, ուսուցիչ // ուսուցչանոց, ահագին // ահագնանալ, առաքյալ // առաքելական, գիտուն // գիտնական, անհույս // հուսալից:

Գ-12. Ա. Լրացնել աղյուսակը՝ ընդհանուր իմաստ ունեցող յուրաքանչյուր խումբը ներկայացնելով 5 օրինակով: Բացատրել, թե դրանք իմաստային, ձևաբանական ու շարահյուսական ի՛նչ յուրահատկություններ ունեն:

Բ. Խոսքիմասային համակարգում առանձնացնել այն խոսքի մասերը, որոնք ընդհանրապես կամ մասամբ ձևաբանական փոփոխության են ենթարկվում:



Գ-13. Հետևյալ բառերն ու բառաձևերը դասակարգել ըստ իրենց արտահայտած ընդհանուր՝ քերականական իմաստների:

Դու, մշուշում, ես, ինչ-որ, նորից, լույս, չկա, անհանգստություն, անցած, սպասի՛ր, կրկին, սիրտս, պաղ, դանդաղ, անձրև, կյանքի, է, կյանքն, անձև, հոգու, ոսկե, ցուրտ, աշուն, ցավում է, իմ, աղմկահեր, հոգին, նայի՛ր, լույսերից, ինչու, այն, հիշում ես, տառապել, էիր, այնտեղ, տեսիլներ, նա, հեռացած, տեսել ես, միապաղաղ, ու, տանջում է, ընկեր, համար, դողում են, մոռացած, ստվերներն, անուրախ, հիվանդ, լսի՛ր, հույզերից, անուրջներ, չեմ կամենում, ա՜խ, արշալույս:

Գ-14. Ա. Որոշել, թե հետևյալ բառերն ի՛նչ խոսքիմասային իմաստներ կարող են համատեղել. յուրաքանչյուրի համար բերել համապատասխան օրինակներ՝ նշելով տարարժեքությունը:

Խավար /2/, թշվառ /2/, հանցագործ /2/, հանրապետական /2/, առաջ /3/, անդորր /3/, սխալ /3/, տխուր /2/, գիտնական /2/, այլ /2/, կարծես /2/, սուտ /3/, դուրս /3/, հետո /2/, աղքատ /2/, ապագա /2/, ընկած /2/, քնքուշ /2/, նույնիսկ /2/, անգլերեն /3/, հանգույցյալ /2/, երիտասարդ /2/, թիկնապահ /2/, երջանիկ /2/, ժամանակ /2/, չափ /2/, նման /2/, հակառակ /2/, նախքան /2/, գիժ /2/:

Բ. «Արդի հայերենի բացատրական բառարանից» ընտրել բառեր, որոնց համար երկու և ավելի խոս-քիմասային արժեք է նշվում:

🕮 Ձ-15. **Տրված բառերը գործածել փոխանվանաբար և բացատրել փոխանունների իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:**

Շատ, զարգացած, երազող, շքեղ, կանաչ, հինգ, հմայիչ, ծաղկած, շիկահեր, հազար, երկրորդ:

🕮 Ձ-16. Կապույտ, երրորդ, սեփ-սև, սիրահարված, սև ու սպիտակ, չարչարող, գլուխ պահող **բառերը գործածել փոխանվանական և ինքնանվանողական արժեքներով, բացատրել դրանց իմաստային տարբերությունները:**

🕮 Ձ-17. **Տրված տեքստից դուրս գրել ինքնանվանողաբար կիրառված լեզվական միավորները և նշել ձևակազմությունը /հեղինակային տեքստից դիտավորյալ կերպով բաց ենք թողել չակերտները՝ « »/:**

❶. Ավելի՞ կարճ բա՛ռ,
Քան Ո՛չ-ն ու Այո՛-ն,
Չկա՞, չե՞ս գտնի աշխարհում արար,
Բայց հաճախ կյանքդ հերիք չի՞ անում
Մի Այո կամ Ոչ ասելու համար: /Գ. Էմին/

●...՝ Տասնյակ բառեր սկսում են կոպիլ-ով, կոնսերվ-ով ու կոնտր-ով, կոնֆ-ով ու կոոպ-ով, կորդ-ով ու կոսմետ-ով, կվարտ-ով ու կվինտ-ով, ինչպես նաև՝ կորտեսներ, կրեատուրա... Էլ չեմ խոսում կաթետերից, կալեյդոսկոպից, կամերայից, կատառից ու կարամելից...

Այստեղ է, որ պիտի դիմես ամենափրկիչ «և այլն, և այլն»-ին, որպեսզի խնայես լրագրի սուղ այունակները:

Կա նաև կանվա: Իսկ ո՞ւր է հենք-ը: Ու եթե կա, ինչու՞ նա դուրս չի մղել կանվա-ին:

Կա կապիտել: Իսկ չի՞ ամաչել այդ կապիտել-ը մեր խոյակ-ից, ինչպես նաև վաչկատուն կառնիզ-ը՝ մեր նստակյաց քիվ-ից:

Կա կիոսք: Կ-ի փոխարեն ք գրելով՝ կիոսկ-ը կրպա՞կ դարձավ:

Կա կոեֆիցիենտ: Եվ ու մի ճաքիր, խե՜ղճ գործակից:

Կա կոլոնիզատոր: Իսկ գաղութարար-ին ո՞ր կոլոնիա-ն ուղարկենք:

Կա կոմպաս: Իսկ կողմնացույց-ն ի՞նչ հող տա իր գլխին:

Կա կոնտրաբանդիստ, և եթե համապատասխան տեղում գտնվի մաքսանենգ-ը, ապա նա կոնտրաբանդ-ով է բառարան մտել:

Կա նաև կվադրատ. թող քառակուսին չո՜ր տեղից պայթի...

Կա նաև կոշմա՜ր:

Իսկապե՜ս որ կոշմար:

Գոնե բերված /նաև բազմաթի՜վ չբերված/ բառերի հետ վարվեին այնպես, ինչպես կոշմար-ի հետ են վարվել՝ նշելով. «տես՝ մղձավանջ»: Այս դեպքում թերևս կոնսուլ-ը մեզ հասցներ հյուպատոսին, կոմպաս-ը՝ կողմնացույցին, կառնիզ-ը՝ քիվին, կապիտել-ը՝ խոյակին, գուցե և կլակյոր-ը՝ ծափորդին /թխված մի բառ.../:

Բայց վերոհիշյալ հայերեն բառերն անգամ չեն արժանացել նույնիսկ կոշմար-ի պատվին...

Երևակայո՞ւմ եք այն լեհի կամ չեխի «ուրախությունը», երբ այս բառարանը ծայրեծայր թերթելուց հետո տեսնի, որ «հայոց լեզվի» բառամթերքի կե՞սն արդեն գիտի՝ օտա՛ր լեզուներից /անտեղյակ, որ իրենք՝ հայերը, այդ «կեսը» չե՞ն հասկանում/...

Հ.Գ. Կարող է այն տպավորությունն ստացվել, թե «Հայ-ռուսերեն» բառարանում հայերեն բառեր ամենևին չկան:

Կա՛ն, իհարկե:

Ես գտա նույնիսկ պատասխանատվություն և խիղճ բառերը՝ ճիշտ թարգմանությամբ: **/Պ. Մնակ/**

ԳՈՅԱԿԱՆ

📖 Ձ-18. Կարդալ բանաստեղծությունը, գտնել գոյականները, որոշել նրանց կազմությունը:

Եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ՝
Ծվարած հողում իր բիբլիական.
Քարի՛ց է քամել իր հացը ավուր,
Քարի՛ն է տվել ձիրքերը իր բյուր,
Մեղմել մռայլը ժայռեղեն իր տան:
Եվ նվիրումով այրվող իր սրտի
Կանգնել է վեմե՛ր, սյունե՛ր, խոյակնե՛ր,
Իր քաղաքներն ու շենե՛րն է հիմնել,
Իր մեսրոպատառ գրերն է երկնել,
Տաղերգել վասն սիրո ու վարդի,
Հյուսել իր արդար վիպե՛րգը Դավթի,
Եվ միշտ իր հոգով, իր հին վիպերգով,
Հանապազօրյա խոսք ու աղոթքով՝
Ապավինելով ճերմակ իր աստծուն՝
Խաղաղություն է երազել անսուտ
Աշխարհի՛ն, իրե՛ն և ամենեցու՛ն:

/Ս. Կապուտիկյան/

📖 Ձ-19. Ա. Առանձնացնել գոյականները՝

ա/ -ան վերջածանցն ունեցող բառերի շարքում.

տզզան, փական, ածան, կպչան, փչան, թովռան, խլվլան, ծծան, խցան, գլան, ծլվլան, ճոճռան, իշխան, խթան, ձգան, փաթաթան, ճարտասան.

բ/ -իչ վերջածանցն ունեցող բառերի շարքում.

արարիչ, բնակիչ, համոզիչ, քայքայիչ, թարգմանիչ, սպառիչ, հմայիչ, նկարիչ, բուժիչ, պատմիչ, դյութիչ, փրկիչ, սրբագրիչ, խորտակիչ, քննիչ, հաշվիչ, կիզիչ, կախարդիչ, ջախջախիչ, տպավորիչ.

գ/ -/ա/վոր վերջածանցն ունեցող բառերի շարքում.

թագավոր, ակնոցավոր, սնավոր, զինվոր, ձիավոր, թևավոր, ճգնավոր, վիրավոր, աշխատավոր, գիսավոր, կեղծավոր, ձևավոր, գլխավոր:

Բ. Առանձնացվածներում ընդգծել նրանք, որոնք հաղորդակցական գործընթացում նաև ածականներ են:

🕮 Ձ-20. Տրված բառերից /կամ բառարմատներից/ ածանցների օգնությամբ կազմել տեղ ցույց տվող գոյականներ:

Հիվանդ, արհեստ, արգելել, արվեստ, բուժել, դպիր, ծաղիկ, դիտել, ճաշել, ննջել, մեղու, ամառ, բնակվել, դաս, դարբին, կույս, գործել, հյուր, դատ, ծեր, լող, բանջար, ձուլել:

🕮 Ձ-21. Ա. Բացատրել -ուհի վերջածանցի բառակազմական նշանակությունը և կազմել 5-ական գոյականներ՝

ա/ զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող անձի հասարակ անուններից.

բ/ ժողովրդի կամ երկրների անուններից.

գ/ ածականներից.

դ/ արական սեռի հատուկ անուններից:

🕮 Ձ-22. Բայերից տարբեր ածանցներով գոյականներ կազմել /օր.՝ անցնել - անց+ք, անց+ում, անց+ավոր, անց+որդ, անց+վոր/:

● Պահել, պատվիրել, հնչել, պտտել, երազել, արհամարհել, արարել, շվշվալ, վարել, հարցնել, աղոթել, գնալ, գովել, շարժել, սրբել, կցել:

● Բամբասել, զրկել, հարգել, բնակվել, գործել, թարգմանել, սվսվալ, լողալ, հաճախել, գրել, կերտել, ելնել, հանել, հմայել, պատմել, սուլել, քամել, վազել:

● Քննել, կչկչալ, ճանապարհել, հյուսել, մտնել, նզովել, գալվանազօծել, մարզել, դռդռալ, բաժանել, մանել, նստել, սլանալ, վաճառել, վայելել, փրկել:

🕮 Ձ-23. Կազմել գոյականներ տրված մասնակաղապարներով՝ նշելով ընտրված արմատների խոսքիմասային պատկանելությունը:

ա/ ան ... ություն	**ե/** ան ում	**թ/** ապ // ապա ... ում
բ/ մակ/ա/ ություն	**զ/** արտա ...ում	**ժ/** գեր ություն
գ/ արտա// արտ... ություն	**է/** նախ/ա/ ... ություն	**ժա/** վեր /ա/ ... ում
դ/ հակ /ա/ ... ություն	**ը/** փոխ /ա/... ություն	**ժբ/** նախ/ա/... ում

🕮 Ձ-24. Բառարանների օգնությամբ գրել բույսերի /ծառերի, թփերի, ծաղիկների, խոտերի, սնկերի/ հայերեն անվանումներ, որոնց վերջնաբաղադրիչը հետևյալ բառերից է՝

ա/ ...ծաղիկ /նախանձածաղիկ.../	**բ/ ...սունկ** /աբեթասունկ.../
գ/ ...վարդ /շքեղավարդ.../	**դ/ ...խոտ** /ատամնախոտ.../
ե/ ...մորի /ճահճամորի.../	**զ/ ...փուշ** /ազռավափուշ.../
է/ ...շուշան /աստղաշուշան .../	**ը/ ...կակաչ** /թխակակաչ.../
թ/ ...ծառ /դրախտածառ.../	**ժ/ ...առվույտ** /ինշառվույտ.../

🕮 Ձ-25. Կազմել նախադասություններ հետևյալ գոյականներով. բացատրել նրանց գործառական տարբերությունները:

ա/ ավանդություն - ավանդույթ	**ե/** երախտիք - երախտագիտություն
բ/ բարդություն - բարդույթ	**զ/** գործառնություն - գործառություն
գ/ հասկացողություն – հասկացություն	**է/** հրավեր – հրավերք

դ/ տարեդարձ – տարելից ը/ ցուցում - ցուցմունք
թ/ հրատարակություն – հրատարակչություն
ժ/պատրաստակամություն – պատրաստականություն

🕮 Ձ-26. **Դարձվածաբանական բառարաններից օգտվելով՝ կենդանու անուն-բաղադրիչով դարձվածքներ գրել** /Օր. օձ -- ♦օձ խուզող ♦օձ հարթող ♦ օձը բնից հանել ♦ օձի հետ ջուր խմել ♦ օձի ձու ♦ օձի շապիկ ♦ օձի լեզու ունենալ ♦ օձի ծնունդ ♦ օձից յոթ կաշի քերթել ♦ օձին նայի, օձը կսատկի ♦ օձի բնին նստել ♦ օձի բերան քամես՝ կսատկի...:

🕮 Ձ-27. **Ո՞ւմ կամ ի՞նչ են անվանում հետևյալ արտահայտությունները՝ շրջասությունները /կամ շրջասույթները/:**

● ազատության երգիչ	● կարմիր հունձ	● տրոյական պատերազմի երգիչ
Ավարայրի բլբուլ	գլխավոր ոգնի	առաջին հայ ուսուցիչ
երկնային դատավոր	խանդոտ մավր	էլեկտրականության Նյուտոն
անապատի մակույկ	Մեծ Լոռեցի	հայ քնարերգության Վահագն
Ավետյաց երկիր	բիբլիական լեռ	ծագող արևի երկիր
սատանի սյուն	վալսի արքա	ծաղրածու՝ աշունը սրտում
Սկյուտարի սոխակ	գույների կախարդ	տիեզերագնացության հայր

🕮 Ձ-28. **Ի՞նչ է կոչվում՝**

ա/ Կենդանու արձակած ձայնը՝ 1. առյուծի 2. շան 3. արջի 4. հավի 5. ավանակի 6. այծի 7. ոչխարի 8. գառի 9. կատվի 10. թռչունի 11. գայլի 12. արագիլի 13. հորթի:

բ/ Խումբը՝ 1. գովերի 2. թռչունների 3. մեղուների 4. ձիերի 5. փղերի 6. նավերի 7. աստղերի 8. աղվեսների 9. ձկների 10. օձերի 11. կետերի և դելֆինների 12. խոզերի 13. կղզիների 14. ոչխարների և այծերի 15. գայլերի և շների 16. մարդկանց 17. զինվորների:

գ/ Ձագը՝ 1. առյուծի 2. շան 3. արջի 4. հավի 5. ավանակի 6. ձիու 7. այծի 8. ոչխարի 9. կովի 10. խոզի:

🕮 Ձ-29. **Խմբավորել օրվա տարբեր պահեր անվանող գոյականներն ըստ** առավոտ, կեսօր, երեկո, գիշեր **հասկացությունների:**

Այգ, իրիկուն, իրիկնապահ, միջօրե, ցայգ, այգաբաց, լուսաբաց, իրիկնադեմ, իրիկնաժամ, ճաշ /ճաշոց/, խավարակ, այգալույս, լուսայգ, արևամուտ, վերջալույս, ճաշաժամ, աղամամութ, վաղորդայն, արշալույս, արևածագ, մթնշաղ, ճրագվառոց, աղջամուղջ, մթնալույս, մթացյալ, արևածայրք, արևագալ, աղամալույս, այգածագ, ծեգ, մայրամուտ, աղոթարան, իրիկնաշաղ:

🕮 Ձ-30. Ըստ բառիմաստային ընդհանրությունների և քերականական յուրահատկությունների՝ գոյականները լինում են՝

ա/ հատուկ և հասարակ
բ/ անձ և ոչ անձ
գ/ նյութ ցույց տվող
դ/ թանձրացական և վերացական
ե/ շնչավոր և անշունչ
զ/ հավաքական
է/ գերդաստան, տոհմ, խմբակցություն ցույց տվող:

Բնութագրել այս խմբերը և 5-ական օրինակներ գրել:

🕮 Ձ-31. Գրել արդի գրական արևելահայերենին հատուկ հոգնակերտ մասնիկները, ընդգծել առավել գործածականները, դրանցով 3-ական բառերի հոգնակիները կազմել: Ինչո՞վ է պայմանավորված -եր և -ներ հոգնակերտների բաշխումը:

🕮 Ձ-32. Ա. Դուրս գրել եզակի թվով դրված գոյականները և կազմել դրանց հոգնակիները:

Բ/ Դուրս գրել հոգնակի թվով դրված գոյականները և կազմել դրանց եզակիի ձևերը:

Գ/ Բացատրել թվակազմական զույգերի /քարափներ – քարափ/ ձևային ու իմաստային հակադրությունները:

Ապրիլը ձորում՝ քարափներն ի վար կախված արտասուք,
Ապրիլը ձորում՝ ծաղկաթերթերի քնքշանքն էր ու բուք:
Մասրենիները քարափներն ի վար, քարափների տակ
Սպիտակ էին ու թեթև էին իբրև հրեշտակ:
Եվ ամեն մի ծաղիկ առած մի խոշոր, ցոլցլուն մի ցող,
Փոքրիկ ձեռքերի մեջ հազիվ էր պահում լույսն այդ ծանրացող:
Ապրիլը ձորում՝ ծաղկի ու ցողի ցոլանք ու ցոլք,
Ապրիլը ձորում հրաշք բաժանող կախարդ էր ու մոգ:
Հովին արծաթե սրինգ էր տալիս, քարափին՝ զանգեր,
Քարանձավներին՝ կապույտ կարոտներ ու երազանքներ:
Աղբյուրներին համերգություն էր տալիս ծիծաղի,
Եվ տալիս էր ինձ մի անհա՜յտ, անհա՜յտ, անանուն թախիծ... /Վ. Դավթյան/

🕮 Ձ-33. Ա. Կազմել հետևյալ բառերի հոգնակի ձևերը, բացատրել կազմության օրինաչափությունները և դրանցից կատարված շեղումները:

Բ. Առանձնացնել հնչյունափոխվածները և բացատրել կատարված հնչյունափոխությունը:

1. ջուր, գույն, տուն, լուր, սար, ձոր, գիրք, գիծ, թիվ, բու, գունդ, տառ, լու, շուն
2. մուկ, ձուկ, դուռ, գառ, ակ, եզ, լեռ, հարս, մատ, նուռ, բեռ, ծունկ
3. սեղան, ծաղիկ, ճառագայթ, առյուծ, հնչյուն, ձնույթ, մոլորակ, անձրև
4. բժիշկ, գրող, դպրոց, սրբիչ, ժպիտ, խրճիթ, կղզի, կռիվ, շրջան, վրձին, վրան
5. ազդր, արկղ, դուստր, եզր, սանր, կայսր, ոսկր, վագր, տեսր, գամփռ
6. անձրևաջուր, աստղափուշ, անտառամուկ, դպրատուն, ածխահանք, արևելահայ, բանաձև

✍ 7. բանասեր, գեղագետ, գնդացիր, հրացան, հրթիռ, հրշեջ, ջրմուղ, փայտահատ, մեծատուն
✍ 8. մարդ, նախամարդ
✍ 9. կին, պարոն, տիկին...

📖 Ձ-34. Ժամանակակից հայերենի տարբեր բացատրական կամ ուղղագրական բառարաններից գտնել և գրել վերջում միավանկ արմատական բաղադրիչ ունեցող 10-ական բարդ բառեր, որոնք հոգնակիակազմության համար ունեն հետևյալ հողումները՝ ա/ -եր բ/ -ներ գ/ 1/ -եր.... 2. -ներ:

📖 Ձ-35. -Ություն ածանցն ունեցող հավաքական գոյականների շարքում առանձնացնել հոգնակի թվով գործածվողները:

Քաղաքակրթություն, մագնիսականություն, գիտություն, ոստիկանություն, հիմարություն, ցանկություն, փոփոխություն, ծերություն, հպարտություն, հիշողություն, մարդկություն, հայտնագործություն, նմանություն, կանոնավորություն, իրադարձություն, մտածողություն, փիլիսոփայություն, ճշմարտություն, դատողություն, հարաբերականություն, հետևություն:

📖 Ձ-36. Կարդալ և բացատրել ընդգծված բառաձևերի հոգնակիակազմական կիրառական-ոճական յուրահատկությունը:

1. Կարծես վարդերն են խոսում բյուրաձայն, Կարծես իմ սրտով <u>գեփյուռներ</u> անցան /ՀԾ/: 2. Իմ սիրածն ասաց՝ մեծ ես ինձնից, Քո <u>գարունների</u> գարունն է անցել /Ն/: 3.Քո մեջ գտա <u>արքեցումներս</u>, անգին, Քո մեջ գինու ծով գտա.../Ն/: 4. Ես ձեզ բերում եմ լեռների շունչը, Սրբությունները <u>լեռնահովերի</u> /Ն/: 5. Մի՞թե չեն հուզում Մասիսները քեզ, Որ դեռ ձգտում ես յոթ <u>երկինքները</u>... /Ն/: 6.Հոգնած <u>ձյունները</u> քեզ սպասելով՝ Քո հուր կարոտից հալչում են, արի՛ <u>Ջրերն</u> աշխարհում քարեքար ընկած Հուզված ու խռով կանչում են՝ արի՛.../ՄԿ/: 7. Գիտեմ, սիրելիս, դու չե՞ս մեղավոր, Այլ այս հալիլող <u>ձյունները</u> գարնան... Ու մեղավոր է երկինքն այս թաց, Այս <u>անձրևները</u>՝ խաղաղ, մաշմշող.../Ն/: 8. Նույն բանալիով փակել եմ դրսի աշխա՛րհը իմ դեմ Ու խոր հանձնվել իմ <u>կարոտներին</u>, իմ մենությանը /Ն/: 9. Բոլոր փողոցներում՝ <u>քամիների</u> ժողով, Իսկ խաչմերուկներում՝ խորհրդակցություն բքի... -Ինձ են քննում նրանք /ՊՍ/:

📖 Ձ-37. Գրել 3-ական անհոգնական գոյականներ, որոնք՝
✍ 1. չափվող ու կշռվող նյութերի անուններ են.
✍ 2. հատուկ անուններ են.
✍ 3. գիտությունների, ուսմունքների, հասարակական կառուցվածքի ձևերի անուններ են.
✍ 4. զանազան խաղերի ու զբաղմունքների անուններ են.
✍ 5. հավաքական նշանակություն ունեն.
✍ 6. վերացական նշանակություն ունեն:

🕮 Ղ-38. -Ություն, -եղեն, անի, -որայք, -ոտիք ածանցներով կազմել հավաքական նշանակություն ունեցող բառեր. բացի հավաքականության իմաստից ուրիշ ի՞նչ իմաստներ կարող են դրսևորել:

🕮 Ղ-39. Բացատրել հետևյալ զուգաձևությունների արտահայտած հոգնակիության գաղափարի իմաստային և ոճական տարբերությունները:

● նամակներ // նամականի
առածներ // առածանի
հոգևորականներ // հոգևորականություն
մրգեր // մրգեղեն
երիտասարդներ // երիտասարդություն

● ուսուցիչներ // ուսուցչություն
փորեր // փորոտիք
կոշիկներ // կոշկեղեն
դեղեր // դեղորայք
աստղեր // աստղունք

🕮 Ղ-40. Տրված գոյականները խմբավորել ըստ թվի քերականական կարգի՝
ա/ գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի թիվ, և՛ հոգնակի թիվ.
բ/ գոյականներ, որոնք սովորաբար գործածվում են միայն եզակի թվով.
գ/ գոյականներ, որոնք սովորաբար հոգնակի թվով են գործածվում:

Գարուն, ձոր, խելագարություն, բողբոջ, նոնենի, ամպ, արտասուք, քար, գեղեցկություն, երազանք, երգեցողություն, երկաթեղեն, շարժում, երիտասարդություն, մարդ, հուզում, զգացմունք, ոսկեղեն, մեղր, Արմենենք, ուսում, մանկություն, մաթեմատիկա, Կարպատներ, շախմատ, քրիստոնեություն, կաթ, ֆիզիկա, մածուն, խնդիր, գինի, Վարդանանք, ֆուտբոլ, պլատոնականություն, Կարոյենք, պողպատ, օղակ, տրամաբանություն, տիեզերք, աշխարհայացք, մետաֆիզիկա, բառ, կայսր:

Բ. Խմբավորել դրանք ըստ իմաստային նշանակությունների և շարքերը լրացնել նմանատիպ 3-ական օրինակներով:

🕮 Ղ-41. Ա. Կազմել տիկին, պարոն, ոտ/ք/, ձեռ/ք/, ճամփա, քաղաքացի, գերմանացի, վանեցի, տեղացի, երևանցի, երեխա, տղա, անգդ, կայսր, արկղ **բառերի հոգնակիի զուգահեռ ձևերը, ինչպես օրինակ՝**

↗ **մշեցիներ**
մշեցի
↘ **մշեցիք**

Բ. Բացատրել դրանց կիրառական-ոճական տարբերությունները. նրանցից ո՛րը գործառական ի՞նչ ոճում է գործածվում:

🕮 Ղ-42. Դուրս գրել գոյականները, գրել նրանց թվակազմական հակադիր եզրերը և բացատրել հոգնակիակազմության օրինաչափությունները:

... Քաղաքն ունի Կույր փողոց, որ վերջանում է այգիների ճանապարհով. Տպագրիչների փողոց, որտեղ մեծ մասամբ ապրում են պղնձագործ արհեստավորներ. Բաղնիքի փողոց...: Կան փողոցներ, որոնց բնակիչները տառապում են հարատև հարբուխով, լռակյաց ու տխուր մարդիկ են, ինչպես գերեզմանափորները և ժամագործները: Կան զարմանալի փողոցներ, որոնք

ունեն ցածր դռնակներով պատեր և երգող ջրեր: Կանուխ է իջնում մութն այդ փողոցներում, և խավարն ավելի թանձր է, քան հարևան փողոցում...

Պատահել է մեզ տեսնել հին փողոցներ, որտեղ ամեն քայլափոխի մի բան գրավել է մեր անգբաղ ուշադրությունը: Մի տափակ կտուրով տան ամբողջ ճակատը զարդարված է գունագեղ աղյուսներով, որոնց համակարգության մեջ կա թաքնված իմաստ, մի ուրիշ տուն ունի երազային պատշգամբ կապույտ ճաղերով... Ահա մի ուրիշ փողոց, որի միջով գնում է բարակ գետը: Տները գետափին են, և շատ պատշգամբներ կախված են ջրերի վրա: Տնից տուն կամրջակներ են...

Բայց կան և լուրջ փողոցներ՝ քարակոփ տներ ու մայթերը սալահատակ: Այդ փողոցներով անշշուկ սուրում են շքեղ ավտոներ, այնտեղ ծառերն անգամ միահավասար և միանման են ու չեն շարժվի ամեն պատահական քամուց, մինչև չշարժվի ծայրինը, և սոսափը որպես հրաման չանցնի սաղարթից սաղարթ... Բայց այդ փողոցներից և ոչ մեկը չի կազմում քաղաքի հպարտությունը: Ավելին, նրանք բոլորը փողոց են, հաղորդակցության անոթներ, և նրանցից ոչ մեկի անունը չի կապվում երազների, բամբասանքների, այլատեսակ շաղակրատությունների, դատարկապորտ թափառումների և ժամանակի վատնման հետ, ինչպես այս փողոցն է...

/Ա. Բակունց/

📖 Ջ-43. Գրել 10-ական հասարակ և հատուկ անուններ. բացատրել նրանց իմաստային և քերականական տարբերությունները: Գրավոր խոսքում ինչպե՞ս է արտահայտվում հատուկ և հասարակ անունների տարբերությունը. բանավոր խոսքում դրանք տարբերակվու՞մ են:

📖 Ջ-44. Անվան ընտրությունը երբեմն դառնում է նորաձևության ձգտման արտահայտություն. ձեր կարծիքով այսօր ո՞ր անձնանունները են նորաձև:

📖 Ջ-45. Շարքերը լրացնել նմանատիպ օրինակներով և բացատրել հատուկ անունների /պարզ կամ միաբառ և բաղադրյալ կամ բազմաբառ/ ուղղագրությունը:

✍ 1. Արմեն, Արևիկ...
✍ 2. Հայաստան, Թալին, Զանգու...
✍ 3. Բողար, Չալո...
✍ 4. Արեգակ, Վեներա...
✍ 5. Մարտիրոս Սարյան, Իսահակ Նյուտոն...
✍ 6. Լեոնարդո դա Վինչի, Անտուան դը սենտ Էքզյուպերի, Աբդ էլ Քերիմ, Անդրեա դըլլա Ռոբիա...
✍ 7. Լա Պլատա, Լա Վալե Պուսեն Շառլ Ժան...
✍ 8. Մայնի Ֆրանկֆուրտ, Վոլգա-Դոն, Էլզաս-Լոթարինգիա...
✍ 9. Արևելյան Եփրատ, Մեծ Մասիս...
✍ 10. Հայաստանի Հանրապետություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն...

11. Ծիր Կաթին, Փոքր Արջ /համաստեղություն/
12. Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես /եկեղեցի/...
13. Արարատյան դաշտավայր, Աղթամար կղզի...
14. «Գրական թերթ», «Ազգային միասնություն»...
15. Նոբելյան մրցանակ, Հերոսուհի մայր...
16. Ազգային ժողով, Ներքին գործերի նախարարություն...
17. Ծննդյան տոներ, Երեխաների պաշտպանության միջազգային օր...

Ջ-46. Անհրաժեշտ տեղում բառերը գրել մեծատառով:

1. Հայ բանասիրության հսկաներ հրաչյա աճառյանը, մանուկ աբեղյանը, հակոբ մանանդյանը, ստեփանոս մալխասյանցը, գրիգոր ղափանցյանը և շատ ուրիշներ բախտ ունեցան դառնալու մեր ակադեմիայի հիմնադիրներն ու առաջին իսկական անդամները /ԳԷ/: 2. 4-րդ դարի երկրորդ կեսին արշակ երկրորդ արքան այրարատ նահանգի կոգովիտ գավառում հիմնադրել է արշակավան քաղաքը: 3. Ժառանգորդության, ավանդներն անմահ պահելու ի՞նչ ջանքեր են թափել անիի ու հաղպատի, սանահինի դպրատներից, կիլիկյան հայքի վարդապետներից սովորած մխիթար գոշը նոր գետիկի իր հռչակավոր դպրոցում, գոշի իմաստուն աշակերտ հովհաննես տավուշեցին՝ վանական վարդապետը՝ խորանաշատի իր դպրոցում, և վանականի աշակերտ վարդան վարդապետ արևելցին էլ՝ իր հիմնադրած խոր վիրապի բարձր դպրոցում: 4. Դասագրքեր են ստեղծել պատմահայր մովսես խորենացին, նրա դասակիցն ու հարազատը՝ դավիթ անհաղթ փիլիսոփան, պետրոս քերթող սյունեցին, հանրագիտակ անանիա շիրակացին: 5. Ներսես երրորդ իշխանցի կաթողիկոսը համոզված էր, որ մասիսների համայնապատկերի վրա կառուցվելիք եկեղեցին առավել վսեմ ու պերճաշուք կլինի:

● «1-ին երկրամասը բարձր հայքն է, այսինքն՝ կարնո երկիրը,- թվարկում է 7-րդ դարի մեծ աշխարհագրագետ անանիա շիրակացին /«աշխարհացույց»/,- 2-րդը՝ չորրորդ հայքն է, այսինքն՝ ծոփաց երկիրը, 3-րդը՝ աղձնիքը տիգրիս գետի վրա, 4-րդը՝ տուրուբերանը, այսինքն՝ տարոնը, 5-րդը՝ մոկքը ասորեստանի մոտ, 6-րդը՝ կորճայք երկրամասը, 7-րդը՝ պարսկահայքը՝ ատրպատականի մոտ, 8-րդը՝ վասպուրականը, որ գտնվում է նրանից հյուսիս-արևմուտք, 9-րդը՝ սյունյաց երկրամասը, որ գտնվում է երասխ գետի մոտ, 10-րդը՝ արցախը, 11-րդը՝ փայտակարանը՝ համանուն քաղաքով, 12-րդ երկրամասը ուտիքն է, որ սահմանակից է աղվանքին՝ կուր գետով, 13-րդը գուգարքն է՝ վրաստանի մոտ, 14-րդ երկրամասը տայքն է՝ եգերի մոտ, 15-րդ երկրամասը այրարատն է, որ գտնվում է նրանց մեջտեղում»:

Ջ-47. Ա. Շատ հին ժամանակներում երկնքում հեշտությամբ կողմնորոշվելու համար աստղերը խմբերի՝ համաստեղությունների են բաժանել. դրանց հայկական անվանումները լի են քնարականությամբ. Ա. և Ք. Սոքիասյանների «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանից» դուրս գրել աստղային համաստեղությունների անունները և բացատրել ուղղագրությունը:

Բ. Ի՞նչ ավանդազրույցներ գիտեք՝ կապված դրանց հետ:

🕮 Ջ-48. Գրել՝
ա/ տիեզերական եզակի մարմինների և մոլորակների անունները՝ /մոլորակներինը՝ նաև հայերեն անունները/.
բ/ հատուկ անուններից առաջացած հասարակ անուններ.
գ/ հասարակ անուններից առաջացած հատուկ անուններ.
դ/ 10 անվանի գիտնականի անուն և ազգանուն.
ե/ անվանի արվեստագետների անուններ:

🕮 Ջ-49. Գրել՝
Ա. Բաղադրյալ կազմությամբ հարադրական անձնանուններ, որոնցում անձնանուն բաղադրիչը լրացմանը՝ ա/ հաջորդում է /Կարմիր Վարդան.../.
բ/ նախորդում է /Տիգրան Մեծ/:
Բ. Բաղադրյալ կազմությամբ հարադրական տեղանուններ, որոնցում բաղադրիչներից մեկը՝
ա/ գունանուն է.
բ/ մեծ, փոքր, նոր, հին, հյուսիսային, հարավային, արևելյան կամ արևմտյան բառն է:
Գ. Հայոց մայրաքաղաքների անունները: Ի՞նչ է նշանակում թափառող մայրաքաղաքների երկիր շրջասությունը:
Դ. Հայաստանի Հանրապետության արդի մարզերի անուններն իրենց կենտրոն-քաղաքներով և բացատրել նրանց կազմությունը:
Ե. Հայաստանի Հանրապետության պետական տոների և հիշատակի օրերը՝ ուշադրություն դարձնելով դրանց ուղղագրությանը:

🕮 Ջ-50. Բացատրել «թևավոր խոսք» դարձած հետևյալ հատուկ անունների իմաստները /համանիշները/՝ հնարավորության դեպքում նշելով սկզբնաղբյուրը.
Օթելլո, Յագո, Դոն Կիխոտ, Դոն Ժուան, Յանուս, Նարցիզ /Նարցիս/, Հուդա, Քաջ Նազար, Ձախորդ Փանոս, Անբան Հուտի:

ԿԱՐԴԱ՛Ն ԵՎ ՀԻՇԻ՛Ր

Ինչպե՞ս մարդկանց անուններից ծնվեցին բառեր, կամ ինչպե՞ս անձնանունը կամ տեղանունը դարձավ «հասարակ» անուն:

Գերմանացի գյուտարար Դիզելը հորինեց ոչ բենզինով աշխատող շարժիչ, որը կոչվեց **դիզել**:

Իտալացի Ալեքսանդրո Վոլտան 1800 թ. հայտնաբերեց էլեկտրական լարվածության չափի միավորը, որը, ի պատիվ նրա, կոչվեց **վոլտ**:

Էլեկտրական հոսանքի ուժի միավորը **ամպեր** կոչվեց հայտնաբերողի՝ Անդրե Մարի Ամպերի անվամբ /1920թ./:

Էներգիայի և ջերմության միավորը 1848թ. սկսած կոչվում է այն հայտնաբերողի՝ անգլիացի ֆիզիկոս Ջեյմս Պրակոտ Ջոուլի անվամբ՝ **ջոուլ**:

Որպես ճնշման միավոր՝ ընդունված է **տոր**-ը. այդպես է անվանվել ի պատիվ իտալացի ֆիզիկոս և մաթեմատիկոս Էվանգելիստա Տորիչելլիի:

Օհմ-ը շղթայի էլեկտրական լարվածության միավորն է, որն այդպես է կոչվել գերմ. ֆիզիկոս Օհմի անունով 1826 թ.:

Վատտ-ը Ջեյմս Ուատն է:

Կայսր և **կեսար** բառերը ծագում են միևնույն բառից, սակայն հայերենի բառապաշարի մեջ մուտք են գործել տարբեր լեզուների միջնորդությամբ և տարբեր ժամանակներում: Հիշենք աստվածաշնչյան հայտնի արտահայտությունը՝ Կեսարինը՝ Կեսարին, Աստծունը՝ Աստծուն: Հայերենում ավելի շատ տարածված է **կայսր** ձևը:

Ողջ սփյուռքում օգտագործվում է **սենդվիչ** բառը, որը անգլերենում նշանակում է «բրդուճ»: Բառը ծագում է քմահաճ լորդ Սենդվիչի անունից, որի համար ուտելիքներ պետք է մատուցվեին խաղասեղանի վրա:

Գալիֆե-ն տղամարդու անդրավարտիքի մի տեսակ է, որը հետագայում դարձավ զինվորական համազգեստ. ծագում է ֆրանսիացի Գալիֆեի /1830-1903/ անունից, որը դաժանորեն ճնշեց Փարիզի կոմունան:

Ամերիկացի Չառլզ Լինչի անունից են ծագում **լինչի դատաստան**, **լինչի դատաստանի ենթարկել** արտահայտությունները, այն Լինչի, որը թույլ տվեց կիրառել նեգրերի հետ առանց դատի հաշվեհարդար տեսնելը:

Մանսարդ բառն առաջացել է ֆրանսիացի ճարտարապետ Ֆրանսուա Մանսարի անունից, որի նախագծած շենքերի տանիքները բնակության համար էին նախատեսած, իսկ **մակինտոշ**-ն առաջացել է շոտլանդացի քիմիագործ Մակինտոշի անունից /1823 թ/:

1895 թ. ֆիզիկոս Կոնրադ Ռենտգենը հայտնաբերեց **ռենտգենյան** ճառագայթները:

Մեկենասը Հռոմի կայսր Օգոստոսի մտերիմներից էր և բանաստեղծների, արվեստագետների հովանավորն էր, և շուտով Մեկենասի անունը դարձավ հասարակ բառ՝ **մեկենաս**:

Բռայլյան այբուբենը կույրերի այբուբենն է՝ 6 կետերի տարբեր զուգորդումներով կազմված մի համակարգ, որն ստեղծել է ֆրանսիացի հայտնի գիտնական Լուի Բռայլը:

Իսկ մի ուրիշ ֆրանսիացի՝ Գիլյոտինը, իր անունն անմահացրեց հրեշավոր մի գյուտով. նա է հնարել **գիլիոտին** կոչված գլխատման դժոխային մեքենան, որն առաջին անգամ գործադրվել է 1792 թ. ապրիլի 15-ին Լյուդովիկոս Առաջինի կողմից: Սակայն ընդամենը մի տարի հետո գոռոզ արքան իր պարանոցին է փորձել նրա սրությունը:

Նորից մեկ այլ ֆրանսիացու՝ Պիեռ-Էմիլ Մարտենի անունից է ծագում **մարտեն**-ը: Մարտենը 30 տարի եղել է պողպատածուլական գործարանի տնօրեն, 1864 թ. մշակել է բոցավառարանում ձուլածո պողպատ ստանալու նոր եղանակ: Մեռել է ծերացած՝ աղքատության և անհայտության մեջ: Նրա գյուտից 30 տարի անց որոշվում է արձանը կանգնեցնել: Ու երբ այս առիթով նրա ծննդյան ու մահվան տարեթվերն են փնտրել, նոր միայն պարզվել է, որ դեռ ողջ է:

16-րդ դարում Ֆրանսիան Պորտուգալիայում դեսպանի պաշտոնով ներկայացնում է ոմն Ժան Նիկո: Նա այդպես էլ անհայտ կմնար, եթե նրա միջոցով Ֆրանսիայում, ապա ողջ Եվրոպայում չտարածվեր հետագայում նրա անունով կոչված **նիկոտին** թույնը: **/Ըստ Պ. Բեղիրյանի և Ն. Մկրտչյանի/**

🕮 Ձ-51. Կարդալ և յուրաքանչյուր դեպքում գրել այն անձնանունը կամ տեղանունը, որից ծնունդ է առել տվյալ բառը կամ բառակապակցությունը. նշել նրանց գործածության ոլորտները:

Հերմետիկ խցիկ, դիզելային վառելանյութ, վոլտմետր, ամպերմետր, ամպեր-փաթույթ, ամպեր-կշեռք, ջուլյան օրենք, տորիչելյան դատարկություն, հեկտովատտ, կայսերական, օգոստոսափառ, ջազամոլություն, ջազմեն, խուլիգանություն, բոյկոտել, ռենտգենագննում, մեկենասություն անել, լինչի դատաստան, նեռ Լենկ-Թեմուր, գիլիոտինի սրությունը փորձել, բռայլյան այբուբեն, մարտենյան հնոց, զինվորական գալիֆե, նիկոտինի արտադրություն, պանամա բացել, քաղցրահոտ օդեկոլոն, ժավելաջուր, կիսաչոր շամպայն, դառնահամ պորտվեյն, ջերմուկախառն, դեմիրճյան խնձոր, բորդո, նագանով զինված, նյուտոն, մաուզեր:

🕮 Ձ-52. Ա. Ինքնուրույնաբար կամ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանից» օգտվելով՝ գրել կենդանու, բույսի /կամ այլ առարկայի/ անուն-բաղադրիչ ունեցող հայկական տեղանուններ /Արծվաքար, Խաչխաչի լեռ, Մազե կամուրջ/:

❖ Բ. Ի՞նչ եք հասկանում այս տողերը կարդալով՝ «Հայ ժողովուրդը դարերի ընթացքում բանաստեղծել է աշխարհագրական անուններ կերտելու իր ավանդույթը: Ազգային դիմագիծ ունեն գետերի, լեռների, լճերի, դաշտավայրերի, լեռնանցքների, լեռնագագաթների, քաղաքների, գյուղերի, նահանգների հայկական անվանումները»: Հիշեցեք բանաստեղծական տողեր, ավանդազրույցներ, որոնցում անձնավորվում են աշխարհագրական տեղանունները:

🕮 Ձ-53. Ա. Գրել բաղադրյալ հատուկ անուններ, որոնք կազմված են 3 և ավելի բաղադրիչներից:

Բ. Աշխարհագրական ի՞նչ հատուկ անուններ գիտեք, որ գործածվում են միայն հոգնակի թվով:

🕮 Ձ-54. Դուրս գրել հատուկ անունները և բացատրել դրանց կազմությունը:

Գիտության զարգացման «ադամանդյա դարը» դեռ առջևում է: Դա կլինի անշուշտ այն ժամանակ, երբ գիտության կազմակերպումը կդառնա համընդհանուր գործ: Հիշենք թեկուզ Պերիկլեսին և նրա ստեղծած Աթենական Հանրապետությունը մ. թ. ա. 5-րդ դարում: Հին Հունաստանի բարձրագույն ծագումը, նրա «ոսկեդարը» համընկնում է հենց Պերիկլեսի դարաշրջանին: Այդ ժամանակ են աշխատել ու ստեղծագործել փիլիսոփաներ Անաքսագորասը և Դեմոկրիտը, մաթեմատիկոս-աստղագետներ Էնոպիդը և Մետոն, բժշկության հայր Հիպոկրատը, քարտեզագետ Հեկատեյ Միլետացին, կենսաբան Էմպեդոկլեսը, պոետ-կոմեդիոգրաֆ Արիստոֆանեսը, Պարթենոնը ստեղծող ճարտարապետները՝ Կալիկրատը և Իտկինը՝ Էրեխտեյոնի ստեղծողը, նկարիչներ Պոլիգնոտը և Ապելլեսը, քանդակագործներ Միրոնը, Պոլիկլետը, Հելլադայի առաջին քանդակագործի տիտղոսը կրող Ֆիդիասը և շատ ուրիշներ: Հիշենք նաև

Ալեքսանդր Մակեդոնացուն, որը բախտ է ունեցել փոքրուց աշակերտելու Արիստոտելին: Նրա հախուռն տարերքն ու անսպառ երևակայությունն ապշեցնում էին նույնիսկ այն դեպքերում, երբ շատ ու շատ բաներ՝ Արաբիայի ափերի հետազոտումը, Եփրատի ջրային ուղիների ու հիդրոտեխնիկական կառուցվածքների ընդարձակումը, Կասպից ծովը օվկիանոսին միացնելու նախագիծը, վիթխարի տաճարների կառուցումը Բաբելոնում, Դելոսում, Դելֆում և այլն, վաղաժամ մահվան պատճառով անկատար մնացին: Հիշենք Պետրոս Առաջինին, որն ստեղծեց Ռուսաստանի առաջին գիտությունների ակադեմիան...

Ավելի մոտ ժամանակներից հիշենք թեկուզ Նապոլեոնին, որը Եգիպտոսի դեմ ուղղված զավթողական պատերազմում հնարավոր համարեց զորքերի կազմում ունենալ գիտնականներից, ճարտարապետներից, նկարիչներից բաղկացած մի ամբողջ գումարտակ՝ այնտեղ հնագիտական պեղումներ կատարելու համար: Հենց այդ նյութերն էին, դրանց թվում նաև հայտնի Ռոզետտե քարը՝ ծածկված արձանագրություններով, որ հիմք դարձան Շամպոլյոնի համար՝ անելու իր՝ դարագլուխ կազմող հայտնագործությունը՝ եգիպտական հիերոգլիֆների վերծանումը: Ավելի ուշ, ծանոթանալով Լապլասի «Երկնային մեխանիկայի» առաջին 3 հատորներին, Նապոլեոնը կգրի. «Ինձ թվում է, որ «Երկնային մեխանիկան» վսեմացնում է մեր դարը»...

...«Աղամանդյա դարը», ինչ խոսք, անհամեմատ հեռու կգնա այս ամենից...

/Գ. Գուրզադյան/

📖 Ջ-55. Նշանավոր անձանց բաղադրյալ հատուկ անուններում ընդգծել լրացում-բաղադրիչը և նշել, թե ի՞նչ է մատնանշում այն:

1. «Միտքը անպատկա՞ռ և աներկյուղ դատավոր է,- գրում է Գրիգոր Տաթևացին,- նա Աստծուց չի վախենում»: 2. Դավիթ Անհաղթը գիտությունների առաջացման պատճառը համարում է մարդկանց այս կամ այն կենսական կարիքը: 3. 7-րդ դարի աստղաբաշխ, մաթեմատիկոս է Անանիա Շիրակացին: 4. Միջնադարյան առակագիր Մխիթար Գոշի փիլիսոփայական շատ մտքեր հաստատել է նաև Գրիգոր Տաթևացին: 5.«Մարդը տեր է բանականության և իմաստության»,- գրում է Մատթեոս Տաթևացին: 6. Մոնղոլները գրավել են Որոտան բերդը, և Հովհան Որոտնեցին ստիպված էր փախչել: 7. Հայաստանն այլևս Հռոմից կախված մի տերություն էր, երբ գահ բարձրացավ Տիգրան Մեծի որդին՝ Արտավազդ Երկրորդը: 8. Բարձրահասակ են եղել և՛ Տրդատ Մեծ թագավորը, և՛ նրա կինը՝ Աշխենը: Ի տարբերություն ծնողների՝ նրանց որդին կարճահասակ էր. ժողովուրդն էլ նրան անվանեց Խոսրով Կոտակ: 9. Հայոց Արշակ Երկրորդ թագավորին ուղեկցում էին նախարարները: 10. Հակոբ գրիչը միշտ երազել է մի մատյանի մեջ հավաքել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի տաղերը: 11. Ռուսա Երկրորդի հաջորդների օրոք՝ Սարդուր Երրորդ, Սարդուր Չորրորդ, Ռուսա Երրորդ, Ռուսա Չորրորդ, Վանի թագավորությունը պահպանեց իր քաղաքական ազդեցությունը Հայքի հարավարևելյան նահանգներից մինչև Արաքսի ափերը: 12. Գրիգոր Պարթևը նոր հավատի լույսն անխոչ տարածելու համար կոչվեց Գրիգոր Լուսավորիչ: 13. Ի՞նչ հերոսներ կարող են դուրս գալ,

ասենք, Գեներալ Ալոշից, կամ Համո Համբարձումովիչից - Մազութի Համոյից... Գուցե Մեռելի Ենո՞քը հարմար «հերոս» լիներ, կամ Կինտաուրի Սիմո՞նը, կամ, վերջապես, Տելեֆոն Սեթո՞ն.../ԵՀ/:

Ձ-56. ❖ Կարդալ: Ընդգծել հոգնակի թվով դրված հատուկ անունները և բացատրել դրանց իմաստային ու արտահայտչական զանազան նրբերանգները:

1. Միամիտ եղիր, Որ ես կբուժեմ Քո մեծ ու փոքր Սահարաները.../ՊՍ/: 2. Ո՞նց լքեմ, Թե մենք Հնդկաստաններում մեկտեղ ենք սովել /Ն/: 3. Կապուտիկյաններն ինչպե՞ս իմանային, որ իրենց նորածին աղջիկը պիտի բարի ժառանգ դառնա /Ն/: 4.Դեռ չկային Գագարիններն ու Տիտովները, բայց տիեզերքն արդեն գրավված էր չափածոյի հրթիռներով /Ն/: 5. Մեր տիգրաններից ու երվանդներից, արշակներից ու վաղարշակներից ոչ ոք այնպես չզգաց ժամանակի զարկերակը, ինչպես հացեկացցի դպիրը /Ն/: 6. Ամեն մի ուսս Մասիս է քեզ, Անտեր մի՛ թողնիր քո Մասիսները /ՀԵ/: 7. Պատկերասրահում ցուցադրվող նկարներից այվազովսկիներն անմիջապես գրավեցին այցելուների ուշադրությունը: 8. Ինչ խոսք, դեռ կգա գիտության «ադամանդյա դարը», մարդկությունը կսկսի փնտրել գերխնդիրներ՝ ընդհուպ մինչև նոր քաղաքակրթության ստեղծումը մեր հարևան մոլորակների ու նրանց բնական արբանյակների վրա, ու կծնվեն նոր Նյուտոններ ու Գալիլեյներ, Էյնշտեյններ ու Ֆարադեյներ, Մաքսվելներ ու Համբարձումյաններ, Գագարիններ. կա՞ սահման տիեզերական խելահեղության:

Ձ-57. Հետևյալ զույգ նախադասություններում ընդգծվածների միջոցով բացատրել որոշյալության-անորոշության քերականական կարգի իմաստն ու արտահայտության միջոցները:

1. ա/ Մի ուսանող ալ կարմիր վարդ էր փնտրում, որ նվիրեր սիրած աղջկան: բ/ Վաղ առավոտյան ուսանողը բացեց պատուհանը և տեսավ հրաշք վարդը:
2. ա./ Քամին թոցնում էր և իր սառը թևին առած՝ տանում ամեն ինչ: բ/ Մի մոռացկոտ քամի ծուլորեն թափառում էր փողոցից փողոց:
3. ա/ Մի բարակ-քաղաքավարի անձրև է եկել ժամերով, Եկել է առանց դադարի.../ՊՍ/: բ/ Հեռու չէ առավոտն արդեն: Եվ գուցե արևի ահից Դադարեց անձրևն էլ հիմա /ՊՍ/:
4. ա/ Մենք ինքներս վազում մեր հետևից Ու չենք կարողանում ինքներս մեզ հասնել: Եվ հենց դա՞ չէ արդյոք, որ կոչվում է կարոտ: բ/ Ես մթի՛ն-մթի՛ն կարոտն այնպե՛ս գիտեմ, Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին.. /ՊՍ/:

Ձ-58. Արտագրել՝ կետերի փոխարեն ավելացնելով ը կամ ն հոդը. պատճառաբանել ընտրությունը:

Գետ• ու ճանապարհ• իրար փաթաթված գլորվում էին կիրճում: Գետ• Աղստև• էր, ճանապարհ• Դե այն, ինչ որ մեկին տուն է տանում, մեկին հանում տնից, նառի պես առաջն ընկնում տանու՛մ, տանում է կապում աշխարհի հետ: Եվ գետ• ու ճանապարհ• իրար փաթաթված գնում էին: Գետ•՝ զզզված, ճանապարհ•

Նստում են գետի ափի•: Գետի հատակի• ցից-ցից քարեր կան՝ մաշվում են, մաշվում ու չեն մաշվում, գետ• սարից բաց թողնված կծիկ• է, իսկ ջուր•՝ ճերմակ նժույգի՝ քամու• տված բաշ:

-Բոլոր գետեր•, նաև մեր Աղստև•, ժամանակ են քշում: Այս ալիքներից ամեն մեկ• մի վայրկյան է, մի րոպե, կամ...չգիտեմ, ինչ-որ ժամանակ,- ասում է Ջեմմա•:

Սեդա• չի պատասխանում:

-Եթե չիմանայի, որ մի տեղ, մի գետափի• այս ծառից ավելի նեղն ընկած ծառ կա, ես սրան կհամարեի ամենադժբախտ ծառ•: Բայց համոզված եմ, որ կա՝ թեքվել է, ուր որ է շուռ կգա, և դրա համար էլ այս ծառի վիճակ• այնքան էլ սարսափելի չի թվում:

- Հա՜, գետ• կյանք• է, ծառեր•՝ մարդիկ,- հասկացավ Սեդա•:

Էմմա• ժպտում էր, որ ասած• տեղ է հասել, ու մտածում, որ «Աշխարհի ամենադժբախտ մարդ• որոնում, չեղած տեղից մեկին գտնում է, որին ինքը պետք է կարեկցի, ու ...շարունակի ապրել»:

...Գետ• ու ճանապարհ• իրար փաթաթված գնում էին, գետ•՝ գզգզված, ճանապարհ•

Ուստա Թորոս• տրտնջում էր, իսկ Ջեմմա• Սեդայի• հիշեցնում. «Չմոռանաս, երբ ենթակա• փոխվում է, «և»-ից առաջ դրվում է ստորակետ»:

/Մ. Գալշոյան/

Ձ-59. Ընդգծել հոդ ունեցող գոյականները, բացատրել հոդերի արտահայտած իմաստները և դասդասել ըստ առկայացման /տարորոշման/ կարգի քերականական իմաստների՝ որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն:

1. Ա՛նց կացա՜ն, Օրերս թռան, ա՛նց կացան.../ՀԹ/: 2. Ծիածանների լարերը վրան Ինձ քնար տվեց երկինքը մի օր, Որ երգեմ գովքը իմ մայր բնության Ու մեկ էլ երկրիս կյանքը լուսավոր: Բայց ես երգեցի աչքերդ միայն, Մեկ էլ՝ աչքերիդ երկինքները խոր, Բայց ես երգեցի հոնքերդ միայն, Մեկ էլ՝ հոնքերիդ կամարները վեհ, Բայց ես երգեցի մարմինդ միայն, Մեկ էլ՝ քո մարմնի մարմարները հրե, Բայց ես երգեցի ոտքերդ միայն, Մեկ էլ՝ ոտքերիդ հետքերն իմ սրտին. Ա՜խ, ես երգեցի քո սերը միայն, Սերդ, որ կամուրջ քանդեց իմ ճամփին.../ՀԾ/: 3. Լուսամուտդ փակես՝ մրրի՛կ կլինեմ, Հողմ կլինեմ ու կփշրեմ ապակիդ, Ու սենյակդ, ու աշխարհդ կխուժեմ, Ու կխառնեմ թղթե՛րդ, կյա՛նքդ, հոգի՜դ.../ՄԿ/: 4. Մեղավոր շուրթով մրմնջում եմ ես,- Ամենի համար, ինչ տվել ես դու՝ Այս դժվար սիրուս, այս խռովքներիս, այս վերքիս համար, Վերացումներիս, վեհացումներիս ու փառքիս համար, Քեզ բյուր օրհնություն.../Ն/: 5. Ես՝ հոդախախտով տառապողս ողջ կյանքում, Խոնավության բանտարկյալս ու գերիս, Տալիս եմ ձեզ իմ ցավզգա ոտքերիս Խորհուրդը խոր և հրամանն ահարկու.../ՊՍ/:

🕮 Ձ-60. Կարդալ և առանձին-առանձին դուրս գրել իրանիշ ու անձնանիշ գոյականները:

«Բնությունը միակ գիրքն է, որի յուրաքանչյուր էջը լի է խոր իմաստով»,- Գյոթեի այս խոսքերն ենք հիշում, երբ ծանոթանում ենք եղանակը, երկրաշարժը, հրաբուխը ու բնության մյուս արհավիրքները գուշակող կենդանիների ու բույսերի զարմանալի հատկություններին: Զարմանալ կարելի է, թե ինչպես է մեղուզան զգում երկրաշարժը, գորտը «կռահում» եղանակի փոփոխությունը, կամ թագավորական գարնանածաղիկն ավետում մոտալուտ հրաբխի ժայթքումը: Մ. Լոմոնոսովը գրել է. «Մարդուն հարկ չէր լինի աստծուց որևէ բան պահանջել, եթե նա սովորեր ճիշտ կանխագուշակել եղանակը»... Հիանալի եղանակագետներ են թռչունները. փայտփորիկը եղանակը զգում է և դա ազդարարում է թմբկային հարվածներով: Ծիծեռնակը վատ եղանակին ցածր է թռչում, իսկ արևոտ, չոր եղանակին՝ բարձր: Իսկական «ծանրաչափ» է արտույտը. նրա երգը պարզ եղանակ է գուշակում: Մթնոլորտային ճնշման, օդի խոնավության, ջերմաստիճանի փոփոխությունների նկատմամբ շատ զգայուն է անտառի գեղեցկուհին՝ անտառահավը: Մթնոլորտային փոփոխությունների նկատմամբ շատ զգայուն են նաև ձկները: Ուշագրավ եղանակագետ են գորտերը, անձրևաորդերը:

Գերազանց «խոնավաչափեր» են ոչխարները: Պատմում են, որ մի անգամ պարզ, արևոտ եղանակին Ի. Նյուտոնը դուրս է եկել զբոսանքի և հանդիպել մի հովվի: Վերջինս նրան խորհուրդ է տվել տուն գնալ, եթե չի ուզում անձրևի տակ ընկնել: Նյուտոնը չի լսել, սակայն կես ժամ հետո հորդ անձրևը թրջել է նրան մինչև ոսկորները: Հովվի գուշակությանը օգնել էին ոչխարները:

Իսկ 1794 թ. աշնանը սարդերն «օգնեցին» Նապոլեոնին...

/Ըստ Պ. Ծատուրյանի/

& Բ. Նույն գրքի կամ այլ աղբյուրների օգնությամբ պատմել, թե ինչպես՝
ա/ ոչխարներն օգնեցին հովվին.
բ/ սարդերն օգնեցին Նապոլեոնին.
գ/ սագերը փրկեցին Հռոմը:

Գ. Դուրս գրել կենդանական աշխարհի ներկայացուցիչների անունները: Կենդանիներ անվանող գոյականների իմաստային դաշտը բաժանել ենթադաշտերի՝ դրանք լրացնելով նաև ձեր օրինակներով:

🕮 Ձ-61. Ա. Կարդալ հատվածը և բացատրել անձի և իրի առման քերականական կարգը:

❖ Բ. Հայտնի է, որ անշունչ առարկաներին և կենդանիներին մարդկային հատկություններ վերագրելը կոչվում է անձնավորում: Հատկապես ո՞ր ստեղծագործություններին է այն բնորոշ. բերել օրինակներ: Իսկ եթե մարդու անունն է իրի առմամբ օգտագործվում, ի՞նչ է նշանակում:

Հայրս Սեն Բեռնարն էր, մայրս՝ Ջեյնը, իսկ ես՝ նրանց ծագուկը: Մայրս ասում էր, որ մենք՝ շներս, աշխարհ ենք եկել բարի ու լավ նպատակների համար: Ասում էր, որ մարդիկ էլ, եթե այդպես են ապրում, արժանիորեն

վարձատրվում են այնտեղ՝ երկնքում.... Երբ ինձ վաճառեցին, ես և մայրս արտասվախառն աչքերով մեկ անգամ էլ նայեցինք միմյանց, և նա վերջին անգամ կրկնեց իր պատգամը. «Օգնի՛ր՝ առանց մտածելու քո եսի մասին...»:

Իմ նոր տունը մեծ էր ու շքեղ: Բոլորն ինձ սիրում ու փայփայում էին և կանչում մորս կնքած անունով՝ Այլի... Երջանկությունս հազարապատկվեց, երբ մայր դարձա: Իմ ձագուկն ուներ քաղցր, անմեղ աչուկներ, անուշ մռուք և թավշանման մորք:

Մի օր ինչ-որ մարդիկ եկան և ձագուկիս իրենց հետ տարան: Վերադարձան և տիրոջս շնորհավորեցին ինչ-որ հայտնագործության համար: Ես վազեցի ձագուկիս մոտ, մոտեցրի դունչս իմ փոքրիկին: Նա արյունոտ էր: Սկսեցի լիզել վերքերը: Նա գլուխը դիպցրեց ինձ ու թույլ նվաց: Հետո թուլացած ընկավ: Թավշյա դնչիկն այլևս չշնչեց, և հանգավ: Տերս մի պահ դադարեցրեց քննարկումը, սպասավորին հրամայեց. «Դրան տար թաղիր պարտեզի հեռավոր անկյունում»: Ես կաղալով վազեցի ծառայի հետևից՝ երջանիկ ու շնորհակալ, որ փոքրիկս այլևս ցավ չի զգում, խաղաղ քնած է: Սպասավորը փոս փորեց և ձագուկիս դրեց մեջը: Երջանիկ էի, որովհետև կարծում էի, թե նա աճելու է ու դուրս գալու հողի տակից: Դրա համար էլ ջանասիրաբար օգնում էի ծառայողին: Երբ նա գործը վերջացրեց, շոյեց գլուխս և արցունքոտ աչքերով շշնջաց. «Իմ խե՛ղճ շնիկ, իսկ դու փրկեցիր նրա երեխայի կյանքը»: Ուղիղ երկու շաբաթ հսկեցի, բայց ձագուկս դուրս չէր գալիս: Վերջին շաբաթը սիրտս ահ ընկավ: Զգում էի, որ ինչ-որ սարսափելի բան է կատարվել: Վախից հիվանդացա: Իսկ այսօր արդեն ոտքի վրա կանգնել չեմ կարողանում: Գիտեմ, որ պիտի գնամ այնտեղ, ուր գնում են կենդանիները, երբ հեռանում են ա՛յս աշխարհից...

/Ըստ Մարք Թվենի/

ՀՈԼՈՎ ԵՎ ՀՈԼՈՎՈՒՄ

** Չ-62. Դուրս գրել հոլովված գոյականները, բացատրել կատարված ձևաիմաստային փոփոխությունները:**

Մի մարդ երազ տեսավ. նա քայլում էր ամայի ավազուտներով, իսկ կողքին՝ Աստված: Ավազի վրա նա նկատեց ոտնահետքերի երկու շղթա. մեկն իրենը, մյուսը՝ Աստծունը: Մարդը երկրից երկինք էր նայում, ուր կինոժապավենի պես պտտվում էին իր կյանքի պատկերները՝ տխուր և ուրախ: Երբ անհետացավ վերջին պատկերը, մարդը նորից նայեց ավազի վրայի ոտնահետքերին: Հանկարծ սարսափով նկատեց, որ հաճախ իր անցած ճանապարհին ձգվում էր ոտնահետքերի միայն մի շղթա: Նա նկատեց նաև, որ դրանք համընկնում են իր կյանքի ամենադժվար և ծանր օրերին:

Մարդը չափազանց տխրեց և հարցրեց Աստծուն.

- Տե՛ր Աստված, դու չէի՞ր ասում, որ եթե ես քո ճանապարհով գնամ, ինձ մենակ չես թողնի: Սակայն ես նկատեցի, որ իմ կյանքի ամենադժվար պահերին ավազուտներին միայն իմ ոտնահետքերն էին: Ինչո՞ւ դու ինձ մենակ թողեցիր հենց ա՛յն պահերին, երբ ես քո կարիքը զգում էի:

Աստված պատասխանեց.

- Իմ թանկագին զավակ, ես քեզ շա՜տ եմ սիրում և երբեք չեմ լքել քեզ: Երբ քո կյանքում եղել են դժբախտություն և փորձություններ, ավազների վրա, իրոք, ձգվում էր ոտնահետքերի մեկ շղթա: Սակայն քեզ համար դժվար օրերին ես ոչ միայն չեմ լքել քեզ, այլև քեզ իմ ձեռքերի վրա եմ տարել: Իսկ ոտնահետքերն յոմն Լին... **/Ջ. Գյուլամիրյանի «Խոսքի զարգացումից»/**

🕮 Ձ-63. Ա. Հոլովել գիրք, որդի, տղա, առու, արյուն, շարժում **գոյականները:**

Բ. Ընտրել դրանցից մեկը և յուրաքանչյուր հոլովաձևին բնորոշ շարահյուսական կիրառություններին համաձայն՝ կազմել նախադասություններ:

🕮 Ձ-64. Հայերենի հոլովական ձևերը կազմվում են՝ ա/ բառի հիմքի վրա հոլովական վերջավորության ավելացմամբ /օր.՝ օր+վա-օրվա, ընկեր +ոջ -- ընկերոջ/. **բ/ բառի վերջնահնչյուն ձայնավորի կամ բաղաձայնի փոփոխությամբ /օր.՝** գինի-գինու, Գրիգորենք-Գրիգորենց/. **գ/ բառամիջի ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ՝ հերթագայությամբ /օր.՝** տուն-տան, ուրախություն – ուրախության/. **դ/ միջանկյալ հիմքից /օր.** ընկերոջ +ից – ընկերոջից/: **Դուրս գրել գոյականները և բացատրել, թե ինչպես են կազմվել կամ կկազմվեն նրանց հոլովական ձևերը:**

Աշխարհի շատ երկրների գիտնականներ՝ ֆիզիկոսներ, աստղագետներ ու տիեզերական ճառագայթների մասնագետներ, որոնք անձանոթ են Հայաստանին ու նրա աշխարհագրությանը, շատ լավ գիտեն Արագածի լանջերին գտնվող Բյուրական գյուղի ու Ամբերդ ամրոցի անունները, որտեղից նրանց են հասնում գալակտիկաների ծագման ամենից հանդուգն ու հետաքրքրական գիտական վարկածները, և որտեղ նրանք հավաքվում են կարևոր գիտաժողովների:

Հենց Արագածի լանջերին էր, որ Ալիխանյան եղբայրները սանձեցին տիեզերական ճառագայթների կապույտը, և այնտեղ էր, որ մեր աստղերի պես ցրված ժողովրդի զավակ Վիկտոր Համբարձումյանը հավաստեց, թե աստղերն ու մոլորակները մեկընդմիշտ չեն ստեղծվել, այլ ստեղծվում ու ձևավորվում են անընդհատ...

Կան մարդիկ, որոնք իրենց կյանքով ու գործով դառնում են մի ամբողջ ժողովրդի «ազնվազարմության վկայականը», նրա խորհրդանիշն ու հարատևման խթանը: Այդպիսիներից է գիտնական-աստղագետ Վիկտոր Համբարձումյանը: ...Հեռավոր Ավստրալիայի գիտնական Հաքսլին բացականչել է. «Վիկտոր Համբարձումյանը փայլում է գիտության երկնակամարում որպես կարմիր գերհսկա աստղ...»: Այդ նրա՝ Վիկտոր Համբարձումյանի շնորհիվ է, որ համաշխարհային գիտության ոլորտներում քաղաքացիություն է ստացել հայերեն «աստղասփյուռ» բառը, իսկ հայոց լեռներում կորած անհայտ ու անշուք Բյուրական գյուղի անունը, այստեղ կառուցված աստղադիտարանի շնորհիվ, հայտնի դարձել ամբողջ աշխարհում...

Պատահական չէ թերթերից մեկի խմբագրությունում ստացված այն նամակը, որի պատանի հեղինակները խնդրել են պատմել, թե որ դարում է

ապրել ու ստեղծագործել աստղագետ Վիկտոր Համբարձումյանը... Չէ՞ որ առասպելը տարիք չի ճանաչում. և նրա հերոսը հավասար իրավունքով կարող է գոյություն ունենալ և՛ 5-րդ դարում, և՛ 15-րդ դարում, և՛ նաև այսո՛ր ու...վաղը... /Գ. Էմին/

** Չ-65. Գրել հետևյալ գոյականների եզակի տրականը և բացատրել կազմության օրինաչափությունները՝ ելնելով նրանց ձևային և իմաստային ընդհանրություններից: Լրացնել բառաշարքերը 4-5 բառով:**

1. Անտառ, գիրք, առու, միտք.....
2. Ձի , ամուսին, գինի, այգի, անկողին.....
3. Ձուկ, մանուկ, շարժում....
4. Ընկեր, քույր, տեր, կին.....
5. Օր, ամիս, տարի....
6. Քաջություն, ազնվություն, շուն, տուն....
7. Նախահայր, հորեղբայր, մայր...
8. Աղջիկ, գալուստ, սեր, մահ, դուստր.....:

Չ-66. Կազմել արքա, կատու, ձու, առու, Լուսինե, վերարկու, Կարինե, ափսե, ժողովածու, գինի, երեկո, այցելու, Մարո, լու, Կարո, մեղու, Սարո, տղա **բառերի տրական հոլովը և բացատրել կազմության օրինաչափությունները:**

Չ-67. Կարդալ, դուրս գրել տրական հոլովով դրված գոյականներն իրենց լրացյալների հետ՝ տարբերակելով 2 հիմնական կիրառություն՝
ա/ տրականը որպես գոյականի կամ գոյականաբար գործածված բառի լրացում,
բ/ տրականը որպես բայի, բայանվան կամ ածականի լրացում:

Հին մատյանը մի ամբողջ աշխարհ է՝ խայտաբղետ գույներով, հնչյուններով, բուրմունքով լի: Շրջում եք տաքացրած կաթի փոքր-ինչ դեղնավուն գույն ունեցող մագաղաթի թերթերը և ասես մեկնում եք մի հեռավոր ճանապարհորդության: Շրջում եք թերթերը, և այդ տրամադրությունը չի լքում ձեզ: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է կիսախորանով՝ ճակատազարդով, գույների բարդ ու բազմազան անցումներով, գծերի գլխապտույտ հյուսվածքներով, ձևերի արտասովոր բազմազանությամբ՝ ամփոփված էջի վերին մասում... Հին մատյանները երաժշտություն են: Ամեն մատյան իր մեղեդին ունի... Մի զարմանալի կապ կա հին մատյանների երաժշտության և հայկական ժողովրդական մեղեդիների միջև՝ թախծալից ու ոգեշունչ, գեղեցկությամբ առինքնող: Եթե հնար լիներ գտնել դրանց գունային համապատասխանությունը, կստանայինք խորանարդների, մանրանկարների և լուսացանցերի ձայնաշարեր: Երաժշտության լեզվով թարգմանելով հին ձեռագրերի անկրկնելի կոլորիտը՝ տառերի սևությունը, գլխատառերի փայլփլուն ոսկին, լաջվարդը, փիրուզը և նկարի որդան կարմիրը՝ կծորան հայի սրտում ծնված լուսավոր ու ջինջ մեղեդիները:

/Ըստ Կ. Բակշիի/

🕮 Ձ-68. Տրված բառաշարքում առանձնացնել բացառական հոլովով դրված գոյականները:

Հնուց, քաղաքից, հարգալից, սերնդակից, վաղուց, այգուց, հայելուց, սիրուց, ժամանակակից, հուզումնալից, մոլեկուլից, հարաբերակից, հատակից, հուզումից, մենախուց, ոտեկից, մետաղացից, ցանցից, նախամարդուց, ծաղկալից, ծաղկից, ճեմուղուց, հովազակատվից, հանգամանալից, կուսակից, հեռվից, առվից, դրկից, ճայտկուց /խոտաբույս/, դեղնուց, մոխրափոշուց, սեռակից:

🕮 Ձ-69. Կազմել տրված գոյականների բացառական և գործիական հոլովները՝ ուշադրություն դարձնելով, թե ո՞ր հիմքով են կազմվում՝ ուղղականի՞, թե՞ տրականի: Բացատրել կատարված հնչյունափոխությունը:

Մատիտ, տետր, անտառ, ծով, դուռ, վիշտ, գիրք, տուն, անկողին, արյուն, գրիչ, սար, ձիավոր, քույր, ընկեր, հայր, մայր, եղբայր, հերոսություն, արիություն, շարժում, ընթացք, մանկատուն:

🕮 Ձ-70. Դուրս գրել գործիական հոլովով դրված գոյականները. կազմել մնացած գոյականների գործիական հոլովը:

...Եկել են դարեր, անցել են դարեր
Քեզ մատնել սրի, ավերի, գաղթի:
Բայց տիրացել ես այսօր մի բախտի,
Որ մեծ է քո հին վշտերից անգամ,
Եվ լավ է այնքան, ինչ քաղցր է զգալ,
Որ այսօր, երբ որ աշխարհը համայն
Կշեռքի երկու թաթի է նման,
Դու քո պատմության դասերով բոլոր,
Քո երջանկությամբ ու բախտով քո նոր,
Քո հին անունով, կյանքով դժվարին,
Ծանր կանգնած ես այն մեծ նժարին,
Որ ծանր էր կշռում ոչ թե արկերով,
Ոչ թե վառոդի, զենքի հակերով,
Ոչ թե ավերված կրքով կատաղի,
Ոչ թե մայրենի արցունքով աղի,
Այլ երջանկության մշտավառ հրով,
Խաղաղ ծերությամբ, շիկնանքով սիրո,
Հպարտ մայրությամբ, ծիծաղով մանկան,
Ձեռքի սեղմումով բարեկամական...
Այն մեծ նժարին, որտեղ ապագան
Ու պատմությունն են դարձել կշռաքար...

/Պ. Սևակ/

🕮 Ձ-71. Ընտրել այն գոյականները, որոնք ունեն ներգոյական հոլովաձև: Ո՞ր գոյականները չունեն այդ հոլովաձևը: Հնարավորության դեպքում վերջիններիս համապատասխան քերականական իմաստն արտահայտել նկարագրական եղանակով /«տրական հոլով + մեջ կապը»/:

Ինքնաթիռ, գարուն, այգի, գիշեր, հունվար, օդանավակայան, սենյակ, քաղաք, սլաք, մեխ, դրոշ, թշնամություն, կարմրություն, լավություն, տնօրեն, ճարտարապետ, տետր, տարի, հայրենիք, հայր, քույր, տեր, միտք:

🕮 Ձ-72. Դուրս գրել բացառական, գործիական, ներգոյական հոլովներով դրված գոյականները՝ նշելով՝ տրականի ձևի՞ց են կազմվել, թե՞ ուղղականի: Վերականգնել նրանց ուղիղ ձևերը:

1. Ասես հողից ես բարձրանում գոլորշու հետ, Ասես կաթում ես խաղողի լացող որթից, Ասես հյուսվում շաղից, շողից, առավոտից Ու ծառերին ասես ծաղկում ես քնքշաթերթ: 2. Ես վախենում եմ բացվել այստեղ, Ես վախենում եմ քնքուշ խոսքից, Քաշվում եմ լինել հորդ ու անկեղծ, Ամաչում եմ իմ

տառապանքից: Թե իմանայիք ի՜նչ անբոնելի Վայրկյանից է իմ երգը ծնվել, Ի՜նչ անթևավոր հանդիպումներից Թևեր է առել ու հյուսվել է վեր: 3. Բողբոջները ծաղկով են լցվել, տե՛ս, Բողբոջները կյանքով են խլրտում: 4. Կանչում եմ քեզ ոչ գարնան ծառերի անմեղությամբ, Եվ ո՛չ անհոգությամբ գարնան առվակների, Կանչում եմ քեզ իմ աշունով, աշնան հասունությամբ, Թափվող տերևների տխրությունով անափ Եվ տագնապով ցամքող գետերի: ...Արի՛, Քեզ կանչում եմ աշնան նվիրումով, աշնան շռայլությամբ, Քեզ կանչում եմ վերջին, վերջի՜ն իմ խենթությամբ, Վերջին իմ խենթություն, Արի՛... 5. Ծող ու շռայլ այս աշխարհում, Հրայրքներում, հմայքներում, Սրտիդ խորունկ խորքում ընկած՝ Քո Հայաստան աշխարհն եմ ես: 7. Հայաստան ասում, լեռներ եմ հիշում, Գագաթներ՝ կորած ձյուներում հավերժ, Ձորեր՝ ընկղմված ամպի մշուշում: **/Մ. Կապուտիկյան/**

Ձ-73. Տրված գոյականները դասդասել ըստ հոլովումների՝

ԱՐՏԱՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ						ՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ	
ի	**ու**	**վա**	**ան**	**ոջ**	**ց**	**ա**	**ո**

Ծառ, արևածագ, սալորոջի, գառ, ամառ, քեռակին, լավություն, ոսկի, գրիչ, զբոսայգի, արքայազն, ռադիոտեխնիկա, նախահայր, պատանի, ծագում, գարուն, շարժում, Գրիգորենք, մորաքույր, մորքի, մանուկ, տարի, օր, դատասրահ, ալիք, մեխանիկա, տիեզերք, աստղ, լուսազդագիր, ծունկ, խնձորենի, գալակտիկա, Արամենք, սկեսուր, աշուն, մագնիսականություն, քաղաքացի, էլեկտրոն, արքայորդի, Լոռի, Ռաֆֆի, վանահայր, նախամարդ, դասընկեր, էլեկտրականություն, կնքահայր, աստվածամայր, հաճախականություն, ճնշում, Վարդանանք:

Ձ-74. Դուրս գրել այն գոյականները, որոնք շեղվում են հոլովման ընդհանուր օրինաչափություններից, այսինքն՝ ունեն այլաձև հոլովում:

Հույս, փաղաքշանք, ուրվական, լույս, փաթիլ, ընկեր, ձյուն, աղջիկ, սեր, սուգ, կայսր, նախահայր, զեփյուռ, խնդրագիրք, կորուստ, դուստր, մատյան, գինի, այգի, գալուստ, ծնունդ, արևածագ, սառույց, Աստված, պատիվ, աղբյուր, հուր, փորձ, մահ, աչք, աստղ:

Ձ-75. Հոլովել տրված բառերը և պատճառաբանել զուգաձևությունների գոյությունը: Զուգահեռ ձևերից յուրաքանչյուրն առավելապես խոսքի ո՛ր ոճին է յուրահատուկ: /Փակագծերում նշված թիվը ցույց է տալիս զուգաձևերի հնարավոր դեպքերը/:

● Ծագում /2/	● ցասում /2/	● ամիս/2/	●քեռ /2/
անկյուն /2/	ծնունդ /2/	լեռ /2/	այրի /2
տարի /2/	հույս /2/	կայսր /2/	Լոռի /3/
դար /3/	սյուն /2/	անուն /2/	օր /2/
լույս /2/	Ռաֆֆի /2/	սուգ/ 2/	թաքուստ /2/

տալ /2/	աներ /3/	պատիվ /2/	Աստված /3/
տեգր /3/	մահ /3/	մամուլ /2/	մատանի /2/
ամառ /2/	հանգիստ /2/	գիշեր /2/	առավոտ /2/
շարժում /2/	կորուստ /2/	գալուստ/2/	Գյումրի /3/

🕮 Ձ-76. ❖ Շիրազի բանաստեղծական տողերում գտնել սեր բառի տրականի տարբեր ձևերը և փորձել պատճառաբանել հեղինակի նման-օրինակ ընտրությունը:

● Դառն է սիրո պտուղը միշտ, բայց ոչ ոք չի կշտացել, Ով խնդացել է մի անգամ, հազար անգամ է լացել: ● Համբույրդ հիշիր, սերը մայր է, ու մոր սիրով ինձ գթա, Թե ոչ մարդիկ, ապա աստղերն ինձ վկա են արցունքով, Որ գաղտնիք ես պահել սիրուս ծաղիկն անգութ քո թագով: ● Կույր են սերիս աչքերը, Ա՜խ, իմ գերի աչքերը...

🕮 Ձ-77. Արտագրել՝ փակագծերում տրված գոյականները գործածելով համապատասխան հոլովաձևերով:

Մարդկությունը չի ուզում ապրել առանց մեծ /մարդ/. այն շաբաթ, երբ մահացավ /Միքելանջելո/, ծնվեց /Գալիլեո Գալիլեյ/: Երջանկությունը և դժբախտությունը շատ անհավասարաչափ են բաշխվել նրա /ճակատագիր/. հիրավի, ահազդու է եղել նրա /կյանք/ /մայրամուտ/, իսկ /արշալույս/ /պատանեկություն/ /տարի/, կենսուրախ էր և հաջողակ: /Հայր/ երազում էր նրան բժիշկ տեսնել, սակայն Եվկլիդեսի և Արքիմեդի /գիրք/ /մագնիս/ պես դեպի իրենց էին ձգում /Գալիլեյ/...

1616թ. մարտի 5-ին Հռոմի սրբազան գրաքննչական /կոմիտե/ արգելում է /Կոպեռնիկոս/ և /Ռոսկարինի/ /գիրք/... Այս /արգելք/ ոչ միայն վրեժխնդրություն էր հանգուցյալ /Կոպեռնիկոս/, այլև սպառնալիք էր՝ ուղղված իրեն՝ ողջ ու առողջ /Գալիլեյ/: Գալիլեյը չի էլ խանդավառվում /հույսեր/, երբ Հռոմ էր տանում իր «Երկխոսություն աշխարհի 2 գլխավոր /համակարգ/ մասին» /աշխատություն/... Վատիկանը /զայրույթ/ կատաղեց: Պապը վշտահար տեսք ունի: «Աստված թող ձերի նրան, որ սկսեց /դատողություն/ անել նոր /ուսմունք/ և սուրբ /գիրք/ վերաբերող բաների մասին...»:

Գալիլեյը ստիպված եղավ հրաժարվել /գիտնական/ ամենավեհ /համոզմունք/ և կրել տառապանքն այն /մարդ/, ով պարտվում է /տանջանք/ և /խարույկ/ /ահ/... Այն, որ Գալիլեյը, վեր կենալով /հատակ/, իբր թե բացականչել է՝ «Եվ այնուամենայնիվ նա պտտվում է», ավելի շատ առասպել է՝ ցանկալի, բայց՝ առասպել...

1979 թ. նոյեմբերին Վատիկանի /գիտությունների ակադեմիա/ տեղի էր ունենում /Ալբերտ Էյնշտեյն/ 100-ամյակին նվիրված /ծիսակատարություն/: Ակադեմիայի /անդամ/ առջև ելույթ է ունենում /Հովհան-Պողոս Երկրորդ պապ/.- «Գալիլեյ և Էյնշտեյն...Յուրաքանչյուրը ստեղծել է մի ամբողջ դարաշրջան»: Ի՞նչ է նշանակում այս /ճառ/: /Եկեղեցի/ կողմից /«Ինկվիզիցիայի կալանվոր»/ արդարացու՞մ: Եթե այդպես է, ապա այն ուշացել էր 346 /տարի/:

🕮 Ջ-78. Ա. Կարդալ և դուրս գրել գոյականները, որոշել նրանց բառա-քերականական հատկանիշները:

Բ. Ուշադրություն դարձնել ոչ գրական բառերին ու բառաձևերին և դրանք փոխարինել գրական համարժեքներով /ինչպես օրինակ՝ թախտեն – թախտից/:

Գ. Դուրս գրել հարադրական բարդությունները՝ առանձնացնելով գոյականները:

Դ. Գրել ընդգծված բառաձևերի ուղիղ ձևերը և կազմել գոյականական բառակապակցություններ, որոնցում ստորադաս եզրը հատկանիշ արտահայտող բառ է /ածական է/:

...Աստծու վրա հույս ունեցիր, բայց ինքդ մի՛ թերսնա,
Աստղով ծնված ծույլի բախտն էլ անաստղ մթնում կմնա:
Լավ ականջ դիր՝ այս խոսքերը հայր կդառնան ջահելին,
Միշտ լավություն արա մարդուն՝ մարդն է մարդու հայելին:
...Անկնիկ տուն՝ անջուր ջաղաց,
Անկին մարդը իր սիրտն աղաց...
Սերն, իմացիր, սանդուղք է միշտ՝ ոտ առ ոտ ես ելնելու,
Մինչև ոտքը չհամբուրես, բերանին չես հասնելու...
...Հալալ մարդը մազ էլ դառնա, թրով էլ չի կտրվի,
Գերան դառնա հարամն անահ՝ մի օր պիտի կոտրվի:
Ամեն մարդու պարտքն ու գործն է լավության դեմ՝ լավություն,
Բայց մարդ մարդու բանն է միայն՝ չարության դեմ՝ բարություն...
-Էլ ո՞րն ասեմ... Հավքն որ հավք է՝ էլի երկու թև ունի՝
Մեկն արհեստն է, մեկն՝ ուսումը, այս էլ մտքից մի՛ հանի:
Ո՛վ իմանա, մարդ ենք, էլի, միտքը մարդուն պետք կգա,
Ամենասև արհեստն անգամ բիլազուկ է միշտ ոսկյա: /Հ. Շիրազ/

◆ Ե. Շիրազի ո՞ր ստեղծագործությունից է. բնորոշել ոճական առանձնահատկությունները:

Ա Ծ Ա Կ Ա Ն

🕮 Ջ-79. Գտնել ածականները և դուրս գրել իրենց լրացյալների հետ՝ որոշելով լրացյալների խոսքիմասային պատկանելությունը:

Խորհուրդ՝ հիասքանչ ու զարմանալի....
Ես գիշերային կիսաքնի մեջ
Վերծանում էի դարերով լռած խազերը մեր հին,
Ու մեղեդին էր հնչում աշխարհում:
Նա գարնանաբեր հարավի հնոցն ու շունչն ուներ.
Եվ հունչն ուներ որձաքարերից բխող աղբյուրի...
Եվ հուշում էր նա,
Որ գեղեցկագույն դեմքը աշխարհում
Դա ազատության դեմքն է սրբազան,
Ամենամաքուր ձեռքերն աշխարհում
Ձեռքերն են խղճի,
Եվ արարիչը ամենազորեղ
Քրտինքի ցողն է՝ փոքրիկ ու ցոլուն...
Խորհուրդ՝ հիասքանչ ու ցավո՜տ,
ցավո՜տ... /Վ. Դավթյան/

🕮 Ջ-80. Պատասխանել /ինչքան հնարավոր է՝ շատ ածականներ ընտրելով՝ ուղիղ և փոխաբերական իմաստներով/՝ մարդը կարող է ունենալ ինչպիսի՞
ա/ քիթ բ/ շրթունքներ գ/ աչքեր դ/ մազեր ե/ հայացք

🕮 Ջ-81. Յուրաքանչյուր նախադասության վերջում տրված ածականները դնել համապատասխան տեղերում:

1.... արևը բարձրանում էր սարերից, և իբրև մի ... ու ... սափոր, շրջում էր իր բերանը և թափում գինին մեր արտերի վրա: **/հայրենի, ոսկեհասկ, կարմիր, հակինթյա, վիթխարի, կապույտ, ոսկեզօծ/** 2.Հեռու՜-հեռու՜, սարերով և դաշտերով վազում և կարկաչում են առվակները. վազում ու զրնգում է և սիրտը՝ ու **/տաք, բյուրավոր, արյունալիքը, մարդկային, կապույտ, արծաթագույն, կանաչ/** 3. հովը օրորում է բարդիների կատարները, ոտիները կախել են իրենց գլուխները ու գետակի վրա, որ քարեքար զարկվելով, արծաթ է դարձել ու ծնծղա: **/արծաթե, անուշ, փրփրան, երկնամետ, գոչգոչուն, երազուն, ճյուղաշատ/**

🕮 Ջ-82. ❖ Արտագրել հատվածն առանց ածականների և համեմատելով՝ բացատրել ածականների արտահայտչական դերը:

Եթե ոսկեհանդերձ դաշտից շուրջդ նայես, նախ երևում են կանաչալանջ լեռները, որոնք կանաչել են կանաչ խոտից, ապա կապու՜յտ-կապույտ լեռներ, որոնք կապտել են սպիտակակապտավուն ու կապտաերկնագույն մշուշի պատճառով, և ապա ավելի հեռվում՝ սպիտակ լեռներ, որոնք սպիտակել են սպիտակաթույր ձյունից: Կապույտ լեռների արևկող լանջերին երևում են վերջին գյուղերը: Կանաչազարդ գյուղերից վերև զրնգուն ջրաղացներն են, որոնք թառել են բարձրաբերձ լեռներից իջնող զուլալ աղբյուրների վրա: Ջրաղացներից վերև ճերմա՜կ-ճերմա՜կ ամպերն են, հպարտ արծիվներն ու կուսական ձյունը: **/Ըստ Գ. Էմինի/**

🕮 Ջ-83. Ա. Արտագրել հատվածը՝ կետերի փոխարեն ածականներ գրելով:
❖ Բ. Համեմատել երկու հատվածները և բացատրել ածականի ոճական արժեքը:

Օ՜, լազուր թագավորություն, օ՜ թագավորություն լազուրի, լույսի, երիտասարդության և երջանկության: Ես քեզ տեսա իմ երազում: Կարապի կրծքի նման առագաստն ուռչում էր ... ռազմաղղոշների տակ: Շուրջս տեսնում էի միայն ծովը՝ ամբողջովին բռնված ..., ծփանքով, իսկ գլխիս վերևը՝ նույնպիսի ծով, որի վրայով կարծես ծիծաղելով, քաջահաղթ լողում էր արեգակը: Թեթև սուզվելով ալիքների մեջ՝ լողում էր մեր նավակը: ... քամին չէր նրան տանողը: Նրան վարում էին մեր սեփական սրտերը՝ ..., Ուր ուզում էինք, այն կողմն էլ նա սլանում էր հնազանդ: Մենք պատահում էինք կղզիների, ...
կղզիների, որոնք շողշողում էին ակների, հակինթի ու զմրուխտի նման: ափերից անուշահոտություն էր բուրում: Այս կղզիներից մի քանիսը վարդերի ու հովտաշուշանների անձրև էին թափում մեզ վրա, մյուսներից հանկարծակի վեր էին սլանում ..., ... ու ... թռչունները: Թռչունները ճախրում էին

մեր վերևում, հովտաշուշաններն ու վարդերը հալվում էին մեր նավակի հարթ կողմերից սահող փրփուրի մեջ: Ծաղիկների ու թռչունների հետ միախառն մեզ էին հասնում հնչյուններ՝...: Եվ ամեն ինչ շրջապատում՝ երկինքը, ծովը, բարձրում ծփացող առագաստը, ղեկի ետևում քրքջացող ջուրը, այդ բոլորը սիրո մասին էին պատմում, ... դրախտի մասին:

/Ըստ Ի. Ս. Տուրգենևի/

☑ **Գ. Շարունակել՝ պատմելով լազուր թագավորության սիրո մասին, դրախտի մասին... :**

🕮 **Ձ-84. ❖ Գոյականների՝ հոլովական ձևերի միջոցով արտահայտած հատկանիշները փոխարինել ածականներով՝ նշելով իմաստառճական տարբերությունները:**

● լեռան ծաղիկ	● տիեզերքի ձգողություն	● Եվրոպայի շուկա
գարնան անձրև	ոսկուց գրիչ	հյուսիսի աստղ
մոր քնքշանք	տիեզերքի մարմիններ	մոլեկուլի տեսություն
Նոբելի մրցանակ	Լոմոնոսովի խնդիրներ	բայի սեռ
Ռեզերֆորդի մոդել	խոսքի արվեստ	լուսնի խավարում
գիտության աշխարհ	էլեկտրոնի թաղանթ	երկնքի լուսատու

🕮 **Ձ-85.** -ԱՆ, -ացի, -իչ, -ուտ, -ենի, -/ա/վոր, -ուն, -եղեն **ածանցներով և՛ գոյականներ, և՛ ածականներ կազմել:**

🕮 **Ձ-86.** Կազմել ածականներ՝

Ա. հետևյալ նախածանցներով՝ ան-, ապ-, դժ-, տ- , չ-, արտ-, գեր-, հակ-, ստոր-, տար-:

Բ. հետևյալ վերջածանցներով՝

ա/ -ան, -անի, -ատ, -ացի, -/ա/վետ, -ովի. **գ/** -գին, -գույն, -ե//-յա, -ելի//-ալի, -/ա/վուն.
բ/ -եղ, -եղեն, -ի, -իկ, -ին, -ուն, -/ա/վոր. **դ/** -իչ, -կոտ, -ոտ, -ուկ, -ական, -այինն, -ու:

🕮 **Ձ-87. Բնության մեջ եղած գույների բազմազան երանգներն արտահայտելու համար որպես բառակազմական սերող հիմքեր օգտագործվում են նաև որոշ առարկաների անուններ, և կազմվում են ածականներ՝ «առարկայի անուն + գույն» կաղապարով** /մանուշակ – մանուշակագույն/: **Տրված ենթակաղապարներով կազմել 5-10 ածականներ՝**

ա/ ծաղկի, մրգի, բույսի անուն + գույն /նարնջագույն/
բ/ կենդանու անուն + գույն /մկնագույն/
գ/ թանկագին քար + գույն /զմրուխտագույն/
դ/ մետաղի անուն + գույն /արծաթագույն/
ե/ բնության երևույթի, բնության իրերի անուն +գույն /ծովագույն/:

🕮 Ձ-88. Գրել արմատական գունանունները և դրանց օգնությամբ կազմել ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր գունանուններ /հարկ եղած դեպքում օգտվել բառարաններից/, ինչպես օրինակ՝ դեղին – դեղնոտ, դեղնագորշ, դեղնավուն, դեղնագույն, դեղնամույն, դեղնադարչնագույն, դեղնաթուխ, դեղնաթույր, դեղնախառը/ն/, դեղնականաչ, դեղնականաչավուն, դեղնակապույտ, դեղնակապտավուն, դեղնակարմիր, դեղնակարմրավուն, դեղնակինամոնագույն, դեղնուկ, դեղինկեկ, դեղնամած, դեղնանարնջագույն, դեղնանարնջավուն, դեղնաշխետ, դեղնասպիտակ, դեղնաճերմակ, դեղնասպիտակագույն, դեղնավարդագույն, դեղներանգ:

🕮 Ձ-89. Ա. Բացատրել հետևյալ ածականների կազմությունը:

Բ. Առանձնացնել համադրական բարդ ածականները և դասդասել ըստ տրված կաղապարների՝

ա/ ածական + գոյական
բ/ գոյական + գոյական
գ/ ածական կամ մակբայ + բայահիմք
դ/ թվական + գոյական
ե/ գոյական + բայահիմք
զ/ ածական + ածական

Ազատամիտ, խորախոր, խստապահանջ, վաղահաս, քառագագաթ, ծուռթաթ, նրբիրան, թեթևաշարժ, մեղմանուշ, արծվաքիթ, գմբեթաձև, աշխարհացունց, արագընթաց, երկծալ, երկնագույն, թխադեմ, առյուծասիրտ, հնգաթև, գործիմաց, վաղահաս, մարդատյաց, կաթնատու, շիկահեր, վաղամեռ, առյուծաձև, քնաբեր, մշտականաչ, ուղղաձիգ, սևաթույր, սահմանապահ, չարաչար, քսանմետրանոց, նավթագազային, արծաթաթույր, գինեգույն, ծով-ծիրանի, դժգույն, եռագույն, գույն-գույն, քնքշաբույր, նույնագույն, թխականաչ, փունջ-փունջ, կապտաժեռ, թթվաշ, կանաչավուն, շեկլիկ, սևսենի, թուխ-թխենի, շեկլիկ-մեկլիկ, կապտակապույտ, կարմրոտ, դեղնադժգույն, սևիկ-մնիկ, կապուտակ, սնուկ, կարմրածիրանագույն, ծովերանգ, նրբերանգ, յոթծալ, սև-սաթ, երեքգույն, խաժուժիկ, արծաթե, գունեղ, գունատ, ֆիզիկական, դեփ-դեղին, գաղափարական-քաղաքական, գիտաուսումնական, հունա-հռոմեական, անգլո-ամերիկյան:

🕮 Ձ-90. Տրված բառակապակցություններից կազմել ածականներ և դրանցով կազմել գոյականական բառակապակցություններ /հյուր ընդունող – հյուրընկալ հյուրընկալ ժողովուրդ/:

● միշտ բխող	● բերք տվող	● առյուծի սիրտ ունեցող
աղիքները խաշող	սիրտ կեղեքող	արագ ընթացող
լուրջ մտածող	բարձր խոսող	բույնն ավերված
աշխարհով մեկ սփռված	մարդ հալածող	նոր տնկված
զարդերով նախշված	աշխարհ ցնցող	կենտրոնից խույս տվող
երկինք մխրճված	վեճ հարուցող	երեք դուռ ունեցող
պոչ չունեցող	մոխրի գույն ունեցող	սև աչքեր ունեցող

🕮 Ձ-91. Տրված բառակապակցությունները և նրանցից առաջացած ածականները գործածել նախադասությունների մեջ՝ ցույց տալով կիրառական, քերականական տարբերությունները:

● բարձր որակ – բարձրորակ
ոսկե օղ – ոսկեօղ
բաց բերան – բացբերան
քար սիրտ – քարսիրտ

● չար աչք – չարաչք
տաք արյուն – տաքարյուն
բարձր աստիճան – բարձրաստիճան
երեք գույն – երեքգույն

🕮 Ձ-92. Արտագրել հատվածը՝ փակագծերում տրված բառերից ածանցման միջոցով ածականներ կազմելով: Ուշադրություն դարձնել ուղղագրությանը:

/Խորհուրդ/ գիտնականների ստեղծած /ատոմ/ ռումբի /փորձ/ պայթյունը իրացվեց 1949 թ. օգոստոսին /Միջին Ասիա/ մի գյուղում: Նրանց /վերջին/ նպատակը /ատոմ/ էներգիայի «խաղաղ» օգտագործումն էր... /Ատոմ/ զենքը մարդու կողմից բնության անտեսանելի գաղտնարանները թափանցելու արդյունքն էր: /Հավատ/ ջանքերի շնորհիվ, /ստեղծագործ/ անդուլ աշխատանքով, /հսկա/ լարվածությամբ է ստեղծվել այն. /ատոմ/ պայթյունը /մարդիկ/ բանականության բարձրագույն նվաճումն է և /մարդիկ/ հասարակության բարձրագույն խայտառակությունը: /Անգլիա/ /արքա/ ընկերության նիստի ժամանակ, դիմելով հրավիրվածների բարձր ժողովին, Կուրչատովն այն կարծիքն է հայտնել, որ /քար/ դարը չի սկսվել այն ժամանակ, երբ մեջքը նոր ուղղած /նախնադար/ մարդը հենց նոր սրած քարով սպանել է արյունակցին, և /բրոնզ/ դարն էլ չի սկսվել այն ժամանակ, երբ /բրոնզ/ նիզակից ընկել է առաջին զոհը: Այդպես էլ չի կարելի /ատոմ/ դարաշրջանի թվարկումը սկսել Հիրոսիմայից և Նագասակիից: Մի՞թե կարելի է /ատոմ/ դարն արարողների թվից բացառել /հռչակ/ Բեկկերելիին ու Կյուրի ամուսիններին, Ռեզերֆորդին՝ իր /տաղանդ/ աշակերտներով: Մի՞թե կարելի է մոռանալ, որ «ջարդված կճուճների մեծագույն հավաքածուից» շատերն իրենց իսկ ստեղծածի դեմ «/խաչակիր/ արշավանքի» մասնակիցներ էին:

«Անհանդուրժելի է այն միտքը, թե կարող է սկսվել /ատոմ/ կամ /ջրածին/ պատերազմ. այն ժողովրդի համար /ողբերգ/ կլինի», - ասել է Ի. Վ. Կուրչատովը:

🕮 Ձ-93. Ա. Կարդալ Վ. Սարոյանին բնութագրող տողերը:
Բ. Ընդգծել գոյականները և նրանց հիմքերից ածականներ կազմել:
Գ. Գտնել ածականները և նրանցից գոյականներ կազմել:

Դու այս աշխարհում քո բարության անհուն աշխարհն ես ստեղծել, և այդ աշխարհում ապրում են մարդիկ, որոնք ասես Սասնա ծռերի մասին հյուսված մեր էպոսից, մեր հեքիաթներից են դուրս եկել: Դու ինքդ էլ ասես այդ էպոսի հերոսներից մեկն ես, Փոքր Միհրն ես ասես, որովհետև թեև նրա նման հսկա ես ու բարի, բայց նրա նման չգիտես, թե ով է բարության թշնամին, որտեղից է գալիս հարվածը: Եվ գիտեմ՝ ներքուստ նրա նման մենակ ու տխուր ես դու, քանի որ քո խղճի ու բարության ոտքերը խրվում են աշխարհի անարդարության ու չարիքի մեջ և չեն կարողանում ընթանալ դեպի քո երազի բարի ու արևոտ աշխարհը. քո երազած բարությունն անվերջ

կանչում է քեզ, և դու, չարիքի ու անարդարության մեջ խրվելով, ընթանում ես դեպի այդ աշխարհը: /Վ. Դավթյան/

Ձ-94. Տրված առածներում լրացնել ածականները:

✓1. ...լեզուն օձը բնից կհանի:
✓2. ձուն զատկին կսազի:
✓3. խոսքը հանաքով կասեն:
✓4. հավը կչկչան կլինի:
✓5. ծառին քար գցող չի լինի:
✓6. բերանի մեջ ճանճ չի մտնում:

Ձ.95. Գրել առածներ՝ օգտագործելով հետևյալ ածականական հականշային զույգերը:

ա/ գիտուն - անգետ
բ/ քիչ-շատ
գ/ երկար – կարճ
դ/ խելոք-գիժ
ե/ հեռու- մոտիկ
զ/ թանկ -էժան:

Ձ-96. Գաղթական, զինվորական, առևտրական, հոգևորական, օգնական, թափառական, դպրոցական **բառերով 2-ական նախադասություն կազմել՝ մեկ գոյականական իմաստով, մեկ ածականական:**

Ձ-97. Բացատրել գունանուն ածականների իմաստները /օր.՝ ասմագուն - երկնագույն/:

Ալվան, աշխետ, ալ, արջն, մոռ, բիլ, լաջվարդ, պուրպուր, գորշ, շառ, թուխ, բոսոր, լուրթ, խաժ, խարտյաշ, դեղձան, ծավի, հիր, ճերմակ, մավի, կարմրկեկ:

Ձ-98. Գունային հատկանիշի հիման վրա համեմատություն-բառակապակցություններ կազմել՝ նշելով գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունը, ինչպես օրինակ՝ ձյան պես ճերմակ <u>մշուշ</u> /գոյական/:

Ձ-99. Ածականներն ընդգծել: Բացատրել դարձվածքների իմաստները:

●. ♦Բերանից պինդ ♦ձեռքը կարճ ♦սիրտը բարակ ♦դուռը բաց ♦վիզը ծուռ ♦աչքը ծակ ♦ձեռքը փակ ♦ճակատը պինդ ♦ճակատը բաց:

● ♦Անունը սև քարին գրել ♦սևը սպիտակից ջոկել ♦կարմիր/ը/ կապել ♦կանաչ տերևից ընկած ♦ճերմակ ձեռնոց նետել ♦քաղցր աչքով նայել:

Ձ-100. Տրված շրջասություններում ընդգծել ածականները. բացատրել նրանց իմաստը, ինչպես օրինակ՝ <u>Լուսաշող</u> հանճար – Մոցարտ, <u>դեղին</u> ջարդ - մշակութային արժեքների վաճառելը:

● Մեծ իտալացի
աստղային պատերազմ
սև թուղթ
կանաչ դեղատուն
կապույտ ածուխ

●արծաթե թռչուն
դարչնագույն ոսկի
երկնային դատավոր
կանաչ ոսկի
կարմիր հունձ

● արյունոտ պսակ
երկաթե լեռի
դեղին ջարդ
սպիտակ արջերի երկիր
հանճարեղ Լոռեցի

🕮 Ձ-101. **Բացատրել, թե ինչպիսի նշանակություն է ստանում ածականը, երբ բառակապակցություն է կազմում փակագծերի մեջ դրված գոյականների հետ:**

● չոր /հաց, հող, ճանապարհ, օդ, ճյուղ, հագ, ծերունի, օրենք, խոսք, գլուխ, կոճղ, մարդ/

● ծանր /բեռ, քայլ, խնդիր, հայացք, գինի, բնավորություն, օդ, ականջ, գլուխ, խոսք, մարդ, ոտք, լեզու, մարմին, քար/

● ուրախ /ժպիտ, մարդ, ճանապարհ, աչքեր, տրամադրություն, հոգի, տխրություն/

● ճերմակ /ձյուն, մշուշ, հեքիաթ, աղջիկ, ջուր, փող, մազ, սար, անուրջ/

🕮 Ձ-102. **Ա. Ոսկին դրամ է և ունի դեղին գույն: Բայց մարդիկ նրան վերագրել են նաև ուրիշ գույներ: Ասում ենք <u>սև ոսկի</u> և հասկանում ենք նավթ, <u>արճճագույն ոսկի</u>՝ տորֆը, <u>դարչնագույն ոսկին</u> այրվող թերթաքարն է, <u>կարմիրը</u>՝ տուֆը: Բամբակը համարում ենք <u>սպիտակ ոսկի</u>, ջուրը՝ <u>էժան ոսկի</u>, գազը՝ <u>կապույտ ոսկի</u>: Կան նաև <u>փափուկ ոսկի</u> /թանկարժեք մորթեղենը/ և <u>կանաչ ոսկի</u> /թեյը/: Իսկ ինչպիսի փոխաբերություններ ասես, որ ծայր չի տվել այն՝ ոսկե երազներ, ոսկյա հուշեր... Շարունակել փոխաբերությունների շարքը և բացատրել նրանց արտահայտած իմաստները:**

Բ. Վերոգրվածի նմանությամբ ածականներ ավելացնել և փոխաբերաբար օգտագործել տրված բառերից որևէ մեկը՝ երկաթ, արծաթ, ծով, աստղ:

🕮 Ձ-103. ❖ **Ա. Ընդգծել գունանուն ածականները և բացատրել նրանց ոճական արժեքը:**

Բ. Դուրս գրել ոչ գունանուն ածականները և որոշել նրանց կազմությունը:

1. Կարմիր նժույգները թռչում են սրընթաց, Կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր... Վառվել է երկիրը կարմիր կրակով, Կարմիր նժույգները վառել են երկիրը /ԵՁ/: 2. Ինչպես պիտի արդյոք հնչեն, ա՜խ, այս երգերը իմ կարմիր, Իմ ավերակ, իմ որբ երկրում /Ն/: 3. Կարմիր էր ավազն ու ավազը՝ սև, Բոսոր էր ավազն ու ավազը՝ սև, Դեղին էր ավազն ու ավազը՝ սև, Ու խրվում էի ես դեղին ու սև Այդ հառաչի մեջ /ՎԴ/: 4. Անքնություն, Դեղին թախիծ... Ինչպես դարձար այսքան մոտիկ... /Ն/: 5. Կապու՜յտ պատարագ, կապու՜յտ մոգություն, Ձեր խորքերի մեջ կրակ է ու բոց. Դուք՝ բոցի կապու՜յտ շարունակություն /Ն/: 6. Այդ օրը վրաս սպիտակ սուգն էր ծաղկաթերթերի, Եվ արևն այնպես տխուր էր զանգում /Ն/: 7. Ես ոմանց համար կարմիր գույն ունեմ, Նման եմ բոցի, Եվ ոմանց համար սև եմ ու տխուր, Որբության նման: Սակայն կա մեկը՝ Երազող մի խենթ, Ես նրա համար կապույտ եմ միայն /Ն/: 8. Սև հագավ Սև-սար գյուղը մոր պես, Սև էին սարի ձյուներն էլ ասես, Սև էին հագել նոճիներն անթիվ՝ Կախաղան դառած ծառերն անհաշիվ, Սև էին լալիս ջրերն արցունքված՝ Իմ անմեղ հայոց արնից ակունքված... Սև էին անթիվ գյուղերն հրկիզված, Սև էին անգամ աստղերն էլ հուզված... /ՀԾ/: 9. Զրնգում է կանաչ քամին դաշտում լայնատարած, Իմ մանկության կանաչ երգը բերանացի արած... Որոտում է կարմիր քամին կարմիր կրակ հագած, Պատանության կարմիր երգը բերանացի արած... Խշշում է խարտյաշ քամին կիրճերի մեջ անանց, Իմ այրության խարտյաշ երգը բերանացի

արած: Հառաչում է ճերմակ քամին աչքն անհայտին հառած, Իմ ծերության ճերմակ երգը բերանացի արած /ՀՍ/:

Ա-104. Դուրս գրել ածականները և հաշվի առնելով հատկանիշը ինչպե՞ս արտահայտելը՝ առանձնացնել որակական ու հարաբերական ածականները: Բացատրել նրանց բառակազմական, իմաստային, քերականական, շարահյուսական-կիրառական յուրահատկությունները, նմանություններն ու տարբերությունները:

Գարունը սովորաբար տարվա մեջ մի անգամ է գալիս, բայց լեռնոտ ու քարոտ իմ Հայաստանում ամեն տարի մի քանի գարուն է լինում: Երկնամուխ լեռն ի՛ր գարունն ունի, երփնածուփ դաշտավայրն՝ ի՛ր գարունը և այն էլ տարվա տարբե՛ր եղանակներին:

Փոքր է Հայաստանի հողը, բայց բազմազան է ու բազմատեսակ: Այս մի բուռ հողում առկա են կլիմայական բոլոր գոտիները՝ ալպիական արոտավայրեր, արևահամ խաղողի այգիներ, մթին անտառներ ու խորշակահար դոներ, մշտական ձյուն ու արևադարձային պտուղներ:

Երբ Արարատյան դաշտում աշնանամուտ է, և արդեն հասնում են արևալեցուն խաղողն ու կարմրաթուշ դեղձը, լեռների ստորոտում դեռևս ամառ է կամ ամռան սկիզբը. այնտեղ ցորենը նոր է սկսում դեղնել: Այդ նույն պահին լեռնալանջերի ալպիական արոտավայրերում աճում է փարթամ խոտը, ու ծաղկում են սևասիրտ ու կարմրազգեստ կակաչները:

Ավելի վերև ձյունը դեռ նո՞ր է սկսում հալվել, և երևում են առաջին ձյունե ծաղիկներն ու կապույտ մանուշակները, իսկ ամենից վերև՝ գագաթին, հավերժական ձյու՞ն է, ձմեռ, սառնամանիք:

Ճիշտ նույն պահին Մեղրու կախարդական ձորում՝ տապից շիկացած քարերի արանքում, ճեղքվում է նուռը, և մեղրով են լցվում թուզն ու ճապոնական արմավը:

Արագածի գագաթին հալվող ձյուներից գոյացած վտակը մինչև Մայր Արաքս հասնելը նու՛յն օրն իր ճամփին կարող է տեսնել տարվա բոլոր չորս եղանակները՝ խստաշունչ ձմեռ, կենսատու գարուն, տոթակեզ ամառ, ոսկեզօծ աշուն: Հայաստանում վայրեր կան, որտեղ տարին երկու եղանակ ունի միայն՝ ձմե՛ռ և գարու՛ն: ...Երբեմն այնտեղ միայն վայրի յավշան էր բուսնում, որի գույնով այնքան էլ հեշտ չէր զանազանել տարվա եղանակները... Մե՞կ-մե՞կ էլ աճում էին դեղին ու կապույտ ծաղիկներ, որոնց «անթառամ ծաղիկ» էին ասում կամ «անմահական ծաղիկ»... **/Ըստ Գ. Էմինի/**

Ա-105. Կազմել գեղեցիկ, հին, բարի, երկար, նուրբ ածականների և՛ առավելական, և՛ նվազական, և՛ հավասարական բաղդատականները /հնարավոր բոլոր տարբերակներով/:

🕮 **Ձ-106. Գտնել բաղդատական աստիճանով դրված ածականները և նրանց կազմության մի ձևը փոխարինել մյուսով:**

● ✓1. Հին ծառն այրվում է ավելի լավ, ծեր ձիով գնալն ավելի անվտանգ է, հին գրքերի ընթերցումն ավելի հաճելի է, հին գինին խմելն ավելի դուրեկան է, հին ընկերներին կարելի է ամենից շատ վստահել /**Ռայտ**/: ✓2. Առողջ աղքատը հիվանդ թագավորից ավելի երջանիկ է: /**Շոպենհաուեր**/ ✓3. Ավելի լավ է լինել նախանձի առարկա, քան կարեկցանքի: /**Հերոդոտ**/

● Դեռևս մ. թ. ա. 434 թ. հույն գիտնական Անաքսագորասն ավելի խելացի ու ավելի ճիշտ մտքեր արտահայտեց, քան ժամանակի մեծանուն քրմերը. Արեգակը ոչ թե աստված է, այլ հսկայական շիկացած մարմին՝ շատ ավելի մեծ, քան թվում է: Արեգակի տրամագիծը /13920000 կմ/ 109 անգամ ավելի մեծ է, քան Երկրի տրամագիծը: Արեգակի ծավալը շատ ավելի մեծ է, քան 1200000 Երկրի չափ մոլորակները միասին: Իր հսկայական չափերի հետևանքով մինչև իսկ այդպիսի մեծ հեռավորության վրա Արեգակը երկնային մյուս լուսատուներից ավելի պայծառ է երևում. առանց սև ապակու կամ հատուկ ակնոցի նրան նայելը չափազանց վտանգավոր է: Այն շուրջ 10 մլն անգամ ավելի պայծառ է երևում, քան երկնքի ամենապայծառ աստղը՝ Սիրիուսը: Սակայն եթե Արեգակն ու Սիրիուսը գտնվեն Երկրից միևնույն հեռավորության վրա, ապա Արեգակի պայծառությունը 25 անգամ Սիրիուսից ավելի թույլ կլինի:

🕮 **Ձ-107. Դուրս գրել գերադրական աստիճանով դրված որակական ածականները, բացատրել կազմության ձևը:**

● 1. Իմ սրտի սերը ծաղիկն է նրանց՝ Բուսած ամենից բարձր կատարին... /**ՀԾ**/: 2. Ձմեռ քնեի, զարթնեի գարուն, Կես դարս դառնար քսան տարեկան, Դառնայի պարման ամենասիրուն /**Ն**/: 3. Ամենանուրբ, ամենասուրբ մայրն էիր Ամենաչար, ամենաքար վշտերի մեջ. Ամենից շատ, ամենից վատ տանջվեցիր, Դու, որ հազար անմեղ էիր, մայր իմ խեղճ /**Ն**/: 4. Խոշորագույն հայտնագործությունները չեն կարող ծնվել առանց ուժեղ զգացմունքների: 5. Կարելի է չտարակուսել, որ առնվազն երեք կարևորագույն բնագավառ՝ աստղագիտական տիեզերքը, տարրական մասնիկների միկրոաշխարհը և օրգանական սիստեմները, կմնան որպես մարդկության հավերժական խնդիրներ: 6. Սիրիուսը ամենապայծառ աստղն է և՛ հյուսիսային, և՛ հարավային կիսագնդերի բոլոր երևացող աստղերի մեջ: 7. Մարդը ստեղծեց ամենաահավոր բանը՝ ոսկու կուռքը՝ կատարյալ տիեզերական մի պատուհաս. «ոսկի՛, աստված չես, բայց պակաս էլ չես»՝ ամենատարբեր ողբերգությունների, կրքերի, մտքի ու տիեզերական զարգացման, հենց իր՝ մարդու ամենաակտիվ գործունեության ամենից ապշեցուցիչ, ամենից անսպառ աղբյուր: 8. Այսօրվա չափանիշներով բոլոր ժամանակների ամենաերջանիկ աստղագետին՝ Գալիլեյին պետք է շնորհվեր տասը Նոբելյան մրցանակ, երկուսը՝ աստղադիտակի համար:

● ✓1. Ամենից շատ մենք դժգոհում ենք այն ժամանակ, երբ դժգոհ ենք մեզանից: /**Ամյել**/

✓2. Չնայած իրենց բոլոր թերություններին՝ մարդիկ ամենից շատ արժանի են սիրո: ✓Խելացի մարդիկ լավագույն հանրագիտարաններն են: ✓Ամենածիծաղելի ցանկությունը բոլորին դուր գալու ցանկությունն է: /Գյոթե/

✓3. Խիղճն ամենալավ բարոյախոսական գիրքն է: Նրան պետք է հաճախակի նայել: /Պասկալ/

✓4. Բարի գործերի հիշատակը պահելու լավագույն ձևը դրանք կրկնելն է: /Բեկոն/

✓5. Սովորիր ավելի շատ ամաչել քեզնից, քան ուրիշներից: /Դեմոկրիտ/

✓6. Երաժշտությունը ամենալավ սփոփանքն է տխուր մարդու համար: /Լյութեր/

✓7. Ավելի շատ օգտվիր ականջներից, քան լեզվից: /Մենեկա Կրտսեր/

✓8. Չափից դուրս գեղեցիկ բառերը անվստահություն են առաջացնում: /Ֆենելոն/

✓9. Ամենախոր գետերը հոսում են նվազագույն աղմուկով: /Յուրցիոա/

☑ **Գ. Վերոհիշյալ աֆորիզմներից մեկը դարձնել բնաբան և շարադրել մտքերը:**

🕮 Ձ-108. Գույն **բաղադրիչն ունեցող հետևյալ բառերից առանձնացնել նրանք, որոնցում այն ածանց չէ՝** լավագույն, գերագույն, նարնջագույն, նորագույն, դարչնագույն, բարձրագույն, ծիրանագույն, խոշորագույն, հողագույն, ազնվագույն, մանուշակագույն, նվազագույն, աղյուսագույն:

🕮 Ձ-109. **Գրել 8-10 այնպիսի որակական ածականներ, որոնք համեմատության աստիճաններ չունեն:**

🕮 Ձ-110. Մեծ, երկար նեղ, կապույտ, մութ, խոր **ածականների ցույց տված հատկանիշների որակային աստիճանավորումներն արտահայտել՝**

✍ 1. չափ ու աստիճանի զանազան մակբայների միջոցով /չափազանց խոր.../.

✍ 2. կրկնության միջոցով /խոր-խոր../.

✍ 3. աստկական և նվազական իմաստ ունեցող ածանցների միջոցով /խորին.../.

✍ 4. ածականի համեմատության աստիճանների միջոցով /ավելի խոր. ամենախոր../

✍ 5. շարահյուսական միջոցներով /ամենից խոր, խորից խոր.../:

🕮 Ձ-111. **Կարդալ: Գտնել հարաբերական ածականները: Որտեղ հնարավոր է, փոխարինել գոյականի թեքված ձևերով /կապերի հետ կամ առանց կապերի/: Բառարանների օգնությամբ բացատրել հարաբերական ածականների արտահայտած իմաստները:**

Հիասքանչ արևի փառահեղ ու ոսկեզօծ ճաճանչների մեջ շողարձակում էր աշնանային գունավոր անտառակը՝ շշապակու գույնի երկու զմրուխտյա նոճի, որ ձևով նման էին շշերի, երեք ոչ շատ բարձր շագանակենի, որոնց ծխախոտագույն տերևները՝ նարնջագույն երանգով, փսփսում էին անվերջ ու պատմում անտառային դյութիչ հեքիաթը, մի կարմրածառ, որի օղակաձև

պսակը բաց կիտրոնագույն էր, բունը՝ մանուշակագույն, արնակարմիր ծիրանի և բոսոր սաղարթով երկու երազկոտ թուփ՝ առջևում մի քիչ ավազ արևալեցուն, արևացող կանաչ խոտ, և այս ամենի վերևում՝ կապու՛յտ-կապու՛յտ լուսեղեն երկինք՝ խորքերում ծծմբակիտրոնագույն հրեղեն մի գունդ: Վինսենթը քարացած նայում էր առեղծվածային նկարին: Աչքերի առջև ամեն ինչ մշուշվել էր... Նա չէր կռահում, որ այդ օրն ինքը հանդիպել էր ամենակարող Ճակատագրին և լսել նրա մարգարեական կանխագուշակումները:

/Ըստ Իրվինգ Սթոունի/

📖 Ձ-112. Հետևյալ բառակապակցություններում որոշել ընդգծված բառերի խոսքիմասային պատկանելությունը և համապատասխան եզրակացություններ կատարել:

<u>Ամենափորձված</u> որսորդը, <u>ամենասիրված</u> ուսանողը, <u>ամենակատարելագործված</u> մեքենան, <u>ամենացարգացած</u> երկիրը, <u>ամենակարողացած</u> ծերունին, <u>ամենալարված</u> աշակերտը, <u>ամենամոռացված</u> նամակը:

📖 Ձ-113. Հիմք ընդունելով հարաբերական ածականների արտահայտած հատկանշային իմաստները՝ շարունակել՝ գրելով 5-ական բառեր.

✍ 1. տեղային-տարածական հատկանիշ /ցամաքային, ծովափնյա .../

✍ 2. ժամանակային հատկանիշ /ամառային, հնադարյան .../

✍ 3. կազմության կամ նյութի ինչից լինելը ցույց տվող հատկանիշ /ոսկյա, ձյունեղեն .../

✍ 4. հատկացական, պատկանելության կամ վերաբերության հատկանիշ /մարդկային, մայրական.../

✍ 5. ունենալու կամ չունենալու հատկանիշ /ակնոցավոր, անխելք.../

✍ 6. նմանության հատկանիշ /օձանման, աղվեսակերպ. .../:

📖 Ձ-114. Առաջին կետում տրված հատուկ անուններից կազմել ածականներ և երկրորդից ընտրելով գոյականներ՝ գրել թևավոր խոսքեր /եթե տարբերակային ձևեր կան, դրանք էլ գրել/, ինչպես օրինակ՝ Հոմերոս – քրքիջ → հոմերոսյան քրքիջ /հոմերյան քրքիջ/:

● ✓ 1. Հերկուլես	✓ 10. Հոմերոս	● 1. գինարբուք	10. գարշապար
✓ 2. Աքիլլես	✓ 11. Վեներա	2. ախոռ	11. աշտարակաշինություն
✓ 3. Բաքոս	✓ 12. Տանտալոս	3. ուժ	12. պատգամախոս
✓ 4. Ավգիաս	✓ 13. Հաննիբալ	4. երդում	13. հանգույց
✓ 5. Դամոկլես	✓ 14. Բաբելոն	5. օրենք	14. աշխատանք
✓ 6. Գորդիոս	✓ 15. Տրոյա	6. սուր	15. տանջանք
✓ 7. Դանայոս	✓ 16. Սիզիփոս	7. ձի	16. խրախճանք
✓ 8. Դելփի	✓ 17. Լուկուլլոս	8. տակառ	17. քրքիջ
✓ 9. Դրակոն	✓ 18. Բարդուղիմեոս	9. գիշեր	18. հիվանդություն

❖ Բ. Սրանցից յուրաքանչյուրը որտեղի՞ց է «ծնունդ առել» և ի՞նչ նշանակությամբ է օգտագործվում:

🕮 Ձ-115. Առանձնացնել այն հարաբերական ածականները, որոնք ունեն համեմատության աստիճաններ: Ընտրել 3-ը և կազմել նրանց համեմատության աստիճանները, դրանցով էլ՝ բառակապակցություններ:

Անբարոյական, առաձգական, բարեկամական, տարրական, տաղանդավոր, մեխանիկական, ալիքային, էլեկտրամագնիսական, կախարդական, արեգակնային, լուսային, կենսական, մխիթարական, ակնթարթային, կիսահաղորդչային, մղձավանջային, մարդկային, ողբերգական, դժոխային, չորային, փողոցային, երկաթյա, ներվային, արծաթե:

🕮 Ձ-116. Հետևյալ բառակապակցություններում հատկանշային-որակական իմաստով գործածված ածականներն ընդգծել մեկ գծով, առարկայական-հարաբերության նշանակությամբ գործածվածները՝ երկու:

Արմատական փոփոխություններ և արմատական բառարան
բանաստեղծական ոգի և բանաստեղծական ոտք
տարրական քաղաքականություն և տարրական մասնիկներ
մարդկային հասարակություն և մարդկային վերաբերմունք
փողոցային երթևեկություն և փողոցային արտահայտություն
օձային բնավորություն և օձային կաշի
ներվային հիվանդություն և ներվային մարդ
կատվային աչք և կատվային ցատկ
թագավորական հանգիստ և թագավորական պալատ

🕮 Ձ-117. ❖ Բացատրել ածականների գործառական արժեքը նկարագրական խոսքում:

Քսանչորս տարեկանում Էյնշտեյնի հասակը 1,76մ էր: Նա լայնաթիկունք էր, փոքր-ինչ կորամեջք: Կարճ գանգը արտասովոր լայն էր թվում: Թուխ մաշկ ուներ, փղոսկրագույն: Մեծ, զգայուն բերանի վերևում փոքրիկ սև բեղեր ուներ: Քիթը՝ փոքր-ինչ արծվաքիթ: Մուգ շագանակագույն աչքեր, խորունկ հայացք՝ մեղմ ու ճառագող: Հաճելի ձայն ուներ՝ նման թավջութակի: Շատ բարձր էր ծիծաղում: Խիտ մազեր ուներ բարձր ճակատի վերևում, մազերը թեթևակի գանգուր էին և չոր, շատ սև և փոքր-ինչ ճերմակած: Մաքո Դիկարդը գրում է. «Էյնշտեյնը նմանվում է փոքր քաղաքում ապրող հնավաճառ պատկառելի կոշկակարի կամ ժամագործի: Յոթանասնամյա Էյնշտեյնի աչքերն օժտված էին մի այնպիսի մաքրությամբ, որ հազվադեպ էր բնորոշ մարդու հայացքին: Երեխայի՞ աչքեր: Ոչ մի դեպքում, որովհետև մանկական մաքրությունը բխում է որոշակի դատարկությունից, փորձի բացակայությունից: Իսկ Էյնշտեյնի մաքրությունը լիքն էր գիտելիքներով և փորձով: Դրա պատճառը ուժի և պարզության կատարյալ զուգակցումն էր, և դա հարուցում էր անսահման զարմանք, անպատմելի համակրանք ու հարգանք»: Իսկ կյանքի վերջին տարիներին նրա աչքերի բնական մաքրությունն էլ ավելի ուժեղացավ զորեղ ճակատի ձյունաճերմակ փայլից:

🕮 Ձ-118. Ա. Քնքուշ, լուռ, քաղցր, գեղեցիկ, բարձր ածականներով կազմել և՛ գոյականական, և՛ բայական բառակապակցություններ և փորձել բացատրել գործածական տարբերությունները:

Բ. Նույն ածականներով կազմել մակբայով արտահայտված ստորադաս բաղադրիչ ունեցող ածականական բառակապակցություններ:

🕮 Ձ-119. Ընդգծել ածականները՝ գոյականական անդամի հետ գործածվածները՝ մեկ գծով, բայական անդամի հետ գործածվածները՝ երկու: Արդյո՞ք երկրորդ դեպքում «ածական - մակբայ» խոսքիմասային փոխանցում է կատարվում:

1. Դու այնպես դանդաղում ես, արև, Այնպես պաղ, դժկամ ես արևում: Հայտնվում ես տարտամ ու երեր, Ու նորից կորչում ես ամպերում /ՄԿ/: 2. Աստղերը օտար քեզ մրմնջացին, Քնի՛ր անուշ, անհո՛գ, անտարբե՛ր /Ն/: 3. Իզուր-իզուր շոյեցի նրա մազերը ոսկի, Իզուր սեղմած իմ կրծքին՝ հպարտ-հպարտ դուրս եկա /Ն/: 4. Դու, որ այդքան սեր խոստացար Հավերժակա՜ն, անմերժակա՜ն, Ինչու՞ այդպես ցամաքեցիր, Ինչու՞ դարձար թույլ ու անկամ /Ն/: 5. Իմ կյանքը փշուր-փշուր, Արցունք է փշուր-փշուր, Արցունքիս շիթի միջից Աշխարհքը՝ փշուր-փշուր /Ն/: 6. Ծարավ մարդուն ջուր տվողին Համարում ենք աստվածային /ՀՀ/:

🕮 Ձ-120. Փակագծերում տրված գոյական որոշյալները գործածել համապատասխան թվով և հիմնավորել ընտրությունը:

Սև-սև /աչք/, քաղցր-քաղցր /հուշ/, ճեփ-ճերմակ /գագաթ/, մեն-մենակ /ուղևոր/, լեփ-լեցուն /դահլիճ/, կաս-կարմիր /դեմք/, զառ-վառ /ծաղիկ/, սեփ-սև /նժույգ/:

🕮 Ձ-121. Բանաստեղծական հատվածներում որոշել կապույտ ածականի ձևաբանական հատկանիշներն ու շարահյուսական կիրառությունները:

● 1. Կապույտը ծեգին աղոթքի կանչող Ղողանջն է զանգի: Կապույտը-արցունք, կապույտը-ցող Հոգուս, երկնքի: Կապույտում անուտ խոսքեր են հոսում Երկնքից երկինք: Հոգիս՝ կապույտի լաբիրինթոսում Սրբացած կնիք: 2. Եվ հոսում էր ոսկեծուփ կապույտից դեպի վար Արտերի գիրկը բերրի՝ մի հեշտություն հրավառ: 3. Կապույտից հետո և ոսկուց հետո, Քու՛յր, փռվեց ահա իմ տրտմած հոգում Մի խամրած մշուշ մանուշակագույն... 4. Դու կապույտը սիրեցիր, չգտար... Կու՜յս աչքերից՝ աղոթքո՜վ, աղոթքո՜վ Մի քիչ կապույտ մուրացիր, չգտար: 5. Նույնն է երկինքը կապույտ ու լճակը ջինջ 6. Կապույտի՜ մեջ, կապույտի՜ մեջ արևի ոսկին: Քնի՛ր, քնի՛ր, կապույտ աղջիկ, որ չզարթնես ծեգին: /Ե. Չարենց/

● 1. Կեսով կարմիր ես դու արևի նման և մյուս կեսով Կապույտ ես ու հիր՝ նման մորմոքի: 2. Սիրահարված եմ այս ցողին, շողին, կապույտին անհաս: 3. Հողմի մեջ բեկված ճառագայթ էի Ու թեթև-թեթև կապույտի թիթեռ: 4. Դու՛..... Լեռների վրա մի ալ հովատակ, Որ որոճում է կապույտ ու արև: 5. Ննջեի տաք մի Խուրձի՝ վրաս կապույտ ու բեհեզ: 6. Դու կարող ես

Այնպես անել, որ անգամ անձավներից այս քարե Կապույտների ու ոսկու առասպելներ հանեմ: 7. Եվ կապույտ է ամեն ինչ, գարնան կապույտ առավոտ, Կապույտ ծուխ է ու մշուշ, կապույտ աստղ ու արցունք: 8. Գիշերն ամբողջ երկի գարնան անձրևը լացել, Հիմա հողի ծալքերից քնած կապույտն է հանում, Երմոնյա տատս ահա այգու դռնակը բացել, Անցորդներին ցողաթաթախ կապույտներ է բաժանում: 9. Ես պառկած էի սեզերին այդ թաց, Եվ իմն էր ամբողջ կապույտը վերին, Ու այդ կապույտով աչքերս փակած Հավատում եմ ես հրաշքներին: 10. Եվ ամենայն ինչ աշխարհում դեռ գաղտնիք լիներ՝ Քարանձավների կապույտի նման: /Վ. Դավթյան/

● Ասում են իբր կապույտի վրա
Չեն նստում ճանճեր:
Լսու՞մ ես, Մարիա՛մ,
Ինձ ներս ու դրսից կապույտ հագցրու: /Պ. Սևակ/

📖 Ջ-122. Ա. Դուրս գրել փոխանվանաբար կիրառված ածականները և նշել նրանց ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները:

Բ. Փոխանուն ածականները փոխարինել համապատասխան կապակցություններով, ինչպես օրինակ՝ դեղինը -- դեղին երանգը:

● 1. Ինչքան չարը զորանում է, Այնքան խեղճ է դառնում բարին /ՀՀ/: 2. Ու ես հիմա չեմ զարմանում, Որ քո մի թաս ջրի դիմաց Այնքան անկեղծ թույն ես խառնում Իմ մաքուրին ու պայծառին /Ն/: 3. Տե՛ր, հանի՛ր այսօր ունկերդ խցող ամպերն սպիտակ, Կապույտի փառքը ինձանից փակող մռայլը վանիր /ՎԴ/: 4. Իմ հեռավորս, Կորածս, Հինս, Դու՛ռդ բաց /Ն/: 5. Ու հասկացած չարն ու բարին աշխարհքի՝ Մայր, տխրում է սիրող սիրտս քեզ համար /ՄԿ/: 6.. Օ՜, դու կարող ես ինձ դարձնել Ամենից լավը այս լուսնի տակ, Եվ գեղեցիկը՝ ամենքի մեջ, Եվ բախտավորը՝ ամենքից շատ /Ն/: 7. Թող կապույտը մանուշակին Ու կարմիրը վարդին մնա /Ն/: 8. Մարդը,- Ամենից հզորն աշխարհում, Բայց և ամենից անզո՜րն աշխարհում /ԳԷ/:

📖 Ջ-123. Դուրս գրել ածական բաղադրիչ ունեցող ստորոգյալները:

● 1. -Մեղքի հասկացությունը պայմանական է, հարաբերական: Իմ արարմունքը մեկի համար լավն է, մյուսի համար՝ վատ: Բացի այդ, իմ մեծ մեղքը ես չեմ հիշում, իսկ քո չնչին զանցանքը չափազանցնում եմ: Այսինքն՝ մեծը չնչին է դառնում, չնչինը՝ մեծ:... Ես գիտեմ, որ անմեղներ չկան. ամեն մարդ ինչ-որ մեղք ունի: Ու եթե մենք հիշաչար լինենք, հասարակությունն անկում կապրի: Կյանքն առաջ տանողը բարին է: Բարին շատ է, չարը՝ քիչ: Բայց չարը կազմակերպվող, համախմբվող ուժ է, իսկ բարին՝ տարերային: Եվ վտանգ կա, որ չարը կարող է հաղթել բարուն, եթե մարդու մեջ չմշակվի ուրիշի նկատմամբ մեծահոգի ու ներող լինելու զգացում: /Ըստ Ռ. Զարյանի/

● Յուրաքանչյուր անհատի մեջ գոյություն ունի թեկուզ փոքր չափով չարություն: Չկա նաև մարդ, որ բարեգործություն արած չլինի. Հանգամանքները ևս մարդուն կարող են բարի կամ չար դարձնել: Չարը բնականոն երևույթ չէ, և չար մարդիկ, ըստ Ժ. Լաբրյուերի, նման են այն

ճանճերին, որոնք սողում են մարդու մարմնով և կանգ են առնում միայն վերքերի վրա... Ըստ Անահարսիսի՝ «չար մարդը նման է ածուխի. եթե չի այրում, ապա սևացնում է քեզ»...

❖ Բ. Բացատրել «Աստեղ դատաստան» թևավոր խոսքի իմաստը:

🕮 Ձ-124. ❖ Ա. Խորհիր այն մասին, որ մեր լույսն անգամ կարող է բարի լինել, և մենք՝ հայերս, դարեր շարունակ՝ առավոտները հանդիպելիս, «Բարի՛ լույս» ողջույն-մաղթանքն ենք կրկնում: Ողջունումը խոսքային, բարոյա-գիտական-հաղորդակցական այն իրադրությունն է, երբ հանդիպողները ողջունում են իրար. ողջույնի ուրիշ ի՞նչ արտահայտություններ գիտես /ներառիր և հնաբանությունները, և՛ օտարաբանությունները/. գրիր դրանք և բացատրիր յուրաքանչյուրի գործածությունը՝ ըստ գործառական ոլորտների /պաշտոնական, կրոնական, հասակային /տարիքային/, հարգական, խոսակցական, մտերմական-հարազատական, ոչ պաշտոնական, հասարակաբանական-ժարգոնային, զգացմունքային-փաղաքշական՝ /ինչպիսի՞ հանդիպում/՝ ուշադրություն դարձնելով օգտագործվող բառերի ձևակազմությանը և հնչերանգային-արտասանական յուրահատկություններին: Ողջույնին ուղեկցող ուրիշ ի՞նչ արտահայտություններ կարող են ասվել:

Բ. Բարեմաղթական ինչպիսի թաքնված /խորքային/ իմաստներ ունեն դրանք՝ ծանոթներին /մտերիմներին, հարազատներին, ընկերներին.../ և անծանոթներին ուղղելիս: Ի՞նչ կարելի է եզրակացնել, երբ սպասված ողջույն-մաղթանքի խոսքը չի ասվում:

❖ Գ. «Բարի՛ լույս» և «Բարի՛ առավոտ». նշել տարբերությունները:

🕮 Ձ- 125. Ա. Կարդալ և կետադրել:

Բ. Դուրս գրել ածականները՝ նշելով դրանց ձևաբանական հատկանիշները:

Գ. Բացատրել ածականի՝ իմաստային առանձնահատկություններից բխող շարահյուսական կիրառությունները:

Դ. Առանձնացնել ածականով արտահայտված ստորադաս եզր ունեցող գոյականական բառակապակցությունները և նշել գերադաս անդամի ձևաբանական հատկանիշները:

Լեռան ստորոտը ուր քաղաքից իջնելու համար միայն մի ճանապարհ կար ոլորապտույտ ու քարքարոտ նման երազներում բացված արահետների արահետներով էր բոլորած:

Այդ այգիները գոյություն են ունեցել բիբլիական ժամանակներից: Եվ բիբլիական ժամանակներից մինչև հիմա այդ այգիների խաղողի ողկույզը շողշողում է որպես հողի աստղաբույլ:

Այգիներից դենը ընդարձակ անհուն դաշտերում բամբակենին է ծաղկում և ծովի պես ծփում է արևագույն ցորենը: Դաշտից անցնում է աշխարհի ամենահին գետերից մեկը ամառը կապույտ և վետվետուն ձմեռը մթին և ահարկու գարնանը վարարում է և մոնչում առասպելական գազանի նման:

Դաշտի ծիրանը լինում է բռունցքի չափ տանձը քաղցր ու ջրոտ խնձորի բույրն ավելի զգլխիչ է քան արաբական ստաշխը նուշը լինում է

ավելի առատ քան հացը: Թուզը քաղցրանում է մեղրի պես վարդը մուգ կարմիր և թավշյա թերթերով վառվում է ճեղքված սրտի նման կեռասը կախվում է ինչպես արյան վիթխարի կաթիլ իսկ մեխակը հնձում են ինչպես խաղողը: Այս բոլորի վրա կախվում է արևի հնոցը որը նույնն է ինչպես անժամանակ թվականներում: **/Վ. Թոթովենց/**

Թ Վ Ա Կ Ա Ն

Ա-126. Ա. Առանձնացնել թվականները և բացատրել նրանց իմաստաբանական, ձևաբանական տարբերությունները քանակային իմաստ ունեցող մնացած բառերից:

Բ. Մնացյալներից առանձնացնել թվական բաղադրիչ ունեցող բառերը:

Գ. Բացատրել հնչյունափոխության դեպքերը:

Տասը, քառյակ, հարյուրավոր, շատ, այդչափ, բյուր, երրորդ, այսքան, տասնօրյակ, քանիցս, երեքական, երիցս, եռաղողանջ, մեկ քառորդ, հնգապատիկ, միլիոնավոր, հազար, քիչ, քսանհինգերորդ, երկհնչյուն, քառակողմ, քառատել, երրորդություն, հազարականչ, հինգ յոթերորդ, ութ-ութ, մեկ տասնորդական, եռամատնյա, վեցական, յոթերորդ, ինոց, հինգ հարյուր, ութոտնուկ, երկակի, չորսական, երկրորդել, բյուրհազար, հազարամյա, չորս հարյուր քսանութ, երեքծալ, յոթնագույն, հարյուրամյակ, միլիոն, եռանկյունաձև, հազարմոմյա, եռագմբեթ, հազարերանգ, հարյուրակնյա, յոթնաստեղյան:

Ա-127. Գրել արմատական թվականները:

Ա-128. ❖ Խորհրդավոր է մարդկային կյանքը: Բոլոր գիտությունները յուրովի փորձում են համակարգել նրա օրինաչափությունները և գտնել բանական բացատրություններ նրա առեղծվածներին, բայց այդ զարմանահրաշ երևույթը մնում է անսահմանելի: Առեղծվածային երևույթներից մեկն էլ, թերևս, որևէ թվի տևական ներգործությունն է մարդու կյանքի ընթացքի վրա՝ որպես ճակատագրի ազդանշան:

Ամեն մարդ ունի իր սիրած թիվը, չգիտես թե ինչու, և ինքն էլ չի նկատում, թե ինչպես է իր խոսքով, արարքներով անվերջ պտտվում հենց այդ թվի շուրջը /10 ժամ քեզ եմ սպասում, հազար անգամ գնացիր-եկար, միլիոն անգամ եմ ասել.../: **Նույն երևույթի կրկնությունը կարող է զուգադիպություն համարվել, երրորդ անգամը՝ ուղղակի պատահականություն: Բայց երբ այն դառնում է կյանքի կշռույթ, այլևս անիմաստ է ապացուցելը, որ այն օրինաչափություն է՝ տիեզերական պարբերականության դրսևորում տիեզերքի մանրակերտում: Այս դեպքում՝ ո՞ր թվի /թվերի/ «շուրջն ես պտտվում» դու, որի՞ց ես վախենում, որի՞ց՝ խուսափում, որի՞ց՝ հաջողություն ակնկալում, որի՞ց**

Ա-129. Գրել այն խորհրդավոր թվերը, որոնք սիրում է օգտագործել հայ ժողովուրդն իր հեքիաթներում, զրույցներում, առածներում, առօրյա խոսքում:

🕮 Ջ-130. Կարդալ, ընդգծել թվականները, դուրս գրել նրանցով կազմված բառակապակցությունները և բացատրել դրանց իմաստային նրբերանգները:

● **ա/** Հին աշխարհը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվա փորձ ու գործ
Սկսվում է ամեն օր: **/ՀԹ/**
բ/ Հազար ու մի գանձերով
պիտի փարվեմ ոտքերիդ՝
Հազար ու մի գիշերներ
շշնջալով ականջիդ՝
Ա՜խ, դուռդ բաց:**/ՀԾ/**

● **ա/** Մենք դուրս ենք եկել
Միլիոն ու միլիոն տարիներ առաջ: **/ՊՍ/**
բ/ Սակայն դեռ երեկ մի հանք չէր փլվում,
այլ մի բովանդակ երկինք անողոք,
և փլվում էր ոչ թե մեկ, ո՛չ էլ տասնմեկ,
այլ միլիոն ու մեկ թշվառի գլխին: **/ՊՍ/**
գ/ Միլիոն, միլիարդ տարիներ
Իր ափին է ծովը... **/ՍԿ/**

● **ա/** Հարյուր անգամ կրկնում եմ, ինչ հարյուր տեղ է ասված՝
Սեր կոչվածը այս ի՛նչ ցավ է, ի՛նչ աղետ է, տե՛ր աստված: **/Սառուդ Սալման/**
բ/ Ափսոս որ իմ ջահելության գիրքը թերթվե՜ց-վերջացա՜վ,
Եվ իմ կյանքը, հազա՜ր ափսոս, վաղ գարնան պես շուտ անցավ... **/Օմար Խայամ/**

● Հարյուր տարի հետո ... Մեզանից ոչ ոք մնացած չի լինի արևի լույսը վայելող...

Բայց հարյուր տարի հետո էլ արևը նորից այսօրվա պես թարմ ու մանուկ, պիտի գրկե իր զվարթ լույսերի մեջ աշխարհը, և լեռների ձյունը պիտի փայլե, և ջրվեժները պիտի շառաչեն, և թռչունները այնպես ուրախ պիտի երգեն, կարծես թե առաջին գարունն է, որ ծաղկել է երկրի վրա:

Եվ հարյուր տարի հետո ծնողների համար աշխարհը պիտի լինի երազների ուղի, իսկ հեռացողների համար՝ ունայնություն, պատրանք...

Բայց հարյուր և հազար տարի հետո, և հազար-հազար դարեր հետո երկինքը պիտի անծայրանա, և աստղերը պիտի սլանան հազարավոր մղոններ մի ժամի մեջ....

Հարյուր տարի հետո էլ մարդիկ անմահության պիտի տենչան, ինչպես առաջ, և պիտի փոշիանան-մոռացվեն:

Հարյուր տարի հետո էլ միտքը պիտի ճգնի ու տվայտի տիեզերքի իմաստը լուծելու համար...

Եվ հարյուր տարի հետո և հարյուր հազար տարիներ հետո հյուլեի մեջ պիտի գան մոլորակները արևի շուրջ....

Հարյուր տարի հետո և հազար տարիներ հետո ծովը պիտի ծփա և պիտի պատմի իր հավերժական զրույցը, ինչպես պատմել է հազար տարիներ առաջ նախամարդուն և իխտիոզավրին...

Հարյուր տարի հետո էլ մահկանացուն պիտի ցավագնորեն ձգտի անմահության, և օրհասականը պիտի սպասի հրաշքի՝ չհաշտվելով մահվանը:

/Ավ. Իսահակյան/ /կրճատումներով/:

🕮 Ջ-131. Ընտրել այն շարքը, որի թվականներն արտահայտում են առարկաների կոնկրետ թիվը, քանակը:

ա/ ինը, հարյուր, 2-ական, երրորդ, 2-2, միլիոնավոր, 1/7, քսանական
բ/ մեկ երկրորդ, չորս, 5-5, յոթ, երեք-երեք, հարյուր քսանհինգ, 1000
գ/ միլիարդ, 1, քսանչորս, 1 000 000, հազար հինգ, յոթ, քսան հազար մեկ

🕮 Ձ-132. Ա. Կարդալ չորս թվականով կազմված խոհախրատական հետևյալ մտքերը:

Բ. Մյուս արարչական թվերով բարոյախոսական խրատներ հիշել և մեկնաբանել նրանց նշանակությունը:

✓1. Չորս բան անգին են՝ գիտությունը, առողջությունը, ազատությունը և առաքինությունը:

✓2. Չորս բան արդարություն չեն ճանաչում՝ սերը, ատելությունը, վախը և շահը:

✓3. Չորս բան չի կարելի գողանալ՝ գիտությունը, կամքը, արհեստը և խելքը:

✓4. Չորս բան պետք է իմանալ ամեն մի ձեռնարկումից առաջ՝ հարկավո՞ր է, հաճելի՞ է, օգտակա՞ր է, ժամանակի՞ն կկատարվի:

✓5. Չորս ձևով պետք է ունկնդրել՝ համբերությամբ, լսածի մասին խոհեմությամբ դատելով, մտքի մեջ բարին ունենալով և ոչ պիտանին շուտափույթ մոռացության տալով:

✓6. Չորս բանի մարդը ձգտում է և չի հասնում՝ մեծ հարստության, կատարյալ գիտության, տևական հանգստության և տևական ուրախության:

✓7. Չորս խորհուրդ չպետք է մոռանալ՝ տե՛ս, լսի՛ր, լռի՛ր և համբերի՛ր:

🕮 Ձ-133. Ա. Հայտնի է, որ մինչև արաբական թվանշանների՝ Հայաստան մուտք գործելը /16-17-րդ դդ./ մեր լեզվի տառերը գործածվել են նաև քանակական և դասական թվականների արժեքով. գրել հայոց այբուբենի տառերը և նրանց համապատասխան թվային արժեքները:

Բ. Նշված թվային արժեքները ներկայացնել տառային արտահայտությամբ՝ 7777, 11, 34, 678, 5489:

Գ. Տրված թվերը փոխարինելով տառային համարժեքներով՝ կարդալ Իմաստունի 5 խորհուրդները /բառերն սկսվում են այս նշանով՝ /■/:

✓1. ■70;1;3000;1;4000;1 ■200;20;1;300;400, ■1;700;9000;600;3000 ■4000;5;2000;1;50;20;4, ■30;2000;5;30;600;3000 ■1;2000;1;50;8 ■60;5;2000;8 ■2000;7000;4000 7:

✓2. ■30;5;1000;8 ■3;600;3000;20;5000՝ ■4;1;500;4000;7000;200 ■200;400;1, ■50;600;3000;8 ■3;600;3000;20;5000՝ ■6000;1;200;1;9000;7000;200 ■1;800;5000;20;5000, ■1;200;7000;2000;400;7000;9;300;7000;400;8 ■3;600;3000;20;5000՝ ■5;5000;60;5000;600;5000;4 ■1;400;3;1;200 ■200՝;20 ■1;200;7000;2000;400;1;6000;20;5000:

✓3. ■7000;90;4000;1;800;1;400;20 ■70;5;4000 ■2;1;5000;5;60;1;200;7000;9;300;7000;400 ■1;400;600;90;8 ■20;5000 ■4000;1;400; ■4;7000;1000;8 ■800;5;4000;9000 ■7 ■2;1;5000;80;5000 ■500;20;400;20:

✓4. ■1;5000;4;1;5000 ■3000;1;2000;4000;1;60;8 ■200;1;6 ■7;30 ■4;1;1000;400;1, ■700;20 ■60;4000;5000;3000;20, ■70;1;5000;1;200;8 ■3;5;5000;1;400 ■7;30 ■4;1;1000;400;1՝ ■60;60;4000;5000;3000;20:

✓5. ■200;1;5000;4;7000 ■8000;600;90;8 ■600;5000 ■500;1;4000;1;400;1, ■4000;1;400 ■2000;300;7000;400;5;5000;400 ■1;700;9000;20;400 ■50;7000;1000 ■60;5;5000;և;1;400:

🕮 Ղ-134. Կազմել բառակապակցություններ, որոնցում թվականը լրացում է՝
ա/ ժամանակային չափի միավոր գոյականների /վայրկյան...../
բ/ տարածական, ծավալի չափի միավոր գոյականների /մմ...../
գ/ կշռի չափի միավոր գոյականների /կգ.../
դ/ գնի, արժեքի միավոր գոյականների /դրամ.../.
ե/ հատահաշվային չափի միավոր գոյականների /գլուխ.../.[1]

🕮 Ղ-135. Ֆիրդուսու տողերից առաջինը և վերջինը արտահայտել թվային համարժեքներով:
Ո՛վ բարեկամ, գիտությունը օվկիանոս է անսահման,
Աշխարհն արար թեկուզ շրջես, ծարա՛վ եղիր միշտ ուսման:
Քեզ նախնական գիտելիքը ցույց կտա սոսկ լույսի փայլ,
Գիտությունը սահման չունի, դու ընթերցի՛ր քայլ առ քայլ:

---

[1] Ըստ Տերմինաբանական կոմիտեի որոշման՝ հանձնարարելի են ֆիզիկական մեծությունների չափման միջազգային համակարգի /ՄՀ/ միավորների հայերեն հետևյալ անվանումներն ու կրճատ նշանակումները /Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006, 170-180/՝

ՄԵԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ	ՄԻԱՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ	ՀԱՅԵՐԵՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ
Երկարություն	մետր	մ
Զանգված	կիլոգրամ	կգ
Ժամանակ	վայրկյան	վ
Էլեկտրական հոսանքի ուժ	ամպեր	Ա
Ջերմադինամիկական ջերմաստիճան	կելվին	Կ
Նյութի քանակ	մոլ	մոլ
Լույսի ուժ	կանդելա	կդ
Հարթ անկյուն	ռադիան	ռադ
Մարմնային անկյուն	ստեռադիան	սռ
Ուժ	նյուտոն	Ն
Ճնշում	պասկալ	Պ
Աշխատանք, էներգիա	ջոուլ	Ջ
Հզորություն	վատտ	Վտ
Հաճախականություն	հերց	Հց
Էլեկտրականության քանակ	կուլոն	Կլն
Էլեկտրական լարում	վոլտ	Վ
Էլեկտրաունակություն	ֆարադ	Ֆ
Էլեկտրական դիմադրություն	օհմ	Օհ
Էլեկտրահաղորդականություն	սիմենս	Ս
Մագնիսական հոսք	վեբեր	Վբ
Մագնիսական ինդուկցիա	տեսլա	Տ
Ինդուկտիվություն	հենրի	Հ
Լուսային հոսք	լյումեն	լմ
Լուսավորվածություն	լյուքս	լք
Ճառագայթման քանակ	գրեյ	Գր
Նուկլիդի ակտիվություն	բեքերել	Բք

Ջ-136. /=/ - ներից աջ ընկած թվերն արտահայտել բառերով:

● (123456789 X 8) + 9 = 987654321
(12345678 X 8) + 8 = 98765432
(1234567 X 8) + 7 = 9876543
(123456 X 8) + 6 = 987654
(12345 X 8) + 5 = 98765
(1234 X 8) + 4 = 9876
(123 X 8) + 3 = 987
(12 X 8) + 2 = 98
(1 X 8)+ 1 = 9

● 33 X 3367 = 111111
66 X 3367 = 222222
99 X 3367 = 333333
132 X 3367 = 444444
165 X 3367 = 555555
198 X 3367 = 666666
231 X 3367 = 777777
264 X 3367 = 888888
297 X 3367 = 999999

Ջ-137. Տրված թվաշարքը գրել բառերով և բացատրել կազմությունը:
9, 99, 999, 99 999, 999 999, 9 999 999, 999 999 999, 999 999 999 999:

Ջ-138. Ի՞նչ մեծ թվեր գիտես. վերջիններիս գրության ո՞ր ձևն է գերադասելի:

Ջ-139. Ա. Թվել աշխարհի յոթ հրաշալիքները և պատմել նրանցից մեկի մասին:
Բ. Ձեր կարծիքով ո՞րն է աշխարհի ութերորդ հրաշալիքը:
Գ. Գրել Հայաստան աշխարհի «յոթ հրաշալիքների» մասին:

Ջ-140. Ընտրել այն բառաշարքը, որի կազմի մեջ մտնող բառերը ցույց են տալիս առարկայի թվային կարգը:
● մեկ, քսանհինգ, 7-րդ, վեցերորդ, V, միլիոնավոր, M, միջին, ԺԱ, բյուր, XLII, 2-2, վեց-վեց, հազարավոր
● երրորդ, XXII, քսաներորդ, 9-րդ, չորրորդ, DCC, հիսունհինգերորդ, VII, հազարերորդ, LXXX
● մեկ-մեկ, երկուական, IV, չորրորդ, երեք, մեկ ամբողջ հինգ տասնորդական, CM

Ջ-141. Դուրս գրել քանակական թվականները և դրանք դարձնել դասական՝ արտահայտելով՝
ա/ բառերով.
բ/ հռոմեական թվանշաններով.
գ/ արաբական թվանշաններով.
դ/ հայկական այբուբենի տառերով:

1. Ճառագայթային այս ախտը բնավ նո՞ր չէ, բարեկամ,- Նա նորածին չէ, Այլ առնվազն ութ հազար և ութ հարյուր տարեկան... Այս ախտը միայն նրանց է բռնում, Ովքեր յոթ հազար յոթ գույն են տեսնում ծիածանի մեջ
2. Բայց ամաչկո՞տ իմ սիրելի, ես քեզ գիտեմ Ու սիրում եմ առնվազն մի 40 կամ 4000 կարճլիկ տարի: 3. Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի Ես վախենում եմ, Շա՞տ եմ վախենում Բյուրավոր ու բուռ հավատացյալից
4. 5 000 տարվա, 500 տարվա և 50 տարվա պատմություն ունի այս ջարդ-

սպանդը, նախճիր-եղեռնը: 5. Մեզ համար միշտ էլ նահանջ էր տարին, ու փետրվարը՝ միշտ 28 օր... 6. Չեմ կարող ապրել Աստվածաշնչի հերոսների չափ Ո՛չ 300, ո՛չ 100 տարի: 7. Ծերանում ենք, Պարու՛յր Սևակ, Ծերանում ենք, Սիրելիս, Մեկ օր խմում Եվ երկու օր արդեն խումար ենք ընկնում, Մեկ ժամ քայլում Եվ երկու ժամ խոսում դրա օգուտից: /Պ. Սևակ/

🕮 Ջ-142. **Կարդալ և ընդգծել դասական թվականները, որոշել նրանց իմաստային արտահայտությունը, գրության ձևը և շարահյուսական պաշտոնը:**
● 1. Շատ եմ նման այն խեղճ մարդուն, Որ ծանրորեն հիվանդանում օրվա մի օր Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում է բոլորովին /ՊՍ/: 2. Կիսամերկ մի կին հինգերորդ հարկից նկատում է ինձ ու ետ է քաշվում... /Ն/: 3. ...Եվ հերքել ես մի բան, որ հաստատել է պետք. Այն, որ կա վեցերորդ զգայարան Եվ որ Մարդկանց «սիրտը վկայում է» իրոք... /Ն/: 4. Ա՜խ, չի կարող, ի՛մ սեր, գգվել ցնծագին Երկրորդ անգամ նույն ալիքը նույն ափին /ՀԾ/: 5. Դու գարնան ծիծեռնակի պես բույն դրիր իմ տանիքի տակ, Երգեցիր քո սերն առաջին, առաջին գարունը քո պերճ... Ու բուրեց համբույրն առաջին /Ն/: 6. Մի՞թե վերջինն ես, Քսաներորդ դար, Եվ ատոմահար Չպիտի՜ հասնես Քսանմեկերորդին,- Քո հաջորդ դարին /ԳԷ/:

🕮 Ջ-143. **Կարդալ, գտնել թվականները, առանձնացնելով դասականները և բացատրել վերջիններիս կազմության յուրահատկությունը: Մնացած թվականների դասականը կազմել:**

Մեր հեռավոր նախնիները, հռոմեացիներից ամսանունները վերցնելուց առաջ, անշուշտ, ունեցել են իրենց տարին և տարվա առաջին ամիսը, չէ՞ որ նրանք էլ, ելնելով Արևի և լուսնի դիտումներից, ժամանակը բաժանել են ըստ իրենց պատկերացումների: Ունեցել են Նոր տարի, ուրեմն և 1-ին ամսվա անունը՝ **Նավասարդ:** Հայոց Նավասարդը հին տոմարով սկսվել է ոչ թե ձմռանը, այլ օգոստոսին, համապատասխանել է մեր այժմյան օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածին:

Ո՜, տայր ինձ զծուխն ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի:

Այս գողտրիկ պատառը մեզ է հասել XI դարի մատենագիր Գրիգոր Մագիստրոսի 33-րդ թղթով:

Նավասարդին հաջորդում է **հոռին,** որը երկրորդ ամսվա անունն էր. սկսվում է սեպտեմբերի 10-ին և տևում ուղիղ 30 օր:

Հին հայոց ամսանուններն ընդհանրապես բաժանվում էին 30-ական օրերի: 12 ամիսների 30-ական օրերը կազմում էին 360 օր:

Հայկական երրորդ ամսվա անունը **սահմի** էր: Հին տարեցույցում տարվա չորրորդ ամիսը, որ համապատասխանում էր նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 8-ը ընկած ժամանակահատվածը, կոչվում է **տրե:** Եթե հին Հռոմում հինգերորդ ամիսը գարուն էր, ապա Հայաստանում՝ խոր ձմեռ /դեկտեմբերի 9-ից հունվարի 7-ը/ և կոչվում էր **քաղոց:** Վեցերորդ ամիսը կոչվում էր **արաց,** յոթերորդը՝ **մեհեկան,** ութերորդը՝ **արեգ,** իններորդ ամիսը

համապատասխանում էր այսօրվա ապրիլին և կոչվում էր **ահեկան**: Տասներորդ ամսվա անունն էր **մարերի**: Տասնմեկերորդ ամիսը կոչվում էր **մարգաց**, իսկ վերջին՝ տասներկուերորդ ամիսը՝ **հրոտից** կամ հրորտից:

Արեգակի շուրջը Երկրի մեկ լրիվ պտույտի վերջում ավելանում է 5 կամ 6 օր: Ահա հենց այդ օրերն են, որ իրանյան ցեղերի օրինակով հայերը ժամանակին կոչել են **«ավելյաց»** կամ «հավելյաց»:

🕮 Ջ-144. Տրված թվաշարքերից առանձնացնել բաշխական թվականներից կազմվածը և բացատրել վերջիններիս արտահայտության ձևը:

ա/ 1, երեք չորրորդ, իննսունինը, երկուական, 2/3, երրորդ, 15.

բ/ 5-5, 10-ական, հարյուր-հարյուր, 10-10, քսանական, 50-ական, յոթ-յոթ.

գ/ երկու, 2-2, իններորդ, 2-րդ, երեք յոթերորդ, 0, 12, 451:

🕮 Ջ-145. Կազմել մեկ թվականի բաշխական ձևերը, նրանցից կրկնությամբ կազմվածը օգտագործել նախադասությունների մեջ՝ որպես՝ ա/ ձևի պարագա. բ/ ժամանակի պարագա. գ/ չափի պարագա:

🕮 Ջ-146. Դուրս գրել կոտորակային թվականները, բացատրել նրանց կազմության յուրահատկությունը: Նշել իմաստային տարբերությունը մյուս տեսակներից: Ի՞նչ է ցույց տալիս նրա 1-ին մասը, ի՞նչ՝ 2-րդը:

Հնադարյան մարդն այնպիսի անշտապ կյանքով է ապրել, որ նրա արեգակնային, ջերմային, ավազի ժամացույցների վրա բոպեների համար հատուկ բաժանումներ չկային: Միայն 18-րդ դարի սկզբից ժամացույցի թվատախտակի վրա սկսեց երևան գալ բոպեի սլաքը, 19-րդ դարի սկզբին՝ նաև վայրկյանի սլաքը: Իսկ ի՞նչ կարող է կատարվել վայրկյանի 1/1000 ընթացքում: Շա՜տ բան: Գնացքը, ճիշտ է, կարող է այդ ժամանակամիջոցում տեղափոխվել ընդամենը 3 սմ, բայց ձայնը՝ արդեն 33սմ, ինքնաթիռը՝ 0,5 մ, երկրագունդը Արեգակի շուրջը վայրկյանի ընթացքում կանցնի 30մ, իսկ լույսը՝ 300 կմ: Մեզ շրջապատող մանր էակները, եթե կարողանային դատել, ապա վայրկյանի 1/1000 մասը չնչին ժամանակամիջոց չէին համարի: Միջատների համար, օրինակ, այդ մեծությունը միանգամայն զգալի է: Մոծակը մեկ վայրկյանի ընթացքում կատարում է 500-600 թափահարում: Նշանակում է, որ 1/1000-ի ընթացքում նա հասցնում է դրանք բարձրացնել կամ իջեցնել:

Մարդու ամենաարագ շարժումը աչքերի թարթումն է կամ ակնթարթը: Ճշգրիտ չափումները բացահայտել են, որ «ակնթարթը» միջին հաշվով տևում է 2/5 վայրկյան, այսինքն՝ վայրկյանի 400 000-րդ մասը: Այն տրոհվում է հետևյալ փուլերի՝ կոպի իջեցում՝ վայրկյանի 75-90 հազարերորդ մաս, իջեցրած կոպի անշարժ վիճակ՝ 130-170 հազարերորդ մաս, կոպի բարձրացում մոտ 170 հազարերորդ մաս... 20-րդ դարի սկզբին չափվող ամենափոքր ժամանակամիջոցը հավասար էր վայրկյանի 1/10 000 մասին, իսկ այժմ՝ վայրկյանի 1 1 000 000 000 000 մասին: Այդ ժամանակամիջոցը մոտավորապես այնքան անգամ է փոքր վայրկյանից, ինչքան անգամ վայրկյանը՝ 300 տարուց: /Յու. Պերելման/

🕮 Ձ-147. Կարդալ թվական /կամ փոխանուն թվական/ բաղադրիչ ունեցող դարձվածքները, բացատրել նրանց իմաստները:
Ընտրել 5-ը և կազմել նախադասություններ:

● ♦Առաջին ծիծեռնակ ♦երկրորդ երիտասարդություն ♦երկու աչքիս վրա ♦կառքի/ սայլի/ հինգերորդ անիվ ♦հազար սրբի տեղ մեկ աստծուն դիմել ♦մի բարձի ծերանալ ♦սատանայից յոթ օր առաջ ծնվել ♦յոթ սարից այն կողմ:

● ♦Առաջին ջութակ ♦երկրորդ շնչառություն բացել ♦երկու երես ունենալ ♦երրորդ աչք ♦բարով, հազար բարով գալ ♦հարյուր կտոր դառնալ ♦մի ձեռքով երկու ձմերուկ բռնել ♦յոթ կաշի մաշկել:

● ♦Առաջին քայլ ♦երկրորդ ջութակ նվագել ♦երկու տիրոջ ծառա ♦զրոյի հավասարեցնել ♦հազար բերան ♦յոթ դռան հաչող շուն ♦յոթերորդ երկինք ♦առաջին քայլ ♦երկու աչքով նայել ♦երկուսի ջուրը մի առվով չգնալ ♦քրի երկու կողմն էլ կտրել ♦հազար դուռ բախել:

● ♦Մեկը երկու անել ♦յոթ կողպեքի տակ պահել ♦մի մատ ♦հազար տաշտից հաց ուտել ♦մի աչք, մի ականջ դառնալ ♦մի աքլորի բեռ ♦չորրորդ իշխանություն ♦խոսքը մեկ անել ♦աշխարհով մեկ լինել:

🕮 Ձ-148. Լրացնել համապատասխան թվականները /կամ փոխանուն թվականները/:

● ✓1. Ուզողի երեսն է սև, չտվողի՝
✓2. ....մատիցդ որը կտրես, արյուն դուրս կգա:
✓3. ..... լավ է, բավ է, ... ցավ է:
✓4. Լավ է անգամ տեսնել, քան անգամ լսել:
✓5. Ավելի լավ է .... օր ապրել որպես աքաղաղ, քան .... տարի որպես հավ:
✓6. Լավ է ոչխար ունենալ առյուծի ղեկավարությամբ, քան առյուծ՝ ոչխարի ղեկավարությամբ:
✓7. .... թել քաշես, կարկատան կթափվի:

● 1. Ազատ անկման արագացումը հավասար է
2. Նյուտոնը օրենքը /ազդման և հակազդման օրենքը/ դինամիկայի հիմնական օրենքն է:
3. Եռանկյան ներքին անկյունների գումարը հավասար է ..... աստիճանի:
4. Ուղիղ անկյունը հավասար է .... աստիճանի:
5. Լույսի արագությունը է:
6. Մարդու կյանքի միջին տևողությունը է:

🕮 Ձ-149. Արտագրել՝ փակագծերում տրված թվականներից ըստ անհրաժեշտության կազմելով դասական, բաշխական, մոտավորական թվականներ:

● /17/ դարի կեսերին Ռենդենսբուրգ քաղաքի բնակիչները և այնտեղ հավաքված կայսերական հավաքի անդամները՝ կայսր Ֆերդինանդ /3/ գլխավորությամբ, ներկա եղան մի ապշեցուցիչ տեսարանի. /16/ ձի ամբողջ ուժով ձգտում էին բաժանել իրար հպված /2/ պղնձե կիսագնդեր:

● Մ. թ. ա. /53/ թվականին Արտաշատում բեմադրվել է հայոց Տիգրան /2/ արքայից արքայի որդի Արտավազդ /2/ հունարեն մի ողբերգություն:

● Սրանից /2500/ տարի առաջ՝ մ. թ. ա. /4-5/ դարերում, հին բաբելոնացիները հնարեցին արևի ժամացույցը: /4-5/ երկրներում միաժամանակ՝ Եգիպտոսում, Բաբելոնում, Հունաստանում և այլ երկրներում մ. թ. ա. /3/ դարում դրանց փոխարինելու եկան ջրային ժամացույցները: Մեխանիկական ժամացույցների /1/ նմուշները երևան եկան մ. թ. /18/ դարում: /19-20/ դարերում ստեղծվեցին այլ տեսակներ: Ժամանակակից ժամացույցի նախատիպը ստեղծել է հոլանդացի մեխանիկ Քրիստիան Հյուգենսը /1656/ թվականներին: Անցյալ դարի /2/ կեսին՝ ժամացույցի գյուտից /200/ տարի անց Մոսկվայի նահանգներից մեկում ստեղծվեց ծանրակավոր ժամացույցների մի փոքրիկ ֆիրմա:

/1404/ թ. Մոսկվայում տեղակայվեց /1/ ժամացույցը:

🕮 Ձ-150. Փակագծերը հանել և գրել կա՛մ միասին, կա՛մ առանձին, կա՛մ գծիկով:

Քառասուն/վեց/, վաթսուն/չորս/, հարյուր/երեսուն/, հինգ/հինգ/, հազար/յոթ/, յոթ/յոթ/, յոթանասուն/ինը/, երկու/երրորդ/, քսան/քսան/, երեք/հարյուրերորդ/, ութ/տասներեքերորդ, երեք/չորրորդ/, հինգ/վեց/, քսան/հինգերորդ/, յոթ/հարյուրերորդական/, տասը/տասը/, հարյուր/հարյուր/, հինգ/յոթերորդ/, տասնվեց/տասնյոթ/, քսան/մեկերորդ/, մեկ/քառորդ/, քսան/հինգական/, երեսուն/քառասուն/:

🕮 Ձ-151. Գրել /թվականները տառերով/՝ ե՞րբ և ու՞մ կողմից է պատրաստվել կամ ստեղծվել առաջին՝

ա/ ջերմաչափը **բ/** հեռադիտակը **գ/** ճոճանակավոր ժամացույցը **դ/** շոգեմեքենան **ե/** էլեկտրական շիկացման լամպը **զ/** էլեկտրական հաշվիչը **է/** հեռախոսը **ը/** գունավոր հեռուստացույցը:

🕮 Ձ-152. Փակագծերում տրված բառերը դնել անհրաժեշտ թվով /եզակի կամ հոգնակի/ և պատճառաբանել ընտրությունը. ոճական ինչպիսի՞ նկատառումներով են դրանք դրվում հոգնակի թվով:

1. Երեք /օր/ անընդհատ անձրև տեղաց, և այդ երեք /օր/ ընթացքում մարդիկ ձանձրույթով սպասում էին եղանակի բացվելուն: 2. Ութ տարի բանտում մնաց Նոլացին՝ Ջորդանո Բրունոն, և այդ ութ /տարի/ ընթացքում սուրբ հայրերը շարունակեցին երազել, որ նա կապաշխարի: 3. Երբ Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ Բաբելոնում, նրա աճյունը 60 /ձի/ տեղափոխեցին Ալեքսանդրիա: 4. 75 000 գործարանային /ծխնելույզ/ խեղդող ծուխը և 1,5 մլն /ավտոմեքենա/ արտածած գազը կեղտոտում են Տոկիոյի օդն ավելի շատ, քան աշխարհի մյուս քաղաքների: 5. Չինական մեծ հանրագիտարանը բաղկացած է 11 095 ձեռագիր /հատոր որոնցից 60 /հատոր/ /գբաղեցնել/ միայն խոշոր հոդվածների ցանկը: 6. Հոմերոսի երկու /ստեղծագործություն/՝ «Իլիական»-ում և «Ոդիսական»-ում, հաշվվում են 9 000 տարբեր /բառ/, իսկ Շեքսպիրինը՝ 23 000 /բառ/ 7. Հայտնի է, որ Ռեմբրանդտը ունի 650 /կտավ/: Բայց պարզվել է, որ միայն ԱՄՆ-ում

պահպանվող ավելի քան 800 /դիմանկար/ /վերագրվել/ մեծ հոլանդացու վրձնին: 8. Տեխնիկական ժամացույցների առաջին /նմուշ/ /ի հայտ գալ/ մեր թվարկության 13-րդ /դար/: 9. 2262 /տարի/ ընթացքում Արքիմեդի մասին պատմող առասպելները թերևս ավելի են շատացել, քան ճշմարտությունը: 10. 1922 թ աստղագիտական միջազգային կոնգրեսում ընդունված որոշմամբ երկնքի աստղերը բաժանվել են 88 /համաստեղություն/:

Ձ-153. Հոլովել երեք, հինգ, ինը, առաջին, չորրորդ թվականները և նրանցից մեկի տարբեր հոլովաձևերով կազմել նախադասություններ:

Ձ-154. Փոխանվանաբար կիրառված թվականները փոխարինել թվական բաղադրիչ ունեցող համապատասխան կապակցություններով և բացատրել նրանց կիրառական-շարահյուսական յուրահատկությունները:

1. Հազարի նման մի աղջիկ ես դու, Որ գտել եմ ես՝ մեկս հազարից /ՊՍ/: 2. Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար, Պիտի խոսեն իրենց սիրուց իրավ, Որ չիմանան, որ սիրում են մեկին. Նրան, ով սիրել է իրենց մեկտեղ- Մեկին՝ իմ պես, Մեկին՝ ինձ պես, Իսկ երրորդին էլ՝ ինձ նման /Ն/: 3. Մի աչքովդ ինձ կանչում ես, մի աչքովդ՝ վանում, Մեկով ինձնից դու փախչում ես, մեկով ինձ տուն տանում.. Մի աչքիդ մեջ ծովն է Վանա՝ իմ համբույրից խլված, Մեկդ ծովն է իմ Սևանա՝ հույսով իմ խարխլված /ՀԸ/: 4. Ո՞ւր եք բաժանվում, տու՛ն դարձեք մարդիկ, Մեկի տեղ յոթը ծնեք ու սնեք /Ն/: 5. Ուժի ազդեցության օրենքը մեխանիկայի հիմքում Նյուտոնի գրած 3 օրենքներից «երկրորդի» հետևանքն է: Առաջինը իներցիայի օրենքն է, երկրորդը՝ ազդեցության և հակազդեցության օրենքը: 6. Ոչ բոլոր ժողովուրդներն են հաշվի հիմքում «տասը» դրել: Չինացիները հաշվի հիմքում դրել են «հինգը». հաշվել են հնգյակներով: Հին Ռուսաստանում այն եղել է «քառասունը», Հռոմում՝ «տասներկուսը», Բաբելոնում՝ «վաթսունը»: 7. «Գլխապտույտ տրյուկի» հաջող կատարման համար անհրաժեշտ է «սատանայի օղակն» այնպես կառուցել, որպեսզի ճանապարհի թեք մասի գագաթը վերին կետից ավելի բարձր լինի, քան օղակի շառավղի մեկ երրորդն է, իսկ այն կետը, որտեղից հեծանվորդն սկսում է իջնել, պետք է օղակի տրամագծի մեկ քառորդից ավելի բարձր լինի:

Ձ-155. Ա. Դուրս գրելով քանակական և դասական թվականները՝ կազմել նրանց բաշխական տեսակը՝ թե՛ բառաբարդման, թե՛ ածանցման եղանակով. նշել, թե նրանցից յուրաքանչյուրը խոսքի ո՞ր ոճին է բնորոշ:

Բ. Գրել այնպիսի կոտորակային թվականներ, որոնցում մասն արտահայտված է դուրս գրված քանակական թվականներով, իսկ ամբողջը՝ դասականներով:

Չին կայսրը՝ Ծին Շե Հուանգ Թին վճռեց ամրախարիսխ, երկարածիգ պարիսպ քաշել Դեղին ծովից սկսած մինչև Գոբի անապատի դեղնածավալ ավազների մեջ... Կայսրը հրամայեց իր մեծածավալ պետության բոլոր ճարտարապետներին ու վարդապետներին՝ տասը տարվա մեջ կառուցել իր երևակայած անծայրածիր պարիսպը, որը վիշապի ձև պիտի ունենար, իսկ

արու չինացիներից տասից մեկը բանվոր գնար պարիսպները շինելու: Երեք միլիոն բանվոր հավաքվեցին սահմանագլխի երկայնքին, և երեք միլիոն բանվոր տասը տարի անընդհատ լծվեցին տաժանելի ու հյուծիչ աշխատանքի: Դաժան կայսրը հրամայեց ճարտարապետներին, որ պատերի քարերն այնպես պիտի ագուցվեն իրար, որ անհնարին լինի երկու քարի միջև նույնիսկ մի ասեղ խրել:

Հինգ հարյուր հազար թշվառներ թաղվել են հիմքերի և որմերի մեջ, և Շանգ Շենգը իրավամբ կոչվել է «Աշխարհի ամենաերկար գերեզմանոցը»: Երեք միլիոն աշխատավորներ անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանական Շանգ Շենգը՝ հաստատարիսխ հիմերով և ամեհի վեմերով. խոլական Շանգ Շենգը, որ ունի երեք հազար կմ երկարություն, տասնմեկ մետր բարձրություն... Այնքան քար ու աղյուս կա կիրարկված Շանգ Շենգը կառուցելու համար, որով կարելի է երկու անգամ քարահյուս գոտի կապել Երկրագնդի շուրջը:

Շանգ Շենգ վիշապը տասը տարի շարունակ – տառապանքների և տանջանքի մի ամբողջ հավիտենականություն – ծծեց ու քամեց չին ահագին ժողովրդի հոգեկան ու մարմնական ուժն ու զորությունը, նյութական բովանդակ միջոցները: Չին մեծ երկրի մեծ ժողովրդի սիրտը մղկտաց..., և նրանց անհուն վիշտն ու ցասումը մարմնավորվեց պարիսպների երգի մեջ.

«Գարնան առաջին ամիսն է մեղմ ու թարմաշունչ. շատերի ամուսինները տուն դարձան, բայց իմ ամուսինը դեռ աշխատում է Շանգ Շենգի վրա: Երկրորդ ամիսն է. շողշողում են դեղձի ծաղիկները....

Չորրորդ և հինգերորդ ամիսներն են... Ավա՜ղ, իմ դաշտերը խոպան մնացին: Լացով ու վշտով անցան վեցերորդ և յոթերորդ ամիսները. եկավ ութերորդ ամիսը: Ծաղկեցին լոտոսները, և աղավնիները նամակներ բերեցին հեռավոր սիրելիներից: Բայց մենավոր կնոջ համար ոչ մի լուր խեղճ ամուսնուց... Իններորդ ամսում ճամփա են ընկել ուխտավորները... Տասը և տասնմեկերորդ ամիսներում բուք է ու ցուրտ..., և թախծությամբ իջնում է ձյունը, ծածկում բոլոր ճանապարհները:

Տասներկուերորդ ամիսն է. բոլորը Նոր տարվա տոների համար են պատրաստվում, իսկ մենավոր կինը լաց է լինում, ...լաց է լինում այնքան դառնագին, որ նրա հզոր հառաչանքը հասնում է մինչև երկինքը, և նույնիսկ մեծ պարիսպները լսում են նրան ու խորտակվում...»:

Այդ դառն օրերից անցել է քսան և երեք դար, և չին աշխատավորը քսան և երեք դար երգում է հառաչանքով մեծ պարիսպների այս անզարդ երգը:

/Ավ. Իսահակյան/

Դ Ե Ր Ա Ն ՈՒՆ

Ձ-156. Գտնել դերանունները և բացատրել նրանց իմաստային յուրահատկությունները. ինչո՞վ են տարբերվում առարկա, հատկանիշ ցույց տվող մյուս խոսքի մասերից /գոյականից, ածականից, թվականից, մակբայից/:

Մի անգամ Էդիսոնը գանգատվեց Էյնշտեյնին.

-Ոչ մի կերպ չեմ կարողանում ինձ համար օգնական ընտրել: Ամեն օր ինձ մոտ են գալիս մի քանի երիտասարդներ, սակայն նրանցից ոչ մեկը գիտելիքներով չի համապատասխանում այդ պաշտոնին:

- Իսկ ինչպե՞ս եք Դուք դա որոշում,- հարցրեց Էյնշտեյնը:

- Այս հարցաթերթիկով,- պատասխանում է գյուտարարը:

Էյնշտեյնն աչքի անցկացրեց Էդիսոնի հարցերը:

«Քանի՞ մղոն է Նյու Յորքից մինչև Չիկագո»,- կարդաց նա և ասաց.

- Պետք է նայել երկաթուղային տեղեկագրում:

«Ինչպե՞ս է ստացվում չժանգոտվող պողպատը»:

- Այս մասին պետք է կարդալ մետաղների ստացման տեղեկագրում:

«Իսկ որքա՞ն է վոլֆրամի տեսակարար կշիռը»:

Ոչինչ չգիտեմ: Պետք է նայել մետաղների տեսակարար կշիռների աղյուսակը, որը սովորաբար զետեղված է լինում ֆիզիկայի դասագրքի վերջում, - պատասխանում է Էյնշտեյնը:

«Ե՞րբ»... «Ինչքա՞ն ժամանակ»... «Ինչու՞»... «Ինչպիսի՞ն է»…. «Ո՞վ և որտե՞ղ»….

Այս ձևով նա կարդաց բոլոր հարցերը և կատակով նկատեց.

-Ես չեմ սպասում, որ Դուք մերժեք ինձ: Ես ինքս ետ եմ վերցնում իմ թեկնածությունը:

-Այնուամենայնիվ, ես Ձեզ կընդունեի ինձ մոտ,- նույնպես կատակով պատասխանեց Էդիսոնը: -Դուք թեև չգիտեիք հարցերի պատասխանները, բայց գիտեիք, թե ինչպես կարելի է որևէ բան իմանալ, ուրեմն՝ Դուք այն գիտեք:

Ձ-157. Գտնել դերանունները և որոշել նրանց տեսակը:

Հավատում էի ես, գիտեի հաստատ, որ այս աշխարհում
Դու ինչ-որ մի տեղ ապրում ես ու կաս,
Բայց չգիտեի, որ մոտ ես այդքան ու հենց այս գարուն
Հայտնվես պիտի ու գարնան հետ գաս:
Այդպես է հոգիս, ով հավատում է կյանքում հրաշքի,
Նրան է միայն հրաշքն այցելում…
…Եկել եմ ահա ու բերել նորից գաղտնիքն ու ցավը,
Որ գիտեն այնպես տրտմորեն լացել,
Եվ իմն է ասես լեռներում կորած այն քարանձավը,
Որի գաղտնիքը ոչ ոք չի բացել:
Իմն է հեքիաթի ցայգածաղիկը, այն ծաղիկը լուրթ,
Որի ծաղկումը չի տեսել ոչ ոք…
Իմն է ձնհալի այն վայրկյանը լույս, վայրկյանը բարի,

Որից գետերն են հանկարծ ցնորվում:
...Եկել, կախվել ես իմ բախտի վրա դու որպես ասուպ,
Ու որպես գաղտնիք, ու լույս, ու խավար: /Վ. Դավթյան/

Ա Չ-158. Դուրս գրել անձ ցույց տվող բառերը, առանձնացնել անձնական դերանունները և նշել նրանց իմաստային, ձևաբանական ու շարահյուսական-կիրառական առանձնահատկությունները:

Մանուկ հասակից Արքիմեդը բարեկամանում է գրքերի աշխարհի հետ և ամբողջ կյանքում չի դադարում հիանալ նրանց հավերժական օրենքների խստիվ տրամաբանությամբ, որոնց համեմատ մարդկային օրենքները անկատար են, սին ու անցողիկ: Սակայն Արքիմեդը լքեց Ալեքսանդրիան, ուր ամենազոր պտղոմեոսները, մի աստանդական փիլիսոփայի խոսքերով ասած, «բտում էին ձեռնասուն գրքային որդերին», որոնք անվերջանալիորեն վիճում էին «մուսաների թռչնանոցում», ուր «մեխանիկան արհեստավորական գործ էր և վայել ստրուկին»:

Սիրակուզայում չար լեզուներն ասում էին, որ Արքիմեդը մոռանում էր ուտել և գծագրում էր ամեն տեղ՝ մոխրի, ավազի, նույնիսկ իր մարմնի վրա, հազվադեպ էր լինում բաղնիքում... Բայց լոգանք ընդունելիս է նրա ուղեղում հանկարծ առկայծում հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա ներգործող՝ դուրս հրող ուժի գաղափարը...

Այսօր անհնարին է առանց հիացմունքի ու զարմանքի կարդալ Պլուտարքոսի այն տողերը, որոնք պատմում են հռոմեացի զորավար Մարցելիուսի կողմից Սիրակուզան պաշարելու մասին... «Ինչ արած, մենք ստիպված պիտի լինենք դադարեցնել պատերազմը երկրաչափի դեմ»,- ոչ այնքան ուրախ սրամտել է Մարցելիուսը... Շատ տարիներ անց, նայելով Արքիմեդի՝ երկնային լուսատուների բարձրագույն մոդելին, Մարկոս Տուլիոս Ցիցերոնը կասի. «Այս սիցիլիացին օժտված էր մի հանճարով, որին, թվում է, մարդկությունը ի վիճակի չէր հասնելու»:

Արքիմեդը պատվիրել էր իր շիրմաքարին փորագրել երկրաչափական իր հայտնագործությունների խորհրդանիշները՝ գունդ և գլան: 137 տարի հետո նույն Ցիցերոնը Աբրոդիսյան դարպասի մոտ գտավ նրա շիրմաքարը... Հետո շիրիմը նորից մոռացվեց, և այս անգամ՝ ընդմիշտ: Սակայն Արքիմեդի անունը մնաց: Ու հարյուրամյակներ անց էլ սերունդները միշտ կլսեն նրա ցնծալից, հպարտ բացականչությունը՝ գիտության վսեմ մարտակոչը, նշանաբանը բոլոր նրանց, ովքեր որոնում են՝ «Է՛վրիկա»

/Ըստ Յարոսլավ Գոլովանովի/

Ա Չ-159. Մատնանշել այն շարքը, որի մեջ մտնող անձնական դերանուններն արտահայտում են՝

Ա. Խոսող.

1. ես, նրանցից, դուք, ձեր, մեզնով, քեզ
2. ես, ինձնից, ինձնով, ինքս, իմ, ինձ
3. նրանք, իրենք, մենք, ձեզ, ինձնից, քեզնով

Բ. Խոսակից և իրեն առնչվող անձեր՝
1. ես, մեզնով, նրանցից, իրեն, ձեր, իմ
2. դուք, ձեզնից, քո, ես, իր, քեզնով, յուր
3. դուք, ձեզանից, ձեր, ձեզնով, ինքներդ, ձեզ

Գ. Երրորդ անձ
1. մենք, դու, իրեն, նրանից, ձեզնով, ինձ
2. նրան, յուր, նրանից, իրենով, նա ինքը, իր
3. քեզնից, իրենք, մենք, քո, նրանցից, նրանցով

Ղ-160. Գրել՝
ա/ Խոսող նշանակող դերանվան բացառական հոլովաձևը.
բ/ Խոսակից և իրեն առնչվող անձեր նշանակող դերանվան տրական հոլովաձևը.
գ/ Երրորդ անձ նշանակող դերանվան ուղիղ ձևը.
դ/ Խոսակից նշանակող դերանվան գործիական հոլովը.
ե/ Խոսող և իրեն առնչվող անձեր նշանակող դերանվան թեք ձևերը:

Ղ-161. Ա. Գտնել անձնական դերանունները, խմբավորել ըստ թվի և դեմքի: Որոշել նրանց շարահյուսական գործառույթը:

Բ. Խմբավորել ըստ հոլովման հատկանիշի՝ ա/ անվանական. բ/ դերանվանական. գ/ չհոլովվող:

1. Հավատում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ.- Ցեղեր են եկել, արշավել ցեղեր, Քո արդար ու հին արյունն են հեղել, Ասպատակել ու ջարդել են քեզ, Դարեր ու դարեր աղարտել են քեզ, Բայց դու Նարեկով ինքդ քեզ գտել, Քո սուրբ հարության հրաշքը գտել, Եվ քո վաստակով, քո կոթողներով, Քո մատյաններով, սիրո տողերով Հասել հողմերի այս ահեղ դարին /ՎԴ/: 2. Ամեն անգամ քեզ հանդիպելիս Ես թեթևակի բարև եմ տալիս Ու անցորդներին այնպես է թվում, թե մենք հազիվ ենք իրար բարևում: Չգիտեն նրանք և ի՛նչ իմանան, Որ կանգ է առնում սիրտն իմ մի վայրկյան, Ու ես քայլերն եմ մի պահ շփոթում, Մոռանում աշխարհն, օդ փնտրում օդում.. /Ն/: 3. Աշնան գիշերով այս խոնավ Քրքրում ես ինքդ քեզ ու ինքդ քեզ բզկտում /Ն/: 4. Այսօր նվում է իմ մեջ մի թախծալի մեղեդի. Ու տանջում է ինքն իրեն, որ գտնի խոսք ու բառեր /Ն/: 5. Հերի՞ք է, հերի՞ք է այս ցավը, Ինքս ինձնից պարպվել, Ինքս ինձնից փրկվել, Հեռանա՛լ, գնա՛լ, մեկնե՛լ եմ ուզում /ՄԿ/: 6. Եվ մենք հիմա մեզ ինքներս Պիտի բացենք հոժարակամ... Հիմա պիտի մենք ինքներս հանգիստ նստենք Հեռուստացույց-աշտարակի բարձր ցցին, Որպեսզի Մենք ինքներս ցցվենք-մնանք Ողջ մարդկության ականջներում ու աչքերում /ՊՍ/: 7. Խղճա ինձ և ինքդ էլ ասա. Սիրելի՞ս, քեզ բարի գիշեր.../Ն/: 8. Դիմավորեցեք կասկա՞ծը: Նա է թակում ձեր դուռը: Նա է, հենց «ինքը»: Դիմավորեցեք նրան ծիսաբար /Ն/:

🕮 Ջ-162. Ա. Բացատրել տրված հակադրական շարքերի միջև եղած իմաստային և լեզվա-ոճական տարբերությունները:

Բ. Ընտրել հակադրական մի շարք և յուրաքանչյուրով կազմել նախադասություն:

ես // ինքս // ես ինքս	մենք // ինքներս // մենք ինքներս
դու // ինքդ // դու ինքդ	դուք // ինքներդ // դուք ինքներդ
նա // ինքը // նա ինքը	նրանք // իրենք // նրանք իրենք /ինքները/

🕮 Ջ-163. Կարդալ և ուշադրություն դարձնել մարդկանց՝ միմյանց քաղաքավարի կերպով դիմելու դրսևորումներին: Բացատրել դրանց իմաստային-ոճական նշանակությունը և մատնանշել կիրառական սահմանները:[1]

● Երբ Դուք ծխում եք Ձեր գլանակը, թվում է՝ նրա կրակի մեջ Իմ էությունից ինչ-որ բան կա: 2. Երգս կանգնած է կես ճանապարհին Եվ Ձեր հայքից մի պահ երկնչում, Սիրտս .օդի պես Ձեզ անհագ շնչում, Բայց չի նկատում՝ որտե՞ղ եք, Մարի՛. ...Թույլ տվեք Ձեզնով հիանալ անխոս, Սակայն Ձեզ չերգե՛լ... /Ա. Կապուտիկյան/

● Էյնշտեյնը շատ էր սիրում Չառլի Չապլինի կինոնկարները և մեծ հարգանք էր տածում նրա նկատմամբ: Մի անգամ նա այսպիսի նամակ գրեց Չապլինին. «Ձեր «Ոսկու տենդը» հասկանալի է աշխարհի բոլոր մարդկանց, և Դուք անպայման մեծ ու հռչակավոր մարդ կդառնաք»:

Ի պատասխան նրան՝ Չապլինը գրեց. «Ես Ձեզանով ավելի եմ հիանում. Ձեր հարաբերականության տեսությունը շատ քչերին է հասկանալի, բայց Դուք, այնուամենայնիվ, արդեն մեծ ու հռչակավոր մարդ եք»:

🕮 Ջ-164. Ըստ անհրաժեշտության լրացնել ես կամ մենք դերանունները:

1. նպատակ /.../ ունեցել քննական հայացքով դիտարկել մեր դարաշրջանի բոլոր «հրաշքները»՝ տխրահռչակ տիեզերական եկվորներից սկսած մինչև ձնե մարդը, Լոխ-Նես լճի հրեշը և այլն: 2. ատոմային էներգիայի բնագավառում աշխատող գիտնականներս, ավելի քան որևէ մեկը, տեսնում /.../, որ ատոմային կամ ջրածնային զենքերի գործարկումը մարդկությանը կտանի դեպի անհամար թշվառություններ: 3. «... /գիտենալ/, որ ոչինչ չգիտեմ», - ասել է հույն փիլիսոփան: 4. Այս գրքում պատմում / ../ գիտության մասին. պատմում /.../ նաև գիտության մարդու հոգու մասին: 5. Արքայի հրովարտակում հնչում էր. «Այսօրվանից մտածելու /.../ ժողովրդի մասին, հոգալու /.../ նրա հոգսերը, կիսելու նրա վիշտն ու

---

[1] Ծ. **Քաղաքավարական հոգնակիի ձևի սովորությունը գալիս է հռոմեական կայսրերից: Իբրև եռապետ՝ նրանք խոսում էին եռապետ/ն/երի կամ ծերակույտի անունից և ասում էին՝ մենք... Նրանց էլ դիմում էին բնականաբար դուք-ով: Այսպես Դուք-ը դարձավ քաղաքավարական ձև, իսկ մենք-ը՝ ոճական յուրահատուկ միջոց է ես դերանվան իմաստով՝ մեկ խոսքին հանդիսավորություն տալու, մեկ էլ «սեփական ես թաքցնելու» նպատակով:**

ուրախությունը: 6. «Երբ մտածում /.../ պրոֆեսոր Էյնշտեյնի մասին, զգում /../, որ ... արդեն մենակ /.../ այս աշխարհում»,- ասել է անօթևան մի ծերունի:

** Չ-165. Ինքն իրեն, ինքնիրեն և իրեն-իրեն բառերով նախադասություններ կազմել և բացատրել նրանց խոսքիմասային տարբերությունները:**

Չ-166. Ա. Հիմնավորել այն, որ անձնական դերանուններից ածանցմամբ կամ բառաբարդմամբ նոր բառեր չեն ստեղծվում:

Բ. Սուքիասյանների «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանից» /կամ ցանկացած բացատրական, ուղղագրական բառարանից/ դուրս գրել ես և ինքն /ինքը/ դերանուններով բաղադրված բառերի շարքը, բացատրել նրանց իմաստային յուրահատկությունը:

Չ-167. ☑ Բնութագրիր ինքդ քեզ՝ «Ես....»:

Չ-168. ☑ Վերաշարադրել խոսակցի անունից:

Ամառ էր: Մայրական գրկից, հայրական օջախից պոկված՝ ես գնում եմ մի հեռու՛, շատ հեռու՛ երկիր, ուր ամեն ինչ խորթ էր ինձ համար... Ահա հայրենիքիս կապույտ լեռները սևին են տալիս, և ես նրանց լռիկ ծոցում եմ... Եվ ծերուկ ժայռի ստվերում դողդողաց դալուկ շուշանը. ես խոնարհվեցի, ընքշությամբ քաղեցի նրան, դրեցի բաբախող կրծքիս վրա: Անցա լեռները, անցա հայրենիքիս սահմանակալ հսկա պահնորդները՝ ինձ հետ տանելով հայրենի երկրի թանկագին հիշատակները՝ մի բուռ հող ու թոշնած շուշանը...

Օտար աշխարհի մի խուլ անկյունում եմ ապրում ես: Այնտեղ, ուր լարված մտքերով թաղված եմ գիտության անհունության մեջ, այնտեղ իմ առջև գրքերի միջից աչք է ծակում անշուք ծաղկամանը, նրա մեջ եմ լցրել հայրենիքիս մի բուռ հողը, որի մեջ թաղել եմ մի գունատ շուշանի սերմիկները և նվիրական փոշին ցողել եմ իմ կարոտավառ արցունքներով: Եվ այդ անքուն գիշերների մենակության և լռության մեջ:

Օրեր անցան: Ահա դուրս եկան հողի կրծքից մեռած շուշանի մատաղ ծիլերը, իմ շնչով, իմ արցունքով նրանք աճեցին և այժմ սպիտակափառ շուշաններ են, որոնց բողբոջից կուսական սրբությամբ փայլում են իրենց ջինջ աչիկները: Իմ անձուկ սենյակը նրանք լցրել են անուշ ամբրոսով, և ես սուզված եմ այդ խնկաբույր ծովում: /Ավ. Իսահակյան/

Չ-169. ☑ Տրված հատվածը սկիզբ դարձնելով՝ 3 կարճ պատմություն հորինել՝ մեկը խոտողի անունից, մյուսը՝ խոսակցի, երրորդը՝ մի երրորդ անձի:

Բակի կենտրոնում երևաց շուրջբոլորը լուսավորող կուրացուցիչ լույս: Այն շատ ավելի պայծառ էր լուսնի լույսից, և նրա ծագումը բացատրել հնարավոր չէր. գալիս էր ինչ-որ վերևից՝ ասես ցած ուղղված լուսարձակներից: Բայց երկնքում ոչինչ չէր երևում:

Լուսնի բիծը մոտեցավ պատուհանին. այն վառ կարմիր գույնի էր:

Հանկարծ երևաց լույսի աղբյուրը. նա մեկ շարժվում էր, մեկ՝ անշարժանում...

🕮 Ձ-170. Հոլովել ես կամ նա դերանունը, հոլովաձևերով կազմել նախադասություններ և որոշել նրանց շարահյուսական պաշտոնը:

🕮 Ձ-171. Ա. Դուրս գրել կապերն իրենց կապի խնդիր-անձնական դերանունների հետ, որոշել վերջիններիս հոլովը:

1. Ա՜խ, մայրիկ ջան, ոտքերս չէ, Սի՜րտս է մրսում առանց քեզ /ՀԾ/: 2. Ա՜խ, իմ ժողովուրդ, Ես դեռ չկայի, Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՝ Ծալվելու պատրաստ մեջքդ գրկելով /ՊՍ/: 3. Ու ես անվերջ Ինքս եմ խոսում իր փոխարեն և իմ տեղ՝ Այն մարդու պես, Որ ինքն իր հետ մենակ շախմատ է խաղում /Ն/: 4. Քեզնից հեռու ես ապրում էի Կարծես թե ինքս էլ ինձնից հեռու /Ն/: 5. Երեք աղջիկ թե հանդիպեն մի օր իրար, Պիտի խոսեն իրենց սիրուց իրավ, Որ չիմանան, որ սիրում են մեկին. Նրան, ով սիրել է իրենց մեկտեղ- Մեկին՝ <u>իմ պես,</u> Մեկին՝ <u>ինձ պես</u>, Իսկ երրորդին էլ՝ ինձ նման /Ն/: 6. Եվ ու՜ր էլ քեզնից հեռանում, անգին, Քայլերս կրկին քեզ մոտ են բերում /ԳԷ/: 7. «Ես կերգեմ քեզ համար.... քո մասին ..քո փոխարեն»,- ասաց մտքում, և մատների տակից մի հնչյուն թև առավ /ՄԳ/:

Բ. ❖ Նորից կարդալ ընդգծված կապակցությունները և փորձել բացատրել հեղինակային նման օգտագործման նպատակը՝ սխալ ու ճիշտ ձևերի համադրման ոճական արժեքը:

🕮 Ձ-172. Գրել պահանջված հոլովաձևերով:

/Նա/ մոտ, /դու/ հետ, /նրանք/ մեջ, /նա/ կողքին, /ես/ համար, /դուք/ մասին, /մենք/ դեմ, բացի /դու/, /նա/ համար, /ես/ շնորհիվ, առանց /մենք/, /ես/ նկատմամբ, /ես/ պես, բացի /նրանք/, հանուն /դուք/, դեպի /դու/, /նա/ չափ, /ես/ վրա, /նրանք/ փոխարեն, /ինքը/ համար:

🕮 Ձ-173. Գտնել դերանվան և գոյականի այն կապակցությունները, որոնք կարելի է փոխարինել ս, դ հոդերն ունեցող գոյականներով, ինչպես օրինակ՝ իմ աչքերի աչքերիս, **և հակառակը՝ հոդակիր բառերը փոխարինել «դերանուն + գոյական» կապակցություններով:**

Մոտենում է, քու յր իմ, ա՜խ, իրիկունս միգամած,
Ես ինչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից,
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած,
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ:
Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան.
Ի՞նչ էլ լինի, քու յր իմ, քու յր, հեռանալիս չանիծե՜ս
Խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան. /Ե. Չարենց/

🕮 Ձ-174. **Դերանվանական բառաշարքերում առանձնացնել այն շարքը, որը միայն ցուցական դերանուններ է ընդգրկում:**
ա/ մենք, ոչինչ, ամենքը, այդպիսի, այնքան, նրանք, իրար, ուր
բ/ այդպիսի, այնքան, սա, այդտեղ, մյուս, այսպես, միևնույն, սույն
գ/ այդպիսի, դու, որքա՞ն, այդչափ, այնտեղ, միմյանց, նույն, նա

🕮 Ձ-175. **Ո՞ր խոսքի մասին է հարաբերակից ցուցական դերանունների շարքերից յուրաքանչյուրը: Բացատրել կազմությունը:**
ա/ սա, դա, նա
բ, այս, այդ այն
գ/ սույն, նույն, միևնույն, մյուս
դ/ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի
ե/ այսպես, այդպես, այնպես, նույնպես
զ/ այսքան, այդքան, այնքան, նույնքան
է/ այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ
ը/ այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ

🕮 Ձ-176. **Գտնել ցուցական դերանունները և նշել նրանց ձևաբանական-ձևակազմական հատկանիշները:**

1. Մենք դուրս ենք եկել նույն քարանձավից Ամե՜ն ակնթարթ: Նույն քարանձավն է մեզ հետապնդում Մեր ներսի՜ց արդեն /ՊՍ/: 2. Ասել-ասում են, թե լավ է այնտե՛ղ, Որտեղ մենք չկանք: Իսկ ես պնդում եմ, որ լավ է այնտե՛ղ, Որտեղ մենք չենք կարող չլինել ու կա՜նք /Ն/: 3. Դու այնքան քնքուշ ես նվագում, Եվ այնպես մեղմորեն հուզում ես, Ինձ մոտիկ է այնքան հուզումդ, Դու այնպես քնքուշ ես նվագում /ԳԷ/: 4. Դու նույն աղջիկն էիր, այնպես նուրբ ու բարակ, Անսեթևեթ այնպես, այնպես բարի, Դու նույն աղջիկն էիր՝ մազերդ հյուս արած /ՎԴ/: 5. Այսպես մենակ, այսպես ոտի, Այսպես խոնարհ, այսպես ըմբոստ, Այսպես փխրուն, այսպես շիտակ, Այսպես խրթին ու այսպես պարզ Կանգնել է նա երկնքի տակ /Ն/:

🕮 Ձ-177. **Ա. Սա, դա, նա դերանունները գործածվում են թե՛ անձի, թե՛ իրի նշանակությամբ: Նման նշանակություններով գործածել նախադասությունների մեջ և բացատրել կիրառական-ոճական տարբերությունները:**

Բ. Հոլովել վերջիններս թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

🕮 Ձ-178. **Կազմել 2-ական նախադասություններ** այս, այդ, այն **ցուցական դերանուններով այնպես, որ մի դեպքում դրանք ունենան առարկայական իմաստ, մյուս դեպքում՝ հատկանշային:**

🕮 Ձ-179. Այս և այն **դերանունները կապակցել** և, ու, կամ **շաղկապներով կամ առանց դրանց /զծիկով/ ու համապատասխան նախադասություններ կազմելով՝ ցույց տալ դրանց նոր՝ անորոշական իմաստ ձեռք բերելը:**

🕮 Ձ-180. Այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ ցուցականներն օգտագործել նախադասությունների մեջ այնպես, որ մի դեպքում առարկայի հատկանիշ ցույց տան, մյուս դեպքում՝ գործողության հատկանիշ, երրորդ դեպքում՝ հատկանիշի հատկանիշ:

🕮 Ձ-181. Գտնել ցուցական դերանունները և որոշել նրանց շարահյուսական պաշտոնը:

Մի անգամ «ատոմային ռումբի հայր» Ռոբերտ Օպենհայմերին խնդրեցին այնպիսի բան պատմել Էյնշտեյնի մասին, որն իրենց հայտնի չէ: Մի քիչ մտածելուց հետո նա ասաց.

- Այս դեպքը պատահել է Փրինսթոնի համալսարանում: Քննության նախօրյակին ես Էյնշտեյնին հարցրի, թե ի՞նչ հարցեր են լինելու քննաշրջանում:

- Ես պետք է նույն հարցերը տամ, ինչ որ անցյալ տարի:

- Այդ դեպքում Դուք կստանաք ճիշտ նույն պատասխանները:

- Այդպես մտածելով՝ Դուք սխալվում եք, սիրելի՛ս: Միևնույն հարցերի պատասխանները չպետք է նույնը լինեն: Այս մեկ տարում գիտությունն այնքա՛ն շատ է փոխվել, այնպե՛ս է փոխվել, հարստացել այնպիսի՛ հայտնագործություններով ու դրույթներով, որոնք փոխել են այն ժամանակ տրված հարցերի այսօրվա պատասխանները:

🕮 Ձ-182. Դերանվանական տրված շարքերից առանձնացնել միայն փոխադարձ դերանուններ ընդգրկող շարքը և բացատրել նրա բառամիավորների իմաստային յուրահատկությունը:

ա/ իրար, մեկմեկու, միմյանց, մեկմեկի

բ/ իրարից, ինչու՞, մեկն ու մեկը, ոչ մի, ամեն ոք

գ/ միմյանց, երբևիցե, մի քանիսը, ոչ մեկը

🕮 Ձ-183. Գտնել փոխադարձ դերանունները, բացատրել նրանց իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

1. Այսպես, գնա՛ց Հայրիկը, նա էր ցրված հայերին մի տեղ ժողովել և այնպես բարձր կապերով կապել միմյանց, որ մեզ թվում էր, թե մենք բոլորս մի մեծ ընտանիքի զավակներ ենք /ԱԽ/: 2. Ցածում ելնում են օրոցքի հովտից, Իրար են գրկում ցածում մարդացած, Մեկմեկու համար մեռնում են վշտից, Վերևից նայում, ժպտում է աստված· Ցածում իրար են անհաշտ հոշոտում, Ցածում իմաստուն ու խելագարված, Իրար հոշոտում, իրար են ..պաշտում. Երկնքից տեսնում՝ ապշում է աստված /ՀԾ/: 3. Կանգնել են մայր ու որդի իրար դիմաց ու անբառ, Իրար դիմաց ու անշարժ, ասես գլամված մեկմեկու /ՄԿ/:

🕮 Ձ-184. Ա. Հոլովել փոխադարձ դերանունները և բացատրել նրանց ձևաբանական յուրահատկությունները: Ընտրել մեկը և նրա տարբեր հոլովաձևերով կազմել նախադասություններ՝ բացատրելով շարահյուսական յուրահատկությունները:

🕮 Ղ-185. Փոխադարձ դերանուններով կազմել կապական կառույցներ և օգտագործել նախադասությունների մեջ:

🕮 Ղ-186. Առանձնացնել դերանվանական այն բառաշարքը, որի բոլոր միավորները հարցահարաբերական դերանուններ են:
ա/ ով, այս, մենք, իրար, դուք, համայն, բոլորը, ոչ մի, մեկը, դու
բ/ ինչ, քանի, որքան, ինչպիսի, որտեղ, որպիսի, երբ, քանիերորդ
գ/ քանիսը, որերորդ, նրանք, ոչինչ, այդքան, այնպիսի, միմյանց

🕮 Ղ-187. Ա. Գրել այն հարցական դերանունները, որոնցով արտահայտված հարցումը վերաբերում է՝ ա/ անձի. բ/ իրի. գ/ առարկայի հատկանիշի. դ/ գործողության հատկանիշի:
Բ. Բացատրել նրանց կազմությունը:

🕮 Ղ-188. Դուրս գրել հարցական դերանունները և դասդասել ըստ խոսքիմասային առնչությունների: Բացատրել նրանց յուրատիպությունը դերանվան մյուս տեսակների համեմատությամբ /թե՛ բանավոր խոսքում, թե՛ գրավոր/:
● 1. Ինչի՞ց, տե՛ր աստված, ինչի՞ց է, ինչո՞ւ, Որ ամենից շուտ և ամենից շատ Իրեն՝ մարդու մեջ հենց մարդն է կորչում... Ինչպե՞ս, տե՛ր աստված, Մենք ինչպե՛ս անենք, Որ չտապակվենք անարժեքությամբ /ՊՍ/: 2. Քանի՞ չասված շշուկներ խեղդվեցին հողի տակ, Քանի՞ սիրող հայացքներ դեռ չբացված փակվեցին /ՄԿ/: 3. Իր ի՞նչ գործն է, թե կա սահման ու կա վեճ, Իր ի՞նչ գործն է, թե կան ռումբեր ու հրթիռ... /Ն/: 4. Ինչպե՞ս խեղդենք սև խոռվքը Սասնա տան, Ինչպե՞ս մարենք այսքան կարոտ, փառք ու կիրք, Այսքա՞ն երազ ինչպե՞ս թաղենք գետնի տակ... «Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր» /Ն/: 5. Ո՞վ է տվել նրան՝ այս ծերունուն վսեմ, Այս ժպիտը անչար, այս հայացքը վսեմ, Ո՞վ է տվել նրա երգին կախարդական Այս խոհերը խորունկ, իմաստությունն այս ջինջ /ԳԷ/: 6. Ա՜խ, կարոտներս այս խենթ Ինչու՞ են սիրտն իմ տանջում, Ո՞ւր են, ո՞ւր են ինձ կանչում, Ո՞ւր են տանում, չգիտեմ /ՎԴ/: 7. Ե՛րբ և ո՛ր ժամանակ. հայտնի չէ, բայց անհիշատակ դարերից սկսած մարդու էության մեջ տիեզերական գաղտնիքից մի հյուլե էր ընկել, որ աճեց..., մեծացավ և անողոքությամբ կանգնեցրեց մարդու կյանքի գնացքը և հարցրեց. «Ինչո՞ւ ես ապրում, ո՞ւր ես գնում և ինչո՞ւ, ո՛վ մարդ» /ԱԽ/: 8. Ո՛վ գիտուններդ և իմաստուններդ, ասացեք՝ ինչի՞ համար է ապրում մարդը, ի՞նչն է կյանքի նպատակը, որտեղի՞ց ենք գալիս մենք, ո՞ւր ենք գնում մենք, ի՞նչ է նյութը, ի՞նչ է ուժը, և ինչո՞ւ են դրանք, պատասխանեցեք ինձ: Ասացեք, ի՞նչ է տիեզերքը, ինչո՞ւ ստեղծվեց նա, ե՞րբ է նրա սկիզբն ու վախճանը, և, վերջապես, ի՞նչ է ժամանակն ու տարածությունը, ինչո՞ւ են դրանք... /Ն/:
● Հույներն են դրել գիտության առաջին հիմնաքարերը... Ինչպես ամեն մի պատկեր, սա ևս կախված էր նրանից, թե որտե՛ղ է գտնվում դիտողը, որտեղի՛ց է նայում աշխարհին և ինչպե՛ս է նայում: Իրոք, որտե՞ղ պետք է տեղադրել դիտողին, որ նա կառուցի աշխարհի իսկական պատկերը: Հին հույների համար

տիեզերքի կենտրոնը Երկիրն էր, որի շուրջը պտտվում էին բոլոր երկնային մարմինները: Սակայն Կոպեռնիկոսի «հրամանով» կանգ առավ Արեգակը, և սկսվեց շարժվել Երկիրը: Պարզ դարձավ, որ մարդը պետք է ավելի համեստ լինի իր հավակնությունների մեջ և իրեն ու իր օրրանը՝ Երկիրը, չհամարի աշխարհի կենտրոնը: Մշուշը հետագայում էլ ավելի է թանձրանում, երբ պարզվում է, որ Արեգակն էլ մի շարքային աստղ է, Տիեզերքի կենտրոնում չէ և ամենևին էլ անշարժ չէ: Մարդը վտարվեց նաև Արեգակի վրայից: Նա որտե՞ղ պետք է հանգրվանի, ե՞րբ պետք է գտնի հենման կետ, ո՞րն է այն: Ինչքա՞ն ժամանակ է անցել նրա ծնունդից, և դեռ ինչքա՞ն էլ մարդը պետք է իրեն միայնակ զգա Տիեզերքում: Որտեղի՞ց պետք է սկսի կառուցել աշխարհի իսկական պատկերը: Իսկ կա՞ արդյոք այն: Ինչո՞վ չափել ժամանակը, ի՞նչ միավոր ընտրել տարածության չափման համար: Ինչո՞ւ է երերում գիտության ոտքի տակի հողը, ինչո՞ւ է խորտակվում աշխարհի հին պատկերը: ...Մի՞թե Խավարն է պատել Տիեզերքն այս մեծ... Բայց... «Եղիցի՛ լույս...»: **/Ըստ Ս. Ավետիսյանի/**

📖 **Չ-189. Ընտրել այն շարքը, որի հարցական դերանունները հոլովվում են:**
ա/ ո՞վ, ինչպիսի՞, ինչքա՞ն, ինչո՞ւ, քանի՞երորդ
բ/ ինչպե՞ս, որքա՞ն, որպիսի՞, որչա՞փ, քանի՞
գ/ ո՞վ, ի՞նչ, ո՞ր, որտե՞ղ, քանի՞սը, ե՞րբ

📖 **Չ-190. Ինչպիսի՞, որքա՞ն, ի՞նչ, քանի՞, ո՞վ հարցական դերանուններով նախադասություններ կազմել այնպես, որ դրանք մեկ հարցում արտահայտեն, մեկ՝ բացականչություն, մեկ էլ հրամայական երանգ ունենան:**

📖 **Չ-191. Ընդգծել հարաբերական դերանունները՝ որոշելով խոսքի մեջ նրանց շարահյուսական-կիրառական առանձնահատկությունները:**

«Հնազանդվելով իմ անհագուրդ ձգտմանը՝ մութ ժայռերի մեջ թափառելիս ես մոտեցա մի մեծ քարանձավի մուտքի, որտեղ մի վայրկյան մտախոհ կանգ առա... Հանկարծ իմ մեջ երկու զգացմունք արթնացան՝ վախը և ցանկությունը», -այսպես է գրել Լեոնարդո դա Վինչին, այսպես է, երևի, նա մտածել այն չորս երկար ու ձիգ տարիների ընթացքում, երբ աշխատել է Մոնա Լիզա Ջոկոնդայի դիմանկարի վրա, քանզի ամեն մի վրձնահարվածը, որ կատարել է, նրա մեջ և՛ վախ է առաջացրել, և նոր գաղտնիքներ հայտնաբերելու անսանձ կիրք:

Վազարին, որի շնորհիվ մենք քաջատեղյակ ենք Վերածննդի ժամանակաշրջանի շատ վարպետների կյանքի մանրամասնություններին, գրում է, որ երբ Լեոնարդոն հանձն է առնում Ֆրանչեսկո դել Ջոկոնդայի համար նրա կնոջ դիմանկարը, հրավիրում է երաժիշտների, որոնք նվագում են քնարի վրա և երգում, ծաղրածուների, որոնք մշտապես պահպանում էին այդ կնոջ լավ տրամադրությունը: Մի հանգամանք, որով և պետք է բացատրել Ջոկոնդայի անկրկնելի ժպիտը:

20-րդ դարի սկզբներին «Ջոկոնդան» անհետացավ. կիսաոգևորված մի իտալացի գողացավ դիմանկարը և տարավ այնտեղ, ուր իր կարծիքով ոչ ոք չէր գտնի այն...

1974թ. Տոկիոյում ցուցադրելու ժամանակ հերթական մի կիսախելագար կրակեց դիմանկարի վրա, սակայն Մոնա Լիզայի ժպիտը նորից փրկվեց:

Նախանձելի ճակատագրի տեր է այս լուսանկարը...

🕮 Ձ-192. Ով, որ, ինչ, որքան, երբ **դերանունները նախադասությունների մեջ գործածել՝**

ա/ որպես հարցում արտահայտող միավորներ

բ/ որպես նախադասություններ շաղկապող միավորներ:

🕮 Ձ-193. **Որոշել ինչ դերանվան կամ ինչ բաղադրիչն ունեցող կազմությունների նշանակությունները:**

● 1. Ի՞նչ լավ է գյուղում Կոմիտաս լսել /ՄԳ/: 2. Ասենք ազգդ զորեց-անցավ, հետո ի՞նչ, Աշխարհի էլ տերը դարձավ, հետո ի՞նչ /ՄԿ/: 3. Իր ի՞նչ գործն է, թե կա սահման ու կա վեճ /Ն/: 4. Էլ ինչի՞ տքնեմ ու տոկամ, Ինչ է թե՝ պարտքս տամ գալիքին /Ն/: 5. Երազիս մեջ օձեր տեսա, -Ի՞նչ երազ է, մայր իմ, ասա /ՀԸ/: 6. Այս ի՞նչ մութ է աշխարհն, աստված /Ն/:

● 1. Հեշտ է՝ կարծում ես, կասկածել, Ի՞նչ կասկածել, տեսնել աչքով... 2. Ի՞նչ, Քեզ պահում են ձեռքերի վրա՞, Եվ դու ուրա՞խ ես... 3. Ի՞նչ անեմ՝ Ելնեմ ա՞յդ էլ իմանամ... 4. Թե ես մեռնեմ, Աշխարհին ի՞նչ, Նա միայն ի՞նձ կկորցնի... 5. Եվ, ի՞նչ որ ուներ, Եվ, ի՞նչ որ ունի, Ի՞նչ որ կունենա,- Իր բախտի ու կյանքի հետ միակ Ինձ զո՞հ է բերում... 6. Այս «ձգողական օրենքից» Ի՞նչ օրենք ասես՝ մեզ չպատահեց: 7. Աստվա՞ծ իմ, այս ի՞նչ հրաշք ես արել... 8. Բայց եթե սերը՝ սե՛ր է իսկական, Մատնու՞մ է իրեն՝ ի՞նչ էլ որ անես... 9. Ներշնչումն ա՛յն է, Երբ ի՞նչ ասում ես, Ի՞նչ մտածում ես, Ողջ աշխարհով մեկ Կարծես լսվու՞մ է. Ինչին նայում ես՝ Քեզ հմայու՞մ է... Երբ ինչ անցել է Ու մոռացվե՞լ է, Հանկարծ շնչում ու Կենդանանու՞մ է. Երբ ա՛յն. ինչ ծա՞նր է... Կորչու՞մ է անդարձ... 10. Ի՞նչ եղավ դափին, Ո՞վ ծեծեց նրան,- Ոչ ոք չիմացավ... 11. Ի՞նչ անենք, որ ես ես պոե՛տ եմ ծնվել... Եվ ի՞նչ է պոե՛տն ու զո՛րը նրա... 12. Ի՞նչ լավ է, որ սա արարն է վերջին, Եվ չի կրկնվի այս պատմությունը: 13. Ի՞նչ փույթ, թե նա իր բույնը չի՛ դառնա: 14. -Ի՞նչ ես անում... -Ես ի՞նչ գիտեմ՝ ի՛նչ եմ անում... 15. Ի՞նչ Շամիրամ էլ որ խանդի, Լսու՞մ ես ինձ՝ -Երգահանի՞ր... /Գ. Էմին/

🕮 Ձ-194. **Ամբողջացնել նախադասությունները:**

ա/ ...նրան, ումից	**ե/** ...այն ժամանակ, երբ	**թ/** ...այն, ինչ
բ/ ...այնպես, ինչպես...:	**զ/** ...այնքան, որքան	**ժ/** ...այնտեղ, ուր ...:
գ/ ...նա, ում...:	**է/** ...այն օրից, երբ	**ժա/** ...նրան, ում...:
դ/ ...նրան, ով...:	**ը/** ...այնպիսի, ինչպիսի...:	**ժբ/**...այն, ինչով...:

🕮 Ղ-195. Անհրաժեշտաբար տեղադրել հարաբերական դերանունները իրենց հարաբերյալներով:

● 1. Վեհանձն լեռները՝ ամպերում թաղված, հպարտ հայացքով նայում են վար՝ □ ճոխ դաշտերին, □ կույս դաշտերին, □ վառ դալարում-փռվում էին անծայր: 2. Նա երգում էր □ լեռնագագաթների լազուրի մասին, □ գագաթից գահավիժել էր, □ մռայլ ժայռերի մասին, □ կուրծքը ծեծել էր, և □ լեռնադաշտերի մասին, □ ծաղկավառ սեզը համբուրել ու անցել էր: 3. Մի՛ լար, նազելիս, գիտեմ՝ դու վերհիշում ես □ սոսկալի ժամանակը. □ մի օր մենք զբոսնում էինք օվկիանում: 4. □ քնքուշ էր նվագում նա, □ հեզ և եթերային, նուրբ, □ մանուկների ստվերային բույրն էր: **/Ավ. Իսահակյան/**

● 1. Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր □ աննկատ, □ մի գիշերում բացվում է մուգ մանուշակը: 2.Թվում էր, թե այդ մի մոռացված անկյուն էր □ օրերից, □ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը □ ազատ էր զգում իրեն □, □ արջը մեր օրերում: Գուցե այդպես է եղել աշխարհն □ ժամանակ, □ քարածխի հսկա շերտեր են գոյացել: **/Ա. Բակունց/**

🕮 Ղ-196. Դուրս գրել որոշյալ դերանունները և որոշել նրանց իմաստային, բառակազմական, ձևաբանական հատկանիշները ու շարահյուսական կիրառությունները:

1. Տե՛ր, տու՛ր իրավունք, Որ Ամենեցուն ավետեմ այսօր, հուսացեք, մարդիկ **/ՌԴ/**: 2. Եվ անբառ էր ամեն ինչ, և ամեն ինչ անանուն, Ամե՛ն ինչ գույն էր ու ձայն ու ամեն ինչ՝ մեղեդի **/Ն/**: 3. Ամե՛ն մի հայ՝ լեռան մի ծերպ, Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ, Ամեն մի հայ՝ մի Հայաստան՝ Բաժան-բաժան-Անմիաբան **/ԳԷ/**: 4. Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացա՜վ, Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ, Որ պար չէ՛ սա... **/Ն/**: 5. Մի՛ տա ամենքին, քո սերը, անգին **/Ն/**: 6. Ա՜խ, այդ Մասիսը, Որից փափկում են սրտերը բոլոր, Երբ ինքը քար է... Որ աշխարհներից հեռավոր-հեռու՜ Բոլոր հայերին այստեղ է բերում, Երբ ինքը այստե՜ղ չէ... **/Ն/**: 7. Սեղմի՛ր ատամդ, դու ամենքի մոտ բացեբաց լալու իրավունք չունես **/ՀԾ/**: 8. Սակայն ես այսօր և ամենայն օր մշտական վշտով նրանց եմ ողբում, Ովքեր չունեցան շիրմաքար-շիրիմ **/ՊՍ/**: 9. Հայկական հարցը մեջտեղ բերեցին, Քանզի տաք էր դեռ՝ Եվ ամեն մեկը մատները վառեց: Բայց ամեն մեկը այնքան շատ ճառեց, Մինչև որ հարցը բավական սառեց **/Ն/**: 10. Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան, Ու բոլորը մեկ ձեռ ու ոտ ընկան **/Ն/**: 11. Ապա օտարը Ամենա՜յն սիրով, Ապա օտարը Խոսքերով, գրո՛վ, Թաքուն, բացահայտ մեզ է բանսարկում.../**Ն**/: 12. Բախտի ճամփեքը տարբեր են լինում, Բախտն ամեն մեկին տարբեր է սիրում **/Ն/**: 13. Եվ ամենքս ենք հիմա կիսով չափ մենակ, Եվ ամենքս ենք հիմա կիսով տխուր. 14. Թող անկարելին դառնա կարելի Աշխարհում համայն, Ամենքի համար **/Ն/**:

Ջ-197. Գրել հայերենի որոշյալ դերանունները և դրանք դասդասել ըստ իրենց ընդհանրական իմաստի դրսևորման տարբերությունների՝ լրացնելով աղյուսակը:

Ցույց են տալիս առարկաների քանակային ամբողջությունը՝ չնշելով այդ ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին	Ցույց են տալիս առարկաների կամ նրանց քանակային ամբողջությունը՝ շեշտելով ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին	Ցույց են տալիս մի առանձին առարկայի ամբողջությունը

Ջ-198. Ա. Ընդգծել ժխտական դերանունները և բացատրել նրանց կազմությունը:

Բ. Դուրս գրել դերանուններն իրենց կապակցվող բառերի հետ՝ ուշադրություն դարձնելով վերջիններիս ձևին:

1. Մարդիկ շատ են փոքրոգի, Հետևերն անուշ եղիր միշտ, Որ քո դուռն էլ չչոքի Ոչ մի սև ամպ, ոչ մի վիշտ /ՀԾ/: 2. Ես չեմ հյուսել քեզ հետ ոչ մի հույսի գարուն, Ոչ մի բախտ ու երազ չեմ հյուսել քեզ հետ /Ն/: 3. Թող էլ ոչ ոք ճիշտս ու շեղս չիմանար, Չփորփրեր գույնս ու տեղս չիմանար: Թողնեի՞ր ինձ՝ ինքս ինձ հետ ու երկնի, Հեռանայի, ոչ ոք տեղս չիմանար /ՄԿ/: 4. Ոչինչ չեմ ուզում այս տարեմուտից, Ո՛չ գանձ, ո՛չ նոր բախտ ու սեր /Ն/: 5. Ոչի՞նչ, ոչի՞նչ ես չտեսա Ռիալտոյի կամուրջին, Ո՛չ մրահոն աղջիկ տեսա, ո՛չ ջրերը կապտաջիղ /Ն/: 6. Ծուխը՝ ոչինչ, քո առջևի Ծխվող խունկից վախեցիր. Դառը՝ ոչինչ, խոսքերի քաղցր տուրքից վախեցիր /Ն/: 7. Գողությունը տուն է քանդում, կյանքում ոչի՞նչ մի գողանա... Գևորգ Էմինն է խրատում՝ կյանքում ոչինչ մի՛ գողանա /ԳԷ/: 8. Լաո Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին... /ԱԲ/: 9. Իսկ Դավոն ոչ մեկին չէր նայում, ոչինչ չէր տեսնում, շուկան տրորելով գնում էր /ՄԳ/:

Գ. Հոլովել ոչ մեկը ժխտական դերանունը և նրա հոլովաձևերով կազմել նախադասություններ:

Ջ-199. Նախադասությունների իմաստից ելնելով՝ տեղադրել հակադրական զույգի բաղադրիչներից մեկը՝

ա/ ամեն ոք- ոչ ոք բ/ ամեն ինչ –ոչինչ գ/ ամեն մի –ոչ մի դ/ ամեն մեկը –ոչ մեկը:

1. Շուրջն □ այնքան հմայի՞չ էր թվում: Եվ □՝ այնպես հե՞շտ ու թեթև /ԳԷ/: 2. Սու՛տ ու փու՛տ աշխարհ, Որ իմ մազերն ես հանգուցել ամուր □ ծառիդ ու ամեն խոտիդ /ՊՍ/: 3. Իսկ նա իմ տանջանքից չի հասկանում □ Թող մթնի այնպես, Որ երևան երկնի բոլոր աստղերն անգամ /Ն/: 4. Մթնաձոր տանող արահետը առաջին ձյունի հետ փակվում է, և մինչև գարուն □ մարդ ոտք չի դնում այնտեղ: Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր □ չի եղել /ԱԲ/: 5. Նրանցից □ ուրիշ ասելիք ուներ: Ուրիշ: Բայց □ մոտ ասելիքը հավաստի չէր, □ մոտ զգացումը խոսք չէր դառնում: 6. Նոր ալքիմիական հայտնագործությունների ժամանակներում ֆրանսիացի նշանավոր գիտնական Անրի Պուանկարեն գրել է. «...գիտե, որ գոյություն ունեն ուրանի և ռադիումի ճառագայթները, բայց □ չի

կարող պատկերացնել, թե նրանք հատկապես ինչպիսի՛ տեղ կզբաղեցնեն գիտության աշխարհում»: 7. Երիտասարդ գիտնականներից □ չգիտեր, թե որտեղից է վերցվում այն էներգիան, որ արձակում է ուրանը. □ չգիտեր նաև այն, թե ի՛նչ են ուրանի ճառագայթները:

Ջ-200. Դուրս գրել անորոշ դերանունները և խմբավորել՝
ա/ եզակիի իմաստ ունեցողներ բ/ հոգնակիի իմաստ ունեցողներ

● 1. Ինչ-որ ժամանակ Մեզանից առաջ, մեզ անհայտ մարդիկ Նստել-մտածել և հորինել են զանազան բաներ /ՊՍ/: 2. Եվ գարունն այնտեղ Այլ փողոցների համեմատությամբ Ուշանում է քիչ: /Ն/: 3. Որովհետև իր անունը Ժայռ է, Ինքն էլ երբևէ Ոչ միայն կյանքում չի հիվանդանում, Այլև անմահ է /Ն/: 4. Կա անանուն մի կարոտ, անհասանելի ինչ-որ տենչ, Որ զարթնում է հանկարծ ու մորմոքում հոգուդ մեջ /ՎԴ/: 5. Ինչ-որ մի տեղ շող է դիպել Ամպի բացված սրտին, Ինչ-որ մի տեղ ցող է կաթել Հոգնած ծաղկի թերթերին, Ինչ-որ մի խոսք մոմի նման թրթռում է հոգում /ՄԿ/:

● 1. Սողոմոնի երգը նրանց բերում էր ուրիշ ձևի տխրություն՝ որբի տխրությունից տարբեր. դա անլաց տխրություն էր: 2. Վեհափառը պահանջել էր միայն մեկը՝ քեզ հետ Էջմիածին կբերես մի որբի՝ կընտրես ամենաձայնեղին: 3. Ոչ ոք այդ պահին իր խոսքը չէր գտել, չէր գտնելու, և մեկը կմկմաց. – Սողոմոն, գնալո՞ւ ես: 4. Կոմիտասի ծնկները դողում էին, էլի մի քանի քայլ փոխեց ու փովեց ճամփապռնկի քարին: 5. Ձմռան այդ օր ու ժամին աշխարհում մի մարդ, մեկը, միայն մեկը ձմեռնաշունչ փողոցում անծանոթի էր սպասում՝ վերադարձնելու նրա կորցրած տասը ֆրանկը: /Մ. Գալշոյան/

Ջ-201. Կազմել նախադասություններ այսինչ, այնինչ **և** այսինչ-այնինչ **դերանուններով և ցույց տալ նրանց նրբիմաստային տարբերությունները:**

Ջ-202. Տրված դերանունները խմբավորել ըստ հոլովվելու հատկանիշի: Ընդգծել հոլովման պակասավոր հարացույց ունեցողները:

դերանվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ	անվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ	չհոլովվող դերանուններ	գոյականաբար գործածվելիս հոլովվող դերանուններ

Ես, իրար, սրանք, ոչ ոք, ինքդ, ամենայն, ինչ-ինչ, ամեն որ, դու, միմյանց, դրանք, ոչինչ, այն, որևէ, ինչ-որ, այսքան, մենք, մեկմեկու, ոմանք, այսպես, որևիցե, նա, ինքներս, ամենքը, այստեղ, այդպես, երբ, մի, այսչափ, ինքը, այս, ինչ, այնտեղ, այնպես, ում, յուրաքանչյուր, ամբողջ, դու, այդ, ամեն ինչ, ինքս, համայն, մի քանի, այնինչ, ով

Ա-203. Անորոշ դերանուն բաղադրիչ ունեցող տրված կապակցություններում փակագծերի մեջ առնված գոյականները դնել համապատասխան թվով՝ եզակի, հոգնակի և թե՛ եզակի, թե՛ հոգնակի:

ա/ Ինչ-որ /մարդ/	**ե/** ինչ-ինչ /պատճառ/	**թ/** բոլոր /բարեգործ/
բ/ մի քանի /հատված/	**զ/** ուրիշ /աշխարհ/	**ժ/** այլ /երկիր/
գ/ այսինչ /հոդված/	**է/** այնինչ /օրենք/	**ժա/** որոշ /քայլ/
դ/ որևէ /դասագիրք/	**ը/** ոմն/բանաստեղծ/	**ժբ/** այսինչ-այնինչ /վայր/:

Ա-204. Կետերի փոխարեն գրել համապատասխան գոյականներ՝
ա/ եզակի թվով
բ/ հոգնակի թվով
գ/ թե՛ հոգնակի, թե՛ եզակի, ինչպես օրինակ՝ մի քանի ---- մի քանի ուսանող, մի քանի ուսանողներ:

● **ա/** ամեն մի ...	● **ա/** ոչ մի	● **ա/** որևէ	● **ա/** մյուս
բ/ ինչ-որ	**բ/** ինչ-ինչ...	**բ/** ամբողջ	**բ/** ողջ
գ/ ո՞ր	**գ/** այդ...	**գ/** ամենայն	**գ/** բովանդակ
դ/ համայն	**դ/** նույն	**դ/** որոշ	**դ/** ամեն
ե/ այսինչ	**ե/** ուրիշ	**ե/** այսքան	**ե/** մեկնումեկը
զ/ յուրաքանչյուր	**զ/** այսպիսի	**զ/** բոլոր	**զ/** այլևայլ

Ա-205. Գտնել սխալները և ուղղել:

● **ա/** իմ գիրքս	● **ա/** իմ համար	● **ա/** Նա ստացավ իրեն գրքերը:
բ/ այս վերջերս	**բ/** քո պես	**բ/** Տղաներից մի քանիսը հեռացավ:
գ/ քո ընկերդ.	**գ/** մեր նման	**գ/** Նրա մեջ մեռել էին ամեն ինչ:
դ/ իմ սիրելիս	**դ/** ինձ մասին	**դ/** Ինչ-ինչ պատճառ խանգարում էր:
ե/ իմ հայրս	**ե/** մեր վրա	**ե/** Քեզ մոտ գիրք կա:

● **ա/** Այդ տղայի համար ոչ մի բարոյական օրենքներ չկան:
բ/ Կյանքի ամեն մի անկյուններում եղել էր:
գ/ Ներկաներից ոչ ոք չէին նկատում նրա հուզմունքը:
դ/ Յուրաքանչյուրը հեռանում էին ծանր տրամադրությամբ:
ե/ Ընկերը բերեց երկու գիրք, որից մեկն արկածային էր:
զ/ Հնչեցին նաև ժողովրդական երգեր, առանց որի համերգը ձանձրալի կլիներ:
է/ Տնօրենն իր մոտ է:

Բ Ա Յ

🕮 Ձ-206. Ընդգծել բայերը և բացատրել, թե ինչու մնացածները, չնայած բառավերջի ձևային նմանությանը, բայ չեն. բայն ի՞նչ հատկանիշներով է տարբերվում մյուս խոսքի մասերից:

Ահել, գալ, բալ, շահել, ավել, ցավել, գդալ, գթալ, գործակալ, որձկալ, կթել, գուլալ, մոտենալ, թել, ծալ, թևածել, ոխակալ, իջնել, ջահել, վայել, վայելել, ցել, գցել:

🕮 Ձ-207. Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» օգնությամբ գրել բռնել, ընկնել բայերի բոլոր իմաստները՝ ընդգծելով փոխաբերական իմաստները:

🕮 Ձ-208. Տրված գոյականներից և ածականներից կազմել բայեր. բայակերտ ո՞ր ածանցներն են առավել կենսունակ:

Հավատ, հիվանդ, սեր, բարձր, խոսք, կոպիտ, երգ, կարմիր, հունձ, բարբառ, ամպ, ձյուն, վիշտ, սոսափ, տագնապ, կապույտ, տխուր, վախ, գրգիռ, կողոպուտ, ձիգ, կասկած, օրոր, գեր, անձրև, տույժ, ցող, իղձ, խենթ, շող, փայլ, մուգ, ումպ, ուղիղ, կիպ:

🕮 Ձ-209. Բայերից գործողության հետ կապված գործիքի, առարկայի անուններ կազմել:

Քերել, գրել, թակել, ըմպել, խաղալ, ուտել, ձգել, փակել, ճոճել, գանձել, ծածկել, օրորել, բացել, գործել, խմել, հագնել, խթանել, փաթաթել, ջնջել:

🕮 Ձ-210. Վեր/ա/-, արտ/ա/-, ներ-, շար/ա/-, ընդ-, ենթ/ա/-, ստոր/ա/- **նախածանցներով կազմել նոր բայեր՝ ուշադրություն դարձնելով նրանց իմաստային տարբերություններին:**

Միավորել, գրավել, գրկել, բննել, բերել, հանել, կցել, պատրաստել, մուծել, առնել, նկարել, հյուսել, նվաճել, գործել, գրել, հարել, տպել, խուժել, նորոգել, մարմնավորել, հոսել, գաղթել, շնչել, կառուցել, վաճառել, վերնագրել, գծել, արձակել, պատռել, դասել:

🕮 Ձ-211. Ներկայացնել տրված բառերի ձևաբանական կառուցվածքը՝ դրանք ընդգրկելով երկու մեծ խմբի մեջ՝ համադրական և հարադրական կամ վերլուծական:

Օգնության գալ, սուզվել, անցնել, ժպտալ, նկարվել, կարոտել, չվել, համբուրել, վախենալ, հեռանալ, բափառել, ախ ու վախով խոսել, շողալ, սուզվել, կորչել, իջնել, գլխի ընկնել, անցնել-գնալ, սիրտ տալ, գրել տալ, տանել-բերել, թռչկոտել, զգալ, սառչել, տարացնել, մոխիր դառնալ, խորթանալ, թրատել, հուսախաբ լինել, ծլել-ծաղկել, կանգ առնել

Ղ-212. Բայերի ձևույթային յուրաքանչյուր կաղապարը ներկայացնել 5 բայով:

1. ***բայարմատ + բայակերտ մասնիկ*** /բուժել, կարդալ.../
2. ***բայարմատ + բայածանց + բայակերտ մասնիկ*** /խոսեցնել.../
3. ***գոյական + բայակերտ մասնիկ*** /ներկել, ողբալ.../
4. ***գոյական + բայածանց + բայակերտ մասնիկ*** /մոխրանալ.../
5. ***ածական+ բայակերտ մասնիկ*** /պարզել, դեղնել.../
6. ***ածական+ բայածանց + բայակերտ մասնիկ*** /մեծանալ, թանձրանալ.../
7. ***թվական + բայակերտ մասնիկ*** կամ ***թվական + բայածանց + բայակերտ մասնիկ*** /երկրորդել, երկուանալ.../
8. ***դերանուն + բայածանց + բայակերտ մասնիկ*** /ամբողջանալ.../
9. ***մակբայ + բայածանց + բայակերտ մասնիկ*** /արագանալ.../
10. ***ձայնարկություն + բայակերտ մասնիկ*** /ավաղել, դռռալ.../:

Ղ-213. Ա. Տրված հարադրական բայերը դասդասել ըստ իրենց արտահայտած իմաստների և ձևաբանական կառուցվածքի՝ առանձին սյունակներում գրելով հարադիր, զուգադրական /զուգաբայական/ և պատճառական բայերը: Բացատրել կազմությունը և որոշել հարադիր բաղադրիչի արտահայտության ձևը:

Բ. Գտնել և դուրս գրել այն հարադրական բայերը, որոնք ունեն իրենց համարժեք համադրական ձևերը, ինչպես օրինակ՝ խույս տալ – խուսափել:

Գ. Առանձնացնել սեռային հակադրություն կազմող հարադրությունները, օր.՝ գլխի ընկնել – գլխի գցել:

Աչքով անել, ծանրութեթև անել, ման գալ, խելքահան անել, հարցուփորձ անել, դուրս անել, գլխի ընկնել, դեմ ընկնել, մեջ ընկնել, տաշել-տաշտշել, ման տալ, ճամփա ընկնել, գնալ-կորչել, բրև գալ, թարգմանել տալ, կուչ գալ, քարշ գալ, լող տալ, մարդ դառնալ, խույս տալ, անց կենալ, զանց առնել, թավալ տալ, իմաց անել, երևան բերել, թիկն տալ, թռչել-գնալ, գոռալ-գոռգոռալ, ծառս լինել, արև անել, ականջ դնել, թողնել-փախչել, երդում ուտել, գերի դառնալ, քար կտրել, գլխից հանել, ծաղիկ հանել /բժշկ. տարիքն առնել, մարդ դարձնել, արյունաքամ անել, ծեծ ուտել, լույս ընկնել, կարմրին տալ, խելք խելքի տալ, իջնել-բարձրանալ, սևին տալ, ձեռքից գնալ, ուժից ընկնել, տեղահան անել, հուսախաբ անել, խայտառակ անել, արյունաքամ լինել, առաջ քաշել, առաջ վազել, մոտ գալ, դուրս ընկնել, ներս գալ, ներս մտնել, վայր գցել, ախ անել, երանի տալ, հարայ կանչել:

Ղ-214. Անել, ընկնել, լինել, գալ, տալ, բերել, գցել, առնել, դառնալ, կանչել բայերով հարադրական բայեր կազմել՝ որպես հարադիրներ օգտագործելով ներքևում տրված բառերը:

ա/ Աշխարհ, գլուխ, դարդ, երես, ճամփա, սիրտ, առաջ, դուրս, ներս, մեջ, վրա, ճիգ, ախ, վայ, երանի, հարայ, ծնունդ, լաց, աղաչանք, սիրտ, թև:

բ/ Աղաչանք-պաղատանք, երդում-կրակ, խայթ-խայտառակ, ոչ ու փուչ, սուգ ու շիվան, ջարդ ու փշուր, արյուն-քրտինք, ձեռ ու ոտ, ծանր ու թեթև:

գ/ Հայ-հույ, ալան-թալան, վա՜յ-վա՜յ, կտոր-կտոր, վեց-վեց, խունջիկ-մունջիկ, չեմ ու չում, դես ու դեն, հալ ու մաշ:

📖 Ձ-215. Շնորհակալ լինել և շնորհակալություն հայտնել **հարադրություններով նախադասություններ կազմել՝ ուշադրություն դարձնելով կապակցվող բառերի հոլովառությանը:**

📖 Ձ-216. **Լրացնել պահանջվող բառը:**

1. թիկն տալ →	5. աղաչանք անել → ----	9. հարց տալ→ ---------
2. ---------- ← վնասել	6. --------- ← շրջել	10. ---------- ← մոտենալ
3. բաց անել →	7. մոտ գալ → ------	11. զրույց անել→ ------
4. -------- ← խայտառակել	8. --------- ← բարևել	12. -------- ← քաշել

📖 Ձ-217. **Բացատրել զույգ բայերի իմաստային տարբերությունը և շարունակել լրացնել 3-4 բայազույգով:**

ա/ աչք փակել և աչքը փակել գ/ աչք բացել և աչքը բացել
բ/ գլուխ դնել և գլուխը դնել դ/ գլուխ պահել և գլուխը պահել

📖 Ձ-218. **Գրել տրված հարադրությունների համադրական ձևերը և բացատրել իմաստային ու քերականական տարբերությունները:**

● ա/ գլխի ընկնել → հասկանալ	բ/ գլխի գցել → հասկացնել
● ա/ ճեղն ընկնել →	բ/ ճեղը գցել →.....
● ա/ խայտառակ լինել →.....	բ/ խայտառակ անել →.....
● ա/ ճանապարհ ընկնել →.....	բ/ ճանապարհ գցել →.....
● ա/ առաջ բերել →.....	բ/ առաջ գալ →.....
● ա/ սրտաճաք լինել →.....	բ/ սրտաճաք անել →.....
● ա/ տակնուվրա անել →.....	բ/ տակնուվրա լինել →.....
● ա/ հալից ընկնել →	բ/ հալից գցել →.....
● ա/ ոտնասկոխ լինել →.....	բ/ ոտնասկոխ անել →.....

📖 Ձ-219. **Յուրաքանչյուր սյունակից մեկ բայ ընտրել և կազմել զուգաբայական հարադրություններ,** օր. անցնել-գնալ

● ծղել	ձևել	❷ աղաչել	մտնել
անցնել	խմել	թոշնել	փչրել
եփել	գնալ	հարգել	բառամել
չափել	ծաղկել	ջարդել	պատատել
ուտել	բափել	ելնել	պատվել

🕮 Ղ-220. Ա. Գտնել հարադրական /հարադիր/ բայերը և ձևակազմությունը բացատրելով՝ խմբավորել ըստ բայական բաղադրիչների. դրանցով 5-ական այլ հարադրական բայեր կազմել:

Բ. Հնարավոր տեղերում դրանք փոխարինել համադրական ձևերով:

Ուշ երեկո էր արդեն, բայց ինչ-որ ներքին մղումով պրոֆեսորը, չնայած հոգնած լինելուն, ցանկություն հայտնեց մի քիչ էլ աշխատել: Նա ներս մտավ փորձասենյակ, աչքի տակով զննեց ամեն ինչ, հանգցրեց լույսը և արդեն ուզում էր դուրս գալ, երբ հանկարծ լիակատար մթության մեջ նրա հայացքը կանգ առավ մի տարօրինակ լուսավոր կետի: Ի՞նչ է դա: Մոտ եկավ, և ի՜նչ. լույսը ծնունդ է առնում էկրանից: Զարմանալի է, չէ՞ որ լույսի աղբյուր չկա. արևը վաղուց մայր է մտել, էլեկտրական հոսանքը ճառագայթում չի առաջացնում, իսկ կատոդային խողովակն անջատված է: Թվում էր, որ լույսի այլ աղբյուր գոյություն չունի: Բայց Ռենտգենը նկատեց, որ սև ստվարաթղթով ծածկված կատոդային խողովակն անջատված չէ: Նա իրեն նախատեց այդ անուշադրության համար, սակայն շուտով գլխի ընկավ, որ իր այդ վրիպումը մարդկությանը տալու էր մի մեծ հայտնագործություն... Իր հայտնագործության մասին Ռենտգենն առաջինը հայտնեց կնոջը՝ Բերթային, որն էլ թույլ տվեց նկարել իր ձեռքը: Նկարում պարզորոշ երևում էր դաստակի կմախքը: Ռենտգենին շնորհեցին ֆիզիկայի առաջին Նոբելյան մրցանակը:

🕮 Ղ-221. Գտնել բայական հոմանշային զույգերը և լրացնել /բառարանների օգնությամբ/:

1. Եվ ինչպե՞ս եմ հաճախ իջել-ստորացել՝ Բարկանալու և դատելու աստիճանի, Չարանալու և ատելու աստիճանի... 2. Ուզեցի, որ հավետ կապվենք, Որ սիրով խայտանք ու ծփանք: 3. Նրանք ճայթում կամ պայթում են Այս օդահան զանգի ներքո: 4. Շա՜տ կուզեի... Ինձ կապել ու շաղկապել քեզ Այնպե՛ս, Որ մենք երկուսովս դառնանք անքակտելի՝ խաչբառի՜ պես. 5. Այն օրն են միայն բանաստեղծ դառնում, Երբ հասկանում են, Հանկարծ ըմբռնում... 6. Սակայն նրանք Ամեն վայրկյան նախ այրվում են անթթվածին, Հետո միայն հրդեհվում են՝ քարածխի պես... 7. Դուք նախընտրում եք վիթխարի ուղտի՞ն: Իսկ ես լրջորեն նախապատվում եմ Նույնիսկ մկա՛նը... 8. Եվ ինչպե՞ս կարող է նա այդ կռահել, նա, որ միայն ծեծվել է, բզկտվել, գերվել Որպես Հիսուս մի բազմաչարչար: 9. Քիչ ենք թախծում մենք անառիթ, Շատ ենք տխրում առիթով: 10. Մի՞թե արդեն պարզ չէ և քեզ համար, Որ կարող է սերը վրեժխնդի՜ր լինել, Վրեժ լուծել 11. Իմաստուն էր, բայց շատ ձգեց Ու քաշքշեց այս պարանը: 12. Եվ չափազանց զգու՜յշ եմ ես, Նույնիսկ վախկո՛տ. Անջատումից եմ վախենում. Երկյուղում եմ տվայտանքից չվտարվող, Կարոտի սև արյունումից եմ սարսափում: 13. Գունատվիր, ուրեմն, դալկացիր, սողա՜ Խլուրդի նման կամ ինչպես սողուն: 14. Կան խայտառակ ժամանակներ, Երբ մարդ եթե իր բերնին կապ չի դնում, Ապա նրա ձեռք ու ոտին Ուրիշներն են դնում կապանք: 15. Ինչ խեղեցին օտարները դարեդար՝ Դարմանեցիր ու դեղեցիր հրաշքով: 16. Եվ չի կարող չխոնարհվել, Ու չի կարող ծնկի չգալ՝ Ով ուզում է

նայել խորքը ջրհորների: 17. Նա պիտի հնչի՛ մեզնից էլ հետո Եվ այնպե՛ս հնչի, Որ մերպեսները Նույն փաղաքշանքից միշտ փշաքաղվեն, նու՛յն նվաղումով սարսրռան տաքուկ: 18. Հոլանդացիք ծովի՛ց, ամենազո՛ր ծովից Հող են հափշտակում, Խլում պատա՛ռ-պատա՛ռ, նշխա՛ր-նշխա՛ր: 19. Դու ինձ չես մերժում: Դու աշխատում ես ժխտել ինքդ քեզ: 20. Եթե հարցնեն կատակասերին, Ճարպոտ կժպտա ու կհոհոռա: 21. Բթամատս նորից կոճակին եմ դնում՝ «Բորբ»,- հնչում է անվերջ, դողանջում է կրկին: /Պ. Սևակ/

📖 Ջ-222. **Գտնել հականիշ բայերը:**

1. Այս հավատով ու հույսով է, բարեկամս, Որ աշխարհում մերպեսները ամեն գիշեր Աղբատ քնում ու զարթնում են հարստացած: 2. Ուստի ատում մի քիչ Ու սիրում՝ եմ նույնքան Օտա՛ր այդ աղջկան քո անունով: 3. Ես խռովել եմ նաև աշխարհից. Եկ ու վերստին հաշտեցրու՛ դու մեզ: 4. Եվ հերքել ես մի բան, որ հաստատել է պետք: 5. Շարժումը ձեռքիդ օդի ձևերը քանդեց ու սարքեց: 6. Եվ երկրի վրա շաղախված անցքից Գլխիվայր կախվի խենթ ուրախության ցայտուն շատրվա՛ն, Որին բացվել կա՛ և չկա փակվել: 7. Քարտեզի վրա գետերն են տխուր, Աճող ու փտող ծառերն են տխուր... 8. Թաց փայտի պես՝ Ո՛չ վառվում են, Ո՛չ էլ հանգչում: 9. Ես բռնել ուզեցի, Եվ դու պուկ տվիր, Ես արև ուզեցի, Եվ դու շուք տվեցիր: /Պ. Սևակ/

📖 Ջ-223. Ուրախանալ, արհամարհել, գովաբանել **բայերին հոմանիշ և հականիշ 3-ական բառեր գրել:**

📖 Ջ-224. **Տարբեր նախադասություններ կազմել հետևյալ բայերով:**

ա/ պահել և պահպանել	զ/ կասեցնել և կանգնեցնել
բ/ քննել և քննարկել	է/ ծրագրել և ծրագրավորել
գ/ փորձել և փորձարկել	ը/ վերաբերել և վերաբերվել
դ/ հաղթահարել և հաղթել	թ/ հրատարակել և հրապարակել
ե/ փոխել և փոխանակել	ժ/ դիտել և դիտարկել

📖 Ջ-225. Բացատրել մեղանչել և զղջալ բայերի իմաստային տարբերությունները:

📖 Ջ-226. **Փակագծերի մեջ տրված բայերից ընտրել և գրել նախադասության մտքին հարմարը:**

1. Բոլոր օրենքները նրա համար են լոկ, Որ /պահպանեն, պաշտպանեն կյանքում Մարդկայինը, Մարդուն 2. Համբերությունն ուրդեն իսպառ հատած, /ապստամբում է, ամբաստանում է/ իմ դեմ, Իմ աչքերն է ճանկռում: 3. Թեպետև բախտ մենք ենք փնտրում, Բայց բախտը, Բա խտն է մեզ /ջոկում, զատում, ընտրում, բաժանում 4 Թե նեղեցին ու չեղեցին մեր ուղուց՝ Ու դիր ճամփի դու /դրդեցիր, մղեցիր մեզ անվերջ 5. Հայր Սուրբ, երբ մարդը հավատացյալ չէ, Որտեղ պետք է նա իր սեղբը /խոստանա, **խոստովանի**/ 6 Ա խ, սրտի տեղ երբ լիներ լեզու ն, Որ /խոստացավ, **խոստովանեց**/ հանգիստ բեզ չտիրել 7 Դատափետում են բեզ Ու խստորեն

/դատապարտել, դատել/, Նրա համար, որ դու «Ընտանիք ես քանդում»: 8. Մենք ասեղ թելել բնավ չենք էլ /փորձարկել, փորձել/: 9. Երբ լուսաբացն է լրտեսում ապակիները մեր խավար, Ու՛ կիսամութն է /խուզել, խուզարկել/ անկյունները մեր տան, Դու երևի արքնանում ես... 10. Ուռիները նրա համար են, Որպեսզի /ցույց տան, ցուցաբերեն/ ջրին ճանապարհ: 11. Ձույգ թվերը ես էլ գիտեմ: Բայց փառք նրա՛նց, Ովքեր տիրում են կենտերին, Տիրում այնպե՛ս, Որ հեշտությամբ /զատում են, անջատում են, բաժանում են/ զույգի վրա: 12. Տրեխավոր, մաշիկավոր, բոբիկ ոտքով Վանք /են մեկնում, են ուղևորվում, են գնում/ Հեռու-մոտիկ ամեն գյուղից: /Պ. Սևակ/

Ա-227. Դարձվածաբանական տարբեր բառարաններից բայական արժեք ունեցող 10-15 դարձվածք դուրս գրել:

Ա-228. Գրել բայական ածանցները և յուրաքանչյուրով 2 բայ կազմել: Ինչո՞վ են տարբերվում մնացած ածանցներից:

Ա-229. Կազմել հետևյալ բայերի անորոշի և կատարյալի հիմքերը և բացատրել կազմության օրինաչափությունները: Յուրաքանչյուր շարքը լրացնել 5 օրինակով:

- գրել, կարդալ...
- գտնել, թռչել...
- ցատկոտել, գրոտել, կտրատել...
- գալ, ուտել, լինել, դառնալ...:
- մոտենալ, անշարժանալ...
- նստեցնել, խաղացնել, թոցնել...
- գրվել, երգվել...

Ա-230. Փակագծերում բերված օրինակներից ելնելով՝ սահմանել՝

Ա. Ներկայի /անորոշի/ հիմքով են կազմվում՝

- **Ե խոնարհման պարզ, բազմապատկական ու կրավորական բայերի...**

→ վազել, գրվել, թռչկոտել → վազում, գրվում, թռչկոտում
→ վազելու, գրվելու թռչկոտելու → վազելիս, գրվելիս, թռչկոտելիս
→ վազել, գրվել, թռչկոտել → վազած, գրված, թռչկոտած
→ վազող, գրվող, թռչկոտող → վազի, գրվի, թռչկոտի
→ վազեմ..., գրվեմ..., թռչկոտեմ... → կվազեմ..., կգրվեմ..., կթռչկոտեմ...
→ վազե՛ք, գրվե՛ք... → մի՛ վազիր, մի՛ գրվիր, մի՛ թռչկոտիր/
→ չեմ վազի..., չեմ գրվի..., չեմ թռչկոտի...
→ պիտի վազեմ..., պիտի գրվեմ,... պիտի թռչկոտեմ.../

- **ն և չ սոսկածանցն ունեցող բայերի....**

→ հասնել, փախչել → հասնում, փախչում
→ հասնելու, փախչելու → հասնելիս, փախչելիս
→ հասնող, փախչող → հասնի, փախչի
→ հասնեմ..., փախչեմ... → կհասնեմ, կփախչեմ
→ պիտի հասնեմ.., պիտի փախչեմ.../

- **Ե խոնարհման պատճառական բայերի...**

→ հանգստացնել, վազեցնել → հանգստացնում, վազեցնում

→ հանգստացնելիս, վազեցնելիս → հանգստացնելու, վազեցնելու
→ հանգստացնող, վազեցնող, → հանգստացնի, վազեցնի
→ հանգստացնեմ, վազեցնեմ..., → կհանգստացնեմ կվազեցնեմ
→ չեմ հանգստացնի, չեմ վազեցնի, → պիտի հանգստացնեմ, պիտի վազեցնեմ,

Ա խոնարհման պարզ բայերի ....

→ ժպտալ → ժպտում → ժպտալիս → ժպտալու
→ ժպտա → ժպտամ → կժպտամ → պիտի ժպտամ
→ ժպտա՛ → մի՛ ժպտա

Ա խոնարհման ածանցավոր բայերի ...

→ հեռանալ, վախենալ → հեռանում, վախենում
→ հեռանալիս, վախենալիս → հեռանալու, վախենալու
→ հեռանա, վախենա → հեռանամ, վախենամ
→ կհեռանամ, կվախենամ → չեմ հեռանա, չեմ վախենա
→ պիտի հեռանամ, պիտի վախենամ

Բ. Անցյալի /անցյալ կատարյալի/ հիմքով են կազմվում՝

Ե խոնարհման պարզ բայերի ...

→ գրեցի..., վազեցի... → գրեցե՛ք/

Ն և չ սոսկածանցն ունեցող բայերի...

→ թռել է, ընկել է → թռած, ընկած
→ թռա..., ընկա... → թռի՛ր, ընկի՛ր
→ թռե՛ք, ընկե՛ք/

Ա խոնարհման պարզ և ածանցավոր բայերի...

→ կարդացել, վախեցել, հեռացել → կարդացած, վախեցած, հեռացած
→ կարդացող, վախեցող, հեռացող → կարդացե՛ք
→ վախեցի՛ր, հեռացի՛ր → վախեցե՛ք, հեռացե՛ք

պատճառական բայերի ...

→ հանգստացրել, վազեցրել, հագցրել → հանգստացրած, վազեցրած, հագցրած
→ հանգստացրի..., վազեցրի..., հագցրի... → հանգստացրու՛, վազեցրու՛, հագցրու՛
→ հանգստացրե՛ք, վազեցրե՛ք, հագցրե՛ք → մի՛ հանգստացրու, մի՛ վազեցրու, մի՛ հագցրու
→մի՛ հանգստացրեք, մի՛ վազեցրեք, մի՛ հագցրեք/:

Ջ-231. Ա. Դուրս գրել բայերը, մեկ գծով ընդգծել բայակերտ մասնիկները, երկու գծով՝ ձևակազմական հիմքերը՝ վերջիններս բաժանելով պարզ /աններածանց/ և ներածանցավոր հիմքերի:

Բ. Անորոշի հիմքով կազմվածների կողքին անցյալի հիմքը գրել, անցյալի հիմքով կազմվածների կողքին՝ անորոշինը, օր՝.

պաշտպանում էր /անորոշի հիմք/ → պաշտպանեց-
դրեց /անցյալի հիմք/ → դն--:

1633 թ. հուլիսի 22-ին ինկվիզիցիայի դատարանը հարկադրեց Գալիլեյին հռոմեական եկեղեցու դատարանի առջև հրաժարվել Կոպեռնի-

կոսի ուսմունքից: «Հրաժարվի՛ր քո վտանգավոր մտքերից և ապաշխարի՛ր»,- պահանջել էին սրբազնագույն և գերապատիվ կարդինալները:

Մեծ գիտնականը ծնկաչոք, մի շապկով, այսինքն ապաշխարող մեղավորի հագուստով, ձեռքը դրեց ավետարանին և բազմության առջև, որը հավաքվել էր եկեղեցու բակում, կարդաց ինկվիզիտորների շարադրած մեղայական ճառը, որի մեջ ասվում էր. «Ես՝ Գալիլեո Գալիլեյս, անձամբ ներկայանալով դատարան և ծունկ չոքելով ձեր առաջ, սրբազան և գերապատիվ կարդինալներ, երդվում եմ, որ առաջիկայում՝ գիտելիքների աշխարհում պրպտումներ կատարելիս, չեմ ասելու կամ պնդելու գրավոր կամ բանավոր այնպիսի բան, որն առաջ կբերի իմ նկատմամբ նման կասկածներ... Ի հաստատումն որի՝ սեփական ձեռքով ստորագրեցի հրաժարականը և բառ առ բառ կարդացի Հռոմում՝ Միներվայի վանքում 1933 թ. հուլիսի 22-ին...»:

Ավանդությունն ասում է, որ իբր թե Գալիլեյն անսպասելիորեն կանգնել է և հայացքը դեպի երկինք հառած՝ բացականչել. «Այնուամենայնիվ այն /Երկիրը/ պտտվում է»:

Ա-232. Տրված բառերից թե՛ -ել և թե՛ -անալ բայակերտներով կազմել բայեր՝ ցույց տալով նրանց իմաստային և քերականական տարբերությունները, ինչպես օրինակ՝

↗ **կարճել**

կարճ

↘ **կարճանալ**

Մաքուր, կոպիտ, բարդ, մանր, նեղ, չոր, դատարկ, գիշեր, հաճախ, քար, բարակ, պարզ, պինդ, դանդաղ:

Ա-233. Թվալ-թվել, ծխալ-ծխել, ծփալ-ծփել, ցողալ-ցողել **բայազույգերը տարբերվում են լծորդությամբ, որից էլ բխում են իմաստային և քերականական տարբերություններ. կազմել նախադասություններ և համոզվել դրանում:**

Ա-234. Առանձնացնել պարզ /աններածանց/ և ածանցավոր /ներածանցավոր/ բայերը՝ լրացնելով հետևյալ աղյուսակը:

ՊԱՐԶ	ԱԾԱՆՑԱՎՈՐ			
	ՍՈՍԿԱԾՏԱՆՑԱՎՈՐ	ԿՐԱՎՈՐԱԿԱՆ	ՊԱՏՃԱՌԱԿԱՆ	ԲԱՁՄԱՊԱՏԿԱԿԱՆ
մաքրել	թռչել	նկարվել	վազեցնել	թռչկոտել

Մեծանալ, ջարդոտել, հեռանալ, կտրատել, գրվել, աղմկել, ամպել, մխիթարել, հրճվել, կապտել, մոլեգնել, տառապել, թախծել, իջնել, տանել, մերձենալ, վախենալ, դիպչել, մեծացնել, կորցնել, մորթոտել, փախչել, մոտեցնել, հագցնել, երգել, բռնոտել, կարդալ, հանգչել, ասեղնագործել, ցատկոտել, հիանալ, սառչել, ուռչել, ծիածանվել, պատառոտել, հեռացնել, ժպտալ, հեռացվել, պատմել, թռչել, փետրատել, ծոմռատել, անցնել, երկնել, գտնել, թողնել, ժանգոտել, սիրվել, փայլատակել:

🕮 Ձ-235. Կազմել տրված բայերի պատճառականը:

Փայլել, վազել, սիրել, բերել, կարդալ, խաղալ, փախչել, զարդարել, մոտենալ, հանգստանալ, զգալ, հասկանալ, պայթել, նստել, խմել, հիշել, իջնել, ֆշշալ, մղկտալ, զբաղվել, կանգնել:

🕮 Ձ-236. Հետևյալ բազմապատկական բայերում ընդգծել ներածանցները. ո՞ր ածանցներն են առավել գործուն:

Կտրտել, խոցոտել, հուրհրատել, փայլատակել, կոխկրտել, բոցկլտալ, կրծոտել, փշրտել, փնտրտել, փետրատել, ցատկտել, կապոտել, կայծկլտալ, ջարդրտել, խառնշտորել, ճանկոտել, քաշկոտել, խառնշտել, պաչպչորել, բզկտել, մորթոտել, կոտրտել, ցատկոտել:

🕮 Ձ-237. Ո՞ր բայերը բազմապատկական չեն:

Կրծոտել, ծակոտել, արյունոտել, ցատկոտել, թանաքոտել, ժանգոտել, սատկոտել, պատառոտել, կապոտել, կեղտոտել, կարոտել, հոշոտել, ձյունոտել, փոշոտել, ջրոտել, պոկոտել, ջարդոտել, յուղոտել, մորթոտել, մեղրոտել, խոցոտել:

🕮 Ձ-238. Բազմապատկական բայեր կազմել՝

● **Արմատի կրկնությամբ՝** դողալ, ծակել, չափել, վազել, ձգել, փայլել, տաշել, ծամել, շողալ, ծախել, ձևել, ծորալ, բախել, ճաքել, թափել, ծռել, զնգալ, քաշել, գոռալ, ճռալ, դռալ, ծալել, խշշալ, դողալ, փորել:

● **Ածանցման միջոցով /-ատ-, -ոտ-, -կոտ-, -տ-, -կլտ-, -կտ-, -ռտ-, -րտ-, -շտ/** բռնել, խոցել, կոխել, կապել, կրծել, մորթել, նստել, պատռել, ջարդել, ջնջել, ցատկել, կծել, կտրել, կոտրել, քանդել, փնտրել, փշրել, թռչել, պոկել, գրել, փետրել, խառնել:

🕮 Ձ-239. Բերված արտահայտությունները փոխարինել բազմապատկական բայերով՝

ա/ շատ կտորների վերածել
բ/ մի քանի հոգով կողք կողքի նստել
գ/ վեր-վեր թռչել
դ/ այս ու այն կողմ քաշել
ե/ սրի կամ սվինի հարվածներով սպանել
զ/ մի քանի տեղից պինդ կապել
է/ այս ու այն կողմ ծռել
ը/ այս ու այն կողմ վազել
թ/ շատերին շատ անգամներ խաբել
ժ/ այս ու այն կողմից կայծ տալ:

🕮 Ձ-240. Ա. Ընդգծել այն կետերը, որոնք մատնանշում են բային բնորոշ քերականական կարգեր:

Բ. Ձեր ընդգծածներից առանձնացնել նրանք, որոնք բնորոշ են բայի և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերին:

ա/ սեռի
բ/ հոլովման
գ/ խոնարհման
դ/ առկայացման
ե/ առորոգման
զ/ խնդրառական
է/ անձի և ոչ անձի
ը/ դեմքի
թ/ ժամանակի
ժ/ ժխտման
ժա/ թվի
ժբ/ եղանակի

📖 Ձ-241. Բ սյունակի բաղադրիչ-նախադասությունները Ա սյունակի նույն շարքի նախադասությունների տրամաբանական շարունակությունը չեն: Արտագրել՝ ճշտորեն ձևակերպելով բայասեռերի արտահայտած ընդհանուր իմաստները:

Ա.	Բ
Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն,	որ խնդրից անցնում է ենթակային:
Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն,	որի կատարման համար չի պահանջվում մի անմիջական առարկա՝ իբրև ուղիղ խնդիր:
Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի՝ տրամաբանական սուբյեկտի մի այնպիսի գործողություն,	որի ժամանակ տրամաբանական սուբյեկտի, քերականական ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է ուղիղ խնդիր իրացում:

📖 Ձ-242. Տրված բայերը խմբավորել ըստ սեռի՝ ներգործական, կրավորական, չեզոք. ի՞նչ է ցույց տալիս սեռի քերականական կարգը:

Վերանորոգել, կարդացվել, բայլել, բնակվել, զարդարել, վազել, գժվել, ջարդել, գնահատվել, աճել, գանգատվել, պղտորել, հրավիրվել, թռչել, հրաժարվել, արհամարհվել, լռել, խղճահարվել, կառուցվել, մեռնել, հուսահատվել, զվարճացնել, մեծանալ, մռայլվել, դիտել, սիրել, սիրվել, սիրահարվել, սևանալ, վհատվել, նկարել, զարդարվել, լսել, սափրվել, սպասել, ցնորվել, մոռանալ, շպարվել, դավաճանել, մեծացնել, օծվել, ամաչել, վախենալ, ողջագուրվել, դժգոհել, խուսափել:

📖 Ձ-243. Խմբավորել բայերն ըստ չեզոք սեռի իմաստային դրսևորումների:

Լվացվել, համբուրվել, գժվել, զբաղվել, զմայլվել, սանրվել, պաչպչվել, խելագարվել, հարձակվել, բնակվել, ողջագուրվել, զուգվել, զարդարվել, հաշտվել, սխալվել, բախվել, հագնվել, գանգատվել, թաքնվել, հրաժարվել, գրկախառնվել, պատրաստվել, պաշտպանվել, սափրվել, համարձակվել, նմանվել, վհատվել, փաթաթվել, ասվել, յուղվել, օծվել, շպարվել, մաքրվել, շփվել, տեղափոխվել:

📖 Ձ-244. Հանձնվել, պատրաստվել, սկսվել, բաժանվել, շարժվել, փակվել, բացվել, տեղափոխվել, տանջվել, հուզվել, մաշվել, վառվել բայերը գործածել նախադասություններում՝ մեկ որպես կրավորական սեռի, մեկ որպես չեզոք սեռի բայեր:

📖 Ձ-245. Ա. Արտագրել՝ ներգործական կառուցվածքի նախադասությունները /կամ բաղադրիչ նախադասությունները/ փոխակերպելով կրավորական կառուցվածքի նախադասությունների և հակառակը՝ կրավորական կառուցվածքի նախադասությունները փոխակերպելով ներգործական կառուցվածքի:

Անգլիայի ճահճոտ մի հարթավայրում վեր են խոյանում վիթխարի քարեր, որոնք դասավորված են խիստ որոշակի կարգով: Այս արտասովոր

քարերը «աշխարհի ութերորդ հրաշալիքն» են՝ Սթոունհենջը, որը կառուցվել է հոմերոսյան Տրոյայի անկումից մի քանի հարյուրամյակ առաջ: Բազում առասպելներ է ծնել այս արտասովոր կառույցը. մեր օրերում հարյուրավոր գիտարշավախմբեր են հետազոտել այս ավերակները: Հուղարկավորման ժամանակ այրված մարդկանց աճյունների մնացորդների ռադիոակտիվ հետազոտությամբ պարզվեց շինության տարեթիվը՝ մ. թ. ա. 1900-1600 թթ.: Բոստոնի համալսարանի պրոֆեսոր Ջերալդ Հոքինսը կենդանացրեց մեռյալ, համր քարերը: Նրա կողմից բացվեց մարդկության պատմության առավել վաղ շրջանի էջերից մեկը: Պարզվեց, որ Սթոունհենջը հնագույն աստղադիտարան է, որտեղ դրուիդ քրմերի կողմից զարմանալի ճշգրտությամբ նշվել են օրացուցային ժամանակը, որոշվել տարվա եղանակները և նույնիսկ կանխատեսվել Արևի և Լուսնի խավարումները. Հոքինսը ապացուցեց բազմատոննանոց քարե կամարների դիտասևեռակ լինելը: Աստղադիտարանի գաղտնիքը բանավոր միմյանց էին փոխանցում դրուիդ քրմերը: Անթիվ նվաճողները չխնայեցին հնագույն մշակույթի այս օրրանը, և Սթոունհենջը անհետացավ դարերի խորքում:

Իր Սթոունհենջն ունի նաև Հայաստանը, միայն թե շատ ավելի «տարեց»: 1994 թ. ակադեմիկոս Պարիս Հերունին ուսումնասիրեց Սիսիան քաղաքից 3 կմ հեռավորության վրա գտնվող նախապատմական քարակոթողները, հայտնաբերեց աստղադիտարան և հեթանոսական տաճար /Սթոունհենջից 3500 տարի առաջ/: **Քարահունջ** աստղադիտարանում հայտնաբերվել են բազում աստղագիտական գործիքներ, որոնք ունեին զարմանալի ճշգրտություն. աստղադիտարանի գիտնականները քաջ գիտեին Արեգակի, Լուսնի, մոլորակների ու աստղերի շարժման օրենքները, Երկրի գնդաձև լինելը...

/Ըստ Մանկական հանրագիտարանի /«Ո՞վ, ինչ, որտե՞ղ»/

& Բ. Նշել շարահյուսական համանիշների բովանդակային և կառուցվածքային տարբերությունները:

Ա-246. Ապրել, աշխատել, անցնել և նայել **կրկնասեռ բայերով կազմել նախադասություններ և՛ չեզոք, և՛ ներգործական նշանակություններով:**

Ա-247. Կազմել բառակապակցություններ՝ պատասխանելով բայերին հաջորդող հարցերին:

- Գրել –ո՞ւմ ---- ի՞նչ/ը/
- թարգմանել --- ի՞նչ/ը/
- ուղարկել --- ո՞ւմ --- ի՞նչ/ը/
- կառուցել ---- ի՞նչ/ը/
- մատուցել --- ո՞ւմ --- ի՞նչ/ը/
- նկարագրել --- ի՞նչ/ը/
- պատժել ---ո՞ւմ
- գրկել --- ո՞ւմ
- հարգել --- ո՞ւմ
- հանձնել --- ո՞ւմ --- ի՞նչ/ը/
- խմեցնել ---ո՞ւմ--- ի՞նչ/ը/
- նվիրել --- ո՞ւմ --- ի՞նչ/ը/
- հիշեցնել --- ո՞ւմ --- ի՞նչ/ը/
- նախատել --- ո՞ւմ
- մոռանալ --- ո՞ւմ

🕮 Ջ-255. Գրել Ա և Ե խոնարհման 5-ական անորոշ դերբայներ և կազմել նրանց վաղակատարի ձևերը՝ բացատրելով կազմության առանձնահատկությունները:

🕮 Ջ-256. Ընդգծել վաղակատար և հարակատար դերբայները, բացատրել նրանց կազմությունը:

1. Ե՛ս եմ հեքիմը, Այս հողի պտղից, ծաղկից, խոտերից դեղանյութ քամող, Նախնյաց հավատով ցավը դարմանող, ծերուկ հեքիմը /ՄԿ/: 2. Իմ կիսված հայրենի՛ք, գեղեցի՛կ՝ որպես սերը անհաս, Ավերված իմ եզե՛րք, դու ցավո՛տ՝ տապալված փառքի պես, Եվ կիջնի իմ հոգին Անիի սրբատաշ քարերին, Վիրավոր հավքի պես կճչա գիշերվա խավարում Ու կզգա նա իսկույն, որ կրակն անթեղված դարերի Կարոտից ծանրացած իր թևերն ու կուրծքն է այրում. Այդ այրված, այդ խանձված թևերի տխրագին շառաչով Կգա նա նորից չափելու սահմանները ցավի... /ՎԴ/: 3. «Գիտնական» բառը մեզ համար հավասարազոր է «ճշմարտություն որոնող» արտահայտությանը, այսինքն՝ գիտնականն անհայտը հայտնաբերած, անճանաչելին ճանաչած, անիմանալին իմացության վերածած, հայտնագործություն կատարած մարդն է:

🕮 Ջ-257. Կազմել հետևյալ բայերի հարակատար դերբայը և առանձնացնել նրանք, որոնք կարող են ձևակազմիչ լինել, այսինքն՝ հանդես գալ դիմավոր ձևերի կազմության մեջ:

Ալեկոծվել, աղոթել, արհամարհել, հոգնել, կանգնել, բարկանալ, հավաքել, հրապուրել, հավաքվել, ալեկոծել, արհամարհվել, բանտարկել, բանտարկվել, դժգոհել, շիկնել, պարել, վախենալ, հագենալ, հայտնել, հրապուրվել, ձուլել, ձուլվել, հնձել, վճռվել, ծաղկել, գծել, ծնվել, խմել, կեղծել, մտածել, վաճառվել, ապշել, ապրել, արարել, խորովել, նշանել, սիրահարվել, պառկել, սառչել, այրվել:

🕮 Ջ-258. Գրող, ծառայող, ծաղկող, ասմունքող, մատուցող, ծնող, ընթերցող, վաճառող, քերթող, ուրացող, սիրող, ընտրող, արդյունաբերող, գուշակող **բառերով կազմել 2-ական նախադասություններ, որոնցից առաջինում առավելապես բայական իմաստն է դրսևորվում, երկրորդում՝ առարկայական:**

🕮 Ջ-259. Կազմել գրել, կարդալ, փախչել, բարձրացնել, անցնել, իջնել, քայլել, գտնել, մատուցել, ընտրել **բայերի համակատար դերբայը:**

🕮 Ջ-260. Որևէ հեքիաթ հորինել՝ որպես բաղադրյալ ժամանակների կազմիչ օգտագործելով համակատար դերբայը օր՝ գնալիս է լինում, տեսնելիս է լինում ...:

🕮 Ջ-261. Բուհական մասնագիտական դասագրքերից ընտրել մի ենթավերնագիր /4-5 էջ/ և, դուրս գրելով անկախ դերբայները, կազմել նրանց հաճախականության աղյուսակը՝ թվերով արտահայտված:

🕮 Ձ-262. Ա. Դուրս գրել անկախ դերբայները և որոշել նրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները:

Բ. Ընդգծել կախյալ դերբայները և նշել տեսակը:

Գ. Կազմել նրանց անորոշի և կատարյալի հիմքերը:

Գերմանացի մեծ ֆիզիկոս, ֆիզիկայի գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր Վիլհելմ Ռենտգենը մի անգամ՝ իր աշխատասենյակում փորձեր կատարելիս նամակ է ստանում այսպիսի բովանդակությամբ. «Պարոն Ռենտգեն, խնդրում եմ Ձեր հայտնագործած ճառագայթներից մի քիչ ուղարկել իմ կրծքում մնացած ատրճանակի գնդակի դիրքը որոշելու համար: Շատ զբաղված լինելու պատճառով ես չեմ կարող անձամբ գալ Ձեզ մոտ: Ընդունեցեք հարգանքներիս հավաստիքը»:

Զարմացած, մի քիչ էլ զայրացած գիտնականը նրան պատասխանում է. «Հարգարժան պարոն, ցավում եմ, որ այժմ ինձ մոտ չկան մարդու օրգանիզմը լուսավորող այդ ճառագայթները: Բացի դրանից էլ ճառագայթներ ուղարկելը մի փոքր դժվարության հետ է կապված: Լավ կլիներ, որ Դուք գործը հեշտացնելու համար Ձեր կրծքավանդակը ուղարկեք փոստով: Խոստանում եմ այն ստանալուց հետո անմիջապես հետազոտել: Ընդունեցեք հարգանքներիս հավաստիքը: Վ. Կ. Ռենտգեն»:

🕮 Ձ-263. Որոշել ընդգծված դերբայների տեսակը և բացատրել նրանց ձևաբանական-շարահյուսական-կիրառական տարբերությունները:

Եթե քարե կացիններ պատրաստող մարդուն հարցնելու լինեին, թե մարդն ապագայում ինչպիսի կացիններ է օգտագործելու և նրանցից ինչպես է օգտվելու, ապա այն ժամանակ կացնային գործի նույնիսկ ամենահմուտ վարպետն էլ հազիվ թե կարողանար պատմել շոգեմուրճի, հիդրավլիկ մամլիչի և մեր ժամանակի ուրիշ մեքենա-գործիքների մասին, նրանց պատրաստելու, մշակելու և օգտագործելու մասին:

Մեր օրերում նույնպես մենք ինքներս մեզ կարող ենք հարցնել, թե կիբեռնետիկական մեքենաներն ի՞նչ կարող են տալ և ի՞նչ են տալու մեր սերունդներին: Եվ հարկավոր է առանց ամաչելու խոստովանել, որ այդ հարցին մենք հազիվ թե ավելի լավ պատասխանենք, քան քարանձավաբնակ վարպետը:

Այս բոլորն իմանալու միայն մի ճանապարհ կա, և այդ ճանապարհն անցնելու է կիբեռնետիկայի այսօրվա պրոբլեմների լուծման վրա անխոնջ և համառ աշխատելու միջով: **/Ըստ Ի. Ա. Պոլետակի/**

🕮 Ձ-264. Տրված բառերի շարքում ընդգծել անկատար դերբայը:

Ստուգվում, ցուցում, ռադիոընդունում, աղաչում, ռադիում, այգետնկում, հում-հում, վախենում, փոշիացնում, փոշիացում, անցում, հիանում, հիացում, խուսանավում, սառչում, ռադիոունկնդրում, առասպելացում, ավիանկարահանում, բոցավառում, զրուցում, բազմախոստում, սիցիլիում, գերշիկացում, ցնցվում, գոլորշացում, գոլորշիանում, խփվում, ինքնահարդարում, կալցիում:

🕮 Ջ-265. Գրել այն 3 միավանկ բայերը, որոնք -ում վերջավորությամբ անկատար դերբայ չունեն:

🕮 Ջ-266. Տրված բառերով կազմել 2-ական նախադասություններ՝ մեկ առարկայական նշանակությամբ /որպես գոյական/, մեկ բայական:

Շարժում, շերտահատում, առաքում, ատոմազերծում, ներշնչում, լուծում, արտաբերում, նկարահանում, թունավորում, կանխագուշակում, կապարապատում, սահմանում, ուղղում:

🕮 Ջ-267. Դուրս գրել այն դիմավոր բայերը, որոնց կազմում կա անկատար դերբայ:

«Ռոբոտ» բառը պատկանում է չեխ երգիծաբան-գրող և հրապարակախոս Յարել Չապեկին: Այն հաստատապես մտել է և շարունակում է մտնել շատ լեզուների մեջ: Չապեկի ռոբոտները՝ ինժեներ Ռոսսումի հնարած կենդանի ավտոմատները, կատարելապես հարմարեցված են բանվորների փոխարեն հաստոցների վրա աշխատելու համար: Նրանք մարդկային զգացմունքներով օժտված չեն և զրկված են մարդկային պահանջներից: Աստիճանաբար կատարելագործվելով՝ ռոբոտները դառնում են ինչ-որ այլ բան և դրամայի վերջում ոչնչացնում են իրենց տերերին, բայց ստիպված իրենք էլ են զոհվում, քանի որ միայն մարդիկ են տիրապետում ռոբոտների պատրաստման գաղտնիքին...

🕮 Ջ-268. Գրել Ա և Ե խոնարհման 5-ական բայեր, կազմել նրանց ժխտական դերբայը և բացատրել կազմության ձևը:

🕮 Ջ-269. Նշել, թե ո՞ր դերբայներով են ձևավորվել տրված դիմավոր ձևերը՝ գնում էր, հավատացել է, երգելու էր, երազում է, չեմ խաղա, խմելու էր, մոտեցել է, չէր գրի, գնացել էինք, չէինք խաղալու, թռչում ես:

🕮 Ջ-270. Ա. Դուրս գրել բայի՝
ա/ անդեմ կամ դերբայական ձևերը. կազմել ինքնուրույն գործածություն չունեցող դերբայաձևերը:
բ/ դիմավոր կամ եղանակային ձևերը. կազմել ինքնուրույն գործածություն ունեցող դերբայաձևերը:

Բ. Բացատրել ա և բ խմբերի բայերի ընդհանրություններն ու տարբերությունները:

Ավանդությունն ասում է, թե Աստված ցամաքն ստեղծելիս կանգնել է հայոց լեռների վրա և իր հունցած անորոշ զանգվածը հսկայական մաղով մաղելով՝ փափուկ հողը մի կողմ է լցրել, իսկ մաղի տակ մնացած մեծ-մեծ քարերը՝ այստեղ՝ Հայաստանի տեղը:

Թվում է, թե այստեղ, այս հողի վրա, քարե վիթխարի մի կոթող կամ արձան է եղել՝ Հայաստանի ու հայ ժողովրդի քարե կոթող-արձանը, որը

հետագայում ջարդել-ավերել են, և Հայաստանով մեկ սփռված քարերն այդ քանդված կոթողի բեկորներն են...

Երի՜ցս իրավացի էր Մարիետա Շահինյանը՝ հին Հայաստանը նմանեցնելով Լերմոնտովի նշանավոր բանաստեղծության այն աղքատին, որի պարզված ձեռքի ափի մեջ հացի փոխարեն քար են դրել: Այո՛, միայն քար և ամենից ավելի՝ քար, որովհետև ամեն ինչ քար է դառնում ավերումից ու տառապանքից հետո՝ չենք լինի, կոթող, ձեռագիր թե շատ տառապանքներ տեսած մարդկային սիրտ... Շա՜տ և ամեն տեսակ քար կա Հայաստանում, բայց այստեղ... անգրագետ քար համարյա չե՜ս գտնի:

Զգույշ քայլիր այս հողի վրայով և զգույշ վարվիր ամեն մի քարի հետ, որն արտաքինից կոպիտ է, չեչոտ, չոր մամուռով ու քարաքոսով պատած...

Զգու՜յշ, որովհետև եթե եղունգով փոքր-ինչ մամուռը քերես, նրանցից մեկի վրա նախնադարյան մարդու գծանկար կտեսնես, նշանագրե՛ր, արամեական, խուրիտական, աքքադական-ասորական սեպագիր արձանագրություններ, զարդ ու քանդակ...

Ոչ միայն գրագետ՝ ստորագրվա՜ծ են այս քարերը, մեր քարերն են...

Մեր ինքնության քարե կնիքն են այս հողի վրա Հռիփսիմեն, Գեղարդը, Աղթամարը, Էջմիածինը, Կարմրավորը...

Պատահակա՞ն է արդյոք, որ ամեն թշնամի ու նվաճող աշխատել է առաջին հերթին ավերել մեր ճարտարապետական կոթողները, փշրել մեր խաչքարերը, այսինքն՝ ջնջել մեր ստորագրությունն այս հողի վրայից կամ քերել մեր ինքնության կնիքը...

Հայաստա՛ն, քարերի՛ երկիր, քարաստա՛ն... /Գ. Էմին/

☑ Գ. Գրել շարադրություն «Ինչի՞ մասին են վայում, ինչի՞ մասին են երգում հայոց քարերը» վերնագրով:

🕮 Ձ-271. Ա. Ընդգծել բայերը: Դուրս գրել դիմավոր բայերը և խմբավորել ըստ եղանակի քերականական կարգի:

Բ. Ընտրել նրանցից մեկը և կազմել սահմանական եղանակի բոլոր ժամանակային ձևերը /7 գլխավոր և 21 երկրորդական կամ հարաբերական/:

Կինը աստվածի նման է, իրավ,
Բայց իր ետնից աշխարհներ տարավ.
Այնքան չեն նայել աստղերն աշխարհին,
Որքան ես՝ նրա աստղե աչքերին:
Բայց ինչքան շատ եմ ես նրան նայում,
Այնքան հայացքն է նա ինձ խնայում:
-Էլ չի խնայի, թե էլ չնայես,
Սիրտ իմ, քի՛չ սիրիր, որ շատ սիրես քեզ:
Ինչքան շատ վազես աղբրիդ ետնից,
Այնքան շատ պիտի վառվես ծարավից:
Բայց նա կվառվի, հենց որ դու սառչես,
Վազելով կգա՝ հենց որ դու փախչես:

Թեկուզ կրակվես՝ ձյան պես համբերիր,
Ձյու՛ն եղիր, որ նա քեզ գարուն բերի:
Թե չէ ինչքան շատ իր ոտքն ընկնես՝
Սերն էլ չի թողնի իր ոտքն էլ գրկես:
Քեզ կինն աստղի պես կմնա անհաս՝
Թեկուզ հանճարեղ աստղագետ դառնաս:
... Թեկուզ կնոջ մի եղնկահեզ
Մարմինը տիրես Տիգրան Մեծի պես,
Բայց լավ իմանաս՝
Չպիտի դառնաս
Դու կնոջ ոգու աշխարհակալը,-
Կինն է պարգևել քեզ հավերժ լալը...

/Հ. Շիրազ/

🕮 Ձ-272. Դուրս գրել սահմանական եղանակի բայաձևերը և որոշել նրանց քերականական հատկանիշները: Առանձնացնել պարզ և բաղադրյալ ժամանակաձևերը:

Նրա առջև դրված էր Վալտեր Սկոտի «Լճակի կույսը», որի կողքին հենց նոր գրած նոտաներն էին: Իոսիֆը կարդաց. «Ավե՛, Մարիա»:

-Օհո՛,- բացականչեց նա,- բա դու ասում էիր, թե աղոթել չես սիրում...

Շուբերտը բարձրացրեց գլուխն ու հետ նայեց...

-Սա այն չստացվեց, - ասաց նա, առջևի թուղթը ճմռթեց ու անտարբերությամբ նետեց զամբյուղի մեջ...

-Չէ, քեզ մնում է աղոթել, - կատակեց Իոսիֆը, Շուբերտից աննկատ զամբյուղից վերցրեց ճմռթված նոտաներն ու դրեց գրպանը:

Երկու օր հետո ընկերները Շուբերտին քարշ տվին եկեղեցի... Երգեհոնից աստվածային մի մեղեդի հնչեց, հետո եկեղեցու կամարների ներքո տարածվեց երգը: Շուբերտը ցնցվեց, ի՞նչ հրաշք է: Նա լսեց սեփական սրտի բաբախյունը, սեփական հոգու ձայնը: Հնչում էին իր մտքերը, իր ապրումները, իր զգացմունքները:

-«Ավե՛, Մարիա», - հնչում է երգը, ստիպում է ծնկի գալ, ստիպում է աղոթել: «Ավե՛, Մարիա»՝ եթերային զուլալություն, մոգական մաքրություն, որ ամենաքունդ հերետիկոսին ստիպում է աղոթք մրմնջալ:

«Ավե՛, Մարիա»՝ աստվածային երանություն, որի արարիչն այնպես անտարբեր ճմռթեց քեզ ու նետեց զամբյուղը...

«Ավե՛ Մարիա»,- հնչում էր եկեղեցու կամարների տակ, ուր աստծո ամենակատարյալ ստեղծագործությունն էր խաչված, և ուր բազում մահկանացուներ երանության մեջ կարծես քարացել, անէացել էին մի ուրիշ աստծու ստեղծած եթերային ստեղծագործության հնչյուններից... /Վ. Բալայան/

🕮 Ձ-273. Վ. Դավթյանի պոեզիայից քաղված հատվածներում փակագծերում տրված բայերի անորոշ ձևերը դնել սահմանական եղանակի նշված ժամանակաձևով:

● **Անկատար անցյալ ժամանակաձևով՝**

Թուխ ամպերն / տառապել/ ծանր, Լուռ /լալ/ մամոռոտ քարերը,
Հետո /խենթանալ/, /հանել/ շանթ ու կայծ Գետը /քանդել/ իր ափն ու հունը...
Եվ արտասուքի լույսն /թափել/:

● **Վաղակատար ներկա ժամանակաձևով՝**

Երևի բառն առաջին տառապանքից /ծնվել/՝
Նախամարդու վայրենի տառապանքից ու ցավից:
Երկրորդ բառը երևի սիրո մրմունջ /լինել/...
Հիացմունքից /ծնվել/ երևի բառը երրորդ,
Նրա ճաքած շուրթերի արյան շիթով /սնվել/
/Խառն լինել/ նրա մեջ երևի ճիչ ու հնչյուն,
Ու /սնվել/ զնգոցով այն ծխամած անձավի:
Բայց /գեղեցիկ լինել/, որպես գարնան առավոտ:

● **Անցյալ կատարյալ ժամանակաձևով**

... /Որոնել/, /գտնել/ ես այն տնակը հին, Եվ ամպրոպը /պայթել/..
Ուր /հյուր լինել/ մի հեռավոր ամառ: Նա թաթերով իր թաց
Դուռը փակ էր, ու երբ խաչված լուսամուտից /Անցնել/ գյուղամիջով, այգիներով /անցնել/,
/Ներս նայել/, /տեսնել/ խաչի ստվերը սև, Պատկառանքով /խոսել/ ընկուզենու հետ ծեր,
Գերաններից կախված սարդոստայններ /տեսնել/... Լույսը /թողնել/ նրա կնճիռների մեջ խոր,
Այնպես անակնկալ կայծակի /հոտ գալ/, Թավալգոր /գնալ/, /ընկնել/ քարափն ի վար:

Ա-274. Արտագրել՝ դիմավոր բայաձևերը ներկայացնելով սահմանական եղանակի ապակատար ներկա ժամանակաձևով:

Գիշերվա ալ տենդ է եղել, Մարել է ծիծաղդ հնչուն,
Ճաքել են շուրթերս պապակ, Ակունքդ կորել է սևում...
Դու՝ մաքուր, դու՝ ցողե հեղեղ, Այրվում են ժայռերը այս բորբ,
Տանջել ես կոպերը իմ փակ: Այրվում են լեռները հրկեզ,
Տանջել ես ու անվերջ կանչել Իմ մաքուր, իմ մանուկ, իմ որբ,
Աստղերի զրնգուն խաղով... Ես ինչպե՞ս, քեզ ինչպե՞ս փրկեմ....

/Ա. Դավթյան/

Ա-275. Ընդգծել ըղձական եղանակի բայաձևերը և արտագրել՝ կազմելով նրանց ~~ներկայի~~ անցյալ ձևերը:

Գոնե երազում ինձ մեկը սիրեր, Իմ անքնությունն, ա՜խ, կամ հավիտյան
Շշնջար բարի ու քնքուշ խոսքեր, Չհիշեր, որ կան սեր, համբույր ու կիր,
Չթողներ սիրտս անհույս ու խաբված, Կյանք, աշխարհ ու մահ, հույս ու խարդավանք,
Գոնե երազում, ա՜խ, գեթ մի գիշեր Չզգար իմ սիրտը, որ դեռ կամ, ո՛վ կյանք,
Տեսնեի մակերդ իմ կրծքին թափված: Ո՛վ քաղցր տանջանք,
Գոնե երազում իմ բախտն ինձ հիշեր, Ո՛վ դառը բերկրանք,
Գոնե այս գիշեր մեռնեի քո կրծքին, Ո՛վ կիրք ու խոհեր, չզգայինք, որ կանք:

/Հ. Շիրազ/

Ա-276. Արտագրել բանաստեղծությունը՝ ըղձական եղանակի ~~ներկա~~ անցյալ ժամանակաձևերը փոխարինելով անցյալի ձևերով:

Թե դու չգաս,
Ես առանց քեզ ինչպե՞ս անեմ
հոգեհարցում,
Ինչպե՞ս խոսեմ անհայտի հետ,
Կապույտի հետ,
Ցողի
Խոտի,
Փոշեկալած իմ հոգու մեջ
Ինչպե՞ս գտնեմ խիղճ ու արցունք,
Ինչո՞վ ցողեմ բացվող դեմքը առավոտի:

Թե դու չգաս,
Ինչպե՞ս լսեմ քամու հառաչն անպատմելի,
Ինչպե՞ս, ասա,
Ականջ դնեմ զոչումներիս հեռու լացին,
Ինչպե՞ս բռնեմ ընկնող ասուպն ու
կսկիծով իմ մատների
Տանեմ նորից պատանության իմ սիրածին:
Ինչպե՞ս գնամ ծննդավայր,
Ինչպե՞ս գտնեմ գետակն իմ զով,
Մեր դուռը փակ...

/Ա. Դավթյան/

🕮 Ջ-277. Ա. Դուրս գրել ենթադրական /պայմանական/ եղանակի բայաձևերը: Բացատրել Մ. Աբեղյանի միտքը. «Իրենց հիմնական ժամանակային իմաստներից բացի ենթադրական եղանակի ապառնին և անցյալի ապառնին գործ են ածվում նաև մի շարք երկրորդական նշանակություններով կամ այլ եղանակների ժամանակների իմաստով» /Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 583-586/.

Բ. Կազմել մնացած բայերի ենթադրականի ներկա և անցյալ ժամանակաձևերը:

Քվանտային մեխանիկայի ստեղծողներից մեկը՝ գերմանացի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր Մաքս Բոռնը /1882-1970/ դոկտորական ատենախոսություն պաշտպանելու համար, որպես բանավոր քննություն, ընտրեց աստղագիտությունը: Երբ նա եկավ հայտնի աստղագետ-ֆիզիկոս Շվարցշիլդի մոտ քննության, վերջինս նրան առաջարկեց հետևյալ հարցը.

-Ի՞նչ կանեիք Դուք, երբ ընկնող աստղ տեսնեիք:

Բոռնը գիտեր, որ դրան պետք էր պատասխանել այսպես. «Ես կնայեի ժամացույցիս, կնշեի ժամանակը, կորոշեի այն համաստեղությունը, որից նա հայտնվում է, կճշտեի շարժման ուղղությունը, կմտապահեի լուսավոր հետագծի ուղղությունը և հետո կհաշվեի նրա մոտավոր հետագիծը...», բայց չդիմացավ և պատասխանեց.

-Մտքումս մի ցանկություն կպահեի...

☑ Գ. Դուք ի՞նչ ցանկություն կպահեիք ընկնող աստղ տեսնելիս:

🕮 Ջ-278. Ա. Դուրս գրել պայմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը. ինչպիսի՞ գործողություն են ցույց տալիս:

Բ. Կազմել նույն բայերի պայմանականի անցյալի ձևերը:

Ա՛ռ ինձ կեղևիդ մեջ
Այս անծաղիկ գարում,
Ես կձուլվեմ քեզ հետ՝
Որպես փոքրիկ գարուն:
Որպես թաքուն թախիծ
Տերևներիդ խորքում
Ես կփայլեմ տխուր
Ու կմտնեմ խոր քուն:

Ու հողմերը թե գան՝
Ինձ խլեն քո ձեռքից,
Ես կարքնանամ, ծա՛ռ իմ,
Կորոտանք մեկից:
Ու մի թաքուն գիշեր,
Երբ բոլորը քնեն,
Ես քեզ կախարդական
Բառեր կկրկնեմ:

Կերթանք կամաց-կամաց,
Կելնենք թաքուն-թաքուն
Ու քնի մեջ նրան
Կդարձնենք անքուն...
Ես կձգվեմ քեզ հետ,
Ես կճկվեմ քեզ հետ
Ու հողմերի ձեռքից
Ես կփրկվեմ քեզ հետ...

/Ռ. Դավոյան/

🕮 Ջ-279. Ա. Դուրս գրել հարկադրական եղանակի բայերը և որոշել ձևաբանական հատկանիշները:

Բ. Կազմել մնացած բայերի հարկադրական անցյալի ձևերը:

Իրեն գիտությանը նվիրող երիտասարդը պետք է լինի պրպտող, անվերջ որոնող, նա պետք է հնարավորին չափ շուտ գտնի իր տեղը, իր ուղին, լինի բազմակողմանիորեն զարգացած, լավատեղյակ արվեստի, գրականության և մշակույթի պատմությանն ու ժամանակակից ընթացքին, ամուր սովորություն դարձնի իր վրա աշխատելը: Վերջապես, նա պետք է իր գործունեության մեջ ձգտի առավել ինքնուրույնության, և, իհարկե, չպետք է մոռանա Սենեկայի

իմաստուն խոսքերը. «Ուրիշի հետքերով գնացողը ոչինչ չի գտնում, որովհետև նա չի որոնում...»: Մեծ տեղ պետք է տալ աշխատասիրությանը. պետք է շատ աշխատել:

Եվ սա ոչ միայն այն դեպքում, երբ գիտական պրպտումների ավարտը փայլուն է, որոնելին՝ գտնված, բաղձալին՝ ձեռք բերված: Մագելանը և Ռոբերտ Սկոտը պիտի ամենաձախողակներից համարվեին մարդկային գործունեության ամբողջ պատմության մեջ. թե՛ մեկը, թե՛ մյուսը չտեսան այն, ինչին ձգտում էին և ինչի համար զոհեցին իրենց կյանքը...

Չգող ուժ պիտի լինի ոչ միայն նպատակը, այլև դրան հասնելու բուն ընթացքը, կամքն ու հաստատակամությունը, միշտ լարված պահելու ունակությունը: Չպետք է մոռանանք, որ այն երջանկությունը, որը բաժին ընկավ Գագարինին՝ առաջին մարդուն, որը բացեց տիեզերքի դռները, և Արմսթրոնգին, որն առաջինը ոտք դրեց Լուսնի վրա, շատ քչերին է վիճակվել. դա պետք է դիտենք ավելի շուտ որպես բացառություն, քան օրինաչափություն: Նրանց ուղին շատ էր ողորկ:

Երիցս երջանիկ է նա, ով փշոտ ճանապարհ մաքրելն է հանձն առնում:

Ա-280. Կազմել հետևյալ բայերի հրամայական եղանակի ձևերը և բացատրել դրանց կազմության օրինաչափությունները:

● Սիրել, գտնել, կարդալ, գրել, ուտել, փախչել, բարձրանալ, բարձրացնել, վախենալ, լինել, ելնել, թողնել, վեր կենալ, մոտեցնել:

● Հարգել, հավատալ, մնալ, իջնել, կորչել, ընկերանալ, հագենալ, հագցնել, լավացնել, կանգնեցնել, գալ, ասել, դնել, տալ, բերել, խոսել, լալ, կերցնել:

Ա-281. Ա. Կարդալ Հ. Հարությունյանի «Հետաքրքրաշարժ հայոց լեզու» գրքի «Մի քանի խորհուրդներից» մի քանիսը և դուրս գրել հրամայական եղանակի բայաձևերը՝ նշելով ձևաբանական հատկանիշները: Ո՞ր դեպքերում դրանք շեշտ չեն կրում...

Բ. Գրել դրանց՝ ա/ հոգնակիակազմական հակադիր եզրը. բ/ դրական ձևերի արգելականը. գ/ սկզբնաձևը:

Խոսքն ամենակարող է: Հիշեցե՛ք ժողովրդական առածները՝ «Անուշ լեզուն օձը բնից կհանե», «Լեզվի կծածին դեղ չկա»...

...Սովորի՛ր ասելիքդ արտահայտել հակիրճ ու հստակ, բայց առանց աղավաղելու:

Անընդհատ հարստացրու՛ բառապաշարդ, որի ամենալավ միջոցը ուշադիր ընթերցանությունն է:

Անծանոթ բառ լսելիս կամ կարդալիս ...օգտվի՛ր բացատրական բառարանից:

Երբեք մի՛ գործածիր այն բառը, որի իմաստը չգիտես:

Աշխատի՛ր խոսել մաքուր հայերենով. դրանով դու կպահպանես մայրենի լեզվի անաղարտությունն ու գեղեցկությունը:

Սովորի՛ր ուշադիր լսել դիմացինին: Մինչև վե՛րջ լսիր նրան, հետո՛ առարկիր...

... Ընդհանրապես քիչ խոսիր քո անձի մասին:

Մի՛ կրկնիր հարցը, եթե անհրաժեշտություն չկա:

Եթե մեկին գաղտնի բան ես ասելու, մի՛ շշնջա նրա ականջին... Իսկ եթե խիստ անհրաժեշտ, անհետաձգելի բան ես ասելու, ներողություն խնդրիր ներկաներից և առանձի՛ն ասա նրան, ում անհրաժեշտ է:

Խուսափի՛ր ավելորդ բառեր գործածելուց:

Որևէ մեկին դիմելիս ներողություն խնդրիր, վերջում չմոռանաս շնորհակալություն հայտնել:

Մի՛շտ հիշիր մեծ գրող Սերվանտեսի հետևյալ խոսքերը. «Առանց մտածելու խոսելը առանց նշանառության կրակել է»:

❖ Գ. Խոսքային վարքի ուրիշ ի՞նչ կանոններ գիտեք. շարունակել՝ լրացնելով ձեր իմացածներից:

🕮 Ջ-282. Արտագրել տեքստը՝ հարկադրական եղանակի փոխարեն գրելով հրամայական եղանակի բայեր և բացատրել կատարված իմաստային փոփոխությունը:

-Որդյա՛կ իմ Հելիոս, դու պետք է լսես իմ խոսքերը...

Լեզուդ փակի՛ տակ պետք է պահես:

Եթե մեկի բախտը բերում է, չպետք է նախանձես, այլ պիտի ուրախանաս նրա հետ, և նրա հաջողությունը քոնը կլինի...

Չպետք է ամաչես սովորելուց նաև հասուն տարիքում. լավ է սովորել ուշ, քան երբեք:

Պետք է ապրես նրանով, ինչ ունես, իսկ այսօրվա ավելցուկը պահես վաղվա օրվա համար. ավելի լավ է բարիքը թողնել թշնամուն, քան թե բարեկամներից ողորմություն մուրալ:

Ում հետ էլ ստիպված ես գործ ունենալ, պետք է զիջող լինես և հարգալից, չէ՞ որ շունն էլ շոյանք տեսնելիս պոչը խաղացնում է, մահակ տեսնելիս կծում է:

Պետք է աշխատես դառնալ խելացի և ոչ թե հարուստ. հարստությունից կարելի է զրկվել, իսկ խելքը միշտ քեզ հետ է:

Բամբասկոտին ու շաղակրատին, եթե նույնիսկ հարազատ եղբայրդ է, փորձելուց հետո պետք է իսկույն վանես քեզանից...

Եթե փողդ շատ է, չպետք է ուրախանաս, եթե քիչ է, չպետք է տխրես:

Այսպես ասաց Եզոպոսը /Եզովպոսը/ և պատանուց բաժանվեց:

🕮 Ջ-283. Ասել, բերել, զարկել, ուտել, անել, դնել, տանել, ելնել, առնել, տեսնել, թողնել, լինել, գալ, լալ, տալ, դառնալ, լվանալ, կենալ, բանալ, բառնալ բայերն ինչու՞ են անկանոն կոչվում: Դիմավոր և անդեմ ո՞ր ձևերում են անկանոնություն դրսևորում: Եթե տարբերակային ձևեր կան, գրել դրանք:

🕮 Ջ-284. Դուրս գրել անկանոն բայերը և նշել ձևաբանական հատկանիշները:

1. Գարունդ հայերեն է գալիս, Ձյուներդ հայերեն են լալիս, Հայերեն են հորդում ջրերդ /ԳԷ/: 2. Զգու՛յշ խոսիր Հայաստանում,- Այստեղ ամեն գագաթ ու ձոր Արձագանք է տալիս հզոր Եվ քո խոսքը հեռու՛ տանում.../Ն/: 3. Դու,

որ աշխարհի մեղքերը բոլոր Քո ուսին առել, Այդ բեռից ծալվել, հալվել, ծավալվել Ու դարձել էիր ամեհի մի ծով, Որ տառապանքի ալեբախությամբ Ինքդ քեզ զտես, Դարձնես ցողի մաքուր ավազան, Դարձնես լույսի անթախիծ ծփանք.- Արդ սատար եղիր, Օգնական ինձ լեր, Քանզի դեռ պղտոր ալիքի նման Զարկվում քարեքար Ու չեմ կարենում մաքրության հասնել /ՎԴ/: 4. Եկե՛ք, խնդրեմ, եկեք այսօր ու դարձեք ինձ սեղանակից, Օգտվելով իմ բարենպաստ եղանակից, Եկեք այսօր ուզածիս պես ուրախանանք, ուտենք-խմենք... /ՊՍ/: 5. Երբ իմ կարիքը չեն զգում մարդիկ, մոտս չեն գալիս, Չեն խոսում, ես էլ իմ տենդի հետ եմ առնում ու տալիս, Երբ վերջին անգամ հոգիս ելնում է, բերանս հասնում, Ջուր տվող չկա, ի՛մ հոգնած բիբեր, լոկ դու՛ք եք լալիս /Ռուդաքի/:

Q 2-285. & Դուրս գրել պակասավոր բայերը և բացատրել, թե դրանց պակասավորությունը որտե՛ղ է դրսևորվում:

1. Ու ես աչքերս բացի, դու չկայիր մեր բակում, Այդ նշենին էր ծաղկած իմ լուսամուտը թակում /ՎԴ/: 2. Բայց դատ չունեմ ես քո դեմ ու ոխ չունեմ ես բնավ, Քանզի տեսնում եմ ահա-վիրավոր ես ու տրտում, Քանզի գիտեմ, որ աշնան գիշերներն այս խոնավ Քրքրում ես ինքդ քեզ ու ինքդ քեզ բզկտում /Ն/: 3. Մենք կա՞նք-չկա՞նք, աշխարհը կա ու կմնա, Եվ մեզանից հետք ու անուն էլ չի մնա, Երբ չկայինք՝ աշխարհը բան չէր կորցրել, Երբ չլինենք, նա էլ նույնը կմնա /Օմար Խայամ/: 4. Գիտեմ՝ դու գիտես աստղերի լեզուն, Բայց ես չեմ փոխի քո ողջ աստղավետ Երկինքը երկրիս մի բուռ հողի հետ /ՀԾ/: 5. Սիրածներես ոչ մեկը Չարժեր ոչ մի արցունքիս, Ե՛վ թխլիկը, և՛ շեկը Ավերեցին բերդ հոգիս /Ն/:

Q 2-286. & Նույն տեքստի Ա և Բ մասերի ժամանակային տարբերությունը վերացնել՝ ա/ Բ մասը ժամանակային առումով համապատասխանեցնելով Ա մասին, բ/ Ա մասը՝ Բ մասին:

Ա. Ես ուզում եմ խոսել քեզ հետ: Անսահման տարածություն է բաժանում մեզ իրարից: Բայց ես կխոսեմ: Ես պիտի խոսեմ, որպեսզի զբաղեցնեմ աչքերս, որ արցունքներս չհորդեն: Նայում եմ երկնքին ու մտածում, որ այս րոպեին գուցե քո հայացքն էլ է դեգերում այնտեղ: Ինձ թվում է՝ եթե երկուսս էլ միաժամանակ նայենք երկնքին, ապա, անշուշտ, կտեսնենք իրար: Այս ի՞նչ է, աչքերս արցունքով են լցվում:

Բ. Օ՜, ոչ, երկնքից ձյուն էր մաղում: Քո գլխին էլ էր իջնում: Դու երևի ծիծաղեիր ճերմակած գլխիդ վրա ու քեզ մտովի «ծերուկ» անվանեիր: Իսկ իմ գլխի ձյունը հալվում էր, որովհետև «գլուխս տաքացած էր», ինչպես կասեիր դու: Ձյունը արցունքի նման հոսում էր մազերիցս...

Արցունք, ո՛չ, ո՛չ... Սենյակում ծաղիկներ կային, թերթիկները թաց էին, իսկ իրենք ժպտում էին մռայլ ճերմակությամբ, ժպիտ արցունքների միջից...

Ապակիների եղյամը կհալվեր, ծորակը կաթիլ-կաթիլ արցունք կթափեր...

Չէ՛, ավելի լավ էր արտասվեի... /Ըստ Հ. Դարբյանի/

🕮 Ձ-287. Արտագրել՝ ներկայի ժամանակաձևերով: Հիմնավորել կատարված փոփոխությունները:

Էվանջելիստա Տորիչելին Գալիլեյին հանդիպել էր բոլորովին վերջերս, բայց և այնպես հենց նրան՝ այդ կովարարին ու կնամոլին էր կտակել իր աշխատանքները մահացող Գալիլեյը, հենց նրա աչքերում էր տեսել տաղանդի բոցկլտումը: Տորիչելի... հիշեցի՞ք... Սնդիկով լի խողովակին նախորդել են դարեր: Մթնոլորտի մասին այնքա՞ն էին վիճել աշխարհի մեծագույն մտածողները՝ Արիստոտելն ու Դեմոկրիտը, Էպիկուրն ու Ալ Խայսամը: Մթնոլորտի գաղտնիքի լուծմանը բավականին շատ էր մոտեցել հանճարեղ Գալիլեյը: Նրան մնացել էր բառացիորեն ձեռք մեկնել դեպի սնդիկով խողովակը, բայց նա չհասցրեց անել դա: Տորիչելին մտահղացավ փորձը, իսկ Վինչենցո Վիվանին առաջինը խողովակը շրջեց բաժակի մեջ...

Էվանջելիստա Տորիչելին՝ այդ կնամոլն ու Ֆլորենցիայի գինետների մշտական այցելուն, մեզ կտակել էր ոչ միայն «Տորիչելյան դատարկությունը», այլև անոթներից հեղուկի հոսելու արագության բանաձևը, պարաբոլների քառակուսացման կանոնը:

Նա ապրում էր բուռն կյանքով, շռայլորեն ծախսում էր ինքն իրեն և՛ աշխատանքում, և՛ զվարճանալիս, ու մահացավ շատ երիտասարդ: Մահացավ և իր հետ գերեզման տարավ մի գաղտնիք, որի գոյության մասին մարդիկ իմացան բոլորովին վերջերս: Տորիչելիի մահից հետո նրա գաղտնիքի «բանալին» պահվում էր մի տուփի մեջ, որը երկար ժամանակ քոչում էր նրա մի բարեկամից մյուսի մոտ: Հետո այն կորցրին: Միայն 3 դար հետո հրատարակվեցին Տորիչելիի ձեռագրերը, բայց այն ձեռագիրը, որը պահված էր տուփի մեջ, անհետ կորել էր: Եվ մինչև հիմա ոչ ոք չգիտե, թե որտեղ է հանճարեղ ֆլորենցիացու գերեզմանը...

🕮 Ձ-288. Կազմել տրված բայաձևերի ժխտականները:

Զարմանում եմ, գալիս է, պիտի գրեմ, հանդիպել էինք, նայեմ, ապրել, կխոսեմ, հեռացի՛ր, փախե՛ք, ցո՛ւյց տվեք, խոսի, պիտի նայի, անց է կենում, հույս ունեցիր, երգող, վերհիշում է, կարդաց, գրած, փրկել են, երանի եմ տալիս, կտեսնեի, քնած, գրվելու է, գնացող:

🕮 Ձ-289. Դուրս գրել ժխտական խոնարհման բայերը և կազմել նրանց դրական ձևերը:

1. Երեք աղջիկ բնավ իրար չեն ճանաչում, Ես դրանից, անկեղծ ասած, չե՛մ ամաչում, Որովհետև ես չեմ խաբում և ո՛չ մեկին... Երեք աղջիկ երջանիկ են, ես՝ առավե՛լ, Ո՛չ մի անգամ ո՛չ մեկն ինձնից չի՛ խռովել, Տառապանքից չի պառավել Ու կարոտից չի՛ խորովվել: 2. Դու մի՛ հարցրու. «Սիրում ես ինձ»: Ինչպես կույրն իր ձեռնափայտն է միշտ հիշում, Դու էլ հիշի՛ր, Որ երբ իզուր հարց չեն տալիս՝ Սուտ պատասխան չե՞ն ստանում: Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա: 3. Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում, Ինչպես չի քերվում արյունը սրտից Կամ գույնը վարդից: Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում Ինչպես դրացուն, այնպես էլ համայն մի

ժողովրդի: Չի ներվում և այն, Ինչը կոչվում է առավելություն... 4. Այո՛, այստեղ էր՝ այս նո՛ւյն Բեռլինում, Որ բարեխնամ մի Վեհաժողով Որոշում հանեց հայ հողազուրկին Չբավարարել վեց արշին հողով, Այլ – ընդամե՛նը – չխենթացնել Մահվան ու ջարդի մշտական դողով... /Պ. Սևակ/

Ձ-290. ❖ Արտագրել՝ ժխտական խոնարհման բայերը փոխարինելով դրականներով:

Երբ երևան եկավ այդ ստեղծագործությունը, մամուլում հանդես եկած գրախոսներից մեկը գրեց. «Բեթհովենը այդ սոնատի առաջին մասում նորից կախարդել է չար ոգիների... Եթե դուք չզգաք, թե ինչպե՛ս է այդ երաժշտությունը սրտից սիրտ անցնում, ուրեմն սիրտ չունենք»:

Մի՛րտ: Միայն սիրտ չունեցող մարդը կարող է չզգալ «Ապասիոնատայի» զմայլանքը: Մեծ է նրա սիրտը, ուր տարբեր ժամանակներում տեղ էին գտել Ջուլիետա Գվիչարդին, Թերեզա Բրունսվիկը, Ամայի Զեբալդը, Ժոզեֆինա Դեյմը... Կարևոր չէ, թե նրանցից որին է ուղղված «Անմահ սիրեցյալին» նամակը, ինչպես նաև կարևոր չէ, թե ում է նվիրված «Լուսնի սոնատը»: Նույն ուժն է, նույն հոգին, նույն սիրտը: Ուզո՞ւմ եք մոտիկից զգալ այդ սրտի տրոփյունը, լսեցեք. «Ինչպե՞ս ապրեմ առանց քեզ... Մի վրդովվի՞ր... Մի վրդովվի՞ր, սիրի՞ր ինձ... Մնաս բարո՞վ, օ՜, մի՛ դադարիր ինձ սիրելուց, մի՛ հրաժարվիր քո սիրեցյալի սրտից: Հավերժ քոնն եմ, դու ի՞մն ես հավերժ, մենք հավերժ պատկանում ենք իրար...»: /Ըստ Վ. Բալայանի/

Ձ-291. Ուղղել սխալները:

● Փախնել, կապնվել, դուրս գնալ դուրս, նորից կրկնել, թողել, զգացնել տալ, վազացնել, խոսա՛, ընձեռել, սպասեցնել տալ, ճշտգրտել, հոտհոտել, հայթհայթել, գնհատել, ուտացնել, մի՛ք խանգարի, իջացնել, ասեց, նստացնել, վախում եմ, վերցրված:

● Ներս մտավ ներս, պայթացնել, խոստովանվել, իր մեջ ներառնել, վազեցնել տալ, սրտդողել, խոսեցնել տալ, շնչնկալ, հեկհեկալ, հայոյել, կպնելիս, խոսացնել, թռնել, նորից հետ վերադառնալ:

● Հարաբերվել, տուժվել, վիճվել, խնդրվել, կքվել, խաչակնքվել:

● Վեր է լուծում, գործ է ածում, անց է կացրել, վեր է ածում, ներ է դնում, առ է համարում:

● Մարդ չի, ուրախ չի, պարտադիր չի:

● Հանի, գրի, խմա, /հ/ելա, ասի, ասեցի, դառա, թափվավ, համաձայնվավ, հաջողվավ, համոզվավ, կայնեմ, պատկանա:

● Խոսեցրեցին, թոցրեցի, ջոկար, ուտել, լվում եմ, վեր մի՛ կաց, թողնող, դառավ, ասեցինք:

● Ասում ա, քայլում ա, երգում ա:

🕮 Ձ-292. Փակագծերի մեջ տրված թվերի փոխարեն դնել ներքևում տրված բայերը՝ մատնանշված քերականական ձևերով:

Թե քեզ /1/ , ինձ /2/ գոնե
Ու խոսքիս վերջին նվոցը /3/,
Երբ որ աստղերը
Արդեն /4/ անշարժությունից,
Վերից իրենց /5/ ջուրը,
Երբ բարի քամին /6/ իրենց,
Դու,
Որ /7/ քեզ պատեպատ /8/,
/9/,
/10/ հոգուս մեջ,
Որ /11/ պատեր, որոնց դու /12/,
/13/ հոգուս մեջ,
Ուր /14/ նաև մտովին,
Ուր դու /15/ ու /16/ անգամ...
Ինքդ /17/
Եվ ուրիշներին լավ /18/,
Որ ոչի՞նչ-ոչի՞նչ ձեզ /19/ չեմ կարող,
Ես լոկ կարող եմ ձեզ /20/ այսքա՛ն:

/Պ. Սևակ/

1 – **խոնջալ**՝ սահմ. եղ., անկատար ներկա եզ., թիվ, երկրորդ դեմք, ժխտական խոնարհում
2– **խոնջալ**՝ ըղձական եղանակ, ներկա ժամանակ, երրորդ դեմք, եզ., թիվ
3– **լսել**՝ հրամայական եղանակ , եզ. թիվ,դրական խոնարհում
4– **հոգնել**՝ սահմ., եղանակ, անկատար ներկա, երրորդ դեմք, հոգնակի թիվ, դր. խոնարհում
5– **նետել**՝ սահմ. եղ., անկատար ներկա, երրորդ դեմք, հոգնակի թիվ, դր. խոնարհում
6– **ման ածել**՝ ըղձական եղ., ներկա ժամանակ, երրորդ դեմք, եզ. թիվ, դր. խոնարհում
7– **հոգնել**՝ սահմ. եղ., վաղակատար ներկա, երրորդ դեմք, եզ. թիվ, դրական խոնարհում
8 – **խփել**՝ անորոշ դերբայ, բացառական հոլով
9– **գալ**՝ հրամայական եղանակ, եզ. թիվ, դր. խոնարհում /ժողովրդական տարբերակը/
10–**ասաել**՝ հրամայական եղանակ, եզ. թիվ, դր. խոնարհում
11–**ունեմ**՝ սահմանական եղանակ, անկատար ներկա, երրորդ դեմք, եզ. թիվ, ժխտական խոնարհում
12 – **խփվել**՝ ըղձական եղանակ, ներկա ժամանակ, երկրորդ դեմք, եզ. թիվ, դրական խոնարհում
13–**ասաել**՝ հրամայական եղանակ, եզակի թիվ, դր. խոնարհում
14– **դնեցրել**՝ պայմանական եղանակ, ներկա ժամանակ, երկրորդ դեմք, եզ. թիվ, ժխտական խոնարհում
15–**նստել**՝ պայմանական եղանակ, ներկա ժամանակ, երկրորդ դեմք, եզ. թ., դրական խոնարհում
16–**իշխել**՝ պայմանական եղանակ, ներկա ժամանակ, երկրորդ դեմք, եզ. թիվ, դր. խոնարհում
17–**հասկանալ**՝ հրամայական եղանակ, եզ. թիվ, դրական խոնարհում
18–**հասկացնել**՝ հրամայական եղանակ, եզ. թիվ, դր. խոնարհում
19–**տալ**՝ անորոշ դերբայ, ուղղական-հայցական հոլով
20–**սիրել**՝ անորոշ դերբայ, ուղղական-հայցական հոլով

🕮 Ձ-293. Փակագծերում տրված բայերը դնել անհրաժեշտ ձևերով:

Տասնյոթ տարեկանում Ֆիլիպոն /դառնալ/ դոմինիկյան միաբանության վանական և /վերանվանվել/ Ջորդանո: Այդ ժամանակից սկսած բոլորը նրան /կոչել/ Ջորդանո Բրունո Նոլացի... Վանականների հոյակապ գրադարանում Ջորդանոն /անցկացնել/ իր ողջ երիտասարդությունը: «Տգիտությունը, - /հեգնել/ Բրունոն,- աշխարհիս լավագույն գիտությունն է, որը /տրվել/ առանց չարչարանքի և /վշտացնել/ հոգին»: Մեծ գիտնական... Բայց ինչպիսի՞ մեծ ինկվիզիտոր /ստացվել/ այս երիտասարդ գրքամոլից: Սակայն եկեղեցին և ինկվիզիցիան շատ վաղ /կորցնել/ նրան: Մեծն Կասկածը շատ վաղ /այցելել/ պատանուն: Գիտելիքների խառնուրդից /բյուրեղանալ/ բազմաթիվ հարցեր...

.../Անցնել/ դարերը շատ բան /արժեքազրկել/ Բրունոյի արածներից, սակայն տիեզերքի անվերջության և մեր Երկրի նման աշխարհների

բազմաթվության վերաբերյալ նրա ուսմունքը երբեք /մոռացվել/: /Զարգացնել/ Կոպեռնիկոսի գաղափարները՝ Բրունոն /փշրել/ երկնային ոլորտների գմբեթները... Բրունոն /դատապարտվել/ ոչ թե այն բանի համար, որ /պնդել/, թե աշխարհները շատ են. փա՜ռք քեզ, Աստվա՛ծ, քո բազում գործոց համար: Նրան /մահապատժի ենթարկել/ այդ աշխարհները երկրային աշխարհին /նմանեցնել/ համար, մարդ արարածի բացառիկության վրա /ոտնձգություն կատարել/ համար: Նրա գիտությունը ./սպառնալ/ կրոնի գոյությանը, ուստի և /ոչնչացվել/:

Ութ տարի բանտում /մնալ/ Նոլացին: Սուրբ հայրերը /շարունակել/ /երազել/, ու նա /ապաշխարել/: Նա շատ բան /խոստովանել/. այո՛, ինքը մեծ /մեղք գործել/ կրոնի դեմ, այո՛, եկեղեցի /գնալ/ և շատ /սիրել/ կանանց: Բայց իր տեսակետները, իր ուսմունքը... Ո՛չ, այստեղ ինքն իրավացի է: Նրան /մտածել/ համար /տալ/ բառասուն օր, աստվածաբաններ /ուղարկել/ նրա խուցը: /Մտածել/, բայց /ապաշխարել/, /երկմտել/, բայց երեսը /դառնալ/ առ Աստված: Ոչինչ /չօգնել/: Երբ /կարդալ/ դատավճիռը, նա /ասել/. «Դուք ավելի մեծ սարսափով /հայտնել/ դատավճիռը, քան այն ես /լսել/»: Մահապատիժն /ի կատար ածվել/ այգաբացին՝ լույսը /բացվել/ պես, ու չորս կողմը /վառվել/ անթիվ ջահեր... Լեզուն /սեղմել/ հատուկ բռնիչներով, որ ավելորդ բառեր /չգոռալ/: Վերջին բանը, որ /տեսնել/ /շունչը պահել/ ամբոխը, այն էր, թե ինչպես Ջորդանոն /ցնցել/ գլուխը և /շրջվել/, երբ նրա շուրթերին /մոտեցնել/ երկար ձողի վրա /ամրացվել/ խաչը:

Մ Ա Կ Բ Ա Յ

Ա Ջ-294. Կարդալ և ընդգծել մակբայները՝ բացատրելով նրանց իմաստային, քերականական առանձնահատկությունները:

1. Մի՞թե չգիտես, որ երբ խավարում բացվում են նրանք, Արշալույսներն են զարկվում պատեպատ: 2. Կապույտ մշուշն է ելնում վիհերն ի վեր, ձորն ի վեր, Ոտից գլուխ ինձ նորից թախիծով է մկրտում: 3. Ու սաստիկ է երևի դողում ծառն այն մենավոր, Որ աճել էր ժայռերի հողմահարված պղնձից, Գնա՜մ, գրկեմ քնքշորեն տառապանքը նրա որբ, Որ մի վայրկյան ջերմանա իմ շոյանքից ու շնչից: 4. Տե՛ր, ուզում էի ես հոգնածորեն պառկել ու ննջել... 5. Մի աստղ ընկավ երկնքից ու գլորվեց ձորն ի վար Ու երևի ձորի մեջ դեռ հուրհրում է ծավի: 6. Ծնկներդ արնած, բարձրանում ես վեր, Ավեր բերդի հետ նորից պաշարվում, Ավերվում նորից վանքի հետ ավեր, Այրված ժայռի հետ նորից ես այրվում: 7. Քրմորեն արդար ծունկի էր իջնում նա արևի դեմ, Փառաբանում էր շողն արեգական: 8. Այնպես ուզում եմ մեկ-մեկ դեն նետել Երգը կաշկանդող այս չափն ու հանգը: **/Վ. Դավթյան/**

🕮 Ձ-295. Ա. Տրված բառակապակցություններում ընդգծել մակբայները, որոշել նրանց հետ կապակցված բառերի խոսքիմասային պատկանելությունը, ձևաբանական հատկանիշները:

Բ. Բացատրել մակբային հարաբերակից այլ խոսքի մասերի տարբերակման խնդիրը:

1. Հայրաբար խրատել, մեղմորեն նայել, քնքշագին սեղմել, միանգամից հեռանալ, մեկ-մեկ հիշել, քայլ առ քայլ մոտենալ, հետզհետե նոսրանալ, կրկին տանջել, սաստիկ ամաչել:
2. Արագ շարժում, դանդաղ ընթացք, լիովին ոչնչացում, հանկարծակի խոստովանություն, ուշ աշնանը, վաղ գարնանը, թեթևակի ժպիտ:
3. Հազիվ լսելի, չափազանց գեղեցիկ, հար հոսուն, հար մնայուն, շատ խելացի, բավական երկար, գրեթե ամայի, հավիտյան լուռ, ծայրաստիճան մաքրասեր:
4. Հազիվ 3 կմ, գրեթե 4 գիշեր, համարյա 3 շաբաթ, ընդամենը 200, ուղիղ 6 ամիս, 3 անգամ, մոտավորապես 4 ոտպե, շուրջ 2 տարի, մոտ 10 օր, ավելի քան 3,5 միլիոն:
5. Համարյա միաժամանակ, գրեթե հայրաբար, չափազանց շուտ, շատ դանդաղ, ծայրաստիճան քնքշորեն, միշտ շուտ, սաստիկ արագ, բավական ուշ:
6. Գրեթե ամբողջ /ժողովուրդը/, համարյա բոլորը:

🕮 Ձ-296. «Արդի հայերենի բացատրական բառարանից» դուրս գրել 10-15 երկխոսքիմասային /տարարժույթային/ այնպիսի բառեր, որոնք տրված են թե՛ իբրև մակբայ, թե՛ իբրև ածական:

🕮 Ձ-297. Ա. Տրված բառերը տարբեր նախադասություններում գործածել նշված խոսքի մասերի նշանակությամբ և բացատրել տարբերությունները:

ա/ Հայերեն, ռուսերեն /գոյական, ածական, մակբայ/

բ/ Հեռու /գոյական, ածական, մակբայ, կապ/

գ/ Առաջ, հետո /մակբայ, կապ/

դ/ Մոտ /ածական, մակբայ, կապ/[1]

---

[1] **Ժամանակ և տեղ նշանակող որոշ բառեր** /այսօր, երեկ, հիմա, առաջ, վաղը... և ներս, դուրս, վեր, վերև, ներքև, ետև.../ **նաև հոլովական ձևերով են գործածվում: Մանուկ Աբեղյանը դրանք մակբայ չի համարել /«Հայոց լեզվի տեսություն, էջ 382-383/, Ս. Արրահամյանի «Ցթեքվող խոսքի մասերը...» գրքից կարելի է եզրակացնել, որ ուղիղ ձևերը համարում է մակբայ, իսկ թեքված ձևերը՝ ոչ: Ալ. Մարգարյանը և Ա. Սուքիասյանը և՛ ուղիղ, և՛ թեքված ձևերը մակբայներ են համարում: Ըստ Մ. Առատրյանի՝ դրանք ավելի շատ մակբայներ են, քան գոյականներ. «մեր խորին համոզմամբ այս բառերի ուղիղ և թեք ձևերի միջև խոսքիմասային տարբերություններ չկան» /Ժամանակակից հայոց լեզու, 2002, էջ 338/:**

🕮 Ղ-298. Արագ, դանդաղ, ուշ, շուտ, բարեխղճորեն, շատ, քիչ **մակբայների համեմատության աստիճանները կազմել. համեմատության աստիճաններ կազմելը մակբայի ներխոսքիմասային յուրահատկությունն է:**

🕮 Ղ-299. Բացատրել տրված մակբայական խմբերից յուրաքանչյուրի բառակազմության ընդհանուր օրինաչափությունը և շարունակել՝ ավելացնելով առնվազն 4-5 մակբայ:[1]

- 1. Դանդաղ, կամաց, հաճախ, ետ, կանուխ...
- 2. Տխուր-տխուր, արագ-արագ, մեն-մենակ, մեկիկ-մեկիկ...
- 3. Կամա-ակամա, ամառ-ձմեռ...
- 4. Փոքր-ինչ, դույզն-ինչ...
- 5. Քարեքար, դարեդար, բերնեբերան, ամսեամիս...
- 6. Տնից տուն, ճակատ ճակատի, երկրից երկիր...
- 7. Դես ու դեն, ամառ ու ձմեռ, տակն ու վրա...
- 8. Բերանբսիվայր, հոտնկայս, մանկուց, այսուհետև, համարյա...
- 9. Ի սրտե, ի վերջո, ի մոտս, առայսօր, առավել...
- 10. Ցմահ, ցկյանս...
- 11. Մեկընդմեջ, բացեիբաց, հետզհետե, ինքնըստինքյան, կույրիկույր...
- 12. Դեմառդեմ, ժամառժամ, մերթընդմերթ, մեկառմեկ, աջուձախ, դեսուդեն...
- 13. Բոպե առ բոպե, սակավ առ սակավ, արցունք առ արցունք...
- 14. Սարն ի վեր, ձորն ի վար, լեռն ի վեր, դարերն ի վեր, քարերն ի վեր...
- 15. Լալագին, խիզախորեն, սրտանց, հաճախակի, բազմապատիկ, գաղտնաբար, խմբովին...

🕮 Ղ-300. Տրված նկարագրական մակբայներից ընտրել 5-ը և կազմել նախադասություններ:

Մի անգամ, քանի անգամ, հազար անգամ, ոչ մի անգամ, ամեն կերպ, մի կերպ, անսպասելի կերպով, առաջին հայացքից, օր օրի վրա, վերին աստիճանի, մեծ մասամբ, չափից ավելի:

---

[1] **Մի շարք մակբայներ ունեն գրության տարբերակային ձևեր՝**

դեմառդեմ – դեմ առ դեմ	վառիվեր – վառ ի վեր
մերթընդմերթ – մերթ ընդ մերթ	վերջիվերջո – վերջ ի վերջո
մեկառմեկ – մեկ առ մեկ	բոպեառբոպե – բոպե առ բոպե
օրըստօրե – օր ըստ օրե	դեսուդեն – դես ու դեն
դեմհանդիման – դեմ հանդիման	պատնիվայր – պատն ի վայր
հազիվ–հազ – հազիվհազ	ժամառժամ – ժամ առ ժամ
ծառնիվար – ծառն ի վար	լեռնիվեր – լեռն ի վեր
երեսնիվայր – երեսն ի վայր	աջուձախ – աջ ու ձախ
մեն մենակ – մեն-մենակ	դեմ դիմաց – դեմ-դիմաց –դեմդիմաց
հեռու հեռվից – հեռու-հեռվից	սարն ի վեր - սարնիվեր

🕮 Ջ-301. Գտնել մակբայները և որոշել նրանց կազմությունը:

1. Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր Երկրից երկիր որոտաձայն շառաչեց /ԵՋ/: 2. Մեզ բոլորիս համար սահմանված է վերուստ մի քնքշաբույր գարուն անվերադարձ /Ն/: 3. Գալիս եք միշտ ու հավիտյան և բերում եք ձեզ հետ Պարգևներ անհուն և անհատնում /Ն/: 4. Առուներով, գետակներով, վտակներով անհամար Հոսում են հար ու կուտակվում քո մեջ խոհեր ու գանձեր /Ն/: 5. Հորիզոնի վրա կրկին ամպեր են մութ ծանրանում, Մահն է կրկին ոխակալել՝ մռայլ նստած դարանում /Ն/: 6. Այգը բացվեց աշխարհում, երբ դու դեռ քերթող էիր լոկ, Այժմ կեսօր է արդեն,- ժամ է դառնաս իմաստուն /Ն/: 7. Արևի նման բոցվում է, Ոչպե՞ առ ոչպե՞ բացվում է Փոքրիկ իմ, սիրու՛ն իմ մանկիկը /Ն/: 8. Դու անդադար չափում էիր, Թե որքան է լայն իմ հոգին, Որքա՞ն եմ ես տանում, ներում, Կրկին տանում, ներում կրկին: Արդ, երբ գիտեմ, մի հարց ունեմ Քո մնացած խղճին տալու, Արժե՞ր հոգիս փորձել այդպես Դաժանորեն ու ցավագին /ՀՀ/: 9. Բայց ես երբեք չեմ տրտնջում Իմ խառն ու դառն երազներից, Որ այլոց մոտ ամառ-ձմեռ Միատեսակ սառն են լինում /Ն/: 10. Սարերից վեր, չարերից վեր, Սովորական բառերից վեր Թափառում է հեգ մի հոգի /Ն/: 11. Հին դարերից մի մեղեդի Հնչում է միշտ նվիրաբար Ու չի լռում երբե՛ք, երբե՛ք. Հնչում է զիլ ու տիրաբար /Ն/: 12. Շրջում էին պապերը մեր Երկրեերկիր ու դարեդար /Ն/: 13. Հեռու-հեռվում մի արևոտ, Ծաղկածիծաղ հովիտ մնաց /Ն/:

🕮 Ջ-302. Լրացնել աղյուսակը:

ՊԱՐԶ /ԱՐՄԱՏԱԿԱՆ/	ԲԱՂԱԴՐՅԱԼ		
	Ածանցավոր	Բարդ	
		Վերլուծական	Համադրական

🕮 Ջ-303. Լրացնել աղյուսակներից մեկը:

Աղյուսակ 1.

ՄԱԿԲԱՅ			
տեղի	ժամանակի	ձևի	չափ ու քանակի

Աղյուսակ 2.

ՄԱԿԲԱՅ			
ՈՐՈՇՉԱՅԻՆ		ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ	
որակական	քանակական	ժամանակի	տեղի
հոտնկայս	առավելապես	ի սկզբանե	տնետուն

🕮 Ձ-304. Գործողության կատարման կամ հատկանիշի դրսևորման ժամանակային ինչպիսի՞ իմաստներ են արտահայտում մակբայական տրված բառաշարքերը:

● հավիտյան, հար, հավերժաբար, միշտ, ընդմիշտ, առմիշտ, առհավետ, հուր-հավիտյան, գիշեր-ցերեկ, օր ու գիշեր, հանապազ, ամառ-ձմեռ, անդադար, հավերժ, գիշեր ու զօր

● երբեմն, մերթ ընդ մերթ, մերթ-մերթ, ստեպ-ստեպ, ժամանակ առ ժամանակ, ժամեժամ, երբեմն-երբեմն, մեկ –մեկ

● մանկուց, վաղուց, հնուց, առաջուց, մորուց, ի ծնե, այսօրվանից, հերվանից, առաջ, ի սկզբանե, սկզբնապես

● ցմահ, ցգերեզման, ցայսօր, ցայժմ, առայժմ, ցարդ

● այսուհետև, այնուհետև, ապա, այլևս, էգուց, հետո, վաղը, վաղնեթ, էլ, ուշ

● ժամեժամ, օրեցօր, տարեցտարի, վայրկյան առ վայրկյան, ամսեամիս, բոպե առ բոպե, օրըստօրե, օր օրի

● հիմա, այժմ, արդ, այսօր, ներկայումս, արդեն

● վերջապես, վերջիվերջո, ի վերջո

● դեռ, դեռևս, տակավին

🕮 Ձ-305. Տրված չափ ու քանակի /կամ՝ քանակական/ մակբայները խմբավորել ըստ իմաստային տարբերությունների /առավելագույն չափ ու քանակի, ամբողջության, մոտավորության, հաճախականության, քչության, սաստկացման/:

Ահագին, գրեթե, չափազանց, ամբողջապես, հազիվ, առնվազն, համարյա, հաճախ, մոտ, շուրջ, խիստ, հաճախակի, պակաս, քառիցս, առավելապես, ամբողջովին, երկու անգամ, հույժ, սակավ, քիչ, մոտավորապես, ավելի, բավականաչափ, առավել, բազմիցս, ընդամենը, լիովին, երիցս, խմբովին, լրիվ, սաստիկ, հիմնովին, գերազանցապես, կիսով չափ, փոքրիշատե, շատ թե քիչ, մեծ մասամբ, կրկին, նորից, վերստին, դարձյալ, բյուրապատիկ, երկակի, քանիցս:

🕮 Ձ-306. Տրված բայերի հետ գործածել՝

ա/ Ժամանակի մակբայներ

ապրել, մեռնել, վառվել, արևկող անել, աշխատել, փայլատակել, ցնցել, այցելել, կանգ առնել, մտորել, առաջ գալ, հանգստանալ

բ/ Տեղի մակբայներ

մագլցել, նայել, հայացքը հառել, տարածվել, գալ, ընկնել, թռչել, հնչել, վայր ընկնել

գ/ Ձևի մակբայներ

քայլել, գնալ, ճեմել, պատմել, լռել, խրատել, մոտենալ, բարձրանալ, վեր թռչել, լալ, կաթել, կորչել

դ/ Չափ ու քանակի մակբայներ

հրավիրել, կրկնել, կամենալ, իջնել, տանջել, հուզվել, ամաչել, բարակել, մոռանալ, առողջանալ, հավաքել, անիծել

🕮 Ձ-307. Կազմել բայական բառակապակցություններ:

● հետագայում, հավերժ, հավիտյան, հանապազ, հուր-հավիտյան, միշտ, ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ, հաճախ, վայրկյան առ վայրկյան, հնուց, առայժմ, դեռ, տակավին, միաժամանակ

● առաջ, դուրս, ներս, քարեքար, տնետուն, բերնեբերան, սարն ի վեր, ջուրն ի վեր, ամենուր, դեմուդեմ, տեղ-տեղ

● քնքշորեն, հայրաբար, մեղմորեն, վճռաբար, մտովի, քաղաքավարի, քնքշագին, լալագին, միանգամից, գաղտագողի, տող առ տող, հետզհետե

● երկակի, երիցս, բազմիցս, կրկին, վերստին, նորից, դարձյալ, շատ, քիչ, բավական, սաստիկ

🕮 Ձ-308. Տրված ընդհանրական /տարիմաստ/ մակբայներով կազմել նախադասություններ՝

● **ձևի և չափի իմաստներով՝** ամբողջովին, լիովին, լրիվ, թեթևակի.

● **ձևի և ժամանակի իմաստներով՝** իսկույն, հանկարծ, շտապ, ստեպ-ստեպ.

● **տեղի և ժամանակի իմաստներով՝** առաջ, հետո.

● **տեղի և ձևի իմաստներով՝** դեմ առ դեմ, տեղնուտեղը, ներքուստ, քարեքար.

● **ձևի, ժամանակի և չափի իմաստներով՝** անընդհատ, անդադար, շարունակ, մերթընդմերթ, մեկ-մեկ, շուտ-շուտ.

● **չափի, ձևի և տեղի իմաստներով՝** բերնեբերան, ծայրեծայր:

Կ Ա Պ

🕮 Ձ-309. Ա. Կարդալ և ընդգծել կապերը, բացատրել նրանց խոսքիմասային իմաստն ու շարահյուսական դերը:

Բ. Դուրս գրել կապերը և կապի խնդիրներն այն բառերի հետ, որոնց ստորադասվում են:

Հայի պես հին է երգը հայոց: Բեմի վրա չի ծնվել երգը, հայոց երգը հինավուրց: «Ապրել է շինականը բնության գրկում, և բնությունը՝ շինականի սրտում», ու ծնվել է երգը: Ծնվել է մի խոր ձորում, սարերի վրա արևամոտ, ծիրանենու տակ մի ծաղկած, տափարակում՝ ծայրը երկնի հետ շաղած, առվակների ափին բարակ ու զուլալ, գետերի վրա պղտոր ու հորդահոս, «լափին» տվող Արագի մոտ, ճամփեքի վրա գաղթի՝ փոշոտ ու քարոտ, դեգերումների ժամանակ՝ օտար երկնի տակ է հայի վիշտն ու մրմունջը երգ դարձել, դարձել «Կռունկ» ու «Անտունի», ծնվել է ուրախության ժամանակ ու հերոսության, տխրության ժամանակ է ծնվել երգը հայի, երգը հինավուրց ու նոր:

Արշալույսի հետ դաշտն է քշել սերմով ու հույսով բարձած իր սայլը հայը ու բնության վաղորդյան շշուկներից ու սայլի անիվների ձայնից իր երգն է հյուսել՝ երգը բնության ու զգացմունքների... Բողբոջել է սերը սրտում մի հայուհու, ու դիմել է նա պանդխտության ցուպը առած իր պաշտելուն՝ «Չինար ես, կեռանալ մի... հեռանալ մի..., հեռու ես, մոռանալ մի...»: Բնության զարթոնքի հետ ու գարուն օրով մերժվել է, կոտրվել է մի սիրտ

ջահել, ձնծաղիկը ձյան փաթիլ է երևացել նրա աչքին, դարձել հույզ, երգ, ու ծնվել է «Գարուն ա, ձուն ա արել...»: Արբեցել է երիտասարդ հայը, խենթացել է սիրուց ու երգել ուրախ, պարել հողմի պես: Մշո դաշտում է պարել նա, Սև սարի վրա, Արագածի փեշին...

...Հին, շատ է հին երգը հայոց, հայի պես հին: Ո՞վ է եղել աշխարհի առաջին հայը՝ կի՞ն, թե՞ տղամարդ... , նրա առաջին ճիչը երգ է եղել... Ու ամեն սերունդ իր երգն է հյուսել, երգել է իր երգը՝ ուրախ կամ տխուր, զարկել լարին հայոց տավիղի ու անցել կյանքի իր ճանապարհը:

Մնացել է երգը գալիք սերունդներին, անցել բերնից բերան..., իսկ հետո մի երգասանի շուրթերի հետ, թառի հետ, զուռնի ու քյամանչի հետ բեմ ելել՝ ալեհեր ու շատ ջահել մի ժողովրդի երգ որպես... /Մ. Գալշոյան/

Ա-310. Դասդասել ստորև բերված կապերն ու կապական բառերը՝

Ա. Ըստ կազմավորման աստիճանի

Իսկական կապեր	անիսկական կապեր	կապական բառեր

Բ. Ըստ շարադասության

նախադրություն	ետադրություն	երկդրություն

Գ. Ըստ կազմության

պարզ կամ արմատական	քերականական ձևերից առաջացած	նախդրավոր
տակ	շնորհիվ	բացի

Անկախ, անցած, անունից, առ, առանց, առաջ, առընթեր, առթիվ, առջև, ավել, ավելի, բացառությամբ, բացի, գծով, դեմ, դեմ հանդիման, դեպի, դեպքում, դիմաց, դուրս, ձեռքով, երեսից, զատ, զերդ /զերթ/, զուգընթաց, ընդ, ընդդեմ, ընթացքում, ըստ, ժամանակ, կից, կողմ, կողմից, իբրև, ի դեմս, ի հաշիվ, ի հեճուկս, ինչպես, ի շահ, ի պատիվ, ի սեր, ի վար, ի վեր, ի տրիտուր, ի փառս, կապակցությամբ, կերպով, հակառակ, համաձայն, համապատասխան, համար, համեմատ, համեմատությամբ, համընթաց, հանգույն, հանդեպ, հանդերձ, հանձին, հանձինս, հանուն, հավասար, հիման վրա, հասցեին, հետ, հետևանքով, հետո, հօգուտ, ձեռքից, մասին, մեջ, մինչ, մինչև, միջև, միջոցին, մոտ, նախքան, ներքև, ներքո, նկատմամբ, նման, նպատակով, շնորհիվ, շուրջ, որպես, չափ, չնայած, չնայելով, պակաս, պահին, պատճառով, պես, սիրուն, սկսած, վար, վեր, վերև, վերաբերմամբ, վերաբերյալ, տակ, տեղ, տեղակ, ուղղությամբ, փոխանակ, փոխարեն, քան, օգտին, օրոք:

Դ. Տարբերակել կապերն ըստ իրենց արտահայտած քերականական իմաստների՝ ՝1. տեղի ՝2. ժամանակի ՝3. չափի ՝4. ձևի ՝5. համեմատության ՝6. վերաբերության ՝7. նպատակի ՝8. միասնության ՝9. բացառման ՝10. զիջման ՝11. պատճառի ՝12. հիմունքի:

🕮 Ղ-311. **Ընդգծել կապերը. բացատրել դարձվածքների իմաստները:**

● ♦Աշխարհը ոտի տակ առնել ♦աչքի տակ առնել ♦աստված քեզ հետ ♦արդար յուղի տեղ ընդունել ♦գլխի վրա դնել ♦դափնիների վրա հանգստանալ ♦եղունգի չափ ♦կրակի տակ առնել ♦հինգ մատի պես ճանաչել ♦մեղքի տակ ընկնել ♦սարի պես կանգնել ♦վատ աստղի տակ ծնվել ♦ավազի վրա տուն շինել ♦դեզի մեջ ասեղ փնտրել ♦ շան նման քարշ գալ:

● ♦Աչքի առաջ ունենալ ♦աչքից հեռու ♦ասուպի պես երևալ ♦արյան մեջ խեղդել ♦գլխի տակ փափուկ բարձ դնել ♦կրակի վրա յուղ լցնել ♦մահվան հետ կռիվ տալ ♦շան պես պոչը պտտեցնել ♦պատերի տակ մնալ ♦սարի նման թիկունք ունենալ ♦ ջրի նման գնալ, ավազի նման մնալ ♦սրտի վրա մի թիզ յուղ բռնել ♦դունչը մեղրի մեջ թաթախել:

🕮 Ղ-312. **& Ա. Կազմել նախադասություններ, որոնցում վրա կապն արտահայտում է հետևյալ հարաբերությունները՝ տարածական, ժամանակային, ձևի, համեմատության, պատճառի, ուղղության, վերաբերության:**

& Բ. Իմաստային մեկից ավելի հարաբերություններ են արտահայտում նաև առաջ /2/, ի վեր /2/, տակ /2/, համար /3/, պես /3/, մեջ /2/, մոտ /3/, հետ /4/, որպես /3/ **կապերը. կազմել բառակապակցություններ /փակագծերում տրված թվերը նշում են նրբիմաստների նվազագույն քանակը/:**

🕮 Ղ-313. **Կազմել նախադասություններ, որոնցում տրված բառերն ու բառաձևերը մեկ կապեր են, մեկ՝ այլ խոսքի մաս /գոյական, ածական, մակբայ/:**

ա/ առաջ, դեմ, դուրս, ընդառաջ, հեռու, հետո, մեջ, մոտ, ներքև, շուրջ, վեր, վերև, մեկ.

բ/ անկախ, առընթեր, զուգընթաց, համաձայն, համապատասխան, համընթաց, հավասար, մոտիկ, նման.

գ/ միջոցին, պահին, ժամանակ, չափ, տեղ, ձեռքից, պատճառով, գծով, հետևանքով, նպատակով, կողմից, ձեռքով, երեսից, անունից, անունով.

🕮 Ղ-314. **Մինչև, նախքան, քան բառերը տարբեր նախադասություններում գործածել և՛ իբրև կապեր, և՛ իբրև շաղկապներ:**

🕮 Ղ-315. **Տրված բառակապակցություններում որոշել կապվող բառերի խոսքիմասային պատկանելությունը:**

Առ այն, առ այսօր, մինչև այժմ, դեպի ետ, մինչև հիմա, հանուն հայրենիքի, երգողի մոտ, հեռանալուց առաջ, հիսունին մոտ, փոքրի մասին, գեղեցիկի վերաբերյալ, երգողի կողքին, առանց ասելու, դրանից բացի, առանց նրա, ինձ պես, բոլորի առաջ, ընդդեմ հուսահատվածների, ի շահ ուսանողների:

🕮 Ջ-316. Բացատրել կապերի կիրառական-շարադասական յուրահատկությունները, կապի խնդրի շարադասությունը:

1. Այս գարնան հետ, այս ծաղկունքի, Այս թռչնակի, այս առվակի, Հետն այս երգի ու զարթոնքի Բացվեց լեզուն իմ մանկիկի /ՄԿ/: 2. Ու մեծացա՝ գնով ջահել քո կյանքի /Ն/: 3. Թող որ փոխարեն գոռ մի անցյալի՝ Թագով ու բախտով, զորով ու զորքով, Դու թողել ես ինձ՝ այրող բորբոքող հայոց պատմություն՝ աղետներով լի /Ն/: 4. Ծքանշաններ կստանան, այսպե՛ս, Բոլո՛ր, Գուցե զեբրերից բացի /ՊՍ/:

🕮 Ջ-317. Դուրս գրել կապերն իրենց խնդրառու բառերի հետ և որոշել, թե նախադասության մեջ ի՞նչ պաշտոն են կատարում, և կողքի բառերը ո՞ր եղանակով են դրված /ձևակազմական հատկանիշները/:

1. Ես ոմանց համար կարմիր գույն ունեմ. Նման եմ բոցի, Եվ ոմանց համար որբ եմ ու տխուր Որբության նման /ՄԿ/: 2. Մեր տաճարները մենք կառուցեցինք Երկինքներն ի վեր, բարձունքի վրա, Աստծու աչքի տակ, աստրծուն մոտիկ, Բայց ավերվեցին, այրվեցի՛ն նրանք /Ն/: 3. Միլիոն դարեր, դարեր անքնին, Այդպես եղել է, եղել «իրն ինքնին», Մեր Հայաստանը՝ առանց Հայաստան կնքվել-կոչվելու, Առանց հայերեն լեզվով օծվելու, Մասիսը՝ առանց իրեն շաղախված մեր հոգու լույսի, Սևանը՝ առանց մեր բաց աչքերից իջած մշուշի, Այս հողը, քարը, անտառը, լեռը, Այս շշուկները, այս շառաչները՝ Առանց շնչավոր մեր կարոտների /Ն/: 4. Հիմա, երբ որ կյանքն ինձ համար Մի մոխրաթել գորգ է հինում, Քո հուշն է լուռ, հիշատակդ Ամենուրեք ինձ հետ լինում, Ու քնիս մեջ, սեղանիս մոտ, Խնձորենու սոսափի տակ Խառնվում է իմ արցունքին Եվ իմ բախտին, և իմ գինուն /ՀՀ/:

🕮 Ջ-318. Ա. Ընդգծվածներից առանձնացնել կապերն ու կապական բառերը: Որոշել մնացածների խոսքիմասային պատկանելությունը և շարահյուսական գործառույթը:

Բ. Կազմել համանունական շարքեր:

● 1. Սարից <u>վար</u> է իջել մի մարդամոտ քամի, Ուրիշ նյութերից է զրույց բանում: 2. <u>Առաջ</u> է սուրում գնացքը անթեք: 3. Բայց թե լինե՛ր, <u>Շուրջը</u> անտառ լիներ: 4. Մի քանի ժամ <u>հետո</u> ես չեմ լինի, Կլինի լուռ երկինք ու դատարկ պարկուճ: 5. Իմ հոգսը ես չեմ, քեզ <u>համար</u> եղիր, Որ <u>հետդ</u>, <u>հետդ</u> զղջումդ վհատ Քո փակվող վերքը անվերջ չպեղի: 6. Երբ վշտիս <u>պահին</u> դու աչքի <u>տակով</u> Հետևում ես իմ խոսուն հայացքին... տեսնում եմ, տղաս, տեսնում եմ: Ինձ <u>համար</u> կյանքը սկիզբ է առնում Իմ ծնված օրի՛ց, իմ ծնված օրո՛վ... Եվ ես իմացա՛, իմացա՛ խոով՝ Դրանից <u>առաջ</u> եղե՛լ աշխարհում, Դարեր են եղել, անցել աշխարհով.. 7. Փողոցով մի կին լալի՛ս էր անվոր, Ես նրա <u>մոտով</u> անցա խոզի <u>պես:</u>. Անկյունից լացի ձայներ են լսվում, Ու լացի <u>կողքով</u> անցնում են մարդիկ... 8. Այնպես որ, ո՛վ մահ, տանում ես՝ տա՛ր, Բայց ի՞նչ ես ժպտում քթիդ <u>տակին</u>: 9. Տես, մի վայրկյան <u>հետո</u> Սարքեմ ու տամ քեզ մի ողջ լեռնաշխարհ: 10. Տարանցիկ քամին մեկնում է <u>հեռու</u>...11. Դարի <u>չափ</u> ձիգ ժամ է անցել: **/Պ. Մնակ/**

● 1. Ամեն իրիկուն պառկում էի ես ձորաբերանին Ու նայում տխուր, նայում վար... /ՎԴ/: 2. Տնքում էր հետո մեղեդին այդ սուրբ... Ասես սրտի մեջ նիզակ էր խրվել /Ն/: 3. Զգում էի մաշկով, որ երաշտը փոշոտ Բարձրանում է վերն կերպարանքով քոչի /Ն/: 4. Այդ բոցերի միջով թեթև մի հով սահեց /Ն/: 5. Այդ օրը վրաս սպիտակ առէջն էր ծաղկաթերթերի /Ն/: 6. Լեռնաշխարհն անգամ միտում է երկինք, քեզ հետ սաղմոսում, Իսկ գետերը խենթ հետ դառնում նորից, Երկինք են հոսում /Ն/: 7. Գարունը ելավ լացող ձյան տակից Մի որբ ու բոբիկ բալիկի նման /ՀԾ/: 8. Ամռանը եղջերվի մորթը շեկ-կարմրագույն է և փայլփլում է արևի տակ՝ ոսկեզօծ բեհեզի նման /ՎԱ/: 9. Այս ծառը ձգտել է դեպի վեր, շարունակ դեպի վեր, դեպի արևը, որին և մեկնել էր կատարը /Ն/: 10. Հեռու, մոտիկ ընկերներին, Աշխարհներին, արևներին /ԵՉ/: 11. Իմ երջանկության չափն անչափելի Տխուր աչքերիդ ուրախությունն է /ՀՀ/: 12. Հեռանալու համար առիթ Ու պատճառ ես փնտրում հիմա... /Ն/: 13. Ու այն երգում են մեկ անգամ, որից առաջ և հետո երգածները այդ միանգամվա մոտ ու հեռու կրկնություններն են /Ն/:

🕮 **Չ-319. Ընդդեմ, հակառակ, անկախ, բացի, համաձայն, համապատասխան, շնորհիվ, հանդեպ, հեռու, փոխանակ կապերով կազմել բառակապակցություններ երկու դիրքերով էլ՝ թե՛ նախադաս, թե՛ ետադաս՝ ուշադրություն դարձնելով կապակցվող բառի հոլովական ձևավորմանը: Դրանք օգտագործել նախադասություններում:**

🕮 **Չ-320. Նախադիր կապերով կառույցները փոխարինել հոմանիշ՝ ետադիր կապային կառույցներով:**

ա/ նախքան հեռանալը
բ/ հանուն սիրո
գ/ ի հեճուկս հարևանների
դ/ բացի քեզանից
ե/ շնորհիվ առատաձեռնության
զ/ ընդդեմ թշնամու
է/ ինչպես երազ
ը/ ըստ դիմումի
թ/ վերք /վերդ/ գազան

🕮 **Չ-321. Հետևյալ բառակապակցություններում ընդգծված ետադրությունները փոխարինել հոմանիշներով /այլ ետադրություններով/:**

ա/ հնագույն ժամանակներից սկսած
բ/ Մայր աթոռի հովանու տակ
գ/ քաջ զինվորի նման
դ/ սիրեցյալից բացի
ե/ կարևոր հարցերի վերաբերյալ
զ/ հոբելյանական հանդիսության ժամանակ
է/ Աստծու աչքի առաջ
ը/ այսինչ հոդվածի համաձայն

🕮 **Չ-322. Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով և մոտ, վրա, պես, չափ, համար, հոգուտ, հանձինս, ի դեմս, հանուն կապերով կազմել կապական կառույցներ:**

🕮 **Չ-323. Ընտրել այն կապերը, որոնց հետ կարող են գործածվել** այս, այդ, այն **դերանունները:**

Առթիվ, մասին, վրա, նպատակով, հանուն, հանդերձ, պատճառով, առ, ըստ, որպես, առանց, հավասար, բացի, համեմատ:

Ջ-324. Լրացնել՝

● **ա/** անկախ /ինչի՞ց/
բ/ բացի /ումի՞ց/
գ/ ընդդեմ /ո՞ւմ/
դ/ համաձայն /ինչի՞/
ե/ համապատասխան /ինչի՞ն/

● **ա/** ի հեճուկս /ո՞ւմ/
բ/ մինչև /ե՞րբ/
գ/ առանց /ինչի՞, ո՞ւմ/
դ/ շնորհիվ /ինչի՞/
ե/ հակառակ /ո՞ւմ/

● **ա/** հանուն /ինչի՞/
բ/ որպես /ի՞նչ/
գ/ /ինչի՞/ մոտ
դ/ /ինչի՞ն/ առընթեր
ե/ /ինչի՞ց/ հեռու

Ջ-325. Կապերի հոլովառության կամ խնդրառության հատկանիշից ելնելով՝ կազմել կապական կառույցներ՝ փակագծերում տրված բառերը համապատասխան ձևափոխության ենթարկելով:

● /դու/ պես, /ընտանիք/ հանդերձ, /նա /զատ, /դուք/ հետ, /ինքը/ մոտ
● /ես/ վրա, /հանուն/ հայրենիքի, ի /գիտություն/, մինչև /կիրակի/, /դա/ մեջ
● նախքան /գալ/, իբրև /ուսուցիչ/, դեպի /ես/, /ինքը/ դիմաց, դեպի /տուն/
● /քննություններ/ առաջ, /ես/ հետ, /ընտրություններ/ հետո, առանց /ընկեր/, ընդդեմ /նա/, առ /ես/, նախքան /դուք/, չհաշված /նա/, /վթար/ հետևանքով
● /ես/ պես, /նա/ շնորհիվ, /ընկեր/ բացի, /ծնունդ/ առթիվ, ի դեմս /դիմորդ/, ըստ /երևույթ/, /տեսնել/, նպատակով, ըստ /օրենք/, առանց /ժպիտ/
● /դուստր/ համար, /մենք/ նման, /դուք/ մոտ, /ոսկի/ նման, հօգուտ /մենք/, /մենք/ հետ, ի հեճուկս /ծնող/, /դպրոց/ /կից/, հակառակ /դու/, մինչև /դու/
● /դուք/ համար, հանձինս /դուք/, հանուն /դու/, /սեղան/ մոտ, /ձյուն/ պես, /ծառ/ ներքո, /ես/ առջև, /դուք/ մասին, չհաշված /մասնակից/, /խելք/ դուրս
● բացի /ընկերներ/, հեռու /հայրենիք/, /հայրենիք/ հեռու, /սարեր/ վերև,
● /հաճոյախոսություն/ հանդերձ, հակառակ /հայր/, /հայր/ հակառակ
● մանկություն/ սկսած, ընդդեմ /ատելություն/, /նրանք /զատ/, ի գիտություն /դիմորդ/, /բոլոր/ չափ, հանուն /ազատություն/, /ասած/ հակառակ, հանձին /ուսանող/, /մտնել/ պես, /գյուղ/ մեկ, հանուն /դու/, /ես/ նկատմամբ, /նա/ փոխարեն, /դու/ մեջ, չնայած /դա/, /դուք/ վրայից, /ես/ զատ, բացի /դա/, հանձինս /հաղթող/

Ջ-326. Ա. Արտագրել բանաստեղծական հատվածը՝ փակագծերում դրված բառերը գործածել մեկ համապատասխան հոլովաձևերով, մեկ՝ կապային կառույցով: Բացատրել ձեր կազմած երկու տարբերակների միջև եղած լեզվաոճական տարբերությունները:

Բ. Ի՞նչ տարբերություն կա հոլովական թեքույթների և կապերի միջև. լեզվական ո՛ր մակարդակի միավորներ են դրանք /ձևաբանակա՞ն, թե՞ բառապաշարային/:

Մոլորվե՛լ եմ, մոլորվե՛լ եմ
Քո նպատակի /ծովեր/,
Քո մպերի /անտառ/,
Քո ճակատի /ձյուներ/
Մոլորվե՛լ եմ, մոլորվե՛լ եմ:

Մոլորվե՛լ եմ, մոլորվե՛լ եմ
Քո հոնքերի /շանթեր/,
Քո աչքերի /գիշեր/,
Թարթիչներիդ /փշեր/
Մոլորվել եմ, մոլորվե՛լ եմ:

/Ս. Կապուտիկյան/

🕮 Ղ-327. Յուրաքանչյուր կետում մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ. արտագրել ճիշտ ձևերը և հիմնավորել ընտրությունը:[1]

▲▼ **ա**/ ես՝ որպես առաջամարտիկ - ինձ, որպես առաջամարտիկ
▲▼ **բ**/ առանց ծաղիկ - առանց ծաղկի
▲▼ **գ**/ հանձին նրանց - հանձինս նրանց
▲▼ **դ**/ առանց խոսելու - առանց խոսել
▲▼ **ե**/ ի դեմս դիմորդների - ի դեմս դիմորդի
▲▼ **զ**/ ըստ ինձ - ըստ իս
▲▼ **է**/ ի թիվս վարկառուների – ի թիվս վարկառուի
▲▼ **ը**/ քո պես - քեզ պես
▲▼ **թ**/ ի գիտություն ուսուցիչներ - ի գիտություն ուսուցիչներին
▲▼ **ժ**/ իմ նման – ինձ նման
▲▼ **ժա**/ բացի նա - բացի նրանից
▲▼ **ժբ**/ իրեն համար - իր համար
▲▼ **ժգ**/ հանձին նրա - հանձինս նրա

🕮 Ղ-328. Ա. Ամբողջացնել առածներն ու ասացվածքները՝ իրար միացնելով աջ և ձախ սյունակների կապերը կապվող բառերի հետ /կամ հակառակը՝ կապվող բառը կապի հետ/:

Բ. Բացատրել նրանց այլաբանական նշանակությունը:

Ա.	Բ
✓1. Ձուկն առանց➔	← հորից ու մորից:
✓2. Եթե երիտասարդության➔	← առջև գլխարկ չի հանում:
✓3. Բարեկամը փորձանքի➔	←համար լավ է, քան մի սուրու ոչխար:
✓4. Սարը շատ բարձր է, բայց ոչ ոք նրա➔	←մեջ է ճանաչվում:
✓5. Մախաթը պարկի➔	←ժամանակ փայտ հավաքես, ծերանալիս չես մրսի:
✓6. Էծն էծի ➔	←մեջ չես թաքցնի:
✓7. Ով աշխատում է արևի➔	← հեռու, ապրանքը՝ թանկ:
✓8. Աշխարհքում ամեն բան կճարվի, բացի➔	←փուշ չի լինի:
✓9. Մարդու գինն էժան է հայրենիքից➔	←տակ, կվայելի շվաքում:

🕮 Ղ-329. Կետերի փոխարեն գրել համապատասխան կապերը:

✓1. Արա ինձ □, սովորիր քեզ □:
✓2. Իմաստունի □ քար քաշիր, տգետի □ մեղր մի ուտիր:
✓3. Կրակի □ յուղ չեն լցնի:
✓4. Մտածիր ո՛չ այն □, որ հաղթես, այլ այն □, որ չպարտվես:
✓5. Աշխատիր ծառայի □, որ տիրոջ □ վայելես:
✓6. Հիմարություն է աղքատ ապրել հարուստ մեռնելու □:
✓7. Սովորելը նույնն է, ինչ որ հոսանքին □ լողանալը, մի պահ կանգ առար, քեզ ետ կտանի:

---

[1] **Նկատի ունեցեք՝ վրա, մոտ, համար, պես, նման, հետ կապերի հետ գործածվում են առաջին և երկրորդ դեմքի դերանունների տրական հոլովաձևերը:**

🕮 Ձ-330. Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից քաղված հատվածում վանդակներում լրացնել կապը և նրա խնդիրը:

Եվ քարավանը Աբու-Լալայի □□ մեղմ կարկաչելով
Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ հեզ լուսնկայի □□
Մեխակի բույրով հովն էր շշնջում հեքիաթներն հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ □□ օրորվում էին □□
Ամեն մի նոր □□ նորից է պատմվում հեքիաթն այս շքեղ,
Նորից սկսվում ու վերջանում է ամեն մի մարդու □□ մեկտեղ:
Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ անցնող քարավան,
Որ □□, վառ □□, չվում են անտես □□:
Կույր ու գուլ մարդի՛կ, □□, □□ հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն ահավոր ջեհնեմ...

🕮 Ձ-331. Ա. Դուրս գրել կապերը կապվող բառերի հետ. բացատրել կապերի իմաստաբանական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները:

Բ. Որոշել կապվող բառերի խոսքիմասային պատկանելությունը:

Գ. Որոշել կապերի շարադասությունը: Առանձնացնել այն կառույցները, որոնցում կապերը կարող են իրենց տեղը փոխել՝ առաջադասները դարձնելով ետադաս, և հակառակը:

Լեհաստանում՝ արևակենտրոն համակարգի հայրենիքում, կանգնած է մի քարակոթող, որի վրա փորագրված է. «Արեգակը կանգնեցնողին, Երկիրը տեղաշարժողին»: Այդ մարդը, որ երիտասարդ հասակից մինչև խոր ծերություն կրեց հոգևոր կոչում, եկեղեցու ամենավտանգավոր թշնամին էր: Իր ենթգադավության մեջ հեռատես, անողոքաբար դաժան եկեղեցին ճակատագրական սխալ թույլ տվեց՝ աչքաթող արեց Կոպեռնիկոսին, որը պայթուցիկ նյութ դրեց հավատի հիմքի տակ: Կոպեռնիկոսի մահից յոթանասուներեք տարի հետո միայն Արեգակը կանգնեցնողի «Երկնային ոլորտների շրջապտույտի վերաբերյալ» գիրքն ինկվիզիցիան մտցրեց արգելված գրքերի ցուցակի մեջ՝ «այսուհետև մինչև շտկումներ անելը»:

Կրթված լինելով հանդերձ՝ ամբողջովին ներծծված էր կասկածների այրող թույնով: Իտալիայից Բալթիկայի ցուրտ ափերը բերեց «հերետիկոսությունների» սաղմը, սնուցեց այն: Նա՝ մեծագույն աստղագետը, երկնակամարում նոր բան չի հայտնագործել. աշխարհի արևակենտրոն համակարգը նրա մտքի պայծառ փայլատակումը չէր... Արդեն ծեր էր, երբ առանց երկմտելու որոշեց տպագրել իր կյանքի գլխավոր գիրքը՝ հոգուտ բոլոր մաթեմատիկոսների: Նրա աշակերտը՝ Ռետինը, մեռնող ուսուցչի մահճի մոտ ծնկաչոք խոստացավ ուրախացնել նրան իր վերադարձով: Եվ, հայացքն հառած դեպի հեռու հորիզոնները, դեպի մայր մտնող արևը, ուսուցիչը գրքին էր սպասում: Երբ Նյուրնբերգից բերեցին բաղձալի գիրքը, յոթանասունին մոտ արևագետն արդեն հոգեվարքի մեջ էր. առանց խոսքի ձեռքն անօգնական ու մեղմիկ քսեց կազմին, շոյեց: Պաշտպանում էր: Օրհնում էր: Նա մահացավ նույն օրը՝ գիրքը ձեռքին, գրքի հետ, գիրքը գլխից վեր պահած:

Ճակատագրին այդպես էր հաճո. նույն կետին հանգեցնել նրա մահն ու անմահությունը: Գերեզմանը չի պահպանվել... Գիրքը մնացել է...

Շ Ա Ղ Կ Ա Պ

Ձ-332. Ա. Ընդգծել շաղկապները:

Բ. Բացատրել շաղկապի՝ որպես խոսքի մասի որոշման հիմունքները և նրա հարաբերակցությունը այլ խոսքի մասերի /կապերի, դերանունների, մակբայների, վերաբերականների/ հետ:

● Եվ հասկանում ես, որ մարդն ի վերջո
Նորից չի սիրում, սիրում է կրկին,
Քանզի կա մթին մի կախյալություն
Ջղի և արյան, հոգու և կրքի.
Քանզի նշանը հանման-գումարման
Այդ մե՛նք չենք դնում լուծվելիք խնդրում,
Քանզի թեպետև բախտ մենք ենք փնտրում,
բայց բա՛խտը,
Բա՛խտը,
Բա՛խտն է մեզ ընտրում...

●Ու գալու է մի ժամանակ,
Երբ որ պիտի մարդիկ նաև
Մերպեսներին երկրպագեն,
Ո՛չ կոտրի պես,
Ո՛չ էլ աստծո,
Այլ ... հերոսի,
Որովհետև մենք լավ գիտենք,
Որ շատ հաճախ
Բռունցքով ենք զարկում
մեխի ծակող ծայրին...
Մեր բռունցքով՝ մուրճի տեղակ:
Բայց դրա հետ գիտենք նաև,
Բռունցքը չէ,
Որ սարքվել է մուրճի ծանոթ օրինակով,
Այլ մուրճն է հենց,
Որ սարքվել է մեր բռունցքի նմանությամբ,
Ու մենք գիտենք.
- Եթե քամին
Ընդամենը մեր մազերի հետ է խաղում,
Ապա ինքը՝ եղանակը խաղ է անում...
մեր գլխի՞ հետ:
Բայց աստղերը իրենց կլոր-ճերմակ սանրով
Հարդարում են քամուց գզված մեր մազերը
Ու դրանով հավատացնում իրենց ու մեզ,
Որ առայժմ մեր գլուխը իր տեղումն է...
Այս հավատով ու հույսով է, բարեկամս,
Որ աշխարհում մերպեսները ամեն գիշեր
Աղքատ քնում ու զարթնում են հարստացած:

/Պ. Սևակ/

Ձ-333. Բացատրել տրված շաղկապական շարքերի կազմությունը /պարզ, ածանցավոր, քերականական ձևերից առաջացած, բարդ՝ կցական, հարադրական/:

1. և, ու, որ, բայց, այլ, կամ, էլ, իսկ, քան, թե, ապա, եթե, իբր, միայն, մինչ, սակայն, երբեմն, ուրեմն, ևս, ուստի, հենց, ոնց
2. այլապես, հետևապես, նմանապես, հետևաբար
3. որովհետև, այնուամենայնիվ, այսուհանդերձ, համենայն դեպս, չնայած, նայած, ասես, կարծես
4. այնինչ, այսինքն, թեև, թեկուզ, թեպետ, մինչդեռ, մինչև, իբրև, նույնիսկ, այլև, որպեսզի, քանզի, վասնզի, թեպետև, թեկուզև, բայցևայնպես
5. այնպես որ, երբ որ, ով որ, ինչ որ, որտեղ որ, ուր որ, որը որ, այնքան որ, այնքանով որ, ինչպես որ, թե որ, մանավանդ որ, հենց որ, քանի որ, մինչև որ, չնայած որ

✍ 6. բայց և, թեպետ և, թեկուզ և, և կամ, ինչպես և, նույնպես և, նմանապես և, հետևաբար և, հետևապես և, ուստի և, ուրեմն և
✍ 7. ինչքան էլ, որքան էլ, այն էլ, կամ էլ, ինչ էլ, ով էլ, ուր էլ, որտեղ էլ, ինչպես էլ, այնքան էլ, այնպես էլ
✍ 8. ապա թե, իբր թե, իբրև թե, միայն թե, քան թե, կարծես թե, ասես թե, կամ թե
✍ 9. ապա թե ոչ, եթե ոչ, թե չէ, կամ թե ոչ, ոչ թե, և ոչ թե, քանի դեռ, այն է, ըստ որում, ընդ որում
✍ 10. բայց և այնպես, մինչև իսկ, քանի դեռ, չէ որ
✍ 11. թեպետև /թեպետ/...սակայն, թեպետև բայց և այնպես, չնայած սակայն, չնայած այնուամենայնիվ, թեկուզ բայց, թեկուզ սակայն, եթե ապա, եթե ուրեմն, քանի որ ուրեմն, քանի որ ուստի, որովհետև ուստի, ոչ թե... այլ
✍ 12. և՛...և՛, կա՛մ ...կա՛մ, ո՛չ ...ո՛չ, էլ...էլ, թե՛...թե՛, մերթ մերթ, մեկ մեկ

📖 Ձ-334. Վերևում տրված շաղկապները դասդասել՝ լրացնելով տրված աղյուսակները:

Աղյուսակ Ա.

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ				
ՊԱՐԶ	ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ	ԱԾԱՆՑԱՎՈՐ	ԲԱՐԴ	
			կցական	հարադրական
բայց	որովհետև	հետևաբար	քանզի	հենց որ

Աղյուսակ Բ.

ԸՍՏ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ-ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ	
ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ	ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ
բայց	քանի որ

Աղյուսակ Գ.

ԸՍՏ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ		
ՄԵՆԱԴԻՐ	ԿՐԿՆԱԴԻՐ	ՁՈՒԳԱԴԻՐ
բայց	և՛....և՛	քանի որ ուստի

📖 Ձ-335. Արտագրել՝ տեքստը հարստացնելով կրկնադիր շաղկապներով: Բացատրել նրանց կիրառական-ոճական առանձնահատկությունները:

Օտարականն այսօր հեռանում է քաղաքից. նրա հոգնած հայացքը տխուր է, հպարտ, լուսաշող: Այժմ սիրահարներինն է արևը, ծառը, կարկաչուն առվակը, երկինքը լուրթ:

Ի՜նչ գերբնական զորություն ունի լույսը. նրան են ձգտում բույսերը, մարդը, անգամ ձկները: Լույսի հետքերով երկրի վրա, տիեզերական անհուն տարածություններում իրագործվում են մարդու ամենահամարձակ երազանքները... Երազում՞է աղջիկը... Երազում է տղան... Նրանք չեն տեսնում

ամպերի մեջ կորած լեռների կատարները, թավուտ անտառներից գլուխները վեր ցցած ժայռերը, ծառերի վրա թափվող իրիկնային զանգերի լուսավոր փշուրները, չեն լսում առվակի նվագը, ժայռերի ծերպերում արևն օրհներգող կաքավների երգը... Երազում են սիրահարները. նրանց մանուշակագույն երազանքները թափառում են տիեզերքի անհուն տարածության մեջ և երկնքի կապույտ առվակներով իջնում աշխարհի վրա, գարնան վրա...

📖 Ձ-336. **Դուրս գրել զուգադրական շաղկապները:**

1. Եթե վարպետը բարկանում է աշակերտի վրա և հանդիմանում, ապա հիշատակում է և այս փողոցի անունը. «Դու լավ կարաս Աստաֆյանը չափես» /ԱԲ/: 2. Երբ արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չէր բռնում, ուրեմն ետ էին գնացել Արաքսի ջրերը /Ն/: 3. Ծտերն ասես ո՛չ թե երգում, Այլ «ի՞նչ ի՞նչ» էին ճչում անվերջ Եվ դրանով պատառոտում երկնի մովը, Իսկ լորենին ո՛չ թե երգում, Այլ «չէ՛ չէ՛»-ի իրենց մեխն է մխում անվերջ Այդ կապույտի պատռվածքում /ՊՍ/: 4. Ու եթե մեկը սուրճով բախտ բացեր, Ապա կարող էր գուշակել անսուտ, Որ ես ինքնակամ ու սիրահոժար Մնացած կյանքիս կեսը կտայի, Միայն թե տեսնեի կրծքիդ թուխ մանուկ /Ն/: 5. Թեպետ իրար հետ վաղուց եք ծանոթ, Թեպետ ծանոթ է պապերի՛դ անգամ, Բայց քրտնած գլխով տված բարևիդ Չի՛ պատասխանում /Ն/: 6. Եվ փա՜ռք աստծո, Որ աղմուկների հասունացումից Թագադրվում է ոչ թե գիշերը, Այլ օրն է ծնվում: Եվ փա՜ռք աստծո, Որ մեր հոգու մեջ Եթե կա ամիս տերևաթափի՛, Ապա կան օրեր և աստղաթափի՜... /Ն/:

📖 Ձ-337. **Տրված զուգադրական շաղկապներով կազմել նախադասություններ:**

- **թեպետ և/ ... բայց, թեպետ /և/ ... սակայն, թեպետ /և/ ... բայց և այնպես, չնայած ... սակայն, չնայած ... այնուամենայնիվ , թեև ... այնուամենայնիվ**
- **թեկուզ ... բայց, թեկուզ ... սակայն, եթե ... ապա, եթե ... ուրեմն, քանի որ ... ուրեմն, որովհետև ... ուստի**
- **չնայելով որ ... սակայն, ոչ թե ... այլ , ոչ միայն ... այլև, ճիշտ է ... բայց, ոչ միայն ... այլ նաև, երբ ... ուրեմն:**

📖 Ձ-338. **Գիտական ոճով մի տեքստ կազմել՝ գործածելով** այսինքն, այն է, ուստի, հետևաբար, ուրեմն **շաղկապները:**[1]

---

[1] **Ժամանակակից հայոց լեզվում կան մի շարք բառեր և կապի ու խնդրի կապակցություններ, որոնք հանդես են գալիս խոսքի նկարագրական, դատողական և այլ մասերը միացնելու, նրանց իրական և տրամաբանական հաջորդականությունը արտահայտելու համար /սրանք հարում են զուգադրական շաղկապներին և ժամանակի ընթացքում կարող են վերածվել շաղկապների/, ինչպես՝ մեկը մյուսը... երրորդը... սկզբում հետո..., նախ... ապա..., նախ հետո... մասամբ մասամբ..., մերթ... մերթ..., վերջիվերջո, ի դեպ, այս պատճառով, այդ պատճառով, այս նպատակով, սրա համար, դրա համար, մի կողմից մյուս կողմից, ոչ այն է ոչ այն է, ինչպես ... այնպես, որքան այնքան:**

🕮 Ձ-339. Դուրս գրել համադասական շաղկապները և որոշել նրանցով կապակցված լեզվական միավորների /նախադասությունների և նախադասության անդամների/ արտահայտած հարաբերությունների բնույթը՝ ներհակական, միավորական, տրոհական:

● 1. Մութը դառնում է գրատախտակի ջնջոց սպունգե, Մինչդեռ երկինքը Դանդա՜ղ պատվում է աստղաեղյամով: 2. Թողություն տու՛ր, Տե՛ր, ծանր Խավարին, Միայն թե թող նա թողնի հեռանա: 3. Ես չեմ կարող նշել ճշտված թվականը, Եվ ժամանակը ճշգրիտ, Բայցնայնպես այս հանդեսը Ավարտի է հասնում արդեն: 4. Ես վախենում եմ, շա՜տ եմ վախենում, Բայց ո՛չ ինձ համար, Այլ լոկ քեզ համար: 5. Նաև դու դադարիր մի քիչ, Խղճա՜ ինձ և ինքդ էլ ասա, Սիրելի՜ս, քեզ բարի՜ գիշեր: 9. Իսկ աշխարհում Երջանկությունն ավելի է տարողունակ, Քան տանջանքը, Թե չէ սողուն ժամանակը այդպես արագ չէր սլանա՝ Երջանկության ժամը վայրկյան դարձնելով: 6. Նույն կյանքը հիմա Իր սքանչելի նույն ձեռագրով Գրագիտության դասեր է տալիս Թե՛ շնորհալի վազերին այգու, Թե՛ տաղանդավոր գետերին բոլոր.../Պ. Սևակ/

● 1. Ե՛վ անբառ այս երգում կա թախիծ մի անբառ, Ե՛վ արյան հեկեկանք, և՛ աղերս մի տրտում /ՎԴ/: 2. Կարոտներով ու ցավերով Ճանապարհը պիտի ցողեմ, Բայց և հավետ, Բայց և հավետ օրհնանքով քեզ ողողեմ /Ն/: 3. Քարե մրրիկն է այստեղ ննջում թևերը ծալած, Անգամ գետակն այս կապույտ ասես թե քար է հալած /Ն/: 4. Բայց բնության օրենքներից Հող դառնալն է զարհուրելի, Մահը պիտի լիներ, սակայն Մահվան ուրի՜շ տեսակ էր պետք /ՀՀ/: 5. Դու ես հիմա ճամփիդ տերը, Էլ խաթարող չունես արդեն, Դու ես կյանքիդ դատավորը, Էլ դատավոր չունես արդեն /Ն/: 6. Ապրած բոլոր տարիներս Օրհնանքով են հոգիս պատում, Ո՛չ ահ ունեմ, ո՛չ էլ նախանձ, Ո՛չ էլ փառքի դուռն եմ պաշտում /Ն/: 7. Շատ սերեր տեսա անգութ ու անփույթ, բայց հեշտ էր դարձել արդեն և անթով Ե՛վ սեր, և՛ երդում, և՛ կիրք, և՛ համբույր /ԳԷ/: 8. Լուռ կմնան մայթերն ու ծառերը Նորքի, Էլ չես շրջի ինձ հետ և ինձ էլ չես գրկի, Էլ չես սուլի, որ ես իջնեմ պատշգամբից /Ն/: 9. Համբուրեք հողս մորս արցունքով, Միայն մայրական արցունքն է անկեղծ /ՀԾ/: 10. Կանգնած է տրտում կանաչ եղևնին, Այնինչ լույսերը ցնծում են վրան /Ն/:

🕮 Ձ-340. Եվ, ու, կամ շաղկապներով կազմել 3-ական նախադասություններ, որոնցում դրանք արտահայտում են՝
ա/ բառերի համադասական հարաբերություններ
բ/ բարդ նախադասության մեջ մտնող նախադասությունների համադասական հարաբերություններ:

🕮 Ձ-341. Շարունակել նախադասությունների միտքը՝ ուշադրություն դարձնելով կետադրությանը: Բացատրել կետադրությունը:

● ա/ Աշունը եկավ, և...:
  բ/ Աշունը եկավ և...:

● ա/ Արևը բարձրանում է հայրենի կապույտ սարերից, ու...:
  բ/ Արևը բարձրանում էր հայրենի կապույտ սարերից ու...

● ա/ Խշշում էին բարդիները, և
բ/ Խշշում էին բարդիները և ....:
● ա/ Հովնաթանը տեսավ քրոջ արցունքները, և...:
բ/ Հովնաթանը տեսավ քրոջ արցունքները և

Ջ-342. Լրացնել ստորադասական շաղկապների քերականական-իմաստային խմբերը նոր շաղկապներով:
1. ժամանակի /օր.՝ նախքան.../
2. պատճառի և հիմունքի /օր.՝ որովհետև.../
3. պայմանի /օր.՝ թե... /
4. հակառակ հիմունքի /կամ զիջական /օր.՝ թեպետև.../
5. նպատակի /օր. միայն թե .../
6. համեմատության /ձևի և նմանության/ /օր.՝ ասես թե.../
7. հետևանքի /օր.՝ այնպես որ.../
8. բացահայտման /օր.՝ այն է.../
9. մեկնական / օր.՝ որ .../:

Ջ-343. Դուրս գրել շաղկապները, առանձնացնել ստորադասականները և որոշել նրանց արտահայտած իմաստային հարաբերությունները /բացահայտման, մեկնական, պայմանի, նպատակային, հետևանքի, զիջական, համեմատության, ձևի/:

1. Եվ հավատացեք, հասկացեք ընդմիշտ, Որ աստծուն նույնիսկ հայհոյողները Շատ ավելի են գերադասելի, Վասնզի նրանց բարկացրել է ինքը՝ հավատը /ՊՍ/: 2. Թեկուզ և ձեռքդ գրչից էլ զրկեն, Դու, միևնույն է, պիտի որ երգես /ն/: 3. Մի ոտ չունեմ, Ուստի և ձեր երկուսի տեղ Երեքն ունեմ /ն/: 4. Ապակիների լռության վրա Անբուրմունք-անգույն ծաղկունքը ցրտի Լուռ թախծում էին, Ինչպես որ նույնիսկ բենզինն է թախծում Սառած-կանգ առած մեքենաների երակների մեջ /ն/: 5. Նորից երկնքում հին արշալույսն է սիգալով սիգում, Որպեսզի մեր նոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ Միշտ էլ թարմ մնան առասպելները /ն/: 6. Թե փակել էր պետք, ես դուռը բացի, Թե պահել էր պետք, ասացի «գնա», Թե կանչել էր պետք, լռեցի խոնարհ, Թե արցունք էր պետք, ես ծիծաղեցի /ՄԿ/: 7. Ես այնպես եմ ելնում մեր բակից, Կարծես թե մտնում եմ մեր բակը /ԳԷ/: 8. Քանի դեռ կամ, արի խինդով Ու վայելքով լցնենք սերը /ն/: 9. Սիրո մահը ծանր է անչափ, Քանզի սերը չի ծերանում /ն/: 10. Եթե մի անարատ Ընկերոջ հետ ճամփա գնամ, Աղերսում եմ երկնավորին՝ Կյանքիս ճամփան երկար չանի /ն/: 11. Չայն չեմ տալիս, թեպետ հոգիս Երգով է լի, երգերս՝ շատ, իսկ դու գիտես լուռ եմ, քանզի Սերս քիչ է, մեղքերս՝ շա՜տ .../ՀՀ/:

Ջ-344. Գրավոր-գրական լեզուն գերադասում է զողվածական /շաղկապական/, իսկ ժողովրդախոսակցական լեզուն՝ շարահարական /անշաղկապ/ կապակցությունները: Ժողովրդական խոսքի վարպետներ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և Հ. Շիրազի ստեղծագործություններից ընտրել համապատասխան հատվածներ:

🕮 Ջ-345. & Շաղկապները կապում են խոսք կազմող միավորներ, մասեր /այն է՝ ամբողջական նախադասություններ, պարբերություններ, հատվածներ/: Գիտական աղբյուրներից ընտրել այնպիսի հատվածներ, որոնցում դրանք հենց այս նպատակով են օգտագործվել:

🕮 Ջ-346. ❖ Ա. Օրաթերթերից ընտրել պաշտոնական ոճով գրված որևէ հոդված և եզրակացնել, թե այդ ոճում ո՞ր շաղկապներն են գերակշռում:

Բ. Որևէ օրաթերթ ընտրել և դուրս գրել որևէ հոդվածի շաղկապները՝ ներկայացնելով դրանց հաճախականության աղյուսակը:

🕮 Ջ-347. Ա. Կարդալ և դուրս գրել շաղկապական-հարաբերական դերանունները:

Բ. Բացատրել շաղկապի և հարաբերական դերանվան ձևաբանական-շարահյուսական տարբերությունները:

1. Եկ, քեզ հովիտն այն տանեմ, ուր տառապանքն է ննջում /ՎԴ/: 2. Եվ այն, ինչ դու ես ինձ տվել, Ոչ կարոտ է, ոչ թախիծ է, Ու ոչ էլ սե՛ր /Ն/: 3. Եվ ես ասում եմ. Օրհնյալ են նրանք ու երանելի, Ովքեր օրերի թախծության միջով Ընթանալ գիտեն դեպի ակունքը.../Ն/: 4. Շնորհիր նորից այն խոսքը միակ, Որով գնում են խոստովանություն /Ն/: 5. Երբ աշխարհ եկավ մայրիկս բարի, Աստված չչնջաց՝ ավելորդ եմ ես /ՀՇ/: 6. Ա՜խ, իզուր է, Շատ իզուր է որոնումը այն ամենի, Ինչ իր անցած ուղիներում Կորցրել է մարդկությունը, Որի բոլոր գրպանները Վաղու՜ց մաշված-ծակծկված են /ՊՍ/: 7. Ես նա եմ, հենց նա՛, Ով մարդկանց մերժել չի կարողանում /Ն/: 8. Իսկ ամեն անգամ ես իմ ձեռքին նայում եմ այնպես, Ինչպես նոր պեղած իրին է նայում հնէաբանն անփորձ /Ն/:

🕮 Ջ-348. Բացատրել որ-ի արտահայտած իմաստային հարաբերությունները. առանձնացնել այն նախադասությունները, որոնցում որ-ը կարելի է փոխարինել այլ շաղկապներով:

1. Հանեցե՛ք ձեր դիմակները, Որ գեթ մի քիչ դյուրին շնչել կարողանաք /ՊՍ/: 2. -Բա՛րև,- Ասեիր մահի՛ն էլ անգամ, Եվ նա հասկանար, որ քեզ մոտ գալով՝ Ինքը շտապե՛լ, Շա՜տ է շտապել /Ն/: 3. Ոմանք գույներից նոր կյանք են ձևում, Որ մարդկանց աչքը ողջ կյանքում հագնի /Ն/: 4. Բայց ես աշխարհ չեկա, որ «գթացեք» նվամ, Ես ծնվել եմ, որ գութ ու բարություն ցրեմ /Ն/: 5. Նրանք ծնվել են, որ ապրեն հարբած, Իսկ դու, որ քեզնով երբևէ հարբեն /Ն/: 6. Ու դալարուկ մեջքը իսկույն կեռ-մեռ անում, Սահ է սահում, Այնպե՜ս սահում, Որ մի վայրկյան ամենքի հետ՝ Դուդուկահարն ինքն էլ նույնիսկ չունչ է պահում /Ն/: 7. Ախ, միամի՜տ իմ պապերի Մանկաբարո ուրախություն, Որ տեսում էր յո՜թ օր-գիշեր, Որ անցնում էր երգ ու պարով, Կռիվներով գինեհարույց.../Ն/: 8. ...Ամե՛ն մոլի ուղղափառ, Բողոքակա՛ն, կաթոլի՛կ, Լուռ գգացին, որ իրենք մարդ են կյանքում ու եղբայր.../Ն/: 9. Նա, որ գալիս էր Եվրոպան հաղթած, Հիմա հաղթության արևը սրտում... Հերոսի նման դառնում է իր տուն /Ն/: 10. Աշխարհն այնքան լցվեց մահով, Որ դողում է հույսն աշխարհի /ՀՇ/: 11. Չեմ ափսոսում, որ հնօրյա Կյանքս անցավ

աստղերի հետ /ՀՀ/: 12. Ու ես հիմա չեմ զարմանում, Որ քո մի թաս ջրի դիմաց Այսքան անվերջ թույն ես խառնում Իմ մաքուրին ու պայծառին /Ն/: 13. Ես ցանկացա, որ բոլորն էլ Իմ չափ՝ անչափ սեր ունենան, Որ չխանդեն ուրիշներին /Ն/: 14. Առե՛ք սերը ջահելներից, Որ ասում են՝ սերը հին է, Որ կարծում են՝ սերը նույնպես Մայթի նման հանրային է /Ն/: 15.Օդը, որ դու թողել ես ինձ, Քո հարազատ շնչով է լի, Ճամփան, որ դու թողել ես ինձ, Մանուշակի փնջով է լի /Ն/: 16. Եվ կգա մի օր... գիտեմ՝ հեռու չէ այդ օրը արդեն, Որ քեզ կկանչեմ, որ դու գաս դողով այս հրաշք պահի, Որ կոպերիս տակ, իբրև սրբազան ու միակ պարգև, Ես այդ սուրբ պահը տանեմ աշխարհից /ՎԴ/:

Ղ-349. Ա. Կարդալ Պ. Սևակի «Աշխարհին մաքրություն է պետք» բանաստեղծությունը, դուրս գրել որ բառով միացող նախադասությունները և բացատրել նրա ձևաբանական-շարահյուսական առանձնահատկությունները:

Բ. Դուրս գրել մնացած շաղկապները և նշել նրանց իմաստային, ձևակազմական-ձևաբանական հատկանիշները:

Ղ-350. Նախադասության մասերի միջև շաղկապներ դնել՝ ելնելով դրանց մտքից /նույն շաղկապները չկրկնել/:

❶ Երգը չի հորինվել □ ցորյանի պես ծլել է՝ ժամանակին, անարատ:

❷ Այս երեկո արեգակը երկչոտ կերպով դուրս նայեց հորիզոնից □ կրկին անհետացավ:

❸ Ծիրանի լույսն ամպի տակ հանգավ □ հեռու վանքից ղողանջեց իրիկնային մի զանգակ:

❹ Սերը նման է ճշմարտության □ կես ճշմարտություն կյանքում չի լինում:

❺ Չեմ ուզում քո մասին խորհել □ միշտ մի խոնավ ձնծաղիկ եմ հիշում:

❻ Նա գիտեր □ որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը:

❼ Ծերունու խոսքերը ծանր թվացին նրան □ նրա բերանով արդարությունն էր խոսում:

❽ Մի շաբաթվա արև էր պետք □ բացվեին խնձորենու կարմիր թերթերը:

❾ Կակաչները թափեցին իրենց թերթիկները □ Լալվարի լանջը դեղնեց □ անտառը ծիրանագույն զգեստներ հագավ:

Ղ-351. Շարունակել՝ համադաս կամ ստորադաս բաղադրիչ-նախադասությամբ՝ համապատասխան շաղկապներ գործածելով:

❶ Երկնքի երփնավառ պարտեզների միջից դուրս եկավ արեգակը - -□-□- -:

❷ Մեղմ հովիկը օրորում էր բարդիների կատարները - -□-□- -:

❸ Ծերունին ապրում էր այս լեռների գրկում այն պատճառով - -□-□- -:

❸ Կժպտա քեզ բախտը վերուստ - -□-□- -:

❹ Ես այնքան հաճախ եմ նայել նրա տխուր աչքերին - -□-□- -:

❺ Լեռներում դեռ սառույց կար ու ձյուն - -□-□- -:

❹ Ամենքն ինձ այնպես բարի են թվում - -□-□- -:
❺ Տուր ինձ մաքրության մի կապույտ կաթիլ - -□-□- -:
❻ Թափառիկ մի հով եկավ, փաթաթվեց մենավոր բարդուն - -□-□- -:
❼ Մի աստղ ընկավ երկնքից - -□-□- -:
❿ Ուրիշ է բախտը բանաստեղծների - -□-□- -:

📖 Ձ-352. Տրված զույգ նախադասությունները կապակցել տարբեր շաղկապներով կամ շաղկապական բառերով:
❶ Երիտասարդը շարունակում էր քայլել. նրա հոգին տանջում էին մանկության դառը հուշերը:
❷ Փողոցում սաստիկ ցեխ էր. նա հագավ իր կրկնակոշիկները:
❸ Պատանին քաղցած էր. քունը չէր տանում:

📖 Ձ-353. ❖ Ամբողջացնել սնակյան տողերը՝ իրար միացնելով աջ և ձախ սյունակների համապատասխան նախադասությունները: Բացատրել շաղկապների դերը ձեր ընտրության հարցում:

❶ ա/ Տե՛ր իմ աստված, դու լավ գիտես,	բ/ Որպեսզի մեր նոր ու քաղաքակիրթ հիշողության մեջ Միշտ էլ թարմ մնան առասպելները:
❷ ա/ Նորից երկնքում հին արշալույսն է սիգալով սիգում,	բ/ Քան ամբողջ կյանքում ապրել միշտ որբ...
❸ ա/ Շատ ավելի լավ է որբ մեծանալ,	բ/ Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում:
❹ ա/ Քեզ եմ սիրում նույնիսկ այն ժամանակ,	բ/ Որ ինքն իր հետ մենակ շախմատ է խաղում:
❺ ա/ Ու ես անվերջ Ինքս եմ խոսում իր փոխարեն և իմ տեղ՝ Այն մարդու պես,	բ/ -Թե ես քանի՛-քանի՛ անգամ Այս սրախիճ-տատասկապատ ճանապարհը Կրկնել եմ ոտաբոբիկ:

📖 Ձ-354. & Թե, թե չէ, եթե ապա շաղկապներով երկուական նախադասություններ կազմել այնպես, որ մի դեպքում դրանք արտահայտեն համադասական հարաբերություն, մյուս դեպքում՝ ստորադասական:

📖 Ձ-355. & Կազմել նախադասություններ՝ տրված բառերն ըստ հնարավորության գործածելով տարբեր խոսքիմասային իմաստներով /կապի, շաղկապի, բայի, դերանվան, մակբայի, վերաբերականի/:

ա/ մինչև, նախքան, չնայած, փոխանակ	դ/ կամ, կարծես
բ/ քանի, ինչպես, որ, որպես	ե/ էլ, ապա
գ/ ասես /թե/, միայն, հենց	զ/ սակայն, այլ, այնուամենայնիվ

🕮 Ջ-356. Հետևյալ բարդ նախադասություններում յուրահատուկ շարադասության պատճառով տարբեր նախադասությունների կազմի մեջ մտնող ու տարբեր հարաբերություններ արտահայտող շաղկապներ գործածվել են կողք կողքի: Գտնել դրանք և ցույց տալ, թե ինչպիսի հարաբերություններ են արտահայտում:

1. Իսկ թե հոգնել ես դու ապառնիից Եվ ապառնիի հույս ունես դարձյալ, Ոչինչ չես շահի ինքդ դրանով /ՊՍ/: 2. Ու թե աստված եք՝ Ամուր փակեցեք ձեր ականջներն էլ Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց /Ն/: 3. Դուք առայժմ դեռ լսում եք, Ուստի նաև ինձ լսեցեք Ու հանեցե՛ք դիմակներդ /Ն/: 4.Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի Համակշռված այս վիճակը քո, Ո՞նց պիտի լինես, Ո՞նց պիտի անես /Ն/: 5. Եվ ի՞նչ իմանար, որ երբ ցուրտ քամին Հորդորի այսպես, որ դուռը բանամ, Ես պիտի վառեմ այդ թախիծը հին /ՎԴ/: 6. Ու թե նայենք տիեզերքից, Թվա պիտի, Թե մեր երկիրն անհունության կոպից պոկված, Արտասուք է մի կապուտակ /Ն/: 7. Եվ, թեկուզ արար աշխարհը լքեմ, Թվում է՝ ես եմ լքվածը միակ /ԳԷ/:

🕮 Ջ-357. Ա. Կարդալ տեքստը և բաց թողնված տեղերում գրել համապատասխան շաղկապներ /շաղկապները կարելի է նաև կրկնել/:

Քսանթոսը Եզոպոսին ասաց.

-Գնա՛ □ տես, □ բաղնիքում շա՞տ մարդ կա:

Եզոպոսը ճանապարհին հանդիպեց քաղաքագլխին: Քաղաքագլուխը նրան ճանաչեց □ հարցրեց.

-□ դու ու՞ր ես գնում, Եզոպոս:

-Չգիտեմ:

-Ոնց թե չգիտես, - զարմացավ քաղաքագլուխը,- ես քեզ հարցնում եմ, □ ուր ես գնում, □ դու պատասխանում ես, □ չգիտես:

ես անկեղծորեն երդվում եմ, □ չգիտեմ, - ասաց Եզոպոսը:

-Բռնել սրան,- հրամայեց քաղաքագլուխը,- □ տանել բանտ:

-Ուրեմն տեսար,- ասաց Եզոպոսը,- ես քեզ ճշմարիտն ասացի. ես □ չգիտեի, □ ուր եմ գնում, □ մտքովս չէր անցնում, □ բանտ կընկնեմ:

Քաղաքագլուխը նրան բաց թողեց:

Եզոպոսը գնաց բաղնիք □ տեսավ, □ լողացողները շատ են, □ բաղնիքի մուտքի առջև՝ ուղիղ ճանապարհին, ընկած է մի քար: □ ամեն ներս մտնող գայթում է այդ քարին, հայհոյում քարն այստեղ գցողին, □ ոչ մեկի մտքով չի անցնում քարը վերցնել □ մի կողմ դնել: Վերջապես մեկն էլ գայթեց, հայհոյեց □ քարը վերցրեց, շպրտեց մի կողմ:

□ Եզոպոսը վերադարձավ, Քսանթոսին ասաց, □ բաղնիքում միայն մի մարդ կա:

-Ինչպես թե մի,- ասաց Քսանթոսը: Ա՛յ քեզ հաջողություն: Շուտ հավաքիր, □ պետք է՝ □ սրբիչ, □ օճառ...:

□ նրանք մտան բաղնիք, Քսանթոսը տեսավ, □ ասեղ գցելու տեղ չկա: Եզոպոսին ասաց.

-Ինչու՞ ինձ ասացիր, □ միայն մի մարդ կա:

-Այն քարը, տեսնու՞մ ես, ընկած էր հենց ճամփի մեջտեղում: □ բոլորն էլ սայթաքում էին, □ ոչ մեկի մտքով չէր անցնում քարը մի կողմ գցել: Միայն մեկը գայթելուն պես քարը վերցրեց □ դեն շպրտեց, □ ուրիշների ոտքն էլ քարին չառնի, □ ես էլ մտածեցի, □ այդ բոլորի մեջ նա է միայն մարդ:

/Եզոպոսի առակներից/

📖 Ձ-358. ◆ Ա. Պատմել «Եվ դու՞, Բրուտոս...» թևավոր խոսքի «կենսագրությունը»:

☑ Բ. Ընկերության մասին որևէ պատմություն գրել և մտածել, թե տրված առածներից ու ասացվածքներից ո՞րն է համապատասխանում գրվածի բովանդակությանը:

✓1. Ընկերոջ հինն է լավ, հագուստի՝ նորը:
✓2. Դու ընկեր եղիր ոչ միայն հացի, այլև լացի:
✓3. Ընկեր կորցնելը հեշտ է, գտնելն է դժվար:
✓4. Ընկերը փորձանքի մեջ է ճանաչվում:
✓5. Ընկերությունը ապակի է, փշրեցիր՝ էլ չես կարող կպցնել:
✓6. Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:
✓7. Ագռավի խնամին կաչաղակը կլինի:
✓8. Հավատարիմ ընկերն ամեն ինչից թանկ է:
✓9. Սարերն ու քարերը քամուց են կործանվում, ընկերությունը՝ խոսքից:
✓10. Ընկեր չունեցող մարդն անտեր թռչուն է:

☑ Գ. Կարդալ հետևյալ տողերը և քննարկել լսարանային ընկերների հետ՝ «Քանի որ իմ ընկերոջ քարեկամությունն է անում իմ թշնամու հետ, ապա ես չպետք է քարեկամություն անեմ ընկերոջս հետ: Խու՛ս տուր թույն խառնած շաքարիկ, զգուշացի՛ր սատկած օձի վրա նստած ճանճից» /Ավիցենա/:

📖 Ձ-359. Ա. Կարդալ և կետադրել:

Բ. Մեկ գծով ընդգծել շաղկապները և բացատրել իմաստային, քերականական առանձնահատկությունները, երկու գծով՝ շաղկապի դեր կատարող հարաբերական դերանունները:

Կես-գիշեր:

Գարնանային այն գիշերներից երբ թանձրացյալ իրականությունը և մանիշակագույն երազը խառնվում են իրար որովհետև բույրը որ բարձրանում է նոր ծլած խոտից և խնձորենու վարդագույն ծաղկից նման է երազում այլակ-այլակ ծփացող թափանցիկ քողերի բույրի: Եվ գիշերի ծոցը լցված է մրմունջներով: Նոր բացվող ծաղիկների ձայնն է նաև պատռվող կոկոնների քաղցրաձայն ցավի ճիչը: Կոկոնները ճեղքում են իրենց սրտերը քանզի ստեղծագործության անդիմադրելի անգութ և հեշտաբորբոք ցանկությունը մահ է անխուսափելի և անվախճան:

Եվ աշխարհի կտուրներից մեկի տակ մարմարյա սեղանի վրա կանաչ լուսամփոփի տակ բացված է մեծ մի գիրք: Այդ գրքի վրա հակված է գիտնականի գլուխը որ հոգնած է և որի վրա ընկել է տիեզերքի առաջին ձյունը: Այդ մատյանը հղացող գլուխը ինքը նման էր մայր երկրագնդին:

...Ծանր էր այդ գլուխը զայրույթով ատելությամբ լույսով և սիրով լեցուն այդ մատյանում թափվեցին հանճարեղ մի կյանքի թե արյունը թե ժպիտը և թե նրա մռայլ խոհերի լուսավոր կաթիլները...

Արևն արդեն թեքվել էր սարի ետևը բայց ծառի սաղարթների մեջ ծիրանները վառվեցին իբրև կանթեղներ վառվեցին և աստղերը խոր երկնքում: Որո՞նք են աստղերը և որո՞նք են ծիրանները: Նրանք շողում են իբրև արևի փշուրներ:

Վաղուց մթնել են սարերի կատարները, իսկ արևի շողերը դուրս են եկել լեռնային կապույտ լճակի ջրերից: Թեև մթնել է և պայծառ լճակը բայց կարծես թե դուրս է եկել նրա ալիքներից մի մերկ աղջիկ շուշանաշար լանջով: Միջնամառային իրիկնային հովը շնկշնկում է և տարուբերում աղջկա ծամերը ինչպես բոցը քամու առաջ: Բուրում է և ծամը և խոտը:

Լուսնկա գիշերում վառվում են ծիրանները և շողշողում են աղջկա աչքերը:

Հոտավետ է ամբողջ տիեզերքը: **/Ըստ Վ. Թոթովենցի/**

Վ Ե Ր Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Ա Ջ-360. Ա. Գտնել վերաբերականները /եղանակավորող բառերը/, բացատրել նրանց իմաստային և խոսքիմասային յուրահատկությունները:

Բ. Ներկայացնել վերաբերականների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի՝ մակբայների, շաղկապների, ձայնարկությունների հետ:

1. Եվ իսկապես էլ մեր թիկունքն է մութ, Անցյալը գիտենք գրքերով միայն: Գուցե առավել մեր ճակատն է մութ, Գրքերն են ճառում գալիքից նաև: 2. Սա էլ գործ է, հարկավ, Սակայն շատ լուրջ մի գործ: 3. Այսպես կծնվի ինքնաբերաբար՝ Ինչպես Հիսուսը միածին կույսից, Մինչև իսկ առանց «Եղիցի լույսի»: 4. Եվ հետամնաց արփին, վերջապես, Ծագում է դրսում: 5. Մի՞թե սլաքներն իմ ժամացույցի ետ-ետ չեն գնա, Որպեսզի «կրկին եղածը լինի»... Մի՞թե այս «մի՞թե»-ն չի ծլարձակում ոչ մի բարությամբ: 6. Նա թերևս պարզ տեսնում է Մի ցամաքած հատակ...ծով: 7. Ես ջանում եմ լոկ չլինել՝ Ամբողջովին դառնալ դիմակ: 8. Մինչդեռ մի կարգին չգիտենք նույնիսկ, Թե այդ ինչից է մարդը ծիծաղում: 9. Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեմ Կամ կուլ տամ դաշույն: 10. Գեթ մեկի համար, գոնե մեկի համար մի՛ լինի կյանքում Այս քո անվան պես կամ հորիզոնի... 11. Դու մի հորինված էակ ես գուցե, Որ հանդիպել ես ինձ մտքումս լոկ: 12. Ուրեմն աշխարհում իրոք չկա... Ու չի լինի իրոք ոչ մի հոգի: 13. Ասում են, իբրև, կապույտի վրա չեն նստում ճանճեր... 14. Աշխարհին մանկան մաքրություն է պետք, Եվ հենց այն մանկան, Որին ամեն օր աշխարհ են բերում Նաև աշխարհի անմաքուրները: 15. Սուտ է, ուրեմն, այո՞, մանկությունից ծանոթ «Սիրտս վկայում է» այն խոսքը, որ գուցե մարդկայինն է բոլոր խոսքերի մեջ մարդկանց: 16. Այսուհանդերձ մի՛ մոռացիր, որ մորիկը տանիքներ է քշում-տանում: 17. Անկեղծ ասած, նրանց, իրոք,

չնախանձել չի՛ կարելի: 18. Մենք հանդիպեցինք... Եվ -ահավասիկ այսպես - տապալվեց Բանաստեղծության պարիսպը խարխուլ: 19. Եվ մի՞թե չարժե, Եվ չարժե՞ արդյոք, որ կյանքի հավերժ հաղթության համար Նրանք հավիտյան մեզ տանջեն այսպես: /Պ. Մնակ/

Ձ-361. Հիշել և գրել բանաստեղծական տողեր երնեկ, թող, ախր, մի՞թե, գեթ, գոնե, միայն, կարծես, կարծես թե, ասես, անգամ **վերաբերականներով:**

Ձ-362. & Բերված վերաբերականների մեծ մասը առաջացել է տարբեր խոսքի մասերից, անգամ որոշ միակազմ նախադասություններից ու դարձվածքներից: Յուրաքանչյուր շարքի համար նշել նրանց նախնական նշանակությունը: Դուրս գրել այն վերաբերականները, որոնք մերօրյա հայերենում զուգակցում են երկու իմաստներն էլ:

ա/ արդյոք, իհարկե, ցավոք, մի խոսքով, իրավ, իրավամբ, հիրավի,
բ/ անկասկած, անպատճառ, ճշմարիտ, լոկ, սոսկ, դժվար թե.
գ/ ինչնէ, ինչնիցե, ուր է թե, ուր որ է.
դ/ խնդրեմ, կարծես, կարծեմ, կեցցես, թող, համմե, տեսնես.
ե/ ամենևին, բնավ, պարզապես, վերջապես, էլի, դժբախտաբար, ի վերջո.
զ/ նույնիսկ, անգամ, գեթ, գոնե, համենայն դեպս, իսկ որ.
է/ ինչ խոսք, այ քեզ բան, աստված չանի, արևս վկա, տա աստված, ձայն բարբառոտ հանապատի:

Ձ-363. Կազմել նախադասություններ՝ տրված բառերը գործածելով նշված նշանակություններով:

ա/ Իբրև վերաբերական և մակբայ՝ անկասկած, անտարակույս, հազիվ թե, համարյա, հավանաբար, բնականաբար, հիրավի, ամենևին, բոլորովին:
բ/ Իբրև վերաբերական և շաղկապ՝ այնուամենայնիվ, թեկուզ, միայն թե, ասես:
գ/ Իբրև վերաբերական, մակբայ և շաղկապ՝ ապա, էլ, էլի, մանավանդ:

Ձ-364. Կազմել նախադասություններ բառային և բառաքերականական հետևյալ համանուններով:

ա/ անգամ	**բ/** հենց	**գ/** կարծես	**դ/** իսկ	**ե/** միայն	**զ/** թող
անգամ	հենց	կարծես	իսկ	միայն	թող

Ձ-365. Տրված նկարագրական բնույթի վերաբերականներից ընտրել 4-5-ը և կազմել նախադասություններ:

Ինչ էլ լինի, ինչ գնով էլ լինի, առանց այլևայլության, ըստ երևույթին, ուր մնաց թե, ուր է թե, ով գիտի, ով իմանա:

Ղ-366. Տրված վերաբերականները խմբավորել ըստ կազմության

ՊԱՐԶ	ԲԱՂԱԴՐՅԱԼ		
ահա	**ԱԾԱՆՑԱՎՈՐ**	**ԿՑԱԿԱՆ**	**ՀԱՐԱԴՐԱԿԱՆ**
	անշուշտ	**նույնիսկ**	**ըստ երևույթին**

Անշուշտ, ահա, իբր թե, լոկ, այնուհանդերձ, դժբախտաբար, իսկապես, ահավասիկ, իբրև թե, գեթ, այսուհանդերձ, բարեբախտաբար, իհարկե, երևի, միթե, գոնե, այսուամենայնիվ, ախր // ախար, իրոք, թերևս, հենց, սոսկ, այնուամենայնիվ, եկ, ցավոք, իրավ, գուցե, անգամ, թող, արդարև, ըստ երևույթին, իսկ, ապա // հապա, ոչ, ցավոք սրտի, անպայման, միգուցե, նույնիսկ, մի, չէ, երանի, հազար երանի, անպատճառ, կարծես, մինչև իսկ, երևեկ, ինչ խոսք, կարծեմ, մինչև անգամ, ի դեպ, իրավամբ, կարծես թե, մանավանդ, ի միջի այլոց, այո, ասես, նամանավանդ, ինչևէ, երանի թե, հիրավի, արդյոք, միայն, ինչևիցե, հարկավ, իբրև, միմիայն, համենայն դեպս, երևեկ թե, չլինի թե, վայ թե, չէ՞որ, խո // խոմ // հո, բնավ, ոչ մի կերպ, արի, դե:

Ղ-367. ◆ Նշված վերաբերականները խմբավորել նաև ըստ ոճական-գործառական շերտերի:

Ղ-368. Քերականական տարբեր աղբյուրներից օգտվելով՝ տրված կանոն-նախադասությունների միջնամասը լրացնել համապատասխան վերաբերականներով:

1. Հաստատական վերաբերականները՝ ....., արտահայտում են խոսողի հաստատական, հավաստի վերաբերմունքը որևէ երևույթի, իրողության, եղելության նկատմամբ:

2. Երկբայական վերաբերականները՝ ա/ երկբայական-հավանական....., բ/ երկբայական-անհավանական՝ ....., գ/ երկբայական-հարցական ....., արտահայտում են խոսողի երկբայական, թեական վերաբերմունքն այս կամ այն երևույթի, իրողության, եղելության, առարկայի նկատմամբ:

3. Ցուցական վերաբերականները՝ ....., արտահայտում են խոսողի վերաբերմունքը իր մոտ կամ իրենից հեռու գտնվող որևէ երևույթի, իրողության, առարկայի նկատմամբ:

4. Սաստկական վերաբերականները՝ ....., արտահայտում են խոսողի սաստկական վերաբերմունքը որևէ առարկայի, իրողության կամ եղելության նկատմամբ:

5. Սահմանափակման վերաբերականները՝ ...., առանձնացնում, սահմանազատում են նախադասության որևէ անդամի նշանակությունը:

6. Ժխտական վերաբերականները՝ ....., արտահայտում են խոսողի ժխտողական, մերժողական վերաբերմունքը որևէ իրողության, եղելության, գործողության նկատմամբ:

7. Կամային /զգայական, բաղձանքի/ վերաբերականները՝ ..., արտահայտում են խոսողի կամային, ցանկալի կամ բաղձալի վերաբերմունքը այլատեսակ իրողությունների և հատկապես գործողությունների նկատմամբ:

8. Զիջական վերաբերականները՝ ....., արտահայտում են խոսողի զիջական կամ զղջական վերաբերմունքը կատարված կամ կատարվող որևէ երևույթի, իրողության նկատմամբ:

Ջ-369. Կետերի փոխարեն հաստատական վերաբերականներ գրել՝ ընտրելով ներքևում տրվածներից /չկրկնել/:

1. Ֆիզիկայի պատմության մեջ, ..., քիչ են այնպիսի հայտնագործությունները, որոնք իրենց նշանակությամբ համեմատվեն էլեկտրոնի՝ առաջին տարրական մասնիկի հայտնագործման հետ: 2. ..., ատոմի անբաժանելիության վարկածին առաջին հարվածը հասցրին 1834-35 թ.թ. Ֆարադեյի կատարած էլեկտրոլիզի փորձերը: 3. ..., 1862 թ Վ. Վեբերն է առաջարկել մի վարկած, ըստ որի էլեկտրականությունն ունի ատոմային կառուցվածք: 4. Հ. Հելմհոլցը ևս հաստատեց. որ, ..., էլեկտրական լիցքը պետք է ունենա դիսկրետ կառուցվածք: 5. ..., գոյություն ունի էլեկտրական լիցքի նվազագույն, այլև անբաժանելի չափ: 6. Անգլիացի Վ. Կրուքսը առաջադրել է այսպիսի վարկած. «..., մենք մեր տրամադրության տակ արդեն ունենք տարրական մասնիկներ, որոնք, ..., կարող են համարվել Տիեզերքի ֆիզիկական հիմքը»: 7. ..., Ջ, Թոմսոնն է համարվում էլեկտրոնի հայտնագործողը: 8. ..., Հ. Հերցի, Ա. Ստոլետովի, Ֆ. Լենարդի, Ա. Բեքերելիի հայտնագործությունները վերջնականապես հաստատեցին էլեկտրոնի գոյությունը: 9. Հին աշխարհի աստղագիտությունը, ..., լուրջ իրադարձություն է գիտության կյանքում:

/Անկասկած, իսկապես որ, այո, հիրավի, անշուշտ, իրոք, իսկապես, իրավամբ, անտարակույս, ինչ խոսք/:

Ջ-370. Կարդալ և ընդգծել երկբայական վերաբերականները:

1. Ասում են՝ իբրև խարույկի վրա Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել, Ասում են իբրև մոխիրը նրա Խարույկից հանել ու մորն են տարել... /ՀԾ/: 2. Մայրս կասեր՝ «Մի՞թե պիտի էլ իմ Կարսը չտեսնեմ, Մի՞թե պիտի իմ հայ սրտի մայր մուրազին չհասնեմ /Ն/: 3. Գուցե ճերմակ ճայերն էին, որ, տես, ափին մոտեցան /Ն/: 4. Սիրտ իմ, իբր, կյանքը թողած, վանքի մոմաքարը կուզեմ /Ն/: 5. Ո՞վ ես, արդյոք, չգիտեմ քեզ, Դու՝ անծանոթ, դու՝ հեռավոր /ՄԿ/: 6. Ամպի մի սատառ արևն է ծածկում, Ակնոց է դնում արևը կարծես /ՊՍ/: 7. Քեզնից հեռու ես ապրում էի Կարծես թե ինքս էլ ինձնից հեռու /Ն/: 8. Ա՛յ զարմանք, Հո՛ երկինք չի թոել անտերը /ՎԱ/:

Ջ-371. Ա. Հարցերի պատասխան-նախադասություններն սկսել երկբայական վերաբերականներով:

- Տիեզերքում գոյություն ունե՞ն տիեզերական թռիչքների ընդունակ «բանական եղբայրներ»:
- Տիեզերքի որևէ այլ տեղում քաղաքակրթության առաջացման ու զարգացման հավանականություն կա՞:

● Տիեզերքի ոչ երկրային բնակիչները /եթե կան/ մեզ նման հու՞յս ունեն բանական էակներ գտնել տիեզերական տարածության մեջ:
● Կզարմացնի՞ նրանց մեր՝ Տիեզերք դուրս գալը:
● Նրանք կվախենա՞ն մեզնից, թե՞ զզվանքի կամ անտարբերության զգացմամբ կհամակվեն:
● Նրանք մեզ օգնության ձեռք կմեկնե՞ն, թե՞ կոչնչացնեն, ինչպես կատարվում է գեղարվեստական գրքերում կամ կինոնկարներում:
● Հավատու՞մ եք, որ ինչ-որ ժամանակ ինչ-որ տեղում կհանդիպեք այլմոլորակայինների:
● Կզարմանա՞ք, կուրախանա՞ք, թե՞ կվախենաք նրանց հանդիպելիս:
● Մենք մենա՞կ ենք ողջ Տիեզերքում:

Բ. Նույն հարցերին պատասխանել՝ օգտագործելով հաստատական վերաբերականներ:

🕮 Ղ-372. ☑ ❖ **Ա. Կարդալ տեքստը և այնպես փոխադրել, որ հավաստի հնչի /այսինքն՝ գտնել երկբայական վերաբերականները և դրանք փոխարինել հաստատականներով. հնարավոր են կառուցվածքային այլ փոփոխություններ և/:**

Ըստ երևույթին Տիեզերքն սկիզբ ունի. դա այն պահն է, երբ սկսեցին առաջանալ նյութի տարրական մասնիկները, և ապա՝ աստղերն ու գալակտիկաները: Թե ինչ է եղել դրանից առաջ, հայտնի չէ, և երևի թե հետաքրքիր էլ չէ, քանի որ դա կապ չունի «մեր» Տիեզերքի հետ: Այդ սկիզբը կարծես թե մենք գիտենք. դա եղել է ամենաքիչը 10 միլիարդ տարի առաջ, համենայն դեպս այդքան է աստղերի տարիքը և մեզ շրջապատող նյութի տարիքը:

Ո՞րն է մարդու տեղը տիեզերքում, և, ընդհանրապես, ի՞նչ է մարդը: Նա վերջին հաշվով տիեզերական մարմին է՝ երևի թե ամենաբարդն իր կառուցվածքով՝ չնայած փոքր չափերին:

Կա՞ն արդյոք տիեզերական երևույթներ՝ խիստ եզակի և բնավ չկրկնվող: Հազիվ թե հնարավոր լինի խուսափել այս հարցից: Մի օրինակ կարծես թե ունենք արդեն. այդ «մեծ պայթյունը» եղել է մեկ անգամ և դժվար թե այլևս կրկնվի, գոնե «մեր» Տիեզերքի կյանքում: Մարդու առաջացումը ևս կարելի է դասել անկրկնելի երևույթների շարքում. մարդը երևի թե անկրկնելի է. այդպիսին թերևս կարող է տեղի ունենալ մեկ անգամ՝ տիեզերքի միայն մի անկյունում՝ Երկիր կոչված հողակտորի վրա: Մի չնչին փոշեհատիկ՝ տիեզերական անհունության մեջ:

...Մի՞թե մարդ- տիեզերական մարմինը մի եզակի ու անկրկնելի երևույթ է տիեզերքում, մի՞թե իր մենության ու միայնության մեջ մի ապշեցուցիչ առեղծված է նա: Ու .. թերևս տիեզերական «Կարմիր գրքում» գրանցվելիք մի արժեք՝ ինքնաոչնչացման եզր հասած...

☑ **Բ. Կրկին անգամ կարդալ ընդգծված երկբայական միտքը և, այն նախաբան դարձնելով, շարադրել խոհերն ու զգացմունքները այնպես, որ հաստատվի՝ մարդը եզակի ու անկրկնելի երևույթ է տիեզերքում....**

🕮 Ձ-373. Դուրս գրել զգացական /կամային/ վերաբերականները. ինչպիսի՞ նրբիմաստներ ունեն դրանք:

1. Իցիվ բախտ գտնեն Մեջնունն ու Լեյլան, Իցիվ աստղանան՝ սեր մուրազվելով Երկինք բարձրանան Մեջնունն ու Լեյլան /ՀԾ/: 2. Վարդերը փուշ են, ու վարդ չեն մարդիկ,- Բայց էլի՞ երնեկ սիրահարներին: Մնացած կյանքս էլ կտայի նրանց, Միայն թե ետ գար գարունն իմ անգին, Թեկուզ ետ բերեր ցավերն էլ անդարձ,- Հազա՞ր երանի սիրահարներին /Ն/: 3. Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ՝ իմ կյանքի հետ լինեի. Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝ երկնքի հետ լինեի.../ՀԹ/: 4. Ախար, բարեկա՛մ, Ախար ինձ համար ո՞չ մի բան չարժի Փայտին տանք, ասենք, ուղեղի ծալքեր /ՊՍ/: 5. Իմ վիճակը Ձեր փոխարեն լրջանում է, Որովհետև ինձ է տրված, դժբախտաբար, Հիշեցնելու ձեզ վերստին ու վերջապես, Որ ուշացումը արթնացումի Կնմանվի մի պայթյունի /Ն/: 6. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ, Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ /ՀՍ/: 7. Դժբախտաբար դեռևս տասնյոթերորդ դարում Լեոնարդո դա Վինչիի գերեզմանի տեղը կորցրին, բայց արվեստաբան Արսեն Գուսեն՝ գտնելով մի գանգ ու շիրմաքարի մի կտոր, բարեբախտաբար կարողացավ հասկանալ, որ ժամանակին շիրմաքարի վրա գրված է եղել «Լեոնարդո դա Վինչի»...

🕮 Ձ-374. Կազմել նախադասություններ՝

ա/ թող, դե հապա // ապա, մի **կամային վերաբերականներով:**

բ/ ահա և ահավասիկ **ցուցական վերաբերականներով՝ բացատրելով նրանց և ցուցական դերանունների իմաստային ու գործառական տարբերությունները:**

🕮 Ձ-375. Գտնել ցուցական, սահմանափակման և ժխտական վերաբերականները:

1. Ո՛չ, այսօր ես պիտի դատեմ իրե՞ր Ու դատապարտեմ առարկաների /ՊՍ/: 2. Չէ՛, սիրելի՛ս, մենք նորաստեղծ զույգ չենք, բնավ /Ն/: 3. Չէ՞, շա՞տ եղավ, էլ շա՞տ եղավ այս թթվադեմ փնթփնթոցը /Ն/: 4. Ու պարպում եմ ինձ, Դարձնում մի անոթ, Որ լոկ դատարկ չէ, Այլ նաև անօդ: Եվ նոր-նոր աշխարհ եմ ստեղծում հիմա՝ Առայժմ եթե ոչ ձեզ բոլորիդ, Ապա գոնե ինձ, միայն ինձ համար /Ն/: 5. Դատավոր եմ ես քեզ կարգում Արարքներին իմ երկրային, Ասա՝ այո, ասա՝ ոչ- Վճիռ է ինձ վերուստ տրված /ՀՀ/: 6. Ասում են, որ լոկ գեղեցիկ Աչքեր ունես խաղաղ նայող /ՍԿ/: 7. Ահավասիկ, ո՞վ դուք, իմ առաջին Խորհուրդը, որ գալիս է կյանքից ու դարերից... Երկրորդ խորհուրդը որ տալիս եմ ձեզ ահա, Օ՜ անհողդողդ պահեք իբրև պատգամ /ԵՁ/: 8. Վերադարձել ես դու կրկին ահա Անչափ դժվարին քո ճանապարհով /Ն/: 2. Ա՜խ, լոկ մայրն է սուրբ ու վեհ /ՀԾ/: 9. Ա՜խ, հույսերիդ երազներից անհամար Գեթ մի թռած-կորած երամ ինձ մոտ գար, Գեթ մի կարապ ընկնի գիրկս, գեթ մի օր՝ Ինձ չթողներ վշտիս հողին գլխիկոր /Ն/:

🕮 Ձ-376. Դուրս գրել սաստկական վերաբերականները, բացատրել նրանց խոսքիմասային, շարահյուսական և կապակցական առանձնահատկությունները:

1. Քեզ եմ սիրում նույնիսկ այն ժամանակ, Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում: 2. Մեղք է զբաղվել որևէ գործով, Մեղք է մինչև իսկ շոյել ու սիրվել: 3. Լույս, լու՜յս, զվարթ, Շաղվի՜ր, Մաշվի՜ր, Թաղվիր այնպե՛ս և այնքա՛ն խոր, Որ ծածկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ... հստակ: 4. Ու վերջերգվի մինչև անգամ այդ ճաքոցով Ա՛յն եղանակը պարզ ու բարդ: 5. Հանդիպումը բաժանման սկիզբն է հենց: 6. Ուստի մինչև իսկ սիրառատ հոգին Նորից չի սիրում, սիրում է կրկին: /Պ. Սևակ/

🕮 Ձ-377. ☑ Գրել մի փոքրիկ տեքստ՝ օգտագործելով զիջական վերաբերականները /ինչևէ, ինչնիցե, ինչ որ է, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, ինչ էլ լինի, ի միջի այլոց, ի դեպ, ճիշտ է, մեկ է, միևնույն է, ինչ գնով էլ լինի/:

🕮 Ձ-378. Բացատրել ընդգծված բառերի խոսքիմասային-ձևաբանական առանձնահատկությունները:

1. Տրորում է սիրտս <u>ասես</u> իր ոտքի տակ Լուսամուտիս տակով անցնող ամեն անցորդ /ՊՍ/: 2. Սպասել-սպասում եմ, որ լոկ <u>ասես.</u> «Ես հասկացա, որ այլևս մենք չպիտի...» /Ն/: 3. Ու երբ բացում եմ իմ պատուհանը, <u>Ասես</u> բացում եմ Գժված ջերմուկի գազառատ մի շիշ /Ն/: 4. <u>Թող</u> զսպանակված ամենամուտ լռությունը գա.- <u>Թող</u> չոջիկի պես ձայները քնեն /Ն/: 5. <u>Թող</u> ծառերն անգամ հարգանքով Նրա առջև կեռանան, Միայն թե <u>թող</u> նա թողնի հեռանա /Ն/: 6. Տե՜ր ու սե՜ր Աստված, <u>Իրավ</u> չի ասված, Որ մահիճները ե՛րբ հարդարված են, Արդեն չե՛ն ապրում, արդեն մեռած են /Ն/: 7. Սխալ է, <u>անկասկած</u>, և այսպես դատելը, Ուստի և այս երգը սխալից սխալ է /Ն/: 8. Իմ քնքու՜շ աղջիկ՝ հմայված գրքով, <u>Թո՛ղ</u> գիրքը խոժոռ, այս անգամ վե՛ր կաց, Շրջենք անձրևի օրորի ներքո /ԳԷ/: 9. Չէ՞որ հավքերը, <u>գիտե՜ս,</u> իմաստուն, Սողունների՜ց են երբեմն սերել /Ն/: 10. Հու՛յս կա, Որ մահից առա՛ջ, /Վերջապե՜ս/, Հասկանամ նաև իմա՛ստը կյանքի /Ն/: 11. Բայց, ախ, ո՞րն է <u>իրավ,</u> լուսին, Ո՞րն է ոսկյա, ո՞րն է սին /ՀԾ/:

🕮 Ձ-379. & Կարդալ տեքստը և նրան հաջորդող հարցերին պատասխանել վերաբերական բառ-նախադասություններով:

Ինչպե՞ս էր ապրում Էյնշտեյնը: Մտածում էր, գրում, ջութակ նվագում: Երբեք չէր բաժանվում ջութակից. ջութակով հյուր էր գնում: Գիտենալով նրա այդ սերը՝ Գերմանիայում նրան 15 000 մարկով առաջարկում են գնել Գվառներիի պատրաստած ջութակը:

-Ես հո բռնցքամարտիկ չեմ, որտեղի՞ց պիտի այդքան փող ունենամ,- պատասխանում է Էյնշտեյնը:

Դրամական հարցերում ոչինչ չէր հասկանում: Երբ Բեռլինում նրա աշխատավարձը բարձրացրին 3 800-ից մինչև 4500 ֆրանկ, նա զարմացավ, թե այդքան փող ի՞նչ պիտի անի: Ռոկֆելերյան ֆոնդից ստացած 15 000

դոլարի չեքը մոռացել և օգտագործել է որպես էջանշան: Բացարձակապես քմահաճ չի եղել: Միշտ ուղևորվում էր երրորդ կարգի վագոնով, ապրում էր էժանագին հյուրանոցներում: Երբ մի այդպիսի հյուրանոցում խնդրեց իրեն հեռախոսով միացնել բելգիական թագուհու հետ, մտածեցին, թե կատակ է անում: Թատրոնի և կինոյի նկատմամբ անտարբեր էր: Սիրում էր Շեքսպիրին, Հայնեին, Շիլլերին, Լև Տոլստոյին և հատկապես Դոստոևսկուն. «Դոստոևսկին ինձ ավելի շատ է տալիս, քան գիտնականը»:

Ճակատը իր քարտարանն էր, փորձասենյակը՝ գրիչը: Քնքշորեն սիրում էր բնությունը: Ծխամորճ էր ծխում: Երբեք ալկոհոլ չէր օգտագործում:

Հանրաճանաչ լինելը խանգարում էր աշխատանքին: Նա վայրանում էր. «Ինչու՞ են այդքան մարդիկ ընկնում իմ հետևից, թեև իրենք ոչինչ չեն հասկանում իմ տեսությունից և նույնիսկ չեն հետաքրքրվում նրանով»: Չ. Չապլինը բացատրեց նրան. «Մարդիկ քեզ ծափահարում են այն բանի համար, որ ոչ ոք քեզ չի հասկանում, իսկ ինձ՝ այն պատճառով, որ ամեն մարդ հասկանում է ինձ»:

Նա հազարավոր նամակներ էր ստանում: Բրիտանական Կոլումբիայի մի խուլ բնակավայրից մի փոքրիկ աղջիկ գրում է. «Ես Ձեզ գրում եմ, որպեսզի իմանամ, դուք իսկապե՞ս գոյություն ունեք»: Միշտ ասում էր, որ մահից չի վախենում, միայն թե ուզում է մի քիչ ժամանակ ունենալ՝ թղթերը կարգի բերելու համար: Մահից առաջ ասաց. «Ես կատարեցի երկրի վրա իմ խնդիրը»:

Քամին ցրիվ տվեց նրա աճյունը. դա նրա կամքն էր...

1. Էյնշտեյնը սիրու՞մ էր ջութակ նվագել:
2. Նա բաժանվու՞մ էր ջութակից:
3. Գերմանիայում նա գնե՞ց Գվառոնիի ջութակը:
4. Բռնցքամարտի՞կ էր Էյնշտեյնը:
5. 15 000 դոլարանոց անդորրագիրը գրքի էջանշան լինու՞մ է:
6. Առաջին կարգի վագոնո՞վ էր ճանապարհորդում:
7. Էժանագին հյուրանոցից կարելի՞ է զանգահարել բրիտանական թագուհուն:
8. Կինո և թատրոն հաճախու՞մ էր:
9. Ծխու՞մ էր:
10. Մարդու ճակատը քարտարան կարո՞ղ է լինել:
11. Լաբորատորիան /փորձասենյակը/ գրի՞չ է:
12. Հանրաճանաչ լինելը խանգարու՞մ էր Էյնշտեյնին:
13. Չ. Չապլինը ճի՞շտ բացատրեց ծափահարելու սահմանները:
14. Փոքրիկ աղջիկը համոզվե՞ց, որ Էյնշտեյնը գոյություն ունի:
15. Մահից վախենու՞մ էր նա:
16. Նա իրավացի՞ է, երբ գրում էր. «Ես կատարեցի երկրի վրա իմ պարտքը»:
17. Նրա վերջին կամքը կատարվե՞ց:

🕮 Ձ-380. Արտագրել՝ կետերի փոխարեն ավելացնելով համապատասխան վերաբերականներ ըստ փակագծերում նշված իմաստի:

Դպրոցի գրականության ուսուցիչը Լև Դավիդովիչ Լանդաուին հարցնում է.

Լանդա՛ու, ..., /**հաստատական**/ դուք կարող եք ասել, թե ինչ էր մտածում Լերմոնտովը, երբ գրում էր «Մեր ժամանակի հերոսը»:

-Այդ հարցին, /**զիջական**/ կարող է պատասխանել /**սահմանափակման**/ մեկը,- պատասխանեց Լանդաուն:

- ... /**երկբայական**/ այդ մեկը Դու՞ք չեք:

... /**ժխտական**/:

..., /**զիջական**/, ես այդպես էլ ենթադրում էի: ... /**երկբայական**/ ասեիք, թե ով է այդ մեկը:

..., /**հաստատական**/ Միխայիլ Լերմոնտովը:

..., /**զիջական**/ դուք անուղղելի եք: ..., /**զիջական**/ նստեցեք: ..., /**զղջական**/ դուք այս տարի ավարտում եք գիմնազիան: , /**հաստատական**/ շատ ցավալի է, որ Դավիդ Լվովիչ Լանդաուի նման հարգելի մարդն այսպիսի անհաջող որդի ունի:

Ձ Ա Յ Ն Ա Բ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

🕮 Ձ-381. Ստ. Պալասանյանը ձայնարկություն է համարում այն հնչյուններն ու բառերը, «որոնք հոգու կրքերն են արտահայտում», Ա. Այտընյանը՝ «մարդու այրևայլ կիրքն ու զգացմունքը», Մ. Աբեղյանը՝ «վայրկենական տպավորության տակ առաջացած բացականչությունները». ուրեմն՝ ձայնարկությունները մարդկային ինչպիսի՞ զգացմունքների արտահայտիչներ են:

🕮 Ձ-382. Ա. Գտնել ձայնարկությունները, նշել բառական-բառակազմական և խոսքիմասային յուրահատկությունները:

❖ Բ. Բացատրել հնչերանգի /առոգանության/ դերը նրանց ձևավորման հարցում:

● 1. Էլ ու՞մն ասեմ յարն անուշ է, Վա՛յ լո, դլեյաման-յաման: Սև մարմարվեց Սիփան սարը, Դառավ քու սև շիրմաքարը, Գլխիս փլվեց հայ աշխարհը՝ Դլեյամա՛ն, յա՛ման, յա՛ման: 3. Շաղ-կղա՛, Կաղ-կղա՛, Շա՛ղ-կղա՛, Կաղ-կղա՛ - Կհիշե սիրածին, Ու սիրտը կդողա: 4. –Օ՛, Դանթե,- շրշաց ողբ Նարեկացին,- Էլ ո՞նց հավատամ լուսնի էլ լացին: 5. Դե՛, դե՛ ձենդ, դու հայ, նա քուրդ՝ մեկուճարիս մի՛ մաշիր...: 6. Դժոխք ու դրախտ իրար խառնվել, Ա՛խ, կին են դառել, - օ՛, բախտ իմ անբախտ: 7. Հե՛յ վա՛խ, հայոց Սիփան սարը, դրախտ ասա, էլ ի՛նչ սար: 5. Անգեն թագս զինված թագի տակ է, վա՛խ, Սարիս ճամփեն, յարիս ճամփեն փակ է, վա՛խ, Ա՛խ, Սիփան ջան, դու էլ բանտված մնացի՛ր, Ինչո՞վ գոռամ, լեզուս բրի տակ է, վա՛խ... /նտ/: 7. Ա՛յ ծովակ, սարի ծովակ, Ա՛յ Վանա բարի ծովակ, Իմ յարի արցունքն ես դու... /Հ. Շիրազ/

● 1. –Ո՛ւ-ո՛ւու՛ու՛,- գոռում էր գերեզմանատնից դուրս եկած դևը: 2. –Սա ընտանիքի հայրն է, դմբո՛: 3. Փայտփորիկները որդեր գտնելու համար

«կու՛տ-կու՛տ» իրենց կտուցներով շարունակ փորում էին ծառի բույնը: 4. – Տո՛ շաշ ճիպո, էն հավը, որ հավ է, հենց ճտի կողքով անց է կենում, արծիվ է դառնում: 5. –Փի՛ե՛, էս փալնքոտի խելքին մտիկ... Ուրեմն ես խո՞տ եմ ուտում: 6. Կարծես հարցիս որպես պատասխան՝ լսվեց երեխայի ուրախ կանչը. -Բիժո՛, բիժո՛, բիժո՛: 7. Հանկարծ վերև՝ պնդոցում, գոռոցի նման մի խուլ ձայն լսվեց: -Բուու՛, բուու՛: 8. Բրդոտի հետ հատուկ լեզվով էի խոսում, երբ ասում էի՝ «բու՛հ», նշանակում էր՝ կրակում եմ, հեռու կանգնի: Երբ ասում էի՝ «գե՛շ», գնում էր, ասում էի՝ «հոո՛շ»,- կանգնում էր, ասում էի՝ «հա՛յ-հավա՛ր», օգնության էր հասնում: Հանկարծ ներքևից ձայն լսեցի՝ «չը՛խկ-չը՛խկ-չը՛խկ»: 9. ...Ծլունգ-ծլինգ-ծլանգ, ծլանգ-ծլինգ-ծլունգ՝ պարանները ռիթմիկ քաշելուց հետո իրենց բարձր բներում երգում էին պղնձե զանգերը /նտ/: 10. Մայրուքը վերջացել է, փայտե սոնին տխուր երգում է. «Ճլվիստ-ճլվիստ-ճլվիստ»: 11. ...Ես ջիրիդ եմ խաղում, նրանց վրա մահակով հարվածներ տալիս, որ մաքրվի՝ «շը՛րպ, շը՛րպ, շը՛րպ: /Վ. Անանյան/

Ջ-383. Ա. Բացատրել ձայնարկությունների շարադասությունը. նրանց գործածության ո՞ր դիրքն է առավելապես նախընտրելի:

Բ. Ո՞ր դեպքում ձայնարկությունը չի տրոհվում նախադասության մյուս անդամներից:

Ջ-384. Ա. Լրացնել աղյուսակը:

ՁԳԱՑԱԿԱՆ /ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ/	ԿԱՄԱՅԻՆ /ԿՈՉԱԿԱՆ/	ՆՄԱՆԱՁԱՅՆԱԿԱՆ /ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ/
վա՜շ-վու՜շ	քուչի՜-քուչի՜	շը՛ը՛ղխկ

Բ. Բացատրել ձայնարկությունների կազմությունը:

Ջ-385. Բացատրել տրված տարբերակային շարքերի ձայնարկությունների բառակազմական տարբերությունները՝ ուշադրություն դարձնելով դրանցից բխող նրբիմաստային տարբերություններին:

● Դեհ // դե, թու՛ // թուհ // թյու՛ // թյուհ, վի՛ // վի՛հ, ու՛ֆ // ու՛ֆֆ, օ // օ՛օ, ֆու՛ // ֆուհ, ա՛ // ա՛ա, ու՛ // ուու՛ // ու՛-ու՛-ու՛ ը // ը՛ը, փիշի՛-փիշի՛ // փիսի՛-փիսի՛:

● Դը՛ռ // դը՛ռռ, թը՛ռ // թը՛ռռ, թը՛շ // թը՛շշ, վա՛շ // վա՛շշ, ճը՛ռ // ճը՛ռռ:

● Վու՛յ // վույ-վու՛յ, լո՛ // լո՛-լո՛, կը՛ռ // կը՛ռ-կը՛ռ, դա՛ // դա՛-դա՛:

Ջ-386. Գրել բացականչական ձայնարկություններ, որոնք արտահայտում են՝

1. վիշտ, ցավ, տառապանք
2. դժգոհություն, անբավականություն, բարկություն
3. ծաղր, հեգնանք, արհամարհանք
4. ափսոսանք, զղջում, կարեկցություն, ցավակցություն
5. զզվանք, խորշանք, տհաճություն
6. զարմանք, անսպասելիություն, անակնկալություն

✍ 7. ուրախություն, հրճվանք, հաճույք, բավականություն, բավարարվածություն
✍ 8. հիացմունք, զմայլանք
✍ 9. սպառնալիք, սաստում, սրտնեղություն
✍ 10. սարսափ, երկյուղ, վախ
✍ 11. անտարբերություն, համակերպում, հուսահատություն
✍ 12. հանդիմանություն, կշտամբանք
✍ 13. երկմտություն, ներքին հարցում
✍ 14. հետաքրքրասիրություն
✍ 15. պարծանք /և այլն/

🕮 Ձ-387. ❖ Տրված դատողական բնույթի բառերով արտահայտված մարդկային զգացմունքներն արտահայտել համապատասխան ձայնարկությունների զուգակցությամբ և համեմատելով՝ բացատրել արտահայտման տարբերությունները:

● ա/ Սիրտս լալիս է անուրախ:
բ/ Ցանձրացել եմ անվերջ սպասելուց:
գ/ Աշխարհի ցավերը կոտրեցին իմ թևերը:
դ/ Սիրելիս, այդքան դաժան մի՛ եղիր:
զ/ Վշտացա, շատ վշտացա, որ ինձ չլսեցին:
ե/ Ի՜նչ անմահական ջուր է:
զ/ Գրքերի աշխարհը տիեզերք է անեզր:
է/ Սքանչացած եմ հայրենի բնությամբ:
ը/ Երևի ինձ է սպասում:
թ/ Ես ուզում եմ փշրել, փշրել կյանքը:

● ա/ Նա ժայթքել ու ծխում է դեռ երկրի երեսին՝ նման բաց վերքի:
բ/ Գնանք, հա՛յր իմ, որ աչքով տեսնես, ինչ որ չես տեսել Աստծո դժոխքում:
գ/ Ե՛տ դարձիր, հոգիս ծարավ է բեռնաթափության:
դ/ Գարուն է գալիս, և խորունկ ձորում ժամն է սրբազան խելագարության:
ե/ Ես վախենում եմ քնքուշ խոսքերից:
զ/ Սևագու՛յն քարեր, սևավո՛ր քարեր, սուգերով լի քարեր սևաքանդակ:
է/ Մի քանի ժամ հետո ես չեմ լինի, կլինի լուռ երկինք, դատարկ պարկուճ:

🕮 Ձ-388. Կազմել նախադասություններ վայ ձայնարկության տարբեր իմաստներով:[1]

---

[1] Ըստ Է. Աղայանի բառարանի՝ վայ ձայնարկությունն արտահայտում է 10 իմաստ /ցավ, ափսոսանք, զարմանք, ուրախություն, կարեկցանք, վախ, սպառնալիք, շվարածություն, դժգոհություն, սրտնեղություն, արհամարհանք, քմծիծաղ, բարկություն, հուսահատություն.../: Նույն բառարանում վայ-ը նաև գոյական է /«Բուի՝ ագռավի ևն չարագուշակ կռինչ» և փոխաբերական իմաստով՝ «սուգ. ողբ»/, մակբայական արժեք ունի /«գոռծածվում է ածականների և գոյականների հարադրությամբ՝ ծաղրական իմաստով/ և դարձվածակազմիչ միավոր է:

🕮 Ձ-389. Ա. Որո՞նք են հետևյալ կենդանիների, առարկաների, բնության երևույթների բնորոշ /կամ արձակած/ ձայները: Դրանցից գոյականներ ու բայեր կազմել:

● Կաքավի, շան, կատվի, ճնճղուկի, աքաղաղի, կռունկի, ագռավի, օձի, կաչաղակի, մեղվի, ճանճի, գայլի, արագիլի:

● Քամու, տերևների, չորացած տերևների, բքի ոռնոցի, կացնի հարվածի, բացվող դռան, փակվող դռան, զանգի, եկեղեցու զանգի:

Բ. Նմանաձայնություններն ինչո՞վ են նմանվում ձայնարկության մյուս տեսակներին և ինչո՞վ տարբերվում նրանցից:[1]

🕮 Ձ-390. ❖ Կարդալ Շիրազի «Հուշարձան մայրիկիս» բանաստեղծություններով հյուսված պոեմը և ընտրված տողերում ախ ձայնարկության զանազան նրբիմաստները բացատրել, կազմել իմաստային փունջ և համեմատել «Արդի հայերենի բացատրական բառարանի» բացատրության հետ:

1. Սուրբ է մնում միայն սիրտը մայրական, Ա՜խ, լոկ մայրն է սուրբ ու վեհ: 2. Ա՜խ, չէ, մայրս մի հասարակ Աստվածիկ է, մի հույս ճրագ: 3. Ու թախծում եմ ես խոով, Ա՜խ, չլինի՞ մորս պես՝ Սևան, դու էլ վառվելով Ու լույս տալով սպառվես... 4. Բայց, ավաղ, ի՞նչը ներեմ այս դարի, Ախ, քիչ մնում արևը մարի: 5. Ա՜խ, մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ, Մայրս պատկերն է մայր հայրենիքիս: 7. Ա՜խ, կոծում է բարդիս դեռ՝ Թե ինչպես ձեռքն ասկյարի Հորս թաղել կիսամեռ, Չէր թողել քարը քարի... 6. Ա՜խ, նա մայրիկս էր կորած, Կորած որդուն տուն տարավ... 7. Մի որոնիր մարդ կամ աստված, Ա՜խ, չարով են զույգն էլ հաստված: 8. Ա՜խ, չէ, աստված թե չլիներ՝ Չէին

---

[1] **Բնության ձայներից ծնվում են բառեր:** Ճռիկ, ճպուռ, մլավոց, բառաչ, կարկաչ, շառաչ, շշուկ, շշունջ, ագռավ, մկկոց, խրխինջ, թխկոց, ճայթյուն, ֆշշոց, խռմփոց **և այլ նման բառեր. անվիճելի է, որ նմանողությամբ են ստեղծված:**

Մեծ թիվ են կազմում նաև դարերի խորքից եկող մի շարք ջրամանների կամ կուլաների ու կուժերի անվանումները, որոնց հիմքում հենց այն ձայնն է, որ իրենց միջից դուրս է գալիս հեղուկը, ջուրը կամ գինին դատարկելիս:

Մեր նախնիները, գեղագիտական հաճույքից ելնելով, ոչ միայն կուլաների արտաքին ձևավորումն են ճաշակով կատարել, այլև ջրամանների վզիկը նեղացնելով և ծակոտկեն փոսիկներ դնելով՝ ստեղծել են գեղեցիկ, երաժշտական հաճույք պատճառող «երգեցիկ ջրամաններ»: Ահա թե ինչ են գրում լեզվաբանները նման ջրամանների անունները բացատրելիս: Մեթաստիայի բարբառի բառարանի հեղինակ Կ. Գաբիկյանը գրում է. «Բըլբլ - նեղերաան սափորիկ, դոբակ, բնաձայնած ջուրը բըլ-բըլ ձայն հանելիս կվազե»: Համեմատենք Վանի պլպլիկի և Ալաշկերտի բոբոլիկի հետ: Սասունում նույնպես բոբոլիկ, բոբոլիկ կար .Ա. Պետոյան/, իսկ Գազանջյանը վկայում է Եվդոկիայում պլպլ կուժի մասին, որը ջուրը դատարկելիս «պըլ-պըլ» ձայն է հանում: Հիշեցնենք, որ պարսկերենում նույնպես բոլբոլե անունով կուժ կար: Նույն պարսկերենում բոլբոլի նշանակում է «բլբլացնել», իսկ բլբուլ բառն էլ հենց այդ բնաձայնությունից ծնված անվանումն է: Հ. Աճառյանը, ի թիվս մի շարք բնաձայնական անուններ ունեցող կուլաների, հիշատակում է նաև կուլկուլը՝ կկլլ ձայնից, գկգլ-ը: Նույն բառարանում նա բերում է նաև Կարինում պատրաստվող բխբխ կավե ջրամանի հիշատակությունը:**

Սեղանի թենիսը կոչվում է նաև պինգ-պոնգ, որը բնաձայնության արդյունք է. այն առաջանում է գնդակին հարվածելիս և արձակված գնդակի՝ սեղանի վրա ընկնելու ձայներից:

ծնվի մայրերը մեր: 9. Ա՜խ, անգութնե՛ր, գեթ մի օր Նայեք ձեր մոր աչքերին, Որ մարդանաք դուք էլ խոր... 10. Աշխարհում, ա՜խ, մորից քաղցր՝ օ՜, նորից սիրտն է մայրական: 11. Հանեմ գանձերը հայոց լեռների, Շաղ տամ բոլորը մորս ոտքի տակ, Ա՜խ, էլի քիչ է, ա՜խ, քիչ է էլի...12. Մայրս ծերության ձորերն է իջնում, Ա՜խ, էլ չի երթա սարը՝ բանջարի...13. Ա՜խ, մեծացիր դու այնքան, Հսկայացիր դու այնպես, Որ լեռն, իբրև մի մանկան՝ Գրկելով էլ տուն բերես: 14. Ա՜խ, չէ՜, թեկուզ աստված ինքն էլ մի կին լինի՝ Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի: 15. Աստված, թե մայր ես ամենակարող, Ա՜խ, այնպես արա, որ առանց կնոջ Գեթ մի օր ապրի տիեզերքը ողջ...

📖 Ձ-391. ❖ Ա. Կարդալ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» պիեսը և դուրս գրել ձայնարկություններով նախադասությունները, բացատրել նրանց /ձայնարկությունների/ դերը «քաջնազարական աշխարհքի» պատկերման գործում:
❖ Բ. Առանձնացնել ցածր ոճին բնորոշները /հայդա.../:
❖ Գ. Ո՞ր ոճում են առավելապես գործածվում ձայնարկությունները և ինչո՞ւ:
❖ Դ. Ո՞ր ոճին բնորոշ չէ ձայնարկությունների գործածությունը: Ինչո՞ւ:

📖 Ձ-392. Տրված ձայնարկություններով կազմել և՛ գոյականներ, և՛ բայեր, օր.՝ սը՛վ-սը՛վ – սվսվոց և սվսվալ:
Գը՛վ-գը՛վ, թըխկ-թըխկ, շրըխկ, շըխկ, չըխկ-չըխկ, խը՛շշ, խը՛շշ-խը՛շշ, տը՛զզ, տը՛զզ-տը՛զզ, կը՛ռ, կը՛ռ-կը՛ռ, զրը՛նգ, ճը՛ռռ, ճը՛ռռ-ճը՛ռռ, ծի՛վ-ծի՛վ, ծլընգ, թըրխկ, բը՛զզ:

📖 Ձ-393. Ա. Դուրս գրել այն բաղադրյալ բառերը, որոնց բառակազմիչ բաղադրիչներից մեկը ձայնարկություն է. բացատրել իմաստները:
Բ. Առանձնացնել նրանք, որոնք դարձվածային արժեք ունեն: Նմանատիպ այլ դարձվածքներ գրել:
● 1. Մի տեսակ ձայն եմ լսում, կարծես բնությունը դնկում է. «դը՛նկ-դը՛նկ»: 2. Երեք-չորս փոքրիկ ձագուկներ բույնի միջից գլուխները օրորում էին ու մանուկ ձայնով լակ-լակ անում: 3. Ուրիշներին տեսնում եմ, որ տարիներ նստել են և ախ չեն քաշում, ամա սիրտս խոսք չի հասկանում: 4. Մեկ էլ փակ դռան ետևից լսվեց մեր աքաղաղի ծանոթ ծուղրուղուն: 5. Ավա՜ղ և բյուր ավա՜ղ կյանքին: 6. Թափառեմ ամեն տեղ, և հավերժ ապրեմ, ապրեմ ու լա՛մ, լա՛մ, շա՜տ լամ, ա՜խ, ա՜խ, տիեզերքից էլ մեծ Ա՜խ: 7. Օ՜ֆ մի արա, որ թշնամին չլսե օ՜ֆ: Օ՜ֆ մի արա, որ թշնամին չլսե օ՜խ անե: Օ՜ֆ մի արա, որ թշնամին օ՜օխ չանե: 8. Մեկը ա՛յ կանչեց, Մեկը վա՛յ կանչեց, Մեկը հա՛յ կանչեց. Ու հրացանս էնոնց պարպեցի. Ա՛յ կանչողը թողեց, փախավ, վա՛յ կանչողը զարկվավ, ընկավ, Հա՛յ կանչողը Հա՜յ, Հա՜յ կանչեց, Եկավ, նստավ գլխուս վրա: 9. Արունն ելավ, գո՛չ-գո՛չ գնաց Մեր մայրերուն, ձագուկներուն...
/Ավ. Իսահակյան/
● 1. Զորքն հայտնվեց, Վրա տվեց Հանկարծակի, հանկարծավայ, Վայը բերեց զորքին թուրքաց: 2. Վայ-լո, այս էլ այն գլխից է, որ թե մնա ուսերին՝ Վայ կբերի թե իմ գլխին, ո՛վ բեկ, թե քո հույսերին: 3. Ու թիկնոտած լսում էին

հայի վայն ու մեղեդին: 4. Հայոց լեզուն թուրն է հայոց, Թուր Կեծակին ընդդեմ վայոց: 5. Ավա՜ղ, վայ թե ինձ չէր սիրում...,- մտորում էր մերթ այսպես: 6. Ա՜խ, թե վայ չես, հասի՛ր, իմ հայ արծվենի: 7. Վա՜յ մոր գլխին,- հառաչեցին,- Վա՜յ քո սիրած աղջկան: 8. Ա՜խ, Բինգյոլ, դու պաղ Բինգյոլ, Դու հայոց ավա՜ղ Բինգյոլ: 9. Հայ ու վայ ես, մեր թայը չես, մեր փայը չես, ձեռ քաշի: /Հ. Շիրազ/

● 1. Ո՛չ ամոթ ունի ուժեղը, ո՛չ վախ, Վայը եկել է տարել տկարին /ՀԹ/: 2. Եկար հուշիկ, անչար ավաղներով, Օրորներով ամենօրոր /ՎՏ/: 3. Էն ո՞վ խոսեց ա՜խ ու վախով, Ո՞վ ջուր խառնեց իր բաժակին /ԳԷ/: 4. Եվ վայ թե թվա, թե բոլոր մարդիկ Ինձ են կողոպտում օդը շնչելով /ՊՍ/: 5. Ով, ո՞վ և ինչու՞ սրանց «հայ» կոչեց, Որ հանգավորվի միայն «վայ»-ով /Ն/: 6. Ափսոս, ա՜խ, հազար ափսոս Իմ կարոտ-կարոտ աչքերին /ՍԿ/: 7. Ա՜խ, ինձ ավաղ, որ չեմ հիշում հին զայրույթիս խոսքերը բարկ /ՀՀ./: 8. Վա՜յ ինձ, միթե ես ապրեցի Ողջ իմ սերը և արդեն վերջ /Ն/: 9. Ջա՛ն ասա ինձ, ջա՛նս լսիր, Բաժակդ տուր, բաժակս լից /Ն/: 10. Մեր անկատար խոստումների Ափսոսանքի «ախն» ենք ասում /Ն/: 11. Կյանքը նորից ուրախության ծով կդառնար, թեկուզ սրտանց Ախ քաշեինք սիրո համար /Ն/: 12. Հետո անտառից վայում էր հավքը տխուր /ՎԴ/: 13. Այնպիսի վայնասուն էր գցել, որ շունը տիրոջը չէր ճանաչում: 14. Հասիր նրան ու վայը տուր: 15. Խեղճ ծերունու հայհայը գնացել է, վայվայը մնացել: 16. Մայրն ափսոսում էր իր զուր անցած կյանքի համար:

📖 Ձ-394. ☑❖ Կարդալ Հ. Սահյանի «Անտառում» բանաստեղծությունը և փոխադրել այն արձակ ձևով՝ մտքին համապատասխան ձայնարկություններ, ինչպես նաև վերջիններից կազմված զոյականներ, բայեր ավելացնելով:

📖 Ձ-395. Ա. Կարդալ: Դուրս գրել չթեքվող խոսքի մասերը:
Բ. Նշել ընդգծված բառերի ձևաբանական հատկանիշները:

Բնությանն ասես ձանձրացրել է սովորական բնավորությունների անվերջությունը: Նրան չէին բավարարում նույնիսկ բացառիկ հզոր ուղեղները: Ինչնիցե, բնությունը կամեցավ <u>բոլոր</u> տաղանդները միավորել սոսկ մեկ մարդու մեջ... Այդպիսին էր Լեոնարդո դա Վինչին:

Ծու՞յլ է եղել... Օրերով չի՞ նկարել...

Օ՜, Ձերդ գերազանցություն, ինձ մնացել է նկարել միայն Հուդայի գլուխը, - պատասխանում է Լեոնարդոն Միլանի <u>դքսին</u>: - <u>Դրա</u> համար էլ ես մինչև անգամ գնում եմ Բուրգենտո, որտեղ ապրում են <u>ձեր</u> քաղաքի բոլոր ստահակները և սրիկաները... Հենց որ <u>գտնեմ</u> հենց իմ <u>ուզած</u> դեմքը, մի օրում կավարտեմ աշխատանքը:

«Ավետիսի» չտեսնված դինամիկան, «Խորհրդավոր ընթրիքի» զարմանահրաշ ռիթմը և զգացմունքային շռայլությունը, «Մոնա Լիզայի» ժպիտի միստիկական խորհրդավորությունը Լեոնարդո-նկարչին պարգևեցին համաշխարհային հռչակ, որը չմարեց <u>չորս հարյուր</u> տարիների ընթացքում: <u>Բոլորը</u> գիտեն նրա նկարները: Բայց ոչ բոլորը գիտեն, որ մեզ,

դժբախտաբար, հասել են միայն պատառիկներ և ապշահար ժամանակակիցների հիասքանչ վկայությունները:

Ասում են, որ իբրև թե նա միշտ կախման մեջ է եղել մեծազարմ մեկենասներից: Բարեբախտաբար ունեցել է հավատարիմ բարեկամներ: Դժբախտաբար ունեցել է նաև ոխերիմ թշնամիներ: Նույնիսկ այստեղ էլ ճակատագիրը մի հազվադեպ բացառություն է թույլ տվել. հանճարեղ Լեոնարդոն՝ «միլանցի ջութակահարը»՝ իր ժամանակի նշանավոր երաժիշտը, խնջույքների և պարահանդեսների սիրահարը, իրոք, ուներ հանճարեղ թշնամիներ՝ Միքելանջելոներ...

Նույնիսկ այսօր էլ, երբ հայտնվում ես Կլո Լյուսե դղյակում, չես կարող մեկ անգամ ևս չզարմանալ այս հանճարի գերբնական հզորությամբ, միայն մի մարդու մկանունքի ուժով... Մի՞թե հենց այստեղ չէ, որ հիշողությամբ ավարտել է «Մոնա Լիզան»՝ չպատկերացնելով անգամ իր այս կտավի անմեռ հռչակի մասին, որի առջև անզոր է լինելու ժամանակը: Մի՞թե... և մի՞թե զարմանալի չէր, որ մահվան շեմին նա աստծուց ու մարդկանցից ներում էր աղերսում, որ՝ իր կյանքում այդքան քիչ բան էր արել...

/Ըստ Յա. Գոլովանովի/

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ը-1. & Բացատրել հետևյալ արտահայտությունները՝
1. շարահյուսության նվազագույն միավոր
2. շարահյուսության առավելագույն միավոր
3. լեզվական մակարդակներ
4. վերշարահյուսական կամ տեքստային մակարդակ
5. լեզվական կաղապարներ
6. շարահյուսական կաղապարներ
7. շարահյուսական կապակցություն
8. շարահյուսական կապակցության միջոցներ և եղանակներ
9. շարահյուսական կապակցության դրսևորումներ

Ը-2. & Ա. Կարդալ: Ըստ նորմատիվ քերականությունների՝ «շարահյուսական կապակցումն իրացվում է ինչպես բառերի ձևափոխությունների, քերականական հարաբերություններ արտահայտող բառերի միջոցով, այնպես էլ շարադասությամբ և հնչերանգով». տեքստից ընտրել համապատասխան կապակցություններ՝ ասվածը հիմնավորելու համար:

Բ. Ընդգծվածներում որոշել շարահյուսական կապակցման եղանակները:

«Սիրող քարը». չինացիներն այսպիսի բանաստեղծական անուն են տվել բնական մագնիսին: «Սիրող քարը,- ասում են չինացիները,- երկաթը ձգում է այնպես, ինչպես քնքուշ ու սիրող մայրը իր զավակներին»: Հետաքրքիր է, որ ֆրանսիացիները ևս, որ ապրում են մայրցամաքի հակադիր ծայրում, նման անուն են տվել մագնիսին. ֆրանսիական «aimant» բառը նշանակում է և՛ մագնիս, և՛ սեր: «Մագնիս» անունը՝ մագնետիզմ, ըստ Պլատոնի, Եվրիպիդեսն է օգտագործել իր դրամաներում. այն անվանել է «Մագնեսիայի քար»: Բնական մագնիսների այդ «սիրո» ուժը չնչին է, ուստի շատ միամիտ է հնչում մագնիսի հունական անունը՝ «հերկուլեսյան քար»: Եթե Հին Հունաստանի բնակիչները այդքան զարմացել են բնական մագնիսի ձգողության մեղմ ուժից, ապա ինչ կասեին նրանք, եթե տեսնեին ժամանակակից գործարանների էլեկտրամագնիսները, որոնք բարձրացնում են հսկայական մեծաբետոններ:

Ը-3. & Ա. Գտնել և դուրս գրել այն լեզվամիավորները, որոնք համաձայնությամբ են կապակցված՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բացահայտչի և բացահայտյալի համաձայնության դրսևորմանը:

«Խոր ծերության ժամանակ մարդիկ ենթադրում են, թե իրենց կյանքի վերջն են ապրում, այնինչ հենց այդ ժամանակ է, որ կատարում են և՛ իրենց, և՛ թե մյուսների համար ամենաթանկարժեք և ամենաանհրաժեշտ աշխատանքը: «Կյանքի արժեքը հակադարձ համեմատական է մահից բաժանող տարածության քառակուսիներին»,- գրել է Լ. Ն. Տոլստոյը:

Ծերությունը ոչ թե մարդու ապրածն է, այլ վաստակը: Լ. Տոլստոյը, Այվազովսկին, Գյոթեն ապրել են 83 տարի և մինչև կյանքի վերջին օրերը

պահպանել են իրենց աշխատունակությունը: Գյոթեն՝ գերմանացի մեծ բանաստեղծը, 82 տարեկան հասակում է ավարտել «Ֆաուստը»: Տիցիանը մահացել է 99 տարեկան հասակում. նա 95 տարեկան էր, երբ ավարտեց իր հռչակավոր նկարը՝ «Քրիստոսը փշե պսակով»: Վերդին իր գլուխգործոցը՝ «Աիդան», հանդիսատեսին ներկայացրեց 80 տարեկանում: Հանճարներից ամենաերկարակյացը՝ ռուս արվեստաբան, գրականագետ, ակադեմիկոս Դմ. Լիխաչովը, 100 տարեկանում շարունակում էր իր կրակոտ, հրապարակային ելույթները: Ռուսական բալետի ամենաերկարակյացը՝ մեր ժամանակակիցը՝ Իգոր Մոյիսեևը, 96 տարեկանում դեռևս բեմի վրա էր և շարունակում էր իր սաների համար բացահայտել իր արվեստի գաղտնիքները /մահացել է 2007 թ./: Իսկ երկարակյաց հայ հանճարնե՞րը՝ Հ. Այվազովսկի՞ն /83 տ./, Մ. Սարյա՞նը /94 տ./, Գ. Սունդուկյա՞նը /87 տ./, Ա. Խաչատրյա՞նը /77 տ./, Վ. Համբարձումյա՞նը /87 տ./, Ավ. Իսահակյա՞նը /82 տ./, Ռ. Մամուլյա՞նը /ամերիկահայ կինոռեժիսոր, 89 տ./, Մ. Շահինյա՞նը /92 տ./, Մ. Աբեղյա՞նը /79 տ./.....

☑ **Բ. Պատմել երկարակյաց հայ հանճարների մասին՝ չմոռանալով մերօրյա՝ մեր կողքին ապրող տաղանդավոր երկարակյացներին:**

📖 Շ-4. Առանձնացնել կառավարմամբ /հոլովառությամբ/ կապակցված լրացում-լրացյալները՝ տարբերակելով ուժեղ և թույլ կառավարումները:

«Տվեք ինձ հենման կետ, և ես կբարձրացնեմ Երկիրը»: Լեգենդն այս բացականչությունը վերագրում է Արքիմեդին՝ հին աշխարհի հանճարեղ մեխանիկին, որը հայտնագործել է մեխանիկայի օրենքները: Ըստ Պլուտարքոսի՝ Արքիմեդն իր ազգական ու բարեկամ Հիերոնին՝ Սիրակուզայի թագավորին, հայտնել է, որ կարելի է շարժել ցանկացած բեռ, և եթե մի ուրիշ Երկիր լիներ, ապա ինքը կանցներ նրա վրա և տեղից կշարժեր մեր Երկիրը: Արքիմեդը գիտեր, որ չկա այնպիսի բեռ, որը հնարավոր չլինի բարձրացնել ամենաթույլ ուժով, եթե օգտվենք լծակից: Բայց եթե հին աշխարհի մեծ մեխանիկն իմանար, թե ինչքա՛ն վիթխարի է երկրագնդի զանգվածը, հավանաբար կզսպեր իր հպարտ բացականչությունը:

/«Հետաքրքրաշարժ ֆիզիկայից»/

📖 Շ-5. & Ա. Առանձնացնել առդրությամբ կապակցված լրացում-լրացյալները:

❖ Բ. Շարունակել և ավարտել բանաստեղծական քառատողով:

Մարդն ու երազանքներն անբաժանելի են, ինչպես անբաժանելի են մարմինն ու առողջ հոգին: Մեր երևակայությունն օժտված է մի հրաշալի ընդունակությամբ. նրա թռիչքն անսահմանափակ է՝ տիեզերական թռիչքներ և համաշխարհային տարածությունների նվաճում, մետաղները ոսկի դարձնող՝ փիլիսոփայական քար, կյանքի հավերժություն և մշտական ջահելություն... Իրականացված երազանքը նոր մեկնարկային հրապարակ է դառնում մեկ այլ՝ առավել խիզախ, հոյակապ և հանդուգն երազանքի համար: Որոշ երազանքներ արագ են իրականանում, մյուսների իրականացման համար պահանջվում են ամիսներ, տարիներ, տասնամյակներ..., իսկ

երբեմն էլ՝ դարեր /հարյուրամյակներ/: Կան մասնավոր երազանքներ, կան նաև ողջ մարդկությանը վերաբերող երազանքներ... /Ն. Աղաջանյան/

☑ Գ. Գրել՝ ա/ ձեր մասնավոր երազանքների մասին.

բ/ ողջ մարդկությանը վերաբերող երազանք/ներ/ի մասին:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

🕮 Շ-6. Պատասխանել:

ա/ Բառակապակցությունը կարո՞ղ է միաբառ լինել:

բ/ Կապերը, շաղկապները, վերաբերականները բառակապակցության անդամնե՞ր են:

գ/ Բառակապակցության անդամները ստորադասակա՞ն հարաբերության մեջ են, թե՞ համադասական:

դ/ Բառակապակցությունը նախադասության մե՞կ անդամի դեր է կատարում, թե՞ մեկից ավելի:

🕮 Շ-7. Ա. Բերված բառային կապակցություններից ընտրել բառակապակցությունները:

& Բ. Բացատրել բառի և բառակապակցության, նախադասության և բառակապակցության միջև եղած տարբերությունները:

❶	❷	❸
Դարպասի մոտ:	Ցյուն է գալիս:	Ջավակներից երրորդը:
Ցայն տալ:	Այդքան քիչ:	Խոտերի մեջ:
Անդորր ու խաղաղ:	Հայրենի աշխարհ:	Եկան ու տեսան:
Խորհրդավոր շշունջ:	Ոսկեգույն արև:	Լուսացավ:
Միտք անել:	Գարուն է:	Գուրգուրանքի կարոտ:
Գրական թերթ:	Քույր և եղբայր:	Դանայան տակառ:
Մոտավորապես այդքան:	Քաղցր ժպիտ:	Այդ բոլորը:
Քթի տակ մռմռալ:	Մայր մեղու:	Նիրհող լեռնագագաթներ:

🕮 Շ-8. Ա. Բ. Ընդգծված բառերի իմաստն արտահայտել բառակապակցություններով՝ ուշադրություն դարձնելով կազմիչ բաղադրիչների շարահյուսական հարաբերություններին:

Ազգ էր բնաջնջվում. այն էլ ի՜նչ ազգ. ....եղջրավորների մեջ եղնիկն էր հալածվում <u>արնաքամ</u>, աստղերի մեջ <u>լուսաստղն</u> էր <u>ամպախեղդ</u> լինում, պտղածուների մեջ՝ <u>խաղողենու</u> հետ կարող եմ համեմատել, քանզի <u>եղեռնահար</u> ազգն իմ յուր թվով կարճ է, ինչպես խաղողենու <u>ծառորթատունկը,</u> բայց էությամբ՝ <u>մեղրասաղեր</u>, <u>ոգելույսով</u>՝ գինի... ես չեմ կաղապարում <u>ողբերգատողերի</u>՝ թաղման <u>տխրաթափորի</u> նմանվող արցունքների <u>զորախմբերը</u>: Ես երգ չեմ հեկեկում, ոչ էլ պոեմ է <u>կշռույթավոր</u>, վեպի <u>առասպելալուխներ</u> էլ չեն սոքա.... ես չգիտեմ՝ ինչ են այս իմ հառաչանքների <u>մթնայույս</u>, <u>հուշախորհրդախոր</u>, <u>զարհուրատեսիլ</u> անտառները. այստեղ դուք մեղք մի փնտրեք, ո՛վ դուք <u>միայլաներ</u>: Այս իմ մրմունջների <u>մարգարտաշարերում</u> մի՛ փնտրեք չափ ու ձևը ձեր կարծեցյալ

մոդեռնականի... Այստեղ խոցված ու խաչված ժողովրդի սիրտն է. այստեղ եղեռնապուրծ ազգի մնացյալ փրկվածների անեծքի հեծքն է անչափելի, մրմունջն է, ...խոյանքն է, պահանջն է աննահանջելի... ես ահեղ դատաստանամատյանն եմ արցունքաշարով որմնաշարում... Ես ա՛յս եմ գրի առնում հայոց արցունքի և ծովացյալ արյան մելանով... Սա հրաբուխն է այն զոհասրտերի, որոնք չկարողացան լռությանն ընդդեմ ժայթքել, աշխարհի լռության տողը ծանր լինելու ժայռե պատճառով... Մրմու՛նջն է անչափելի, տվայտաշու՛նչն է անչափելի, ատամնակրճտու՛մն է անչափելի, դիալեռնե՛րն են հայոց անչափելի. հայոց եղե՛ռնն է անչափելի. անարդարություններ՛ն են անչափելի:

/Հ. Շիրազ/

Շ-9. Դուրս գրել բառակապակցությունները՝ ուշադրություն դարձնելով նրանց ձևաիմաստային արտահայտությանը: Առանձնացնել երկանդամ և բաղադրյալ բառակապակցությունները, նրանցում՝ գերադաս անդամը՝ × նշանով, ստորադասը՝ ^ նշանով: Ուշադրություն դարձնել երկանդամ այն բառակապակցություններին, որոնց կազմում ընդգրկված են շարահյուսական առումով անբաժանելի բառային կապակցություններ:

Չինական այբուբենը շատ բարդ է. այն ավելի շուտ բառարան է, քան այբուբեն, պահանջում է մի քանի տարի՝ լավ սովորելու համար: Քչերին է հաջողվում կատարյալ գրագետ լինել: Դրա համար այժմ չինացիներն աշխատում են պարզեցնել հիերոգլիֆները...

Չինացիները հիմնականում խոսում են յոթ բարբառով, որոնք բոլորն էլ կոչվում են չինարեն: Մի բարբառով խոսողը մյուսի լեզուն չի հասկանում, բայց երբ մեկը գրում է, մյուսը կարողանում է կարդալ և հասկանալ: Դրա գաղտնիքն գրի՝ հիերոգլիֆի մեջ է: Հիերոգլիֆը՝ չինական այբուբենի «տառը», մեծ մասամբ բառի, երբեմն նույնիսկ նախադասության իմաստ ունի: Այն գծանկար է, որի վրա ընդհանուր գծերով տրված է որևէ առարկայի, գործողության կամ գաղափարի խորհրդանիշը: Կարելի է առանց չինարենի հնչյունական համակարգը իմանալու, միայն սովորելով հիերոգլիֆների իմաստները, կարդալ չինարեն և հասկանալ, ճիշտ այնպես, ինչպես թվաբանական նշանները հասկանալի են բոլոր ազգերի համար:

/Ըստ Գ. Պարտիզյանի/

Շ-10. Տրված բառակապակցությունների գերադաս և ստորադաս եզրերը լրացնել ստորադաս անդամներով:

Ճառագայթների խրձեր, շիկնած այտեր, արտասվող ամպ, հալվող աստղեր, դայլայլներից արթնանալ, անձայն արտասվել, թափառել պուրակներում:

Գ Շ-11. Ա. Խմբավորել բառակապակցությունները՝
ա/ ըստ բաղադրիչների կապակցելիության սերտության աստիճանի /ազատ և կայուն բառակապակցություններ/.
բ/ ըստ գերադաս բաղադրիչի խոսքիմասային պատկանելության /գոյականական, ածականական, բայական, մակբայական, դերանվանական.../.
գ/ ըստ բաղադրիչների քանակային կազմի:

Անսահման հեռու, երկու քայլ առաջ, հին-հին դարեր, արձանի նման անշարժ, փոքր-ինչ գունատ, 5 օր չքնել, տեղաշարժել երկրագունդը, յոթմղանոց երկարաճիտ կոշիկներ, մարդկության մեքենայակլան ստրուկներ, մարմինների անկման հանելուկ, բնաջնջված հրեշներ, նյութի ատոմամոլեկուլային կազմություն, ժամացույցի սլաքին հակառակ, ներդաշնակ փոփոխության լարման աղբյուր, ցավին անտարբեր, ծծմբական թթու, գոհար աստղեր, խելքից պակաս, հազիվ ընթեռնելի, երիցս նզովյալ, մոտավորապես երեսուն, համարյա բոլորը, հանգամանորեն բացատրել, գրեթե ոչինչ, հանդիպելիս գլխարկը հանել, գտնել ալիքի տարածման արագությունը, առաջարկել մազի հաստությունը չափելու եղանակ, փորձնականորեն հաստատել Մաքսվելի վարկածը, դավին անտեղյակ, աններդաշնակ էլեկտրական տատանումների ներդաշնակ վերլուծություն, Արարատի նման ճերմակ գագաթ, փոթորիկ մի բաժակ ջրում, երեք անգամ դանդաղ, լույսի քվանտային տեսություն, քերականորեն ճիշտ, ծայրահեղ վախկոտ, ծաղրի առարկա դառնալ, չափազանց ուշ:

& Բ. Դուրս գրել երկանդամ բառակապակցությունները և լրացնել հետևյալ աղյուսակը՝

Բառակապակցության ստորադաս անդամի քերականական նշանակությունը	օրինակներ
1. առարկայի հատկանիշ	
2. առարկայի պատկանելություն	
3. մասի և ամբողջի հարաբերություն	
4. նյութի, բաղկացության հարաբերություն	
5. գործողության հատկանիշը	
6. այն առարկան, որի հետ կապված է գործողությունը	
7. գործողության հանգամանքներ	
8. հատկանիշի աստիճանը	
9. հատկանիշի պատճառը	

& Գ. Ընդգծել բազմաբաղադրիչ /ոչ երկանդամ/ բառակապակցությունների նվազագույն երկանդամ կազմիչները և շարունակել լրացնել աղյուսակը:

🕮 Շ-12. & Կազմել բառակապակցություններ հետևյալ կաղապարներով՝
ա/ գերադաս անդամ + ստորադաս անդամ.
բ/ ստորադաս անդամ + գերադաս անդամ.
գ/ գերադաս անդամ + 1-ին ստորադաս անդամ + 2-րդ ստորադաս անդամ.
դ/ բառակապակցությամբ արտահայտված ստորադաս անդամ + գերադաս անդամ.
ե/ գերադաս անդամ + բառակապակցությամբ արտահայտված ստորադաս անդամ.
զ/ բառակապակցությամբ արտահայտված գերադաս անդամ + ստորադաս անդամ.
է/ բառակապակցությամբ արտահայտված գերադաս անդամ + բառակապակցությամբ արտահայտված ստորադաս անդամ:

🕮 Շ-13. Լրացնել նախադասությունները՝ կետերի փոխարեն գրելով բազմանդամ բառակապակցությամբ արտահայտված լրացումներ:
1. ▯ գիշերը ▯ գունատվեց:
2. ▯ կապտին էր տալիս ▯ լեռը:
3. ▯ ձորում ▯ հալվում էին ▯ ամպի ▯ ծվենները:
4. Առուները ▯ թավալվում էին ▯ դաշտերի մեջ:
5. ▯ հնչում էր ▯ քամու ▯ երգը:
6. Գիտական աշխարհը ▯ տագնապի մեջ էր:

🕮 Շ-14. Տրված բառերը խմբավորել ըստ խոսքիմասային պատկանելության և դրանք դարձնել բառակապակցությունների՝ ա /գերադաս անդամ. բ/ ստորադաս անդամ:
Հարձակում, անտեղյակ, ծանոթ, շատ, առաջ, մարդ, տխուր, փոքր, անմահանալ, հպարտ, հզոր, հնչել, արթուն, դեմ-դիմաց, արագ, հաճախակի, գագաթ, իմաստություն, մահ, ավելի, աղոթք, խոսել:

🕮 Շ-15. Ա. Վերհիշելով գրել Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը՝ առանձնացնելով գոյականական բառակապակցությունները:
Բ. Ընդգծել ոչ երկանդամ /բազմանդամ/ բառակապակցությունները և գրել նրանց նվազագույն արտահայտությունները:
☑ ❖ Գ. Փոխադրել այն՝ ոչ երկանդամ բառակապակցությունների փոխարեն գրելով նվազագույն /կամ միջուկային/ արտահայտությունները և համեմատել ստացվածը բնագրի հետ:

🕮 Շ-16. Ա. Դասդասել գոյականական բառակապակցություններն ըստ հետևյալ կաղապարների՝
ա/ ուղղական հոլովով գոյական + գոյական
բ/ տրական հոլովով գոյական + գոյական
դ/ ածական + գոյական
ե/ թվական + գոյական

գ/ բացառական հոլովով գոյական + գոյական *զ/ դերանուն + գոյական*
է/ գործիական հոլովով գոյական + գոյական *թ/ դերբայ + գոյական*
ը/ ներգոյական հոլովով գոյական + գոյական *ժ/ մակբայ + գոյական*

Վերադարձ արտասահմանից, ակամա զարմանք, մորուքով մարդ, արև աղջիկ, մոլեգնող քամի, արծաթ մազեր, հոգնած մարդ, արագ քայլ, առավել աղքատություն, քիչ հոգս, գալիք օր, գրելիք նամակ, վիճելու անհրաժեշտություն, թիթեղից տնակ, որոշ մարդիկ, արևմտյան կողմ, 100 տարի, իմ գիրքը, գլխարկով տղա, մեր երազանքը, յուրաքանչյուրի աշխատանքը, ամբողջ աշխարհը, նկարելու վարպետություն, կսկիծը սրտում, անցուդարձ փողոցում, ոչ մի շերտ, անակնկալ հանդիպում, ազգությամբ հայ, հրավառություն Երևանում, անընդհատ վեճ, ցանկացած պահ, ներդաշնակության օրենք, կախված գնդիկ, օդի դիմադրություն, գգվանքների մոխիր, ձգողականության օրենք, աղբյուրի ակ, ձայնային ալիք, իղձերի իրձ, նավթի լամպ, երջանկության ծառ, լռության երկինք, Պլանկի վարկած, գլանակի մնացորդ, ամպի ծվեն, պղնձից գնդիկ, գերնոր աստղեր, տրտմության ժանյակ, շարժում ատոմում, ծաղկի տոն, արևի գինի, անցում դուշտով, հացի պատառ, ցրում ճառագայթներով:

& Բ. Տրական հոլովով ստորադաս լրացում ունեցող գոյականական բառակապակցություններում որոշել գերադաս եզրի հետ ունեցած շարահյուսական հարաբերությունների բնույթը /հատկացուցչային, ծագման, հեղինակային, պատճառի, ենթակայական, խնդրային, փոխարինության, որոշչային, համեմատության, պարագայական նպատակի, միջոցի և այլն/:

📖 Շ-17. Կազմել և գրել բառակապակցություններ՝ որոշելով ստորադաս եզրի հոլովածը:

ա/ սիրել /ընկեր, հայրենիք, մայր, գիրք, քույր..../
բ/ գրել /նամսկ, բանաստեղծ, մատիտ, լսարան, արտասահման, հաճույք.../
գ/ հեռանալ /քաղաք, մեքենա, գիշեր, վախ, հայրենիք.../
դ/ մոտենալ /գնացք, մարդ, ըմբռնում, սեր, տհաճություն, սեղան.../
ե/ տնկել /ծառ, այգի, ինքնամոռացում.../
զ/ նայել /մայր, կինոնկար, հետաքրքրություն, լսարան.../
է/ անցնել /գետ, կամուրջ, վերջնագիծ, վախ, հարց.../
ը/ աշխատել / համալսարան, գիշեր, հրաման, փող, տհաճություն.../
թ/ պաշտպանել /հայրենիք, նվիրվածություն, թշնամի, զենք.../

📖 Շ-18. Ա. Գոյական ստորադաս անդամ ունեցող բայական բառակապակցությունները դասդասել ըստ արտահայտած խնդրային և պարագայական հարաբերությունների, օր.՝ գիրք կարդալ - **խնդրային,** սիրով կատարել – **պարագայական:**

& Բ. Որոշել բաղադրիչների կապակցման եղանակը:

Սենյակը զարդարել, բաժակով խմել, արտասուքով թրջել, նամակ գրել, ընկնել փոսը, ծառ տնկել, ախորժակով ուտել, մտքում պահել, ատել թշնամուն, վարդաջրով ցողել, հոգով թեթևանալ, կես ժամում հասնել, 5 օր գնալ, սիրով կատարել, ուղարկել հացի, մտքով սլանալ, գերվել երաժշտությամբ, պատրաստվել հարսանիքի, հավաքվել տնակում, կախարդվել հնչյուններով,

կասկածել ընկերոջը, երկինք սլանալ, ձանձրույթից հորանջել, անցնել գետով, հարվածել գնդակին, գարնանը ծաղկել, գիշերով հեռանալ, քթի տակ փնթփնթալ, քարերից մաքրել, վերադառնալ քաղաքից, ուրախությունից պարել, թաքնվել բարեկամներից, վշտից խելագարվել, զգուշանալ վտանգից, հրաժարվել պարգևից, ճաշից հետո վերադառնալ, քամու նման սլանալ:

📖 Շ-19. ❖ Տրված բառակապակցությունները փոխարինել հոմանիշ «ածական + գոյական» բառակապակցություններով: Ո՞ր դեպքերում են իմաստային տարբերություններ առաջանում:

ընկերոջ ժպիտ →	մրգով կարկանդակ →	աղվեսի հայացք →
արևի գինի →	սիրո նամակ →	ծերունու հեռատեսություն →
մորուքով մարդ →	լույսի շող →	ոսկուց մատանի →
Հայաստանի արև →	շերտավոր գաթա →	արծաթ գդալ →
մանկան ժպիտ →	ծուփքերով գլխաշոր →	փայտից տուն →

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

📖 Շ-20. Կարդալ ստորև բերված սահմանումները և բնութագրել նախադասությունը:

1. «Նախադասությունը ստորոգումով, հնչերանգային ավարտվածությամբ և բառերի կանոնավոր դասավորությամբ /կամ առանձին բառով/ ձևավորված լեզվական հաղորդակցման նվազագույն միավորն է» /Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն/:
2. «Նախադասությունը բառերի կամ բառի միջոցով հաղորդման մի այնպիսի միավոր է, որ ունի միանգամյա ստորոգում ժամանակի ու եղանակի միասնությամբ և հնչերանգային ավարտվածություն՝ հաղորդողի վերաբերմունքով հանդերձ» /Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու/:
3. «Բառերով արտահայտված յուրաքանչյուր ամփոփ միտք կոչվում է նախադասություն» /Գ. Սևակ/:
4. «Բառերի կապակցությունը կամ բառը, որն արտահայտում է ավարտուն միտք, կոչվում է նախադասություն» /Ս. Աբրահամյան/:

📖 Շ-21. Ինչպես է կոչվում այն նախադասությունը, որը՝

1. ունի միայն մի ստորոգում.
2. ունի երկու և ավելի ստորոգումներ.
3. կազմված է միայն ենթակայից և ստորոգյալից.
4. բացի գլխավոր անդամներից ունի նաև լրացումներ.
5. երկու գլխավոր անդամներից մեկը զեղչված է.
6. երկու գլխավոր անդամներն էլ բառային արտահայտություն ունեն.
7. ունի միայն մեկ կենտրոնական անդամ.
8. բայ -ստորոգյալը կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը ժխտական խոնարհմամբ է արտահայտված.
9. որի այս կամ այն անդամ/ներ/ը բաց է/են/ թողնված, բայց խոսքային հյուսվածքում ընկալվում է /են/:

🕮 Շ-22. Օգտվելով գծապատկերից /որը բերված է Խ. Բաղիկյանի և Ա. Պապոյանի գրքից/՝ փորձել բնութագրել նախադասությունը՝ նշելով նրա հիմնական հատկանիշները և քերականական կարգերը:



🕮 Շ-23. & Ա. Ստորոգումն արտահայտվում է՝

✍ 1. օժանդակ բայերով /երկու ժամանակներով, դեմքերով և թվերով/

✍ 2. բայի դիմաթվային վերջավորությունների միջոցով

✍ 3. վերացական բայերի միջոցով

✍ 4. միադիմի բայերով

✍ 5. հնչերանգով՝ անդեմ նախադասություններում:[1]

Կարդալ հատվածը և նշել յուրաքանչյուր նախադասության ստորոգման դրսևորման միջոցը:

Օրեցօր ժամանակի գույնն ու շունչը դառնում են օդի պես շարժուն, և մարդիկ օդի հետ շնչում են նաև ժամանակի բարդ մտածողությունը: Երկիր մոլորակը թենիսի առածգական գնդակի պես մատներին խաղացնող մարդու մտքի և հոգու հակասությունն ավելի խորն է: Հրթիռը տիեզերք ուղարկողն ամենաշատը կարիք ունի ջերմ մտերմության, անբասիր սիրո, հոգեկան անդորրի ու միասնության: Եվ Երկիր մոլորակ վերադարձող հրթիռը գոհունակություն է բերում մարդու մտքին, բայց ոչ զգացմունքներին: Իսկ այսօրվա մարդն էլ նույն մարդն է՝ նախամարդու նման միս ու արյունից, և իր զգացմունքներին հագուրդ ու գոհացում տալու համար նախամարդու չափ

---

[1] 1. «Խոսքի էությունը ստորոգումն է: Առանց ստորոգման խոսք չկա» /Մ. Աբեղյան/: 2. « Ստորոգում՝ ահա այն կախարդական գավազանը, որը սովորական բառին կամ բառակապակցությանը մի հատուկ կյանք ու էություն է ներշնչում՝ դրանք դարձնելով մտքի ձևավորման ու հաղորդակցման միջոց» /Մ. Ասատրյան/: 3. «Նախադասության էական կողմը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է... Նախադասությունը հանդես է գալիս որպես բայական բառակապակցություն + ստորոգման դրսևորման բոլոր միջոցները» /Գ. Ջահուկյան/ .../:

անզոր է: Ուրեմն հիմա որտե՞ղ որոնել մարդու երջանկությունը, տիեզերքու՞մ, լուսնի վրա՞: Ո՛չ, այս երերուն մոլորակի վրա: Դարձյալ մնում է մի բուռ հողի խորհուրդը, իսկ հինգ միլիարդից՝ միայն մեկ մարդու ներաշխարհը: Աշխարհը շատ բան է կորցրել և շատ բան է գտել: Հարկավոր է լիովին գտնել աշխարհի գտածը և մասունքի պես բաշխել բոլորին: Եվ չպետք է մոռանալ, որ երկինքը բոլորինն է, մինչդեռ երկրի վրա սահմաններ կան:

/Ըստ Մ. Գալշոյանի/

Ը-24. ❖ Կարդալ նախադասությունները և ցույց տալ յուրաքանչյուր կառուցվածքային տիպի նրբիմաստային և հուզաարտահայտչական յուրահատկությունները, նաև ոճական-կիրառական տարբերությունները:

1. **ա/** Ես անպայման պիտի գնամ: **բ/** Ես չեմ կարող չգնալ:
2. **ա/** Եվ ի՞նչ չի մոռացվում աշխարհում: **բ/** Ամեն ինչ մոռացվում է աշխարհում:
3. **ա/** Տղան հանդիպեց հորը: **բ/** Տղան հանդիպեց հոր հետ:
4. **ա/** Ծաղիկները չպոկե՛ք: **բ/** Ծաղիկները մի՛ պոկեք:
5. **ա/** Անընդհատ անձրևում է: **բ/** Անընդհատ անձրև է գալիս:
6. **ա/** Նա չի կարող չխոսել: **բ/** Նա պիտի խոսի:
7. **ա/** Ո՞վ կարող է տարվա եղանակները փոխել: **բ/** Ոչ ոք չի կարող տարվա եղանակները փոխել:
8. **ա/** -Դու ե՞րբ ես եկել: - Երեկ: **բ/** Ես երեկ եմ եկել:
9. **ա/** Ինչքա՜ն եմ սիրում նրան: **բ/** Շատ եմ սիրում նրան:
10. **ա/** Ինչպիսի՜ անհարմար վիճակ: **բ/** Շատ անհարմար վիճակ էր:
11. **ա/** Այստեղ ինչե՞ր կան: **բ/** Այստեղ ինչե՜ր կան:
12. **ա/** Չէիր ձանձրանա դու գիտությունից, եթե ունենայիր թշնամիներ մեծ: **բ/** Կձանձրանայիր դու գիտությունից, եթե չունենայիր թշնամիներ մեծ:

Ը-25. & ❖ Դուրս գրել ժխտական նախադասությունները /բաղադրիչ նախադասությունները/ ու վերածել դրականի, և հակառակը՝ դրական նախադասությունները՝ ժխտականի: Համեմատել և հակադրել. ձևաբանական ի՞նչ ցուցիչներով են հակադրվում ժխտական կառուցվածքի նախադասությունները դրականներին: /Հիշեցնե՛ք՝ միշտ չէ, որ հաստատումն արտահայտվում է դրական կառուցվածքի նախադասությունների միջոցով, իսկ ժխտումը՝ ժխտական նախադասությունների միջոցով/:

● «Որդյակ,- Ջոնին է դիմում ծերունի Ջասպեր Մեք-Գրիգորը,- երբ դու հասնես իմ տարիքին, կիմանաս, որ կարևորը երգերը չեն, էականը հացն է»: Եվ ծերունուն չի կարելի չհավատալ ոչ լոկ այն պատճառով, որ նա այս մտքին է հասել երկարատև և փորձաշատ կյանքից հետո, այլև այն պատճառով, որ ինքներս ենք եզրակացնում նույնը...

Չի կարելի ահավոր չհամարել մի աշխարհ, ուր մարդը զրկված է իր ցանկացած ձևով մեռնելու իրավունքից էլ: Ծերուկ Մեք-Գրիգորը պարտավոր է մեռնել ոչ այլուր, քան ծերանոցում: Այս էլ ոչինչ: Նա միաժամանակ շեփորահար է, և իբրև սրտակտոր ճիչ է հնչում նրա խոսքը. «Նրանք չե՛ն

թողնում, որ ես նվագեմ»: Այսքանից հետո մի՞թե նա իրավունք չունի եզրակացնելու, որ «երգե՛րը չեն կարևոր»:

Ոչ միայն իր մաշկի վրա, այլև իր սրտի թաղանթով նույն ցավն է զգում նաև բանաստեղծ Բեն Ալեքսանդրը: «Հա՛ց: Հա՛ց,- բացականչում է նա: Աստվա՛ծ իմ, որքա՛ն վայրագորեն է հացը մաքառում սրտի հետ»: Եվ ո՛չ նա, ո՛չ էլ մեկ ուրիշը չեն կարող գոհացուցիչ պատասխան տալ նրա այն հարցին, որ նույնպիսի մի ճիչ է հոգու. «Ինչո՞ւ նրանք բարձրաձայն փառաբանում են ամեն բան, բացի այն բանից, որ կատարյալ է»:

Բայց մի՞թե մարդիկ իսկապես կարիք չունեն արվեստի, մի՞թե հացն իրոք այնքան է կարևոր, որ երգերին զրկում է կարևորությունից. մի՞թե հացի ու սրտի բանավեճի մեջ սիրտը չունի ոչ մի զորեղ կռվան:

Եթե իր այս հարցին բացասական պատասխաններ՝ Սարոյանը Սարոյան չէր լինի, որովհետև հերքած կլիներ իր իսկ փիլիսոփայությունը... /Պ. Սևակ/

● Եղբայրնե՛ր, եկեք շիրիմ չորոնենք,
Չխորհե՛նք, թե ի՛նչն ինչպե՞ս է եղել, -
Զանգում է նրան խեղդել չարանենգ,
Թե՝ Մասիս լեռան լանջին է մեռել...
Ինչո՞ւ լուռ կառչենք մահվան ճամփեքին,
Երբ Աբովյանը ո՞ղջ է մնացել:
Մահվան ճամփեքին թիվ-համար չկա՛,
Անմահությունը միայն մե՛կն ունի,-
Որ ծնվել է նա՝ այս ճո՞ճքն է վկա,
Իսկ մահ վկայող գերեզման չունի՞
Դու չե՞ս հավատում, նայի՛ր, բարեկամ,
Քո առջևն է ողջ կյա՞նքն Աբովյանի...
Ամե՞ն, ամե՞ն ինչ կա նրա կյանքից,
Լոկ մի՞ բան չկա՝
Չկա շիրմաքա՞ր...
Էլ ինչո՞ւ սեղմենք նրա կյանքը մեծ
Օրորոցի ու շիրմի արանքում...
Ծնվե՛լ ու մնալ հավիտյան անմե՞ռ -
Ո՞վ չի երազի մեզանից կյանքում...
/Գ. Էմին/

Ա Շ-26. Կարդալ և բնութագրել յուրաքանչյուր նախադասության կառուցվածքը. ի՞նչ դեր ունեն ստորոգումը, հնչերանգը և շարադասությունը նախադասության ձևավորման գործում:

Ճշտապահությունը Աճառյանը մարդու նկարագրի ամենաէական հատկանիշներից մեկն է համարում, նրա հաջողության գրավականը, աշխատասիրության ուղեցույցը, և ինքն էլ եղել է ճշմարտության չափանիշ... Ուսանողների պատմելով՝ նա երբեք դասերից չի բացակայել, նույնիսկ մեկ րոպեով չի ուշացել:

- Եթե ես դասից ուշանամ թեկուզ երկու րոպե, իմացեք, որ արևը կանգ է առել, **երկրագունդը դադարել է պտտվելուց,**- կատակով ասել է նա:

Եվ ահա մի օր նա երկու րոպե ուշացումով է մտնում լսարան:

- Տղե՛ք, արևը երկու րոպե կանգ է առել, - ասել է տղաներից մեկը:

-Ոչ թե ես եմ կանգնեցրել արևը,- ասել է Աճառյանը,- այլ Մանուկ Աբեղյանը /Դասի գալիս հանդիպել է Մ. Աբեղյանին.../...

Իսկ Աճառյանի աշխատասիրությունը... Ի ծնե աշխատասեր Աճառյանը տանել չէր կարող ծուլությունն ու անբանությունը. դրանք համարում էր մարդու ամենամեծ դժբախտությունը, պակաս չարիք չէր համարում նաև հոռետեսությունն ու կյանքի դժվարություններից ընկճվելը, սարսափելի չէր սիրում նվնվացող մարդկանց...

Ժամանակի անիմաստ կորուստը նույնպես անհարիր էր համարում խելացի ու գիտությամբ զբաղվող մարդու համար... Ժամանակը խնայելու համար առաջարկում էր որոշ շաղակրատ մարդկանցից ազատվելու նպատակով բարեկամաբար հասկացնել նրանց, որ ինքը գործ ունի, աշխատելու է: Պատմում են, որ նրա տուն է գալիս մի կին՝ առանց զանգահարելու, և ուզում է ուղիղ 5 րոպե խլել նրա ժամանակից՝ ինչ-որ բան հարցնելու համար: Կինը ծեքծեքումներով 5 րոպեում հազիվ վերարկուն է հանում, հայելու առաջ մազերը հարդարում: Աճառյանն այդ ընթացքում, ժամացույցը ձեռքին, կանգնում է նրա կողքին, և հենց որ ժամանակը լրանում է, ասում է.

-Է՞հ, տիկի՛ն, Ձեր խնդրած հինգ րոպեն լրացավ, ես պետք է աշխատեմ:

Ասում է ու սուսուփուս նստում գրասեղանի առաջ:

«Գիտնականը պետք է ունենա պատասխանատվության ու գիտական բարեխղճության զգացում՝ նախ իր խղճի և ապա՝ ապագայի առաջ,- ասում էր նա ու ավելացնում,- ժամանակը խստագույն դատավորն է մարդկանց արարքների»: /Ըստ Խ. Բաղիկյանի/

Ա-27. & Նախադասությունների տիպաբանական վերլուծություն կատարել:

1943 թ., չունենալով ո՛չ սեփական կացարան, ո՛չ փող, Նյու Յորքի հյուրանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց «էլեկտրոտեխնիկայի պոետը»: Նա կյանքից հեռացավ լուռ ու աննկատ:

Նրա անվան հետ բազմաթիվ լեգենդներ ու առասպելներ են կապված: Մինչև այսօր էլ չեն դադարում վեճերը նրա գիտական ժառանգության շուրջը, որից, ավա՜ղ, շատ քիչ բան է պահպանվել: «Մեծ մենակյացը» դեռևս մանկության տարիներից իր ընդունակությունների խորհրդավորությամբ զարմացնում, անգամ վախեցնում էր իրեն շրջապատող մարդկանց: Մի անգամ նա մեծ դժվարությամբ կարողացավ տանը պահել իր հյուրերին, որոնք շտապում էին կայարան. ավելի ուշ հայտնի դարձավ, որ գնացքն աղետի է ենթարկվել: Նա տեսնում էր մթության մեջ...

1884 թ. մեկնեց Ամերիկա՝ Թոմաս Ալվա Էդիսոնի մոտ: Նյու Յորք հասավ՝ գրպանում ունենալով միայն 4 ցենտ և Էդիսոնին հասցեագրված մի նամակ. «Ես ճանաչում եմ երկու մեծ մարդկանց, որոնցից մեկը Դուք եք, երկրորդը՝ այս երիտասարդը»... Բայց նա հեռացավ Էդիսոնից: Սնանկացած գիտնականը անգամ հրաժարվեց Նոբելյան մրցանակից /տրվել էր իրեն և Էդիսոնին/, և այն ոչ մեկին չշնորհվեց...

Նրա մահից հետո էլ օրագրերի ու գծագրերի զգալի մասը առեղծվածային հանգամանքներում անհետացավ: Որտե՞ղ են դրանք. ինչպիսի՞ գաղտնիքներ են պարունակում... Ասում էին, որ կյանքի վերջին տարիներին նրան հաջողվել է «մահվան ճառագայթներ» ստանալ: Ասում էին նաև /ոչ անհիմն/, որ նրա լաբորատորիայում իբրև թե կործանարար զենք է ստեղծվել, և որ ամերիկյան կառավարությունը զենքը «հույժ գաղտնի» մակագրությամբ պահպանության է հանձնել:

Տեսլան՝ 20-րդ դարի ամենաառեղծվածային գիտնականներից մեկը, հավատացած էր, որ տիեզերքից ինչ-որ մեկի կողմից հաղորդվող ռադիոազդանշանները մարդիկ ի վերջո կվերծանեն, և խորհելով այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու մասին՝ գրում է. «Հանուն պատմական այս մեծ առաքելության, հանուն նրա, որ իրականանա այս հրաշքը, ես իմ կյանքը կտայի»:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՉԵՐԱՆԳԻ

Ռ Ը-28. Նախադասության հնչերանգային տեսակները բնութագրող կանոն-նախադասություններում Ա և Բ բաղադրիչ-նախադասությունների ուղղակի համակցումը ճիշտ չէ: Վերադասավորել դրանք և բնութագրել նախադասության տեսակներն ըստ խոսքի նպատակադրման և հնչերանգի:

1. Ա. Պատմողական են այն նախադասությունները, →
   ← Բ. որոնք արտահայտում են հարցում:
2. Ա. Հարցական են այն նախադասությունները, →
   ← Բ. որոնցով հաստատվում կամ ժխտվում է այս կամ այն իրողությունը:
3. Ա. Հրամայական են այն նախադասությունները, →
   ← Բ. որոնք արտահայտում են հիացմունք, կոչ, զարմանք, ցանկություն, մաղթանք:
4. Ա. Բացականչական են այն նախադասությունները, →
   ← Բ. որոնք արտահայտում են խոսողի կամքը, խնդրանքը, հրամանն ու առաջադրանքը որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու:

Ռ Ը-29. ❖ Ա. Առոգանությամբ կարդալ և ուշադրություն դարձնել յուրաքանչյուր նախադասության հնչերանգային ձևավորմանը: Նախադասությունների հնչերանգային ձևավորմանը բառային ու քերականական ի՞նչ միջոցներ են օժանդակում:

❖ Բ. Առոգանության նշանների առավել օգտագործումը բանաստեղծական ի՞նչ նպատակներ է հետապնդում:

Ասում են՝ թե մի բան կա լոկ,
Որ առանձնապես ու մեն-մենակ են սովորում՝
Գիտությունը տառապանքի...
Ու կսկիծն է տառապանքի հովեր առնում:
Ա՜խ, տե՛ր Կսկիծ, հարկավոր չէ՞,
Բավական է, տե՛ր, ողորմյա՜:
Այս դժվարին գիտության մեջ
Հմտացել եմ ես շա՜տ վաղուց,
Ու չլիներ թե ինքնածին բարությունս,
Կարող էի ի՜նքս դառնալ
Ուսուցչապետն այս գիտության,
Որ առանձնապես ու մեն-մենակ են սովորում:

Ա՜խ, տե՛ր Կսկիծ,
Այսքանն արդեն բավակա՜ն է,
Է՛լ ավելին հարկավոր չէ՞, տե՛ր, ողորմյա՜
Չե՜մ ուրանում.
Ես քո նախկին ու մշտական հպատակն եմ.
Ուրեմն այլևս ինչի՞ համար
Ուժը փորձել հպատակի հլու մեջքին:
Ինչի՞ համար, տե՛ր, ողորմյա՜
Ա՜խ, տե՛ր Կսկիծ,
Քո բարձունքից ամենազոր
Մի պահ անսա՛ հեզ ու հլու հպատակիդ.
Դժվա՜ր բան է մարդ լինելը,
Դժվար է, տե՛ր... /Պ. Սևակ/

📖 Շ-30. Ա. Կարդալ և վերլուծել տեքստն ըստ կազմիչ նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների:

Բ. Առանձնացնել պատմողական նախադասությունները և բնութագրել դրանք ըստ՝ ա/ խոսողի նպատակադրայնության. բ/ կառուցվածքային առանձնահատկությունների. գ/ հնչերանգային յուրահատուկ դրսևորումների. դ/ ոճական գործառության /ո՞ր ոճերում է գործառվում/:

Գ. Յուրաքանչյուր պատմողական նախադասություն /կամ բարդ նախադասության բաղադրիչ նախադասություն/ ընդգծել ստորոգյալը և բացատրել ձևակազմությունը: Եզրակացնել՝ ո՛ր եղանակների բայերն են դառնում նման նախադասությունների ստորոգյալ:

Հալլեյը ոգևորված է. նա գնում է Նյուտոնի մոտ: «Գիսավորը կարող է շարժվել նաև փակ՝ էլիպսաձև ուղեծրով, ես գտել եմ պարբերական գիսավոր»: Նյուտոնը լսում է սառն անտարբերությամբ...

1704 թվական... Հալլեյը հոգնած տեսք ունի, բայց փույթ չէ, նա ավարտել է իր հաշվարկները: Ու ներկայացնում է Թագավորական ընկերությանն իր կյանքի ամենախիզախ հայտարարությունը. «Այ՛ս գիսավորը կվերադառնա 1758թ. սկզբին: Եվ եթե նա վերադառնա, ապա այդ դեպքում մնացած գիսավորները նույնպես պետք է վերադառնան»: Նա կանգ առավ 76 տարվա վրա՝ որպես այդ գիսավորի պարբերության առավել հավանական մեծություն: Այդ ժամանակ Հալլեյը 48 տարեկան էր: Կապրի՞ նս 54 տարի, որպեսզի սեփական աչքով տեսնի ու համոզվի իր հայտնագործության ճշտության մեջ. նա չէր կարող հուսալ: Բայց առանց դրա էլ նրա վաստակը մեծ էր: 1720 թ. Հալլեյին ընտրեցին «թագավորական աստղագետ» և աստղադիտարանի տնօրեն՝ ցմահ: Նա մահացավ 86 տարեկան հասակում կաթվածից՝ մինչև վերջ էլ համոզված լինելով, որ այդ գիսավորը՝ ի՞ր գիսավորը, կվերադառնա: Կվերադառնա՞ Կվերադառնա՞

Վերադարձա՛վ...

Եկավ բաղձալի օրը. հաստատվեց Հալլեյի փայլուն կանխատեսումը:

Հետո, շա՜տ հետո մարդկության մշակույթի գանձարան կմտնի այդ հրաշալի անունը՝ «Հալլեյի գիսավոր»: Ի՞նչ իմանար բազմաչարչար Հալլեյը, որ առջևում է հրթիռների ու արբանյակների դարաշրջանը: Եվ մի՞թե կարող էր ենթադրել, որ մեր օրերում նրա գիսավորի սպասվելիք այցը երախտապարտ մարդկությունը կդիմավորեր արբանյակների մի ամբողջ էսկորտով:

Դ. Ընտրել 3-4 պատմողական նախադասություն և վերածել հարցականի՝ նշելով կատարված փոփոխությունները:

Ե. Դուրս գրել այն նախադասությունը, որը համապատասխանում է տրված կաղապարին՝

1.

Ո՞վ – ի՞նչ է անում – ինչպիսի՞ – ինչպե՞ս:

2.

Ե՞րբ – ո՞ւմ – ի՞նչ արեցին – ի՞նչ— և – ինչի՞ – ի՞նչ – ինչպե՞ս:

🕮 Շ-31. Քանի՞ հարց կարելի է տալ յուրաքանչյուր պատմողական նախադասության համար. գրել դրանք՝ հիմք ընդունելով «անդամների թիվ + 1» կաղապարը:

❶ «Մեդիչեյան աստղերի» լուրը կայծակի արագությամբ տարածվեց Եվրոպայի բոլոր ծայրերում:

❷ Նյուտոնի միտքն ու զգացմունքներն ուղղված էին դեպի երկինք, դեպի տիեզերական գաղտնիքները:

❸ Տիեզերքի ներդաշնակությունն ունկնդրող Էյնշտեյնը չէր կարող ներդաշնակություն չորոնել նաև մարդկային կյանքում:

🕮 Շ-32. Կազմել հարցական նախադասություններ, որոնք գործածվում են՝
ա/ չիմացածը իմանալու նպատակով.
բ/ ենթադրությունը որոշակիորեն իմանալու նպատակով.
գ/ այս կամ այն գործողությունը կատարելու հորդոր, խնդրանք արտահայտելու նպատակով.
դ/ որևէ երևույթից, գործողության կատարումից դժգոհություն արտահայտելու նպատակով.
ե/ հռետորական նպատակով.
զ/ զարմանք արտահայտելու նպատակով:

🕮 Շ-33. Կազմել 3-ական նախադասություններ, որոնք արտահայտում են՝
ա/ բուն կամ հավաստիական հարցում /այս դեպքում խոսողը ցանկանում է իր հարցի պատասխանը իմանալ, տեղեկություն ստանալ իր չիմացածի մասին/.
բ/ հռետորական /կամ ճարտասանական/ հարցում /այս դեպքում խոսողը հարցադրումը կատարում է ոչ թե պատասխան ստանալու նպատակով, այլ ցանկանում է ունկնդիրների ուշադրությունը հրավիրել ասույթի միջուկի վրա/.
գ/ լրացական հարցում /այս դեպքում խոսողը ավելի է սաստկացնում իր հարցումը և կրկնակի հարցադրման միջոցով էլ ավելի է սրում հարցի բնույթը/:

🕮 Շ-34. Ա. Տրված նախադասություններում ընդգծել հարցում պարունակող միավորները և բացատրել հարցական նախադասությունների ձևակազմությունը, իմաստային նրբերանգները:

◆ Բ. Գրել տրված հարցերի ամենակարճ ու ամենաերկար պատասխանները և փորձել ներկայացնել պատասխան-նախադասությունների կառուցվածքը:

1. Որո՞նք են երկրագնդին սպառնացող 10 աղետները:
2. Ի՞նչ հայտնագործեց ռուս գիտնական Դ. Ի. Մենդելեևը:
3. Ի՞նչ անուն ստացավ Ռեզերֆորդի առաջարկած ատոմի կառուցվածքի մոլորակային մոդելը:
4. Առաջին արհեստական արբանյակը աշխարհի ո՞ր մասում է արձակվել:
5. Համաձա՞յն եք, որ սառը ջուրը ավելի արագ է մարում կրակը, քան տաքը:
6. Արդյո՞ք բնության մեջ թագավորում է միայն ոչնչացման, մահացման միտումը:
7. Մի՞թե Տիեզերքի զարկերակը գնալով թուլանում է:
8. «Մաքսվելի դև» մաթեմատիկական մոդելը Ձեզ ծանոթ է, այնպե՞ս չէ:

9. Որտե՞ղ և ե՞րբ և ո՞ւմ կողմից է լույս տեսել «Կարմիր գիրքը»:
10. Հայերեն «կարպետ», «խաչքար», «սատանա» բառերը չեն թարգմանվում, այո՞:

📖 Շ-35. Ա. Գտնել հարցական նախադասությունները, բացատրել նրանց օգտագործման նպատակը: Ձեր ընտրած նախադասություններում ընդգծել հարցում արտահայտող լեզվամիավորները:

Բ. Խմբավորել հարցական նախադասություններն ըստ հարցման նպատակի՝

ա/ բուն հարցական դ/ հռետորական հարցում
բ/ հարցական-հաստատական ե/ հարցական-հավաստիական
գ/ հարցական-ժխտական

Պասկալի փիլիսոփայական մտքի գլուխգործոցը նրա անավարտ երկն է՝ «Խորհրդածություններ կյանքի մասին»: Այն գրվել է համամարդկային ողբերգություն ապրող մարդու ամբողջ ներաշխարհով, Լև Տոլստոյի բնորոշմամբ՝ «գրվել է արյունով»: Պասկալը իրավունք է ձեռք բերում նայել մարդուն «բաց աչքերով»:

-Ո՞վ է և ի՞նչ է մարդը. ի՞նչն է կարևոր մարդու կյանքում:

-Ո՞րն է մարդու տեղը բնության մեջ:

-Մարդը ոչի՞նչ է անսահմանության մեջ: Մարդն ամեն ինչ է ոչնչության կողքին. մարդը մեծագույն հանելուկն է տիեզերքի: Ու տեղում է հարցադրումների տարափը: Ինչո՞ւ է ծնվում մարդը: Ինչպե՞ս է կարողանում համատեղել իր թուլությունն ու հզորությունը, վեհությունն ու չնչինությունը: Ինչո՞ւ, ի՞նչ մեղքի համար է մարդը դատապարտված անխուսափելի մահվան: «Այն, որ բնավ չգիտեմ, մահն է, որից չեմ կարողանում խուսափել: Ես չգիտեմ, թե որտեղի՞ց եմ եկել: Չգիտեմ նաև, թե ո՞ւր եմ գնալու»:

Կանցնի երկուսուկես դար, ու հեռավոր Տաիթիում մեկուսացած ու միայնակ Գոգենը կստեղծի իր հռչակավոր կտավը. «Որտեղի՞ց ենք մենք: Ո՞վ ենք մենք: Ո՞ւր ենք գնում մենք»:

«Գիտցիր ինքդ քեզ, ու դա կօգնի գտնելու ճշմարտությունը»: Շատ է մեծ պատահականությունների դերը մարդու կյանքում և պատմության մեջ: «Պատմությունը բոլորովին այլ ընթացք կստանար, եթե Կլեոպատրայի քիթը մի փոքր այլ ձև ունենար»,- նկատում է Պասկալն առանց հեգնանքի:

Կյանքի վերջին օրերին նա իր քրոջը՝ Ժիլբերտային, հանգստացնում էր՝ ասելով. «Հարկավոր չէ մահից վախենալ, չէ՞ որ մահը մեր ձեռքից կխլի մեղքեր գործելու մեր այդ դժբախտ հատկությունը»:

Ո՞րն է մարդու արժեքը, նրա գոյության իմաստը. այս անվերջ ու անծայրածիր տիեզերքում մարդը մի թույլ էակ է՝ դյուրաբեկ եղեգ, բայց՝ «եղեգ, որ մտածում է»: Եթե տիեզերքը համբառնար մարդուն կործանելու համար, միևնույն է, մարդը կմնար ավելի մեծ, ավելի բարձր իրեն կործանողից: Այստեղ Պասկալը հարազատ է մնում Դեկարտին. «Մտածում եմ՝ հետևաբար գոյություն ունեմ»:

Ուրեմն՝ «Ի՞նչ»: Ուրեմն՝ «Ինչպե՞ս ապրել»... /Ըստ Գ. Գուրզադյանի/

🕮 Շ-36. ◆ Ա. Կարդալ թևավոր խոսք-նախադասությունները, բացատրել նրանց արտահայտած նշանակությունը:

Բ. Ընդգծել բացականչական նախադասությունները և որոշել նրանց ձևավորման հիմնական միջոցները:

✓1. Էվրիկա՜ **/Արքիմեդի բացականչությունը/**

✓2. Բացվի՛ր, Սեզա՛մ: **/Սիմ-Սի՛մ/ /արաբական «Ալի Բաբան և քառասուն ավազակները» հեքիաթից/**

✓3. Եթե սարը Մուհամեդի մոտ չի գնում, Մուհամեդն է սարի մոտ գնում **/Խոջա Նասրեդինի առակներից/**

✓4. Եկա՛, տեսա՛, հաղթեցի՛: **/Հուլիոս Կեսարի խոսքը/**

✓5. Էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը... **/Աբաբեկ Խենկոյան/**

✓6. Լու՛յս, որքան կարելի է շա՛տ լույս... **/Ըստ Գյոթեի մերձիմահ խոսքի/**

✓ 7. Թերությունս իմ առավելությունս է: **/Հ. Պարոնյան/**

✓ 8. Ժամանակն իր շավղից դուրս է եկել: **/Շեքսպիր, «Համլետ»/**

✓9. Ի՞նչ իրավունք ունիս իրավունք ունենալու: **/Հ. Պարոնյան/**

✓10. Օ՜, աշխարհ, որքա՜ն փչացած ես դու: **/Նար-Դոս/**

✓11. Օ՜, ժամանակներ, օ՜, բարքեր... **/Ցիցերոն/**

✓12. Օձի պես իմաստո՛ւն եղեք, աղավնու պես՝ պարզամի՛տ: **/Աստվածաշունչ/**

✓13. Անգլիան հավերժական դաշնակիցներ ու թշնամիներ չունի. հավերժական են նրա շահերը:

🕮 Շ-37. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել բացականչական նախադասություններ, որոնցում բացականչականության կրողներն են՝ ա/ եղանակային տարբեր ժամանակաձևերի բայերը. բ/ հարցահարաբերական դերանունները. գ/ ձայնարկությունները. դ/ վերաբերականները. ե/ անորոշ դերբայը /անդեմ նախադասություններում/:

🕮 Շ-38. Ա. Բացատրել բացականչական նախադասությունների /բարդ նախադասությունների բացականչական բաղադրիչ-նախադասությունների/ իմաստային դրսևորումները:

Բ. Ընդգծել բացականչություն կրող լեզվամիավորները, բացատրել նրանց ձևակազմությունը:

1. Իսկ պատմության մեջ կան ժամանակներ, Երբ ով չի ստում՝ պիտի կործանվի՜ 2. Ամե՜ն ինչ շրջվեց, Տակն ի վեր եղավ, Եվ կարգի բերել չէր կարող ոչ որ. – Ինքը շրջողն իսկ չէ՛ր կարող էլ, չէ՜: 3. Գեթ լեզո՛ւն գործեր: Մինչդեռ մեր լեզո՜ւն... 4. Աղոթել նրան՝ Այն նոր աստծուն, Որ խոստումներից աչք իսկ չէր բացում, Բայց ողջը՝ այնտե՜ղ, Բայց ողջը՝ հետո՜, Եվ ոչի՜նչ՝ հիմա, Եվ ոչի՜նչ՝ ցածում: 5. Պետք էր, շա՜տ էր պետք ինչ-որ բան անել, Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս: 6. Սակայն Նա եկավ, որ Հոգի՛ դառնա, Շոշափվո՜ղ հոգի, Եվ անմե՜ռ հոգի... Սակայն Նա ծնվեց, որ Սնու՜նդ դառնա: Ծնվե՛ց, որ ծնե՜նք, Եղա՛վ, որ լինե՜նք, Եվ անմահացա՛վ, Որ անմահանա՜նք...7. Մաշտո՜ց... Այսինքը՝ Ա՛յր մի, որ ապացուցեց, Թե հրաշք չկա՜, Այլ կա լոկ կարի՛ք: Այսինքը՝ Ա՛յր մի, որ ապացուցեց Եվ կոչ է

անում ապացուցելու՝, Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում, Ուր վերջանում է ամե՞ն հնար... 8. Եվ մի ժողովու՞րդ, որ իր գոյությամբ հանապազօրյա հաց էր միշտ եղել մի հսկայական կայսրությա՞ն համար, մի ո՞ղջ ժողովուրդ մեռնում էր հիմա հանապազօրյա հացի՞ կարոտով... 9. Ու ես ո՞նց կուզեի, Ո՞նց կուզեիր և դու, Որ նա լիներ ի՛մը, Որ ինձ «հայրի՞կ» կանչեր, «Հայրիկ» այնպե՞ս կոչեր, Այնպե՞ս գոչեր, Որ աշխա՞րհը լսեր հոր անունը: /Պ. Սևակ/

📖 Շ-39. Ա. Կազմել հրամայական նախադասություններ, որոնք արտահայտում են՝

▶հրաման, կարգադրություն ▶պահանջ, դիմում ▶թույլտվություն
▶հանդիմանություն ▶կոչ ▶համաձայնություն
▶հորդոր, խնդրանք, աղերսանք ▶արգելք, մերժում ▶ցուցում
▶հրավեր, առաջարկ ▶առաջադրանք ▶պատգամ, խորհուրդ

Բ. Որո՞նք են նման նախադասությունների ձևավորման ամենակարևոր հատկանիշները:

📖 Շ-40. Ա. Ընդգծել հրամայական բայաձևերը, նշել նրանց ձևաբանական հատկանիշները:

❖ Բ. Ընդգծված բայաձևերն արտաբերել մեկ հրամայական տոնայնությամբ, մեկ հորդորական և բացատրել արտասանական-հնչերանգային-իմաստային տարբերությունները: Ձեր կարծիքով բանաստեղծն ի՛նչ տրամադրությամբ է իր մտքերը թղթին հանձնել: Ինչո՞ւ հրամայական եղանակի բայերը շեշտադրված չեն. ձևաբանական-արտասանական նորմը՝ «հրամայական եղանակի բայաձևերը միշտ շեշտ են կրում», բանաստեղծական դաշտում ինչո՞ւ է անտեսվել:

Լու՛յս առավոտի,
Դու, որ նման ես օրհնության,
Իջիր աշխարհին, իջիր լիաբուռ,
Իջիր ու թաքուն փոխվիր բարության,
Հասկ դարձիր,
Փեթակ
Ու լեռան աղբյուր...

Եվ այսպես դանդաղ,
Այսպես տխրորեն մխալու տեղակ
Տուր ինձ մի վսեմ, անմոխիր այրում,
Կայծակով խոցված
Եվ արտասուքի ցողով ջրդեղված
Ինձ այն բախտը տուր,
Որից հրաշք է ծնվում աշխարհում...
Լու՛յս առավոտի,
Երբ նա արթնանա, թառիր կոպերին
Եվ փովիր վրան իբրև օրհնություն մի
արևավոր...

Ու լուռ շշնջա, որ ների հոգում,
Քնքշորեն ների
Սերն իմ ուշացած, սերն իմ մեղավոր:
/Ա. Դավթյան/

🕮 Շ-41. ◆ Ա. Կարդալ թեավոր խոսք-հրամայական նախադասությունները: Բացատրել նրանց ոճական-կիրառական յուրահատկությունները. ի՞նչ առանձնահատկություններով են հակադրվում պատմողական և հարցական նախադասություններին:

Բ. Ընդգծել հրաման արտահայտող բառերը: Առանձնացնել նրանք, որոնցում հրամանն արտահայտվում է լրացուցիչ միջոցներով /ո՛չ հրամայական եղանակի ձևերով/:

✓1. Ահա թե որտե՛ղ է թաղված շան գլուխը: /Ըստ գերմանական ավանդության/
✓2. Ահա Հոռոդոսը, ցատկի՛ր: /Եզոպոս, «Պարծենկոտը»/
✓3. Աճեցե՛ք և բազմացե՛ք: /Աստվածաշունչ/
✓4. Այսպե՛ս են կորչում մեծությունները: /Գ. Մահարի/
✓5. Անցի՛ր, սև՛ ամպ, դու իմ սրտից, բացվի՛ր, երկինք կապուտակ: /Հովհ. Հովհաննիսյան/
✓6. Արևս մի՛ ծածկիր: /Դիոգենեսի պատասխանը Ալ. Մակեդոնացուն/
✓7. Արի՛, արի՛, անբախտ մորքուր: /Հ. Թումանյան, «Կիկոսի մահը»/
✓8. Բարկացե՛ք, բայց մի՛ մեղանչեք: /Աստվածաշունչ/
✓9. Ես ո՛չ առաջինն եմ, ո՛չ էլ վերջինը: /Պուշկին, «Եվգենի Օնեգին»/
✓10. Կա՛մ վահանով, կա՛մ վահանին: /Պլուտարքոս/
✓11. Կա՛նգ առ, ո՛վ ակնթարթ, ինչ գեղեցի՛կ ես դու: /Գյոթե, «Ֆաուստ»/
✓12. Կա՛ ոչ, կա՛ ոչ, ա՛յ ոչ ու փուչ: /Հ. Թումանյան, «Իմ ընկեր Նեսոն»/
✓13. Օ՜, բախտ իմ դժխեմ, ինչո՞ւ ծնվեցի, որ հենց ե՛ս ուղղեմ: /Շեքսպիր/

Գ. Աստվածաշնչից դուրս գրել 10-15 հարցական և հրամայական նախադասություններ:

🕮 Շ-42. ◆ Ա. Կարդալ Պ. Մնակի «Եռաձայն պատարագից» ընտրված նախադասությունները, ուշադրություն դարձնել ընդգծված բառերի հնչերանգային ձևավորվածությանը և փորձել մեկնաբանել հեղինակային ոճաարտահայտչական-հնչերանգային յուրօրինակությունը:

1.Նրանք՝ բյու՛ղբ-բյուղբո՛ղ, նրանք՝ ա՛ղզ-ազի՛նք, և չվախճանվեց նրանցից ոչ ոք իր անկողնու մեջ մահով բնական: 2. Եվ լցվել էին բոլոր բանտերը մարգարեներով՝ խոսքի՛ ու երգի՛, մտքի՛ ու ձեռքի՛, հու՛յս ու հավատքի՛ մարգարեներով... 3. ...Այս ես եմ ասում անդու՛յ-անդադա՛ր-անվե՛ղջ կնգացող իմ անքուն զանգով... Սիսն ու Մասիսն են դողանջում անվե՛ղջ-անդադա՛ր-անդու՛յ... 4. Բեկանեմ շանթեր և լեզվի՛ս վրա, իմ թվա՛տ-կակա՛զ-կա՛պ ընկած լեզվի...

◆ Բ. Կարդալ պոեմն ամբողջությամբ և բացատրել հայ ժողովրդի կյանքի ամենառողբերգական իրողության նկարագրության մեջ բանաստեղծի վերաբերմունքի դրսևորման հնչերանգային միջոցները:

🕮 Շ-43. & Գտնել խառը երանգի նախադասությունները. ո՞ր երանգի բաղադրիչ նախադասությունն է առավել առանցքային մտքի կրողը:

Խաչի՛ր ինձ քո կրծքի վրա և օծի՛ր իմ հոգեվարքը քո կուսական բույրերով...
Ինձ խաչի՛ր քո կրծքի վրա և փաթաթիր շուշաններով...

Ես մայիսով կպճնեմ մահվան միգամած սիրտը...
Քո մեն-մի մրմունջից ես քնարնե՞ր կստեղծեմ...
Ինչո՞ւ չարթնացար, մինչև որ ես քեզ չհամբուրեցի...
Ինչո՞ւ չքնեցիր, մինչև որ ես քեզ չհամբուրեցի...
Ինչո՞ւ ես արտասվում քաղցրորեն, երբ ես դողդոջուն համբույրով մրմնջում եմ՝ «Ես քեզ սիրու՜մ եմ...»:
Ինչո՞ւ իմ բացակայությունը միայն դու՛ ես երգում...
Ինչո՞ւ դու կին ես և այնքա՜ն քաղցր...
Ինչպե՞ս է, որ դու կին ես և այնքա՜ն քաղցր... /Ըստ Վ. Թոքովենցի/

📖 Շ-44. & Ա. Նախադասության հնչերանգային տեսակներից յուրաքանչյուրով կազմել 2-ական նախադասություններ, որոնք՝

ա/ պարզ համառոտ են **ե/ պարզ ընդարձակ են** **ը/ բարդ համադասական են**
բ/ ժխտական են **զ/ միակազմ են** **թ/ երկկազմ են**
գ/ դիմավոր են **է/ անդեմ են** **ժ/ հաստատական են**
դ/ բարդ ստորադասական են

Բ. Նշել յուրաքանչյուրի կառուցվածքային առանձնահատկությունները և հնչերանգային դրսևորումները:

📖 Շ-45. & Հայտնի է, որ հնչերանգը քերականորեն չի նշույթավորվում. գրավոր խոսքում նրա ելևէջումները և սկիզբն ու ավարտը ցույց տալու համար զանազան միջոցներ են ընտրվում՝ կորագծեր, սլաքներ և այլն: Տրված օրինակի նմանողությամբ ներկայացնել նախադասությունների հնչերանգային ձևավորվածությունը՝ /տես Ս. Գյուլբուդաղյան, էջ 68/: Օր՝. Ոսկե գանգուրներն ուսերին ցրած՝ Արևո՜ն է իջնում լեռների ուսից... /Գէ/:



1. Արևի ճառագայթներից լուսավորված տերևները նման են հրդեհի բոցերից հապճեպորեն կտրված լեզուների:
2. Երկնահուպ լեռների գրկում տրտմօրոր ծփում է արցունքից գոյացած լիճը:
3. Երեկոյան ծաղիկներն այնքա՜ն գեղեցիկ են:
4. Բարձունքներին հասնելու համար պիտի սեփական թևեր ունենալ:
5. Ո՞վ կտա ինձ առավոտներն իմ մանկության:

🕮 Շ-46. & Ա. Տերյանական քառատողի միտքն արտահայտել հաղորդակցական տարբեր երանգներով /հարցական, բացականչական, հրամայական/. հաղորդակցական ի՞նչ դեր է կատարել և ինչպիսի՞ նպատակներով է գործածվել նույն բառային կազմն ունեցող քառատողերից յուրաքանչյուրը:

Բ. Հնչերանգային տարբերություններն ինչպե՞ս են արտահայտվում գրավոր խոսքում:

Բարակ ամպերը մաղում են ոսկի,
Ջրերը անուշ հեքիաթ են ասում,
Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի,
Հոգնատանջ հոգիս բախտ է երազում:

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

🕮 Շ-47. Ա. Արտագրել հատվածը՝ գրելով յուրաքանչյուր նախադասության միայն գլխավոր անդամները /սրանք կազմում են նախադասության միջուկը կամ քերականական հիմքը/:

Շքեղ դղյակ կար՝ մարմարակերտ, բարձրաբերձ, արծվի թևերի վրա: Սլացիկ սոճիների, սոսիների, թխկիների ու ցարասիների սոսափյունն էր լսվում գիշերներեկ: Նրանց թավշյա տերևների վրա մշտամրմունջ շատրվանների ցողերն էին շողշողում, կարկաչուն, ականակիտ աղբյուրներն էին քչքչում:

Հակինթե վարդերի ու դրախտային ծաղիկների բույրը օվկիանացել էր այնտեղ: Մարմարյա պարիսպներից դուրս արևակեզ լեռներն ու կիրճերը թաթախվել էին նեկտարի մեջ: Գիշերները լուսնկայի շողերը արծաթազօծ թելերով հեքիաթային շղարշներ էին հյուսում և պարուրում չքնաղ դղյակը: Առավոտյան աղջամուղջից մինչև երեկոյան մթնշաղ դղյակից լսվում էին թրթռուն օրիորդների զվարթ ծիծաղը և թմբկաթաղանթ թրթռացնող անհոգ ու սրտաբուխ կարկաչը: /Ըստ Ավ. Իսահակյանի/

& Բ. Նշել յուրաքանչյուր նախադասության բառային միավորների և նախադասություն կազմող անդամների քանակը:

Գ. Անվանել վերջին՝ ընդգծված նախադասության անդամները և փորձել բնութագրել նախադասության անդամ հասկացությունը:

🕮 Շ-48. & Նախադասության թվարկված անդամների անվանումների մեջ առանձնացնել նրանք, որոնք հատուկ են՝

ա/ նախադասությանը

բ/ բառակապակցությանը

գ/ և՛ նախադասությանը, և՛ բառակապակցությանը:

Ենթակա, սահմանյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, կապի խնդիր, խնդիր, պարագա, ստորոգելի, կողմնակի ենթակա, կողմնակի խնդիր, կողմնակի պարագա, կողմնակի վերադիր:

🕮 Շ-49. Ընտրել Համո Սահյանի բանաստեղծությունների որևէ շարք և դուրս գրել 3-ական պարզ նախադասություններ, որոնցում ենթական՝
ա/ գործողություն կատարող, մի բան անող առարկա է.
բ/ իր վրա ուրիշի գործողությունը կրող առարկա է.
գ/ այն առարկան է, որի գոյությունը հաստատում կամ ժխտում է ստորոգյալը:

🕮 Շ-50. Կազմել պարզ համառոտ նախադասություններ, որոնցում ենթական ունի արտահայտության հետևյալ կաղապարները՝
ա/ անձ ցույց տվող հասարակ գոյական՝ անորոշ առմամբ, եզակի թվով
բ/ բաղադրյալ հատուկ գոյական՝ որոշյալ առմամբ
գ/ պարզ հատուկ գոյական՝ անորոշ առմամբ
դ/ հասարակ գոյական՝ որոշյալ առմամբ, հոգնակի թվով
ե/ հասարակ գոյական՝ անորոշ առմամբ, եզակի թվով
զ/ իրի անուն՝ որոշյալ առմամբ, հոգնակի թվով
է/ անձի առումով գոյական՝ որոշյալ առմամբ, եզակի թվով:

🕮 Շ-51. Համեմատել՝
1. ա/ Կատարվում էին Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից:
   բ/ Կատարվում էին Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:
2. ա/ Պատկերասրահում ցուցադրվելու են Մինաս Ավետիսյանի նկարներից:
   բ/ Պատկերասրահում ցուցադրվելու են Մինաս Ավետիսյանի նկարները:
3. ա/ Ցերեկույթում արտասանվեցին Պ. Սևակի և Համո Սահյանի ստեղծագործություններից:
   բ/ Ցերեկույթում արտասանվեցին Պ. Սևակի և Համո Սահյանի ստեղծագործությունները:

🕮 Շ-52. Կազմել նախադասություններ, որոնցում ենթական արտահայտված է՝
ա/ անձնական դերանուններով /բոլոր դեմքերով, թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերով/.
բ/ անձնական դերանունների և ինքը դերանվան համապատասխան ձևերի զուգորդությամբ.
գ/ անձնական դերանունների հոգնակի ձևերի և ամենը, բոլորը որոշյալ դերանունների զուգորդությամբ.
դ/ հոգնակի անձնական դերանունների և փոխանուն քանակական թվականների զուգորդությամբ.
ե/ անձնական դերանունների փոխանուն սեռականով.
զ/ առարկա ցույց տվող ցուցական դերանուններով.
է/ անձնական դերանվան բացառական հոլովի և որոշյալ, ժխտական դերանունների կապակցությամբ:

🕮 Շ-53. Ա. Գտնել ենթակաները, որոշել արտահայտության ձևերը /ուշադրություն դարձնել փոխանունության և ինքնանվանողական գործառույթին/:

Բ. Բառակապակցությամբ արտահայտվածներում բառակապակցական վերլուծություն կատարել:

● 1. Հպարտ, բյուրեղյա քո ծաղկամանում Ահով նվիրած իմ ծաղիկները Օրերով անջու՛ր, անջու՛ր են մնում /ՄԿ/: 2. Ես փակեցի՞ աչքս պատկերի դեմ քո ճիշտ, Որ քեզ տեսնեմ, ինչպես ուզում եմ ե՞ս... /Ն/: 3. Դու իմ սրտումն ես, դու իմ շնչումն ես, Իմ տխրությունն ես, դու իմ խնդումն ես, Դու երգիս մեջ ես, դու վերքիս մեջ ես /Ն/: 4. Թե հազարն էլ լոխմանանա՝ Ոչ ոք վիշտդ չի հասկանա /ՀՇ/: 5. Երբ որ նայում եմ մորս երեսին՝ Ամենքն ինձ այնպես բարի են թվում /Ն/: 6. Թո՛ղ մեռնի չարը, որ բարի՛ն ծաղկի /Ն/: 7. Եվ ծաղկեցին, դառան ծառ երեք տարվան, երեքն էլ /Ն/: 8. Եվ անբառ էր ամեն ինչ և ամեն ինչ անանուն, Ամեն ինչ գույն էր ու ձայն ու ամեն ինչ՝ մեղեդի /ՌԴ/:

● 1. Ինչ-որ բան սխալ է ճշմարտի մեջ անգամ, Եվ ստույգ կոչվածն է ստուգվել աղերսում: 2 Իսկ անկեղծ խոսելը սխալ ու սխա՜լ է: Հետո ի՞նչ դուրս եկավ, Սխալ է ատե՛լը, Սխալ է սիրե՛լը, Այրվե՛լը, Մխա՛լը: 3. Ա՜խ, այս անվերջ «պիտի»-ն Վերջ ունենա պիտի... 4. Մի՞թե այս «միթե»-ն Չի ծլարձակում ոչ մի բարությամբ: 5. «Հե՜յ-հե՜յ» կանչելն, անշուշտ, Նույնպես գործ է: 6. Այս «մի»-ն ու «չի»-ն աջից-ձախից Իբրև 2 փակագծեր Անլուծելի խնդրի նման Մեր ողջ կյանքն են մեջտեղ գցել: 7. «Հարկավոր չէ»-ն իր իսկ կամքին հակառակ Ինքն իրենից թաքուն անգամ՝ Ի վերջո Վերափոխվում ու դառնում է «ի՜նչ ուզում է թող լինի»: 8. Տեսնում եք՝ «կրելը» գրական է, իսկ «քաշելը»՝ ոչ: 9. ...Չմոռանանք նաև, որ «մենք մեր յուղով տապակվենք»-ը եթե փիլիսոփայություն է, ապա փիլիսոփայությունն է թշվառության: 10. Բայց այդ «ինչու»-երը անթիվ են: 11. Թևերն է ծալում ուժասպառ Լո-լո՛-ն, Կոկորդն է ցամքում Վա՛յ-ամա՛ն-վայ-ի, Նորից է ճչում ուրախ Նայ-Նա՜յ-ը: 12. Քոպեսների անունն ի՜նչ էլ դրած լինեն, Իմպեսները միշտ կոչում են նրանց Մարիա՜մ: **/Պ. Սևակ/**

🕮 Շ-54. Դարձվածաբանական բառարաններից դուրս գրել 5-10 դարձվածք և ենթակայի պաշտոնով օգտագործել նախադասությունների մեջ. ընդգծել քերականական հիմքը:

🕮 Շ-55 Ա. Վերևում բերված նատվածներից դուրս գրել ստորոգյալները և որոշել նրանց արտահայտության ձևը:

Բ. Առանձնացնել ստորոգյալի այն ձևերը, որոնցով դրսևորվում է՝

ա/ ենթակայի կատարած գործողությունը.

բ/ ենթակայի ով կամ ինչ լինելը.

գ/ ենթակայի ինչպիսին լինելը:

🕮 Շ-56 Դուրս գրել բաղադրյալ ստորոգյալները՝ ուշադրություն դարձնելով հատկանիշի արտահայտության ձևին և վերագրման ձևակազմությանը. ո՞ր բայերն են հանգույցի՝ ստորոգիչի դեր կատարել:

1. Արդյո՞ք հիշում ես, անտառ էր, առու... Հեքիաթի պես էր երազի նման. Խաղաղ երեկոն խոսում էր անձայն, Արդյոք հիշում ես. – հեռու՜ էր, հեռու /ՎՏ/: 2. Ես մի ճամփորդ եմ մթնում մոլորված, Ու հոգնած սիրտս դարձել է խոնարհ /Ն/: 3. Ու գիտեմ հիմա. – մի սովորական Աղջիկ էիր դու, նման ամենքին - Ա՜խ երանի չէ՞ր բյուր ու բյուր անգամ, Որ կույր ու անգետ լինեի կրկին /Ն/: 4. Դու այսօր այնքան մաքու՛ր ես, Մասի՛ս, Գույներդ այնպես ջի՛նջ են, նրբերանգ /ՄԿ/: 5. ...Մա՜րդ եղիր, որդի՛ս, մա՛րդ մնա կյանքում... /Ն/: 6. Մայրենի լեզուն տարբե՛ր է լինում, Մայրերի լեզուն աշխարհում նու՛յնն է.... /Ն/: 7. Հայաստա՛ն աշխարհ, Դու մերը եղար ու մերը չեղար... Դու մոտիկ եղար՝ Սրտիդ տրոփը մեր կոշտ ձեռքերին հաղորդելու չափ, Եվ հեռու եղար... Հայաստա՛ն աշխարհ, Դու այսպե՛ս եղար, Եվ դրա համար մենք քեզ սիրեցինք /Ն/: 8. Աշխարհի յոթ հրաշալիքներ, Հրաշքը մարդու լուսին ելնելն էր /ՀԾ/: 9. Մերն է, ասին, համբույրն ու սերն աշխարհում, Սիրուց վեր է սիրո ընկերն աշխարհում /Ն/: 10. Գալիք վայրկյանդ թվում է ոսկի, Երբ որ գալիս դառնում է արծաթ /Ն/: 11. Երգ իմ, նման ես քո ստեղծողին, Նրա պես քոնն ես և աշխարհքինն ես, Քո այս աշխարհի հող ու քարինն ես, Դու ոտքից գլուխ քո այս դարինն ես /ՀՍ/: 12. Մի տնից չենք, մի ձեռով ենք, Այս հին գինուց մենք գինով ենք /ԳԷ/: 13. Բայց ոչ ես եմ քո «դու»-ն, ոչ էլ դու՝ իմ «ես»-ը /Ն/: 14. Բախտ բերելս ո՜րն է, Նրան ձեռք են բերում /ՊՄ/: 15. Իսկ դու ուրիշինն ես, Իսկ դու ուրիշինն ես... Եվ նա ով է՝ գիտեմ: Պարզ է. նա ո՛չ կարիճ, Եվ ո՛չ էլ իժ է նա: Գուցե վատ չէ այնքան, Գուցե լավն է անգամ, Բայց քեզ համար օտա՜ր-ուրի՜շ է նա /Ն/: 16. Ես ո՛չ փոքրոգի եմ, Ո՛չ տգետ եմ, Սակայն արի և տես, որ խանդոտ եմ /Ն/:

Գ. Ի՞նչ նկատառումներով է ենթական ստորոգյալից հետո շարադասվում, օժանդակ բայը՝ դերբայից առաջ, հանգույցը՝ ստորոգելիից առաջ:

🕮 Շ-57. Գրել բաղադրյալ ստորոգյալ ունեցող այնպիսի նախադասություններ, որոնցում հանգույցի դեր են կատարում անել, դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, երևալ, կոչվել, հռչակվել, ճանաչվել, ձևանալ, մնալ, ստանալ, անվանվել, նշանակվել, առաջադրվել **վերացական բայերը:**

🕮 Շ-58. Գրական աղբյուրներից դուրս գրել նախադասություններ, որոնցում բաղադրյալ ստորոգյալն ունի հետևյալ կազմությունները՝

ա/ բառի հոլովաձև + եմ հանգույց.

բ/ հատկանշանիշ բառ + լինել.

գ/ ինքնանվանողաբար կիրառված բառ, հնչյունակապակցություն + եմ հանգույց.

🕮 Շ-59. Դարձվածաբանական բառարաններից ընտրել 5-10 դարձվածք և կազմել նախադասություններ՝ դրանք դարձնելով բաղադրյալ ստորոգյալի կազմիչ՝ ստորոգելի:

🕮 Շ-60. & Դարձվածաբանական բառարաններից ընտրողաբար դուրս գրել դարձվածքներ և կազմել 5 նախադասություն այնպես, որ թե՛ ենթական և թե՛ ստորոգյալի մասն արտահայտվեն դարձվածքով:

🕮 Շ-61. Ա. Նախադասություններ կազմել՝ ընդգծված բառերը ենթակա, իսկ փակագծերում տրվածները՝ ստորոգյալ դարձնելով /ուշադրություն դարձնել վերջինիս թվի քերականական կարգի դրսևորմանը/:

Բ. Պարզաբանել շարահյուսական այն իրողությունը, որը կոչվում է <u>բակառություն</u>:

●▸ <u>ազգ</u> /հպարտանալ/
▸ <u>Միագյալ Նահանգները</u> /չզիջել/
▸ <u>Վարդանանը</u> /աջակցել/
4. <u>զորը</u> /կռվել/
▸ <u>Աշոտը կամ Արամը</u> /գալ/
▸ <u>ամենքս</u> /շտապել/
▸ <u>ավագանի</u> /ժամանել/
▸ <u>երկիր մոլորակ</u> /պտտվել/
▸ <u>հայերդ</u> /գերադասել/
▸ <u>նախիր</u> /բարձրանալ/
▸ <u>աշակերտություն</u> /որոշել/
●▸ <u>արև</u> /ժպտալ/
▸ <u>գյուղ</u> /կանգնել/
▸ <u>և՛ տղան, և՛ աղջիկը</u> /հեռանալ/
▸ <u>ամենքը</u> /հիանալ/
▸ <u>չորս գինվոր</u> /մտնել/
▸ <u>գրողների մեծ մասը</u> /չկրկնել/
▸ <u>ես, դու և նա</u> /գնալ/
▸ <u>երկու կաթիլ</u> /գլորվել/
▸ <u>հինգ հոգի</u> /պակասել/
▸ <u>կա՛մ անձրևը, կա՛մ ձյունը</u> /վնասել/
▸ <u>բոլորը</u> /հեռանալ/
▸ <u>կաշին ու ոսկորը</u> /մնալ/
▸ <u>/լաց ու կոծ</u> /բարձրանալ/
▸ <u>յուրաքանչյուր որ</u> /հավատալ/
▸ <u>տոմսեր</u> /վաճառել/
▸ <u>դեղորայք</u> /ստանալ/
▸ <u>մտավորականություն</u> /աջակցել/
▸ <u>հայերս</u> /երազել/
▸ <u>համայնք</u> /մասնակցել/
▸ <u>մայրը երեխաների հետ</u> /զբոսնել/
▸ <u>բոլորդ</u> /գնալ/
▸ <u>դու և նա</u> /չհիշել/
▸ <u>ամեն որ</u> /իրավունք ունենալ/
▸ <u>առուներ</u> /կարկաչել/
▸ <u>սեր ու հավատ</u> /փրկել/
▸ <u>սարեր ու ձորեր</u> /կանաչ հագնել/
▸ <u>ոչ որ</u> /չկարդալ/
▸ <u>յուրաքանչյուրս</u> /ուզել/
▸ <u>«Մթնշաղի անուրջները»</u> /գրվել/
▸ <u>հանդիսականների կեսը</u> /հեռանալ/
▸ <u>մերոնք</u> /սիրել/
▸ <u>աչքերս</u> /հոգնել/
▸ <u>երգը և երաժշտությունը</u> /փրկել/

🕮 Շ-62. Կազմել պարզ համառոտ նախադասություններ հետևյալ մասնակաղապարներով կամ ենթակաղապարներով՝

ա/ գոյական ենթակա + պարզ ստորոգյալ
բ/ դերանուն ենթակա + պարզ ստորոգյալ
գ/ գոյական ենթակա + բաղադրյալ ստորոգյալ, որի ստորոգելին արտահայտված է գոյականով /և՛ ուղիղ, և՛ թեք ձևերով/, դերանունով, ածականով
դ/ փոխանվանաբար գործածված ածական ենթակա + պարզ ստորոգյալ
ե/ փոխանվանաբար գործածված թվական ենթակա + բաղադրյալ ստորոգյալ

🕮 Շ-63. Արտագրել՝ փակագծերում տրված բայերը համաձայնեցնելով ենթակաների հետ: Ուշադրություն դարձնել ենթակայի և ստորոգյալի շարադասությանը:

Ես /կրակել/ իմ մանկության ընկերոջ, իմ սիրելի շան ճակատին... Ապա խելագար վազքով /սլանալ/ դեպի անտառ, /նետվել/ թփերի մեջ և երեսս խոնավ հողին քսելով՝ դառնագին /հեկեկալ/:

Ես /կրակել / իմ առաջին սիրո վրա ու նրա ողբերգական մահն /ողբալ/ իմ պատանեկան անարատ հոգու ամբողջ ուժով...

Իմ գի՛ժ, իմ գիժ պատանեկություն, որ մեր ջրվեժների պես փրփրադեզ /եմ/ ու մեր եղնիկների նման թեթևասույր: Հորդացած գարնան ջրերի նման զգացմունքներս /դուրս գալ/ իրենց ափերից ու /արմատահան անել-տանել/ եզերքին բուսած ծառ ու ծաղիկ, կանաչ ու թուփ:

Բողար ջան, մայիսի շաղոտ լուսաբացի և աշնան սանձրևոտ գիշերների իմ ընկեր: Դու էլ /զոհ գնալ/ իմ գիժ զգացմունքների գիժ հորդումին: Ու ինձ /թվալ/, որ նրան /զոհ գնալ/ և իմ առաջին սերը, որ /փթթել/ շա՜տ վտանգավոր տեղ՝ իմ հոգու լեռնային հեղեղատի ափին...

Այս դեպքից քսան տարի /անցնել/: Հորդացած ջրերը /հանդարտվել/, և ես /դառնալ/ չափավոր ու խոհուն: Կյանքը /խուզել/ երևակայությանս թևերը, և նա այլևս /չճախրել/ ամպերից վեր. հիմա նա ներքևում է՝ երկրի վրա...

Ու այժմ ես հաճախ /հարցնել/ ինքս ինձ. «Մի՞թե ես որևէ /կայծ առաջ բերել/ այդ աղջկա հոգում... Տեսնես՝ կարեկցության գոնե մի շող /անցնել/ նրա հոգով, կարեկցություն՝ ոչ թե սպանվողի, այլ իմ նկատմամբ. չէ՞ որ նա /հասկանալ/, անշուշտ /հասկանալ/, որ ես /կրակել/ իմ սրտին, և ե՛ս եմ կարեկցության արժանի իմ փոթորկվող հոգով...»:

Ու մեկ էլ /հարցնել/՝ «Կա՞ արդյոք նա, /հիշել/ ինձ...»:

Իմ գիժ, իմ գիժ ջահելություն, որ երազուն /եմ/ ու խաղաղ... /Վ. Անանյան/

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

🕮 Շ-64. Կազմել նախադասություններ, որոնցում որոշիչն արտահայտված լինի՝
ա/ ածականով /թե՛ որակական, թե՛ հարաբերական/.
բ/ թվականով.
գ/ հատկանշային նշանակություն ունեցող դերանվամբ.
դ/ դերբայով /անկախ դերբայներով՝ բացի համակատարից/.
ե/ գոյականով /ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովներով/.
զ/ մակբայով /բայանուն գոյականների հետ/.
է/ հոլովակապային կառույցով.
ը/ դերբայական դարձվածով.
թ/ դարձվածքով.
ժ/ ինքնանվանողաբար գործածված միավորով /հնչյուն, բառ բառակապակցություն/:

Ա Շ-65. Տրված որոշիչ-որոշյալ կապակցություններում որոշել որոշչի արտահայտության ձևը:

Մեղմ հովիկ, ամենանուրբ լարեր, մագաղաթյա գիր, մայրական գիրկ, քառասուն օր, այնպիսի ձայն, յոթ շաբաթ, «Իմ գիրն ուրիշ գրեն է» տողով, նույն վայրկյանին, ամեն բառ, թղթից տնակ, սարի պես տղամարդ, երեքական գիրք, ամեն մի խոսք, ծերուկ ձկնորս, խոցված սիրտ, անքուն գիշերներ, համայն աշխարհը, ծաղիկ հասակ, բոլոր ժամանակներում, մի բուռ հող, աստղալից երկինք, ոտքի ճանապարհ, որևէ բան, մի քանի տետր, «ու» տառով, ինչքա՞ն մարդ, ո՞ւմ գիրքը, կանչող զանգակ, գոհար աչքեր, «Եկա, տեսա, հաղթեցի» արտահայտությունը, կապույտ աչքերով աղջիկ, սպարապետ Վարդան, երկու կաթիլ արցունք, ձեռնափայտով ծերունի, արագ ընթացք, գալիք երջանկություն, իններորդ ալիք:

Ա Շ-66. Ա. Դուրս գրել որոշիչներն իրենց որոշյալների հետ՝ նշելով բառաքերականական հատկանիշները: Որոշել կապակցման եղանակը:

Բ. Փոխադրել՝ փոխելով որոշիչների շարադասությունը՝ առաջադասը՝ հետադաս դնելով, հետադասը՝ առաջադաս /եթե հնարավոր է/:

& Գ. Ընդգծել այն անդամները, որոնք ունեն և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ լրացումներ. նման կապակցություններում շարադասական օրինաչափությունը ներկայացնել:

Բարձրանում ենք Մեծ Լոռեցու առաջին ապրումների կախարդական օրրանը՝ Դսեղ: Սա այն ճանապարհն է, որով մարդ չի կարող անցնել առանց սրտաթրթիռ զգացմունքների, առանց թումանյանական վառվռուն պատկերների: Ճամփեզրին դու տեսնում ես գեղուղեշ ծառեր, նոթերը կիտած քարափներ, կարկաչուն առվակներ, խոխոջուն աղբյուրներ, լուռ ու խոսուն հուշարձաններ: Եվ ինքնըստինքյան պատկերացնում ես՝ ահա այստեղ է, որ Գիքորն ասել է. «Ապի՛, ծարավ եմ». այս էլ այն բարձրաբերձ քարաժայռը՝ ձորի հանդիպակաց ափերին վեր խոյացած, որտեղից տարաբախտ Անուշն է իրեն հանձնել ամենակուլ անդունդին. այս էլ այն վիթխարի ընկուզենին, որի շվաքում խնջույքի են նստել գյուղի մեծերը և նահապետական խորախորհուրդ օրհնությամբ բարեմաղթել մանուկ տաղասացներին: Խոր, լայնաբերան ձորով հոսում է Դեբեդը՝ մեղմ ու հանդարտ, սրընթաց ու ահագնադղորդ, փրփրադեզ ալիքներով, ծեծում է, ծեծկռտում է ափերը ժեռուտ, վշշում ու հեծեծում:

Ի վերջո երևում է գյուղը: Քո դեմ հեքիաթային, հովվերգական մի աշխարհ է՝ իր բանաստեղծական տրամադրություններով: Մի ընդարձակ հարթության վրա անվրդով տարածվել է հինավուրց Դսեղը՝ նման բնակերտ մի ամրոցի: Շուրջը սարեր են՝ կարծես հարբած շարքերով պար բռնած, արտեր են՝ ծայրեհծայր երփներանգ, թարմանուշ ծաղիկներով, արտույտների, կտցարների գարնանային ցնծերգով, ծղրիդների թախծանուշ ձայնով: Քամին օրորում է արտերը հասած, և ոսկեվարս հասկերը ծուփ-ծուփ ալիքվում են, մեղմ սոսափյունով հոսում, հոսում:

Ահա գյուղամերձ բարձունքը՝ Դիդը, ահա փոքրիկ լիճը՝ աչքի պես վճիտ, հայելու բեկբեկուն արփիափայլով... Հեռվում՝ հորիզոնի վրա, բարձրագահ բազմել են սիգապանծ լեռնագագաթները՝ Լալվարը, Չաթինդաղը, Ղարախաչը, Քողաբարը: Նայում ես շուրջդ և ինքնաբերաբար ըմբռնում, թե ինչն է իմաստավորել բանաստեղծի մանկության աշխարհը:

/Ըստ Նվարդ Թումանյանի/

Ը-67. Կարդալ և ավելացնել բազմակի որոշիչներ /համասեռ և անհամասեռ/:

Իջնում է երեկոն □, □ աշխարհի ու □, □ ծովի վրա, և գույները մգանում են: Երեկոն՝ □, □, □, ընդունում է ծովի շոյանքներն □ ու □, □ մրմունջները: Ծովը չի սրտնեղում ու չի նետվում ափերի վրա՝ □, □, □:

Պատուհանից երևում է ծովը՝ □, □:

Տանը երգեհոն կա: Երգեհոնը հիշեցնում է հայոց շարականները՝ □, □, և սրբազանը սկսում է բամբ ձայնով երգել: Նա անէացած նայում է □ □ երկնքին՝ □, □, և □ □ ռմպերի նշմարվող ողկույզներն արբեցնում են նրա սիրտը մի անանուն տենչանքով: Հետո ծուռ է իջնում □, □, երեկոյի և □ □ ծովի առջև և աղոթում: Սա աղոթք է՝ □, □, □: Գոհության աղոթք՝ ուղղված Արարչին:

Իսկ □ □ սյուքը՝ □, □, բերում է զանազան բույրեր՝ □, □:

Ը-68. Ա. Ընդգծվածների կողքին փակագծերում տրված որոշյալները ճիշտ թվով դնել:

Բ. Դուրս գրել այն կապակցությունները, որոնցում որոշիչները, ըստ իրենց բառիմաստային առանձնահատկությունների, պահանջում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով որոշյալներ:

● ▶ սև-սև /աչք/
▶ քեր ու դեմ /կարծիք/
▶ բազմաթիվ /հարց/
▶ բազմաձև /խիճ/
▶ անթիվ /աստղ/
▶ լավ ու վատ /օր/
▶ տեսակ-տեսակ /ծաղիկ/
▶ անուշ-անուշ /երազ/
▶ անհամար /ծառ/
▶ որևէ /խոսք/
▶ միլիոնավոր /մուրացկան/
▶ մեկ /աշխարհ /
▶ մեծամեծ /նվեր/
▶ փունջ- փունջ /վարդ/
▶ զանազան /հարց/
▶ հատ ու կենտ /անցորդ/
▶ մեծ ու փոքր /սար/
▶ քսան /աշակերտ/

● ▶ երկու /փողոց/
▶ ամեն /հայ/
▶ յուրաքանչյուր /ուսանող/
▶ կարմիր ու կանաչ /լույս/
▶ այսպիսի /երաշտ/
▶ ինչ-ինչ /պատճառ/
▶ հազար ու մի /հանելուկ/
▶ բոլոր /երեխա/
▶ ողջ /մարդկություն/
▶ կարմիր-կանաչ /հասակ/
▶ այլևայլ /խնդիր/
▶ ամբողջ /աշխարհ/
▶ անցած-գնացած /օր/
▶ այս /գիրք/
▶ ամեն մի /կին/
▶ ոչ մի /լուր/
▶ որևէ /տեսակետ/
▶ երկու բաժակ /գինի/

Ը-69. Դարձվածաբանական տարբեր բառարաններից ընտրել 10-15 դարձվածք և կազմել կապակցված խոսք այնպես, որ դրանք հանդես գան որոշչի դերում:

🕮 Շ-70. ☑ & Հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում բացատրել հատկացուցիչների իմաստային հարաբերությունները /մասնական /մասի և ամբողջության/, պատկանելության, ենթակայական, առարկայական, նյութի, սերման կամ ծագման, պարունակության, տարածական, ժամանակային, որակային կամ հատկանշային, արժեքի կամ գնի, բացահայտման և այլն/:

Ուսանողի տետրը, սարի գագաթը, Քրիստոսի համբարձումը, հարազատների կարոտը, կաղնու ստվերը, բերքահավաքի շրջանը, ճեմելու սրահ, ծովի քամի, ձմռան բուք, աշնան արև, արծվի հայացք, ջրի գին, որդու լուսանկարը, թագավորի զավակները, արևի ճառագայթներ, թշնամու խումբ, այգու կեսը, կավի աման, արծաթի գդալ, ճաշի ափսե, գինու թաս, այգու ծառեր, բաժակի հյութը, երեխայի ձայն, Շիրվանզադեի պատմվածքները, Այգեկցու առակները, հացի կտոր, գինվորի քաջություն, վուշի թել, գարու հաց, գարեջրի բաժակ, 22ի գինին, դաշտերի ծաղիկները, ձիու թամբ, խաղի հրապարակ:

🕮 Շ-71. & Ա. Քերականների մի խումբ հատկացուցիչ-հատկացյալ կապակցության եղանակը համարում է խնդրառությունը /Մ. Ասատրյան, Ռ. Իշխանյան, Խ. Բաղիկյան/, իսկ մյուս խումբը՝ առդրությունը /«Ժամանակակից հայոց լեզու», հ. 3/: Ո՞ր տեսակետն է ձեզ համար ընդունելի:

Բ. Դուրս գրել հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները, որոշել հատկացուցչի խոսքիմասային պատկանելությունը և քերականական ձևը, կապակցման եղանակը:

Լուսնկա գիշերները երիտասարդը ծովափին՝ խարույկի մոտ, ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահնչյուն սազի հոգեհմա ելևէջները... Նա լսում էր անտուն, հալածական քամու հազար-հազար մեղուշ ձայները. նա հոգեսլաց ականջ էր դնում աստանդական քամու հրաշալի սրնգին, որ հնչում էր անընդմեջ կախարդական աշխարհների, մրրկածուփ ծովերի, անհայտ սարերի, ամայի անապատների երազանքներից և վշտերից: Իսկ առավոտից մինչև երեկո նա թափառում էր սար ու ձոր՝ լսելու բնության երգերը հազարալեզու, կարկաչը աղբյուրների, շառաչը ջրընկեցների, հառաչը արտերի: Նա հանգչում էր ու նիրհում սաղարթախիտ ծառերի ստվերներում, որոնց ճյուղերի վրա օրորվում էին հավքերը բանաստեղծ և դայլայլում սերն ու իղձերը իրենց: Նա նիրհում էր զով ծառերի տակ, և մեծ բնությունն իր անտառներով ու երկնակարկառ գագաթներով, իր ծովերով ու անապատներով, իր հավքերով ու արշալույսներով, իր ամպերով ու հողմերով նրան երազանքներ էր բերում, արնանման, շքեղ, սավառնաթև երազներ:

Նրա դուռը բաց էր իր սրտի պես, բոլոր վշտահար սրտերը նրա մոտ էին լալիս, նրա կրծքին հանգչում: Բոլոր թափառական գուսանները նրա մոտ էին վայր դնում իրենց մաշված ցուպերը և երգում նրա համար անճանաչ սրտերի, վիրավոր բլբուլների անրջանքներից ու մորմոքներից, թալուկ վարդերի, սիրահար եղնիկների տրտունջներից ու ցնորքներից:

Եվ հեռավոր գյուղերի ու քաղաքների երգիչները նրա համար էին երգում, որովհետև նրա հոգին լսում էր նրանց երգերը: Բնության ամեն մի ձայն, ամեն մի շրշյուն, ամեն մի հնչյուն լսելի էր, հասանելի նրա հոգուն:

/Ըստ Ավ. Իսահակյանի/

Ը-72. Կետադրել: Դուրս գրել հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունները և որոշել եզրերից յուրաքանչյուրի բառաքերականական հատկանիշները: Ո՞ր դեպքում է հատկացուցչից հետո բութ դրվում:

Նկարիչը մեծագույն հափշտակությամբ սկսել էր կարգի բերել իր Արարատյան դաշտավայրի բնանկարները: Ահա Մասիսի երկնի կապույտի մեջ կորած գագաթը վեհաշուք ու վեհատես: Այդ նկարը աշխատանոցի սվաղը թափված պատերին շունչ ու լույս էր հաղորդում: Ահա Արարատյան դաշտավայրի գույն ու երանգ բույր ու շունչ պարգևող ծաղիկները: Ահա արահետների օձի նման ոլոր-մոլոր սողացող թելը: Արտերի դեռ մանգաղի երեսը չտեսած ոսկին ծփում էր ու ծածանվում:

Ահա գեղջուկների՝ ելոր երդիկներով գետնափոր խրճիթները որոնցից անեզր խեղճության ու չարքաշ կյանքի սիրտ մրմռացնող երգն էր ծորում:

/Թելադրության նյութերի ժողովածուից/

Ը-73. & Տրված բառերից կազմել բառակապակցություններ և բացատրել շարադասության ընդունված կարգը՝ ա/ անհամասեռ որոշիչների բ/ միևնույն անդամին լրացնող հատկացուցչի և որոշչի:

1. ♦ լեռներ, գագաթ, բարձր ♦կիսաբաց, մատյան, էջեր ♦դողդողացող, մոմեր, թրթիռ ♦բնակիչ, գյուղ, նախկին ♦լեռնային, կիրճ, խոր ♦շքեղ, արծաթյա, մատանի ♦լազուր, գարնանային, երկինք ♦վերջին, շողեր, արև ♦ ծաղկազարդ, դաշտեր, ցողաթաթախ, հայրենի ♦ կարապ, հոգեհմա, երգ, թախծաթով

2. ♦աղջիկներ, երեք, հրաշք ♦համաշխարհային, պատերազմ, երկրորդ ♦աթոռ, դրվագազարդ, վեց ♦երեքական կիլոգրամ, միրգ, չոր,

3. ♦հուշ դարձած, տուն, հայրական ♦գինի, յոթնամյա, արյունը թունդ հանող ♦սև և երկար արտահանունքներով երիզված, աչքեր, վառվռուն:

Ը-74. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել 2-ական նախադասություններ, որոնցում՝

- **բացահայտիչն արտահայտված է հասարակ գոյականով, բացահայտյալը՝ դերանվամբ.**
- **բացահայտիչն արտահայտված է դերանվամբ, բացահայտյալը՝ հասարակ գոյականով.**
- **թե՛ բացահայտիչը, թե՛ բացահայտյալն արտահայտված են հատուկ գոյականներով.**
- **բացահայտիչն արտահայտված է բաղադրյալ հատուկ գոյականով, բացահայտյալը՝ հասարակ.**

● **բացահայտիչն արտահայտված է հասարակ գոյականով, բացահայտյալը՝ հատուկ.**
● **բացահայտյալն ընդհանուր, ամբողջական, հավաքական առարկաների, երևույթների, իրողությունների անվանում է, իսկ բազմակի բացահայտիչները՝ այդ ընդհանուրը կազմող մասերը.**
● **բացահայտիչն ընդհանրացումն է բազմակի բացահայտյալների:**

🕮 **Շ-75. Ընդգծել բացահայտիչ-բացահայտյալ կառույցները, նշել քերականական, դիրքային կամ շարադասական, արտասանական առանձնահատկությունները:**

Անժամանակ ծնված խելագար հանճարը՝ Բլեզ Պասկալը, կարողացավ իր ամենավսեմ զբաղմունքը դարձնել դա՝ օգնել խեղճերին ու տկարներին: Կանցնի ևս 100 տարի, աշխարհ կգա մի ուրիշ ֆրանսիացի խենթուկը՝ Սեն-Սիմոնը, և Պասկալի այսքան պարզ ու հասկանալի մտքերը՝ սիրիր մարդուն և ընդհանուր բարօրության մեջ փնտրիր և քո երջանկությունը, կդառնա ատաղձը, հենքը մի ամբողջ գաղափարախոսության՝ սեն-սիմոնիզմի: Իսկ ավելի ուշ մեր մեծ քնարերգուն՝ Մեծարենցը, կպոռթկա ինչպես հոգու ճիչ.

Տու՛ր ինձ, Տե՛ր, ուրախությունն անանձնական....

🕮 **Շ-76. Տրված մասնական բացահայտչով կապակցությունները գործածել նախադասությունների մեջ՝ տարբեր դիրքերում /առաջադաս, միջադաս, ետադաս/** որպես ապահով թաքստոց, իբրև մերժված ու տառապած հոգի, որպես քարքարոտ երկրի, ինչպես ազնիվ հայ:

🕮 **Շ-77. Տեքստից դուրս գրել բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունները, առանձնացնել մասնական բացահայտիչներն իրենց բացահայտյալների հետ: Փոխադրել տեքստը՝ վերջիններս դարձնելով բուն բացահայտչով կապակցություններ:**

Նոբելյան մրցանակը իբրև ողջ աշխարհում ճանաչված ամենապատվավոր պարգև, կրում է շվեդ ճարտարագետ-քիմիկոս Ալֆրեդ Նոբելի անունը: Նոբելների նշանավոր գերդաստանից՝ գիտնականների և ձեռներեց մարդկանց ընտանիքից է սերել Ալֆրեդը: Ինքը՝ Ալֆրեդ Նոբելը, գյուտարար էր, դինամիտի՝ ուժանակի ստեղծողը: Հանքարդյունաբերության համար ստեղծված այդ պայթուցիկ նյութը՝ որպես հրազենի շարժիչ ուժ, լայնորեն օգտագործվեց պատերազմների և ահաբեկչությունների ժամանակ:

Ալֆրեդ Նոբելն իր կտակով մի խոշոր գումար է հատկացրել ամենաականավոր մարդկանց՝ գիտնականներին, գրողներին, արվեստագետներին, խաղաղության համար մարտնչողներին:

Նոբելյան մրցանակը՝ իբրև Նոբելի կամքի արտահայտություն, առաջին անգամ շնորհվել է 1901 թ. դեկտեմբերի տասին՝ մրցանակը սահմանողի մահվան տարելիցի օրը, և դարձել է ամենամյա: Այդ գործը տնօրինում է Նոբելի հայրենիքի՝ Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիան:

Նշանակված օրը՝ հանդիսավոր արարողության ընթացքում, նոբելյան մրցանակը՝ իբրև ամենապատվավոր գնահատական, և դրամական պարգևը՝ մի քանի տասնյակ հազար ամերիկյան դոլար, սահմանված ծիսակարգով հանձնում են նորընծա դափնեկրին: Արարողությունը՝ որպես դարակազմիկ երևույթ, իրենց ներկայությամբ պատվում են 2 երկրների՝ Շվեդիայի և Նորվեգիայի թագավորները:

📖 Շ-78. & Ա. Լրացնել նախադասությունները՝ կետերի փոխարեն գրելով այնպիսի բառեր կամ բառակապակցություններ, որոնք կոնկրետացնեն, մասնավորեն ընդգծված բառերի իմաստը /ուշադրություն դարձնել կետադրությանը/ օր.՝ Այգու խորքում □ բազմել էին գյուղի մեծերը:
Այգու խորքում՝ ծեր ընկուզենու տակ, բազմել էին գյուղի մեծերը:

1. Լեռնային ճանապարհից վերև □ նշմարվում էր մի եկեղեցի: 2. Վերևում □ փրփուրի նման ճերմակ ամպերն էին սահում: 3. Ներքևում □ այնքա՜ն շատ մանուշակներ կային: 4. Այս գիշեր □ երկնքի աստղերն այնքան շատ էին, որ թվաց՝ երկինքը հյուսված է միայն աստղերից: 5. Արշալույսից առաջ □ սրինգս պիտի նվագեմ, որ թռչեն-գան քնքուշ սոխակներն ու դեղձանիկները: 6. Այգու խորքում □ առվակ էր խոխոջում, և ջրերի կարկաչը, միախառնվելով տերևների խշշյունին, ստեղծում էր ինչ-որ խորհրդավոր տրտմություն: 7. Կեսգիշերին □ օվկիանոսը մոնչաց, և մրրկահույզ ալիքները հուժկու հորձանքով հարձակվեցին նավի վրա:

Բ. Ընտրել 3 նախադասություն և այնպե՛ս վերակազմել, որ բացահայտիչը, բացահայտյալ ունենալով հանդերձ, նաև բացահայտյալի դերով հանդես գա:

📖 Շ-79. Կազմել նախադասություններ, որոնցում բացահայտիչը բացահայտյալի հետ կապակցված է այսինքն, այն է, այս է, ուրեմն, ինչպես, օրինակ, իմա / իմացիր/ **մեկնական բառերով:**

📖 Շ-80. Արտագրել՝ փակագծերում տրված բացահայտիչները համաձայնեցնելով բացահայտյալների հետ /դեմքով, թվով, հոլովով/:

Բ. Ընդգծված նախադասություններում փոխել բացահայտչի և բացահայտյալի շարադասությունը՝ ուշադրություն դարձնելով նրանց իմաստային, շարահյուսական, ոճական տարբերություններին:

1. Երեք մարմինների՝ /Երկիր, Արեգակ, Լուսին/ խնդիրը երկնային մեխանիկայի ու մաթեմատիկայի ամենաբարդ բնագավառներից մեկն է: 2. «Ես՝ /Նյուտոնի աշակերտ/, ամենայն վստահությամբ հանդգնում եմ հայտարարել, որ այս գիսավորը կվերադառնա 1758 թ. սկզբին»: 3. Նրանք՝ /աստղագետ-տեսաբան/ ապացուցեցին, որ նեյտրոնային աստղը 20-րդ դարի մեծագույն հայտնագործություններից մեկն է: 4. Հալլեյի գիսավորի լեգենդար հերոսուհու՝ /Հորտենզիա Լեպոտ/ փառքին ու բախտին հասնելու համար նրան՝ /Ժակլին Բելլ/, պակասում էր մի բան՝ նա ֆրանսուհի չէր: 5.

Բոլոր ժամանակների ամենահանդուգն աշխարհակալը՝ /Ալեքսանդր Մակեդոնացի/, իր բարձի տակ կողք կողքի պահում էր դաշույնն ու Հոմերոսի «Իլիականը»: 6. Հիմա արդեն դժվար է հավատալ, որ առաջին հերթին իր՝ /Ն յուտոն/ հայրենիքում՝ /Անգլիա/, տիեզերական ձգողության օրենքն ունեցել է կատաղի հակառակորդներ: 7. Հայերը Ծիր Կաթինը անվանել են «Հարդագողի ճանապարհ»՝ ընդունելով այն առասպելը, ըստ որի պատերազմի աստվածը՝ /Վահագն/ խիստ ձմռանը գողացել է Բաբելոնի տիրակալի /Բարշամ/ հարդը և ճանապարհին թափել: 8. Ռիբոյի գրախանութի կազմարարի աշակերտի՝ /Մայքլ Ֆարադեյ/ մասին է Ստոլետովը գրել. «Ամենաերջանիկ աստղագետից՝ /Գալիլեյ/ հետո աշխարհը չէր տեսել այդքան ապշեցուցիչ ու բազմազան հայտնագործություններ, որ դուրս եկան մի գլխից, և հազիվ թե շուտով տեսնի երկրորդ Ֆարադեյին»:

📖 Շ-81. Կետադրել՝ ուշադրություն դարձնելով այն դեպքերին, երբ բուն բացահայտիչը նախադասության մյուս անդամներից չի տրոհվում: Եզրակացնելով գրել այն կանոն-կետերը, ըստ որոնց բացահայտիչը չի տրոհվում նախադասության մյուս անդամներից /✍ 1. ✍2. ✍ 3. ✍4/:

Գալիլեո Գալիլեյը ամենաերջանիկ աստղագետը հակառակ իր ըմբոստ ու հպարտ խառնվածքի վայելում էր Տոսկանայի ու Ֆլորենցիայի այն ժամանակվա տիրակալների Մեդիչիների ընտանիքի համակրանքը իսկ ամենակրտսեր Մեդիչիի Կոզիմոյի հետ նույնիսկ բարեկամական կապեր ուներ: Եվ ահա Գալիլեյը որոշում է ընդառաջել իր բարեկամներին և Յուպիտերյան արբանյակները կոչել «Մեդիչեյան աստղեր» անունով: «Մեդիչեյան աստղերի» լուսնային բնապատկերի Կաթնծիրի աստղային կուտակումների լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ Եվրոպայում: Ֆրանսիայի կայսրը Ռուդոլֆ Երկրորդն էլ էր հետաքրքրվում Գալիլեյով՝ ու նրա գործերով...

Առաջացավ աստղադիտակ ձեռք բերելու պահանջ բոլորն էլ ուզում էին իրենց աչքերով տեսնել անհավատալին ու աներևակայելին: Ազնվազարմ իշխանուհին Մարիա Մեդիչին ստանալով Գալիլեյի ուղարկած աստղադիտակը չի համբերում մինչև որ այն տեղակայվի ինչպես հարկն է և ծնկի է իջնում ժամ առաջ լուսնին նայելու համար: Ֆրանսիական արքունիքի պալատականներից մեկը հատուկ նամակ է գրում Գալիլեյին խնդրելով որ հերթական նոր աստղին որն անկասկած կհայտնաբերի նա Գալիլեյը շնորհի իրենց արքայի Հենրիխ Չորրորդի անունը:

Բայց իրեն Գալիլեյին «Մեդիչեյան աստղերը» բոլորովին ուրիշ բան էին ասում...

🕮 Շ-82. Ա. Կարդալ, դուրս գրել յուրաքանչյուր նախադասության /քաղաղրիչ նախադասության/ գլխավոր անդամները, որոշել արտահայտության ձևերը:

◆ Բ. Ստորոգյալի ո՞ր տեսակն է առավել չափով օգտագործվել տեքստում. կա՞պ ունի խոսքի այս ոճի հետ:

Գ. Դուրս գրել գոյականական անդամի լրացումները՝ իրենց լրացյալներով, նշել տեսակը և ձևաբանական հատկանիշները:

Պոեզիայում շատերն են դիմել «տիեզերական չափումների»... Ալբերտ Էյնշտեյնը հարաբերականության տեսությունը հասկանալու համար խորհուրդ է տալիս կարդալ Դոստոևսկի: Տարօրինակ խորհուրդ է...

Բախ, Հենդել, Բեթհովեն. զուր չեն ասել՝ «աստվածային երաժշտություն»: Եվ մարդուն տիեզերական անհունության հասցնող Մոցարտը՝ վճիտ, բյուրեղային: Մի՞թե այս հսկաների զգացած ու ընկալած տիեզերքը՝ արտահայտված հնչյունների լեզվով, նույնը չէ, ինչ Նյուտոնի ու Էյնշտեյնի տիեզերքը՝ ներկայացված մաթեմատիկայի լեզվով: Մի՞թե հնարավոր է պատկերացնել Դանթեի «Աստվածային կատակերգությունը» և այդ գործի՝ Գյուստավ Դորեի մոնումենտալ պատկերազարդումները՝ առանց մխրճվելու տիեզերական հորձանուտի մեջ: Պիկասոն իր «Գերնիկայով» դեռևս 1937 թ. կանխազգաց ատոմային պատերազմի արհավիրքը: Չգիտես՝ զարմա՞նք է այն տիեզերքի ուժի առաջ, թե՞ սարսափ՝ գալիքի հանդեպ: Իսկ մի՞թե «տիեզերական» չէ Վան Գոգի երևակայությունը. նա ոչ միայն զգացել է տիեզերքը, նրա անհունությունն ու բազմազանությունը, նրանում փոթորկվող զարհուրելի ուժերը, այլև գտել է այդ ամենը ոչ գիտական լեզվով արտահայտելու կերպը՝ այն էլ ինչպիսի՜ ապշեցուցիչ ուժով: Այն աստղագետը, որը դժվարանում է պատկերացնել, թե ինչ բան է տիեզերքը, ...թող նայի նրա «Աստվածային գիշերը» /1888թ., հունիս/, որն իսկապես աստվածային գիշեր է, թող նայի ու մտածի...

Հապա Վան Գոգի Արեգակը: Նա նկարում է Արեգակի դիմանկարը՝ հզոր, հուրհրացող՝ որպես արքան տիեզերքի: Իզուր չեն Վան Գոգին անվանել «արևապաշտ»:

Տիեզերական սուր զգացողությունը բնորոշ է նաև Գոգենին... Տիեզերական գլուխգործոցում՝ նրա «Նիրվանայում», տիեզերքի կենտրոնում «Լուսին» երկիրն է: Իսկ նրա հոգեկան կտակի՝ «Որտեղի՞ց ենք մենք», «Ո՞վ ենք մենք», «Ո՞ւր ենք գնում մենք» կոմպոզիցիայի միտումը մարդուն տիեզերական առեղծվածներից մեկը համարե՞լը չէ:

Հապա պոեզիա՞ն: Վարուժանը, որ «հեթանոս» պոետ է, մի՞թե չի երազում այնպիսի մարդ ու մարդկություն, որն «արժանի ըլլա արևի շուրջը դառնալուն»: Նրա համար ամենափոքր մասշտաբը տիեզերքն է, ամենափոքր «կշռաքարը»՝ Արեգակը: Իսկ մի՞թե մարդու և տիեզերքի միասնությանը նվիրված մի վիթխարի հիմն չէ Նարեկացու «Մատյան ողբերգությունը». ...«Կարող էինք լինել մենք աստված նույնիսկ»,- ասում է նա ու սարսափում իր իսկ ասածից:

Տիեզերական է նաև Ավ. Իսահակյանի մտածողությունը՝ «Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ ես»...

Տիեզերական առեղծվածներով զբաղվող ոչ մի գիտնական չի կարող իր տեսադաշտից դուրս թողնել այս ամենը. այո՛, Ալբերտ Էյնշտեյնի հարաբերականության տեսությունը հասկանալու համար պետք է կարդալ Դոստոևսկի...

ԲԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Ը-83. & Ա. Կարդալ և ընդգծել՝ ա/ դիմավոր բայերի լրացումները՝ մեկ գծով. բ/ դերբայական ձևերի լրացումները՝ երկու գծով:

Բ. Առանձնացնել խնդիրները. ի՞նչ հիմունքով ենք սահմանազատում խնդիր և պարագա լրացումները:

Գ. Բացի բայից՝ այլ խոսքի մասերով արտահայտված անդամները կարո՞ղ են խնդիր և պարագա լրացումներ ունենալ:

Սարոյանը լավ գիտե մարդուն. նա մարդու գիտակն է: Ինչպես կարելի է պատշաճը չմատուցել այդ մեծ տիեզերքին՝ տիեզերքը ստեղծող տիեզերքին, չապշել, չզարմանալ նրա անսահման հնարավորությունների, անընմբռնելի բազմազանության վրա, ու ստեղծված ներդաշնակության վրա նաև. նա կախում էր գլուխը՝ մտմտալով. «Մեր տգիտությունը մեզի կապրեցնի»:

...Հոգով կենսախիզդ, էությամբ անչար Հայը գիտեր զրուցելու գաղտնիքը, նա կարող էր ժամերով լարված պահել իր զրուցակցին լսելու իր ապշեցուցիչ ձիրքով: Նա ուշադիր դիտում էր մարդուն, քննում, քրքրում ու նրա խորաթափանց հայացքից, խորունկ ու բարի աչքերից չէր վրիպում ոչինչ՝ հմայիչն ու վեհը, գեղեցիկն ու վսեմը, կեղծն ու արտահայտելին... Ու այսպես, շարունակվում է զրույցը մարդու մասին, տիեզերքի մասին, սկզբի ու վերջի մասին... «Եթե հանկարծ մարդը վերանա, տիեզերքեն բան մը կպակսի՞»,- հարցնում էր ու ինքն էլ հետևություն անում. «Ըսել է, մարդն ու աստղը տիեզերքի համար միևնույն բանն են»: Դա համընկնում էր մարդուն միշտ բարձր, միշտ վեհ, «աստղի կողքին» տեսնելու իր հայեցողության հետ:

..Սարոյանը տխուր մարդ էր. նրան ծանոթ էր տխրության փիլիսոփայությունը... Գիտեր, որ աշխարհում «Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է», ու միևնույն ժամանակ չէր կորցնում հավատը մարդու հանդեպ: Բայց քանի որ չափազանց անկեղծ էր ու պարզ, նա չէր կարող պահել իր տագնապը, վաղվա օրվա հանդեպ ունեցած իր թաքուն անհանգստությունը: Եվ, ով գիտե, գուցե այդ անհանգստությունն էր, որ նրա մեջ խմորեց արևելյան իմաստությամբ հունցված խոսքերը, «Կրնա ըլլալ, որ այս օրը մեր կյանքի ամենալավ օրն է»:

/Ըստ Գ. Գուրզադյանի/

Ը-84. Լ. Եզեկյանի «Հայոց լեզու» գրքից օգտվելով՝ բնութագրել «սեռի խնդիրներ» և «բնության խնդիրներ» արտահայտությունները և գրել խնդիրներին տրվող հարցերը:

🕮 Շ-85. Ա. Կարդալ, դուրս գրել ուղիղ խնդիրներն իրենց խնդրառու բայերի հետ. բայի ո՞ր սեռի թելադրանքով է դրվում ուղիղ խնդիրը, հոլովական ինչպիսի՞ ձևավորվածություն ունի և ի՞նչ հարցերի է պատասխանում:

Միրտոն գնացել էր ծաղիկներ քաղելու. ամբողջ այգին ծածկված էր դրանցով: Ո՞ր ծաղիկն ավելի շատ կուրախացնի Սոկրատեսին: Մի անկյունում՝ մարմարե բեկորների արանքում, գտավ մի մեծ դեղին անթառամ. շողշողացող ոսկե ակն, ոսկե արեգակ...

Ուզեց կռանալ ու պոկել, բայց շտկվեց: Ո՛չ: Դեռ չէ: Թե չէ կթառամի: Այնտեղ կգնա մայրամուտից առաջ...

-Սիրելի՛ս, թանկագի՛նս, ուզում եմ քեզ հրաժեշտ տալ վերջինը...

Միրտոն հանեց կրծքի վրա պահած անթառամը: Սոկրատեսը վերցրեց այն, նայում էր հուզված.

-Ինչպե՞ս իմացար, որ բոլորից շատ հենց այս ծաղիկն եմ սիրում:

-Ես գիտեմ, թե դու ինչքան ես սիրում արևը:

Սոկրատեսը վերցրեց թույնով լի գավաթը, զննեց դրվագված նախշերը, ժպտաց. ախր ինքը գուշակել էր, որ թույնն իրեն կմատուցեն գեղեցիկ ամանով: Մի հայացք գցեց արեգակնային ծաղկի վրա, շարժումով զոհահեղում կատարեց ի պատիվ նրա ու մի թափով խմեց: Եվ սկսեց քայլել քարացած ընկերների շարքի առջևով: Հետո դանդաղ, դժվարությամբ մոտեցավ մահճին, պառկեց, դեղին մազերի փունջը սեղմեց կրծքին: Թունավորողը շոշափեց, թե մինչև որտեղ է նրա մարմինը կորցրել զգացողությունը:

Ընկերները կամացուկ մոտեցան: Սոկրատեսը անթարթ նայում էր Միրտոյի ծաղկին:... Սոկրատեսը ժպտաց:

-Ուզո՞ւմ ես էլի ինչ-որ բան ասել, թանկագինս,- ցածրաձայն հարցրեց հին ընկերը:

Սոկրատեսը հայացքը չէր կտրում անթառամից:

-Ամեն մարդու մեջ արև կա, միայն թե թողեք, որ լու՛յս տա...

/Յոզեֆ Տոման, Միրոսլավա Տոմանովա/

☑ Բ. Ընդգծված նախադասությունը բանավեճի նյութ դարձնել:

🕮 Շ-86. ***Դիմավոր բայ + ուղիղ խնդիր*** **կաղապարով կապակցություններ կազմել, որոնցում ուղիղ խնդիրը՝**

ա/ իրանիշ գոյական է՝ արտահայտված իրի առումով

բ/ իրանիշ գոյական է՝ արտահայտված անձի առումով

գ/ անձնանիշ գոյական է՝ արտահայտված անձի առումով

դ/ անձնանիշ գոյական է՝ արտահայտված իրի առումով:

🕮 Շ-87. Գիտահանրամատչելի գրականությունից դուրս գրել նախադասություններ, որոնք իրենց կազմում ունեն հետևյալ կաղապարները՝

ա/ ստորոգյալ + բացառական հոլովով դրված ներգործող խնդիր.

բ/ ստորոգյալ + գործիական հոլովով դրված ներգործող խնդիր.

գ/ ստորոգյալ + հոլովակապային կառույցով արտահայտված ներգործող խնդիր /կողմից, ձեռքով/:

🕮 Շ-88. Տրված բայերին տրական հոլովով ձևավորված անուղղակի խնդիրներ ավելացնելով՝ բառակապակցություններ կազմել և որոշել նրանց իմաստային կառուցվածքը /հարաբերությունները/.

ա/ մատուցել, տալ, հանձնել, վաճառել, նվիրել, առաջարկել, կտակել, վարձատրել.
բ/ մոտենալ, մերձենալ, այցելել, բախվել, կպչել, ընդհարվել, հանդիպել.
գ/ կցել, գամել, մեխել, ձուլվել, հյուսվել, կապել.
դ/ մասնակցել, աջակցել, աշխատակցել, ուղեկցել, ցավակցել.
ե/ ասել, լսել, հաղորդել, հայտնել, թելադրել, հրամայել, պատասխանել, խոստովանել, հեռագրել, բարևել.
զ/ նմանվել, համապատասխանել, հավասարվել, ընկերանալ, բաղդատել.
է/ վերածվել, փոխարինվել, փոխակերպվել.
ը/ ուղղել, ուղղվել, դիմել,
թ/ ձգտել, կարոտել, ծարավել, նախանձել, հավատալ, խղճալ, աղաչել, խնդրել:

🕮 Շ-89. Կազմել մեկական նախադասություններ անուղղակի խնդիրներով /հանգման, մատուցման, վերաբերության, անջատման, ներգործման, միջոցի, սահմանափակման, համեմատության.../ և որոշել նրանց արտահայտության ձևը:

🕮 Շ-90. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել նախադասություններ, որոնցում հանգման, անջատման, միջոցի, վերաբերության անուղղակի խնդիրներն արտահայտված լինեն հոլովակապային կառույցներով:

🕮 Շ-91. & Ապրել, աշխատել, հոգալ, նայել **բայերի տարբեր սեռիմաստներով /չեզոք և ներգործական/ կազմել բառակապակցություններ, դրանցով էլ՝ նախադասություններ:**

🕮 Շ-92. Կազմել նախադասություններ, որոնցում տեղի պարագան արտահայտված լինի՝
ա/ տեղի մակբայներով.
բ/ ցուցական և հարցահարաբերական դերանուններով.
գ/ գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով.
դ/ կապական կառույցներով.
ե/ բառակապակցություններով:

🕮 Շ-93. Գտնել տեղի պարագաները, որոշել արտահայտության ձևերը:

Կրիան էր շարունակ մտքերիս մեջ: Այնտեղ, ուր թողեցինք նրան, իմ մանկության օրերի ոտք դրած վայրերն էին. ինչ-որ մեղեդի կար այդ բլուրների մենության, ամայության, բնակավայրերից հեռու լինելու մեջ: Դա ժամանակի ընթացքն է, որ զգում ես, քանի դեռ մանուկ ես, երբ ընկերներից ետ մնացած կանգնած նայում ես ու խորհում, թե ինչ է լինելու մութն

ընկնելուց հետո. այդքան ծանոթ, ուրախալի, արևով ողողված այս լանջերն ինչպես են ընկղմվում խավարի մեջ, դառնում ուրիշ, անծանոթ, վախեցնող, մոտեցող երեկոն սկսում է ահաբեկել քեզ, և դու փախչում ես դեպի ընկերներդ, դեպի տուն, դեպի ձերոնց: Այդ մեղեդին ամեն մեկը միայն այդ տարիքում է լսում, իսկ երբ այլևս մեծ ես, գիտես, որ խավարում ոչ մի խորհրդավորություն չկա...

Ուրեմն մեր գյուղի տակը քար է, իսկ դրսում համարյա քար չկա, հարթ սևահող է: Պատկերացնում էի այդ քարը, այդ պինդ ապարը, որի վրա մեր պապերը քայլեցին հազարավոր տարիներ և չիմացան, որ ոտքի տակ քար է: Պատկերացնում էի՝ ինչպես հատիչը կրճտում է խորքերում, խողովակն իջնում է քարի միջով, պատկերացնում էի՝ քարի ճեղքերում ջուր է ամբարված, ապա պատկերացնում էի՝ ինչպես պղտոր ալիքներով ջուրը պիտի հորդի խողովակից: Բոլոր կողմերից հավաքված մարդիկ կնայեն, և նրանց հայացքի ներքո ջուրը կսկսի պարզել...

Հոկտեմբերին կրկին անցնում եմ նույն վայրերով... Հեռուներում մեր գյուղն էր՝ խոր ձորերի մեջ, էլ ավելի հեռվում Քյումբաթի անտառապատ սարն էր, որի լանջին հախճապակե սկուտեղի նման սպիտակին էր տալիս Թռածի փոսը, որը...երկնաքարի բախումից գոյացած հսկայական մի խառնարան է իրականում, որի հատակին աղբյուր կա. միայն խառնարանի հատակին է ջուր հավաքվում: Կրիան հավանաբար հեռացել է այս տեղերից, թերևս բնազդաբար ճանապարհ էր բռնել դեպի Էրգան լեռը...

Ես հեռվից, շատ հեռվից, հարյո՜ւր, երկու հարյո՜ւր տարվա հեռավորությունից, արդեն ոչ աշխարհից, նայում էի ծանոթ սարերին ու սարերը չէի ճանաչում... Ովքե՞ր են ապրում սարերից այն կողմ, ի՞նչ մարդիկ են. առաջ այնտեղ մեր գյուղն էր: **/Զորայր Խալափյան/**

Ը-94. Կետերի փոխարեն տեղի պարագաներ ավելացնել:

1. Թեյը որպես դեղաբույս, առաջին անգամ հայտնվեց □: 2. Երբ 1969թ. ամերիկացի տիեզերագնաց Արմստրոնգը ոտք դրեց □, նրա մտքով չէր էլ անցնում, որ այդ առաջին քայլը իրեն կդարձնի մեծ կարողության տեր, կարողություն, որ կտակվել էր 1891 թ. □: 3. Դիվային եռանկյունին գտնվում է □: 4. Ատլանտիդայի լեգենդը, որը ծնունդ է առել հնադարյան □, մինչև այժմ էլ ապշեցուցիչ հետաքրքրություն է առաջացնում □: 5. Ամենամեծ գրադարանն աշխարհում ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանն է, որը գտնվում է □: 6. Ամենաշատ բառեր օգտագործված են Հոմերոսի «□» և «□»: 7. Ամենամեծ ուսումնական հաստատությունը Լոմոնոսովի անվան պետական համալսարանն է, որը գտնվում է □: 8. Նոբելյան մրցանակը շնորհվում է □: 9. Տասնիններորդ դարի սկզբին □ անտառահատ Կարլ ֆոն Դրեյզը ստեղծեց առաջին հեծանիվը: 10. Հոդոսի կոթողը գտնվում է □, եգիպտական բուրգերը՝ □, Ալեքսանդրիայի փարոսը՝ □:

🕮 Շ-95. Գրել նախադասություններ, որոնցում ժամանակի պարագան արտահայտված է՝
ա/ ժամանակի մակբայով
բ/ գոյականի հոլովաձևերով
գ/ դերբայով
դ/ կապով ու կապի խնդրով
ե/ բառակապակցությունով

🕮 Շ-96. Դուրս գրել տեղի և ժամանակի պարագաներն իրենց խնդրառու բայերի հետ և որոշել նրանց արտահայտության ձևերը:

Սիենայում տարվա մեջ մեկ օր միայն Արեգակը հայտնվում է ճիշտ գլխավերևում՝ զենիթում: Մի քանի հարյուրամյակներ առաջ էլ Էրաստոսթենեսի նախորդները մտածել են այս մասին, ու առաջին հերթին ինքը՝ երկրաչափության աստվածը՝ Պյութագորասը: Մտածել են ու չեն գտել լուծումը: Իսկ ինքը գտավ լուծումը. Սիենայում ամառվա արևադարձի օրը՝ կեսօրին, Արեգակը գտնվում է զենիթում:

...Վերջապես եկավ երկար սպասված օրը /մեր օրացույցով՝ հունիսի 22-ը/: Առավոտից երկինքը պարզ էր ու հստակ: Արեգակը դանդաղ բարձրանում է, նրան զուգընթաց կարճանում է ստվերը: Ստվերի՝ իր ամենակարճ պահին հասնելու պես նա արտաբերում է անկյունաչափի ցուցմունքը՝ 7,5°: Այս արտառոց ու աննախադեպ հայտնագործությունն արվել է ավելի քան 2000 տարի առաջ՝ մ. թ. ա. 250թ.... Գիտության պատմությունն այնքան էլ հարուստ չէ այդ հեռավոր ժամանակներում արված հայտնագործություններով: Դա մտքի սխրանք էր, որ ծնվեց հին-հին դարերում և հասավ մինչև մեր ժամանակները: Այսօր, երբ կա ժամացույց ու թեոդոլիտ, երկրի չափերը կարող է որոշել ամեն մի ուշիմ աշակերտ: Էրաստոսթենեսի ժամանակ թեոդոլիտին փոխարինել է ջրհորը, իսկ ժամացույցին՝ ուղիղ ցցված ձողը: Այսօր այդ նույն դպրոցականը միայն ժպիտով կարող է նայել այդպիսի չափողական տեխնիկային: Բայց նա չի կարող չխոնարհվել այն հզոր մտքի առաջ, որ մարդկության քաղաքակրթության այդ հեռավոր ժամանակներում կարողացել է հասնել տիեզերական առեղծվածների վերծանմանը:

Դարերի հեռվից էլ նա սովորեցնում է մտածել, մտածելիս էլ՝ գործնական լինել:

...Խոր ծերության շրջանում Էրաստոսթենեսին հասնում է ծանր դժբախտություն. նա կուրանում է: Երկու աչքից: Ընդմիշտ: Եվ մի օր, բաց անելով երակը, վերջ է տալիս իր կյանքին: Նա աշխարհ էր եկել, որպեսզի տեսներ արևը....

🕮 Շ-97. Տրված ժամանակի պարագա-բառակապակցություններով կազմել նախադասություններ՝ ուշադրություն դարձնելով կետադրությանը:

Դեռ բլրի կատարին չհասած, մանկությունս հիշելիս, երկար տարիներ հետո, տանը նստած, հանկարծ նկատելով մոտեցող անծանոթին, վերջին խոսքի վրա, նախքան բակ մտնելը, այդ օրից ի վեր, դեռ ջուրը չտեսած, դեռ վերջին խոսքի հնչյունը չմարած:

🕮 **Շ-98. Կազմել ձևի պարագա ունեցող նախադասություններ, որոնցում դրանք արտահայտված են՝**

ա/ ձևի մակբայով
բ/ դերանունով
գ/ դերբայով
դ/ բառակապակցությամբ
ե/ որակական ածականով
զ/ բաշխական թվականով
է/ կապային կառույցով
ը/ դարձվածային արտահայտությամբ

🕮 **Շ-99. Տրված կրկնավորները կիրառել ձևի պարագայի պաշտոնով և ուշադրություն դարձնել գործողության հատկանիշի դրսևորմանը:**

▶ ուրախ-ուրախ ▶տխուր-տխուր ▶հպարտ-հպարտ ▶լուրջ-լուրջ
▶ամուր-ամուր ▶շիթ առ շիթ ▶կաթիլ առ կաթիլ ▶էջ առ էջ:

🕮 **Շ-100. Գտնել ձևի պարագաները, որոշել արտահայտության ձևերը:**

1. Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ: 2. Կյանքս հավետ քեզ անծանոթ տաճարում Կանթեղի պես առկայծում է քո դիմաց: 3. Մեկը իմ սիրտը փշրելով անցավ: 4. Դու մոտեցար մեղմ, համրաքայլ, Որպես քնքուշ իրիկվա փայլ: Անակնկալ բախտի նման Հայտնվեցիր պայծառ-անձայն. Անջատվեցինք համր ու հանդարտ... 5. Դու գնում ես՝ չգիտեմ ուր, Լուռ ու տխուր, Հեզ գունատվող աստղի նման: Ես գնում եմ տրտում-մենակ, Անժամանակ Ծաղկից ընկած թերթի նման: Դու գնում ես՝ չգիտեմ ուր, Սրտակտուր Լացդ պահած իմ հայացքից: Ես գնում եմ լուռ-անտրտում... 6. Դու անհոգ նայեցիր իմ վրա Ու անցար քո խաղով կանացի. Ես քեզնից դառնացած հեռացա... 7. Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում Երեկոն վառեց լույսեր դժգունակ... 8. Քո պայծառ գահից մեղմորեն իջիր... 9. Տխուր կժպտաս դու հոգնածորեն Ու հոգնածորեն դուռը կբբանաս, Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս, Եվ արցունքներդ հանդարտ կընծորեն: 10. Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով ժպտում են նորից անտառ ու ձորակ, Եվ հեղեղները խոսուն-սառնորակ Ողջունում են ինձ զվարթ ծիծաղով: 11. Աշնան տխրահեծ անձրևի նման, Անձրևի նման լալիս են անվերջ Այն հնչյունները մեղմ ու միաձայն: 12. Սառն աչքերով եմ նայում ես հեռվում Մեռած օրերիս ցնորքին հիմա:

/Վ. Տերյան/

🕮 **Շ-101. Կազմել նպատակի պարագա ունեցող նախադասություններ, որոնցում դրանք արտահայտված են՝**

ա/ գոյականի տրական հոլովով.
բ/ անորոշ դերբայի տրական հոլովով.
գ/ հանուն, համար, նպատակով **կապերով և նրանց խնդիրներով:**

🕮 **Շ-102. Կազմել պատճառի պարագա ունեցող նախադասություններ, որոնցում դրանք արտահայտված են՝**

ա/ գոյականի բացառական հոլովով.
բ/ անորոշ դերբայի բացառական հոլովով.

գ/ պատճառով, հետևանքով, ձեռքից, երեսից կապական բառերով և կապի խնդիրներով.
դ/ բառակապակցությամբ:

📖 Շ-103. Գրել հիմունքի և հակառակ հիմունքի /զիջման/ պարագա ունեցող 2-ական նախադասություններ:

📖 Շ-104. Կազմել չափ ու քանակի պարագա ունեցող նախադասություններ, որոնցում դրանք արտահայտված են՝
ա/ նորից, կրկին, քիչ, անընդհատ, անդադար, անչափ, բազմիցս, կիսով չափ, գիշեր-ցերեկ, օրնիբուն, օրեր ու շաբաթներ, հրճվելու աստիճան, երկրորդ անգամ **բառերով և բառակապակցություններով.**
բ/ թվականի կամ մակբայի և անգամ **բառի կապակցությամբ** /հազար անգամ, շատ անգամ.../.
գ/ թվականի և չափ արտահայտող գոյականի կապակցությամբ /2 ռուբլի. 3 մետր..../
դ/ ժամանակային նշանակություն ունեցող գոյականների ուղղական, գործիական և ներգոյական հոլովաձևերի և թվականի, դերանվան կամ մակբայի կապակցությամբ /ողջ գիշեր, 3 օրով, շատ օրեր.../.

📖 Շ-105. Յուրաքանչյուր կետից ընտրել 2 կապ /կամ կապական բառ/ և կազմել կապական կառույց: Դրանք օգտագործել նախադասությունների մեջ՝ որոշելով ձևավորված պարագայի տեսակը, օր.՝ առաջ –տարիներ առաջ - Տարիներ առաջ նա հեռացել էր քաղաքից: **/Ընդգծվածը ժամանակի պարագա է/:**
ա/ Վրա, դեպի, առաջ, առջև, մեջ, դիմաց, ներքև, միջև, ի վեր, ի վար, տակ, քով, մոտ, կողքը, դեմ, ներս, դուրս, դեպի, մինչև:
բ/ Անց, ժամանակ, հետո, առաջ, ընթացքում, մինչև, սկսած, միջոցին, պահին, նախքան, վրա, ի վեր, մոտ, օրոք:
գ/ Ըստ, համաձայն, շնորհիվ, հիման վրա, առիթով, համեմատ, նայած, կարծիքով:
դ/ Հակառակ, փոխանակ, ի հակադրություն, չնայած, չնայելով, փոխարեն, ի հեճուկս, հանդերձ:
ե/ Պատճառով, ձեռքից, երեսից, հետևանքով:
զ/ Համար, հանուն, ի, նպատակով:
է/ Պայմանով, դեպքում:
ը/ Ինչպես, անկախ, վրա, տակ, կերպով, համընթաց, պես, նման, որպես:
թ/ Չափ, անգամ:
ժ/ Հետ, հանդերձ, միասին:

📖 Շ-106. Ա. Կարդալ և ընդգծել բայական անդամի լրացումները, որոշել նրանց բառաբերականական հատկանիշները, շարահյուսական գործառույթը:
Ոտքը շենից դուրս դնելուն պես ջրվեժը խշշաց ականջների մեջ: Մի պահ նրան թվաց, թե իրոք ջրվեժի ձայնն է... Ջրվեժի ձայնն է... Քեռի Թորոսիկի

շուրթերը շարժվեցին, բայց ձայնը ականջը չընկավ, ականջներում ջրվեժի խշշոցն էր... Իսկ որտեղի՞ց, ո՞ր սարի թիկունքից, ո՞ր ձորից է գալիս հասնում գյուղ, որ ինքն առաջին անգամ է լսում... Հետո գլխի ընկավ, որ դա արշալույսի ձայնն է:

Հետո նայեց երկինք: ...Միայն Լուսաստղն էր թրթռում Հայոց լեռնապարին... Մի՞շտ է այդպես եղել.. Մի՞շտ Լեռնապարին ու հենց այդպե՞ս... Ջրվեժի ձայնը... Երկնքում ու երկրի վրա դեռ որքան բան կա, որ քեռի Թորոսիկը չի նկատել, չի զգացել... Աղոթարանի ձայնը... Մի՞շտ է այդպես եղել:

Հրաշք է աշխարհը:

Հրաշք է երկինքը, որ պայծառ օր է խոստանում, հրաշք է երկիրը, բացկուրծք սարերը, որ լուսաբացին կապույտ հորձանք էին արձակել: ...Հրաշք էր մութ անձավներում խցկված ձորը. ձորով գետի պես արշալույսն էր հոսում, հրաշք էին իմաստուն քարերը, արշալույսի սարսուռով բռնված ծառերը, խոտերը, ընկուզենին... Հրաշք էր աշխարհի գետերի ու ջրվեժների տնազն անող Թլորիկ առվակը...

Այսպիսի հրաշք-արշալույս Քեռի Թորոսիկն առաջին անգամ էր տեսնում:

Չնայած ողջ գիշեր արևի մասին էր մտածել, այնքան երկար էր գիշերը, արևն՝ այնքան հեռու: Քեռի Թորոսիկը Էրգրի չափ կարոտել էր արևին և իրեն անկողնուց դուրս գցեց արևացայտը տեսնելու, բայց հիմա ուզեց, որ աղոթարանը երկարի:

Հրաշք էր արշալույսը՝ ջրվեժի նման հզոր, չմփչմփան, նորածնի պես անմեղ-անարատ – կարծես աշխարհի առաջին լուսաբացն է՝ զուլալ ու անարատ, անմեղ ու անարատ...

Հետո... հետո այսպիսի արշալո՞ւյս... անմեղ, անվրդով, անարատ... Որտեղի՞ց է ծնվում այսպես անարատ, ո՞ւմ ժառանգն է: Ուրեմն... ուրեմն – Քեռի Թորոսիկը թող հոգուն մեղք գործի - ուրեմն արշալույսը խաբում է... Թե չէ, ահա, Քեռի Թորոսիկը խեղդվում է, իսկ արշալույսը այսպես անմեղ ու անվրդով... Հետո մի կերպ շունչ առավ, ճիգով բարձրացրեց գլուխը և արցունքակալված աչքերով նայեց աշխարհին... Իսկ արևացայտը... արևածագը... Արևը, ահա նորածին Արեգակը... Տես՝ մորեմերկ, լողացած այս հրաշք մանկիկը... Ինչո՞վ է մեղավոր...

-Էս արդար Արեգակն ի՞նչ մեղք ունի... /Մ. Գալշոյան/

Բ. Վերոբերյալ հատվածից դուրս գրել անվանաբայական /բաղադրյալ/ ստորոգյալներն իրենց լրացումներով:

ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ա Շ-107. Ա. Յուրաքանչյուր նախադասությունը /բաղադրիչ նախադասությունը/ բնութագրել ըստ անդամների առկայության:

& ❖ Բ. Առանձնացնել թերի նախադասությունները և նշել դրանց կառուցվածքային, հնչերանգային առանձնահատկությունները: Թերի նախադասությունը լեզվի ո՞ր գոյաձևում է առավել գործածելի և ինչո՞ւ: Փորձել բացատրել խոսքի «տնտեսման օրենքը»:

Գ. Դուրս գրել զեղչված ենթակայով և զեղչված ստորոգյալով նախադասությունները և բացատրել նախադասության գլխավոր անդամների զեղչման դեպքերը:

Մասրենու խոնարհ մի թուփ է փարթամորեն պերճանում Մխիթարի թարմ շիրմի մոտ: Լուսաբացին լեռնալանջը հերկելու գնացող շինականը այդ շիրմին թափած ծաղիկներ տեսավ:

Այդ նույնը տեսավ ուրիշ օրեր ևս...

Դրանք լեռնային ծաղիկներ էին, որ ամեն լուսաբացի Գոհարը աչքից ծածուկ բերում, իր արցունքների հետ շաղ էր տալիս Մխիթարի գերեզմանին և ապա իր հոր ամրոցի բարձր աշտարակից հսկում նրա անդորրը:

Լուսաբացին անուշ հորովել էր ծորում լեռնալանջի արտերից ու ժայռի վրա բարձրացող շիրիմի մոտ ծեր գուսանը հյուսում էր իր գեղջկական երգը՝ անցած-գնացած քաջության գործերի մասին:

Լուսաբացին զինավառ շինականները, երդման խոսքեր շուրթերին, սրբացած շիրիմի մոտով գնում էին դեպի Արաքսի կիրճը... Վերադառնում էին նոսրացած շարքերով, բայց հաղթանակած: Ապա գնում, անցնում էին հուշ դարձած, իրենցից առաջ եղած սերունդների նման...

Նոր կտրիճներ էին աշխարհ գալիս Սյունիքում և նոր աղջիկներ: Նոր ծաղիկներ էին ցանում լեգենդ դարձած ռամիկ զորավարի շիրիմին:

Նոր թշնամիներ էին գալիս Հայոց աշխարհի վրա, ու նոր քաջեր էին նրանց դուրս մղում իրենց հինավուրց հողից:

Այսպես ապրեցինք դարեր... **/Ըստ Ս. Խանզադյանի/**

🕮 **Շ-108. ◆ Ա. Առոգանությամբ կարդալ՝ ուշադրություն դարձնելով հնչերանգին:**

Բ. Գտնել թերի նախադասությունները /բաղադրիչ-նախադասությունները/, անվանել բացակայող անդամ/ներ/ը. բացատրել հնչերանգի դերը նման նախադասությունների ձևավորման հարցում:

Գ. Բնութագրել թերի նախադասությունները /ըստ կազմության, հնչերանգային առանձնահատկությունների, ասվածի և իրականության հարաբերության/:

- Ուզո՞ւմ ես՝ քեզ սիրեմ:
- Ուզում եմ...
- Նորի՛ց եմ ուզում հարցնել:
- Հարցրու՜:
- Ասենք թե թակում եմ դուռդ:
- Ներս կթողնեմ:
- Ասենք թե կանչում եմ:
- Կգամ:
- Իսկ եթե դժբախտություն լինի:
- Թող լինի դժբախտություն:
- Իսկ եթե խաբեմ:
- Կներեմ:
- Երգի՛ր, - հրամայում եմ քեզ:
- Կերգեմ:
- Փակի՛ր ընկերոջդ առջև քո դուռը:
- Կփակեմ:
- Ասում եմ՝ քեզ սպանիր:
- Կսպանեմ:
- Ասում եմ քեզ՝ մեռիր:
- Կմեռնեմ:
- Իսկ եթե ես կործանվե՞մ:
- Կփրկեմ:
- Իսկ եթե պա՞տ հայտնվի քո դեմ:
- Կտեղաշարժեմ:
- Եթե հանգույցի հանդիպես:
- Կքանդեմ հանգույցը:
- Եթե հարյուր հանգույց հանդիպի:
- Եվ հարյուրը:
- Սիրե՞լ խոստանամ քեզ:
- Սիրե՜լ:
- Չի՛ լինի:
- Ինչո՞ւ:
- Ես ստրուկներին տանել չեմ կարող:

/Ըստ Ռ. Ռոժդեստվենսկու/

🕮 **Շ-109. Արտագրել՝ վերականգնելով պակասող անդամները, և համեմատել. ո՞ր դեպքում է խոսքը կորցնում իր դիպուկությունը, արտահայտչականությունը և դառնում միապաղաղ, միալար, կրկնվող ու ձգձգված:**

Սև դարերի խորքից գալիս է մի գիրք: Դարերի միջից թափանցող լույսի է նման՝ դողդողում է, բայց գալիս է. թե ինչ վտանգներ է անցնում, չի տեսնում նա: Ո՛չ ձմեռ, ո՛չ խավար: Ո՛չ կրակն է այրում նրան, ո՛չ շոգը խեղդում: Հրա՞շքն է պահում նրան, թե՞ պատահմունքը: Բայց սերունդները խնամում են նրան, թաքցնում, փրկում և ավանդում հետնորդներին, ձեռքեձեռք անցկացնում դարերի փորձանքներից, անցկացնում հուր, սուր, ջուր:

Ժպտում է գիրքը: Միամի՞տ է նա, անհո՞գ է նա, խորամա՞նկ է նա և գիտե՞ իր գործը կարգադրել: Թե՞ իմաստուն է, հայտնի է իրեն իր ճանապարհի գիրը:

Նման արևի լույսին, որ անհոգ խաղում է փրփրած ծովի կատաղի ալիքների վրա: Դեղնում են ալիքները, կապտում, փրփրալի ժայթքում, գոչում, բռնցքվում արևի դեմ, բայց նա ժպտում է: Վտանգ չի իմանում նա, ատելություն չի դիպչում նրան, ալիք չի փշրում նրան:

Հազար ձեռքեր պահել, շոյել, շոշափել են այդ ծաղիկները՝ կյանքի գեղեցկությունը, հազար-հազար աչքեր նայել են նրանց հետևից սիրով ու թախիծով: Մոխրացել են հազար ձեռքեր, տեսնչալի աչքեր, և մնացել է այս ջերմ գիրքը:

Բնաջնջվում է մի ամբողջ ժողովուրդ: Ոչ թե մի գիրք: Թնդանոթներն ահեղ վիճակում են, «նա կորա՞ծ է»... - ո՛չ, «նա փրկվա՛ծ է», «...հրա՛շք է, թե փրկվի...»:

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկելույս թերթերից գրքի, որ ընկած մի մեծ ճանապարհի վրա նայում է նրան մտերմորեն: Նա փրկված է իրեն միշտ փրկող ժողովրդի հետ:

Երկաթե գրադարաններում լռում են դարերը: Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ... /Դ. Դեմիրճյան/

📖 Շ-110. Արդյոք ճի՞շտ տեղերում են նախադասությունները:

ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ	ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
Հիանալի՜ մարդ:	Մութ գիշեր ... խավար...
Եղանակն անտանելի էր:	Ամառային օր...
Ինձ համալսարանից կանչել են:	Օրը մթնեց:
Մթնեց:	Երկար ժամանակ այդ մասին չէին խոսում:
Գրքի մասին արդեն խոսվել է:	Ցրտելու է:
Քիչ խոսիր, շատ լսիր:	Անձրև է գալիս:
Անձրևում է:	Մութն ընկավ:
Ջրի մեջ կոկորդիլոսի հետ մի՛ վիճիր:	Ծուռ փայտին մի՛ հենվիր:
Ծագում է մանուկ արևը գարնան...	Ոչ մի երգ չհնչեց այդ օրը:
Ո՛չ մի երգ...	Չարժե մեռնել նրա համար:
Հարևաններն այդ մասին երկար ժամանակ չէին խոսում:	Մարդ ի՞նչ իմանա իր գլխի գալիքը:

📖 Շ-111. Գեղարվեստական աղբյուրներից ընտրել միակազմ նախադասություն-բանաստեղծական տողեր այնպես, որ դրանք կազմությամբ լինեն՝

ա/ պարզ համառոտ /5 նախադասություն/

բ/ պարզ ընդարձակ /5 նախադասություն/

գ/ բարդ /3 նախադասություն/

դ/ բարդ նախադասության բաղադրիչ /3 նախադասություն/:

🕮 Շ-112. Կազմել 3-ական ձևական դիմավոր նախադասություններ, որոնք ըստ իրենց բովանդակության և կիրառության ոլորտի՝ արտահայտում են՝ ա/ բնության երևույթներ. բ/ ժամանակ. գ/ հասարակական, անհատական և այլ կարգի երևույթների ինքնին առկա լինելը:

🕮 Շ-113. Գեղարվեստական գրականությունից ընտրել անորոշ դիմավոր նախադասություններ, որոնցում ձևական ենթական մարդ բառն է:

🕮 Շ-114. Կարդալ հետևյալ միակազմ նախադասությունները և որոշել նրանց գլխավոր անդամի ձևակազմությունը:
✓1. Գայլին սատկեցնում են /սատկացնում են/ ոչ թե նրա համար, որ նա ունի գորշ ագի, այլ նրա համար, որ կերել է մաքի: ✓2. Ամառվա անձրևին, ձմեռվա արևին մի՛ հավատա: ✓3. Հարուստի հագին շոր տեսան, ասին շնորհավոր, աղքատի հագին տեսան, հարցրին՝ որտեղի՞ց է: ✓4. Պտղատու ծառին շատ քար կգցեն: ✓5. Ձիուն պայտում են, իսկ գորտը ոտքն է պարզում: ✓6. Առաջ կե՛ր, վերջը գոհացի՛ր: ✓7. Ինչքան շուտ վեր կենաս, այնքան շատ բան կտեսնես, ինչքան ուշ քնես, այնքան շատ բան կլսես: ✓ 8. Թե տունը մեծ ունի, մեծին պաշտիր, թե մեծ չունի, մեծ քար դիր, նրան մեծի տեղ պաշտիր:

🕮 Շ-115. Ա. Պ. Սևակի «Անլռելի զանգակատնից» բերված հատվածում գտնել միակազմ նախադասությունները, նշել հնչերանգային տեսակը:
Բ. Առանձնացնել անվանական անդեմ նախադասությունները, ընդգծել գերադաս անդամը և որոշել արտահայտության ձևը:
Գ. Ընդգծվածների երկրորդական անդամներ գտնել և որոշել տեսակը:

...Գանձե՛ր, գանձե՛ր՝ փականքի տակ,
Իսկ գանձերի տերն՝ անգիտակ:
Անբանալի գոց գանձարան...
Կյանքը դող լինի թող տանջարան.
Թեկուզ մեռնես, բայց ման արի,
Փնտրիր, գտիր այդ բանալին:
Եվ աչքերն է ցավով թարթում:
-Տարիները թող որ վազեն:
Աչքերի դեմ, քուն թե արթուն,
Չվերծանված խազե՛ր, խազե՛ր.-
Աստվածային վսեմ «Տաղ»-եր,
Որ ծալքերում մագաղաթի
Ժամանակն է փոշով թաղել.
Գանձի նման անգին «Գանձ»-եր,
Բայց ի՞նչ օգուտ, երբ չեն կարող
Կիզել անձեր,
Հոգի խանձել.
Անշարժացած-անշարժ «Փոխ»-եր-,
Ինչպե՞ս շարժել, տեղից փոխել.
Դիակնացած «Քարոզ» ու «Ճառ»,-
Ինչպե՞ս գտնել հարության ճար.
«Եղիցի»-ներ, «Ավետիս»-ներ,-
Ա՜խ, թե նրանց հնչող տեսներ...
Շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր,
Եվ մամուռի ու փոշու տակ՝ շիրմագրքե՛ր,
Եվ ի՜նչ խոսուն շիրմագրքեր...
Իսկ նա վիրավոր աչքերն է թարթում:
-Թող ժամանակը անտարբեր վազեր:
Իսկ աչքերի դեմ՝ քնած թե արթուն՝
Նորից բերանփակ խազեր ու խազեր:

🕮 Շ-116. Կազմել անդեմ նախադասություններ, որոնց կենտրոնական անդամը՝
▶ գոյական է ▶ածական է ▶ մակբայ է
▶ դերանուն է ▶ թվական է ▶ բայ է

🕮 Շ-117. Կազմել բայական անդեմ նախադասություններ, որոնք արտահայտում են՝
ա/ հրաման, կարգադրություն, ցուցում գ/ պահանջ, առաջարկություն, կոչ
բ/ երկմտություն, կասկած, երկընտրանք դ/ խղճ, ցանկություն, տենչանք:

🕮 Շ-118. ❖ Հատվածում եղած նկարագրությունն արտահայտել երկկազմ նախադասություններով և երկու նկարագրությունների համեմատությամբ բացատրել ոճական տարբերությունները: Փորձեք կազմել միակազմ նախադասությունների ժխտականը...

Ութը հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր:
Եվ Մայր Արաքս, և Մայր Տաճար:

Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր:
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր.... **/Պ. Սևակ/**

🕮 Շ-119. Ա. Կարդալ հատվածը և փոխադրել՝ երկկազմ նախադասություններից /բաղադրիչ-նախադասություններից/ յուրաքանչյուրն արտահայտելով միակազմ նախադասության միջոցով:

❖ Բ. Կատարել կառուցվածքային, իմաստային, հնչերանգային, ոճական համեմատություն:

Ամառ էր: Կապտամշուշ երկնքում արևը կախվել էր ձգված մի թելից: Արտը պապակ էր: Կանաչը արևահար էր, կանաչը՝ թևաթափ: Իրիկնապահին «ձորից ջուր խմած» ամպերը ելան, իրիկնապահին որոտաց երկինքը և... Վազեցի արտի մոտ. արտի չափ ծարավ էի: Ու անձրևը գալիս էր՝ թշշում էր հողը, ու անձրևը գալիս էր՝ թրջվող հողի բույրն էր ելնում, ու անձրևը գալիս էր՝ կանաչը շտկվում էր: Եվ գալիս էր՝ հանդարտ, մանրակաթ, մաղմղելով...

Դեմքից շտրիխներ եմ որսում: Ճակատի վրայից՝ զուգահեռ, մազե երկու կամուրջ՝ գալիք օրերի ու տարիների համար: Քունքերի վրայից՝ երկու կապույտ երակ: Գանգուրների միջից՝ ժամանակի մի քանի ճերմակ ստվեր:

Նրա ձայնն ու հայացքը շա՜տ են նման՝ մեղմ ու հանդարտ... Նորից եմ հիշում. պապակշուրթ արտ, բարեհանդարտ անձրև, որի կաթիլների մեջ երկնային թախիծ կար: **/Ըստ Մ. Գալշոյանի/**

🕮 Շ-120. & Ա. Հ. Թումանյանի «Անուշ» պոեմից դուրս գրել միակազմ նախադասությունները՝ փակագծերում նշելով տեսակը:

Բ. Արտասանել Պ. Սևակի «Ապրել» բանաստեղծությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով «ապրել» անորոշ դերբայով ձևավորված միակազմ նախադասությունները /միայնակ կամ լրացումներով/: *Ապրել, ապրել, այնպե՛ս ապրել, որ....* կաղապարով 5-7 նախադասություն կազմել:

❖ Գ. Վերհիշելով գրել Վ. Տերյանի «Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ...» բանաստեղծությունը և փորձել պարզել «չոր ու ցամաք» անորոշ դերբայների շարանի բովանդակային և ոճական-արտահայտչական արժեքը:

🕮 Շ-121. & ◆ Մոտավորապես գրել անվանական և բայական անդեմ նախադասությունների այն շարքը, որը, ըստ ձեզ, կօգտագործվի՝
ա/ բժշկական ասպարեզում /ասենք՝ վիրահատության ժամանակ..../
բ/ մարզական ասպարեզում /ասենք՝ ֆուտբոլային խաղի ժամանակ.../:
գ/ բուհական միջավայրում /ասենք՝ գրավոր քննություն հանձնելիս../:

🕮 Շ-122. Արդյոք վերնագրերը /«Մթնշաղի անուրջներ», «Դեպի լսառն Մասիս», Հեռանալ» և այլն/՝
ա/ անդե՞մ նախադասություններ են.
բ/ բառե՞ր են /բառակապակցություններ՞ են/
գ/ միջին օղա՞կ են բառի /բառակապակցության/ և անդեմ նախադասությունների միջև:

🕮 Շ-123. Կարդալ Մ. Գալշոյանի «Քեզ վերևից չպետք է նայել» ակնարկների բովանդակությունը կազմող վերնագրերը և բացատրել դրանց ձևակազմությունը:
▸Քեզ վերևից չպետք է նայել ▸Ցանկանում եմ, որ դուք նման լինեք ձեր հորը ▸Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ ▸Անձրևի մասին ▸Մայրական կապով. ▸Ծխասյուները ▸Անվախճան գիշերում ուղեկցող լույսը ▸Նրա ձեռքերում դանակը կյանք է ▸Մի բաժակ թեյ ▸Ծիրանի ծառ ▸Խոսրով քեռու այգին ▸Իր ճամփան գտած մարդը ▸Հորովելին ու կալի երգին վերջ չկա ▸Կյանքին դաջված ոտնահետքեր ▸Լեռների որդեգիրները ▸Հետքեր հողի վրա ▸Գարնան հյուրընկալները ▸Հովվական մեղեդի ▸Լեռնային քայլերգ ▸Նոր չեն անապատում ▸Անապատից քաղցրություն քաղող մարդիկ ▸Եվ ամառն է այդ ձեռքերում ▸Կանաչափ առվի երթը ▸Շուրթեր օրհնանքի և ճշմարտաբառ ▸Տաք ձեռքերով մարդիկ ▸Հպարտ ժողովուրդ ենք ▸Դու՛ նայի, դու... «Անանուն» դրոշմանիշներով ▸Խիզախների առաջին տոնը ▸Նոր Կաղնուտը. ▸Հանգրվաններ ▸Ղարիբ Հայաստան ▸Լեռներ թամբող մարդը ▸Արագածի բացված գրկում ▸Սելավի նրբերանգ գոտին ▸Կատարում եմ Հայկուշ մայրիկի պատվերը ▸Ամեն մարդ աշխարհում իր անկյունն ունի ▸Ոսկեվազի դուստրը ▸Ճանապարհը սրտով է անցնում ▸Հայի պես հին է երգը հայոց ▸Կյանքի ոլորաններով ▸Գարնանը կհանդիպեն ▸Պատվանդանները ▸Լուրթ երկնքի տակ, մայր հողի վրա ▸Բարև, հորեղբայր Զավեն ▸Դու ճիշտ ես, Աշոտ ▸Արաքս, գիժ Արաքս ▸Փոթորիկ ▸Անթեղված ոգի ▸Արարատյան դաշտ ▸Ապարան ▸Թալին ▸Քարակերտ ▸Ընծայագիր. ▸Անհանգիստ մարդու դիմանկարը ▸Պորտալար ▸Ձեռքերը:

🕮 Շ-124. Ա. Տրված բառ-նախադասությունները /Բառ-նախադասություն են կոչվում այնպիսի բառերը կամ առանձին մասերի չբաժանվող ամբողջական բառակապակցությունները, որոնք լրացումներ չեն ընդունում/ դասդասել ըստ աղյուսակի՝

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ	ԺԽՏԱԿԱՆ	ՀԱՐՑԱԿԱՆ

Այո՛: Հա՛: Ինչպես չէ: Ինչու չէ: Իհարկե: Աստված մի արասցե: Անշուշտ: Միգուցե: Ոչի՞նչ: Գուցե: Հարկավ: Լավ: Ինչպե՞ս: Անկասկած: Բնավ: Այն էլ ինչպես: Դե իհարկե: Պարզ չէ՞: Ոչ: Չէ՛: Հազիվ թե: Բոլորովին: Ամենևին: Դժվար թե: Քավ լիցի: Աստված չանի: Այո՞: Ո՞չ: Հերիք է: Հաստա՞տ: Հապա: Ճի՞շտ: Հապա՛: Ինչպե՞ս թե ինչ:

❖ Բ. Խոսքի ո՞ր ոլորտին են բնորոշ բառ-նախադասությունները. ո՞րն է նրանց գործառական արժեքը:

Գ. Հնարավո՞ր է բառ-նախադասություններին լրացումներ ավելացնել կամ դրանք ընդարձակել:

🕮 Շ-125. & Նախադասություններ կազմել՝ տրված բնութագրումներին համապատասխան:

1. պարզ ընդարձակ, լրիվ, երկկազմ, պատմողական
2. պարզ համառոտ, թերի, երկկազմ, հրամայական
3. պարզ ընդարձակ, միակազմ, դիմավոր ընդհանրական, պատմողական
4. պարզ, լրիվ, երկկազմ, հարցական
5. բարդ /երկբաղադրիչ/ նախադասություն, որի մի նախադասությունը պարզ համառոտ է, լրիվ, երկկազմ, հարցական, մյուսը՝ պարզ ընդարձակ, թերի, երկկազմ, պատմողական
6. բարդ նախադասություն, որի առաջին նախադասությունը պարզ ընդարձակ է, միակազմ, անդեմ, հրամայական, երկրորդը՝ պարզ ընդարձակ, երկկազմ, լրիվ, պատմողական

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

🕮 Շ-126. Ա. Գրել այն դերբայները, որոնք կարող են դերբայական դարձված կազմել:

Բ. Դրանցով 2-ական երկանդամ և բազմանդամ դարձվածներ կազմել և օգտագործել նախադասությունների մեջ:

🕮 Շ-127. Կազմել դերբայական դարձվածներ նշված կաղապարներով՝

ա/ անորոշ դերբայ + լրացում + լրացման լրացում.

բ/ համակատար դերբայ + լրացում.

գ/ համակատար դերբայ + բազմակի լրացումներ.

դ/ հարակատար դերբայ + լրացում + լրացում + լրացման լրացում.

Ե/ լրացում+ենթակայական դերբայ + լրացում + լրացման լրացում.
Զ/ համակատար դերբայ + կողմնակի ձևի պարագա + կողմնակի տեղի պարագա.
Է/ լրացում + կողմնակի անջատման անուղղակի խնդիր + անորոշ դերբայի տրական հոլով + պատճառով:

🕮 **Շ-128. Կազմել նախադասություններ՝ տրված դերբայական դարձվածներն ունենալով նախադասության սկզբում, մեջտեղում, վերջում:**
Մառախուղի մեջ անհետացող, քո մասին մտածելիս, ձյունի արցունք թափող, տարիների մոխիրների տակից արթնացնելով մանկության կրակները:

🕮 **Շ-129. Ընդգծված դերբայով կազմել դերբայական դարձված /այն դարձնել գերադաս անդամ/՝ ա/ օգտագործելով փակագծերում տրված բառերը՝ մտքին համապատասխան ձևափոխելով.**
բ/ ինքնուրույնաբար կազմելով:
● 1. Գիշերները, երբ <u>խոսող</u> աստղերն էին թափվում, հավաքում էի, դնում բարձիս տակ /անթև, երազ, հետ, թեթև-թեթև, թրթիռ/: 2. Երկնքի հեքիաթն էին պատմում ձյան <u>հալվող</u> փաթիլները /աքանչելի, օրորում/: 3. Հոգուս անձավում հիմա լալիս է <u>շիկնած</u> մի բառ /գինի, մորմոք, սեր, կարոտ/: 4. Արևը լեռներից կանթեղներ է շինել՝ <u>օծելու</u> համար /լուռ, գիշերային, տխուր, մթություն/: 5. Կաթնալույսը, <u>ծփալով</u> ու <u>ծավալվելով</u>, հետզհետե պայծառանում էր /1. ալիք առ ալիք, և, թախիծ, լի շարունակ. 2. երկինք, ու, երկիր, մեղմ, խայտանք, արանք/:
● 1. <u>Հնձած</u> արտերի վրայով <u>անցնելիս</u> ծղրիդները երգում էին <u>մոխրացող</u> աստղերի տրտմաձոր երգը: 2. <u>Արթնանալով</u>՝ ծովակը կամացուկ շարժվում է, հետո <u>հուզվելով</u>, խուլ հառաչում է: 3. <u>Մոռացված</u> անտառում ճամփա չկա, և կենդանիները չեն խրտնում գոռոցներից: 4. Մի պահ արթնացա <u>փչող</u> սառը քամուց: 5. Ես անթաքույց հետաքրքրությամբ, <u>ոգևորված</u> կարդում էի հայոց պատմությունը:

🕮 **Շ-130. Ամբողջացնել նախադասությունները և որոշել դերբայական դարձվածների շարահյուսական գործառույթը:**
1. Դրախտային այգին մտնելը ▯ ▯:
2. Դրախտային այգին մտնել ▯ ▯:
3. Դրախտային այգին մտնելուն պես ▯ ▯:
4. Դրախտային այգին մտնելով ▯ ▯:
5. Դրախտային այգին մտնելուց հետո ▯ ▯:
6. Դրախտային այգին մտնելու համար ▯ ▯:
7. Դրախտային այգին մտնելու պատճառով ▯ ▯:
8. Դրախտային այգին մտնելուն ▯ ▯:
9. Չնայած դրախտային այգին մտնելուն ▯ ▯:
10. Դրախտային այգին մտնելու ժամանակ ▯ ▯:

11. Դրախտային այգին մտնելիս □ □:
12. Դրախտային այգին մտնող □ □:
13. Դրախտային այգին մտած □ □:
14. Դրախտային այգին մտնելու փոխարեն □ □:
15. Հենց դրախտային այգին մտնելիս □ □:

🕮 Շ-131. Նախադասության ընդգծված անդամներից առաջ կամ հետո կամ և՛ առաջ, և՛ հետո ավելացնել դերբայական դարձվածով արտահայտված լրացումներ:

1. Այգին ծածկվել էր մատղաշ սաղարթով: 2. Բարդին անընդհատ վերընձյուղվում է ու մնում Հայոց աշխարհի ու հավերժության հասակակիցը: 3. Ընկուզենիները ասես ճերմակ ամպերն էին քշում: 4. Այստեղից սկիզբ է առնում մի ճամփա ու կորչում ծառերի մեջ: 5. Աշնանը աշխարհի բոլոր գույները հավաքվում են գյուղի թիկունքին և սարերից հորդում երփներանգ ջրվեժի պես:

🕮 Շ-132. Փոխադրել տեքստը՝ ավելացնելով դերբայական դարձվածներ /յուրաքանչյուր նախադասությանը, յուրաքանչյուր բաղադրիչ-նախադասությանը/:

Ես ուզում եմ խոսել քեզ հետ: Անսահման տարածություն է մեզ բաժանում իրարից: Բայց ես կխոսեմ, ես պիտի խոսեմ, որպեսզի զբաղեցնեմ աչքերս, ու արցունքներս չհորդեն: Նայում եմ երկնքին ու մտածում, որ այս րոպեիս գուցե քո հայացքն էլ է դեգերում այնտեղ: Ինձ թվում է՝ եթե երկուսս էլ միաժամանակ նայենք երկնքին, ապա անշուշտ կտեսնենք իրար: Այս ի՞նչ է, աչքերս արցունքով են լցվում: Օ՜, ո՛չ... Երկնքից ձյուն է մաղում: Քո գլխին էլ է իջնում: Իսկ իմ գլխի ձյունը հալվում է, որովհետև «գլուխս տաքացած» է: Ձյունը արցունքի նման հոսում է մազերիցս... Արցո՞ւնք, ո՛չ, ո՛չ..

Սենյակում ծաղիկներ կան: Թերթիկները թաց են, իսկ իրեն ժպտում են մոայլ ճերմակությամբ, ժպիտ արցունքների միջից... Ապակիների եղյամը կհալվի, ծորակը կաթիլ-կաթիլ արցունք կծորա, երկինքը ձյունի արցունք կթափի: Չէ՛, ավելի լավ է արտասվեի... /Ըստ Հ. Դուրյանի/

🕮 Շ-133. & Ա. Կազմել դերբայական դարձվածով այնպիսի նախադասություններ, որոնցում դերբայական դարձվածն ունի՝
ա/ կողմնակի ենթակա
բ/ կողմնակի ուղիղ խնդիր
գ/ կողմնակի անուղղակի խնդիրներ
դ/ կողմնակի պարագաներ
ե/ կողմնակի ստորոգելի

Բ. Բացատրել տրոհվող դերբայական դարձվածների կետադրությունը և եզրակացնել, թե ի՛նչ պաշտոններ կատարող դերբայական դարձվածներն են տրոհվում:

🕮 Շ-134. Գեղարվեստական գրականությունից քաղված օրինակների միջոցով ներկայացնել այն դեպքերը, երբ դերբայական դարձվածը չի տրոհվում:

🕮 Շ-135. Ա. Կետադրել:

Բ. Առանձնացնել 3 նախադասություն՝ դերբայական դարձվածի տարբեր դիրքերով՝ մեկ նախադաս, մեկ միջադաս, մեկ ետադաս. յուրաքանչյուրում 2 ձևով փոխել դերբայական դարձվածի շարադասությունը:

Գիտության տաճարը գրում է Էյնշտեյնը բազմաբարդ կառույց է: Տարբեր են այնտեղի կենվորները և տարբեր են նրանց այնտեղ բերող ուժերը: Ոմանք գիտությամբ են զբաղվում իրենց մտավոր առավելության գիտակցված հպարտությամբ ոմանք էլ իրենց մտքի պտուղները այստեղ զոհ են բերում զուտ օգտապաշտական նպատակների: Եթե Աստծու հրեշտակը գար այդ տաճարը և այնտեղից վտարեր այդ երկու տիպի մարդկանց ապա տաճարը ...կդատարկվեր...

Տաճարից վտարված մարդկանց բավարարում է մարդկային գործունեության ամեն մի բնագավառ իսկ հրեշտակի գթությանը արժանացած գիտնականները մեծ մասամբ ինքնամփոփ ու աշխարհից մեկուսացած մարդիկ են: Ինչն է նրանց տաճար բերել: Առօրյա կյանքից հեռանալու անվերջ փոփոխվող քմահաճույքների կապանքներից ազատվելու ձգտումը: Այդ պատճառը հոգու նուրբ լարեր ունեցող մարդկանց մղում է դեպի օբյեկտիվ ընկալման և ըմբռնման աշխարհը: Դա կարելի է համեմատել քաղաքի բնակչին նրան շրջապատող աղմկալի ու պղտոր միջավայրից հանող և դեպի խաղաղ ու բարձրալեռ բնաշխարհը մղող կարոտի հետ ու հայացքը մարդու անվերջ ձգտող տիեզերքի գաղտնիքները քննող անշարժ մաքուր օդի միջով թափանցում է հեռուները և գոհանում է հանդարտ ուրվագծերով հավերժությանը պատկանող:

Գիտության այդ տաճարի մշտական բնակիչը դարձած Էյնշտեյնն իր ողջ կյանքում նախանձել է Սպինոզային իր ապրուստը ապակիներ հղկելով վաստակող հոգեկան բավարարվածության համար փիլիսոփայական գործեր գրող փիլիսոփային: Նա ներքուստ վիրավորվում էր դառնությամբ հիշելով որ գիտության համար իրեն վարձատրում են որ ինքն ապրում է ֆիզիկայի հաշվին: Երազում էր լինել ցրիչ կամ ջրկիր դրանով վաստակելով իր ապրուստը և զբաղվել գիտությամբ առանց նրանից անձնական սպասելիքներ ունենալու: **/Ըստ Ս. Ավետիսյանի/**

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

🕮 Շ-136. Կազմել՝

Ա. բազմակի ենթականերով նախադասություններ, որոնցում դրանց կապակցման միջոց են դարձել՝

ա/ և, թե, ոչ, կամ կրկնադիր շաղկապները

բ/ ոչ թե ...այլ. ոչ միայն...այլև, ինչպես...այնպես էլ զուգադրական շաղկապները.

Բ. բազմակի ստորոգյալներով՝ և՛ անվանական, և՛ բայական, նախադասություններ, որոնցում կապակցման միջոց են՝

ա/ կրկնադիր /կրկնվող/ շաղկապները.

բ/ և, ու, բայց, իսկ, սակայն, ոչ թե այլ շաղկապները:

🕮 Շ-137. Գիտահանրամատչելի աղբյուրներից դուրս գրել 5-ական նախադասություններ, որոնցում բազմակի անդամների կապն իրացվում է՝

ա/ շարահարությամբ

բ/ համադասական շաղկապներով

գ/ միաժամանակ և՛ շարահարությամբ, և՛ շաղկապներով:

🕮 Շ-138. ❖ Ա. Գտնել բազմակի անդամները, որոշել նրանց շարահյուսական դերը և արտահայտության ձևը, երկրորդական անդամների՝ գերադաս եզրի հետ կապակցության եղանակը, բացատրել կառուցվածքային /բառո՞վ, թե՞ բառակապակցությամբ է արտահայտված/ առանձնահատկությունը, ոճական արժեքը:

Բ. Ընդգծել բազմակիության արտահայտության միջոցները և ներկայացնել կաղապարը՝ օգտագործելով ▯ նշանը, ինչպես օրինակ՝ Դու <u>սեր</u> ես երգում, <u>աստղեր</u> ու <u>համբույր</u>: - ▯, ▯ ու ▯:

Կոմիտասը տրորեց ճակատը, գլուխը բարձրացրեց, աչքերը բացելու փորձ արեց, բայց գլխապտույտ ունեցավ, միջօրեն երերաց, աչքադեմով սորսորացին սև ու արնագույն շերտերը: Ամսից ավելի էր՝ շենից շեն էին մտնում, բայց հավաքած երգերից քչերն էին անխառն: Թե սիրո էր՝ խոսք ու մեղեդու մեջ բաժանման ցավ կար, օտար ճամփեքին հոգևարքող պանդուխտի կարոտ: Թե աշխատանքի ու բնության՝ խոսք ու մեղեդու մեջ նաև անհույս գանգատ, և՛ ահ, և՛ լաց, և՛ ցասում: Սիրո, բնության ու աշխատանքի մասին երբևէ ծնված երգերը, մաքուր ու անխառն երգերը հիմա երգվում են անցած-գնացածի պես: Շինականը դրանց խառնում է իր այսօրվա թե՛ կորուստը, թե՛ ցավը: Շինականի այդ երգերը լսելու ու հասկանալու համար պետք էր ետ գնալ, որոնել, գտնել ու ճանաչել էն օրերի ժամանակն ու մարդը, բնությունն ու մարդը: Երգի կորցրածը պետք է որոնել երգի միջոցով, գտնել ու վերադարձնել երգին: Ամեն շինական հոգու մեջ մի երգ ունի, շատ կամ քիչ՝ ունի: Եվ հիմա երգը հայ շինականի հոգում փակում է աչքերը, ննջում... պետք է փրկել:

-Մի երգ ասա, լսենք, Գրիգո՛ր...

-Է՞հ, վարդապետ, դու էլ ժամանակ ես գտել երգեր գրելու, էլ չես հարցնում ո՛չ կալ, ո՛չ կութ, ո՛չ հավես...

Գրիգորը ռիթմիկ շարժեց գլուխն ու սկսեց...

Աջը արագ շարժվում էր տետրին. Կոմիտասը լուսնի շողերով երգն էր նոտագրում ու երգի հետ՝ այդ գիշերվա արձակ շշուկները՝ տերևների սվսվոցը, առուների՝ միջօրեի կորած շունչը, արտերում հալված մանգաղների զրնգոցը, որ բարդոցների բույրով գալիս էր, ուսապարկի մեջ այդ գիշեր լռած սրնգի կանչը, արևահար խոտերի, կալերի ու տավարի բույրը..., շինական-ների դադրած շունչն ու երազները և բոլորը՝ լուսնի շողերով օծուն: Գրիգորը ավարտել էր երգը, իսկ Կոմիտասի աջը դեռ շարժվում էր: Հետո նա բարձրացրեց գլուխը, և խոնավ հնչյուններով լցված աչքերը շշնջացին.

Ես ձայնագրեցի այս գիշերը... /Ըստ Մ. Գալշոյանի/

Գ. Վերջին նախադասությունը հարստացնել բազմակի անդամներով:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Ա Շ-139. Գտնել՝

ա/ տրոհվող անդամները.

բ/ նախադասության անդամ չհանդիսացող տրոհվող բառերը և եզրակացնել, թե նախադասության ո՞ր միավորներն են տրոհվում:

Գ. Բացատրել տրոհման պատճառները /շաբադասությունը, լրացման ընդարձակությունը, իմաստային ծանրաբեռնվածությունը, լրացման տեսակը, լրացյալի ընդարձակությունը.

Օ՜, հրաշալի գիշերը, որի անեզրությունը՝ մութ ու թավշյա, վերևից լուսավորվում է աստղերի լույսով, իսկ ներքևում՝ երկրի վրա, կայծոռիկն է իր կասկածոտ լույսով ուղեցույց դառնում:

Գիշերը՝ հավիտենական սիրահարը արշալույսի, գեղեցիկ, սլացիկ, մաքուր արշալույսի՝ լուրթ երկնքով ու ջերմ արևով զարդարուն, որին հետապնդում է գիշերը՝ խավար ու անթափանց...

Խեղճ, հուսակորույս, կույր գիշեր, մինչև ե՞րբ ես դու հևիհև հետապնդելու և որոնելու հորիզոնի վրա հազիվ նշմարվող սպիտակ շղարշը լույս առավոտի: Ասա՛, խավարը ե՞րբ է հասել լույսին, որ այդպես համառում ես և քո ամուլ ու հուսահատ հետապնդումը վերջացնում ամենօրյա մահով՝ քո հուսահատ սրտի արցունքով թրջելով անտարբեր երկրի երեսը: Հազիվ հասած սիրուհուդ, հազիվհազ մրմնջալով՝ «Ես սիրում եմ...» մահանում ես ու չքանում արևի՝ այգաբացն ազդարարող առաջին շողից ջերմագին՝ արցունքիդ թանկագին ցողը թողնելով դաշտերի վրա՝ որպես կարճառոտ ապացույց քո մշտնջենական սիրո, որն անհագուրդ ըմպում է արևի՝ լույսով լեցուն առաջին ճառագայթը... Չե՛ս հասնի, գիշեր, դու առավոտին, մի՛ հետապնդիր անհնարինը /մոտ է վախճանդ/. մնա՛, գիշեր, և մխիթարվիր նրանով, որ կույր աչքը, երևի թե, ավելի պայծառ է տեսնում հոգու խավարի խորքերը:

🕮 Շ-140. Գեղարվեստական գրականությունից կոչական ունեցող բանաստեղծական տողեր հիշել և գրել. ո՞րն է կոչականի դերը նախադասության մեջ /գործառական արժեքը/:

🕮 Շ-141. Նորագույն քերականություններից մեկում գրված է. «Կոչականի վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա. որոշ լեզվաբաններ այն նախադասության անդամ չեն համարում: Գուցե այս տեսակետը գալիս է ռուս լեզվաբան Ա. Պեշկովսկու այն թյուր կարծիքից, թե կոչականը նախադասության մարմնի մեջ խրված գնդակ է. այսինքն՝ նախադասության համար օտար, խորթ մարմին է: Սակայն իրականությունն այն է, որ, ինչպես ապացուցում են ռուս և հայ մի քանի լեզվաբաններ, կոչականը նախադասության կարևորագույն անդամներից մեկն է, որովհետև նրա և ենթակայի ու ստորոգյալի միջև կա ինչպես իմաստային, այնպես էլ քերականական կապ» /Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն/:

Ա. Ձեր կարծիքով ի՞նչ ապացույցներ պետք է ներկայացնեն այն լեզվաբանները, ըստ որոնց՝

ա/ կոչականը նախադասության անդամ չի կարող համարվել.

բ/ կոչականը նախադասության անդամ չի կարող չհամարվել:

Բ. Ձեզ համար ո՞ր տեսակետն է ընդունելի:

🕮 Շ-142. Ա. Կարդալ, ընդգծել կոչականները, որոշել նրանց արտահայտության ձևը, շարահյուսական կառուցվածքը /միայնա՞կ է, թե՞ լրացումներով/, բացատրել կետադրությունն ու շարադասությունը:

Բ. Ո՞ր խոսքի մասերն են կոչականի դերով հանդես գալիս:

● 1. Գարու՛ն, արևդ տա՛ր աշխարհներին, Ինձ մի մանուշակ թող միայն... 2. Սի՛րտ իմ, խրատիր այս խենթ աղջկան: 3. Ա՜խ, չէ՛, ներիր, Անահի՛տ, սիրուց դարձա խենթախոս... 4. Օ՜, բախտ իմ անբախտ, Ու ես հավիտյան քեզ եմ շղթայվել, Դու իմ միատեղ՝ դժոխք ու դրախտ,- Օ՜, կին, դրախտն է քեզնով կախարդվել, Եվ կախարդվողն է հավիտյան հաղթվել: Ինչո՞ւ ես այսպես, խոսի՛ր, ո՛վ աստված: 5. Դուք էլ մոտեցեք, հեռավոր աստղեր, Իրար խառնվեք, ջրեր գլգլան, Իմ սեր, գիրկս եկ... 6. Արդյոք ի՞նչ ես, ի՞նչ ես դու, անեղծելի առեղծված, Ո՛վ կրքերի դու ծով, կին, կրքերի կույր գերի, Ձնչին ասեմ, բայց դև է չնչինությունդ անաստված, Ո՛վ մշտարթուն գաղտնապահ դու՝ հայտնի ցոփ կրքերի: 7. Ծովը գնացող լեռնային ջրեր, Իմ սիրտն էլ ձեզ հետ ծովերը տարեք, Ծովը գնացող գարունքվա գետեր, Իմ սիրտը էլ ձեզ հետ ծովերը տարեք: 8. Օրհնվես, գիշե՛ր, հավերժ օրհնվես, Օրհնվես խավար, անիծվե՛ս, լուսին... /Հ. Շիրազ/

● 1. Դու տեսնու՞մ ես հիմա, իմ սիրելի՛, Թե մեզ ու՛ր հասցրեց քո ուշացած սերը, Քո ուշացած սերը, Դու՝ չուշացած ի՛մ սեր: 2. Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկնե՛ր խարտյաշ, Դուստրե՛ր Հյուսիսի. Երուսաղեմում երբևէ չեղած Երուսաղեմի դստերն եմ փնտրում: 3. ...Դու օգտվեցիր, թվաբանությու՛ն: 4. Վարդապետ իմ խե՛ղճ, Բայց և բախտավո՛ր, Բայց և բախտավո՛ր, որ չգիտեիր... 5. Դե ելնենք, մահացա՜ծ, ու մի՛ համբառնա, դե արի՛, պանդուխտ, երկիր մի դառնա... 6. –Ումո՛ւ ջան, նանին Քո ցավը տանի: /Պ. Սևակ/

● 1. Ցավն իմ հոգուց հառաչանքներ է քամում, որ ողոքեմ, մայր, քա՛ղցր մայր, քեզ մեղա: 2. Հյուգո, իմ բարեկամ, Պուշկին՝ ազնիվ ընկեր, Բայրոն՝ հիվանդ եղբայր, դուք ինձ կհասկանաք: 3. Իմ բարեկամնե՛ր, ազնիվ հերկերի, ճակատագրով եղբայրնե՛ր իմ թանկ, բացեք դռները փակված երգերի... 4. Օ՜, բզկտված աշխարհ, սահմաններով ճղված, փշալարով կնքված, մարդու արյամբ խեղդված, արցունքներով ցողված, ծիծաղներով հղի, քեզ ուզում ենք տեսնել առանց սահմանների:

/Ռ. Դավոյան/

📖 Շ-143. Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի որևէ ղողանջից դուրս գրել կոչականները և բացատրել նրանց ձևակազմությունը:

📖 Շ-144. Գեղարվեստական աղբյուրներից ընտրել և գրել 2-ական նախադասություններ, որոնցում կոչականն արտահայտված է՝

ա/ գոյականով. բ/ փոխանուն ածականով.
գ/ փոխանուն թվականով. դ/ դերանվամբ.
ե/ փոխանուն հարակատար և ենթակայական դերբայներով:

📖 Շ-145. Մի բան ասելու կամ հարցնելու համար խոսքն ուղղել՝

● ա/ մորը
բ/ Պարույր Սևակին
գ/Երկիր մոլորակին
դ/ ընկերոջը
ե/ գրքին
զ/ լուսնին
է/ ջրերին
ը/ մահին
թ/ սրտիդ

● ա/ Երկիր ոտք դրած առաջին այլմոլորակայինին
բ/ աստղերին
գ/ ակի առաջին ճառագայթին
դ/ երազներիդ արքային կամ թագուհուն
ե/ միջուկային զենքը օգտագործել ցանկացողին
զ/ քո երկրի նախագահին
է/ քո սիրելի դասախոսին
ը/ աղբյուրին
թ/ որդուդ, որ հետո պիտի ծնվի

📖 Շ-146. Կազմել նախադասություններ կոչականի հետևյալ կաղապարներով՝

ա/ որոշիչ + կոչական *բ/ հատկացուցիչ + կոչական*
գ/ կոչական + հատկացուցիչ *դ/ կոչական + բացահայտիչ*
ե/ որոշիչ + կոչական + հատկացուցիչ *զ/ կոչական + բազմակի որոշիչ-լրացումներ*

📖 Շ-147. ❖ Ա. Գրել այն կոչական-հիմնաբառերի խումբը, որը գործածվում է՝

ա/ առօրյա-խոսակցական ոճում /և բարբառներում/,
բ/ վարչագործառական ոճում,
գ/ գրական ոճում,
դ/ եկեղեցական լեզվում:

❖ Բ. Բացատրել յուրաքանչյուր ոլորտում կոչականների գործածության յուրահատկությունները:

🕮 Շ-148. Կազմել նախադասություններ, որոնցում կոչականը հանդես է գալիս ով, այ, ջան բառերի հետ. բացատրել կետադրությունը:

🕮 Շ-149. Կոչական կարող են դառնալ նաև խոսակցին տեղանունով կոչելու դիմելաձևային միավորները, ազգության, զբաղմունքի, մասնագիտության, ազգակցական ու բարեկամական կապերի, մարդուն բնորոշ հատկանիշների /թերությունների և առավելությունների/, կենդանիների ու թռչունների անվանումներ, ինչպես նաև ցանկացած բառեր, բառակապակցություններ ու դարձվածներ: Գեղարվեստական գրականությունից գտնել համապատասխան օրինակներ կամ ինքնուրույնաբար կազմել:

🕮 Շ-150. Տեքստը համալրել կոչականներով:

Չհասկացավ քո սիրտն ինձ, չլսեց վառված սրտիս ձայնը. «Ջահել սիրտը համբույր է երազում»...

Հասկացի՛ր, մի՛ քարկոծիր ու մի՛ խոցիր...

Նորից քարկոծեց ու խոցեց: Ու ես խոցված սիրտս բացի հողի առջև. լսի՛ր սրտիս խոսքը:

Հողը տնքաց ու երկնեց:

Ես ասացի առվակներին. «Ելե՛ք ձյունից»: Նրանք ելան ու խնկարկվեցին, շողշողացին, հազարացան:

Ես նայեցի երկինք ու աստղերին ձայն տվի. «Իջե՞ք հոգուս մեջ»: Աստղերը սիրո պսակ հյուսեցին քո գլխի վերև:

Սար ու ձոր, ծաղիկ ու կանաչ նայեցին սրտիս աղջկան ու հեզիկ փսփսացին. «...Հասկացի՞ր, սիրի՞ր...»:

🕮 Շ-151. ❖ Ուշադրությամբ հետևեցեք ձեր և ձեր ընկերների խոսքին և գրառեք այն դեպքերը, որոնք կոչական են ընդգրկում: Ի՞նչ գոյականներ են առավելապես օգտագործվում անծանոթ մարդկանց դիմելիս. կապվա՞ծ է արդյոք դիմելաձևի ընտրությունը կոնկրետ իրադրության հետ:

🕮 Շ-152. Զույգ նախադասություններում որոշել ընդգծվածների շարահյուսական դերը:

● **ա/** <u>Իսկապե՛ս</u> երջանիկ հանճարներ չեն լինում. ճակատագիրն ահավոր դաժանությամբ հարվածում է նրանց: **բ/** <u>Իսկապես,</u> երջանիկ հանճարներ չեն լինում. ճակատագիրն ահավոր դաժանությամբ հարվածում է նրանց:

● **ա/** 12 տարեկան մի աղջիկ անպատճառ ուզում էր հավաստիանալ, որ էյնշտեյնն <u>իրո՛ք</u> գոյություն ունի: **բ/** 12 տարեկան մի աղջիկ անպատճառ ուզում էր հավաստիանալ, որ Էյնշտեյնը, <u>իրոք,</u> գոյություն ունի:

● **ա/** Մինչև 20-րդ դարի վերջերը <u>թվում էր</u>՝ աշխարհի երևույթների ողջ բազմազանությունը կարելի է բացատրել Նյուտոնի համակարգի շրջանակներում:

բ/ Մինչև 20-րդ դարի վերջերը, թվում էր, աշխարհի երևույթների ողջ բազմազանությունը կարելի է բացատրել Նյուտոնի համակարգի շրջանակներում:
● ա/ Վերջապես երևաց երկար սպասված գիսաստղը: բ/ Վերջապես, երևաց երկար սպասված գիսաստղը:

Ը-153. Ա. Կազմել նախադասություններ՝ որպես միջանկյալ կառույցներ օգտագործելով հետևյալ բառերը՝
ա/ Ըստ սովորության, անշուշտ, միով բանիվ, արդարև, ըստ երևույթին, տարօրինակ բան, վերջին հաշվով, ի լրացումն, սիրով, ներողություն, առաջինը... երկրորդը, չկասկածեք:
բ/ Ամենայն հավանականությամբ, հավատա, սակայն, ուրեմն, ապա, մի, ասենք թե, այնպե՞ս չէ, ոչ մի, այսպես, ասես, թող, ըստ էության, քո արև, ես իմ հոգին, այ քեզ բան, ըստ օրինաց, նախ և առաջ:
Բ. Եզրակացնել, թե միջանկյալ կառույցները դատողական ինչպիսի՞ նրբերանգներ են հաղորդում խոսքին:

Ը-154. Կետերի փոխարեն գրել խոսողի կամային՝ մտային կամ հուզական վերաբերմունքն արտահայտող բառեր կամ բառակապակցություններ /միջանկյալ բառեր, արտահայտություններ կամ ներդրյալ բառեր/:
Եկան (...) անլուսին գիշերները: Գալիլեյը դիտակն ուղղում է երկնքի պատահած ուղղությամբ, այնտեղ, որտեղ, , անզեն աչքով աստղ չի երևում բնավ , և համատարած լուսավոր, կաթնագույն բիծ է միայն: Եվ պետք է պատկերացնել նրա զարմանքը (...), երբ այդ լուսավոր բիծը նրա աչքերի առջև տարրալուծվում է անթիվ- անհամար աստղերի, որոնցից ամենապայծառն անգամ,....., անմատչելի է անզեն աչքով: Գալիլեյը, հայտնագործել է աստղակույտեր՝ լավ պատկերացնելով այդ հայտնագործության վիթխարի նշանակությունը (...):

Ը-155. Տրված բառակապակցություններն ու նախադասություններն օգտագործել իբրև ներդրյալ կառույցներ՝
ա/ (ամենաերջանիկ աստղագետը).
բ/ (հակառակ իր ըմբոստ ու հպարտ խառնվածքի).
գ/ (հայոց պատմության լուռ վկաները).
դ/ (մանկությունս ե՛տ բերեք).
ե/ (երկրագունդը 4,5-5 միլիարդ տարեկան է).
զ/ (Էյնշտեյնի, Պլանկի, Ջինսի երաժշտական հակումները, այն, որ նրանցից մեկը եղել է օժտված ջութակահար, մյուսը՝ դաշնակահար, երրորդը՝ փայլուն երգեհոնահար, որոշակի դեր են խաղացել նրանց գիտական որոնումներում).
է/ (ջրի հետ առնչվող առաջին խոշոր գիտական իրադարձությունը կապված է Արքիմեդի հետ).
ը/ (հայկական հին ճարտարապետությունը պետք է դիտել որպես մարդկության կուլտուրայի խոշոր երևույթներից մեկը):

🕮 Ը-156. Ա. Կարդալ, ընդգծել նախադասության հարակից միավորները:
Բ. Բացատրել նրանց ձևակազմությունը և կետադրությունը:

1. Հորիզոնական-միջօրեական սեղմ օղակներում (Նայեցեք մի պահ այս գլոբուսին) Խեղճ երկրագունդն է կապվել-կապանքվել: 2. Լավագույն ժպիտ ասվածը, անշուշտ, Փա՛կ աչքերովն է... Լավագույն աչերն այն է, երևի, որ չի ունենում հսկա կայարան: ...Լավագույն դիմակն այն է, անկասկած, Որ կոչվում է դեմք: 3. Սրանք, կարճ ասած, ու՞ժ չեն ունենում Իրենց ու իրար տանջելու՛ համար... 4. Իսկ ծաղրարար ու չար քամին Խռովել է միանգամից (Արդյոք ինչի՞ց, արդյոք ինչո՞ւ) Ու խաղում է պոչուկի հետ շան լակոտի: 5. Իսկ անցած սերերն, ի՞նչ է, չեն մեռնում, Իսկ եթե նույնիսկ, աստված չարասցե, մեռնում են նրանք, Դարձյալ ապրում են մեր տարողունակ հիշողության մեջ: 6. Վախենում եմ վաղ գարունից, որովհետև, ճիշտն ասած, Վախենում եմ, որ չբացվի, այլ տրաքի սիրտս գոց:... 7. Դու՛ էլ, սիրելիս, եկել ես այդպես, Եվ եկել, կարծեմ, իմ հրավերով կամ հրամանով... Պիտի գնա՛ս, Որ ես անվերջ իմ մտքի մեջ (Թռթակի պես կամ անվտանգ խելագարի) Նու՛յնը կրկնեմ. «Շատը գը-նաց, քի-չը մը-նաց»: 8. Էլեկտրահար մարդուն, գիտե՛ս, հողում թաղում Եվ դրանով հարություն են տալիս կրկին: 9. Ա՜խ, տրվեր ինձ պարզ տեսնելու Կարողությունն աստվածային: 10. Տե՛ր իմ աստված, դու լա՛վ գիտես, Թե ես քանի՜-քանի՜ անգամ Այս սրախիճ-տատասկապատ ճանապարհը Կրկնել եմ ոտաբոբիկ: 11. Շինում էին նաև կամուրջ՝ «Դժոխք-Դրախտ» ուղեցույցի սահմանի մոտ, Մի հահավոր գետի վրա, Որի անունն, աստված վկա, մոռացել եմ: 12. Ա՜խ, տե՛ր Կսկիծ, Այսքանն արդեն բավակա՜ն է, էլ ավելին հարկավոր չէ՜, տե՛ր, ողորմյա...13. Իսկ եթե դեռ պիտի խաղաք, է՜հ, խաղացեք, խնդրե՛մ, ինչքան սրտներդ ուզի: 14. Ես, ինչ խոսք, այսօր պիտի բոց չուտեմ Կամ կուլ տամ դաշույն... 15. Եվ փա՜ռք աստծու, Որ մեր հոգու մեջ Եթե կա ամիս տերևաթափի, Ապա կան օրեր և աստղաթափի... 16. Իսկ ե՞րբ են մարդիկ թաքցնում դեմքը: Գուցե ամոթի՞ց (Ես չեմ ամաչում իմ սիրո համար): Գուցե կարոտի՞ց (Ես ուզում եմ քեզ տեսնել բաց աչքով): 17. Եվ անկարող եմ նաև քրքջալ (Քրքիջի համար ուժ է հարկավոր): 18. Հպարտ եմ ես իմ փայփայած նպատակով, թեկուզ նրան չհասնեմ էլ (մեղքը կընկնի ո՛չ իմ վզին): Թեկուզ նույնիսկ իզուր անցած Ուրախ ու նուրբ իմ կատակով (Տափակները չհասկացա՜ն): **/Պ. Մնակ/**

* * *

🕮 Ը-157. Ա. Դուրս գրել հոլովված բառաձևերը և որոշել նրանց շարահյուսական գործառույթը:

Բ. Բնութագրել նախադասություններն ըստ կառուցվածքի և գործառույթի /հաստատական-ժխտական, պարզ-բարդ, երկկազմ-միակազմ, համառոտ-ընդարձակ, հարցական-հրամայական և այլն/:

«Նվաճի՛ր քեզ՝ հենց քեզ համար, խնայի՛ր ու կուտակի՛ր ժամանակդ, որը նախկինում քեզանից տարել են կամ էլ գողացել, որն անտեղի է անցել: Ինքդ համոզվիր այն բանում, որ ես ճշմարտությունն եմ գրում. ժամանակի մի մասը մեզանից խլում են ուժով, մի մասը կողոպտում են, իսկ մի մասն էլ անտեղի է

անցնում: Սակայն ամենաանպատվաբերը մեր սեփական անփութությունից առաջացող ժամանակի կորուստն է: Նայիր, խնդրեմ, ավելի ուշադիր. մեր կյանքի առավել շատ ժամանակը մենք վատ գործերի վրա ենք վատնում, ոչ քիչ ժամանակը՝ անգործության վրա, իսկ ամբողջ կյանքը՝ ոչ այն գործերի վրա, որոնք պետքական են: Կարո՞ղ ես արդյոք դու ցույց տալ ինձ մի մարդու, որը գնահատում է ժամանակը, որը գիտենա՝ ինչ արժե յուրաքանչյուր օրը, որը հասկանա՝ ինքը մահանում է ամեն ժամի հետ: Հենց դրանում է մեր դժբախտությունը, քանի որ մենք մահը հեռվում ենք տեսնում: Այնինչ նրա ավելի մեծ մասը մեր թիկունքում է: Չէ՞ որ կյանքի անցած բոլոր տարիները պատկանում են մահվան:

Մեր բոլոր ունեցածները, Լուցիլիո՛, օտար են, մերը չեն. միայն ժամանակն է մերը: Բնությունը մեզ միայն ժամանակ է տվել, որը հեռանում է, գնում է մեզանից: Ոչ ոք հարուստ չի ծնվում: Ով էլ որ լույս աշխարհ գա, միևնույն է, պետք է բավարարվի կաթով ու մի կտոր լաթով: Այսպես ենք մենք սկսում, բայց հետո մեզ նույնիսկ թագավորությունն էլ փոքր է թվում: ...Սեփական թերությունները իմանալը առողջության ճանապարհի առաջին քայլն է: Չէ՞ որ սեփական թերությունները չիմանալու դեպքում հնարավոր չէ նրանց վերացնել:

Որքան կարող ես, ինքդ քեզ շատ ջրի երես հանիր, ինքդ քո դեմ հանցանշաններ փնտրիր: Սկզբում հանդես եկ որպես մեղադրող, հետո՝ դատավոր և միայն ամենավերջում՝ որպես պաշտպան»:

/Սենեկայի բարոյախոսական նամակներից/

📖 Շ-158. Ի մի բերելով հոլովների շարահյուսական կիրառությունների մասին ձեր գիտելիքները՝ շարունակեք բազմակի անդամներով՝

✍ 1. Ուղղական-հայցական հոլովով դրվում են....

✍ 2. Սեռական-տրական հոլովով դրվում են ....

✍ 3. Բացառական հոլովով դրվում են....

✍ 4. Գործիական հոլովով դրվում են....

✍ 5. Ներգոյական հոլովով դրվում են...

📖 Շ-159. Ա ❖ Գտնել շրջուն շարադասությամբ արտահայտված անդամները և գրել սովորական շարադասությամբ: Բանաստեղծությունը փոխադրել սովորական շարադասությամբ /արձակի վերածելով/, համեմատել և փորձել բացատրել դրանց նրբիմաստային, հուզարտահայտչական, հնչերանգային տարբերությունները:

❖ Բ. Գիտական, վարչագործառական, հրապարակախոսական, գեղարվեստական ոճերից որի՞ն է բնորոշ սովորական շարադասությունը, որի՞ն՝ շրջունը:

Հալվու՞մ է սրտիդ սառույցն անարև
Սիրույս արևի հրից ու բովից.
Դիպչու՞մ է հոգուդ ափերին քարե
Այրող ալիքը իմ սիրո ծովի.

Լսու՞մ ես վագրի մռնչյունն ահեղ,
Որին Ինվեռում թողիր կամովին...
Բիայնո ծովի ա՜փն եմ միտ բերում՝
Սիրույդ մրրի՜կն եմ երազում անքուն.

Ամռան արևի տա՜պն է ինձ այրում՝
Քո հու՜րն եմ տենչում քնած թե արթուն.
Էգ առյուծնե՜րն են սրտիս լեռներում
Կրքից մռնչում ու հողը քանդում:
Բե՛ր, Արա՜, սիրույդ ծո՛վը Բիայնա
Եվ մարի՜ր տենչիս հրդեհը վայրի.
Արքայուհու հետ արքա՛ կդառնաս,
Իսկ թե Արքա ես՝ Արքա՛-Արքայի՛ց...
Իմ ձեռքի տակ է աշխարհը արար,
Իսկ քո ձեռքի տակ ... տե՜ր աշխարհի:
/Գ. Էմին/

📖 Շ-160. Ա. Կարդալ Պ. Սևակի «խոսքը»: Գտնել պարզ նախադասությունները և նշել նրանց քերականական հիմքը և բացատրել ձևակազմությունը:

Բ. Դուրս գրել անդեմ նախադասությունները:

Գ. Ընդգծել հարակից միավորները:

Դ. Ընտրել այն պարզ նախադասությունը, որն իր անդամների քանակով գերազանցում է մյուսներին և շարահյուսական վերլուծություն կատարել. կազմել գծապատկերը: Բացատրել կետադրությունը:

Խոսքս «Հառաչանքի» այն հատվածի մասին է, որ /սկսած 1903-ից/ Թումանյանը գրել է իր ժողովածուների սկզբում՝ «Նախերգանք» վերնագրով... Մի կողմից՝ «ոգևորության հզոր թևեր», իսկ մյուս կողմից՝ «հեգ հայրենիք». մի կողմից՝ «ներշնչվածություն» /«լեռնե՜ր, ներշնչված դարձյալ ձեզանով»/ և բանաստեղծական «վսեմ հաճույք» /«լցրեք պոետիս հաճույքը վսեմ»/, մյուս կողմից՝ «հին տրտմություն՝ վեհափառ դայակ մանուկ օրերիս» և «որբացած հոգի»:

...Ուրեմն՝ ապագա թումանյանագիտությունը պիտի ենթարկվի եռանկյունաչափության օրենքներին և ոչ երկրաչափության...

Մնում է ավելացնելու, որ «Հառաչանքը» Թումանյանի միայն մի պոեմի վերնագիրը չէ. այդ խորագրի տակ կարելի է դնել Թումանյանի ստեղծածի առնվազն մեկ-երրորդը՝ սկսած «Գութանի երգ»-ից ու «Հին օրհնություն»-ից, հասնելով «Մարո»-ին ու «Լռեցի Սաքո»-ին, ընդգրկելով «Անուշ»-ն ու «Գիքոր»-ը:

Թումանյանն ունի ևս երկու վերնագիր, որոնք իրենց հերթին համապատասխանաբար կարող են ընդգրկել նրա ստեղծագործության երկու երրորդը: Դրանք են «Դեպի անհունը» և «Հայրենիքիս հետ»-ը: Ուրեմն՝ «Հառաչանք», «Դեպի անհունը», «Հայրենիքիս հետ», այսինքն՝ դարձյալ այն երրորդությունը, այն եռանկյունաչափությունը, որ տեսանք «Նախերգանք»-ում...

Եվ Թումանյանի արածն այլ բան չէր, քան իր վիթխարիության մեջ մի վերմարդկային հառաչանք՝ մեր ժողովրդի անմարդկային բախտի ու կյանքի տեսադաշտի վրա, մի հառաչանք, որ ծավալվում է «Գութանի երգից» ու «Հին օրհնությունից» սկսած մինչև «Հայրենիքիս հետը», և եթե ընդհատվում է /այդ անընդհատ հառաչանքը/, ապա դա էլ /այդ վայրկենական ընդհատումն էլ/ ունի իր բառեղեն արտահայտությունը, որ տեղավորվում է մեկ տողում:

Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք...

Ե. «Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք...». ինչո՞ւ ամեն մի անցնող սերունդ իրեն հաջորդողին հենց ա՛յսպես է օրհնում...

Զ. Կարո՞ղ է ժամանակներ լինել, որ ասեն՝ «Ապրեք երեխեք ու մե՛զ պես ապրեք...»...

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

🕮 Շ-161. Ա. Կարդալ և առանձնացնել պարզ և բարդ նախադասությունները: Ընտրել հակադրական մեկ զույգ և բացատրել նրանց քերականական-կառուցվածքային, բովանդակային-իմաստային և ոճական-հաղորդակցական տարբերությունները:

Բ. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունների քանակը որոշել. կարելի՞ է բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները համարել լիարժեք նախադասություններ: Ինչու՞:

Կան բանաստեղծներ, որոնք մի ամբողջ աշխարհ են վերապատկերում: Մեծ են կոչվում նրանք: Եվ իսկապես էլ մեծ են: Բայց, դժբախտաբար, շուտ են հնանում, որովհետև, բարեբախտաբար, նորանում է աշխարհը: Կան բանաստեղծներ էլ, որոնք մի նոր աշխարհ են ստեղծում: Այսպես՝ բարի և մենասեր սարդն է գործում իր ոստայնը, և անմակդիր մեղուն՝ իր մոմն ու ակնամոմը: Հետմահու դժբախտներ են այդ կարգի բանաստեղծները. ոչ միայն հնանում են, այլև հետզհետե մոռացվում, որովհետև հիշողները պարտավոր չեն ապրել մի աշխարհում, որ անիրական է և կամ օտար:

Կան բանաստեղծներ էլ, որոնք ո՛չ աշխարհ են պատկերում, ո՛չ էլ աշխարհ ստեղծում: Նրանք բացում են **իրենց** աշխարհը: Եվ սրանք չեն մոռացվում, որովհետև չեն հնանում: Իսկ եթե հնանում են, ապա սոսկ այնքանով, որքանով հնանում է նաև առավոտը...

Պետրոս Դուրյա՜ն... Սա աշխարհ չպատկերեց: Եվ աշխարհ չստեղծեց սա: Սա բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ դուրյանական: Այդ աշխա՞րհը:

«Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ», «եթեր մը տրոփ», «եղեմ մը շունչ», - ահա այդ աշխարհը...

Լուսին կար այդ աշխարհում, լուսին, որ Դուրյանի ժամանակներում թղթից էր սարքված...

Դուրյանի աշխարհում լճակ կա, և ի՜նչ լճակ: Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները՝ Դուրյանի «Լճակ»-ով կարելի է վերաստեղծել դրանք...

...Մեր քնարերգության Վահագն է նա՝ այն «խարտյաշ պատանեկիկ»-ը....

«Ամպրոպ մը սաստ», որպեսզի կարողանանք արժանի դառնալ նրա հետնորդը կոչվելու՝ առանց «Երկինքի հիվանդության» հրդեհելու մեր կյանքը արվեստի մեջ և վազելու «ի բոցոյն...»: /Պ. Մնակ/

Գ. Ինչպես հասկանալ՝ «Բարդ նախադասության բաղադրիչների կապն այնքան էական է, որքան որ պարզ նախադասության համար նրա անդամների կապը» /Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 3. 1976, էջ 118/:

🕮 Շ-162. Բացատրել զուգահեռ նախադասությունների կառուցվածքային, քերականական, ոճական տարբերությունները: Ուշադրություն դարձնել ստորոգումների քանակին:

1. ա/ Տասնմեկերորդ դարում մի քանի վանականներ որոշում են, որ Աղստևի հովտում վանք կառուցեն: բ/ Տասնմեկերորդ դարում մի քանի վանականներ որոշում են Աղստևի հովտում վանք կառուցել:

2. ա/ Հնուց ի վեր մարդիկ ձգտել են հասկանալ ծերացման բուն պատճառները, որպեսզի կարողանան իրականացնել երիտասարդությունը կրկին վերադարձնելու հավերժական երազանքը: բ/ Հնուց ի վեր մարդիկ ձգտել են հասկանալ ծերացման բուն պատճառները՝ երիտասարդությունը կրկին վերադարձնելու հավերժական երազանքն իրականացնել կարողանալու համար:

3. ա/ Այն պատմությունը, որ ես լսեցի դժբախտ ծերունուց, շա՜տ, շա՜տ տխուր էր: բ/ Դժբախտ ծերունուց լսածս պատմությունը շա՜տ, շա՜տ տխուր էր:

4. ա/ Մենդելեևը, որ պատկառելի ու հանրահռչակ պրոֆեսոր էր, մինչև ականջները սիրահարվել էր իր ուսանողուհուն: բ/ Մենդելեևը՝ պատկառելի ու հանրահռչակ պրոֆեսորը, մինչև ականջները սիրահարվել էր իր ուսանողուհուն:

🕮 Շ-163. Ա. Գիտական տարբեր աղբյուրներից ընտրել 5-ական բարդ նախադասություններ, որոնց բաղադրիչ նախադասությունները կապակցված են՝
ա/ սպասարկու հատուկ բառերով /զոդվածական կամ նշույթավոր/,
բ/ առանց սպասարկու հատուկ բառերի /շարահարությամբ կամ անանշույթ/:

Բ. Զոդվածական կապակցություններում նշել սպասարկու բառերի /հարաբերականների, մենաղիր և կրկնաղիր համադասական և ստորադասական շաղկապների/ տեղը:

🕮 Շ-164. Տրված զույգ նախադասություններով կազմել և՛ բարդ համադասական, և՛ բարդ ստորադասական նախադասություններ:

1. ա/ Հենրիխ Հերցը դարձավ համաշխարհային փառքի արժանացած գիտնական: ➔
   ⬅ բ/ Սաստիկ վշտացավ նրա խառատագործության ուսուցիչը:
2. ա/ Գիտության երկարատև պատմության ընթացքում շատ հայտնագործություններ են արվել: ➔
   ⬅բ/ Յուրաքանչյուրն ունեցել է իր ճակատագիրը, իր սեփական կյանքը:
3. ա/ Անձրևի մանր կաթիլներ թափվեցին: ➔
   ⬅բ/ Մենության թախիծը թակեց դուռս:
4. ա/ Այս գիշեր գարնան բույր կար օդում: ➔
   ⬅բ/ Ձմեռը հալվող ձյան տեսքով լալիս էր մայթերի վրա:

🕮 Շ-165. & Թե, մինչդեռ, եթե....ապա, թե չէ շաղկապներով կազմել թե՛ համադասական և թե՛ ստորադասական նախադասություններ:

🕮 Շ-166. Կարդալ տեքստը, առանձնացնել բարդ նախադասությունները և որոշել նրանց բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները, վերջիններիս արտահայտման եղանակներն ու միջոցները: Ինչո՞վ է տարբերվում պարզ նախադասությունը բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունից:

Կարկատած, բայց մաքուր բաճկոնով փոքրիկ տղան կառքերի աղմուկի միջով քայլում էր Լոնդոնի փողոցներով, սայթաքում թաց սալաքարի վրա՝ կրծքին պինդ սեղմելով գրքերի կույտը: Քայլողը Մայքլ Ֆարադեյն էր՝ Ռիբոյի գրախանութի կազմարարի աշակերտը: Հաճախ եմ մտածում՝ եթե Ֆարադեյն աշխատեր ոչ թե կազմարարի, այլ, ասենք, կոշկակարի մոտ, եթե չկարդար մադամ Մարսեի՝ բնության հրաշալիքների մասին պատմող գրքերը, եթե չտեսներ իր պաշտելի կուռքին՝ սըր Հեմֆրի Դևիին՝ մեծ քիմիկոսին, ինչպե՞ս կդասավորվեր նրա ճակատագիրը.... Ոչ, նա չէր կարող չդառնալ հետազոտող. փոքրիկ կազմարարի մեջ ապրում էր հանճարը՝ նույնքան տկար, որքան և հզոր՝ նման արևը ձգտող անզսպելի ծիլին, որին չէր կարելի պահել հատիկի մեջ...

...Ըստ էության Ֆարադեյը էլեկտրականության և մագնիսականության վերաբերյալ գիտությունը նեղլիկ ու ծուռումուռ լաբորատոր կածաններից դուրս բերեց մի լայն ճանապարհ, որ ձգվում էր դեպի 20-րդ դար...

🕮 Շ-167. ❖ Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից դուրս գրել ասույթները /կամ ասույթի արժեք ունեցող միավորները/ և դրանցում առանձնացնել բարդ կառուցվածք ունեցողները, որոշել բաղադրիչ նախադասությունների հարաբերությունը, բացատրել նրանց ճանաչողական և դաստիարակչական արժեքը:[1]

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

🕮 Շ-168. Ա. Կարդալ և որոշել նախադասությունների կառուցվածքային տեսակները, բացատրել նրանց կառուցվածքային-քերականական տարբերությունները:

Բ. Առանձնացնել բարդ համադասական նախադասությունները՝ նշելով կառուցվածքային հատկանիշները: Ընդգծել նրանք, որոնցում բաղադրիչ-նախադասությունների դիրքերի փոփոխությունը կա՛մ անհնար է, կա՛մ առաջ է բերում իմաստային փոփոխություն:

Կես ժամ առաջ ինքնաթիռը լողում էր քո բարձրիկ երկնքում: Քո երկնքի կապույտ հերկում արև կար ցանված, և կար ճերմակ-ճերմակ ամպ:

---

[1] /«Ասույթը խոշոր մտածողների և գրական-հասարակական, քաղաքական նշանավոր գործիչների կողմից սեղմ ձևակերպված, գեղեցիկ արտահայտված իմաստալից մտքեր ու դատողություններ են, բարոյախրատական սկզբունքներ... Ունեն ճանաչողական ու դաստիարակչական անժխտելի արժեք» /Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, 2, 1991, էջ 211/:

Հիմա նստած եմ գրասեղանի առջև, և դու, երկի՛ր Հայաստան, աչքերիս հայելու մեջ ես: Քո ձորերը՝ ոլորապտույտ, խորը, հիմա՝ լցված ձնհալի ջրերով: Ձորեր, որ այդպես՝ հազար տեղից, հազար թևերով գրկել են քեզ: Քո լեռնաշղթաները թև թևի տված «Բերդ պարն» էին բռնել արեգակի հետ. թաշկինակի փոխարեն ամպի ճերմակ ծվեններն էին խելահեղ թափահարում:

Ինքնաթիռը խուսանավում էր քո սարերը, Հայաստա՛ն. կանգնած են նրա երկնային ճանապարհին: Սարերը՝ պրկված բռունցքների պես ցցված դեպի երկինք: Սարերը՝ քարակոփ: Սարերը՝ գանգուրների մեջ արևի շողեր քամող: Սարերը՝ աշխարհի արևածագը առաջինը տեսնող

Ինքնաթիռը լողաց Սևանի վրայով: Սևանը ափեափ ծնծղաց, և մտածեցի. «Աշխարհի ջրերի կողքին անձրևի մի կաթիլ է: Անձրևի մի կաթիլ՝ պոկված երկնքից՝ դրա համար կապույտ, դրա հետ արևատայլ, բայց ծիածանով լեռներն իրար կապող: «Ծովը հայոց»: Եվ ծով էր՝ արևն էր սուզվել ջրի մեջ և չէր հասել հատակը, լողում էր, որ չխեղդվի...

Քո երկնքի կապույտ հերկում արև կար ցանված, և կար ճերմակ-ճերմակ ամպ... Բայց քեզ, Հայաստան, քեզ վերևից չպետք է նայել: Պետք է կանգնել քո ձորի ափին և գլխապտույտ ունենալ: Պետք է կանգնել քո սարի փեշին ու չտեսնել գագաթը: Պետք է կանգնել ծովի եզրին ու չտեսնել ծայրը...

Ինքնաթիռում ես ավելի լավ հասկացա «Դու փոքր ու մեծ իմ Հայաստան» բառերի իմաստը: Հասկացա, որ դու սրտի չափ փոքր ես, աշխարհի չափ մեծ..... /Ըստ Մ. Գալշոյանի/

🕮 Շ-169. Գեղարվեստական գրականությունից դուրս գրել 5 բարդ համադասական նախադասություն, որոնցում կապակցման եղանակը շարահարությունն է: Բացատրել կապակցման առանձնահատկությունները՝
ա/ իմաստային կապը
բ/ հնչերանգը
գ/ բայ-ստորոգյալի եղանակաժամանակային որոշակի գործառույթը:

🕮 Շ-170. Բազմակի ենթականերով և բազմակի ստորոգյալներով նախադասություններ գրել և բացատրել կառուցվածքային տարբերությունները:

🕮 Շ-171. Հիշել և գրել բանաստեղծական հատվածներ, որոնք բազմաբաղադրիչ համադասական նախադասություններ են, և որոնցում կապակցումն իրացված է թե՛ շարահարությամբ, թե՛ սպասարկու բառերով:

🕮 Շ-172. Գրել 2-ական բարդ համադասական նախադասություններ, որոնցում նշվում են՝
ա/ համաժամանակյա, այսինքն՝ միաժամանակ կատարվող գործողություններ.
բ/ տարաժամանակյա, այսինքն՝ հաջորդաբար կատարվող գործողություններ:

🕮 Շ-173. ☑ Տրված նախադասությունները լրացնել և՛ տարժամանակություն, և՛ համաժամանակություն արտահայտող բաղադրիչ-նախադասություններով, օր.՝ Առավոտյան թռչունը կարդում է արշալույսյան իր մեղեդին...:

→1. Առավոտյան թռչունը կարդում է արշալույսյան իր մեղեդին, իսկ հողի աշխատավորի շուրթերից ծորում է հորովելը:

→2. Առավոտյան թռչունը կարդում է արշալույսյան իր մեղեդին, իսկ գիշերային լուսատուն արդեն լքել էր երկնքի տարածքները:

ա/ Գիշերային մթության մեջ նեղ լուսամուտից երևում է լույսն աղոտ լամպերի... :

բ/ Միանգամից ձյուն չի գալիս... :

գ/ Օդի մեջ ճողողում էին արտույտները... :

դ/ Աստղերը՝ երկնքի այդ վառ-վառ ծաղիկները, բուրում էին եթերային ոլորտում... :

զ/ Շուտով բնությունը կարթնանա ձմեռային խորը քնից... :

🕮 Շ-174. Գտնել ընդհանուր ենթակայով /միավորյալ/ և տարենթակա համադասական նախադասությունները, համեմատել դրանք և բացատրել կառուցվածքային-քերականական, կետադրական յուրահատկությունները:

Ժայռերի շղթան ձգվում էր հեռուն, բայց մեր բլրի կատարից գրկելու չափ մոտիկ էին երևում հեռուն ու հեռացողը: Վահանը հափշտակված, անէացած նայում էր՝ հայացքը դարձնելով շուրջբոլորը, և ինքնաբերաբար արտասանում Հ. Թումանյանի «Փարվանայից». «Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր...»: Հոգնաբեկ արևը թեքվում է դեպի Աբուլ լեռը, գագաթները հրդեհվում են և դժգունում, անրջային կիսալույսերով կամաց-կամաց իջնում է մթնշաղը, և տներում վառվում են նավթի ճրագները: Աստղերը մեկը մյուսի հետևից շողում են ու փայլփլում, հովիվները խարույկ են վառում Աբուլի վրա, երեկոն գիշեր է դառնում խավարչտին, ամենուրեք խորախորհուրդ լռություն է տիրում. միայն ձորի առուն է մրմնջում՝ նիրհի մեջ սուզված, ու լճից շվշվում է զեփյուռի մեղմ սրինգը:

🕮 Շ-175. Կազմել բարդ համադասական նախադասություններ, որոնց բաղադրիչ-նախադասությունների կապակցումն իրացվում է՝

ա/ մենադիր շաղկապներով /և, ու, էլ, նաև, ևս, այլև, մինչդեռ, բայց, սակայն, իսկ, կամ, և կամ, կամ թե չէ .../.

բ/ կրկնադիր շաղկապներով /և՛....և՛, թե՛....թե՛, կա՛մ....կա՛մ, ո՛չ...ո՛չ, է՛լ....է՛լ/.

գ/ զուգադիր շաղկապներով /ոչ միայն....այլ նաև, ոչ միայն....այլև, ոչ թե ....այլ, եթե ոչ....ապա, եթե....ապա/:

🕮 Շ-176. Բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ նախադասությունների իմաստային ինչպիսի հարաբերություններ են կանխորոշում շաղկապների հետևյալ խմբերը:

✍ 1. և, ու, իսկ, ևս, էլ, նաև, այլև, և....և, թե...թե, ոչ....ոչ, ոչ միայն....այլև

✍ 2. կամ, և կամ, կամ....կամ, կամ թե, կամ թե չէ

✍ 3. Իսկ, սակայն, բայց, այլ, մինչդեռ, այնինչ, ապա, բայց և այնպես, այնուամենայնիվ, ոչ թե, այլ ոչ թե, ոչ թե....այլ, և ոչ թե
✍ 4. այսինքն, այսինքն թե, այն է, ասել է թե, իմա՛

🕮 Շ-177. Գեղարվեստական գրականությունից ընտրել «իսկ» շաղկապով կապակցված բարդ համադասական այնպիսի նախադասություններ, որ մի դեպքում արտահայտում են ներհակական հարաբերություն /3/, մյուս դեպքում՝ հավելական /3/:

🕮 Շ-178. Կազմել միավորական կապակցությամբ բարդ համադասական նախադասություններ, որոնցում դրսևորված համաժամանակյա հարաբերությունը արտահայտված լինի 3 ընդհանուր ժամանակներից յուրաքանչյուրով՝ ներկայով, անցյալով, ապառնիով:

🕮 Շ-179. Կազմել բարդ համադասական նախադասություններ, որոնցում բաղադրիչ նախադասությունները կապակցվում են՝
ա/ մեկը...մեկը, մեկը...մյուսը, ոմանք...ոմանք, սա....նա, առաջինը... երկրորդը...երրորդը **և** շատը...քիչը **կապակցություններով:**
բ/ Իսկ, բայց, սակայն, այլ, մինչդեռ, այնինչ, ապա, բայց և այնպես, և սակայն, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, և ոչ թե, այլ ոչ թե, բայց ոչ, եթե...ապա **շաղկապներով:**
գ/ Այսինքն, այսինքն թե, այն է, ասել է /թե/, իմա՛, այլ խոսքով, մի խոսքով, ուրիշ խոսքով, այլ կերպ ասած, այսպես ասած **մեկնական շաղկապներով և շաղկապական կապակցություններով:**
դ/ ուստի /և/, ուրեմն/և/, և այդ իսկ պատճառով, /և/ դրա համար, դրա համար էլ, որը...որը **կապակցություններով:**

🕮 Շ-180. Առած-ասացվածքների համապատասխան մասերն ընտրել և իրար միացնել: Ստացված բարդ համադասական կառուցվածք ունեցող նախադասություններում որոշել բաղադրիչ-նախադասությունների իմաստային հարաբերությունները. ինչպիսի՞ շաղկապ կարելի է տեղադրել յուրաքանչյուրի կազմում:

✓1. Այուրը մենք մաղեցինք ➔	← գրքի պակասից՝ հոգին:
✓2. Գելն ամպ օր կուզե ➔	← փախլավան ուրիշը կերավ:
✓3. Շները կռվեցին ➔	← գողը՝ ...մութ գիշեր:
✓4.Հացի պակասից մարմինն է մեռնում ➔	← չհասկացողին՝ հազար ու մին:
✓5.Գիտունի հետ քա՛ր քաշիր ➔	← ո՛չ տատասկից՝ թուզ:
✓6. Ո՛չ փշից խաղող կքաղվի ➔	← անգետի հետ փլավ մի՛ ուտիր:
✓7. Հասկացողին մին ասա ➔	← անցորդի գործը հաջողվեց:

🕮 Շ-181. Ինչպես են ավարտվում բարդ համադասական կառուցվածք ունեցող հետևյալ ասացվածքներն ու խրատները:

✓ Ձուկը ջրում է ապրում,... → Ձուկը ջրում է ապրում, բայց պտտորում է ջուրը:

✓1. Քիչ ուտելը մարմնին է օգուտ, ...
✓2. Օրենքը պահի՛ր, ...
✓3. Իմաստունի հետ քար քաշիր, ...:
✓4. Ցերեկը աչքեր ունի, ...:
✓5. Ո՛ւշ արի, ...
✓6. Առարկայի նորն է լավ, ...:
✓7. Թրի կտրածը կլավանա,.... :
✓8. Ճշմարիտ խոսքը գեղեցիկ չէ, ...
✓9. Տասը չափիր,
✓10. Բարեկամի հետ քեֆ արա,...
✓11. Թոկի երկարն է լավ, ... :
✓12. Արա՛ ինձ համար, ..:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

🕮 Շ-182. Ա. Գտնել ստորադասական հարաբերությամբ կապակցված նախադասությունները. ո՞ր բարդ նախադասությունն է կոչվում ստորադասական:

Բ. Առանձնացնել երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները, մեկ գծով ընդգծել գերադաս բաղադրիչը, երկու գծով՝ ստորադասը:

Գ. Բացատրել նրանց կառուցվածքային ու իմաստային տարբերությունները, յուրաքանչյուրի շարահյուսական դերը բարդ նախադասության մեջ:

Մինչև օրս էլ բժշկության խորհրդանիշը եղել և մնում է օձը: Ինչո՞ւ հատկապես նա է փաթաթված Էսկուլապի թասին, ի՞նչ նշանակություն ունի այդ խորհրդանիշը: Ժողովրդական բանահյուսությունից մեզ հասած բազմաթիվ առասպելներ օձերին ներկայացրել են խորհրդավոր քողով պարուրված, դրանց վերագրվել են մարդկային հատկություններ՝ իմաստություն, կախարդանք: Բոլոր օձերին համարել են թունավոր, չնայած, ինչպես հայտնի է, օձերի 2500 տեսակներից իրոք թունավոր են միայն 700-ը: Օձի պաշտամունքը հատկապես մեծ չափերի է հասել Հին Հունաստանում: Մեզ հասած հնագույն պատկերներից գիտենք, որ օձը հույների համար իմաստության, առողջության և բժշկության խորհրդանիշ էր: Պատահական չէ, որ և՛ իմաստության աստվածուհի Աթենասը, և՛ առողջության աստվածուհի Հիգիենան, և՛ բժշկության աստված Էսկուլապը միշտ պատկերվել են օձերի հետ: Այդ կենդանիների բուժիչ հատկությունների մասին համոզվածությունն այնքան մեծ է եղել, որ դարեր շարունակ գավաթին փաթաթված օձը ծառայել է որպես բժշկության խորհրդանիշ: Անգամ օձի խայթոցը համարվել է աստվածների կողմից թելադրված, որոնք վեր էին օրենքներից և չէին պատժվում: Երբ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրան գերի ընկավ, մի գյուղացու միջոցով բերել տվեց ակնոցավոր օձ ու մահացավ նրա թունավոր խայթոցից: Հավանաբար Կլեոպատրան գիտեր, որ ակնոցավոր օձի խայթոցը սակավ ցավոտ է, և մահվանից հետո մարմինը չի այլանդակվում...

Դ. Տեքստում գտնել ստորադաս նախադասություններ, որոնք լրացնում են՝
ա/ գլխավոր եզրի այս կամ այն որոշակի անդամին.
բ/ գլխավոր եզրի մի խումբ անդամների /որոշակի բառակապակցության/.
գ/ գլխավոր նախադասությանը՝ իր ընդհանուր ամբողջության մեջ:

🕮 Շ-183. & Տրված համադասական նախադասությունների միտքն արտահայտել ստորադասական հարաբերությամբ: Որոշել բաղադրիչ նախադասությունների հարաբերության բնույթը:

❶ Տեղատարափ անձրև սկսվեց. մեր անուրջները մի պահ անէացան:

❷ Բարձրաբերձ լեռների կատարների հետևից դանդաղորեն բարձրանում է արևի ոսկեզօծ գունդը, և ծիածանի բազմերանգ ճառագայթներով ողողվում է լճի հայելանման մակերևույթը:

❸ Սքանչելի հանգստավայր է մեր հայրենի գողտրիկ անկյուններից մեկը՝ Ծաղկաձորը. պտղավետ այգիները, վայրի ծառերը, սառնորակ աղբյուրները, ջինջ ու կենարար օդը դրախտային տեսք են տալիս ծաղկածիծաղ այս վայրին:

❹ Մենք այգի հասանք. արևն արդեն գլորվել էր ծառերի կատարներից:

❺ 1980 թ. Ամերիկայում դեպի տիեզերք թռիչքի էր պատրաստվում մի մարդ. նա հայ էր:

❻ Եվ ինձ պետք չէ դրախտ կամ եդեմական այգի. Քաղաքամերձ անտառ և այգիներ կային /ՊՍ/:

🕮 Շ-184. Տրված տեքստից դուրս գրել բարդ ստորադասական նախադասությունները՝ առանձնացնելով շաղկապներով կապակցվածները հարցահարաբերական դերանուններով կապակցվածներից՝ տարբերակելով <u>շաղկապական</u> և <u>հարաբերական</u> նախադասությունները /ընդգծված գիտանունները առաջինը Մ. Աբեղյանն է օգտագործել/ **և ուշադրություն դարձնել նրանց կիրառական յուրահատկություններին:**

Գիտահանրամատչելի գրականության մեջ համեստ չղջիկը հռչակված է իր լոկացիոն ընդունակություններով, որովհետև զարմանալի ճարպկությամբ թռչում է մթության մեջ և իր ճանապարհին չի բախվում ոչ մի խոչընդոտի: Գիտնականներին վաղուց է հետաքրքրել այն, թե ինչպես է չղջիկը կարողանում առանց խոչընդոտների դիպչելու թռչել մթության մեջ: Սկզբում ենթադրում էին, որ նա չափազանց սուր տեսողություն ունի: Ստուգելու համար բռնեցին մի չղջիկ, որի աչքերը կապեցին և բաց թողեցին: Արդյունքները ապշեցուցիչ էին, քանի որ նա ոչ մի բանի չէր դիպչում, անգամ կեր էր ճարում: Բայց երբ կապեցին ականջները, լսելու հնարավորությունից զրկված չղջիկը անճար դարձավ... Չղջիկը չկարողացավ թռչել նաև այն դեպքում, երբ բացեցին ականջները, բայց կապեցին բերանը: Ակներև էր, որ չղջիկը ինչ-որ անլսելի ձայներ է արձակում, որոնց միջոցով էլ կողմնորոշվում է տարածության մեջ: Դիտումներն ու հետազոտությունները ցույց տվեցին, որ չղջիկը արձակում է ուլտրաձայներ, որոնց հաճախականությունը հասնում է 50 կՀց-ի, և որոնք մարդը չի լսում: Չղջիկը կարողանում է համեստորեն օգտագործել ուլտրաձայներ արձակելու և ընդունելու իր ընդունակությունը, որը լրացնում է նրա մյուս զգայարանները:

Այնպես, ինչպես չղջիկն է օգտվում արձագանքից, նույն ձևով էլ մթության մեջ թռչում է հարավամերիկյան գվաչարո թռչունը, նույն ձևով խոչընդոտներ է հաղթահարում դելֆինը: **/Հետաքրքրաշարժ ռադիոտեխնիկայից/**

🕮 Շ-185. Գիտահանրամատչելի աղբյուրներից դուրս գրել բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում բաղադրիչների կապակցումն իրագործվում է՝
ա/ մենադիր ստորադասական շաղկապներով /որ, թե, եթե, մինչ, մինչև, մինչև որ, մինչդեռ, հենց /որ/, նախքան, որպեսզի, որովհետև, թե չէ..../.
բ/ զուգադիր ստորադասական շաղկապներով /եթե....ապա, թեկուզ /և/....բայց /սակայն/, քանի որ....ուստի, որովհետև....ուստի.../.
գ/ հարաբերական դերանուններով /ով, ինչ, ինչպես, ինչպիսի, ինչքան, երբ, որ, որքան, որչափ, որտեղ, ուր.../:
դ/ գ կետում նշված հարաբերական դերանունների և որ **շաղկապի՝ թարմատարի կապակցությամբ /վերջինս զուրկ է կապակցական դերից/:**

🕮 Շ-186. Ամբողջացնել նախադասությունները՝ ավելացնելով գլխավորները:
Հենց որ արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Երբ արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Թեև արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Քանի որ արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Մինչ արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Եթե արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Չնայած որ արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Ինչքան արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:
Ինչ է թե արևը բարձրանում է սարերի հետևից, --□-□--:

🕮 Շ-187. Լրացնել նախադասությունները և բացատրել կապակցող նշույթների շարահյուսական-իմաստատարբերակիչ նշանակությունը:
1. Մայրն աշխարհով մեկ է լինում, երբ --□-□-- :
8. Մայրն աշխարհով մեկ է լինում, եթե --□-□--:
3. Մայրն աշխարհով մեկ է լինում, հենց /որ/ --□-□--:
4. Մայրն աշխարհով մեկ է լինում, որովհետև --□-□--:
5. Մայրն աշխարհով մեկ է լինում, քանի որ --□-□--:
6. Մայրն աշխարհով մեկ է լինում, չնայած /որ/ --□-□--:
7. Մայրն աշխարհով մեկ է լինում, թե որ --□-□--:
8. Մայրն աշխարհով մեկ է լինում, ինչը --□-□--:
9. Մայրն աշխարհով մեկ է լինում, ինչպես --□-□--:
10. Մայրն աշխարհով մեկ է լինում, մինչդեռ --□-□--:
11. Մայրն աշխարհով մեկ է լինում, թե ինչ է --□-□--:
12. Եթե մայրն աշխարհով մեկ է լինում, ապա --□-□--:
13. Թեկուզև մայրն աշխարհով մեկ է լինում, սակայն --□-□--:

🕮 Շ-188. Տրված նախադասությունները բարդ ստորադասական նախադասությունների մեջ գործածել մեկ իբրև գերադաս բաղադրիչ-նախադասություն, մեկ էլ իբրև ստորադաս բաղադրիչ-նախադասություն:

1. Ծերուկ ժայռի ստվերում դողդողում էր դալուկ մանուշակը:
2. Գիտնականներն զգայուն կերպով ունկնդրում են Տիեզերքի զարկերակը:
3. Այդ պահին ոչ մեկի մտքով չանցավ չափել առաջին տիեզերագնացի սրտի զարկերը:
4. Ֆրիդրիխ Ցանդերը /գերմանացի հրթիռագետ/ իր զավակներին կոչեց աստղերի անուններով՝ Աստրա և Մերկուրի:

🕮 Շ-189. Կազմել բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում կապակցումն իրացվում է տրված հարաբերյալ-հարաբերական կաղապարով: Բացատրել հարաբերականների երկակի գործառույթը:

- ▶ ...նա, ով... :
- ▶ ...այն /է/, ինչ...:
- ▶ ...այնպես, ինչպես...:
- ▶ ...նրան, ում...:
- ▶ ...նրանով, որով... :
- ▶ ...ինչը, որ...:
- ▶ ... այնպիսի..., ինչպիսի...:
- ▶ ...այնտեղ, ուր...:
- ▶ ...այնքան, որքան... :
- ▶ ...քեզանից, ումից...:
- ▶ ...այնտեղից, ուր... :
- ▶ ...այնչափ, որչափ...:

🕮 Շ-190. Ա. Գտնել շարահարությամբ կապակցված կախյալ /ստորադաս/ նախադասությունները՝ ուշադրություն դարձնելով հնչերանգին և բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային արտահայտությանը: Հատկապես ո՞ր ոճին է հատուկ շարահարական կապակցությունը:

«Փառքն էլ է զոհեր պահանջում»: Եթե խոսենք փառքին հետապնդելու մասին, ապա այստեղ Էյնշտեյնը խաղացել է ոչ թե որսորդի, այլ որսի դեր: Բոլորը համոզված էին՝ հարաբերականության տեսության հեղինակը՝ 20-րդ դարի Կոպեռնիկոսը, ժամանակի հերոսն է: 1933թ. Էյնշտեյնը լքում է Գերմանիան: Նա համոզված էր՝ Հիտլերն ապրում էր Գերմանիայի դատարկ ստամոքսի վրա, իսկ մարդու համար պարզ էր՝ ստամոքսը քաղաքականության մեջ վատ խորհրդանիշ է: Ասում են՝ երբ գերմանացի խոշորագույն մաթեմատիկոս Դավիդ Հիլբերտին հարցրել են, թե տուժե՞լ է արդյոք Պրուսական ակադեմիան Էյնշտեյնի և մի քանի հրեա գիտնականների՝ ԱՄՆ տեղափոխվելու պատճառով, նա համարձակ պատասխանել է. «Ո՛չ, չի՛ տուժել, այն պարզապես դադարել է գոյություն ունենալուց»:

Էյնշտեյնը վախենում էր, որ բանականության ուժի պտուղը՝ նորագույն ֆիզիկան, յուրաքանչյուր վայրկյան կարող էր ատոմային ռումբի վերածվել և պայթել մարդկության գլխին: Նշանակում է՝ մեղավոր է լինելու նաև ինքը, առավել ևս: Հայտնի է՝ այս շրջանում է սկսվում նրա ակտիվ պայքարը հանուն խաղաղության: Մեծ գիտնականը խորապես կարծում էր՝ ատոմային ռումբի գյուտը մարդկության համար ավելի վտանգավոր չէ, քան լուցկու գյուտը. խոհեմաբար օգտագործեն՝ առաջընթաց կապրեն: «Մարդկության

հետագա զարգացումը ,- գրում է Էյնշտեյնը,- կախված է նրա բարոյական հիմունքներից, այլ ոչ թե տեխնիկայի զարգացման մակարդակից»: Բայց և այնպես ատոմային ռումբը պայթեց Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա, և թվաց՝ աշխարհի վերջն է եկել: Այս փաստը ստվերի նման կախված մնաց Էյնշտեյնի կյանքի վերջին օրերի վրա, և նա ցավով է եզրակացրել՝ հենց գիտնականի՛ մատն է սեղմել ատոմային ռումբի կոճակը: Ասում են՝ այս տպավորության տակ է Էյնշտեյնը գրել, որ մարդկությունը կրակի հայտնագործությունից հետո դեռևս բանական ոչինչ չի ստեղծել, և զգուշացրել է՝ ատոմային զենքի մրցավազքը մարդկությանը կտանի կործանման, և չորրորդ համաշխարհային պատերազմում մարդիկ կկռվեն քարե զենքերով ու մահակներով: /Ըստ Ս. Ավետիսյանի/

Բ. Գրել շարահարությամբ կապակցված նախադասությունների զուգվածավոր տարբերակները:

Ը-191. Ա. Գրել ենթակայական ստորադաս կապակցությամբ բարդ ստորադասական նախադասություն, որում գերադաս նախադասության բայ ստորոգյալը՝

ա/ չեզոք սեռի է /թվալ, լինել, պատահել, արժենալ, մնալ.../

բ/ ասացական, հասկացական կամ զգացական իմաստներ արտահայտող կրավորակերպ չեզոք սեռի է /ասվել, պատմվել, հաղորդվել, զեկուցվել, իմացվել, հասկացվել, զգացվել, հայտարարվել, կարգադրվել, հրամայվել, որոշվել, պահանջվել.../

գ/ բաղադրյալ ստորոգյալ է՝ կազմված ածական կամ գոյական ստորոգելիից /որպես ստորոգելի **կարող են հանդես գալ** հետաքրքիր, ցանկալի, գերադասելի, նախընտրելի, ճշմարիտ, ցավալի, ցանկություն, օրենք, կարգ, փաստ, օրինաչափություն, զարմանք **և այլ բառեր**/:

Բ. Ենթակայական կախյալ բաղադրիչ ունեցող նախադասություններում գլխավոր բաղադրիչը ենթակա կարո՞ղ է ունենալ, թե՞ ոչ: Ինչո՞ւ: Ի՞նչ է նշանակում «ձևական ենթակա» արտահայտությունը:

Ը-192. Ա. Գրել ստորոգելի կախյալ կապակցությամբ 3 բարդ ստորադասական նախադասություններ այնպես, որ կախյալ եզրը մեկ առարկայական իմաստ ունենա, մեկ՝ հատկանշային, երրորդ դեպքում՝ պարագայական: Բացատրել նման նախադասությունների կառուցվածքային, քերականական և շարադասական յուրահատկությունները:

Բ. Ստորոգելիական կախյալ բաղադրիչով բարդ նախադասության գլխավոր բաղադրիչը կարո՞ղ է պարզ ստորոգյալ ունենալ: Ինչո՞ւ:

🕮 Շ-193. Գտնել գլխավոր նախադասության ենթակային կամ գոյականով արտահայտված որևէ անդամի լրացնող երկրորդական նախադասությունները, որոշել բնույթը /որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ երկրորդական նախադասություններ/: Առանձնացնել որոշիչ ստորադաս նախադասությամբ կապակցությունները և նշել կառուցվածքային հատկանիշները:

Մեսրոպ Մաշտոցը, որ մեծերի մեծն է, ծնունդների ծնունդն է, միշտ մահերով անցած մեր ժողովրդի համար ծնունդ է առհասարակ: Մեսրոպի ծնունդը ծնունդն է Վարդանի, ծնունդն է Մովսես Խորենացու և Շիրակացու, Նարեկացու և Մանվել ճարտարապետի, Քուչակի և Սայաթ-Նովայի, Թումանյանի և Կոմիտասի, որ ձայնն է Հայաստանի՝ զուսպ, խոր, առնական, բայց փխրուն, տաք, կարոտած, լի հառաչանքով...: Ծնունդն է Չարենցի, որ ընդգրկման ու ընդվզման իր հրաբուխային թափով ասես ծնունդն է մի վիթխարամիլիոն, հզոր ժողովրդի, Թամանյանի, Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Պարույր Սևակի, որ իր փոքրիկ, սրտաչափ սենյակում հեռուներից բերեց-բնակեցրեց աշխարհի խորհող մեծերին, իսկ երբ գնաց աշխարհի հեռուները, իրենով տարավ-ներկայացրեց Հայաստանը՝ իր բիբլիական իմաստությամբ ու իր մանուկ երազներով... Ծնունդն է նրանց, ովքեր ապրում են ա՛յն երկնքի տակ, որտեղ աստղերը խոսում են Համբարձումյանի լեզվով...

Ժամանակն ու պատերազմները խորտակեցին մեր հոյակերտ տաճարներն ու ոստանները: Վաղուց մարել-կորել են այն ծափերը, որ Արտաշատի պալատական կամարների տակ դղրդում էին ի պատիվ Արտավազդ արքայի հեղինակած թատերախաղի: Օտարամուտ երաժշտության ելևէջների մեջ, որ մեղկ էին ու ծորուն, հաճախ խառնվել-խամրել են մեր հորովելաշունչ մեղեդիները: Եվ միայն խոսքը՝ մեր բառն ու բանը, երկաթագիր մատենագրությունը, մեր տաղն ու բանաստեղծությունը, հասել է մեզ այնպես, ինչպես որ կար: Բա՜ռը, հայրենի բա՜ռը, որ քարից էլ ամուր է դառնում, երբ գրվում է տառերով, երբ իրենով կազմավորվում է տող, պատում, բանաստեղծություն: Բա՜ռ, հայրենի բա՜ռ, որ չե՜ս փշրի բաբանների հարվածով, չե՜ս տրորի ծանրաթաթ փղերի սմբակների տակ, չե՜ս պոկի հինավուրց վանքի պատերից... Արդ, մնաց մեր դպրության ոսկեդարը՝ ոսկի, մեր բյուրեղյա Նարեկը՝ անփշրելի, միջնադարյան մեր մեծագանձ տաղերգությունը՝ անկողոպուտ: Մնաց և մնալով՝ տարավ-բացեց աշխարհին մեր էությունը՝ մեր բարձրագնա միտքը, մեր սիրտը, որ սիրո՛վ է լի, մեր հոգին, որ արդա՛րն է երազել միշտ. այն ամենը, ինչ բարձրացնում է մեզ՝ բոլոր բարձրերին հավասարեցնելով:

Ա՛յս եղավ Մեսրոպը մեր ժողովրդի համար: **/Ըստ Ս. Կապուտիկյանի/**

🕮 Շ-194. Ամբողջացնել նախադասությունները բացահայտիչ ստորադաս նախադասություններով:

1. Մասիսը, որ --□-□--, հայոց պատմության լուռ վկան է:
2. Ես, որ --□-□--, սիրում եմ իմ երկիրը, իմ հողն ու ջուրը:
3. Արմենը, որ--□-□--, քնքշությամբ նայեց ծերացող մորը:

4. Նրանք, ովքեր --□-□-- ցրվեցին աշխարհով մեկ:
5. Իրիկնապահին, երբ --□-□--, երևաց գյուղի միակ եկեղեցու գմբեթը:
6. Վաղ առավոտյան, հենց որ --□-□--, երիտասարդը հեռացավ քաղաքից:
7. Այգում, որտեղ --□-□--, որդին տեսավ կռացած մորը:

📖 Շ-195. & Ա. Գեղարվեստական կամ գիտական գրականությունից ընտրել և գրել բայական անդամի լրացում ստորադաս նախադասություններով այնպիսի կապակցություններ, որոնց կախյալ եզրերը լրացնում են գերադաս նախադասության՝
ա/ խոնարհված բայով արտահայտված /ստորոգյալի/ պարզ ստորոգյալի
բ/ բայական բաղադրյալ ստորոգյալի
գ/ դերբայով արտահայտված անդամի
դ/ իր կազմի մեջ բայական բաղադրիչ ունեցող անդամի:

Բ. Բայական անդամի լրացում հանդիսացող ստորադաս նախադասությունները բաժանել նաև ըստ բնույթի՝ ա/ բայական անդամի խնդիր ստորադաս նախադասություն լրացում, բ/ բայական անդամի պարագա ստորադաս նախադասություն լրացում, և նշել նրանց իմաստակառուցվածքային առանձնահատկությունները:

📖 Շ-196. Կազմել ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություններ, որոնց գերադաս նախադասության ստորոգյալ-լրացյալը արտահայտում է՝
ա/ նյութական, առարկայական գործողության իմաստ /տալ, վերցնել, ընտրել, քանդել, շենացնել, նվագել, քամուն տալ, ջարդել, փշրել, շահել, տանուլ տալ.../.
բ/ կամային իմաստ /կամենալ, պահանջել, կարգադրել, հրամայել, խնդրել, հորդորել, աղերսել.../.
գ/ զգայական իմաստ /սիրել, հարգել, ատել, տեսնել, նկատել, արհամարհել, .../.
դ/ ասացական իմաստ /ասել, հաղորդել, պատասխանել, հայտարարել, հաղորդել, գրել.../.
հասկացական-իմացական իմաստ /իմանալ, հասկանալ, կռահել, ըմբռնել, մտաբերել, գուշակել, հիշել, խորհել.../:

📖 Շ-197. Ամբողջացնել նախադասությունները՝ ավելացնելով խնդրային /ուղիղ և անուղղակի/ ստորադաս նախադասություններ:
1. Հիշեցե՛ք նրանց, --□-□--.:
2. Ծերունին հիշեց այն, --□-□--:
3. Հեքիաթներդ պատմի՛ր նրանց, --□-□--:
4. Շշուկներ պտտվեցին այն մասին, --□-□--:
5. Տղան հեռացավ նրանցից, --□-□--:
6. Ես ուզում եմ, --□-□--:
7. Նա չգիտեր, --□-□--:
8. Ուզում եմ հավատալ,...:
9. Եվ զգում եմ ես հիմա, --□-□-- :
10. Ամեն ինչ սկսվեց նրանից, --□-□--:
11. Այդ միտքը ջերմորեն ընդունվեց նրանց կողմից, --□-□--:
12. Տառապյալ մորը հուսադրում էին նրանով, --□-□--:

🕮 Շ-198. Կազմել անջատման անուղղակի խնդիր ստորադաս նախադասությամբ բարդ նախադասություններ, որոնց գերադաս նախադասություններում ստորոգյալ են դառնում հետևյալ բայերը՝
ա/ հեռանալ, փախչել, անջատվել, բաժանել, պոկել, թաքցնել, հափշտակել, զատել, առանձնանալ
բ/ առաջանալ, ծագել, ծնվել, սերել
գ/ իմանալ, լսել, տեղեկանալ, հարցնել
դ/ վախենալ, երկյուղել, զգուշանալ, խուսափել, սարսափել, քաշվել, ամաչել, նողկալ, զզվել:

Բ. Որոշել նրանց իմաստային տարբեր հարաբերությունները. ի՞նչ է ցույց տալիս անջատման խնդիր ստորադաս նախադասությունը:

🕮 Շ-199. & Ա. Կազմել բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում որ **բառը գերադաս նախադասությանն է կապել՝**
ա/ ենթակա երկրորդական նախադասություն
բ/ ստորոգելի երկրորդական նախադասություն
գ/ որոշիչ երկրորդական նախադասություն
դ/ հատկացուցիչ երկրորդական նախադասություն
ե/ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն
զ/ հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն
է/ անջատման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն
ը/ միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն
թ/ վերաբերության անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն
ժ/ պատճառի պարագա երկրորդական նախադասություն
ժա/ նպատակի պարագա երկրորդական նախադասություն
ժբ/ պայմանի պարագա երկրորդական նախադասություն

& Բ. Նմանատիպ աշխատանք կատարել՝ որպես կապակցման միջոց օգտագործելով թե շաղկապը:

🕮 Շ-200. Գտնել, թե ո՛ր նախադասություններն ունեն ժամանակի պարագա ստորադաս նախադասություն:

1. Երբ գարուն է լինում, տաքանում են Օրանջիայի քարերը... 2. Թվում էր, թե մոռացված մի անկյուն էր այն օրերից, երբ դեռ մարդը չկար: 3. Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիայի ձորակում մասրենիներ չկային: 4. Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորում հալվում են ամպի ծվենները... 5. Այս չոր ծիրանի տակ նստած, գարնան այս պայծառ օրը, երբ ուրախ արևը մեղմել էր քարերի մռայլությունը, ես գրում եմ իմ մանկության, ծիրանի ծառի և իմ ընկեր Անդոյի մասին: 6. Ամռան շոգին, երբ արևն այնքան մոտ է, ջերմությունը՝ շատ, երբ շները շոգից տան ստվերում պառկում են,... առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ-Մարգարին...: 7. Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, Լառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր: 8. Հետո երկար ժամանակ վառ մնաց այն օրը, երբ

անհանգիստ կարոտով թափառել էր փողոցներում... 9. Սայլերի ճռճռոցն սկսվում էր շատ կանուխ՝ գարնանային մշուշի այն կախարդական ժամերին, որ քունն այնքան էր քաղցրանում, որ դառնում էր անդիմադրելի: /Ա. Բակունց/

🕮 Շ-201. Երբ, մինչև, մինչև որ, նախքան, մինչդեռ, քանի, քանի դեռ, հենց, հենց որ սպասարկու բառերով կազմել նախադասություններ՝ ուշադրություն դարձնելով բաղադրիչ-նախադասությունների ստորոգյալների արտահայտած ժամանակային հարաբերություններին /համաժամանակյա՞ են, տարաժամանակյա՞, հաջորդո՞ւմ են, թե՞ նախորդում/:

🕮 Շ-202. Բարդացնել տրված պարզ նախադասությունները՝ ավելացնելով «ինչո՞ւ» հարցին պատասխանող ստորադաս նախադասություններ՝ թե՛ նախադաս, թե՛ միջադաս և թե՛ վերջադաս դիրքերում /կարելի է նաև ավելացնել հարաբերյալներ/, մատնանշել իմաստակառուցվածքային հատկանիշները /ստորադաս նախադասության բնույթը, կապակցման եղանակներն ու միջոցները, շարադասությունը/:

❶ Ու թափառում եմ ես փողոցներում:
❷ Լեռան կատարին թառած աստղերը անքնությունից ա՛չք էին թարթում:
❸ Անիծյա՛լ լինի այս դժբախտ բա՛խտը:
❹ Ծո՛վ, դու իմ ցասումն առած կրծքիդ տակ, գազազում ես խենթ:
❺ Կա՛նգ առ, անցորդ, գեթ մի վայրկյան, աղբյուրի մոտ այս դիմացի:
❻ Իմ տղամարդ տեղով ուզում եմ լաց լինել:
❼ Եվ հյուսիսում այս պաղ գարնան վերահասից ծառերն են լաց լինում:

🕮 Շ-203. Կազմել նպատակի պարագա ստորադաս նախադասություն ունեցող բարդ ստորադասական նախադասություններ տրված կապակցական կաղապարներով՝ նշելով իմաստակառուցվածքային առանձնահատկությունները:

1.…, որպեսզի …:
2. …այն նպատակով, որ …:
3. …նրա համար, որ …:
4. …, որ …:
5. …, ինչ է թե …:
6. Որպեսզի …
7. …, թե ինչ է ……..:
8. …, թե … :

🕮 Շ-204. Գրել՝

ա/ ձևի պարագա կախյալ նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություններ ինչպես, որպես, որ, ասես թե, կարծես /թե/, իբր, ինչ ձևով, ինչ կերպ շաղկապներով ու շաղկապական բառերով:

բ/ չափի պարագա կախյալ նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում կապակցումն իրացվում է ինչքան, ինչչափ, որքան, որչափ հարաբերական դերանուններով և որ, մինչև /որ/, քան շաղկապներով:

🕮 Շ-205. Ա. Գրել 2-ական բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում տեղի պարագա կախյալ նախադասությունները, պայմանավորված գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի բառային իմաստով, արտահայտում են տարածական հետևյալ հարաբերությունները՝

ա/ այն տեղը, որի շրջանակներում, ներսում, միջում, մակերեսին և այլն կատարվում է գործողությունը՝ **բուն տեղի պարագա,**

բ/ այն տեղը, դեպի որը ուղղվում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի գործողությունը՝ **ուղևորման կամ ժամանման տեղի պարագա,**

գ/ այն տեղը, որտեղ ավարտվում է գործողությունը՝ **վերջնակետի տեղի պարագա,**

դ/ այն տեղը, որտեղից սկսվում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը՝ **ելման տեղի պարագա,**

ե/ այն տեղը, որի միջով անցնում է գործողությունը՝ **ուղեկցման /անցման/ տեղի պարագա:**

Բ. Ընտրել 3-4 նախադասություն և գրել հնարավոր շարադասական տարբերակները:

🕮 Շ-206. Ա. Լրացնել նախադասությունները, որոշել ստորադաս եզրերի բնույթը և կազմել կապակցական կաղապարները:

✓1. Եթե թռչունները ցածր են թռչում , --□-□--:
✓2. Եթե ձեռքդ քոր է գալիս, --□-□--:
✓3. Եթե աչքերդ սառչում են, --□-□--:
✓4. Եթե գորտերը կոկռում են, ուրեմն --□-□-- :
✓5. Եթե մրջյունները թաքնվում են իրենց բներում , --□-□--:
✓6. Երբ արագիլները գարնանը չեն վերադառնում իրենց բները, --□-□--:
✓7. Երբ Նոր տարվա գիշերը՝ ժամը 12-ին, ընտանիքի անդամները հավաքվում են իրենց հայրական տանը, --□-□--:
✓8. Երբ որ հայ կանայք նոր թխած լավաշը անցորդներին կամ հարևաններին չեն տալիս, --□-□--:
✓9. Եթե տանը մրջյունները շատ են, ապա , --□-□-- :
✓10. Եթե սպանում եք իշամեղվին , --□-□-- :
✓11. --□-□--, թե հանդիպես դատարկ դույլերով կնոջ:
✓12. --□-□--, թե տան դռան վերևի մասում փուշ կամ ասեղներով բարձիկ կախեք:

Բ. Բացատրել ժողովրդական կանխագուշակումների իմաստը:

Գ. Եթե ուրիշ կանխագուշակումներ գիտեք, գրե՛ք դրանք:

🕮 Շ-207. Կազմել նախադասություններ տրված կապակցական կաղապարներին համապատասխան:

1. Թեև … …. :	5. Թեկուզ /և/ …	9. Չնայած /որ/ …, … :
2. Թեև … , բայց /սակայն/ … :	6. Թեպետ /և/ …,…:	10. … թե չէ, …:
3. Ինչ /էլ/ …	7. ……, ուր /էլ/ …. :	11. …. , որտեղ /էլ/ … :
4. Երբ /էլ/….	8. …, որքան /էլ/… :	12. Բայց…, ինչքան /էլ/ …:

🕮 Շ-208. Լրացնել պարագա կախյալ նախադասություններով և նշել իմաստակառուցվածքային հատկանիշները:

1. Միշտ հաճելի է այնտեղ, **որտեղ** --□-□--:
2. Ամեն անգամ սիրտս լցվում է թախծոտ կարոտով, **երբ** --□-□--:
3. Նա վերջերս տխուր էր այն պատճառով, **որ** --□-□--:
4. Ես ներում եմ քեզ, **քանզի** --□-□--:
5. Նրանց զրույցը կարճ տևեց, **որովհետև** --□-□--:
6. Կինն այլևս չէր կարող այդքան երկար դիմանալ, **մանավանդ որ** --□-□--:
7. Ի՜նչը կհաղթի կյանքում հերոսին, **թե** --□-□--:
8. Աշխատանքները շարունակվեցին, **չնայած որ** --□-□--:
9. Նա միշտ այնպես էր նայում, **ինչպես** --□-□--:
10. Նա այդ օրն այնքան գեղեցիկ երգեց, **որ** --□-□--:
11. Նա շատ խելացի երիտասարդ է, **ուստի** --□-□--:
12. Տղան անընդհատ հարվածում էր և գայրանում, **որ** --□-□--:

🕮 Շ-209. Շարունակել և ավարտել՝ օգտագործելով միայն բարդ ստորադասական նախադասություններ:

Մի պատանի զբոսնում էր սարի լանջում, ծաղիկների մեջ: Նրա հանդեպ երևաց մի ծերունի, որի ալեծածան միրուքը մինչև գետին էր հասնում: Պատանին մինչև այդ օրը չէր տեսել մի այդպիսի ալևոր մարդու. շա՜տ զարմացավ և, մի փոքր հետո սիրտ առած հարցրեց.

- Պապի՛, ո՞վ ես դու:

- Ես բախտի ոգին եմ,- պատասխանեց նա:

- Բախտի՞, ուրեմն դու գիտես, թե ինչպե՞ս է իմ բախտը լինելու, ինչպիսի՞ ապագա պիտի ունենամ և ինչպիսի՞ վերջ. ասա՛ ինձ, պապի, աղաչում եմ...

- Սիրելիս, դժվար է ինձ ասել, քանի որ եթե սկզբից իմանաս քո ամբողջ կյանքը, նա կկորցնե քո աչքերում իր արժեքը, - պատասխանեց ծերունին: - Շա՜տ լավ, ահա այս սարը, տեսնու՞մ ես, քո դիմացը. բարձրացի՛ր, սա՛ է քո բախտի ճանապարհը. եթե ուզում ես կյանքդ երկար տևի՝ դանդաղ, ծանր բարձրացիր, իսկ եթե ուզում ես շուտ հասնել քո բաղձանքներին, արագ բարձրացի՛ր և, եթե գոհ լինես բախտիցդ, կա՛նգ առ...

Այսպես ասավ ծերունին և անհայտացավ...

Պատանին սկսեց բարձրանալ... **/Ավ. Իսահակյան/**

🕮 Շ-210. Ա. Կազմել բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում ստորադաս եզրը՝

ա/ վերջադաս է

բ/ միջադաս է

գ/ նախադաս է

& Բ. Բացատրել ստորադասական նախադասության բաղադրիչների շարադասական օրինաչափությունները:

🕮 Շ-211. Հետևյալ բարդ ստորադասական նախադասություններում ընդգծել ստորադաս նախադասությունները և փոխել նրանց շարադասությունը / 2 ձևով/: Շարադասական փոփոխությունը կարո՞ղ է փոխել երկրորդականի իմաստը և բնույթը:

1.Գարնան մի գիշեր ձեր մթին բակում, Երբ երկչոտ սերս քեզ կմկմացի, Դու ինձ մերժեցիր կատակով անգութ.../**ԳԷ**/: 2. Ամեն անգամ, երբ թարթում ես Ինձ լացացնող աչքերդ անուշ, Գող թարթիչներդ իմ կարճ կյանքից Մի տարվա կյանք են գողանում /**Ն**/: 3. Ես տառապալից իմ փորձից գիտեմ, Որ խաբուսիկ են օտար սերերը՝ Աստղերի նման.../**ՊՍ**/: 4. Օ Սուլամի՛թա, Հապա չու՛ռ արի, որ ես քեզ տեսնեմ /**Ն**/: 5. Խելառն այն ժամ է լուռ իմաստնանում, Երբ ձյունը սրտի գլխին է դնում... /**ՀԸ**/: 6. Քեզ կինն աստղի պես կմնա անհաս, Թեկուզ հանճարեղ աստղագետ դառնաս /**Ն**/: 7. Աշխարհը, հավանաբար, դեռ այնքան էլ հին չէ, որովհետև մարդիկ դեռևս չեն կարողանում թռչել /**Գեորգ Քրիստոֆ Լիխտենբերգ**/: 8. Որտեղ ուժն է թագավորում, այնտեղ օրենքն անզոր է /**Մենանդր**/:

🕮 Շ-212. Ա. Կարդալ, գտնել բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները:

Բ. Նշել յուրաքանչյուրի բաղադրիչ նախադասությունների քանակը, պարզել նրանց միջև եղած հարաբերությունների բնույթը և այդ հարաբերությունների արտահայտման միջոցները:

Գ. Շարահյուսորեն վերլուծել այն նախադասությունը, որը բաղադրիչ նախադասությունների քանակով գերազանցում է մյուսներին:

Դ. Կազմել ընդգծված նախադասության գծապատկերը:

Բանաստեղծական առասպել կա բավական թույլ աստղերից բաղկացած մի համաստեղության մասին, որն անվանվել է Վերոնիկայի Վարսեր և գտնվում է Որսկան Շների ուղղությամբ դեպի ներքև: Առասպելը պատմում է, որ այդ աստղերը՝ որպես համաստեղություն, տարանջատվել են եգիպտացիների կողմից մ. թ. ա. 3-րդ դարում, երբ երկիրը կառավարում էր Պտղոմեոս Երրորդը, որն էլ Ալեքսանդրիայի նշանավոր գրադարանի հիմնադիր Պտղոմեոս Երկրորդի որդին էր:

Երիտասարդ փարավոնի կինը՝ Վերոնիկան, հայտնի էր իր հեքիաթային գեղեցկությամբ օժտված վարսերով, որոնց մասին երգեր էին հյուսում բանաստեղծները, որոնց հրաշք գեղեցկությունը տեսնելու էին գալիս հեռավոր երկրների արքաներն ու քուրմերը:

Փարավոնի անհոգ կյանքը երկար չտևեց: Նա իր զորքով մեկնեց արշավանքի, և Վերոնիկան, որ տարիներ շարունակ անհամբեր սպասում էր ամուսնուն, հուսահատվելով՝ երդում է տալիս, որ եթե փարավոնը վերադառնա, իր վարսերը կզոհաբերի սիրո աստվածուհու տաճարին: Պտղոմեոս Երրորդը վերադառնում է հաղթանակով: Վերոնիկան իրականացնում է իր երդումը: Խնջույքի թեժ պահին հայտնում են, որ վարսերն անհետացել են պալատից, սակայն պալատի աստղագուշակն ասում է, որ Վերոնիկայի վարսերը գողացված չեն, որ դրանք երախտապարտ սիրո աստվածուհին տեղափոխել է երկինք, որպեսզի դարձնի համաստեղություն:

🕮 Շ-213. & Ա. Գեղարվեստական գրականությունից ընտրել և գրել 3-ական՝
ա/ բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություններ,
բ/ բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություններ, որոնց բաղադրիչները բարդացված են ստորադասական կապակցությամբ,
գ/ բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ:

& Բ. Բացատրել յուրաքանչյուր տեսակի իմաստակառուցվածքային հատկանիշները:

🕮 Շ-214. Որոշել հետևյալ բազմաբաղադրիչ նախադասություններում բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունները, նշել կապակցման եղանակներն ու միջոցները, կազմել գծապատկերները:

Ա. 1. Ես չգիտեմ հաստատ՝ ճի՞շտ է այն խոսքը հին, Թե ինչ-որ մութ մի ուժ, խորհրդավոր մի ձայն Հանցագործին ձգում ու տանում է այնտեղ, Ուր գործել է նա իր հանցանքը սև /ՌԴ/: 2. Եվ այդ «բորբ»-ի հուժկու արձագանքը /«բոսոր»/ Արդեն լուսաբացի կիսաքնում «Բարի լույս» է հնչում բոլոր կանանց համար, Որոնց ես չեմ սիրում, որովհետև Քեզ եմ սիրում նույնիսկ այն ժամանակ, Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում:/ՊՍ/: 3. Ու վերքերը դառնում են երգ, Ու երգերը դառնում են վերք, Ու սրտերը՝ ծանր մի քար, Երբ զինվոր են տանում յարին /Ն/: 4. Այնտեղ ամառային ստվերն անգամ Թեթև հագուստի հետ մտնում վեճի Ու հաղթում էր նրան Եվ ստիպում, Որ կանաչի վրա կարկատանվենք՝ Ստեղծելով մի հին բարձրաքանդակ /Ն/: 5. Սև են աչքերդդ իմ աչքերի պես, Եվ գիտեն նայել այնպե՜ս տրտմորեն, Որքան տրտում է սիրտդս ա՛յն պահին, Երբ ինձ թվում է, թե չե՜ս սիրելու /Ն/: 6. Ասում են՝ հին վերքը հաճախ է ցավում, Երբ եղանակը ամպոտ է ու վատ /ՎԴ/:

Բ. & Երբ վերջալույսն է մխրճվում ամպերի մեջ՝ սանրի նման,
Ու հոտոտող բարակ քամին, շնիկի պես, կանգ է առնում,
Ամեն թփի, ծառի, գուղձի և ամեն մի մարդու առաջ,
Ու երբ ցուրտը երիտասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն՝
Ստիպելով շապիկ կոճկել ու մրմնջալ խոսքեր դժգոհ,
Ու երբ մթան թավշի վրա օրվա հաչոցն է խլանում,
Իսկ հատուկենտ լույսերն ասես դառնում են հին զարդանկար,-
Միամի՜տ եմ դառնում նորից,
Հավատում եմ արդարության,
Ու թվում է, թե ես պիտի իմ բնական մահով մեռնեմ /ՊՍ/:

🕮 Շ-215. & Կազմել տարասեռ բարդ համադասական նախադասություններ այնպես, որ իրենց կազմում ունենան՝
ա/ մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ պարզ նախադասություններ.
բ/ երկու երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ.
գ/ մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ համաստորադասական բարդ նախադասություններ.
դ/ մեկ երկբաղադրիչ բարդ ստորադասական և մեկ ենթաստորադասական նախադասություն:

🕮 Ծ-216. & Կազմել բազմաբաղադրիչ բարդ նախադասություններ տրված գծապատկերներով /քառակուսիները նշում են բարդ նախադասության պարզ նախադասությունները, հորիզոնական գծերը՝ համադասական հարաբերությունը, ուղղահայացը կամ շեղը՝ ստորադասականը/:



🕮 Ծ-217. & Ա. Կարդալ: Որոշել նախադասությունների կառուցվածքային տիպերը, հնչերանգային տեսակները, դասակարգել բարդ նախադասությունները, նշել բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները:

Բ. Առանձնացնել բարդ ստորադասական նախադասությունները, որոշել ստորադաս նախադասությունների բնույթը և շարադասությունը: Փոխակերպել պարզի: Բացատրել հակադրական զույգերի կառուցվածքային, քերականական, իմաստա-ոճական տարբերությունները:

Գ. Ընտրել 2-3 նախադասություն և շարահյուսական վերլուծություն կատարել:

Դ. Ընդգծված նախադասության գծապատկերը կազմել:

Սիրում եմ անձրևը, երբ նոսր վարագույրներով կախվում է սևագորշ ամպերից և տիեզերական ցնցուղի նման իր տարափի տակ առնում հանդ ու անդաստան:

Սիրում եմ շոնդալի անձրևը՝ ջրառատ, ծա՛նր, որ աղմկալի հարվածում է տանիքներին ու ջրհորդաններով գահավիժում ցած... Սիրում եմ անձրևը՝ ամառվա երկարատև երաշտին, երբ թոշնած բույսերը ուշքի են գալիս և վերակենդանացող արարածների նման «օխայ» են քրքմնջում հրճվանքով: Երբ պապակված հողը կլանում է երկնային շիթերն այնպիսի ագահությամբ, որ ոչ մի առվակ չի գոյանում երկրի վրա: Սիրում եմ գարնանամուտի անձրևը, որին ուղեկցում են ամպերի առաջին որոտներն ու հրեղեն կայծակները, որոնք կարծես գարնան առաջին համբավաբերներն են, նրա հաղթական մուտքն ազդարարողները: Օ՛, այնպիսի շքեղ երևույթ աշխարհի վրա, որպիսին գարունն է, պետք է, որ այդպիսի շոնդալի համբավաբերներ ունենա...

Սիրում եմ անձրևը իր բոլո՛ր ձևերով, իր բոլո՛ր արտահայտություններով՝ և՛ հախուռն ու ջրառատ, և՛ կարճատև տեղատարափը, որ դեռ չդադարած ծիածանն է շքեղ կամարներ կապում մեր ձորերի վրա: Սիրում եմ և՛ գարնան ուրախ անձրևը, որ անթիվ կյանքեր է արթնացնում երկրի վրա, և՛ աշնան մելամաղձոտ ու տնական անձրևը, որ թախիծ է բերում ու տխուր հուշեր:

Ասում են՝ ես անձրևի տակ եմ ծնվել, և, երբ աշխարհ եկա, առաջին ձայները, որ լսեցի, ամպի գոռոցն էր և անձրևի շոնդալի թմբկահարությունը... Այո՛, աշխարհ գալուն պես ես լողացել եմ անձրևի ջրով: ...Եվ ամեն տեղ, ուր

էլ որ լինեմ, երբ որոտում է ամպը, թնդում է սիրտս բերկրանքից: Գուցե այն պատճառով, որ իմ աշխարհի գալը նա՛ է ողջունել իր որոտով... Ուր էլ որ լինեմ, անձրևն սկսելուն պես մի առանձին հաճույքով պիտի կանգնեմ նրա տակ... Գուցե դրա պատճառն ա՞յն է, որ մինչև գործը հասներ մեր գյուղի քահանային, անձրևն է մկրտել ինձ՝ երկնքից իջած իր անարատ ու զուլալ ջրերով...

Դուրս ելնեմ. սկսվեց անձրևը... /Վ. Անանյան/

ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

📖 Շ-218. Գտնել ուրիշի /մեջբերվող/ խոսքերը, որոշել նրանց իմաստակառուցվածքային տեսակները՝ ուղղակի՞ է, թե՞ անուղղակի, բնութագրել կիրառական –ոճական տարբերությունները:

✦ Բ. Ի՞նչ նկատառումներով է մեջբերվում ուրիշի կամ իր իսկ ասած կամ գրած խոսքը:

Մարմարե սանդուղքների վրա կանգնել էր ուղեվարը ու պատմում էր Ակրոպոլիսի մասին: Պատմում էր, որ այն կառուցվել է Քրիստոսի ծննդից առաջ՝ հինգերորդ դարի կեսերին. կառուցվել է 40 տարում՝ հռչակավոր քանդակագործ Ֆիդիասի ղեկավարությամբ: Ակրոպոլիսը խորտակել են երկրաշարժն ու թուրք բարբարոսները:

Պատմում էր ուղեվարը՝ ձայնի մեջ զայրույթ ու ափսոսանք: Բայց այս շքեղ ավերակներն ինձ ուրիշ բան էին ասում խորտակված շքեղության իրենց մարմարե լեզվով...

Պարթենոնի տաճարը տանող ճանապարհներն ինձ ասում են, որ այստեղ կանգնել է հույն հռչակավոր գրող Արիստոֆանը, մուրուքն առել է բռան մեջ, նայել Միջերկրականի կապույտ հորիզոնին ու ասել. «Տե՛ր, եթե այս հրաշքը ստեղծվել է մարդու ձեռքով, ապա նա ավելի աստված է, քան դու»:

Եվ եթե մի հրաշքով նույն Արիստոֆանը հայտնվեր այս ավերակների վրա, ապա պիտի գոչեր. «Տե՛ր, եթե դու հանդուրժել ես այս ավերումը, ուրեմն դու չկաս»:

📖 Շ-219. ☑ Ա. Ստեղծագործաբար փոխադրել հետևյալ զրույցի բովանդակությունը՝ այն հարստացնելով մեջբերվող խոսքով՝ լինի ուղղակի, թե անուղղակի:

Մի շատ աղքատ մարդ կար: Հայտնի էր, որ կարդալ գիտեր: Նաև ասում էին, թե մի գիրք ունի, որով կարող է երազներ մեկնել:

Մի անգամ փաշան մի զարմանալի երազ տեսավ: Նա կանչեց իր երկրի բոլոր կախարդներին, որպեսզի նրանք մեկնեին այդ երազը: Ոչ ոք չկարողացավ գոհացնել փաշային. նա սաստիկ զայրացավ: Վախեցած պալատականներից մեկը հասկացրեց, որ իր երկրում մի երազահան էլ կա: Եվ փաշան անմիջապես սուրհանդակ ուղարկեց այդ աղքատ մարդու հետևից:

Վախեցած աղքատը կանգնեց երկրի տիրակալի առջև, դողացող սրտով լսեց նրա երազը....

Աղքատ երազահանի մեկնաբանությունը լսելուց հետո փաշան դառնությամբ հասկացավ, որ նա ճիշտ է. երկրում սկսվել էր համընդհանուր ստի, ուխտադրժության, երկերեսության և ամեն տեսակ կեղծիքի ժամանակը:

Փաշայի նվերներից աշխարհի չափ ուրախացած աղքատը գոհունակությամբ հեռացավ պալատից:

❖ **Բ. Փորձեք գուշակել, թե փաշան ի՞նչ երազ տեսած կլինի:**

🕮 Շ-220. Հայկական որևէ օրաթերթից ուրիշի խոսք պարունակող հատված /կամ հատվածներ/ ընտրել և բացատրել վերջիններիս գործառական արժեքը լրագրության մեջ:

🕮 Շ-221. Ուրիշի ուղղակի խոսքը հեղինակի խոսքին կապակցող բայերի տարբեր իմաստային խմբերից ընտրել երկուսը և դարձնելով հեղինակային խոսքի ստորոգյալ՝ կազմել նախադասություններ:

ա/ ասել, արտասանել, բարբառել, հայտնել, պատասխանել, վերապատմել, գրել, կարդալ, վերաշարադրել, ավելացնել, կրկնել...
բ/ մտածել, խորհել, մտքերի գիրկն ընկնել, երազել, հիշել, կռահել, գլխի ընկնել, մտորել, գիտենալ....
գ/ կարգադրել, զեկուցել, աղաչել, թախանձել, պաղատել,, հոխորտալ..
դ/ կանչել, բացականչել, գոռալ, բղավել, գոչել, ձայն տալ...
ե/ շշնջալ, կմկմալ, կրկնել, մռթմռթալ, մռմռալ, ծղրտալ, հառաչել...
զ/ ընդհատել, միջամտել, մեջ ընկնել, վրա բերել, շարունակել, համառել, պնդել, առարկել, ավելացնել, հարել, նկատել...
է/ հարցաքննել, հարցնել, դիմել, շեշտել...

🕮 Շ-222. Ա. Ընդգծել ուրիշի ուղղակի խոսքը, բացատրել նրա կապակցումը հեղինակային նախադասության հետ. ո՞ր բայերն են նման դեր կատարել:

1. Ակամա հիշում եմ Օմար Խայամին. «Եթե իմ ձեռքը հասներ ճակատագրի տախտակին, Կգրեի այն նորից՝ համաձայն իմ տենչանքի»: 2. Մասիսներն ու Արագածը եթե լեզու առնեին, վաղուց էին որոտացել. «Հանգի՞ստ թողեք մեզ»: 3. Ռուս մանուկներն անգիր գիտեն Տուրգենևի հետևյալ խոսքը. «Պահպանեցեք լեզվի մաքրությունն իբրև սրբություն, երբեք մի՛ գործածեք օտար բառեր»: 4. Թեև Հերբերտ Ուելսը /վիպասան/ հիանալիորեն հասկանում էր ռադիոակտիվության էությունը, այնուամենայնիվ կարդում ենք. «Այժմ ոչ ոք չգիտե, ոչ ոք անգամ չի ենթադրում, թե ինչ կերպ կարելի է ստիպել այդ մի բուռ նյութին՝ արագացնելու իր մեջ բանտարկված էներգիայի պաշարների արձակումը»: 5. Դեռևս 1919 թ. ատոմային ռումբի ստեղծումից շատ առաջ, Անդրեյ Բելին արտասանել է. «Աշխարհը ծվատվում է Կյուրիի փորձերում, Ինչպես ատոմային ռումբը պայթած»: 6. Այնքան էլ շատ տարիներ չէին անցել այն օրվանից, երբ հնչեց անգլիացի քսանչորսամյա մաթեմատիկոսի ձայնը. «Սթափվե՛ք, նայե՛ք, թե ինչի կողքով եք անցնում. ձեր առջև մեծ Ֆարադեյի մեծ ուսմունքն է...»: 7. Խիզախ գիտնականը՝ Չիժևսկին, իր բանաստեղծություններից մեկում խոստովանել

է. « Օ՜, դու, որ տեսար բծերն արևի Տիեզերական կամքով անվեհեր, Ի՞նչ իմանայիր, որ շատ մոտ էին Տառապանքներդ, օ՜, Գալիլեյ...» 8. Ու ես կանչեցի, երբ լեռան վրա Լրիվ չքացավ ստվերը նրա. -Օ՜, կանգնի՛ր, վարպե՛տ, դեպի ո՞ւր այդպես: Ու նա նայեց՝ «Դեպի քավարան...» /ՀԾ/:

Բ. Կազմել նախադասություններ, որոնցում ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքի հետ կապակցվում է ընտրված բայերի դերբայական ձևերով:

📖 Ծ-223. Առանձնացնել ուրիշի ուղղակի խոսքերը, որոշել հեղինակային նախադասությունների դիրքը՝ ուշադրություն դարձնելով հեղինակային խոսքի ձևակազմությանը:

Վիլհելմ Կոնրադ Ռենտգենի մեծ հայտնագործությունը հետաքրքրեց նաև Գերմանիայի ռազմական գործիչներին: Վիլհելմ Երկրորդ կայսրն այցելում է գիտնականին և հարցնում.

-Կցանկանայի՞ք, հեր Ռենտգեն, տեղափոխվել Բեռլին:

-Ի՞նչ անհրաժեշտություն կա, ի՛մ կայսր: Ես պաշտոնի չեմ ձգտում:

Գիտնականի առարկություններին ուշադրություն չդարձնելով՝ կայսրը շարունակում է.

- Այժմ Գերմանիայի կայսրությանն անհրաժեշտ են այնպիսի հրանոթներ, որոնք մեզ հպատակեցնեն Ֆրանսիան, Լա-Մանշի վրայով ոչնչացնեն Անգլիան և խեղճացնեն Ռուսաստանին: Պետք է մտածել նաև Գերմանիայի հզորացման մասին: Եթե Ձեզ հաջողվել է թափանցել մարդու ներսը, կարծում եմ՝ կարող եք և պետք է թափանցեք ավելի հեռուն: ...Դուք պետք է մասնակցեք գալիք պատերազմին Ձեր մտահղացումներով:

Երկար լսելուց հետո Ռենտգենը քաղաքավարությամբ մերժում է.

- Իմ ժողովրդի շահերն ինձ թույլ չեն տալիս պատերազմի մասին մտածել: Ես իմ ճառագայթներով նայում եմ մարդու օրգանիզմի խորքը, մտածում նրա կյանքը երկարացնելու մասին, իսկ պատերազմ նշանակում է մահ, արյուն, սով, մայրերի ողբ, որբացած ու անօթևան երեխաներ... Գիտնականին վայել չէ մարդասպանությամբ զբաղվել...

Ռենտգենն իր խոսքը դեռ չէր ավարտել, երբ կայսրը շրջվում է ու հեռանում:

Այս միջադեպը ծանր ազդեցություն ունեցավ գիտնականի վրա. հանրահռչակ գիտնականը մահացավ մոռացության և ծանր աղքատության մեջ:

📖 Ծ-224. Ստորև Ա կետում ներկայացված են հեղինակային, Բ կետում՝ ուրիշի ուղղակի խոսքերը: Փորձեք զուգակցել դրանք:

Ա -1. Գալիլեյը, վեր կենալով հատակից, իբրև թե բացականչել է ➔

Ա -2. Ալբերտ Էյնշտեյնը գրել է ➔

Ա -3 ← հայտարարել է Արքիմեդը /ըստ ավանդության/:

Ա -4. Խնջույքի ժամանակ Դիոգինեսը, մատռվակից բաժակն առնելով, գինին թափում է հատակին՝ ասելով ➔

Ա -5. Արքիմեդը մորեմերկ վազել է Սիրակուզայի փողոցներով՝ հաղթականորեն բացականչելով ➔

Ա - 6. ← գրում է Իոհան Կեպլերը:
Ա -7. Նիկոլայ Կոպեռնիկոսը ոչ մի կասկած չուներ իր ճշմարտության վերաբերյալ →
Ա -8. Սերգեյ Կորոլյովը մի առիթով նշել է →
Բ - 1. ← «Երբ թափում եմ, միայն ինքն է կորչում, իսկ եթե խմեմ, ինձ էլ հետը կկորցնի»:
→Բ - 2. «Է՜վրիկա»:
←Բ - 3. «Եվ, այնուամենայնիվ, նա /երկիրը/ պտտվում է»:
←Բ - 4. «Աշխատել նշանակում է մտածել»:
←Բ - 5. «Ես չափեցի երկիրը»:
→Բ - 6. «Մենք երազում ենք հասնել մոլորակներին»:
←Բ - 7. «Ուղեծրի կենտրոնում արեգակն է»:
←Բ - 8. «Տվեք ինձ հենման կետ, և ես երկրագունդը կշրջեմ»:

🕮 Շ-225. Ա. **Հեղինակային խոսքի վերլուծություն կատարել, առանձնացնել գլխավոր անդամները:**
❖ ☑ Բ. **Լրացնել բաց թողնված ուրիշի ուղղակի խոսքերը՝ ուշադրություն դարձնելով կետադրությանը:**
❶ Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» ողբերգության մեջ Կեսարը, դիմելով Բրուտոսին, ասում է --□-□--:
❷ «Դամոկլյան սուր» արտահայտությունը մինչև օրս էլ գործածվում է. ասում են --□-□--:
❸ Ֆիլիպ կայսրը Լակոնիայի սպարտացիներից իր նամակին մեկ բառով արտահայտված պատասխան է ստանում՝ --□-□--:
❹ Պոնտոսի թագավոր Փառնակի նկատմամբ իր տարած արագ հաղթանակի մասին /մ. թ. ա. 47 թ./ Հուլիոս Կեսարը հայտնում է --□-□--:
❺ Մտքերի գիրկն եմ ընկնում՝ Պ. Սևակի բանաստեղծա-փիլիսոփայական հետևյալ տողերը կարդալով --□-□--:
❻ --□-□-- ասել է Հին Հունաստանի մեծագույն մաթեմատիկոս և մեխանիկ սիրակուզացի Արքիմեդը:
❼ Մեր քնարերգության Վահագնի՝ Պ. Դուրյանի հետ մեկտեղ տառապեցինք «Երկնքի հիվանդությամբ», նրա հետ մեկտեղ գոչեցինք --□-□--:
❽ Հազար անգամ իրավացի է Եղիշե Չարենցը, երբ Հովհ. Թումանյանին այսպես է մեծարել --□-□--:

🕮 Շ-226. ❖ **Լրացնել այլաբանական իմաստ ունեցող ժողովրդական պատրաստի հակիրճ, իմաստուն խոսքը, բացատրել գործառական /խրատական/ և ոճական արժեքը:**
✓1. Ծառն աստծու մոտ գանգատ գնաց կացնից, ասաց՝ --□-□--:
✓2. Մեկի միրուքը վառվեց, մյուսն ասաց՝ --□-□--:
✓3. Գայլի գլխին ավետարան կարդացին, գայլը թե՝ --□-□--:
✓4. Իշին հարսանիք կանչեցին, ասաց՝ --□-□--:

✓5. Քամին մարագին ասաց՝ դուռդ բաց, դարման եմ բերում, մարագը թե՝ --□-□--:
✓6. Անամոթի երեսին թքեցին, ասաց՝ --□-□--:
✓7. Լեզուն գլխին հարցրեց, թե ի՞նչ է հալը, ասաց՝ --□-□--:
Բ. Ընդգծվածների կառուցման եղանակը ո՞ր ոճին է առավելապես բնորոշ:
Գ. 4 - 7 նմանատիպ օրինակներ ինքներդ կազմեք:

📖 **Շ-227. ❖ Ա. Ճանաչողական ու դաստիարակչական արժեք ունեցող ասույթ-նախադասությունները վերածել ուրիշի ուղղակի խոսքով նախադասությունների: Ի՞նչ են սովորեցնում դրանք:**

✓1. Ինչը թշնամուց ցանկանում ես թաքցնել, բարեկամներիդ չպետք է ասես: /Ատտար/ ✓2. Չգիտենալն ամոթալի և վնասակար չէ: Ամեն ինչ իմանալ ոչ ոք չի կարող, իսկ ամոթալի և վնասակար է ձևացնել, թե գիտես այն, ինչ որ չգիտես: /Լ. Տոլստոյ/ ✓3. Սիրտն իր բանականությունն ունի, որն անհայտ է մեր բանականությանը: /Պասկալ/ ✓4. Ամեն մեկի կյանքում պետք է մի փոքր ամպամած եղանակ լինի: /Լոնգֆելլո/ ✓5. Ոչ մի բան այնպես չի հարբեցնում, ինչպես դժբախտության գինին: /Բալզակ/ ✓6. Սխալվելը մարդկային է: /Մենենկա Ավազ/ ✓7. Շատ խոսելը հանճարի նշան չէ: /Թալես/ ✓8. Եթե իրավամբ հանդիմանես, օգտակար թշնամի կլինես, իսկ եթե ստությամբ գովես՝ վտանգավոր բարեկամ: /Թալես/ ✓9. Բառը գործի ստվերն է: /Դեմոկրիտ/ ✓10. Զգուշությամբ խոստացիր, բայց խոստացածդ կատարիր: /Մենենկա/

☑ **Բ. Երբ Թալեսին հարցնում են, թե ինչն է, որ ամեն մարդ ունի, ասում է. «Հույսը, որովհետև հույս ունեն նաև նրանք, որ ոչինչ չունեն»: Արիստոտելն ասում է. «Հույսն արքունության երազն է»: Շեքսպիրն ասում է. «Հույսը նեցուկն է սիրահարվածի»: Իսկ Ավ. Իսահակյանը փիլիսոփայում է. «Հույսով մեռնելը անհույս ապրելուց լավ է»: Իսկ ի՞նչ կարող ես ասել դու...**

📖 **Շ-228. ❖ ☑ Տեքստն արտագրել այնպես, որ նոր աստղակերպի անվանակոչման իրողությունը հայտնի դառնա 2 մարդու խոսակցությունից:**

Անցյալ դարի վերջին վիեննացի աստղագետ Պալիսը հայտնաբերեց նոր աստղակերպ: Գիտնականն աստղադիտական հզոր գործիքներ ձեռք բերելու միջոցներ չուներ: Նա հայտարարեց, որ վաճառում է երկնային նոր մարմնին անուն տալու իրավունքը: Իսկույն հայտնվեց գնորդը: Դա բարոն Ալբերս ֆոն Ռոտշիլդն էր: Միլիոնատիրոջ ցանկությամբ աստղակերպն անվանվեց իր կնոջ՝ Բետինայի անունով:

📖 **Շ-229. Ա. Կարդալ երկու տեքստերը. ո՞րն է մենախոսություն, ո՞րը՝ երկխոսություն:**

● «Եթե մարդը միայն ինքն է երջանիկ ու երջանիկ է, երջանկությունը կորցնում է իր նշանակությունը: Դա նման է նրան, որ ինչ-որ մեկը սպիտակ կավճով գրի սպիտակ պատի վրա. ոչ ոք չի կարող կարդալ գրվածը: Գիշերը նույնպես անհրաժեշտ է, ինչպես ցերեկը: Եվ հուսահատության օրերը նույնպես անհրաժեշտ են, ինչպես ուրախության օրերը: Եվ աստիճանաբար,

երբ նկատում ես կյանքի ռիթմը, զգում ես երկակիության ռիթմը, հակադրությունների ռիթմը, դու դադարում ես հարցնել: Դու տիրում ես Խորհրդին.... Այդ ժամանակ էլ զարմանում ես, թե որքան մեծ է կյանքի օրհնությունը. նույնիսկ հուսահատությունը, տխրությունը կմաքրվեն: Չեմ ասի, թե տխրությունը չի լինի, նա կգա, բայց նա արդեն իմ թշնամին չի լինի: Ես նրա հետ կընկերանամ, որովհետև կտեսնեմ նրա օգուտը. ես կկարողանամ տեսնել նրա գեղեցկությունը, կկարողանամ հասկանալ, թե ինչու՛ նա կա, և ինչու՛ է նա երբեմն անհրաժեշտ»:

● -Կարելի է սովորել՝ նայելով ցանկացած առարկայի,- մի անգամ ասաց ուսուցիչն իր աշակերտներին. ամեն ինչ աշխարհում գոյություն ունի, որպեսզի սովորեցնի մեզ: Ոչ միայն այն, ինչ արել է Աստված, այլև այն, ինչ արել են մարդիկ, իմաստնացնում է մեզ...

-Այդ ինչպե՞ս,- անհամբերությամբ ընդհատեց աշակերտներից մեկը: - Օրինակ՝ ի՞նչ է սովորեցնում երկաթուղին:

- Որ մի ակնթարթ ուշանալով կարելի է ամբո՛ղջը բաց թողնել:

- Իսկ հեռագի՞րը:

- Որ ամե՛ն մի բառ հաշվի է առնվում:

- Իսկ հեռախո՞սը:

- Որ այնտեղ լսում են, թե մենք այստեղ ի՛նչ ենք խոսում:

Բ. Մենախոսության վերջին նախադասությունը շարահյուսական վերլուծության ենթարկել: Մենախոսությունը ձևափոխել այնպես, որ երկխոսություն դառնա /գրել այն/:

Գ. Արտագրել երկխոսությունը՝ լրացնելով հարգական արտահայտություններով:

Դ. Ինչո՞ւ երկխոսության մեջ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր ուղղակի խոսք ուղեկցվի հեղինակային նախադասությամբ:

❖ Ե. Գրել այն արտահայտությունների շարքը, որոնցից մեկը պետք է ընտրեր աշակերտը՝ ուսուցչի խոսքն ընդմիջելու համար:

📖 Ծ-230. Ա. Գիտական կամ գեղարվեստական աղբյուրներից դուրս գրել 2-ական ուրիշի ուղղակի խոսք պարունակող նախադասություններ, որոնցում՝

ա/ ուրիշի ուղղակի խոսքը գտնվում է հեղինակային նախադասությունից առաջ.

բ/ ուրիշի ուղղակի խոսքը գտնվում է հեղինակային նախադասությունից հետո.

գ/ հեղինակային նախադասությունը գտնվում է ուղղակի խոսքի միջում.

դ/ ուղղակի խոսքը գտնվում է հեղինակային խոսքի միջում:

Բ. Յուրաքանչյուրի դեպքում բացատրել գրության, կետադրման, հնչերանգային ձևավորման յուրահատկությունները:

🕮 Շ-231. ❖ Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի, նշել կառուցվածքային փոփոխություններն ու ոճական տարբերությունները:

1. Նիլս Բորը «Հիշողություններ Ռեզերֆորդի մասին» գրքում ասել է, որ ատոմային էներգիան չի կարող գործնականորեն կիրառելի լինել: 2. Ակադեմիկոս Պ. Լ. Կապիցան, Անգլիական արքայական ընկերության նիստի ժամանակ դիմելով հրավիրվածների բարձր ժողովին, Ռեզերֆորդի մահվան տարեդարձի օրն ասաց, որ իրենք հույս ունեն, որ մարդիկ այնքան խելք կունենան, որ գիտատեխնիկական հեղափոխությունը դնեն ճիշտ ուղու վրա՝ հանուն մարդկության երջանկության: 3. Ինչպե՞ս չհիշել Նյուտոնին, որ շատ բան է տեսել, որովհետև կանգնած է եղել գիգանտների ուսերի վրա: 4. Մի անգամ Վ. Ի. Կուրչատովը հայտարարել է, որ անհանդուրժելի է այն միտքը, թե կարող է ատոմային կամ ջրածնային պատերազմ սկսվել, և որ իրենք, տեսնում են, որ ատոմային կամ ջրածնային զենքի գործարկումը կտանի դեպի անհամար թշվառություններ: 5. Երբ Հայնրիխ Հերցը դարձավ համաշխարհային փառքի արժանացած գիտնական, նրա խառատագործության ուսուցիչը սաստիկ վշտացավ՝ ասելով, որ նրանից հրաշալի խառատ դուրս կգար:

🕮 Շ-232. ❖ Ա. Վ. Դավթյանի «Իրիկնային տեսիլը» վերաշարադրել արձակ ձևով՝ ուղղակի խոսքերը փոխակերպելով անուղղակիի:

Իրիկնային հոգնաբեկ քամին տվայտում է խուլ,
Ու իմ մոխրացած գլուխը արդեն թեքվում է բարձին,
Բայց հայտնվում է ծանոթ մի տղա ու ասում տխուր.
- Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին...
Դու ինձ ասացիր, որ հեռու –հեռվում մի հովիտ կա տաք,
Այնտեղ կապույտ է, կապույտի կոպին աստղ է նորածին,
Կանաչների մեջ քեզ է սպասում մի այլ հովատակ.
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին:
- Ների՛ր ինձ, տղաս, կար այդ հովիտը, հովատակն այդ կար,
Մատներս նույնիսկ շոյել են նրա աչքերը հրկեզ,
Նա շատ էր վայրի, մորթին շողում էր ու աստղանկար,
Երևի բռնել, լկամ են դրել ու տարել կրկես:
- Դու ինձ ասացիր՝ սերը հրաշք է, սերը՝ քնքշություն,
Ու ճանապարհիս ինձ է սպասում հավերժ կանացին,
Սակայն ես գտա խուսափող մի հուր, խանդի մաղձ ու թույն,
Ո՞ւր է հրաշքն այն , որ դու խոստացար ինձ լուսաբացին:
- Ների՛ր ինձ, տղաս, առաջին սերս հողմերը տարան,
Ու տարան անփույթ, տարան իբրև ծուխ ու աշնան տերև,
Եվ մինչև հիմա իմ մեջ լալիս է կարոտը արյան,
Եվ ոչինչ, ոչինչ հիմա չեմ կարող ես էլ հետ բերել:
- Դու ինձ ասացիր, որ կպարգևես լույսի հացն առատ,
Եվ կգումարես աստղային գինին այդ արդար հացին,
Բայց հացիս՝ որոմ, լեղի խառնեցին գինուս անարատ.
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին...

Իրիկնամուտի հոգնաբեկ քամին տվայտում է խուլ,
Եվ իմ մոխրացած գլուխը արդեն թեքվում է բարձին,
Ծայրեծայր ձգվում ու հեծկլտում է հառաչն այդ տխուր.
Ո՞ւր է հրաշքն այն, որ դու խոստացար ինձ լուսաբացին:

& Բ. Առանձնացնել այն նախադասությունները, որոնք կա՛մ չեն փոխակերպվում, կա՛մ փոխակերպելիս դժվարություններ են առաջանում: Բացատրել՝ ինչո՞ւ:

🕮 Շ-233. Կետադրել. բացատրել ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը /ինչո՞ւ մի դեպքում այն առնվում է չակերտների մեջ, մի այլ դեպքում՝ գրվում գծիկով և նոր տողից, երրորդ դեպքում՝ հեղինակային խոսքից անջատվում բութով/:

Ա. 1. Քայլում էր ուղեմոլոր Վարագը ծերունու հետևից և մտածում Միթե այս դժոխք աշխարհում դեռ մնացել են սպիտակ ծաղիկներ միթե բոլորը չէ որ կարմրել են արյունից խանձվել հրդեհներից: 2. Աշխարհահռչակ Հաֆիզի զարմանքին ու զայրույթին սահման չկար նա գրեց Թող վարդը իր թփին եթե քաղվի կմեռնի և դու չես տեսնի նրա գեղեցկությունը չես առնի նրա հոտը: Թող վարդն իր թփին: 3. Դու հոգիս ես ուզում բայց ես այն բաժանել եմ բոլորին և քեզ տալու ոչինչ չի մնացել ասաց երգիչը և նիրհեց բազմասփյուռ ծաղիկների մեջ Արագածի զմրուխտ լանջին: 4. Երբ Լանդաուին հարցրել են թե որն է առավել կարևորը սերը թե գիտությունը պատասխանել է երկուսն էլ:

Բ. Դիմելով Ջորդանո Բրունոյին՝ սխոլաստ մտածողներից մեկը բացականչում է

Նման կարգի պնդումներով Դուք ուզում եք աշխարհը տակնուվրա անել:

Քեզ թվում է թե վատ կլիներ եթե որևէ մեկը ցանկանար տակնուվրա անել արդեն իսկ գլխիվայր շուռ տված աշխարհը պատասխանում է գիտնականը:

🕮 Շ-234. & Գիտական կամ գեղարվեստական աղբյուրներից ընտրել մեջբերվող ուղղակի խոսքով նախադասություններ, որոնցում մեջբերվող նախադասությունը կառուցվածքով՝
ա/ պարզ է
բ/ միակազմ է, բառ-նախադասություն է, թերի է
գ/ բարդ համադասական է
դ/ բարդ ստորադասական է /իր տարբեր տեսակներով/
ե/ պարբերույթ է /մեկ կամ մեկից ավելի/:

🕮 Շ-235. Կարդալ՝ առանձնացնելով ուրիշի ուղղակի խոսքերն ըստ հետևյալ կաղապարների՝ ա/ «ՀԽ + ՈՒԽ». բ/ «ՈՒԽ + ՀԽ». գ/ «ՈՒԽ + ՀԽ + ՈՒԽ»:

Բլեզ Պասկալի «Խորհրդածությունները» դարձավ վիթխարի, աննախադեպ մի իրադարձություն. քաղաքակիրթ աշխարհը ապշած է...

«Խոնարհվում եմ մեծագույն հանճար Պասկալի առջև»,- անմիջապես արձագանքեց Լամերտին: Դալամբերը գրեց. «Նա բարձրացրել է ճշմարտությունը մեզնից թաքցնող վարագույրի ծայրը»: «Երբ ես կարդում եմ Պասկալ,-

շարունակում է Ստենդալը, - ինձ թվում է, որ ես նորից եմ կարդում ինձ»: Էմիլ Զոլան ևս չթաքցրեց իր հիացմունքը. «Պասկալը հանդգնում է պայքարի մեջ մտնել աստծո հետ: Նա լսեց ճշմարտության ձայնը ամեն տեսակ մոլորությունների միջից»: «Պասկալի գրքերը շատ են օգնել ինձ իմ կատակերգության բացասական կերպարները ստեղծելիս»,- խոստովանեց Մոլիերը: Վոլտերը չի կարողանում զսպել իր հիացմունքը. «Ի՜նչ կուրացուցիչ լույս է Պասկալը. նա միայնակ կանգնած է իր դարի ավերակների վրա»: Եվ պոռթկում է իր հզոր ձայնով.

-Խելագար հանճար՝ անժամանակ ծնված:

Տոլստոյը «Խորհրդածությունները» համարում էր «զարմանալի մի երևույթ», «մարգարեական»: Պասկալը կարծես հիպնոսացրել էր նրան. «Օ՜հ, Պասկալ, ի՜նչ գրող է, ի՜նչ միտք, ի՜նչ մարդ»:

Ամենասպառիչը Շեվալյեի բնորոշումն էր. «Պասկալը ֆրանսիացիների համար այն է, ինչ Պլատոնը՝ Հունաստանի համար, Դանտեն՝ Իտալիայի, Սերվանտեսը՝ Իսպանիայի, Շեքսպիրը՝ Անգլիայի»:

Բայց Պասկալը եղավ ոչ միայն ֆրանսիացիներինը. նա եղավ աշխարհինը... **/Գ. Գուրզադյան/**

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

📖 Շ-236. Լրացնել՝
ա/ Տրոհության նշանները են՝ □, □, □ ....:
բ/ Բացահայտության նշանները են՝ □, □, □ ...:
գ/ Առոգանության նշանները են՝ □, □, □

📖 Շ-237. Ա. Կետադրել. անհրաժեշտ տեղերում վերջակետ դնել. բացատրել վերջակետի գործածության դեպքերը:

Բ. Այս տեքստում պարբերությունները առանձնացված չեն. առանձնացնել նաև պարբերությունները. քանի՞ պարբերություն կա /ո՞րն է պարբերության առանձնացման նպատակը/:

Սենեկան պնդում է չափազանց թանկ բաներ են կեղեքում սեփական մարմնի գերուն նրան ով շատ է դողում կյանքի վրա և ամեն ինչ չափում է նրա չափերով մարմնի նկատմամբ ունեցած չափազանց մեծ սերը մեզ անհանգստացնում է սարսափներով, ծանրաբեռնում է հոգսերով անպատվության է մատնում ում համար մարմինը շատ թանկ է նրա համար ազնվությունը ոչ մի արժեք չունի արգելված չէ մարմնի մասին հոգ տանելը սակայն երբ այդ պահանջում են բանականությունը արժանապատվությունն ու հավատարմությունը նրան պետք է կրակի մեջ նետել հինավուրց խրատը երեք բանի անուն է տալիս որոնցից պետք է խուսափել դրանք են ատելությունը արհամարհանքը և նախանձը չչափավորված զայրույթը անխոհեմություն է ծնում չափից դուրս բարկությունը անխոհեմությամբ է ավարտվում այդ

պատճառով էլ զայրույթից պետք է խուսափել ոչ միայն հանուն զսպվածության այլև ի սեր առողջության հիմարությունը ստորացուցիչ զազրելի ատելի երևույթ է և ենթակա է շատ թաքուն կրքերի եթե ցանկանում ես բոլորի նկատմամբ իշխանություն ձեռք բերել ապա ինքդ քո նկատմամբ իշխանությունը տուր բանականությանը նա քեզ կսովորեցնի ինչ անել և ինչպես անել կատարել վարժությունները որպեսզի ձեռքերը ուժեղանան թիկունքը լայնանա կողքերը ամրանան սրանք կրթված մարդու համար հիմար և անարժան գործեր են որքան էլ քեզ հաջողվի ճարպ կուտակել և մկաններդ ամրացնել միևնույն է դու չես կարող համեմատվել բտած ցուլի ոչ քաշի և ոչ էլ ուժի հետ դրա հետ մեկտեղ մարմնի ծանրությունը մեծանալով ճնշում է հոգու վրա և նրան զրկում շարժունակությունից այդ պատճառով էլ ճնշիր մարմինդ և տեղ բաց արա հոգուդ համար

Բ. Ճի՞շտ է արդյոք այս մեծ մտածողի պնդումը. հայտնիր քո կարծիքը:

🕮 Ծ-238. Կարդալ բութի գործածության դեպքերը և յուրաքանչյուրի վերաբերյալ 2 նախադասություն կազմել:

Բութը դրվում է՝

✍ 1. բացահայտյալի վրա՝ բացահայտիչից անջատելու համար.

✍ 2. նախադաս և հետադաս տրոհված դերբայական դարձվածների և նախադասության հիմնական մասի միջև.

✍ 3. ըստ, նայած, համապատասխան, համաձայն, հակառակ, հանդերձ, չհաշված և նման կապերով ձևավորված նախադաս ու հետադաս տրոհված հիմունքի ու զիջման պարագաների և նախադասության մյուս անդամների միջև.

✍ 4. անորոշ առումով թվարկված հետադաս բազմակի ենթականերից առաջ.

✍ 5. թվարկմանը նախորդող բառի վրա, եթե թվարկվող բազմակի անդամները համարակալված են.

✍ 6. նախադասության մեջ իրար հետ չկապվող, բայց իրար հաջորդող բառերից առաջինի վրա՝ իմաստային շփոթումը կանխելու համար.

✍ 7. թվարկում արտահայտող նախ, ապա, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և նման այլ բառերի վրա.

✍ 8. մեկնական այսպես, այսպիսով, այն է, այսինքն, որոնք են, օրինակ և նման բառերի վրա.

✍ 9. նախադասության զեղչված անդամի կամ զեղչված բառի փոխարեն.

✍ 10. շատ հակիրճ, առավելապես մեկ բառով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսքից առաջ, երբ այն դրվում է առանց չակերտների.

✍ 11. կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում՝ տեղեկույթ պահանջող բառի կամ կապակցության վրա.... /Ըստ Լ. Եզեկյանի «Հայոց լեզու» բուհական դասագրքի/.

🕮 Շ-239. Կարդալ և ըստ օրինակների բացատրել չակերտների գործածության դեպքերը:

✍ 1. «Ջուրը չի թափվում պտտվող անոթից, քանի որ դրան խանգարում է պտույտը»,- երկու հազար տարի առաջ գրել է Արիստոտելը:

✍ 2. Էյնշտեյնը մեծ ջերմությամբ էր հիշում «Ոլիմպիոս ակադեմիան», ուր նրանք բարձրաձայն կարդում ու քննարկում էին Մախի և Ավենարիուսի աշխատությունները, Միլի «Տրամաբանության համակարգը», Հյումի «Մարդկային իմացության բնույթի մասին» տրակտատը, Ամպերի, Հելմհոլցի աշխատությունները, Պուանկարեի «Գիտությունը և հիպոթեզը», ինչպես նաև Սոֆոկլեսի «Անտիգոնեն», Սերվանտեսի «Դոն Կիխոտը»:

✍ 3. 1976 թ. Մարսի վրա վայրէջք կատարած «Վիկինգ - 1» և «Վիկինգ - 2» տիեզերանավ-լաբորատորիաների օգնությամբ մենք ունենք Մարսի գունավոր լուսանկարները: Ապագայում կստեղծվեն նոր գիտական ամսագրեր՝ «Մարսաբանություն», «Մարսյան ֆիզիկա», «Մարսյան հանքաբանություն», «Մարսյան բյուրեղագիտություն» և այլն:

✍ 4. Ոչ մի ճշմարիտ բանաստեղծ չի կարող իրեն պահել «արքիմեդաբար» /եթե «պաշարված է հայրենի քաղաքը»/: Բայց որքան էլ Արքիմեդը «զինվոր դառնա», Արքիմեդը չի կարող դադարել Արքիմեդ լինելուց, որովհետև նա ծնվել էր իր «էվրիկան» գոռալու համար:

✍ 5. Լինել նորարար՝ չի նշանակում ասել «ոչ»: «Ոչ» են գոռում պոռոտախոսները կամ պարզապես հովկուլները: Նորարարը «ոչ» չի գոռում, նորարարն ասում է՝ «այո, բայց»... Եվ չի ասում՝ «Օվսաննա», այլ հարցնում է՝ «հո՞ երթաս»: Եվ չի մրմնջում՝ «փառքդ շատ, Տե՜ր», այլ գոչում է՝ «Շոշափեցե՛ք զիս և տեսեք»: **/Պ. Սևակ/**

🕮 Շ-240. Ա. Կետադրել:

Բ. Բացատրել ստորակետի գործածության դեպքերը. Կա՞ն դեպքեր, որոնց համապատասխան օրինակներ չկան տեքստում:

Արդյոք մի բան հասկանում եք հայից: Որքան տարօրինակ հանելուկային արարած որքան խաբուսիկ... Անհանգիստ դեմք ունի չի թողնում նկարես: Թվով գրեթե ամենափոքրն է տառապանքով ամենամեծը: Ժամանակով ամենահինն է վիճակով ամենից անփոփոխը: Ամենից անպաստն իր երկրի դիրքն է ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր ապագան բայց և որքան հուսացող է նա: Իր կյանքում նա երկու բան չտեսավ մեկ բախտ մեկ էլ հուսահատություն:

Տեսել եք նրա բնակարանը խլուրդի ծակում: Բայց անցիր նրա երկրով... Ինչ հիասքանչ վանքեր հոյակապ աշտարակներ գողտրիկ խաչքարեր... Լցրել է իր երկիրը եկեղեցիներով բայց տարին մի անգամ չի մտնում

աղոթելու աղոթք չի անում առօրյա կյանքում բայց այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքն առ Աստված...

Տանել չի կարողանում ծես ձև աստիճան քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Քաղաքականության մեջ մի բանում է շատ հոգածու անկեղծ լինել: Այնքան անկեղծ է ու միամիտ որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է թողնում:

Խենթ ու խոնարհ է իր Սասունցի Դավթի նման և նրա պես անսպասելի ըմբոստ հարվածող: Երբ վրա է հասնում գերագույն վտանգը հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ շոյիր և կկողոպտվի բայց և առհասարակ ինքն է բարեկամ քեզ իսկ քո բարեկամությունը վանում է: Տաղանդ է իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է: Եթե գժտվի մեկի հետ ոխակալ է: Ամեն հայ մի հայ ունի որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է:

Հայի ամենամեծ առաքինությունն ես ուզում ամենաներողամիտ ցեղը աշխարհիս վրա... Մեկուսի է բարի և ազատասեր:

Ինձ թվում է թե մի շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում թաքնված և դա այն արծվի վիրավորանքն է որին ցած են բերել բարձր լեռներից: Թփրտում է ընկնում քարի աղբի մեջ կեղտոտվում թևերը կոտրում: Կերակուր ես մեկնում չի ուզում: Չի սիրում ոչ ստրկություն ոչ երջանկություն գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է բայց չունի գծուծ ատելություն որ բարձր լեռներին անծանոթ զգացում է: Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է որին զրկել են իր կյանքի միակ պայմանից:

Եթե դուք սիրում եք կյանքը ասում է նա իր նեղիչներին ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը Ազատությունը: **/Ըստ Դ. Դեմիրճյանի/**

ՏԵՔՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

❒ Տ-ՈՃ -1. Ըստ Հր. Աճառյանի՝ «Լեզուն ունենում է նաև ընդհանուր հատկություններ, որոնք սեփական են հենց լեզվին և ըստ այսմ պարտադիր կերպով երևան են գալիս նույն լեզվով խոսող բոլոր անհատների մեջ: Այդ հատկությունները կոչվում են ընդհանուր հատկություններ» /ԼՔՀԼ. Ներածություն, էջ 251/: /+/ նշանով առանձնացնել լեզվի ընդհանուր հատկությունները:

1. արտահայտման միակերպություն
2. պարզունակություն
3. անավարտվածություն
4. բառապաշարի աղքատություն
5. գեղեցկություն
6. հարստություն /բառամթերքի/
7. առատություն
8. ավարտվածություն
9. անպատկերավորություն
10. խրթնաբանություն
11. ճոխություն /ձևաշատություն/
12. համառոտություն
13. երկարաբանություն
14. կանոնավորություն
15. հստակություն
16. ավելորդաբանություն
17. անորոշություն
18. անճշտություն
19. անտրամաբանականություն
20. ամբողջականություն
21. ձգձգվածություն
22. սեղմություն

Տ-ՈՃ.-2.

Կարդալ Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության «Ներածությունից» քաղված երկաբարան խոսակցության օրինակները /էջ 307-308/ և եզրակացնել, թե տեքստին բնորոշ ո՞ր հատկանիշները պահպանված չեն:

Խմբագրել և վերնագրել:

Ա. « Խոսակցություն ասածդ երկու կողմից պետք է լինի. մեկը երբ մեկին մի բան է ասում, նա էլ սրա պատասխանը պետք է տա, երբ նա է սրան բան ասում, սա նրա պատասխանը պետք է տա. օրինակ, եթե ես քեզ մի բան ասեմ, դու իմ պատասխանը պետք է տաս, եթե դու ինձ մի բան ասես, ես պետք է քեզ պատասխան տամ:

Եթե մեկը մեկին մի բան ասի, և նա նրա պատասխանը չտա, կամ թե սա նրան մի բան ասի և նա սրա պատասխանը չտա, օրինակ, եթե ես քեզ մի բան ասեմ, և դու նրա պատասխանը չտաս, կամ եթե դու ինձ մի բան ասես, և ես քեզ պատասխան չտամ, այն խոսակցությունն առաջ չի գնա»:

Բ. Մի պառավ կին մի պառավ կնոջ ասաց. «Է՛յ, պառավ կին, ես ասում եմ պառավ կին, որովհետև պառավ կին ես և ոչ թե երիտասարդ կին. եթե երիտասարդ կին լինեիր, պառավ կին չէի ասի, այլ երիտասարդ կին, բայց որովհետև երիտասարդ կին չես, այլ պառավ կին, ես էլ ասում եմ պառավ կին:

Նմանապես ես էլ պառավ կին եմ, ուստի դու էլ ինձ պիտի ասես պառավ կին և ոչ թե երիտասարդ կին. եթե երիտասարդ կին լինեի, պառավ կին չէի ասի, այլ երիտասարդ կին. բայց որովհետև երիտասարդ կին չեմ, այլ պառավ կին, դու էլ ասում ես պառավ կին:

Երկուսս էլ պառավ կին ենք, ուստի երկուսս էլ իրար պիտի ասենք պառավ կին և ոչ թե երիտասարդ կին. եթե երկուսս էլ երիտասարդ կին լինեինք, իհարկե, պառավ կին չպիտի ասեինք, այլ երիտասարդ կին, բայց որովհետև երկուսս էլ երիտասարդ կին չենք, այլ պառավ կին, ուստի երկուսս էլ իրար պիտի ասենք պառավ կին...

Եվ այսպես ամեն պառավ կին, եթե պառավ է, պառավ ենք ասում, և եթե երիտասարդ է, երիտասարդ ենք ասում, անկարելի է պառավ կին ասենք, եթե երիտասարդ կին է, և երիտասարդ ասենք, եթե պառավ կին է:

ՀԻՇԻՐ՝ ա/ «Ոճաբանությունը գիտություն է լեզվական միջոցների նպատակահարմար գործածության մասին» /Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու / ինքներորդ դասարան/, էջ 25/ և բ/ «Ոճաբանությունը որպես լեզվական գիտաճյուղ զբաղվում է լեզվական յուրաքանչյուր միավորի դրսևորման եղանակներով ու ձևերով, նրա արտահայտչական առանձնահատկություններով» /Լ. Եզեկյան, Ոճագիտություն, 2003, էջ 7/:

ՄՏԱԾԻՐ՝

Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Տասնչորսերորդը ի թիվս այլ քմահաճույքների սիրում էր նաև բանաստեղծություններ գրել: Մի անգամ նա իր մոտ է

կանչում հայտնի բանաստեղծ և գրականության տեսաբան Բուալոյին և կարդալով հերթական բանաստեղծությունը՝ պահանջում է կարծիք հայտնել: Բանաստեղծությունը շատ թույլ էր, բայց հզոր արքային զայրացնել չէր կարելի: Իսկ Բուալոն էլ չէր ուզում ստել: Մի քանի վայրկյան հետո նա պատասխանեց և՛ ճշմարտությունն ասելով, և՛ արքային չվիրավորելով:

①◆[1] Ի՞նչ ասաց Բուալոն... /Պատասխանը ներքևում տրվածներից մեկն է/:

ա/ -Աստված իմ, ինչպիսի անհեթեթություն...

բ/ -Ես բանաստեղծություններ այլևս չեմ գրելու... ես գրաքննադատ չեմ...

գ/ -Ի՛մ արքա, հրաշալի է, հոյակապ է...

դ/ -Լավ էիք կարդում, տե՛ր արքա, բայց ես չկարողացա ընկալել Ձեր պայծառափայլ խոսքը...

ե/ -Ո՛վ արքա, Դուք հանճար եք հանճարների մեջ... Բոլոր ժամանակների բոլոր բանաստեղծները պիտի գլուխ խոնարհեն Ձեր առջև...

զ/ -Ես՝ հոչակավոր բանաստեղծս, ոչնչանում եմ Ձեր գրչի փայլից...

է/ -Ապուշությու՜ն, բացարձակ ապուշություն...

ը/-Տե՛ր իմ արքա, Դուք հզոր եք, հզոր՝ հզորագույնների մեջ, բայց ձեր այսօրվա կարդացած բանաստեղծությունը Ձեզ նման հզոր չէ, ուժեղ չէ....

թ/ -Ո՛վ արքա, Դուք այս անգամ կամեցել եք վատ ոտանավոր գրել, և դա լիովին հաջողվել է Ձեզ...

②◆ Ինչպիսի՞ արտահայտություններ կարելի է օգտագործել՝

ա/ Անհամ ճաշից հրաժարվելու համար՝ հակառակ նրան, ով դեմքը ծամածռելով ափսեն մի կողմ է հրում և տհաճությամբ ասում.- «Շատ անհամ է..»:

բ/ Տգեղ ու անճաշակ հագնված ինչ - որ մեկի հետ խոսելիս՝ հակառակ նրան, ով զզվանքով գլուխը շուռ է տալիս:

գ/ Տհաճ ու զազրախոս խոսակցից ազատվելու համար՝ հակառակ նրան, ով զայրույթից պոռթկում է. «Ի՞նչ ես ապուշ-ապուշ դուրս տալիս, ես ժամանակ չունեմ»:

③◆ Բելինսկին, կարդալով Պուշկինի «Գիշերային զեփյուռը», գրել է. «Ի՞նչ է սա. պոեզիա՞, նկարչությո՞ւն, երաժշտությո՞ւն. և՛ մեկը, և՛ մյուսը, և՛ երրորդը՝ միացած իրար, ուր նկարը խոսում է հնչյուններով, հնչյունները կազմում են նկար, իսկ բառերը փայլում են գույներով»: Հայ քննարերգությունից ընտրել մի այնպիսի բանաստեղծություն, որը կհամապատասխանի այս բնութագրմանը:

④◆ Մ. Սարյանին «գույների կախարդ» են անվանում, Այվազովսկուն՝ «ծովերի արքա», Բեթհովենին՝ «հնչյունների արքա»: Բազմադարյան հայ գրականության մեջ ո՞ր բանաստեղծին կամ արձակագրին կարելի է անվանել «խոսքի արքա» կամ «բառերի տիրակալ»:

⑤◆ Շրջասություններից մեկը դարձնել վերնագիր և տեքստ կազմել:

---

[1] **/◆/ այս նշանը ունեցողները հնչյունական, բառագիտական-քերականական, ոճական վարժություններ են:**

Տ-ՈՇ.- 3.
Կարդալ տեքստը:
Պահպանվա՞ծ են տեքստին բնորոշ հատկանիշները:
Բնութագրել այն՝ ըստ՝
ա/ գործածության ոլորտի
բ/ խնդիրների,
գ/ լեզվաոճական յուրահատկությունների:
Որոշել թեման, հիմնական միտքը. ո՞ւմ է հասցեագրված:
Առանձնացնել հիմնական մասերը և վերնագրել յուրաքանչյուրը:
Դուրս գրել հիմնաբառերը:
Ընդգծել հենակետային նախադասությունը /նախադասությունները/:
Նշել տվյալ ոճին ներկայացվող պահանջները:

Շվեյցարական Ալպերում ճանապարհորդներին ծաղիկները չքաղելու կոչ են անում: Այդ կոչերն արված են ազգային հոգեբանությունը հաշվի առնելով: Ֆրանսերեն մակագրությունն ասում է. «Ծաղիկներով հիացեք, բայց մի՛ սպանեք նրանց»: Կոչն անգլերեն հնչում է որպես քաղաքավարի խնդրանք. «Խնդրում ենք՝ ծաղիկները մի՛ քաղեք»: Գերմաներեն արգելքը կտրուկ է. «Մի՛ քաղեք ծաղիկները»: Եթե ռուսերեն մակագրություն լիներ, հավանաբար այսպես կհնչեր. «Չի՛ կարելի քաղել ծաղիկները»: **Եթե հայերը գրեին, ապա....**

Աշխարհահռչակ Հաֆիզը զարմանքով ու զայրույթով գրել է. «Թող վարդն իր թփին. եթե քաղվի, կմեռնի, և դու չես տեսնի նրա գեղեցկությունը, չես առնի նրա հոտը: Թող վարդն իր թփին»:

Սաադիի հայրենիքում այն երևի այսպես է հնչել. «Թող վարդն իր թփին»...

Մեծ լեզվաբանի՝ Հր. Աճառյանի համար ծաղիկը կենդանի արարած է. ...Ծաղիկը... չպետք է տրորել... տրորվելիս նա լուռ արտասվում է՝ երբեմն ցույց տալով իր արտասուքի շիթերը»:

①◆ Եթե հայերը գրեն, ապա... թերի նախադասությունը լրացնել համանիշ նախադասություններով և բացատրել յուրաքանչյուրի հուզաարտահայտչական յուրահատկությունները, նաև ոճական-կիրառական տարբերությունները:

②◆ Մեր մայրաքաղաքում նմանատիպ ի՞նչ մակագրությունների եք հանդիպում. այս առումով բացատրել մեր ազգային՝ հայկական հոգեբանությունը:

③◆ Գրի՛ առնել այլևայլ առարկաների, իրողությունների վերաբերող կոչեր, խնդրանք-մակագրություններ և ներկայացնել շարահյուսական համանիշների շարքերով:

---

[1] **Ծանոթություն**

Տ-ՈՇ.-.

Այսուհետև այս նշանն ունեցող հաջորդող վարժություններում կատարել նույն հանձնարարականները:

Տ-ՈՃ.- 4.

Հպարտանում եմ ազգիս կենսունակության համար, որը, չնայած քաղաքական կոտորակման, կարողացել էր պահպանել իր բարոյական ամբողջությունը իր մասնիկներում անգամ, այն էլ՝ աշխարհի մի այնպիսի վայրում և այնպիսի մի ժամանակ, ուր քիչ թե շատ տանելի բարվոք կենցաղը պայմանավորված էր ամեն ժամ սայթաքումների դիմադրելու առաքինությամբ...

Բա՛ծր, բա՛ծր պահիր քո սիրտը, իմ արի՛ ու բարի՛ ժողովուրդ, և լսի՛ր իմ պաղատագին խորհուրդը. մի անդրդվելի համոզումով, քո կամքի զորությամբ ջնջի՛ր նախ քո սեփական հոգու քարտեզից քեզ ցանուցրիվ անող բոլոր անպտուղ սահմանները, որ կարողանաս հավիտյան պահել քո ամբողջությունը՝ հակառակ բոլոր սահմանների: Սիրի՛ր քո լեզուն, նրա մշակողներին, քո հեռավոր զավակներին մի՛ անջատիր մերձավորներից. քո վաղեմի զինանշանի արծի՛վը հիշիր, նրա նման միշտ հեռուների՛ն նայիր, որպեսզի տեսնես մոտերը: Սովորի՛ր սիրել ինքդ քեզ, որ կարողանաս սիրել մարդուն և սիրվես նրանից:

Սիրի՛ր այն փոքրիկ պարտեզը, որ պապերիդ ժառանգությունն է. նորը շինելիս հինը մի՛ քանդիր, քանզի անթիվ են գերեզմանները քո հողի տակ, ոտդ զգու՛յշ դիր, որ չկոխոտես սուրբ նշխարները քնած պապերիդ:

/Վահրամ Փափազյան/

①◆ Ընդգծված բառերը ենթարկել հնչյունաբանական վերլուծության:

②◆ Գտնել ածանցավոր բառերը և բաժանել ձևույթների:

③◆ Դուրս գրել միավանկ և մեկուկեսվանկանի բառերը:

④◆ Բացատրել սփյուռք, նշխար, բիբլիական լեռ, բիբլիական երկիր, արամյան զավակներ բառերի և շրջասությունների իմաստը:

⑤◆ Գրել նշխար բառի հոմանիշները:

⑥◆ Դուրս գրել կապերն ու շաղկապները:

⑦◆ Հրամայական նախադասություններում ընդգծել ստորոգյալները՝ բացատրելով արտահայտության ձևը:

⑧◆ Շարահյուսորեն վերլուծել վերջին նախադասությունը և կազմել գծապատկերը:

⑨◆ ԲԱՑԱՏՐԵԼ՝ Թեքեյանի «Ա՛զգ իմ, ՍՓՅՈՒՌՔ դարձար»՝ ցավով ու դառնությամբ լի բացականչության իմաստը: Սփյուռքի երիտասարդ բանաստեղծներից մեկը գրել է. «Իմ երկիրս տխուր է, քանի որ ես այդտեղ չեմ...»: Գրիր՝ «Ես այստեղ եմ, բայց երկիրս տխուր է»:

⑩◆ ԳՐԵԼ այն երգը, որի մասին խոսվում է. «Զարմանալի ժողովուրդ են այս հայերը: Հավաքվում են, ուտում, խմում, քեֆ անում, բայց վերջում հայտնի մի երգ ունեն ինչ-որ սև թռչունի մասին, երգում են էդ երգը ու խմբով լաց են լինում: Իսկ հրաժեշտ տալիս ասում են իրար. «Ի՞նչ հրաշալի երեկո անցկացրինք»:

①①◆ Թվել երկրում բնակվող թռչունների անուններ և փորձիր ներկայացնել, թե նրանցից ո՞րն ի՞նչ է խորհրդանշում. ժողովրդական ի՞նչ հավատալիքներ ու սնահավատություններ են կապված նրանց հետ:

Φ②◆ Ըստ Վ. Պետրոսյանի՝ անգլիացի վիպասան Ջ. Օլդրիջը գրել է. «Ես եղել եմ Հայաստանում ու միշտ մտածել եմ, ի՞նչ կանեի, եթե ես հայ լինեի, ինչքանո՞վ կապրեի իմ ազգի հոգսերը, ինչքանո՞վ՝ մարդկության, ի՞նչ կանեի, որ միշտ մնար իմ լեզուն, դավանանքը, ինչպե՞ս կվերաբերվեի աշխարհին, որ անտարբեր եղավ մեր ազգային ողբերգությանը... Հազար ու մի այսպիսի հարցեր, իսկ պատասխաններ չկան... Դժվար է գտնել: Համենայն դեպս, եթե ես հայ լինեի, ինձ երջանիկ չէի համարի մինչև այն պահը, քանի դեռ իմ ազգի թափառական քարավանները չեն հավաքվել իրենց պապենական հողի վրա»: **ԴՈՒ ՀԱՅ ԵՍ և ՈՐ ՊԱՀԻՆ ՔԵԶ ԵՐՋԱՆԻԿ ԿՀԱՄԱՐԵՍ..., ԵՐՋԱՆԻԿ ՀԱՅ ԿՀԱՄԱՐԵՍ...**

Φ③◆ ՄՏԱԾԻՐ այս մասին՝ «Ես ձեզ չե՛մ ասում՝ վերադարձե՛ք... չեմ ասում նաև՝ մի՛ գնացեք... ես ասում եմ՝ մտածեք զավակների՛ մասին, որոնք օտարության մեջ մի օր ձեր երեսին կշպրտեն միամիտ ու ողբերգական մի հարց. – Որտե՞ղ է մեր տունը» /Վ. Պետրոսյան/: Մտածիր ու շարադրիր քո մտածմունքները՝ դրանք միահյուսելով նաև «Ինչպիսի՞ն է մեր տունը...» և «Ինչպիսի՞ն կուզենամ լինի մեր տունը...» հարցերին:

Բ. - Ո՞րն է, բարո, մեր հայրենիք.

-Էն, որ ունի բարձր երկինք,
Էն, որ ունի ամպ ու արև՝
Յուր թագարժան գլխու վերև.
Էն, որ ունի լեռն Արագած՝
Հայ թագուհու զմրուխտ հագած,
Որ կսպասե իր արքային,
Արքան՝ գերի այլոց գահին:
Էն, որ տեսքով իր Սևանի,
Մազերն արձակ ու գեղանի
Լացող հարսի կնմանի,
Որ կսպասե՛ ողջ ազգովին
Իր մեծաքույր Վանա ծովին:
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագավոր Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս, սիրտը մրմուռ,
Գլուխը վեր, դրախտի դուռ:
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,
Որ ավերակ, բայց դեռ դարեր
Լուռ կաղոթեն երկինքն ի վեր,
Էն, որ ունի Արազ, Տղմուտ,
Եվ ափերը մամոռտ ու մութ
Գերեզմաններն են պապերուդ...
Մատուռներն են հայոց ոգուդ,
Էն, որ Ղազբեկն ու Արագած
Արտերու մեջ՝ ախպեր կանգնած՝
Ձեռ կզարնեն գինով թասին
Ու կձենեն մեր Մասիսին,
Թե՝ «Հե՛յ, բարո, բավ չէ մենակ
Պանդուխտ մնաս ամպերու տակ...»:

/Հ. Շիրազ/

Φ④◆ Բանաստեղծական տողեր գրել՝ շարունակելով լրացնել «Էն, որ ունի....» կառույցը:

Φ⑤◆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Ավ. Իսահակյանի խոսքը. «Հայաստա՛ն աշխարհ, Դու աղամանդե լեռների՝ այդ հավերժական սյուների վրա բարձրացած երկնասույզ աշխարհ, փիրուզե աշխարհ, դու աշխարհների մեջ անպարտելի կանգնած առաքինի նահապետ..., դու լույսի՛, ազնիվի՛ և մաքրությա՛ն ջրաբաշխ..., դու ....»: **Հայաստան աշխարհ, Դու...**

Տ-ՈՃ.-5.

Ա. Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ Էջմիածնում նրան ներկայացնում են Խրիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին.

- Ասա, որ ես թանկագին հնություն մը ունիմ, քանի՞ տարվան կենթադրե:
- Հինգերորդ դարի՞, - փորձում է զուշակել հնագետը:
- Անկից ալ հին,- հուշում է կաթողիկոսը:
- Քրիստոսի ժամանակվա՞:
- Անկից ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգևորության:

- Տեսնե՛մ, Վեհափա՛ռ, ի՞նչն է այդ թանկագին հնությունը:

Իմ ազգս է, կշտամբող շեշտով պատասխանում է Հայրիկը,- Քրիստոսեն ալ հին, Մովսեսեն ալ: Ան իմ թշվառ ազգն է: Անտեսած այս թանկագին հնությունը՝ հին քար մը կամ առարկա մը փնտռելու կելլիք:

/Խ. Բաղիկյան/

①◆ Ընդգծված նախադասությունների միտքն արտահայտել գրական արևելահայերենով:

②◆ Կարդալ Պ. Սևակի «Մենք քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով հնչերանգային առանձնահատկություններին:

③◆ Անգիր սովորել նրա հետևյալ տողերը՝

Զարմանքով եմ ես միշտ նայում քո անցյալին,
Քո անցյալին՝ և՛ տանջալից, և՛ պանծալից:
Ինչպե՞ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից
Նեկտար քաղել, մեղր քամել դառնությունից՝
Պանդխտության քո կսկիծը դարձրել «Կռունկ»
Եվ «Հորովել» դարձրել վերքդ, ցավդ խորունկ:
Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպե՞ս ելար,
Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար:

④◆ Սևակյան «եռադողանջ զանգի ասմունքը»՝ «եռաբանյա ասքի դողանջը»՝ «եռամատնյա խաչակնքումի շնչող ստվերը»՝

- ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈ՛Ց...
  ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵ՛Ր...
  ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱ՛Ց...,

բնաբան դարձնելով՝ շարադրիր քո խոհերը...

Տ-ՈՇ.-6.

Մարդուն ապրելու համար տուն է հարկավոր. հայի համար այդ տունը միայն մի հասցե ունի... Նա ապրել է իր համար, երևի ունեցել է և՛ տուն, և՛ փող: Թվացել է, որ կարելի է այդպես էլ ապրել, ու հանկարծ, չգիտես երբ, զարթնել է հայրենիքը: Օտարության մեջ ապրող մարդու համար հայրենիքի սերը թաքնված հիվանդության է նման: Նա նման է գուցե հոդացավի, որ արևոտ օրերին իրեն զգացնել չի տալիս, բայց բավական է անձրևի՝ կնվա: Օտարության մեջ ապրողի համար հայրենիքի սերը գուցե նման է մարդու կտրած ձեռքին, որի չեղած մատները շարունակում են «ապրել» մինչև վերջ: Մարդուն անընդհատ թվում է, թե մատները շարժվում են, կծկվում, բացվում: Հայրենիքը ցավող ատամ չէ, որ հանես կամ փոխարինես ոսկե ատամով: Եթե մարդը, գոնե իր ներսում, շարունակում է մարդ մնալ, հայրենիքը շարունակում է ապրել նրա մեջ՝ իբրև սրտի մի անկյունը քաշված սրբություն, իբրև գաղտնի տենդ, որ մի օր իրեն զգացնել կտա: Չէ՞ որ Հայրենիքը հենց այն է, որ չի տեղավորվում աշխարհի ամենամեծ քարտեզի վրա, բայց մարդու բռնցքաչափ սրտում տեղավորվում է: /Վ. Պետրոսյան/

①◆ Դուրս գրել բարդ բաղաձայններ ունեցող բառերը:

②◆ Ընդգծել ներքին հոլովման պատկանող գոյականները:

③◆ Կազմել անկանոն և պակասավոր բայերի հրամայական եղանակի եզակիի ձևերը:

④◆ Գտնել միակազմ նախադասությունները:

⑤◆ Հաշվի առնելով, որ հրապարակախոսական ոճում գործում են և՛ տեղեկատվությունը, և՛ քարոզչությունը, և՛ գնահատողական վերաբերմունքը, տեքստում առանձնացնել այս բաղադրամասերը:

⑥◆ Հոդված գրել «Հրապարակախոսական և գեղարվեստական ոճերի նմանությունների և տարբերությունների մասին» և կարդալ լսարանում:

⑦◆ Մամուլի լեզուն ոճական ի՞նչ առանձնահատկություններ ունի: Բանավեճային քննարկման թեմա դարձնել «Արդի հայ մամուլը և նրա լեզուն»:

⑧◆ «Աշխարհը տագնապի մեջ է» վերնագրով հրապարակախոսական ելույթ պատրաստել:

⑨ ◆ Մուշեղ Իշխանի «Հայ մամիկին աղոթքը» կարդալուց հետո փորձել բանաստեղծորեն արտահայտել, թե 21-րդ դարասկզբի «հայ մամիկի»՝ հայ մոր շուրթերից ի՞նչ աղոթքատողեր կհնչեն....

Ալ կը բավե՛, Տե՛ր աստված, մեր տուն ու տեղ դարձուր մեզ,
Թշնամիս իսկ մեզ նման ուրիշի դուռ չձգես...
Ո՛չ հանգիստ կա, ո՛չ ալ քուն ցուրտ հարկին տակ օտարին,
Ա՜խ, յոթն օրեն ավելի հյուր չպահես ո՛չ ոքին...
Տու՛ր որ, Աստված, ամեն սիրտ վառի իր սուրբ օջախեն,
Որ չմարի մոմի պես կյանքի դաժան հովուն դեմ:
Ծնող մանուկն առջի հեղ տեսնե տնակն հայրական,
Եվ ծերունին իր տան մեջ փակե՛ աչքերն հավիտյան:

Տ-ՈՃ.-7.

Վաղը ուշ կլինի...

Երբեք չեմ մտածել, թե ինչու եմ սիրել ու շարունակում եմ սիրել ծնողներիս: Որդիական սերը տարբեր է լինում: Ես ծնողներիս ավելի սրտանց սիրեցի, երբ նրանք արդեն հեռացել էին աշխարհից:

Հայրս ինքն իրեն առողջ էր ցույց տալիս և, ուռած ոտքերը թաքցնելով կարպետի տակ, թույլ չէր տալիս բժշկի և դեղերի համար «ավելորդ» ծախս անել: Ինձ համար, ավելի ճիշտ իմ ուսման համար, նա զրկվեց ամեն ինչից: Մի՞թե առանց ուսումի չէի կարող մնալ: Առանց ուսումի կարող էինք ապրել ե՛ս էլ, հա՛յրս էլ և բոլո՛րն էլ: Ուղղակի կույր պետք էր լինել չտեսնելու համար հորս խոր հուզմունքը, երբ նա բաժանվում էր այգուց ու միակ եզից... Այո՛, այդ ամենը անում էր ինձ համար, իսկ ես նույնիսկ «շնորհակալ եմ» չասացի: Ու մինչև օրս տխուր զգացմունքներս դեմ են առել կոկորդիս, որ հայրս այլևս երբեք չպիտի կարողանա լսել այդ:

Ավարտեցի միջնակարգ դպրոցը, սկսեցի հասկանալ հորս զոհողությունը: Սրտումս երախտագիտության զգացում արթնացավ: Որոշեցի առաջին իսկ վաստակովս հորս համար խնձոր գնել: Այսօր կգնեմ, վաղը կգնեմ... Մի օրից մյուսը հետաձգեցի, մինչև որ գարնանային մի օր իմացա, որ հայրս գիշերը մահացել է: Այդ չգնված խնձորներն էլ հորս մահից քսան տարի հետո դեմ են առել կոկորդիս և տանջում են ինձ:

...Սիրում ու հարգում էի մորս, բայց մի օր նրան չդիմեցի «սիրելի մայրիկ» կամ «մայրիկ ջան» բառերով: Այս խոսքերն էլ կոկորդումս մնացին... Եվ ես ցավում եմ, որ այլևս չեմ կարող ասել այդ խոսքերը: Այսօր մտածում եմ, թե ինչ մեծ հաճույքով և սիրով կարող էի արտասանել այդ բառերը, բայց մայրս չկա այլևս:

Ահա թե ինչու բոլոր նրանց, ովքեր դեռ հայրեր ու մայրեր ունեն, ուզում եմ ասել.

.....

Վաղը գուցե արդեն ուշ կլինի, և երախտագիտության ու սիրո խոսքերը, որոնք չեք ասել, պիտի ծանրանան ձեր սրտերին, և աշխարհում այլևս ոչ մի բան չի կարող սփոփել ձեզ:

Եթե ցանկանում եք խնձոր գնել ձեր հոր կամ մոր համար, մի վայրկյան իսկ մի հետաձգեք: Այսօր ես կարող եմ բեռներով խնձոր գնել, բայց ու՞մ տամ:

Եթե ցանկանում եք շնորհակալություն հայտնել, այդ բանն անհապաղ արեք, որովհետև հաջորդ վայրկյանը կարող է արդեն ձեզ և ձեր ծնողներին հավերժ զրկել այդ հաճույքից: /Ըստ Ն. Հայթովի/

①◆ Լրացնել ընդգծված նախադասության միտքը:

②◆ Է. Աղայանի բառարանից դուրս գրել հայր և մայր սկզբնաբաղադրիչներով բառեր և բացատրել նրանց կազմությունը:

③◆ Ի՞նչը կարող է մայրական կամ մայրենի լինել, ինչը՝ հայրենի կամ հայրական:
④◆ Դուրս գրել 5 դիմավոր բայ և նշել ձևաբանական հատկանիշները:
⑤◆ Ընդգծել եռաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները և որոշել ստորադաս եզրերի բնույթը:
⑥◆ Կարդալ հետևյալ հենաբառերը. ո՞ր բանաստեղծի՝ մորը նվիրված ո՞ր ստեղծագործության մասին է խոսքը:

1. Պանդուխտ, ազիզ, տխուր-տրտում,
նխշուն, մարմանդ, հավք ու հովեր,
պապակ-սիրտ, անխոս, անուշ, երազ,
լինել, երնեկ, թռչել...

2. Անգին, խորշոմներ,
թթենի, ստվեր,
անուշ, որդի, հեծեծել,
օրրել, դառնաղի...

3. Ձյուն, կուտակվել, փետուր, հրեշտակ,
մարմարվել, շիրմաքար, գերեզման, մայր,
Աստված, ցված, մեղմաձյուն, փաթիլվել...

4. Հույս, մատուռ, օրորոց, ամրոց, մայր,
արծվաբույն, ծառա, արքա, աղբյուր,
ճրագ, արեգակ, հաց, աստված, տուն...

Բ. Կարդալ և խորհել Աուերբախի տողերի շուրջը. «Մարդ ինչ էլ անի, նրա գործերը, նույնիսկ ամենաաչքի ընկնողները, ոչինչ չարժեն, եթե նա չի կատարել ծնողների հանդեպ իր պարտքը»:

Այս տարի
Սեղանի շուրջ Կաղանդի
Բոլորվեցանք ութ հոգի-
Ես ու կինս լռակյաց,
Երկու բաժակ կիսով լի
Եվ չորս պատեր մերկացած՝
Ութը անձ...
Ժամերն հետին հին տարվան
Դանդաղորեն, ծանրորեն
Դարձան դիակ անկենդան,
Բայց Նոր Տարին տիրական
Ներս չմտավ մեր սեմեն:
Կաղանդ պապան խելացի
Ինչո՞ւ մեզի գար այցի.
Երկու պանդուխտ ալեհեր
Մենավորիկ երկու ծեր...
Կինս ըսավ. «Խմենք, մա՛րդ,
Խմենք կենացը նորեն
Մեր զավակին ու թոռան»:
Եվ լռության մեջ հանկարծ
Ավետաբեր հեռաձայն՝
«Հըլո՜ պապա, հըլո՜ մամ,
Շնորհավոր Նոր Տարի,
Հուսամ, որ լավ անցուցիք
Ձեր երեկոն Կաղանդի...»:
Այո՛, մենք հոս այս տարի,
Սեղանի շուրջ Կաղանդի
Բոլորվեցանք ութ հոգի -
Կինս ու ես լռակյաց,
Երկու բաժակ կիսով լի
Եվ չորս պատեր մերկացած՝
Ութը անձ: **/Մուշեղ Իշխան/**

Ծ S-ՈՃ.-8.

Ա. Եփրատն անցնելիս Ալեքսանդր Մակեդոնացին պաշարեց հայկական մի բերդ: Հայերն անսասան էին, բերդը՝ անառիկ: Պաշարման չորրորդ օրը մակեդոնացիները շատ զարմացան. բերդի աշտարակից հայերը կախեցին մի մեծ լավաշ:

Բերդի պաշտպանները երևի անձնատուր են լինում,- զեկուցեցին Մակեդոնացուն,- նրանք լավաշ են կախել աշտարակից:

Ալեքսանդր Մակեդոնացին խելացի մարդ էր. նա անմիջապես հասկացավ հայերի մտադրությունը:

- Վերացրե՛ք պաշարումը, և շարժվենք առաջ, - կարգադրեց նա, - հայերը հացապաշտ ժողովուրդ են, իսկ հացը խաղաղության խորհրդանիշն է: Նրանք հաշտություն են ուզում և լավաշով հասկացնում արյան ու կռվի անհեթեթությունը:

Ասում են՝ հենց մի փշուր հաց է գետին ընկնում, երկնքից մեզ համար անտեսանելի հրեշտակ է իջնում և կանգնում հացի փշուրի վրա, որ այն ոտնատակ չինի, չպոծվի: Մարդիկ պետք է հրեշտակներին օգնության շտապեն. հացը գետնից վերցնեն ու մի բարձր տեղ դնեն:

Ասում են նաև, որ երբ մեկը հացի մնացորդը դեն է շպրտում կամ խառնում աղբին, զայրացած աստվածուհու ձեռքից գրտնակն անմիջապես դուրս է պրծնում և սրընթաց հարվածում հացն անարգողի ճակատին. հացը գետնին գցելը մեղք է, քանի որ այն թոնիր է մտել, մաքրվել, **սրբացել:**

Պատմում են, որ երբ Չարենցի մասին մի գրաքննադատ կծու խոսքեր է ասել, նա որոշել է հենց Աբովյան փողոցում առավել դառը խոսքերով պատասխան տալ: Բայց երբ հայտնվել է գրաքննադատը՝ ձեռքին մի մատնաքաշ, Չարենցի լեզուն ասես կապ է ընկել: Իր վրա սևեռված հարցական հայացքներին Չարենցը պատասխանել է.

-Հացը խանգարեց: Չեմ կարող թեկուզ մի չար խոսք ասել այն մարդուն, որի ձեռքին հաց կա. ԵՍ ԱՄԱՉՈՒՄ ԵՄ ՀԱՑԻՑ:

①◆ Ի՞նչ է խորհրդանշում հացը՝ լավաշ-հացը:

②◆ Ընդգծվածները բառակազմական վերլուծության ենթարկել. ընտրել նրանցից երեքը և հնչյունական վերլուծություն կատարել:

③◆ Դուրս գրել ոչ նյութական խոսքի մասերին պատկանող բառերը և որոշել նրանց կազմությունը:

④◆ Ընդգծել ստորոգյալները և բացատրել նրանց ձևակազմությունը: Առանձնացնել այն ստորոգյալները, որոնք արտահայտված են դարձվածքով:

⑤◆ Բացատրել բութի գործածության դեպքերը:

⑥◆ Գտնել և շարահյուսորեն վերլուծել այն նախադասությունը, որն ունի հետևյալ գծապատկերը՝



Ⓩ◆ «Ասում են...»-ով սկսվող նախադասությունը ենթարկել շարահյուսական վերլուծության և կազմել գծապատկերը:

Ⓗ◆ Ո՞ր նախադասությունը կարելի է որպես վերնագիր օգտագործել:

Բ. Հաջորդաբար ներկայացնել լավաշի ստեղծման ընթացքը /խոսքը վերաբերում է այս՝ ⇓ նշանով սկսվող նախադասություններին/:

Մեր լավաշ հացը մեր պատմությունն է՝ կրակի բոցում թրծված ու հառնած, մեր լավաշ հացը՝ մեր Հաց-հավատը, մեր սեղանից ու մեզնից անբաժան է:
Իսկ գիտե՞ք՝ այնքան էլ դժվար չէ նրբաթերթ լավաշներ թխել...
⇓ 1. Բոնգրաչափ գնդիկներ են անում:
⇓ 2. Տաշտի մեջ հունցում-շաղախում են խմորը:
⇓ 3. Վերցնում են ալյուրը, ավելացնում մի քիչ աղ, մի քիչ ջուր ու թթխմոր:
⇓ 4. Թոնիր-սիրո կրակի բոցում առաջին լավաշը, ասում են, միշտ «կուտ է գնում»:
⇓ 5. Ամենից առաջ թթխմորն են պատրաստում:
⇓ 6. Թողնում են, որ հանգստանա՜ն-հասունանա՜ն...
⇓ 7. Երբեմն այնքա՜ն են սպասում, որ անհամբեր խմորը, լավաշ դառնալու պոռթկումով արբեցած, տաշտի եզրերով դեպի թոնիր է շտապում:
⇓ 8. Հացահատիկի աստվածուհի Աշորայի ձեռնափայտով՝ գրտնակով, խմորը բացում են, դարձնում լավաշաձև:
⇓ 9. Թոնրի ջերմությունից լավաշանում է խմորը, հայանու՜մ, սրբանու՜մ...
⇓ 10. Վերջապես թոնիրն ըմբոշխնում է խմոր-լավաշի համբույրը:
⇓ 11. Հետո երկրորդ, երրորդ, չորրորդ հարյուրերորդ, հազարերորդ... ծաղիկ-լավաշները շարվում են թոնրի շուրջբոլորն ու սպասում...
⇓ 12. Վառում են թոնիրը, և նրա այրող շուրթերն սպասում են խմոր-լավաշի համբույրին:

Ⓣ◆ Ուրիշ ի՞նչ հայ-խորհրդանիշներ գիտեք:

Ⓘ◆ Հացի մասին ուրիշ ի՞նչ ավանդություններ, պատմություններ, ավանդույթներ /սովորույթներ/ գիտեք. գրեք դրանք: Ի՞նչ է նշանակում «աղուհացով դիմավորել» արտահայտությունը. նշել այն իրադրությունները, երբ ասվում են այս խոսքերը:

ՏՏ◆ ՇԱՐԱԴՐԵԼ խոհերը՝

1. **Սևակյան տողերի շուրջը՝** «Առաջին սերը, Ինչպես որ հացը, Ինչ էլ որ անես, Միշտ կուտ է գնում»:
2. **Վ. Սարոյանի հերոսներից մեկի բացականչության շուրջը. «Հա՜ց, հա՛ց,-** բացականչում է բանաստեղծ Բեն Ալեքսանդրը, աստված իմ, որքա՜ն վայրագորեն է հացը մաքառում սրտի հետ»:
3. **Ս. Կապուտիկյանի բանաստեղծական տողերի շուրջը՝** «Հացն է ձեզ հացի տեր անում, Սուրբ հացից ճամփան մի՛ շեղեք, մեր արդար բառը հիշեցե՛ք Ու հացին արժանի եղեք»:

Տ-Ոճ.-9.

Ա. Մի անանուն ծերունի կար, որը ո՛չ տուն ուներ, ո՛չ հաց: Բայց ուներ մի քանի ճշմարտություններ, որ ձեռք էր բերել իր բազմաչարչար կյանքի ընթացքում: Եվ պարկը ուսին, գավազանը ձեռքին, ալեզարդ գլուխը խոնարհած՝ շրջում էր գյուղերն ու քաղաքները, կանգնում էր մեծ ճանապարհների վրա, խրճիթների թե դարպասների առջև, որպեսզի ցույց տար իր գաղտնի գանձերը:

Եվ մի անգամ՝ մի տոնավաճառի օր, երբ շուկայի մեծ հրապարակում խռնվել էր ժողովրդի ծովածավալ բազմությունը, երևաց նա մարդկանց մեջ և հին, հզորաձայն զանգի պես որոտաց.

....Զղջացե՛ք և ապաշխարեցե՛ք, որովհետև մոտ է արդարության թագավորությունը: Զրկվածը պիտի ոտքի կանգնի և, երկաթե խարազանը ձեռքին, հատուցման դատը պիտի տեսնի. այն ժամանակ է, որ լինելու է լալն ու կրճտելն ատամների...

...Եվ գնաց՝ սպիտակ ալիքները խոժոռ ճակատին հողմավար: Եվ երբ երեկո եղավ, կանգ առավ մի լեռան լանջին՝ քարերով ծածկված մի առապարի մեջ: Ապա բարձրացավ մի ժայռի վրա, որի շուրջը արձանացած, հորձանուտի պես ցանուցիր քարաժայռերը համր ու մռայլ հայացքով նայում էին ծերունուն... /Ըստ Ավ. Իսահակյանի/

①◆ Փորձիր գրել 7 «ճշմարտություն», որոնք, ըստ ձեզ, պետք է հնչեին ծերունու շուրթերից:

②◆ Ի՞նչ է նշանակում «Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի մեծ բարեկամս է» թևավոր խոսքը:

Բ. Մի երևելի մարդ Իմաստունին խնդրեց խորհուրդ տալ իրեն, թե ինչպե՛ս լավ անցկացնի իր ժամանակը: Նա զգում էր, որ իր օրերը կլանված են իր ձեռնարկությամբ, և ինքը մշտապես ձգտում է անշարժ նստել՝ այլոց պատկառանքը նվաճելու համար, մինչդեռ իր կյանքը գնալով ավելի ու ավելի անուրախ, ձանձրալի էր դառնում:

Իմաստունը լռելյայն ութ սիմվոլ նկարեց ու դրանք տվեց այդ մարդուն...

③◆ Մտածիր, թե ի՛նչ էին խորհրդանշում այդ սիմվոլները, և ի՛նչ հասկացավ այդ մարդը: Դ-ժվարանալու դեպքում ընտրիր տրվածներից 8-ը. մնացածների իմաստը բացատրիր:

✓Չվի մեջ մազ մի՛ փնտրիր:
✓Ժամանակը ոսկի է:
✓Երբ բաժակ ես լվանում, բաժակ լվա:
✓Մասնատված ապրելով հեռու չես գնա:
✓Ցախորդ օրերը կուգան ու կերթան:
✓Ոչ ոք իր մահից առաջ երանելի չէ:
✓Սքանչելի Հոմերոսն էլ երբեմն նիրհում է:
✓Այս օրը չի կրկնվի:
✓Վատ է այն զինվորը, որը չի ցանկանում գեներալ դառնալ:
✓Ակնթարթը գանձերից թանկ է:

✓Այս օրն այլևս չի գա:
✓Յուրաքանչյուր ոտպեն անգին գանձ է:
✓Տանջվի՛ր... Հուսա՛... /Ավ. Իսահակյան/
✓Ում որ վախն է արժանի՝ վախ, ում որ պատիվ՝ պատիվ:
✓Ունայնություն ունայնությանց /և ամենայն ինչ ընդունայն է/:
✓Օրը օրին է սովորեցնում:
✓Քսաներեք տարի է անցել, և անմահության համար դեռևս բան չի արված /Ալ. Մակեդոնացի/:

ՀԻՇԵՑԵՔ «ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՈՉ ՃԻՇՏ ԲԱՆԱՎԻՃԵԼ և ԱՅԴ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՐՑՆԵԼ ԸՆԿԵՐՈՋԴ»: /Ջ. Լեքրոք/

Բանավիճելու արվեստը լեզվական կուլտուրային տիրապետելու խավագույն վկայությունն է: Բանավիճելու համար հոգեկան հավասարակշռությունը պետք է պահպանել, լեզվական վարքի կանոններին հետևել և «չափված-ձևված» խոսել, խուսափել բարձրատոն խոսքից, չգոռալ-գոռգոռալ, չվիրավորել դիմացինի արժանապատվությունը, կարողանալ համբերատարությամբ լսել և տեղի-անտեղի չընդհատել խոսքը, չճնշել հակառակ կողմին դիմային ծամածռություններով, դիմաշարժությամբ...

Բանավեճի յուրաքանչյուր մասնակից պետք է կարողանա դիմացինի ուշադրությունը սևեռել իր խոսքի վրա, կարողանա հայացքը «փոսում» դարձնել, չդիմել խոսքի ցածր ոճին, հարգալից վերաբերմունք ցուցաբերել՝ ցույց տալով, որ հասկանում է կամ փորձում է հասկանալ, հարցեր տալ և հարցերին պատասխանել, ցանկության դեպքում արտահայտել իր անհամաձայնությունը՝ բայց պատշաճ ձևով:

Բանավիճելու իրադրության մեջ կարելի է առանձնացնել մի քանի արտահայտություններ, որոնք օգտագործվում են բանավիճողների կողմից՝ բանավիճային նյութը քննարկելու և եզրահանգում կատարելու ընթացքում:

➜ Եկեք ճշտենք մանրամասները...
➜ Կարո՞ղ ենք կարծել...
➜ Ես դրանում հաստատապես համոզված եմ...
➜ Եթե դուք ուշադրություն դարձնեք հետևյալ...
➜ Ձեզ սա կարող է հետաքրքրել...
➜ Հավատացեք, որ սա ամենից կարևորն է...
➜ Դուք հավանաբար գիտեք, որ...
➜ Հիմա դուք կհամոզվեք..
➜ Փորձը օգնում է պնդելու...
➜ Դուք չե՞ք կարծում...
➜ Դա արդյոք չի՞ նշանակում...
➜ Դժվար թե դա հնարավոր լինի...
➜ Ցանկալի չի լինի...
➜ Ես հասկանում եմ ձեզ, բայց...
➜ Բանն այն է...
➜ Հնչում է հաստատ, բայց...
➜ Ես ընդունում եմ...., բայց...
➜ Ակնհայտ է ...
➜ Կարելի է հաստատել , որ...
➜ Եթե ես Ձեզ ճիշտ եմ հասկանում...
➜ Դուք կոնկրետ առաջարկություններ ունե՞ք...
➜ Պատճառ չկա անհանգստանալու...
➜ Կարծում եմ՝ մենք կշահենք, եթե...
➜ Հավանաբար ձեզ համար ցանկալի կլինի...
➜ Դուք, իհարկե, կհամաձայնեք, եթե...
➜ Դժվար թե մենք կարողանանք հաղթահարել...
➜ Հակառակ բոլոր կասկածների...
➜ Սա պահանջում է ըստցուցիչ քննարկում...
➜ Հնարավորության դեպքում կաշխատենք...
➜ Կարծում ենք՝ հնարավոր է այլ տարբերակներ փնտրել...
➜ Ցավոք սրտի...
➜ Ոչ ձեր մեղքով...
➜ Ես համամիտ եմ, /նույն կարծիքին եմ/ և...
➜ Դժբախտաբար ստիպված եմ հակառակել...
➜ Որոշակի հակասություններ են առաջանում...
➜ Հետևությունն այն է, որ...
➜ Այստեղից հետևում է /կարելի է եզրակացնել/...
➜ Ինչպես հաստատվեց...

④◆ «Կարո՞ղ է «անմեղ սուտն» արժեք ունենալ» թեմայով բանավիճել՝ պահպանելով բանավիճելու կանոնները, չմոռանալով՝ որ բանավիճային խոսքային իրադրությունը բաղկացած է հետևյալ մասերից՝
1. բանավիճելու թեմայի, նպատակի, առարկայի ընտրություն

2. ընդդիմադրին համոզելու ընթացք
3. ընդդիմադրի փաստարկներին ոչ լիովին համաձայնելը
4. անհամաձայնության արտահայտում
5. իրադրության գնահատում
6. եզրակացություն և եզրահանգում /հետևություն/:

Գ. Կարդալ «Չվիճելու արվեստը» ժամանակակից առակը և եզրակացնել՝ վիճե՞ց ծերունին:

Մի լեռնային գյուղում մի մարդ էր ապրում, որը հայտնի էր նրանով, որ ոչ մեկի հետ ոչ մի անգամ չէր վիճել: Եվ ահա նրա մոտ մի թղթակից եկավ:

-Ասացե՛ք, ճիշտ է, որ Դուք 90 տարուց ավելի ապրում եք և ոչ մի անգամ ոչ մեկի հետ չեք վիճել:

-Այո՛, ճիշտ է:

-Ի՞նչ է, նույնիսկ սեփական կնո՞ջ հետ:

-Նույնիսկ կնոջս:

-Ու ոչ էլ Ձեր երեխաների՞:

-Ոչ էլ երեխաներիս հետ:

-Եվ ինչ, 90 տարվա ընթացքում բացարձակապես ոչ մեկի հետ չե՞ք վիճել, - արդեն բորբոքվեց թղթակիցը:

-Դե, այո, - հանգիստ պատասխանեց ծերունին:

Թղթակիցը՝ լարված ու նյարդայնացած, սկսեց գոռգոռալ.

-Ախր չի կարող պատահել, որ Դուք Ձեր ամբողջ կյանքի ընթացքում ոչ մեկի հետ ոչ մի անգամ վիճած չլինեք:

-Վիճել եմ, վիճել եմ, վիճել եմ... հաշտվողաբար պատասխանեց ծերունին:

Ⓢ Փորձել տարբերակել վիճել-ը բանավիճել-ուց և վիճաբանել-ուց:

Ⓑ◆ Գրել կապակցված խոսք, որի հենակետային նախադասությունը կդառնա ճշմարտության վերաբերյալ 3 ասույթներից որևէ մեկը.

✓ Ճշմարտությունը ջահ է, որը փայլատակում է խավարում, բայց այն չի ցրում: /Հելվեցիուս/

✓ Արժե լսել միայն նրան, ում խոսքը ենթարկված է միայն մտքին, իսկ միտքը՝ ճշմարտությանը և բարությանը: /Ֆենելոն/

✓ Ճշմարտությունը շատ երես ունի. այդ պատճառով ականջիդ մեկը բարեկամիդ տուր, մյուսը՝ թշնամուդ»: /Ավ. Իսահակյան/

Ⓓ◆ «Առա՛ջ, Հայաստան» և «Պայքար, պայքա՛ր, մինչև վերջ պայքա՛ր» կարգախոսները բանավիճելու թեմա դարձնել՝ պահպանելով բանավիճելու արվեստին տիրապետելու բոլոր օրինաչափությունները:

S-ՈՃ.-10.

Մի վաճառական իր որդուն ուղարկեց բոլոր մարդկանցից ամենա-իմաստունի մոտ՝ Երջանկության Գաղտնիքը գտնելու: Իմաստունն ուշադիր լսեց պատանուն, բայց ի պատասխան ասաց, որ ինքը ժամանակ չունի Երջանկության Գաղտնիքը բացելու համար: Եվ առաջարկեց նրան զբոսնել դղյակում և երկու ժամ հետո նորից գալ:

-Բայց ես ուզում եմ քեզ մի բան խնդրել, ավելացրեց իմաստունը՝ պատանուն մեկնելով փոքրիկ մի գդալ, որի մեջ նա երկու կաթիլ յուղ կաթեցրեց: - Զբոսանքի ողջ ընթացքում այս գդալը բռնիր ձեռքիդ այնպես, որ յուղը չթափվի:

Պատանին սկսեց բարձրանալ ու իջնել դղյակի աստիճաններով՝ հայացքը չկտրելով գդալից: Երկու ժամ անց նա նորից վերադարձավ իմաստունի մոտ:

-Դե ի՞նչ, - հարցրեց վերջինս,- դու տեսա՞ր իմ ճաշասենյակի գորգերը: Դու տեսա՞ր այգին: Դու նկատեցի՞ր սքանչելի մագաղաթներն իմ գրադարանում:

Պատանին ամաչելով ստիպված էր խոստովանել, որ ոչինչ չի տեսել: Նրա միակ հոգսը յուղ չթափելն էր:

-Դե ինչ, վերադարձիր ու ծանոթացիր իմ տիեզերքի հրաշքների հետ,- ասաց նրան իմաստունը: - Չի կարելի վստահել մի մարդու՝ չծանոթանալով այն տանը, որում նա ապրում է:

Հանգստացած պատանին վերցրեց փոքրիկ գդալն ու նորից գնաց շրջելու դղյակում՝ այս անգամ ուշադրություն դարձնելով ամեն ինչին:

Վերադառնալով իմաստունի մոտ՝ նա մանրամասնորեն նկարագրեց այն ամենը, ինչ տեսել էր:

-Իսկ ո՞ւր է այն երկու կաթիլ յուղը, որ ես վստահել էի քեզ, - հարցրեց իմաստունը:

Եվ պատանին, նայելով գդալին, տեսավ, որ ամբողջ յուղը թափվել է:

-Ահա հենց դա էլ այն միակ խորհուրդն է, որ կարող եմ ես տալ քեզ. Երջանկության Գաղտնիքն այն է, որ նայես աշխարհի բոլոր հրաշքներին՝ միաժամանակ երբեք չմոռանալով քո փոքրիկ գդալի մեջ եղած երկու կաթիլ յուղի մասին: /Արևելյան առակ/

①◆ «Երջանկության գաղտնիք-բանալին» թեման քննարկել լսարանում:

②◆ Նախադասությունների կառուցվածքային վերլուծություն կատարել:

③◆ Արտագրել՝

ա/ ուրիշի ուղղակի խոսքով նախադասությունները փոխակերպելով անուղղակիի.

բ/ բարդ ստորադասական նախադասությունները դերբայական դարձվածով նախադասությունների վերածելով.

գ/ դերբայական դարձվածները նախադասության փոխակերպելով:

④◆ Ընդգծված նախադասությունը վերլուծել ըստ կազմիչ անդամների և կազմել գծապատկերը:

⑤◆ Համառոտել պատումը:

Տ-ՈՃ.-11.

Ա ● Աշխարհն, ասում են, միշտ պտտվում է, Երբ կարմիր գինին իմ գավաթում է,
Չգիտեմ, գուցեն պտտվում է, Ես հաստատ գիտեմ, որ պտտվում է:

/Ջամալ/

● -Շարժում չկա,- բարբառեց մորուքավոր մի գիտուն.
Մյուս գիտնականն սկսեց նրա առաջ լուտ շրջել՝
Ավելի լավ դժվա՜ր էր այս խոսքերի դեմ վիճել,
Եվ բոլորը գովեցին պատասխանն այդ իմաստուն:
Զվարճալի այս դեպքը, որ պատահել է հնում,
Հիշեցնում է, պարոնայք, ինձ մի ուրիշ օրինակ.
Թեև արփին պտտվում է շարունակ,
Բայց և այնպես Գալիլեյն անհերքելի է մնում:

/Պուշկին/

● Որ այս երկիրը գռլնդ ու կլոր է՝ Որ պտտվում է հողագունդը այս,
Գիտեն բոլո՛ր. Գիտե և տղա՛ս,
Իսկ ես թերևս բոլորի՜ց ավել,- Բայց ես բոլորից լա՜վ եմ իմանում,-
Քանի՜ անգամ ենք Երբ համբուրվում ենք,
Իրարից զատվե՛լ, Թվում է՝
Հեռացե՛լ, Հողը մեր ոտքի տակից
Տարբեր կողմե՛ր գնացել, Սահում է,
Սակայն... իրա՜ր ենք նորից պատահել... Գնում... /Գ.Էմին/

● Ես գիտե՛մ, անգի՛ն, այս երկրագունդը Ես գիտեմ՝ եթե երկրագունդն էլ
Պտտվում է միշտ շուրջն արեգակի, Չլիներ սիրուց ինձ պես մոլորված,
Ինչպես ես՝ խենթը ու անհագու՜ղղը, -Վաղու՜ց դեպի նոր արև՛ կդիմեր,
Ձեռքերս պարզած քո վա՜ռ կրակին. Եվ չէին կոչի նրան մոլորակ:

/Գ. Էմին/

①◆ Գիտական ոճով ներկայացնել Երկրի պտտվելու այս իրողությունը. բացատրել այս ոճի առանձնահատկությունները:

②◆ Ուշադրություն դարձնել «մոլորա՜կ» բառի գևորգէմինյան ստուգաբանությանը և բացատրել բառի համանունական այս եզրի իմաստը:

③◆ ● կետի հատվածում կառուցվածքային վերլուծություն կատարել: Դուրս գրել նախադասության գլխավոր անդամները՝ ուշադրություն դարձնելով ստորոգյալի ձևակազմությանը: Կազմել գծապատկերը:

④◆ ● կետից դուրս գրել գոյականները և նշել ձևաբանական հատկանիշները:

⑤◆ ● կետից դուրս գրել դերանունները և որոշել նրանց ձևաբանական հատկանիշները:

⑥◆ ● կետից դուրս գրել բայերը և նշել նրանց ձևաբանական հատկանիշները: Նույն հատվածում կետադրական վերլուծություն կատարել:

⑦◆ Բնագիտական և գեղարվեստական աղբյուրներից ընտրել տերևաթափը նկարագրող հատվածներ և համեմատել:

⑧◆ Տերևաթափը նկարագրող մի փոքրիկ բանաստեղծություն հորինել:

Տ-ՈՃ.-12.

Գրել կարծիք-գրախոսություն՝ եզրակացնելով, թե ինչպես պետք է գրվի այն, և այս դեպքում ինչպիսի՞ արժեք ունեն լեզվական վարքի կանոններին հետևելը, էթիկայի կանոնների պահպանումը:

Մարդկությանը գերխնդիրներ են պետք...

Ամեն մի իրականացված գերխնդիր մի արտառոց երևույթ է դառնում հղացման հանդգնությամբ, իրականացման անսպասելիությամբ. այն օժտված է հմայելու, ապշեցնելու, հիպնոսելու հատկությամբ:

Գերխնդրի սկիզբն, իհարկե, մարդն է: Ինչ-որ տեղ ապրող ու ինչ-որ ազգային պատկանելությամբ: Բայց երբ գերխնդիրն իրականացվում է, այն կարող է որոշ ժամանակ անց նույնիսկ կորցնել իր ազգային պատկանելությունը, դառնալ համամարդկային արժեք: Անցնում են դարեր, ու խմորվում է մի ուրիշ երևույթ. հետաքրքրության ու ճանաչման ձգտում հանդեպ այն ժողովուրդն ու նրա պատմությունը, որն ստեղծել ու իրականացրել է այդ խնդիրը. այդպես է գալիս ժողովրդի անմահությունը...

Յուրաքանչյուր իրականացված գերխնդիր մի հարվածով, մի հզոր ցատկով մարդկությանը բարձրացնում է մի աստիճանով վեր: Նա հարկադրում է նորովի նայել աշխարհին, նոր իմաստ, նոր բովանդակություն հաղորդել արդեն եղածին ու գիտեցածին: Ուստի հարկավոր է, որ գերխնդիրը միշտ առաջ ընկնի իր ժամանակից: Այդ դեպքում նա իր ետևից կտանի կյանքը: Բայց. .. այն չպետք է անցնի բացարձակ անհնարինության սահմանը:

Ատոմային էներգիայի գաղափարը չէր կարող առաջանալ Արիստոտելի մեջ: Իսկ մեր ժամանակներում դեպի այլ աստղային համակարգեր տիեզերանավ ուղարկելը կարող է դառնալ սոսկ գիտաֆանտաստիկ պատմվածքների նյութ: Միևնույն ժամանակ ամեն մի իրականացված գերխնդիր ինքնըստինքյան անկրկնելի է, կրկնօրինակը չունի ամենակարևորը՝ մղիչ ուժ լինելու հատկությունը. մեր ժամանակ իմաստից զուրկ է բուրգ բարձրացնելը, թեկուզ ավելի մեծ, քան Քեոփսը, կամ թե նույն մարմարից մի նոր Պարթենոն կառուցելը...

Առաջընթացի համար լվացքի մեքենայի կողքին տիեզերանավ է հարկավոր, մանկամսուրի կողքին՝ տարրական մասնիկների հզոր արագացուցիչ: Հարկավոր է նաև գերխնդիր. մեր՝ երկրային քաղաքակրթության կողքին մի նոր՝ այլ որակի քաղաքակրթություն... Մարդկությանը գերխնդիրներ են հարկավոր...

①◆ Հատվածը գիտական ոճի ո՞ր տեսակն է /գիտատեսամնակա՞ն, գիտահանրամատչելի՞/:

②◆ Գրել թեզիսները:

③◆ Նշված լեզվաոճական առանձնահատկություններից առանձնացնել գիտական ոճին բնորոշները:

A▼ Ոճական գունավորման առումով համեմատաբար չեզոք է:

A▼ Հաղորդակցական գործընթացում առաջնայինը երկխոսությունն է, ուր դրսևորվում են խոսողի անհատականությունն ու ինքնատիպությունը:

A▼ Ձևավորվում է միայն գրական լեզվի օրինաչափություններով. ունի նորմատիվ բնույթ:

▲▼ Բնորոշ են շարադրանքի վերացարկում-ընդհանրացումը, պատճառա-հետևանքային կապը, ճշտությունն ու ճշգրտությունը:
▲▼ Կարևոր են խոսքի միօրինակությունն ու կաղապարայնությունը:
▲▼ Գործառական ոճերի համակարգում աչքի չի ընկնում իր նորմավորվածությամբ:
▲▼ Բառապաշարի հիմնական շերտը կազմում են տերմինները, զբաղմունքային կամ մասնագիտական բառերը:
▲▼ Գերակշռում են շարահյուսական բարդ կառույցները՝ հիմնականում պատմողական բնույթի:
▲▼ Կարևոր նշանակություն է ստանում նաև խոսքային միջավայրը, խոսող-խոսակից-միջավայր փոխհարաբերությունը:
▲▼ Սովորաբար զուրկ է հուզաարտահայտչական երանգավորումից:
▲▼ Հիմնական շերտը կազմում են հարադիրները, կրկնվող բարդություններն ու դարձվածքները, ժողովրդական խոսքը՝ առածներ, ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ...
▲▼ Բառերի շարադասությունը կայուն է և սովորական:
▲▼ Ակնառու է քերականական միջոցների ու ձևերի խնայողությունը՝ «տնտեսումը»:

④◆ Խոսել այն աղետների մասին, որոնք կարող են սպառնալ Երկիր մոլորակի գոյությանը:

⑤◆ Կարդալ սևակյան «կրակ գցող» մտքերը. դրանք հիմնամիտք դարձնելով՝ գրել զեկուցում՝ լսարանում կարդալու համար: Վերնագրել այն և դուրս գրել հիմնաբառերը: Բացատրել զեկուցում-ի և զեկույց-ի միջև եղած տարբերությունները:

Ի՞նչ է սպասում այս մոլորակին,-
Ի՞նչ պատասխանեմ:
Ի՞նչ է լինելու այս աշխարհի հետ...
Ի՞նչ է բուսնելու այս թշվառ հողին,
Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ...
Կրակն եմ ընկել մտքերի ձեռքից:

⑥◆ Մի քանի աղբյուրներից օգտվելով՝ պատրաստել գրավոր զեկուցում /հաղորդագրություն/ հետևյալ թեմաներից որևէ մեկի շուրջը /մեջբերումներ կատարելիս ճիշտ ձևով ներկայացնել օգտագործված աղբյուրները/՝

ա/ «Միակազմ նախադասությունները և նրանց գործածությունը խոսքում»,

բ/ «Ստորոգյալի տեսակները և նրանց դերը խոսքի տարբեր ոճերում»,

գ/ «Կոչականի արտահայտությունը խոսակցական ոճում»:

⑦◆ 21-րդ դարում ապրող երիտասարդ, ի՞նչ գերխնդիրներ կան այսօր մեր՝ երկրաբնակներիս կյանքում, և ի՞նչ «գերխնդիրներ» ունես դու...

⑧◆ Շարունակել՝ գրելով գիտաֆանտաստիկ ոճով՝

Երկիր մոլորակի չորս բնակիչները՝ ապագա մարսաբնակները, հասնելով Մարս ...

Տ-ՈՃ.-13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունը աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Հոդված 2. Կրթության լեզուն

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են:

Հոդված 3. Քաղաքացիների լեզվական պարտականությունները

Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել հայերենին:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել լեզվի անաղարտությունը:

Հոդված 4. Հաստատությունների լեզվական իրավունքներն ու պարտականությունները

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են.

ա. գործավարությունը կատարել հայերեն,

բ. համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը,

գ. ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Հոդված 5. Պետական լեզվաքաղաքականության իրականացումը

Պետական լեզվաքաղաքականությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը... /կրճատումներով/

/Երևան. 17 ապրիլի 1993 թ. /Լրացումները 2005 ./:

①◆ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն լեզվի մասին օրենքի պահանջները խախտելու դեպքում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքից առանձնացնել տուգանքի նշանակում առաջացնող լեզվախախտումները՝ սահմանված տուգանքաչափերով:

②◆ Լեզվական քաղաքականության, լեզվավիճակի, լեզվահարաբերությունների կարգավորման ոլորտում կա՞ն բացթողումներ. եթե այո, ապա ի՞նչ հոդվածներ կսահմանեք...

③◆ Կարդալ ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունները» գլուխը և նշել բառաքերականական ու ոճական առանձնահատկությունները:

④◆ Կարդալ գիտական ոճով ներկայացված տեքստը և վերաշարադրել պաշտոնական ոճով:

Խոսքի մեջ հաճախ են օգտագործվում բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, որոնք քերականորեն կապված չեն նրա հետ: Տրոհե՞լ վերնագիրը, թվարկումները մեծատառո՞վ սկսել, վերջում կե՞տ դնել, ստորակե՞տ, վերջակե՞տ, թե՞ չտրոհել: Եվ, վերջիվերջո, որո՞նք են նախադասության հետ քերականորեն չկապվող միավորները: Կետադրական վիճելի հարցերը կարգավորելու և անիմաստ ուղղագրական զուգաձնությունները վերացնելու նպատակով Տերմինաբանական կոմիտեին ներկայացվեց Ս. Աբրահամյանի կազմած նախագիծը, որը հաստատվեց 1982 թ.: Այդ որոշման մեջ հստակորեն սահմանվեցին խոսքի հետ քերականորեն չկապվող միավորները: Դրանք են՝ վերնագրերը, ինքնուրույն կիրառություն ստացած կոչերը և տեղեկատու իմաստ արտահայտող նախադասությունները, ազդագրերի, նկարների, քանդակների անվանումները, հոդվածի /ստեղծագործության/ հեղինակի, պաշտոնական հաղորդման /որոշման, հրամանագրի, ծանուցման, հայտարարության և այլն/ պատասխանատու անձի, կազմակերպության և ղեկավար մարմնի անունները, ինչպես և մեջբերված աղբյուրի անվանումը, գրքերի, թերթերի և այլ հրատարակությունների ու այլ կարգի տեղեկատու տվյալները, բառերի, բառակապակցությունների պարզ թվարկումները: Ըստ սահմանված կանոնի՝ նրանցից հետո տրոհության որևէ նշան չպետք է դնել, բացառությամբ այն տողասկզբի վերնագրի, որին անմիջապես հաջորդում է շարադրանքը /տրոհվում է վերջակետով/:

Մեկ այլ կանոնի համաձայն՝ խոսքի հետ քերականորեն չկապվող միավորները գրվում են մեծատառով, բացառությամբ իրար տակ թվարկվող բառերի ու բառակապակցությունների, ներդրյալ մեկնական դերով հանդես եկող անկախ գործածվող և փակագծերի մեջ առնվող բառերի ու բառակապակցությունների: Ինչ վերաբերում է գծապատկերներում և առհասարակ սխեմաների ձևերով ներկայացվող թվարկումներին, ապա գիտական բնութագրումները պետք է սկսել մեծատառով, իսկ դրանց հիման վրա առանձնացվող միավորները կամ օրինակները՝ փոքրատառով:

S-ՈՃ.-14.

Մի անգամ հայր ու որդի իրենց իշուկով շոգին ճամփորդում էին քաղաքի փոշոտ փողոցներով: Հայրը նստած էր էշին, իսկ որդին սանձից բռնած գնում էր նրանց հետ:

-Խեղճ տղա,- ասաց անցորդներից մեկը,- նրա փոքրիկ ոտքերը հազիվ են հասնում էշի հետևից: Դու ինչպե՞ս կարող ես ծույլ-ծույլ նստել էշի վրա, երբ տեսնում ես՝ տղադ ուժասպառ է եղել:

Հայրը նրա խոսքերը սրտին մոտ ընդունեց: Երբ անկյունում նրանք շրջվեցին, նա իջավ էշից ու տղային կարգադրեց հեծնել էշին:

Շատ շուտով նրանց մի ուրիշ մարդ հանդիպեց: Նա բարձրաձայն ասաց.

Ի՜նչ ամոթ է: Փոքրը սուլթանի պես նստել է էշին, իսկ նրա խեղճ ծեր հայրը վազում է ետևից:

Տղան շատ վշտացավ այդ խոսքերից ու հորը խնդրեց իր ետևում նստել էշին:

-Բարի՛ մարդիկ, դուք երբևէ նման բան տեսե՞լ եք,- չաղրայի տակից ձայնեց մի կին: - Այսպես տանջել կենդանուն: Ոնց որ բազմոցի վրա նստած լինեն: Օ՜, խեղճ կենդանի:

Ոչ մի բառ չասելով, ամոթահարված՝ հայր ու որդի իջան էշից:

Հազիվ էին նրանք մի քայլ արել, երբ հանդիպած անցորդներից մեկը սկսեց ծիծաղել նրանց վրա.

-Էս ձեր էշն ինչու՞ ոչինչ չի անում, ոչ մի օգուտ չի տալիս ու նույնիսկ ձեզնից ոչ մեկին չի տանում:

Հայրը էշին մի լրիվ խուրձ դարման տվեց ու ձեռքը դրեց որդու ուսին:

-Ինչ էլ որ մենք անելու լինենք,- ասաց նա,- անպայման կգտնվի մեկը, որը մեզ հետ համաձայն չի լինի: Ես կարծում եմ, որ մենք ինքներս պիտի որոշենք, թե ինչպես ճանապարհորդենք:

①◆ Դուրս գրել հնչյունափոխված բառերը:

②◆ Ընդգծել դերանունները և որոշել ձևաբանական հատկանիշները: Առանձնացնել հոլովվողները և նրանցից մեկը հոլովել:

③◆ Դուրս գրել բայերը՝ նշելով ձևաբանական հատկանիշները:

④◆ Ընդգծել պարագաները և որոշել նրանց արտահայտության ձևը:

⑤◆ Առանձնացնել ուրիշի ուղղակի խոսքով նախադասությունները, ընդգծել հեղինակի խոսքը և փոխել շարադասությունը /երկու ձևով/: Դրանք վերածել անուղղակի խոսքի:

⑥◆ Էշ բառով դարձվածքներ գրել և բացատրել նրանց իմաստը:

⑦◆ Ընդգծել հետևություն արտահայտող նախադասությունը և այն սկիզբ դարձնելով՝ գրել մի փոքրիկ պատմություն:

Բ. Հազարոտնուկը զբոսնում էր իր հարյուր ոտքերի վրա, հենց դրա համար էլ նրան հազարոտնուկ են ասում: Հրաշք բան է՝ զբոսնել՝ ունենալով հարյուր ոտք, ախր նույնիսկ մի զույգ ունենալու դեպքում դրանք կառավարելն այնքան էլ հեշտ չէ: Իսկ հարյուր ոտքերից գլուխ հանելն իսկապես որ գրեթե անհնար է: Բայց հազարոտնուկին դա առանց դժվարության հաջողվում էր:

Աղվեսի հետաքրքրասիրությունը շարժվեց. չէ՞ որ աղվեսները միշտ հետաքրքասեր են: Աղվեսը նայում էր, ուսումնասիրում, վերլուծում, բայց չէր կարողանում հավատալ դրան:

- Սպասիր, ես կամենում եմ հարցնել քեզ: Դու ինչպե՞ս ես կառավարում այդ ամենը, ինչպե՞ս ես որոշում, թե որ ոտքդ որից հետո շարժես: Հարյուր ոտք... Դու այնքան սահուն ես քայլում...

Հազարոտնուկը շփոթվեց, փակեց աչքերը և փորձեց գնալ: Դա շատ դժվար էր, գրեթե անհնար: Նա ընկավ գետնին. ինչպե՞ս գլուխ հանել հարյուր ոտքերից:

Աղվեսը ծիծաղեց, իսկ զայրացած ու շփոթված հազարոտնուկը սկսեց լաց լինել, բայց...

⑧ ◆ Ի՞նչ արեց և ի՞նչ պատասխան տվեց հազարոտնուկը:

⑨ ◆ Բառարաններից օգտվելով՝ փորձել ներկայացնել հազար թվականն ունեցող բաղադրյալ բառերի ամբողջությունը՝ բառակազմական փունջը:

⑩◆ Ստորև տրված ասույթներն ու առած-ասացվածքները կարո՞ղ են ամփոփիչ նախադասություն դառնալ թե՛ Ա և թե՛ Բ տեքստերի համար:

✓ **Ավելի լավ է լինել նախանձի առարկա, քան կարեկցանքի:** /Հերոդոտ/

✓ **Մարդը պետք է լինի իր կյանքի տիրակալը և իր խղճի գերին:** /Էբներ-Էշենբախ/

✓ **Մեծ կասկածամտությամբ աչքի են ընկնում նրանք, ովքեր քիչ բան գիտեն:** /Բեկոն/

✓**Հասկանալու համար, որ երկինքն ամեն տեղ կապույտ է, պետք չէ շուրջերկրյա ճանապարհորդություն կատարել:** /Գյոթե/

✓ **Մի թթու խոսք ընդունակ է մթագնել մեծագույն երջանկությունը:** /Հոմես դե լա Սերնա/

✓ **Բարձրագույն իմաստությունը ինքն իրեն ճանաչելն է:** /Հեգել/

✓ **Խելացի չէ ձիերը փոխել գետն անցնելու ժամանակ:** /Ա. Լինկոլն/

✓ **Մոլորություններն էլ օգտակար են լինում, քանի դեռ մենք երիտասարդ ենք, միայն թե դրանք չպետք է քարշ տալ մինչև ծերություն:** /Գյոթե/

✓ **Վիշտը նրան է մաշում, ով խոնարհությամբ է հանձնվում նրան:** /Շեքսպիր/

✓ **Ամեն տեսակ սունկ քաղում են, բայց ոչ բոլորն են կողովը լցնում:**

✓ **Փոխանակ կասկածելու ավելի լավ է հարցնել:**

✓ **Ամեն գլուխ իր գլխացավն ունի:**

✓ **Ամեն բերան տոպրակ չէ, որ կարես:**

✓ **Արագ ման գամ, կասեն՝ գիժ է, կամաց ման գամ, կասեն՝ քոռ է:**

✓ **Տուն քանդողի տունը աստված կքանդի:**

✓ **Ամեն թռչուն իր կտուցով կուտի:**

✓ **Ուրիշի հաշար լացողը իր աչքերից կզրկվի:**

◆ **ԲԱՆԱՎԻՃԵԼ՝**

1. **«Ի՞մ շրջապատի մարդի՞կ են որոշողը, թե՞ ես»**
2. **«Բա՞խտն է որոշողը, թե՞ ես»**
3. **«Անտեսե՞լ հասարակական կարծիքը, թե՞ ոչ»**

Տ-ՈՃ.-15.

Մի անգամ Հնդկաստանի թագավորներից մեկին ուղարկեցին երեք լրիվ միատեսակ արձանիկներ, չորս կիսանդրիներ և նամակ: Գրության մեջ ասված էր, որ արձանիկներից ու կիսանդրիներից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը և արժեքը: Թագավորը կանչեց իր բազում խորհրդականներին ու հրամայեց գտնել տարբերությունները: Ուսյալ այրերն այդպես էլ չկարողացան ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին տարբերություններ գտնել: Միայն Բիրբալ անունով մի իմաստուն շարունակում էր չհանձնվել: Նա արձանիկների ականջներում մի քանի փոքրիկ անցքեր գտավ և դրանց մեջ ոսկյա բարակ լար մտցրեց: Առաջին արձանիկի դեպքում լարի ծայրը դուրս եկավ մյուս ականջից, երկրորդինը՝ բերանից, իսկ երրորդի մոտ՝ պորտից: Ինչ վերաբերում էր կիսանդրիներին, ապա մեկի ուղեղատուփը լիքն էր, իսկ աչքերը փակ էին, մյուսի ուղեղատուփը դատարկ էր, սակայն աչքերը բաց էին, երրորդի թե՛ ուղեղատուփն էր լիքը, և թե՛ աչքերն էին բաց, չորրորդի և՛ աչքերն էին փակ, և՛ ուղեղատուփն էր դատարկ: Մի փոքր մտածելով՝ նա ասաց.

- Առաջին արձանիկը խորհրդանշում է այն մարդուն, որի մի ականջից մտնում է, մյուսից դուրս թռչում: Երկրորդը հիշեցնում է այն մարդուն, որը, հազիվ լսելով ասվածը, միանգամից շտապում է պատմել ուրիշներին: Դե, իսկ երրորդ արձանիկը նման է նրան, ով լսածը աշխատում է անցկացնել սեփական սրտի միջով: Այդ արձանիկը երեքից ամենաարժեքավորն է:

-Իսկ կիսանդրինե՞րը:

-Մարդիկ չորս տեսակ են լինում: Առաջին խումբն այն մարդիկ են, ովքեր ինչ-որ բան գիտեն, բայց չգիտեն, որ դա գիտեն: Այդ մարդիկ քնած են. նրանց հարկավոր է արթնացնել: Երկրորդ խումբը նրանք են, ովքեր ոչինչ չգիտեն, և գիտեն, որ ոչինչ չգիտեն: Այս մարդկանց հարկավոր է օգնել: Երրորդ տիպը նրանք են, ովքեր ինչ-որ բան գիտեն և գիտեն, որ դեռ շա՜տ բաներ էլ չգիտեն: Սրանք ուսյալ մարդիկ են: Եվ վերջապես մարդիկ կան, ովքեր ոչինչ չգիտեն, և չգիտեն, որ ոչինչ չգիտեն: Սրանց ոչնչով օգնել հնարավոր չէ:

①◆ Գտնել այն բառերը, որոնք «ր + բաղաձայն» հնչյունակապակցությունն ունեն, և բացատրել նրանց ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

②◆ Ընդգծել հնչյունափոխված բառերը:

③◆ Գտնել քանակային իմաստ արտահայտող բառերը և որոշել նրանց խոսքիմասային պատկանելությունը:

④◆ Դուրս գրել բացառական, գործիական, ներգոյական հոլովով դրված բառերը և որոշել նրանց շարահյուսական կիրառությունները:

⑤◆ Բացատրել բութի գործածության դեպքերը:

⑥◆ Ընդգծել ժխտական նախադասությունները և բացատրել ձևակազմությունը:

⑦◆ Գտնել անդեմ նախադասությունները:

Ո Տ-ՈՃ.-16.

Անցո՛րդ:

Եթե անգամ ծարավ չեն քո շուրթերը, անտարբեր չանցնես այս աղբյուրի մոտով: Ով էլ որ լինես՝ հոգնած ճամփորդ, թե քամու պես շտապող սիրահար, դալար պատանի, թե հողին բարևող ծեր իմաստուն, իմացիր մի բան. քեզ համար է այս աղբյուրը: Իր կյանքի վաթսունհինգերորդ ամառնամուտին՝ այս աղբյուրը քեզ համար է շինել ուստա Մեհրաբը:

Իմացիր սա, ո՛վ անցորդ:

Իսկական մարդու կենսագրությունը կիսատ շենքի է նման. չի ավարտվում երբեք, և անգամ մահը անկարող է այս շենքը դագաղ դարձնելու: Դու նայում ես այդ կիսպտ շենքին, և սիրտդ ժպտում է կյանքի գույներով, կյանքի, որ վերջ չունի և չունի տանիք: Իսկական մարդիկ չեն հասնում տանիքին, որովհետև նրանց տանիքը երկինքն է:

Ես նայում եմ վարպետի թաց մատներին, ծերունական մանրաքանդակ դեմքին, երկնքի կտորներ հիշեցնող աչքերին, և ինձ հանկարծ թվում է, որ նա՝ Մեհրաբ Միրզախանյանը, հին-հին դարերից է եկել սոճիների այս կանաչ պուրակը: Ինձ թվում է՝ նա՝ ուստա Մեհրաբն է կառուցել Գառնիի հեթանոսական տաճարը, նրա մատներն են ժայռերի մեջ փորել Գեղարդի հրաշքը, ինձ թվում է՝ նրա մուրճի հետքերն են կրում Զվարթնոցը, Անին, Էջմիածինը...

Սովորական այս հայ վարպետը դառնում է իմ ժողովրդի հավաքական դիմանկարը՝ ինչ-որ անօգնական բարություն աչքերում և մուրճը՝ կոշտացած, հանճարեղ մատների մեջ ամուր սեղմած:

Ես ուզում եմ խոնարհվել վարպետի առաջ, համբուրել այդ կոշտացած, իմաստուն մատները, ինչպես մայրս է համբուրում Մեսրոպ Մաշտոցի շիրիմը...

Անցո՛րդ:

Եթե անգամ ծարավ չեն քո շուրթերը, անտարբեր չանցնես այս աղբյուրի մոտով: Ով էլ որ դու լինես՝ հոգնած ճամփորդ թե՝ քամու պես շտապող սիրահար, ծաղկուն պատանի թե հողին բարևող ծեր իմաստուն, իմացիր մի բան. քեզ համար է այս աղբյուրը:

/Վ. Պետրոսյան/

①◆ Դուրս գրել ածանցավոր բառերը:

②◆ Ընդգծել դիմավոր բայերը և նշել ձևաբանական հատկանիշները:

③◆ Կազմել գոյականների տրական հոլովը:

④◆ Բացատրել կետադրությունը:

⑤◆ Գտնել ամենաշատ բաղադրիչ–նախադասություններ ունեցող նախադասությունը և շարահյուսական վերլուծություն կատարել:

⑥◆ Անցորդ կոչականին լրացումներ ավելացնել:

⑦◆ Ի՞նչ է նշանակում «հողին բարևող ծեր իմաստուն» արտահայտությունը:

Տ-ՈՃ.-17.

Լեռնե՛ր, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լցված
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով...
...Ձե՜զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տխրության ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր...
...Մթնեց: Ծերունին լուտ չարչարանքով
Մի քանի կոճղեր դրեց կըրակին,
Նորից բարևեց իր երկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին:
- Ի՞նչ ես կորցրել, - ընչի ման գալի,
Խոսեց ծերունին դառը խնդալով,-
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի երանի տալով:
Մեր ապրուստն ի՞նչ է. – մի կտոր չոր հաց,
Էն էլ հըրեն հա՜ - երկընքից կախված:
Մի մարդ որ նըրա երեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պետք է լինի...
Ես քեզ օրինակ: Էս խոր ձորերում
Էս է չորս քսան տարիս լըրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ:
Մինը իր կամքին՝ ինչ ասես անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Ես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Էն ո՞ր աստվածն է կարգ դըրել էսպես...
Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ,
Էլ ընչի մուժիկ, կամ էլ ի՞նչ թավադ.
Նըրա արինը կարմի՞ր է մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըգա ձեռից:

/Հ. Թումանյան/

①◆ Տարբերվո՞ւմ է արդյոք հեղինակի լեզուն իր հերոսի լեզվից /համեմատել և հակադրել/: Նշել թե՛ մեկի, թե՛ մյուսի բնորոշ հատկանիշները: Բնութագրել խոսակցական լեզուն՝ այն հանդիպադրելով գրական լեզվին:

②◆ Մանրամասնորեն վերլուծել ծերունու լեզուն՝ կարդալով պոեմն ամբողջությամբ. կա՞ն բառեր, արտահայտություններ ու քերականական ձևեր, որոնք այսօր գործածական չեն, և ինչո՞ւ. ինչպե՞ս են կոչվում դրանք:

③◆ Օգտվելով Լ. Եզեկյանի «Ոճագիտություն» բուհական դասագրքից՝ զեկուցում պատրաստել «Գեղարվեստական ոճը և նրա առանձնահատկությունները» թեմայով՝ ուշադրություն դարձնելով նրանում լեզվի մյուս գոյաձևերի դրսևորման հարցերին:

Աշխատանքի ընդունվելու համար մենք պարտադիր ներկայացնում ենք **դիմում՝** ուղղված այդ հաստատության ղեկավարին, **ինքնակենսագրություն,** իսկ պահանջվելու դեպքում՝ **բնութագիր** /դպրոցից, բուհից, նախկին աշխատավայրից/, **երաշխավորագիր, աշխատանքային գրքույկ** /եթե ունենք/, գիտական աշխատանքների ցուցակ և այլն: Մեր դիմումի վրա այդ հիմնարկի ղեկավարը մակագրում է՝ տալով իր համաձայնությունը և կարգադրելով գործավարին՝ հրամանագրել: Ապա տրվում է գրավոր **հրաման,** և մենք սկսում ենք աշխատել: Աշխատանքային գործունեության ընթացքում մենք վերադասին երբեմն գրավոր զեկուցագիր /պահանջ, առաջարկ/, **հաշվետվություն** ենք ներկայացնում մեր կատարած աշխատանքի որևէ փուլի, գործողման արդյունքների մասին: Կարող են ստուգվել մեր կամ մեր բաժնի գործերը, և այդ դեպքում ստուգողները գրում են **արձանագրություն, ակտ:** Վերադասը կարող է անել գրավոր **կարգադրություն,** կայացնել պարտադիր կատարման որոշում: Հաշվապահության ելքի ու մուտքի մատյաններում գրառվում են ֆինանսական հաշիվները, աշխատավարձի հրամաններ ու ցուցակներ են կազմվում: Մի հիմնարկ մյուսին կարող է ուղարկել պաշտոնական **նամակ՝** որևէ առաջարկով, արտաքին գործերի նախարարությունը կարող է **նոտա** հղել մի այլ երկրի նախարարության և այլն:

/Վ. Գաբրիելյան, «Գրավոր խոսք»/

①◆ Նկարագրել հիշատակված փաստաթղթերի կառուցվածքը՝ համապատասխան նմուշաձևերով:

②◆ Տարբեր հաստատություններից տարբեր տիպի բլանկներ /ձևաթերթեր/ վերցնել և նկարագրել նրանց կազմության ձևը:

③◆ Ի՞նչ է ցանկացել ասել Էնգելսը՝ իր ընկերոջը գրելով. «Ներիր, որ շատ ընդարձակ ստացվեց նամակս. ժամանակ չկար մտածելու»:

④◆ Կարդալ Չ. Չապլինի նամակը դստերը, արտագրել այն և նրանում ընդգծել բարոյախրատական նախադասությունները:

⑤◆ Մեծերի «Նամականի»-ներից ընտրել և գրել նամակներ՝ անձնական և պաշտոնական բնույթի: Ճի՞շտ է արդյոք Պ. Սևակը, երբ գրում է. «Մարդ անձնական նամակում լինում է ինչպես իր տանը. փոքր-ինչ անփույթ, բաց, կարճ՝ մի այնպիսի վիճակում, որով փողոց դուրս չեն գալիս»:

⑥◆ Ընտրել թեմաներից մեկը և նամակ գրել՝ ուղղված՝

ա/ գալիքի գանգրահեր տղային

բ/ քո երազների տիրակալին

գ/ Մարսի բնակիչներին

դ/ ի՛նքդ քեզ:

⑦◆ Տեղեկատվական տեքստեր են երկտողը /համառոտ նամակը/, բացիկը, հեռագիրը, ծանուցագիրը, ազդ-հայտարարությունը, հրավիրատոմսը, **համակարգչային և բջջային հեռախոսների օգնությամբ ուղարկված** հաղորդագրությունները, **քաղաքականության մեջ օգտագործվող** բաց-նամակը. **ներկայացնել յուրաքանչյուրի ձևակազմությունը:**

S-ՈՓ.-19.

Սիրելի՛ բարեկամ.

Հաճելի է տխրել, երբ մխիթարվելու հույս կա: Տառապող մարդն իսկապես երջանիկ է, եթե ունի բարեկամներ: Առաքելական ճշմարտությամբ լի Ձեր նամակը մի քիչ հանգստացրեց ինձ: Բայց ինչպե՞ս ոչնչացնեմ իմ կրած հոգեկան բուռն հուզումների հետքերը: Ինչպե՞ս մխիթարվել, երբ մեկ ամսում սպառեցի մարդու երջանկության համար մեծագույն աղբյուրը, և դա ինձ չբերեց ոչ՝ երջանկություն, ո՛չ հույս, այլ միայն համոզվածություն, որ այն մեկընդմիշտ ինձ համար սպառվել է:

Օ՜, քարոզեցեք այժմ խաղաղություն: Կարեկցանք պահանջեցեք տառապյալներից: Ո՛չ, ատելություն և ուրիշ ոչինչ: Ով խորապես չի ապրում ներկան, չի կարող իսկապես սիրել ապագան... Ես ուզում եմ վրիժառու լինել տառապանքիս համար... Կան մարդիկ, որոնց գուցե վիճակված է բարիք գործել, բայց երբեք այն չզգալ: Կարծում եմ՝ ես պատկանում եմ նրանց թվին:

Չէի ցանկանա հավատալ քո անողոք կանխագուշակությանն այն մասին, որ հասել է իմ աշխատանքի վախճանը: Սակայն խոստովանում եմ, որ նրանում ճշմարտության մաս կա: Գիտնական դառնալու համար հարկավոր է մոռանալ ամեն ինչ, բացի գիտությունից: Այդ ունակությունը պակասում է ինձ: Իմ սիրտը ապստամբում է բանականության դեմ: Բայց ես քեզ նման չեմ ավելացնում. «Եվ շատ ափսոս»:

Ների՛ր ինձ, Օգյուստ... Իմ սրախոսություններն անմեղ են, ծիծաղը՝ անլաց...

Վերընթերցելով քո նամակը՝ ես ուշադրություն դարձրի մի նախադասության վրա: Դու ինձ մեղադրում ես, որ ես արբեցած եմ ձեռքերս, սիրտս, գլուխս ապականող աշխարհի նեխիչ շնչով... Արբեցա՜ծ: Ես հիասթափված եմ ամեն ինչից, նույնիսկ պատվասիրությունն ինձ դավաճանեց: Ինչպե՜ս կարող է ինձ ապականել այն աշխարհը, որն ինձ համար զզվելի է: Մտածիր...»

Քո՝ Է. Գալուա

Երեքշաբթի, 29 մայիսի, 1832թ.

Փ◆ Պահպանվա՞ծ են տեղեկատվական տեքստին բնորոշ հատկանիշները: Ներկայացնել նամակ գրելու մշակված կայուն ձևը:

Ձ◆ Կարդալ և պատասխան-նամակ գրել:

«Խաղաղ իրիկունով նստեցե՛ք դաշնամուրի մոտ, կիսախավարի մեջ նվագեցե՛ք որևէ մեղմ, թախծոտ, զգվող մի բան: Եվ եթե Ձեր արցունքներն ակամա հոսեն, հիշեցե՛ք, որ հեռվում մեկը նստել ու թախծում է և երբեմն մտաբերում է Ձեզ: Դուք Ձեզ անպայման լավ կզգաք:

Առանձնացե՛ք երբեմն թախծի ու տխրության պահին և արտասվեցե՛ք ու անրջե՛ք. չէ՞ որ դա հոգու պահանջն է և նույնիսկ անհրաժեշտ է, որքան սնունդը:

Հետո մենության անապատից վերադարձե՛ք մարդկանց մեջ՝ նորոգված ու լուսավոր, բարությամբ ու սիրով լի:

Գրեցե՛ք ինձ: Մի՛ բարկացեք և մի՛ նախատեք ինձ նամակիս անկանոնության և անընթեռնելիության համար»:

Տ-ՈՃ.-20.

Հանեցե՛ք Պեչորինին ուսումնական ծրագրերից. նա մեր ժամանակի հերոսը չէ: Եկեք անկեղծ լինենք: Ասացեք՝ ժամանակակից դպրոցականներին հետաքրքրո՞ւմ են օբլոմովները, պեչորինները՝ իրենց հեռավոր խնդիրներով և հոգսերով: Այսօր բոլորովին այլ ժամանակներ են: Այդ օբլոմովները ուսուցիչներին էլ այլևս չեն հետաքրքրում: Բայց դուք, սիրելի՛ ուսուցիչներ, շարունակում եք ապրել նրանց կյանքով կամ փորձում եք ապրել, նրանց համար «երկուսներ» եք նշանակում, որովհետև նրանք ձեզ «կերակրում են»: Հանձնարարելի են ծրագրով: Երբ հիանում եք դեկաբրիստներով, չե՞ք մտածում, որ նրանք ծայրահեղական-տեռորիստներ են... Մեր մեջ չե՞ք սերմանել, թե բոլոր թագավորները /ցարերը/ վատն են, որովհետև թագավորներ են...

Յուրաքանչյուր ժամանակ առաջադրում է իր հերոսներին և հակահերոսներին, և շատ կարևոր է սովորել գնահատել նրանց արարքները: Ի՞նչ է նշանակում «Աֆղանստանի սինդրոմ», կամ «սինդրոմ Չեչնիայի»: Մեր մարմնի ո՞ր օրգաններն են ցավում՝ էլի չենք կարողանում կարգավորված բացատրել բժշկին: «Սովորեցրե՞լ են», «սովորե՞լ ենք» ...Մեր օրերում շուկայական հարաբերությունների եռուզեռում շատ քչերը գիտեն՝ ինչպե՛ս «փող աշխատել», իսկ ինչպե՛ս հարստանալ և շարունակել մարդ մնալ՝ ընդհանրապես ոչ ոք չգիտի: Մենք՝ աշակերտներս, պատասխանների ենք սպասում...

Եթե չդառնանք մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ կամ քիմիկոսներ, ապա մեզ արդյոք պետք կգան այն գիտելիքները, որոնք այդպես համառորեն և տքնաջանորեն սովորեցնում են դպրոցում, բուհերում: Ի՞նչ ասել գերազանց գնահատականներով ավարտած ինժեներ-տեխնիկին, որը կարողանում է միայն էլեկտրական լամպը փոխել...

Երևի թե պետք չէ մանկավարժ-առարկայագետներն այդպես համառորեն պայքարեն, որ յուրաքանչյուր աշակերտ լավ իմանա հենց իրենց առարկան: Գուցե հարկ է հասնել այն բանին, որ յուրացվի միայն այն, ինչ անհրաժեշտ է և հանդիպում է կյանքում: /Ն. Ի. Նիկոլաևիչ/

①◆ Հայտնեք ձեր կարծիքը ձեր ռուս հասակակցի կողմից բարձրացված հարցի շուրջը:

②◆ Նույն հարցի շուրջը ձեր ուսուցիչների, դասախոսների և մեծերի կարծիքը փորձեք ներկայացնել /«Ո՞վ է նա՝ մեր ժամանակի հերոսը» կամ՝ «Ի՞նչ և ինչպե՞ս են սովորեցնում դպրոցում, բուհում»:

③◆ Ինչպես բացատրել ավագ սերնդի հավերժական տրտունջը՝ «մենք ձեր տարքիում...», «մեր ժամանակներում...»...

④◆ Ինչո՞ւ եք դուք՝ երիտասարդներդ, անվերջ արդարանում՝ «Դե, մեր ժամանակներն ուրիշ են...», «ձեր ժամանակներն անցել են...», «մենք դուք չենք...»:

⑤◆ Ինչպե՞ս հասկանալ. «Ի՜նչ տարօրինակ են այս երիտասարդները. անցյալն ատում են, ներկան՝ արհամարհում, ապագայի նկատմամբ անտարբեր են»: /Օսկար Ուայլդ/

Տ-ՈՃ.-21.

Եվ Հր. Աճառյանը սիրեց իր սանին: Հետո այդ սերը պիտի վերածվեր այնպիսի մի համագործակցության, որը... շարունակվելու էր հոգեհարազատ խնամակալի ջերմությամբ ու ծնողական հոգատարությամբ սանին շրջապատած ուսուցչի նույնիսկ... մահից հետո, և շարունակվում է մինչև այսօր:

Աղայան-գիտնականը... խառնվածքով որոնող հեղինակ է: Նրա ամբողջ ստեղծագործական կյանքը գիտական ճշմարտությանը հասնելու ձգտման ու մաքառումների մի գեղեցիկ օրինակ է...

Էդ. Աղայանի անունը անբաժան էր Հր. Աճառյանի՝ իր ուսուցչի անունից: Վերջինս, իր կենդանության օրոք վիթխարի քանակությամբ աշխատություններ տպագրելով հանդերձ, հայտնի է, որ շատ բան էլ թողեց կիսատ ու թերակատար: «Ձեռագրերս թողնում եմ Էդ. Աղայանին՝ խմբագրելու և հրատարակելու», - գրել է Հր. Աճառյանն իր կտակում:

Նա մեր այն գործիչներից է, որոնք հայոց գիտության համարումն ու համբավը դուրս են բերում ոչ միայն հանրապետության, այլև միության սահմաններից, տարածում աշխարհի հորիզոնականներում:

Ճիշտ է, որ արդեն իսկ մեծ է նրա երախտիքը հայրենական գիտության զարգացման գործում, սակայն ճիշտ է և այն, որ նա այժմ, գտնվելով իր ուժերի առավել ծաղկման շրջանում, ասելիք ու անելիք դեռ շատ ունի...

Ուստի և ցանկանք մեր սիրելի ուսուցչին, գիտնականին ու մարդուն հոգու կորով ու առողջություն, երկար տարիների երջանիկ կյանք ու պայծառ մտահղացումների իրականացում: 1973 թ. մայիս, ք. Երևան

/Ա. Պապոյան /Էդ. Աղայանի ծննդյան 60-ամյակի առթիվ/

①◆ Ձեր ֆակուլտետի ուսանողական խորհուրդը որոշել է նշել ձեր դասախոսներից մեկի ծննդյան 60-ամյակը.

ա/ Գրել հայտարարություն՝ նշելով կայանալիք միջոցառման տեղը, ժամանակը և առիթը, կազմակերպող մարմնի անունը, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով մասնակիցների մասին:

բ/ Հրավիրատոմսեր բաժանել. ներկայացնել հրավիրատոմս գրելու կանոնակարգը:

գ/ Շնորհավորական բացիկ ուղարկել ուսանողական խորհրդի անունից:

դ/ Պաշտոնական ելույթի խոսք գրել և բացատրել շնորհավորական այս տիպի խոսքի ոճական առանձնահատկությունները. առանձնացնել հենակետային բառերն ու արտահայտությունները:

②◆ Շնորհավորական խոսքին սովորաբար հաջորդում է բարեմաղթության պահը /վարվելակերպի այնպիսի իրադրություն, երբ խոսողն ու խոսակիցը/ները/ միմյանց լավն ու բարին են ցանկանում. հետագա հաջողություններ մաղթում/: Շնորհավորական խոսքը երբեմն զուգակցվում է նվերի հանձման արարողության հետ: Բարեմաղթանքներին առնչվում են նաև բաժակաճառերը: Գրել շնորհավորական, բարեմաղթական, նվերատվական, բաժակաճառային հիմնանախադասություններ և որոշել դրանցից յուրաքանչյուրի կիրառական-գործառական յուրահատկությունը:

Տ-ՈՃ.-22.

Ա. Բառերը, ինչպես և մարդիկ, ունեն իրենց կենսագրությունը, իրենց ճակատագիրը: Որոշ բառեր հարուստ ծննդաբանություն ունեն, որոշ բառերի համար կարելի է վկայագիր, անձնագիր, աշխատանքային գրքույկ բացել, որտեղ նշված կլինեն ծննդյան թիվը, տեղը, ժամանակը, ազգությունը, օգտագործման վայրը և գործածության ոլորտը... Մեզ հայտնի են նրանց ծնողները, նրանց ծագումը: Օրինակ՝ **իմպրեսիոնիզմ** բառի համար կարող ենք գրել՝

Ծննդյան թիվը՝ 1874 թ.:

Հայրենիքը՝ Ֆրանսիա:

Ծննդավայրը՝ Փարիզ:

Ստեղծվել է քննադատ Լերուայի կողմից /Յուցահանդեսում նկատել է Կլոդ Մոնեի «Ծագում է արևը» նկարը. նրա անմիջական բացականչությունն էլ հիմք է ծառայել այս բառի ծննդյան համար/:

Դարեր առաջ այն կարծիքը կար, որ օդը միատարր է: Հոլանդացի բնագետ Յան Բատիստ վան Հելմոնդտը /1577-1644/ եզրակացրեց, որ օդը բաղկացած է երկու տարրերի միացությունից. մեկն այրվող է, մյուսը՝ ոչ: Քիմիկոսը գրում է. «Մինչ այս անհայտ նյութը ես անվանում եմ **գազ**»: Մեկ այլ տեղ նա հայտնում է, որ այդ անունը փնտրելիս մտածել է հունարեն «քաոս» և գերմաներեն «դուխ» բառերի մասին: Հին հունարենում «քաոս» նշանակել է «փոշոտ ամպերով ծածկված փայլող տարածություն», իսկ «դուխ»-ը գերմաներեն հնչում էր «գայստ»... Պարզ է դառնում, որ **գազ** տերմինը ամբողջովին «որբ» չէ, այլ ունի այլազգի ծնողներ: Սակայն նոր բառը դրանից հետո երկար ժամանակ չէր օգտագործվում, և վերածնվեց հռչակավոր Լավուազյեի կողմից 1789 թ.: Այն մեծ տարածում գտավ, երբ ամենուրեք սկսեցին խոսել առաջին օդապարիկներով թռիչքներ կատարած եղբայրների՝ Մոնգոլֆիեների մասին:

1726 թ. Լոնդոնում նոր գիրք է հայտնվում՝ «Գուլիվերի ճանապարհորդությունը...», որի հերոսը ճակատագրի բերումով հայտնվում է **Լիլիպուտիայում**: Մինչև այսօր լեզվաբանները չեն կարողանում որոշել այս բառի ծագումը. ոչ մի եվրոպական լեզու չունի այն սեփականելու հիմքերը: Իսկ հեղինակն իր գաղտնիքը չի բացահայտել: Ենթադրություններ կան, որ այդ բառը հեղինակը ստեղծել է շվեդական «լիլա» և «ուտտե» բառերից, որոնք երկուսն էլ նշանակում են «մանկիկ», «նորամանուկ», «փոքրիկ»: Իտալերեն լեզվում ևս կա «պուտտո» բառը, որը նույնպես նշանակում է «նորածին»...

Տեսնու՞մ եք՝ բառերն արժեն, որ իրենց համար գլուխ կոտրեն...

①◆ Այս տեքստը կարելի՞ է ավարտված համարել: Ինչո՞ւ:

②◆ Եթե կարող եք, գրեք 1-2 բառի ծննդաբանությունը:

③◆ Բացատրել կետադրական նշանների գործածության դեպքերը:

Տ-ՈՇ.-23.

Լրացնել՝

ա/ մեկումեջ նախադասություններ ավելացնելով /●/.

բ/ գրելով վերջնամասը / ●, ● /.

գ/ գրելով սկզբնամասը /●/.

դ/ գրելով միջնամասը /●,●, ●/ .

ե/ շարունակելով պարբերությունները /●, ●/:

❶ Նախշազարդ փաթիլը նստեց պատուհանագոգին և սկսեց ակնդետ նայել: Այն փայլփլում էր գույնզգույն լույսերից: Փաթիլն այդքան գեղեցիկ ծառ չէր տեսել: Փաթիլը նայում էր մանուկների հրճվալից դեմքերին և մտածում, որ այդպիսի ծառերը երևի միայն տանն են աճում:.... Ձյունիկ-փաթիլը շատ էր ուզում մոտիկից տեսնել պերճաշուք ծառը: Տղայի գլխարկից դանդաղորեն սահեց, բայց ծառից առկայծող շլացուցիչ փայլից ակնթարթորեն փակեց աչքերը: Սկսեց հափշտակությամբ նայել ծառից թափվող ոսկեզօծ անձրևին, բազմերանգ գնդիկներին ու խաղալիքներին:... Հանկարծ զգաց, որ շնչահեղձ է լինում: Ո՛չ, ներսում շատ շոգ էր: Ձյունիկը թախծոտ ժպտաց և ուշաթափվեց: Ոչ ոք չնկատեց համարձակ փաթիլի երջանկությունն ու մահը:

❷ Օ՜, բնություն, իմաստուն ես դու: Երբեմն ըմբոստացել եմ քմահաճ խաղերիդ դեմ, բայց իմաստուն ես դու: Երկնքի՞ն ես շատ անձրև տվել, թե՞ աչքին արցունք: Չգիտեմ: Բայց դրանք իրար նման են: Մեկ են: Երկուսն էլ կլոր են մեր աշխարհի պես, երկուսն էլ՝ բյուրեղ ու բարի՜, բարի: Ծնվում են ամպ ու որոտից, ընկնում, ու միշտ՝ աչքը պապակ հող կա, թևաթափ կանաչ ու ծաղիկ:

Արտասուքը հոգու երկնքից պոկվող անձրև է.....:

❸ Մի անգամ ճամփա են ընկնում Արդարությունը և Անարդարությունը, և, ինչպես պետք էր սպասել, նրանց միջև կռիվ է ծագում: Անարդարությունը սպանում է Արդարությանը, և որպեսզի հանցագործության հետքերը ծածկի, ողջակիզում է նրա դին: Արդարության բարեկամները երկար որոնումներից հետո գտնում են նրա աճյունը և մի բուռ մոխրից սարքում են թանաք: «Այն օրից ի վեր,- եզրահանգում է արաբ մեծ իմաստասերը,- Արդարությունը մեռած է աշխարհում, նա ապրում է միայն գրքերի մեջ»:

Առայժմ երկրագունդը դժվար թե գոռա.....:

❹ Հուշերը մոտիկ հարևանների նման են, նրանք ներս են գալիս նաև այն ժամանակ, երբ շատ կուզենայիր մենակ մնալ քո չորս պատերի մեջ, նրանք գալիս են նույնիսկ առանց զանգը տալու.....:

Բայց նա այլևս չէր վախենում հուշերից. երբ մարդ կարողանում է պատմել առանց գունատվելու, նշանակում է՝ հուշերն անզոր են արդեն:

● Չյուն է թափվում լույսի նման: Բայց սև է վանքը, և մութ՝ նկուղը, որի մեջ բանտարկված է ձեռագրերի հետ մի գիրք և ոչնչանում է խոնավից: Ասում են՝ այդպես է լինում միշտ. ոչնչանում են մագաղաթները խոնավից: Այդ գրքում.....:

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկելույս թերթերը գրքի: Նա փրկված է իրեն միշտ փրկող ժողովրդի հետ:

Երկաթե գրադարաններում «լռում են դարերը»: Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ... /Դ. Դեմիրճյան/

● Պահի՛ր նամակները: Նամակի հետ ժամանակն ես ծրարում, հուշեր, դեմքեր: Պահի՛ր, մի օր ցանկություն կունենաս ընթերցելու, վերապրելու ապրածդ: Կամ թե՝ պատահականորեն կընկնի ձեռքդ, և այնպես կսեղմվի սիրտդ, որից և՛ ցավ կզգաս, և՛ ուրախություն:

Գրքերի արանքում երևաց մի կապույտ ծրար.....:

Պահեք նամակները: Նրանց մեջ հիշողություններ են ծրարվում: Հիմա առջևս մի կապույտ ծրար կա՝ ժամանակը դեղին է մաղել վրան: Նայում եմ երկար և երկու ձեռքով ծածկում լուսանկարը: /Մ. Գալշոյան/

● Ամեն մարդ աշխարհում իր քարանձավն ունի. քարանձավ՝ իր ներքինը, իր աշխարհը, իր հայացքը, և այդ քարանձավից է նայում մեծ աշխարհին...

Նայում է ու տեսնում

Տեսնում է ու հասկանում.....:

Հասկանում է ու զայրանում.....:

Զայրանում ու հեռանում.....:

●..... Ինքն ապրել էր գլուխը հողի վրա թեքած, աշխարհին նայել պարզ, միամիտ ու անմեղ: Իսկ հիմա սկսեց մի տեսակ խռովել աշխարհից: Որ այս աշխարհը անցավոր է, նա վաղուց գիտեր, բայց որ աշխարհը նաև հանցավոր է, նրա համար զուտ նորություն էր:

● Ծառերի, բարձրիկ թփերի ճյուղերի մեջ խաղում են մայրամուտի դեղին ցոլքեր: Ծառերի ուսերից սև թավիշներ են սահում, և նրանց տակ մարում է արահետի ճերմակը:

Աշնան անտառ է՝ աշնան գույներով:.....:

Բուրում է մեծ մառան անտառը.....:

Մոռացված, հեռու անտառ է: Ճամ.ա չունի.....:

Աշնան արևն անցնում է՝ անտառում թողնելով միայն իր ջերմությունը: Մեկ-մեկ հանգչում են բարձր կատարների մոմերը.....:

Չեմ շտապում: Ո՞ւր շտապեմ, ինչո՞ւ: Անցած օրերի երգն եմ որոնում այստեղ և Աստղի լույսը.....:

Տ-ՈՃ.-24.

Ա. Լեզվական թափթփվածությունը անցել է բոլոր սահմանները: Առաջին հերթին երիտասարդների միջավայրում: Մինչդեռ խոսքը հայոց լեզվի մասին է, աշխարհի ամենահարուստ, ամենակատարյալ լեզուներից մեկի, համբավ ձեռք բերած լեզվի մասին: Ահա թե ինչպես է բնորոշում հայոց լեզուն բոլոր ժամանակների լեզվաբանության հսկաներից մեկը՝ Նիկողայոս Մառը 1825 թ. Փարիզում հայերեն լեզվով կարդացած իր հրապարակային դասախոսության ընթացքում. «Ի՜նչ առասպելական հորիզոններ են բաց անում մարդկության կարևորագույն հասարակական գործիքի՝ խոսքի նկատմամբ այդ զարմանալի ժողովրդի միայն լեզվական հարստությունները, և ի՜նչ ահռելի նյութ է ընձեռում սեփական և ուրիշ ազգերի կուլտուրական կապերն ու արմատները ի հայտ բերելու համար»: Հայ չլինելով՝ խոսքի ու լեզվի այդ տիտանը, այնուամենայնիվ, չի կարողանում զսպել առ հայոց լեզուն ունեցած իր զգացմունքները, որպեսզի չբացականչի ամբողջ ձայնով մեկ՝ «Բացառի՜կ, ապշեցուցիչ երևույթ»:

Ո՞վ է մեղավոր... Ի՞նչ անել... Դառնալ երիտասարդներին, նայել նրանց աչքերին ու ճչալ. բաց արեք Միսաք Մեծարենցի պատահական էջը, կարդացեք ու տեսեք, թե ի՜նչ հրաշք է հայոց լեզուն, ի՜նչ պոեզիա ու երաժշտություն, ի՜նչ քնքշանք ու կարոտ, կարդացեք ու, եթե կարողանաք գեթ փոքր-ինչ հասկանալ ու զգալ, ապա մտածեք, թե ինչ եք կորցնում և ինչպե՞ս եք ձեզ աղքատացնում: Բա՛ց արեք Վահրամ Փափազյանի հուշագրությունը, կարդացեք ու տեսեք, թե ի՜նչ է հայերեն արձակը, շարադրանքի ի՜նչ ճոխություն, պատկերների ի՜նչ բազմազանություն...

...**Պետք է ծնկաչոք խնկարկել այդ սրբությանը:** /Գրիգոր Գուրզադյան/

Ա◆ Բացատրել «Իմ լեզուն է իմ թշնամին» արտահայտության իմաստը:

Բ◆ Գրել կապակցված խոսք՝ բնաբան դարձնելով սևակյան տողերը՝

Անցյալին պարզված դու մեր լսափող
Եվ մեր խոսափող գալիքին ուղղված...

Բ. Արևմտահայերեն հատվածը վերածել արևելահայերենի՝ նշելով կատարված փոփոխությունները:

Ձեռքերու բանաստեղծությունը հին, հի՜ն երգ մըն է ինծի համար: Բայց վաղուց, շատ վաղուց ջնջված էր անոր խազերուն երազը օրերես: Եվ ատկե ետքը հաճախ դիտած եմ մարդոց ձեռքերը՝ լսելու համար այդ տիեզերական բանաստեղծությունը ու վերադառնալու անոր հաճախանքին: Ու կարոտցած եմ այդ երգին, բանաստեղծության, ձեռքերուն, մարդոց հրաշագործ, բայց արյունաթաթախ ձեռքերուն ու կարոտցած եմ մանավանդ կարոտնալուն:

Իսկ այդ կարոտը զիս կը տանի այլ կարոտներու՝ հին այլ հարուստ, բայց և տխուր պատմության մը: Մեր պատմության: Կարոտը մեր պատմության տարերային բառերեն մեկն է, որ դարերու ընթացքին քալած է այս ժողովուրդին հետ երկրե երկիր, քաղաքե քաղաք, սիրտե՝ սիրտ ու չարչարված է անոր հետ: Չարչարված է անոր հետ ու պանդուխտի ցուպը ձեռքին, մեռած է երբեմն օտար և այլամերժ երկինքներու տակ: Բայց աղերսը անոր

շարունակած է ապրիլ այլ սրտերու մեջ ու դարերով ճամփա կտրած է՝ գալով հասնելու ինծի:

Հասնելու համար ինծի:

Որ ես վերականգնեմ զայն ու վառեմ ջահը, վառեմ բոլոր, բոլոր ջահերը ու քալեմ հաղթական՝ գարնանային այս փողոցներուն մեջ:

Քալեմ գարնան հետ ու մատչիմ բառի տագնապին: Ու բանամ կուրծքը անոր, պեղեմ սիրտը պատմության, որպեսզի բառը վերածեմ օրհնության ու բալասանի ու խնկեմ, խնկարկեմ, փառքը երգեմ մեր պատմության ու կարոտին: /Գուրգեն Աճեմյան/

①◆ Բացատրել երկու տարբերակների հնչյունաբանական, բառակազմական-ձևակազմական, քերականական և ոճական տարբերությունները:

②◆ Նորի՞ց կարդալ ընդգծված հատվածը և գրել ա՛յլ բառեր՝ «հայի սրտի մեջ ապրած ու ապրող», «հայի հետ չարչարված ու չարչարվող»...

③◆ «Մեկ ազգ՝ մեկ միասնական լեզու» կարգախոսը դարձնել բանավիճային քննարկման թեմա: Ո՞րն է ելքը: Ինչու՞:

Գ. ԿԱՐԴԱ՛:

Երդվում եմ ծնունդովս կամու՛րջ դառնալ քո դարեդար անցումին, քար դառնալ քո պարսպացյալ ամրությանը, աղոթարա՛ր լինել քո սրբազնագույն տաճարին: Երդվու՛մ եմ:

Երդվում եմ շուրթերովս բորբոք պահել քո վահագնաբոց կրակը, շքանշանի պես կրել քո ոսկին, լցվել քո լույսով ու քնքշությամբ՝ ինչպես վաղորդայնի օդով, զրահավորել հոգիս քո արի գեղեցկություններով:

Երդվու՛մ եմ:

Երդվում եմ պահպանել քեզ որպես սերնդեսերունդ փոխանցված և ինձ վստահած տոհմանման սրբություն, նվիրումովս լրացնել քո մասունքանման կորուստները, նորոգել քո մագաղաթյա ազնվականությունը նոր ժամանակների հյութ ու ավիշով, քեզնով արտասանել միայն արդարության խոսքեր: Երդվում եմ կրել քեզ շնչո՛վս, արյունովս, այրումովս և ինձնով տանել-հաղորդե՛լ զավակներիս քո հավերժական կենդանությունը:

Երդվու՛մ եմ: /Ս. Կապոտիկյան/

Դ. ԳՐԻ՛Ր՝ «Երդվո՛ւմ եմ....»:

ՀՈՒ ՊԻՏԻ ՀԱՉԵՍ, ՀԱՉԵ՛Ս...

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ակսել Բակունց
ԱԻ - Ավետիք Իսահակյան
ԳԷ - Գևորգ Էմին
ԳՍ - Գեղամ Սարյան
ՀԹ - Հովհաննես Թումանյան
ՀՀ - Հրաչյա Հովհաննիսյան
ՀԾ - Հովհաննես Շիրազ
ՀՍ - Համո Սահյան
ՄԳ - Մուշեղ Գալշոյան
ՌԴ - Ռազմիկ Դավոյան
ՍԿ - Սիլվա Կապուտիկյան
ՎԱ - Վախթանգ Անանյան
ՎՄ - Վահան Միրաքյան
ՎՊ - Վարդգես Պետրոսյան
ՎՏ - Վահան Տերյան
ՊՍ - Պարույր Սևակ

Հ - հնչյունաբանություն
Ձ - ձևաբանություն
Շ - շարահյուսություն
Տ-ՈՃ - տեքստաբանություն-ոճաբանություն
Ն - նույն հեղինակի /նույնի/

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Աղայան Է. - Արդի հայերենի բացատրական բառարան /ԱՀԲԲ/, 1-2 հ., 1976:
Աղաջանյան Խ. – Նույնանունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարան, Եր., 1989:
Աղաջանյան Խ., Աղաջանյան Զ. – Հայերենի հականիշների համառոտ բառարան, Վանաձոր, 1998:
Բաղիկյան Խ. – Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2002:
Բեղիրյան Պ. – Հայերենի թևավոր խոսքեր, Եր., 2003:
Էլոյան Սեդա - Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բաարան /ԺՀՀԲԲ/, 1-4 հ.հ., 1969-1981:
Մարգարյան Ա., Հայրապետյան Ա. – Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004:
Մեյթիխանյան Փ. – Հայերենի ուղղագրական նոր բառարան, Եր., 2005:
Սուքիասյան Ա., Գալստյան Ս. – Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:
Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք. – Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Եր., 2002:
Սաքապետոյան Ռ. - Արևմտահայերեն- արևելահայերեն ուղղախոսական - բացատրական բառարան, Եր., 2000:

ԴԱՍԱԳՐՔԵՐ

Աբեղյան Մ. – Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
Աղայան Է. – Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
Բաղիկյան Խ. – Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2008:
Եզեկյան Լ. – Հայոց լեզու, Եր., 2005:
Եզեկյան Լ. – Ոճագիտություն, Եր., 2003:
Պապոյան Արտ., Բաղիկյան Խ. – Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
Ջահուկյան Գ. – Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974:
Սուքիասյան Ա. - Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, 1989, 1999, 2002:
Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու /1956 - 2006/, Եր., 2006:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Աղիլխանյան Ա., Գրիգորյան Ն. – Ժամանակակից հայոց լեզվի գործնական պարապմունքների ձեռնարկ, Եր., 2002:
Գալստյան Ս. – Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2003, 2007:
Պապոյան Արտ. – Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2004:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ 4
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5
Հնչյունաբանություն 5
Հնչյունափոխություն 18
Շեշտ, վանկ, տողադարձ 22

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 26
Բառապաշար և իմաստաբանություն 26
Բառակազմություն 45
Հապավումներ 64
Դարձվածաբանություն 66
Բառարանագրություն և բառարանագիտություն 77

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 79
Ձևաբանություն 79
Գոյական 85
Ածական 106
Թվական 121
Դերանուն 132
Բայ 147
Մակբայ 173
Կապ 178
Շաղկապ 186
Վերաբերական 196
Ձայնարկություն 204

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 211

Շարահյուսություն 211
Բառակապակցություն 213
Նախադասություն 218
Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի 223
ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 231
Նախադասության գլխավոր անդամներ 231
Գոյականական անդամի լրացումներ 236
Բայական անդամի լրացումներ 245
Թերի նախադասություն 253
Դերբայական դարձված 259
Նախադասության բազմակի անդամներ 263
Նախադասության տրոհվող անդամներ և հարակից միավորներ 264

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 272
Բարդ համադասական նախադասություն 274
Բարդ ստորադասական նախադասություն 278
ՈՒՐԻՇԻ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ 292
ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 300

ՏԵՔՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 304

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 339
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 340

Զ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Սրբագրիչ՝ Կ. Դանիելյան
Համակարգչային շարվածքը՝ Լ. Ղամբարյանի

Պատվեր՝253: Տպաքանակ՝ 500:
Չափսը՝ 60x84/16:
21.5 տպ. մամուլ:

Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում